



40 K₂

390 mm up to -

2019-01-01

082
5-15

卷之三

‘उप

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ルートマップ

ԱՏՎԱԿՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅՈՒԹՅՈՒՆ

CONTENTS

Wie du Gates, du nahst der Menschheit göttliche Pflanze;
Bilde Schönes, du streust Kelne des Göttlichen aus.

Schäller.

ပုဂ္ဂန်များ၊ အောက်မှာ လူတွေ ပုဂ္ဂန်များ ဖြစ်တဲ့
လူတွေ ပုဂ္ဂန်များ ဖြစ်တဲ့ လူတွေ ပုဂ္ဂန်များ ဖြစ်တဲ့
လူတွေ ပုဂ္ဂန်များ ဖြစ်တဲ့ လူတွေ ပုဂ္ဂန်များ ဖြစ်တဲ့

کلم آنلاین

ज्ञानविदोऽस्मि ज्ञानविदोऽस्मि ज्ञानविदोऽस्मि ज्ञानविदोऽस्मि ।

Առաջնային Մեջ.

לְמִזְבֵּחַ תְּמִימָה תְּמִימָה תְּמִימָה תְּמִימָה תְּמִימָה

- 3457 -



ПЕЧАТАТЬ ПОЗВОЛЯЕТСЯ

съ тѣмъ, чтобы по отпечатаніи представлено было въ Цензурный Комитетъ указанное
мое число экземпляровъ. Тифліеъ. 15-го Июня 1855 года.

Цензоръ И. Кайтмазовъ.

ԿՐ ԱՌԵՎՈՒՆ ՀԱՅՈՒԹԻՒՆ ՊԱՐՄԱՆԵՏԻՒՆ ԵՒ ՍԻՐԵԼԻ ԵՂԻՄԵՐԵԿԻՑԻՆԵՐԻՒՆ

Այս գրաւոր վաստակը ընծայելով մեր պատուելի ազգին և առ
ի սրբէ ցանկանալով որ գա պիտանի և օգտակար լիներ նորան,
արժան է ինձ և շատ քաղցր, մի քանի տեղեկութիւնք տալ պատեղ
այն մասին, թէ ինչպէս այդ գրաւոր վաստակը կարողացել է հրա-
պարակ դուրս գալ և լինել հասարակաց ժառանգութիւն։ Այդ գոր-
ծի պատմութենից կարող է ամենայն մտածող և բարեխորհուրդ Հայ-
չեցո եղբակացութիւն առնել, թէ ինչպէս էր ոռուսիաբնակ Հայերի
այժմուս իմացական և բարյական դրաւթիւնը. արդեօք դոքա իւր-
եանց ազգի պատմագրութենից մի բան ուսած էին մինչև այժմ,
թէ ոչ. արդեօք մեր լուսապայծառ ժամանակը մի քանի առողջ և
գեղեցիկ գաղափարներ ծնուցել է նոցա հոգու մէջ, թէ ոչ. արդեօք
կամի՞ն նորա հետամոլ Զինէացոց պէս կամակորդիլ և յետ մասա-
նայն վերանորոգութենից, թէ սորա հակառակ, հասկանալով իւր-
եանց օգուտը, յօժար էին յառաջ խաղալ ժամանակի հետ, մաս-
նակից լինել եւրոպական լուսաւորութեանը և ճանապարհ տալ նո-
րա ճառագայթներին դէպ ի հայկական թանձր խաւարը։

Մի անպատճելի ուրախութեւն է գալիս իմ սրտի վերայ, որ
պյուր պատճառ ունիմ բարձրացնել իմ ձայնը և քարողել հրապա-
րակաւ, թէ Հայոց բանական հոգին, որ այդքան երկար ու ձիռ զա-
րեր մահանան քնի մէջ թմրած ու կապած մացել էր, այս սկսա-
նումն զարթնու և նայել յետ և յառաջ, հասկանալ իւր տիտուր
անցեալը, հասկանալ իւր տզեղ ներկան որպէս անցածի հարկաւո-
րապէս հետեանքը, և ներկայում հոգաբարձու լինել ապագային,
ինչքան կարելի է այդ, այնպիսի դրութեան մէջ, ինչպէս Նոյսյն
է: Մի անպատճելի ուրախութեան մէջ է իմ հոգին, որ կարող եմ
արձակ համարձակ ասել այս տեղ, թէ Հայոց ազգը Առևաստանի մէջ

սկսել է արդեն ճանաշել իւր արդարացի իրաւունքը, սկսել է վերահստու լինել ոյն խորհրդին, թէ իւր լուսաւորութիւնը պիտոյ է լինի իւր յատուկ ձեռքի վաստակած վաստակը: Հայոց ժողովրդի փոքր ի շատէ բանագետքը օրէ օր աւելի քաջ տեղեկանումն այն բանին, որ ինքնանք յատկապէս պարտական էին ձգել իւրեանց արօրը (զութանը), ինքեանք պարտական էին մշակել և սերմանել ազգի անդաստանը, թէ կամին ժողովը մի օրչուեալ հունձ: Այսուհետեւ տգետ և խարերայ հոգիքը շնորհ կարող ճնշել և շիջոցանել պայծառացեալ ճշմարտութեան յաղթող լոյսը:

Այս ասածներին հաստատութիւն է տալիս նոյն իսկ փորձը, նշյն իսկ կենդանախօս գործը: Եւ ոռւսիարնակ Հայկազունքը, եթէ միտ դնեինք նոցա զրութեան և կեանքի պայմաններին, յետ շնուրմ իւրեանց յառաջազեմ հայրենակիցներից Տաճկաստանի մէջ, Այսուհետեւ Ռուսաստանի Հայքը շունին գեռ ևս ազգային ուսումնարաններ տղաների և աղջիկների համար, շունին ոչ մի օրագիր և լրագիր, որ իւրեանց մէջ և իւրեանց ձեռքով հրատարակվէն, բայց այդ շունենալու պատճառը մի այլ աղրիւր ուներ, քան թէ նոցա բոլորովին անփոյթութիւնը և անհոգութիւնը: Վհա փոքր ժամանակի միջոցում Հայոց հայրենակը բաշխել են իւրեանց ազգին երկու հատոր աշխարհաբարա լեզուով զբած մատեանք, որոնց օգուտը խառտվանում ամենայն խելացի և առողջազատ Հայ, որ զիտէ թէ ինչ ասել է լեզու, և թէ ինչ խորհուրդ ունի կենդանի մարդու հետ կենդանի լեզուով բարբառելը: Եւ այս գործը, որի առաջն հատորը սյժմ նուիրումնք ազգի զաստիարակութեանը, նշյն ազգաւէր Հայերի վեհանձն օգնականութեան և առատամեւունութեան շնորհըն է. և քաղցր էր ինձ այս տեղ ոչ թէ միայն դովել դոցա զովասանութեան արժանաւոր զնացքը, այլև աղսմէն դոցա վերայ, որ դոցա միշա այդպիսի զնացք ունենային: Բոյց թէ ով էին յատկապէս այդ ազնուամբա հոգաբաժուքը աղդային օդտի, վերջումը մի ըստ միունէ կը տեսանեն մեր ընթերցողքը. միայն թէ մեր վերայ մի անժիստնի հարկ կը ոյս այս տեղ առանձին կերպով ջատագովնել ազգի առաջն քանի մի պատուական և սրտացաւ պարոններ, որոնց ժրագլուխ ջանացողութեանով և բարեխրախօյս յորդորանքով միայն հաւաքած էր մը գործի տպացքութեան հարկաւոր ծախքը: Այս պարոնների գեղեցիկ անունները թող գերենք մը Հայրենակիցների սրտի տախտակի վերայ այսպէս: Պ. Կիկոլայոս Ճանշիւանց, Պ. Մինաս Բերենեանց նոր Նախիջևանցի, Պ. Յովսէփ Խզմիրեանց Պ. Բարցի, Պ. Սարգիս Յովհաննէսեանց Պ. արարադցի, Պ. Մելքոն Փան-

եանց Աքուլիսէցի, Յովհաննէս Քամանեանց Թիֆլիզէցի: Այս արժանապատիւ Պարոնները, իրաւունք կոյ տաելու, թէ կրկնապատիկ և չորեգատարիկ արդիւնաւոր և ազդի չորհակալու թեանը արժանաւոր են կացուցել իւրեանց անձը, բայց ի նիւթառէս նուիրագործութենից, ամենայն կերպ հօգարարձու լինելով քաջալերել, յորդութել և իւրեանց համազգի նշելուրը դէպի ի մասնակցութիւն այս գործի տպագրութեան ծախտին: ¹Հայոց ազդը թող ճանաչէ իւր բարերաբը, թող միսիթարիմի տեսանելով, թէ և իւր հասարակութեան մէջ կոյ առարինութիւն, կոյ պատրաստականութիւն ընծայաբեր լինել մարդկութեան հոգեղջէն օգտի համար: Թող քաջցրանայ նորասիրու տեսանելով քանի մի վարդեր և մանուշակներ կանաչած այն հողի վերայ, ուր մինչեւ այժմ բուսանումնին փուշ և տատասկ: բայց թող նոյնպէս, իւր աչքի առաջն ունենալով առարինութեան ազնիւ սրինակներ, նախանձաւոր լինի նոցա, ջերմանայ, հոգիանայ բարեգործութենով և հաստատէ իւր համար յիշատակի արձաններ աւելութեանը, արձաններ որ աւելի մշաբնչնաւոր էին քան թէ պղինձը և մարմարինը:

Այս գործի տպագրութեան հանդամանքը բացայսյտելուց յետոյ, հարկաւոր էր համառատ տեղեկութիւն տալ մէր պատուելի Հայրենակիցներին, թէ ինչ է նորա բովանդակութիւնը և ինչպէս է կարգադրած նա: Մեր խորհուրդը այն լինելով, որ մի յարմարաւոր ընթերցանութեան գիրք առցինք ազդին, թէ արժանապէս ժամանակի անցուցանելու, և թէ իւրեանց միտքը ճոխացնելու այնպիսի ժամանակութենութիւնը որ հարկաւոր էին մէր ժամանակի փոքր ի շատէ կրթեալ հայ մարդուն, այլև իւրեանց սիրու և զզացողութիւնքը աղնուացնելու գեղեցիկ գաղափարներով թէ բարոյական և թէ կրօնապաշտական մասին: մէր խորհուրդը այն լինելով, որ տայինք աղդին մի բազմորինակարար դաստիարակիչ և առաջորդող գիրք, որ լցուցանէր նոցա իմացական և հոգեւոր պիտայքը, ընտիր ընտիր եւրոպական աղբիւրներից հանեցինք զանազան իմաստալից զրոյցք, պատմութիւնք, առակք, նմանախօսութիւնք, բնագիտական ճառեր, բարոյական մասածութիւնք, բնական և արուեստական տեսարանների նկարագիրը, պատմարանական և իմաստասիրական ճառեր, երեւին մարդերի վարդակարագործութիւնք և արժանի յիշատակի իրողութիւնք բնական և մարդկեղջէն աշխարհի մէջ: Այդ աշխատութիւնը բաժանեցնք երկու մասն, առաջինը աւելի թեթև նիւթերով և աւելի պարզ ոճով, որպէս նախակրթութիւն: Երկրորդը աւելի վերհամրած և իմաստասիրական նիւթերով, աւելի երկար և պարունակ ճառերով,

լեզուն ևս աւելի գերապանծ և ոճը աւելի ճիշդ ուսումնական, թէ-պէտ մեալով միշտ աշխարհաբառ խօսքի սահմանի մջ, Խրկրորդ մասը սահմանեցինք առաւելապէս փոքր ի շատէ կրթեալ և գիտուն Հայերի համար, թէպէտ և ժողովուրդը կարող էր օգուտ քաղել սորանից, եթէ կամենար մօսածելով կարգալ և ուշադրութիւնը լարել մի փոքր: թէ ինչպէս պիտոյ է լինի այժմուս հայախօս հեղինակի պաշտօնակատարութիւնը, ծանօթութիւն տուած ենք մի ոյլ գրքի մջ (տես մեր Վարդապէտարան կրօնի, յառաջարանի 6 երեսը): Նշն հիմքերի վերայ հաստատվելով, նոյն առաջնորդական լարը մեր ձեռքումը պահելով յառաջ գնացինք և այս տեղ, բազմօրինակարար մշակելով մեր գեղեցիկ աշխարհաբառ լեզուն, գործակատար կացուցանելով նորան շատ և շատ հանդէսների մջ, ոյժ և զօրութիւն տալով նորան, կանոնի և արուեստի տակ գնելով հայկական աշխարհաբառ բանախօսութիւնը: Այլև հրաժարվելով այն նեղարտութենից, որ սովոր է միշտ եւրոպական ուսման և գիտութեան մջ եղած արուեստական (տէնէնէն-էն) բառերը թարգմանել հայերէն, տուեցինք Հայոց ուսումնական լեզուին և մի փոքր եւրոպէտականութիւն, և կարծումնք հաստատապէս, որ սորանով շատ եւրոպական գաղափարներ գիտութեան մջ աւելի պայծառանալու էին փոքր ի շատէ կրթեալ և բանիմաց ընթերցողների համար, քան թէ թարգմանելով հայերէն, որ կես մի աւելի անհասկանալի էր նոցա, և կես մի չը կարողանալով բացայացնել ամեննեին նոյն ըմբռնումը, զոր և անսգուտ էր: Գիտեմ, այս մասին ումանք այլապէս սովորեցին մօսածել, բայց մեզ անհասկանալի է թէ ինչո՞ւ Հայերը պիտոյ և անարժան համարէին իւրեանց գրուածների մջ այսպիսի բառեր, զոր օրինակ էր նոյն պատճենին, ուշուրեւ, ուշուշուցի, հնիւննոյն և սոցա նմանները, որ եւրոպական հեղինակները չեն ամաչում գործ գնել, թէպէտ ամենայն ոք գիտէ, թէ զոքա յունական և լատինական ասացուածք են, բայց յաձախ զործ ածվելով, ստացել են բուն քաղաքացու իրաւունք եւրոպական լեզուների մջ, ինչո՞ւ մոռանումն մեր Հայերը, որ և մեր նախահարքը ուսումն ստանալով Յունաստանից, բաւական շատ բառեր Յունականից ներս են բերել հայ լեզուի մջ, զոր օրինակ մեքենայ (աշշառէ), մանգանոն (մաշշառէ), փիլիսոփոս (Փլատոնիուս), քարտեղ (Կարտեղ), կիւլոս (Կիւլոս), գայխոն (Կայսուս), մարտոս (մարտիս), և այլն և այլն. և սոքա չեն տգեղացուցել Հայկաղնեան լեզուի գեղեցիութիւնը, բայց գուցէ թէ ոյժմեան Հայերը հիւանդացած մի կոյր հայրենասիրութենով, կամին ամեննեին մաքրախօս, ամեննեին հայաբարբառ լինել և աւելի քան թէ իւրեանց նախնի հեղինակները. բայց

մեր դատողութենով, իրաւացի պատճառ կար կասկածելու, թէ մի գուցէ այդ ամենեին մաքրախօսքը լինէին ամենեին մթնախօսք, և ամենայն արուեստական բառ բռն հայերէն բացայացած կամենալով, բռլորովին անհասկանալի կացուցանէին նորանց, թէ. Հայոց հեղինակը թոյլ տալով գիտութեան մէջ ընդհանրապէս ընկալեալ բառեր ուսումնական ազգերի գրուածներում, ամենեին չէ մեղանշելու ընդդէմ իւր հարազատ լեզուի գեղեցիութեանը, այլ գորանով պիտոյ է հայոց գիտնական լեզուն մատեցնէ լուսաւոր և կիրթ ազգերի գիտնական լեզուին, և այդպէս Նւրովէականութիւն առյ տիտիկան հային, Եւ մեր առ ի սրտէ ցանկութիւնը և ջանացողութիւնը այն էր որ հայացնելով եւրոպէական ուսումը, տայինք Հայերին և մի փոքր Եւրոպէականութիւն. Մեք կարծումնք, որ բռնակալի պէս չենք վարվել մեր մայրենի լեզուի հետ, այլ ուշադիր լինելով նորա յատկութեններին և խնամ տանելով հայկական հարազատախօսութեանը:

Ուսումնասած բանը ամենեին ոտար լինելով աշխարհաբառ լեզուախօսութենից, արգարե շատ բան սորա մէջ երեսում մի անծանօթ աշխարհից եկած ձայն, ըստ որում Հայերը այդպիսի խօսակցութեան սովոր չէին իւրեանց ընկերութեան մէջ. բայց այդպիսի ոտարութիւնը ցուցանումն միայն անկրթութիւնը, և հեղինակը մեղաւոր չէ այդ բանի մէջ առ գուցէ թէ իւր հայրենակիցների հետ առաջն անգամն է խօսում ուսումնական նիւթերի վերայ, թէպէտ բռն և յատկ աշխարհաբառով, Խնչքան ևս մծ և բազմադիմի լինէր մեր ջանացողութիւնը և կամքը շատ գեղեցիկ և աղնի լեզուով Հայախօսել մեր այժմեան հասարակութեան հետ, այնու ամենայնիւ բարեմիտ և բանագէտ ուսեալ դատաւորների առաջն խօսութանումնը մէք, որ շատ և շատ հեռի է մեղանից այն ինքնահաճոյ մոտածութիւնը, որպէս թէ մեր խօսելու ոճը ամենայն տեղ զուտ ուկի էր, ամենեին անխառն, ամենեին անարատ քառ լիցի. մեք պատրաստ ենք և հոգով չափ պատրաստ, ուսանել մեղանից աւելի ընտիր, աւելի գեղեցիկ խօսողներիցը, և առ ի սրտէ շնորհակալ կը լինինք այն մեր եղբայրակիցներին որ աշխարհիկ Հայախօսութեան մէջ աւելի վարժ և կիրթ լինելով, կը կամենային սիրողապէս ուսուցանել մեզ, ցուցանելով մեր սխալանքը, մեր պակասութիւնքը, Հայկական լեզուաշխութեան համար ապագայումը.

Վ. Խմբանս հերիք լինի մեր ընթերցողներին, թէ այս գործի տպագրութեան հանգամանքների և թէ հեղինակի աշխատառութեան մասին. այժմ դնենք այս աեղ Հայրենասէր ընծայաբերների անուանքը որ սոքա են.

1. Ք-Հ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Յ-Ա-Հ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Լ- Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- 1-Ա-Մ-Ի-Ն-Ե-Ր-
2. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ-
3. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ-
4. Պ- Կ-Բ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ-
5. Տ- Տ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ-
6. Պ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ-
7. Պ- Ս- Ս- Ս- Ս- Ս- Ս- Ս-
8. Պ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ-
9. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Փ- Փ- Փ- Փ- Փ- Փ- Փ- Փ-
10. Պ- Գ- Գ- Գ- Գ- Գ- Գ- Գ-
11. Պ- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա-
12. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ-
13. Պ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ-
14. Պ- Գ- Գ- Գ- Գ- Գ- Գ- Գ-
15. Պ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ- Մ-
16. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ-
17. Պ- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա-
18. Պ- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա-
19. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ-
20. Պ- Յ-Ա-Խ-Ե-Ր-Ո-Յ-Ւ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ- Պ-
21. Պ- Կ- Կ- Կ- Կ- Կ- Կ- Կ-
22. Պ- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա-
23. Պ- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա- Ա-
24. Հ- Հ- Հ- Հ- Հ- Հ- Հ- Հ-

Բաց ի սորանից, մի քանի ծանօթ մարդիկ Մասկովյի մեջ, սատր քաղաքներից և կառուրք, բարեկամական կերպով գործակից են զատն զած հեղինակի աշխատավոթեան տպադրութիւններ, առանց պահանջողութեան։ Սոցա ազնիւ համաստեթիւնը թշւլ չը տալով մեջ իւր եանց անունները դնել այս տեղ, մեք հրապարակաւ յայտնութեանցաւ նոցա մեր առ ի սրտէ ընորհակալութիւնը։

ԲՈՒԺԵ ԳԵՂԻՈՒՅՆԵՐ

ԱՐԴ

Դրբի առաջրոթեան հանդամենքը և խորհուրդը	2—4.
Յառաջարկ	2—5.

Գ. Լ. Ա. Խ. Խ. Բ.

Հանձնութեան առաջամանց	1-
Զարաւոր առաջամանց	2-
Քաշանիքու խառամանց	7-
Վաստանուր խառամանց	8-
Զուտքայիսութիւնը	10-
Սրբին խառամանց	12-
Եղանակին խառամանց	13-
Զանազան առաջամանց	15-

Գ. Լ. Ա. Խ. Խ. Խ. Բ.

Զանազանին որոշութեան	21-
----------------------	-----

Գ. Լ. Ա. Խ. Խ. Խ. Պ.

Օլուսանիի որոժանի պաշտելի պատճեններինը	25-
--	-----

Գ. Լ. Ա. Խ. Խ. Պ.

Բարբ և զարբ պատճերացնող կարմ պատճեններինը	65-
---	-----

ԶԱԿԱՐԵԱՆ ԽԵՐՃՐԴԵԼԻՐ ՊԱՏՄԱԹԻՒՆԵՐ

Հաւատարձութիւնը պարհապարզաւում (ԸՆԸՆ ԳԵՐԵՎԸ)	111-
Զարմանայի պատճենթիւն (Պատճեն հազարաւոր և անմազութեանը)	119-
Արքայիսութիւնը (Այսուլու Ա. Անդրեյիցին)	140-
Գեղեցիկ աղջիկը և դաշնաւը	147-
Երեք պահանթիւնը	160-
Փարբիկ Ա. Ճեկարանը	162-
Պայմայ մահեկը	172-
Չորս սպիրչեն զնուանելու	188-

Բնագիտական իրատէ	198-
Խնձորանը	199-
Համբերութիւնը . Դաւթի քնարը	200-
Կոյր մարդը . Յուսականների ծաղիկ	201-
Երիւ կարասը	202-
Սպիտակաւ և Արխանու	203-
Եղիս քարը . Քաջ աղամարդը	204-
Ընթափորձութիւն	205-
Բարեկառութիւնը	206-
Սորդը (Կործարարը)	208-
Դիմինեւը	209-
Ուրիշ հաստիները	210-
Կրկնողիլուսը	212-
Եղողոսը	213-
Աւարդի կոկնը	215-
Թամբրիս	217-
Բրամբների ենրը	220-
Անապատ կզզին	224-
Կրինականիկ երգումը իւր անձը ուզուելու մասին	229-
Թշուառական մարդու աշքեմուարը	234-



Եշտարնի կազմակը	236-
Երկրի բերը	246-
Ծնչական թագաւորութիւնը	249-
Տնիական կամ անեցական թագաւորութիւնը	270-
Հանրացական թագաւորութիւնը	277-
Թէ ինչ է Սորդը (Եթէ քննումներ նորա մարտի կազմակը)	280-
Մարդու հոգին	303-
Բնաթիւնը և նորա մէջ եղան երեսյթները	310-
Բարոյական առանձը	391-
Ակղունական հիմնաք . բարոյական իրատէ և նկատողութիւնը.	400-
Սպիտակաւ վարը	434-
Քրիստոնիոր Կոլոմբոս կամ Ազրուազորեւթիւն Ամերիկայի	457-

ՅԵՌԵՔՆԵՐՆԵՐ

ՓՈԽԵՐՆԵՐԻ ԹԱՐԳԻ ԼԵԿԵՐ ԵԾՈ ՊԵՏՄԱՆԹԱՐՆԵՐ.

Մի ծերունի և բարեկարաց Երամինի (որողէս ասվում են Հնդկացոց խմաստոնքը) թռոնորդի ճնեցաւ. լի ուրախութենով այս օրհնութեան վերայ, որ հասել էր իւր տանը, խօսեց այսպէս. զաւրա զնամ և գոհութիւն մասուցանեմ այն բարձրեալ էակին և բնութեան Հօրը որ օրհնել է մեզ: Խնդ նա գիւղող ժամանակ տար ինձ, որ մեծարեի նորան մի բարեգործութենով: Այս խօսքը բերանին, զնաց Երամինը:

Մաքուր ուրախութեան ծաղեկը շնորհակալութիւն է, և նորա պատզը բարեգործութիւն:

Անդանի սրանվ մեծարելով այն մեծ և բարերար էակը, զուրս զնաց ծերունին գեղ ի դաշտ և մասւ հովանաւոր ծառակի տակ: *Աորա առեն մի մոտածութիւնը աղօթք էր և պազատանք: *Աոր եկած անձրեւի կաթիլները զեռես փայլ փոյլումէին հասկերի, ծաղեիների և աերեների վերայ. բնութիւնը երեսումէր նորան մանկացած և առելի հրաշապայծառ քան թէ յառաջ, թէ պէտնա նկը տեսած էր արչա ինսաւն զարուն իւր կեանքի մէջ: Այս, այն բարի էակի արարածն է, խօսումէր Երամինը. այն մարզու համար, որ նորան պաշտումէ և արարածովը ճանաշումէ Երարիչը, միշտ մանուկ է բնութիւնը:

*Օներունի Երամինը շարունակեց իւր ճանապարհորդութիւնը. ուստակոխ զնացքի վերայ զտաւ մի կաղին (փալուղ)

որ անձրեի պաղաւորից զօրութենովը գուրս էր հանել իւր ծիլը. արտաքին վեճեկը պատառվել էր ահա, բայց ծիլը չէր կարող արմատանալ կոշտ և մերկ հողի վերսց. «Օերունին թեքվեցաւ, բարձրացրեց այն կաղնը և ասաց. Դարւոք է, որ իմ ձանապարհորդութիւնը բերեց ինձ այս տեղ. չեցա կարող էր պատահել որ անցաւորների ոսքի տակ կոխան լինէիր դու, կամ թէ արեգակի ճառագայթը չորացնէր քեզ: Աշխանի ինձ, որ կարող եմ ևս մի արդինաւոր բան առնել և իմ սրանի յօժարութիւնը գործնվ կատարել: Ճառաջ տանելով իմաստուն բնութեան խորհուրդները, որ ամենայն շնչառութեան մեջ մի նոր բարեբարութիւն է ցուցանում մեզ: Վենափոքը երախտազիտութիւնը ևս մի քաղցըը պարտականութիւն է:

Ո՞ի երիտասարդ որ կանգնած էր ծառի քամակումը, ըսելով Ռյամինի խօսուածքը, զուրս ևկաւ և ծիծաղեց արհամարհարար: Աշը ևս ծիծաղում, հարցրեց նորան ծերունին: Աշիտասարդը պատսսխանեց. քո աղայական խելքի վերսց, ով ծերունի, որ ուրախանումնես, ըստ որում մի հաս կաղնիք կեանք փրկեցիր: Աշիտասարդ դու, ասաց Ռյամինը, ինչողիս կարող էիր դու ձանացել իմ խելքը, պատմաս որ այս առաջին անգամն է, որ դու տեսանումես ինձ. և ինչու համար ծաղը ևս առնում դու այն փաքրիկ շնորհի վերսց որ ես կամենումնեմ ցոյց տալ բնութեանը: Աղքա առաջեւ այնքան մեծ է մի հատիկ սելս, ինչքան մի ծառ. և առանց նորան, անկարելի էր աս: Աշ աւագինութիւնը, իմ որդի, սկսանումն փոքր բանով, և սորմանից հետղշետեւ յառաջումնեմն աւելի մեծը. բայց որչափ նա մասենումն խոր սկըզբան է իւր կատարելութեանը, այն ստի ևս խոնարհ: ցածուն և պարզամիտ է. այնուհետեւ առաքինի մարդու աշքումը այնքան կշիռ ունի ամենափոքրը, ինչքան և ամենամեծը: Ո՞ի թէ և Ռյամա աստուածը չէ ուղարկում հա-

ւասարապէս իւր լրյուը և ցօղը ինչպէս խռտի հասկի վերայ, Կյանգէս և աշազին արմանենու (խռւրմայի ծառի) վերայ: Ելափէս խռուեց ծերունին քաղցր ծանրութեամբ:

Երիտասարդը հեռացաւ բերանը փակած և լի որսովառանկորդ: Վկանեատնս լինելով աղնուամիտ ծերունու պատուականութեանը, ցանկացաւ նմաննել նորան: պատճառ, և թեթեամիտ մարդը պէտք է իւր սրտի մէջ մեծարէ առաջինութիւնը:

Բրամինը շարունակելով իւր զնացքը դէպ ի մի ըըլուր (փոքրիկ սար) որ շրջադառած էր փշերով, հանգիւեց նորան մի վաճառական և հարցրեց. Այի թէ մասածումնս դռ այդ կաղինիցը մի ծառ յառաջացնել. դժուար թէ կարող էիր վայելլ նորա հովանաւորութիւնը: «Օքերունին պատասխանեց և ասաց. մի թէ անկելու ժամանակին ովհայ է միշտ ծառի հովանաւորութեան և իւր օգտի վերայ մասածէլ մի թէ այդպէս է բնութեան կարգը: Կմորդի, ով որ չէր սկսած անկել երեկից կամ միւս օրից միայն, նա գտանումէ իւր երջանկութիւնը, անկելով և սերմաննելով:

«Օքերունին մասեցաւ ըլուրին. նորա ծայրումը փշերի մէջ թաղից կաղինը և զգուշութեամբ ծածիւեց նորան հողավ և մամուռով: Կ՞ոչպէս, մի թէ անկումնս դռ փշերի մէջ, ձայն տուեց նորան մի հովին մարդ. այդ, մի վաս հոգարարձաւթիւն էր քո անկածի համար: Ա՛զայը, պատասխանեց նորան Բրամինը, ինչքան որ այն տունկը քննուշ և մասաղ է, փշերը կը պահպանեն նորան ցուրտ փոթորիկներից և վլաններից, բայց երբ որ կ'ածէ և կը զօրանայ, ինքն ըստ ինքեան կ'ազատվի փշերի մէջից, պատճառ որ կաղնի է: Կմորդի, ևս այս բանս ուսել եմ նայելով բնութեան ընթացքին. այն բարի մայրը խնամառար է միանգամայն իւր որդեղիների և քննութեանը և պնդութեանը:

Երբ ծերունին առարտել էր իւր գործը, ուրախ սըստ սովոր ճանապարհ ընկառ, որ առւն զայ: Ով որ ճանապարհի վերաց անկումն, մասածումնը նա, ունի և շատ գատառութներ իւր վերաց: բայց փորձառու մարդը կերթայ իւր յատուկ ճանապարհը:

Արտմինը մօտեցած իւր բնակարանին, հանդեպ վաղեցին նորան իւր թռոները և թռոնորդիները և հարցնումնն. ուր էիր այսքան երկար ժամանակ: Բայց նա ժողովեց նորանց իւր շրա կողմը և պատմեց նոցա ամենը, ինչ որ պատարշել էր իւրեան: Եշի խոյքը փայփայումնն ծերունին, երբ որ առ աս խօսումնը, բայց սուելի հասակաւորքը ամենայն ուշադրութենով լսումնն նորա պատմութեանը: Կար լունին աւտրտելով խօսքը, ձայն արձակեց. Վրդարե, ոչ մի տեղ այնքան զեղեցիկ չէր, ինչպէս բնութեան զողումը, երբ որ մարդս տպայական սրտով սիրումէ բնութեան շոյրը. և ինչպէս իւր զերդաստանի մէջ, ուր նորան սիրումնն անարաստ սրտով: Վարդարե, բայն առեց նա, աչքը զէպ ի երկինք ուղղելով. քո սուրբ տաճարը կայ և բնութեան խաղաղ ակարանի մէջ և ընսանեկան կեցութեան մէջ:

“Ե՞րաստնկ կաղճնը շուտով զէպ ի վեր աճեց իւր ծլեցը, բարձրացաւ փշերի վերաց և զարձաւ տերեւազարդ հովանաւոր ծառ: Յեւայ մեռաւ ծերունին և նորա սիրելիքը թաղեցին նորան այն բլբի վերայ: Երբ որ նոքա տեսանումնն այն ծառը և լսումնն նորա տերեների սօսափինը (շարժուածքը), բարձրինի վարքը և իմաստուն խօսքերը մասսրերումնն որդւոց որդի, պատմումնն նորա մասսին և փափազումնն նամանող լինել նորան:

Պատմաւ, իմաստուն մարդու խօսքը այնպէս է, ինչպէս մի սերմի հասիկ պազարեր հողի մէջ:



ԳԼՈՒԽ Ե

ՀԵՇՆԵՐԵՐԻ, ԸՄԵՑԱԽԵՎՈՐԻ.

1. Դիմոննեխոս, Արքակուս քաղաքի բռնաւորը, թագաւորական ամռոնից զրկվելով, մի հարցանողի թէ ի՞նչ օգուտ բերեց քեզ Պլատոնը և իմաստասիրութիւնը, պատասխանեց. Այնքան օգուտ, որ բազդի փոփոխութեանը կարողանամ չէշտ տանել:

2. Ասիարնակ Եղյաք, ինչպէս որ սովորութիւն էր, մեծ ասելով Պարսից թագաւորին, պյապէս խօսեց Ագեղիլուսոս լակեղեմոնացին. Մի թէ ինձանից մէծ մարդ է նա, եթէ չէ առելի արդարացատ և շափաւոր:

3. Ալէքսանդրից հարցրեցին. Ո՞ր տեղ ես պահում քո գանձերը, պատասխանեց. Իմ բարեկամներին մատ:

4. Ծնտիր է խօսում Արիստոտելէսը, թէ ոչինչ բանում պէտք չէր մեզ պյապան համեստ և պատկան լինել, ինչքան որ Աստեղաց վերաց խօսելու ժամանակը:

5. Երբ Դրուզոս հռոմեցին կամնումը իւր համար մի տուն շինել, և ճարտարապետը խստացաւ նորան պյապէս կառուցանել տունը, որ ոչ ով չը կարողանոյ ներս նայել, ասաց Դրուզոսը ճարտարապետին. Դռու, եթէ փոքր ի շատէ հմտութ ես քո արուեստին, պյապէս շինիր իմ տունը, որ ամենայն մարդ կարողանայ տեսանել ինչ որ գործումէի նորա մէջ:

6. Ալէքսանդրը յիսուն տաղանդ ընծայ ուզարկեց Քանոնեկրատէս փիլոսոփասին. Երբ որ սա պյան ուզարկած պարզելը յանձն շառաւ ասելով. կարօտ չեմ դորան, ապա հարցրեց Ալէքսանդրը. Մի թէ զու չունիս ոչ մի բարեկամ որին պիտանի կը լինէր պյան:

7. Պերիլոս, Ալեքսանդրի բարեկամներից մինը, խնդրեց նորանից բաժինը իւր գուտարների համար. Ալեքսանդրը առաջարկեց նորան յիսուն տաղանդ: Երբ որ Պերիլոսը ասաց թէ բաւական էր և տասն, պատովէս պատասխանեց Ալեքսանդր. Այս շատ էր քեզ այդքան առնուլ, բայց ոչ ճնձ, այդքան տալ:

8. Ասկրասէսից հարցրեցին թէ ինչ պատճառով չես կասարում դու հասարակաց գործ, որովհետեւ այդ արուեստին շատ հմտութիւր: Պատասխանեց. Կա, որ շատերը յաջողակ էր շնուրմ կառավարելու: Հասարակաց գործը, աւելի օգտակար էր իւր քաղաքակիցներին, քան թէ նա որ ճնճն էր ուղիղ կառավարում:

9. Վնախիմենէս իմաստունի մի բարեկամը լաց ու կոծ էր առնում նորա մօտ, թէ կորուսէլ է իւր գրաւոր ճառերը: Վնախիմենէսը ասաց. Այդ ճառերը հարկաւոր էր առաւել մոքի քան թէ թղթերի վերայ գրել:

10. Երբ որ Ասկրասէսից հարցումն արեցին, մի թէ երջանիկ չես համարում Պերդիկկասի որդի Արքելոյոսը, որ այն միջոցին շատ բաղդաւոր էին կարծում: Զը գիտեմ, ասաց. պատճառ որ նորա հետ խօսած չեմ: Ի՞նչ ես ասում, պատասխանեցին նորան. մի թէ այլապէս չես կարող իմանալ, ամեննեն ոչ, ասաց Ասկրասէսը: Այրեմն դու և Պարսից մեծ թագաւորի մասին չես կարող ասել, երջանիկ է արդեռք: Ասաց Ասկրասէսը. կարո՞լ եմ ասել, եթէ չը գիտեմ, թէ ինչպէս ուսեալ, ինչպէս առարինի է նա: Մի թէ կարծումն թէ պայտ բաների վերայ է հաստատած երջանիկ կեանքը: Վմեննեն այդպէս եմ մօտածում: ասաց Ասկրասէսը. այսինքն, առարինի մարդիկը երջանիկ, ամբարիշոնները թշուառ: Ու բնմ թշուառ է Արքելոյոսը: Վնասարակցոյ, ասաց Ասկրասէսը, եթէ անիբառ մարդ է:

11. Տարկմինհս Սումիմբրոսը Հոռոմից աքսոր գնալու միջոցին, պատճումն թէ խօսել է այսպէս. Ի՞նչ մարդիկ ինձ հաստատիմ բարեկամ էին, և ինչ մարդիկ անհաւատարիմ, ահա պյժմ իրու աքսորական վերահասու եղայ, Երբ ոչ միներին չեմ կարող հասուցումն առնել:

12. Փիլիսապոսի բարեկամները բարեկանալով, որ Պելոպոնեզացիք ոլիմպիական խաղարկութեան մեջ ծաղը էին արած Փիլիսապոսին, որ այնքան բարերար էր զտանլիւ նոցա, դրգուումին նորասիրուը գէս ի վրէժինդրութիւն: Փիլիսապոս թագաւորը այսպէս խօսեց. Եմէ վեասէնք նոցա, դորանից ինչ օգուտ կը յառաջանար:

13. Երբ Կիրեսոս, Ահեղացը թագաւորը, հարցրեց Սոլոնից. արգելով տեսած ես մի մարդ՝ ինձանից առաւել երջանիկ: Սոլոնը մի

Աթենացու անուն տուեց, որ մասնաւոր մարդ էր, բայց իւրեանից յետոյ բարեկիրթ որդիք և թռաներ թռպելով վախճանած էր բաղդագորապէս։ Ըստ հարցրեց Սոլոնից. բաց իւստանից որ մարդը բաղդագոր կը քարոզէիր։ Սոլոնը անուանեց Քլէորիս և թիսան արգուացի Եղբարբը որ գերարինակ Եղբայրակիրութենով փառաւոր մաշ էին դան։ Կրեսոսը զայրանալով այսպէս խօսեց. ապա ինձ ոչնչ կարգում չ'ո գնուում Սոլոնը պատասխանեց. Արդարեւ խօսավանումմմ որ դու հարտառութենով և իշխանութենով ճախացած մարդ ես, բայց երջանիկ աշուանել քեզ կարող չեմ, մինչև որ այս կեանիս բաղդագորապէս չը վճարէիր։

14. Վրիտառութից հարցրեցին թէ ինչ է բարեկամը։ Ասաց. Մի հոգի երկու մարմնի մէ։

15. Վտառալու փիլոսոփիսը ասումնի յաճախ. Վեհի քաղցր է բարեկամ գրաւել քան թէ ունենալ.

16. Երրո որ Ելքսանդրը խսոս գետի մօտ յաղթել էր Գարեհին, նորա մօրը և թագուհուն տեսութիւն գնաց իւր շատ սիրելի զօրավար Հեփույստիոնի հետ միասին որ հասակով հաւասար էր Ելքսանդրին, բայց կերպարակով Նորանից գերազանց։ Պարսից տիկնուոյքը թագաւոր կարծելով Հեփույստիոնը, սորան յարդ և պատիւ ցցց տուեցին, ինչպէս խրեանց սովորութիւնն էր։ Յետոյ Արդիկամիրիս, Դարեհի մայրը, մասակոյ մարդերի սկնարկութենամ, իմանալով իւր սխալանքը, փաթաթելցւած։ Ելքսանդրի ստերին, ներողութիւն խնդրելով իւր ագիտառութեանը, բայտ որում երբէք չէր տեսած նոր Ն։ Թագաւորը բարձրացրեց Արդիկամիրիսին և ասաց. Զը սխալվեցար, մայր դու, պատմառ որ և սա Ելքսանդր է։

17. Խոկիրատէսը ուժառուն և երկու տարեկան հասակում դատաստան զանցեցին. Նա մի ճառ ասաց, և թէ վէճ ասած բանը ինչ քան խորթ էր իւր սրտին, բացայստոց այս խօսքերով։ Եւյնպէս եմ կացած մինչև այժմ, որ ոչ ով երբէք որ և իցէ անիրաւութեան կամ հօյհցութեան համար զանգատաւոր չէ Եղած ինձանից, և ոչ մի դատաւոր չը կար, որ վճիռ կապած լինէր իմ արարքի կամ ասացուածի վերսց ընդդէմ որ և իցէ մարգու, Պատմառ, Ես զգուշոցել եմ, որ ոչնչ բանում յանցաւոր չը գտանվէի իմ ընկերիս մատ. և նթէ Ես որ և իցէ կերպով անիրաւութիւն եմ կրած, ոչ թէ դատաստան գնալով վրէժ եմ խնդրել իմ թշնամիներից, այլ թողիւ եմ, որ նոյս բարեկամիրը վերջացնէին հակառակութիւնը։

18. Կրունելիս, Գրուքիսեանց մայրը, հի բասիթելով իւր մատ մի կամպանացի կին, աս ցցց տուեց կուռնելիսցին իւր զարդերը, որ, այն

ժամանակին նոյն լով, շատ գեղեցիկ էին: Կուռնելիսն խօսքը երկարացրեց մինչև որ իւր որդիքը դարձան ուսումնարանից, ասաց այն կնոջը. Աչա և սոքա իմ թանգարին գոհարներն են:

19. Եշր որ Փոկոնը անմշղութեամբ դատապարտած էր զեզի մահ, իւր բարեկամներից մինը հարցրեց նորանից, թէ ինչ պատուէր ունէր տալու իւր որդի Փոկոսին: Ամենից առաւել այն պատուէրը կամիմ տալ, ասաց նա, որ իմ որդի Փոկոսը ամենեին մնուանայ պյս անիրառութիւնը որ պատահում իւր հօրը:

20. Եշր Ռուտիլիս հռոմայում աքսորական էր, ասաց մինը միսիթարութեան աղջագաւ, թէ աչա մաս են քաղաքական պատերազմերը և շատով կը լինի, որ ամենայն աքսորականը յետ դառնան, ասաց Ռուտիլիսուր. Ի՞նչ վաստութիւն եմ արած քեզ, որ դու ցանկանումես ինձ աւելի տիսուր դարձ քան թէ իմ պանդուխու զնալս էր: Աւելի ցանկալի էր ինձ, որ իմ հայրենիքս ամանէր իմ աքսորանքից, քան թէ տիսրէր իմ վերագառնալով:

ԶՈՐԵՒԹՅ ԵՎԵՅՈՒԵՇՈՅՔ.

21. Եշր Սոկրատէսին, լուր բերեցին թէ Ամենացիք դատապարտեցին քեզ զեզի ի մահ, պատասխանեց. Եւ նորանց դատապարտեց բանաւորութեան օրէնքը:

22. Եւ նիմասունը, երբ որ նորա կինը արտասուելով աղաղակումէր, ուրեմն դու պիտոյ է անմեղութեամբ մեռանիս, պատասխանեց. Մի թէ դու աւելի կը ցանկայիր, որ մեղապարտ մեռանի:

23. Մի ամբարիշտ մարդ հարցնումէր թէ ով է առաւել պատուական մարդը Սպարտացոց մէջ. պատասխանեց Եզիսը. Կա, որ ամենէն աննման էր քեզ:

24. Վէլքսանդր մակեդոնացին յաղթելով Հնդկացոց թագաւոր Պորոսին և ըմբռնելով նորան հարցրեց. Ի՞նչպէս վարպէմ քո հետ պատասխանեց Պորոսը. Ինչպէս վայսէլ է թագաւորին:

25. Եշր որ Վէլքսանդր մեծ պահանջից, որ Լակեդեմոնացիք իւրեան աստուածների շարքում զնեն, ասաց նոցա թագաւոր Դամիսը. Որովհետեւ Վէլքսանդրը կամենում աստուած լինել, թող լինի:

26. Մի դժուարախօս, բոյց գործով առաքինի Վթենացի այն միջոցումը, երբ մի այլ Վթենացի ճարտար բանախօսութենով զեղեցիկ խոստանեք շատ էր արել, ձայն բարձրացրեց. Ավ աթենացի տղամարդէր, ինչ որ պյտ մարդը փառաւորապէս խոստանումէ, ես գործով կը կատարեմ:

27. Պիրուղիաս թագաւորը այն միջոցին, երբ Հաննիբալը նորա մօտ պանդուխու լինելով հաւան էր պատերազմ բանալ, ասաց թէ Համարձակութիւն չունիմ, ըստ որում երնջի փորստիքը արդելական նշաններ ունին: Այ թէ դռ, ասաց Հաննիբալը, աւելի կառենուածնեա հաւասալ երնջի մի կոտոր մօխն, քան թէ մի հին զօրավարի:

28. Երբ Ալէքսանդրի գետպանները բնծայ բերեցին Քսենիկրատիսի մօտ յիսուն տաղանդ որ այն ժամանակներում շատ մեծ արծաթ էր, Քսենիկրատէսը Հրամացեց տանել գետպանները Հաց ուսելու Ըկողեմիա առած հավանուում, և նոցա առաջն այնքան կերակուր զրեց, բնչքան որ բաւական էր, առանց մեծաշարիկի պատրաստութեան: Միւս օրին Հարցրեցին գետպանքը թէ ում կը Հրամացէր յանձնել այն արծաթը: Ի՞նչպէս, պատասխանեց Քսենիկրատէս, մի թէ երեկեան փորդիկ Հացկերութենից չը հակացաք դուք, որ ես արծաթի կարօտութիւն չունիմ: Քսենիկրատէսը տեսանելով որ տրամեցին գետպանքը, ընդունեց միոյն երեսուն մետ, որ չերեկի թէ արհամարհումէր թագաւորի վեհանձն առասանելութիւնը:

29. Երբ որ Ալէն քաղաքի մէջ մի ծերունի մարդ թատրոն մօսաւ, այն մեծ բաղմութեան մէջ ոչ մինը իւր քաղաքացներից տեղ չը տուեց նորան: Բայց երբ այս ծերունին մօսեցաւ Լակեդեմոնացոց որ գետպաններ լինելով միասին նստած էին մի սահմանեալ տեղում, վեր կացան ամենեքեան և նստացրեցին այն ծերը իւրեանց մէջ, երբ որ այս բանի վերայ ծափ զարիկեց բոլոր բաղմութիւնը, շատ հաւանութիւն տալով, Լակեդեմոնացոց մինը այսպէս խօսեց: Աթենացիք զիսին ինչ որ պատշաճն է, բայց մէք կատարումէնք:

30. Պիղետրատոսը Հարցնուամէր Սոլօնից, թէ ի՞նչ յօյսի վերայ ամրանալով պյտպէս աներէիւղ հակառակումն ինձ: պատասխանեց Սոլոնը, Կմ ծեր հասակի վերայ:

31. Ալէքսանդրը մարմնով թէթեաշարժ լինելով և ուսերով շցյու, նորան քաջալերեց հայրը, որ ոլիմպիական խաղարկութեան մէջ ասպարէղ անցանէ: Կ'առնէի, ասաց Ալէքսանդրը, ևթէ թագաւորներ ունենայի ինձ հանդիսակից:

32. Այ զինուորական արիբունոս աւելի պատահի հասակում Հարցնելով Մետելլոսից, թէ այս ինչ մօսին ո՞րպէս կը վարվէիր դռ, պատասխանեց Մետելլոսը. Նթէ իմանայի թէ այս բանին համախէ էր իմ շապիկս, կը հանէի նորան և կրակի մէջ կը ձգէի:

33. Ուստավինանոս Օգոստոսը տեսանելով որ գանգատումէ ժողովուրդը թէ դինին փոքրէ և թանգ, խատութեամբ սանձահարեց նո-

բան, պյապէս խօսելով. Կմ փեսայ Ագրիպտասը առատ ջուր պատրաս-
տելով, ըստ բաւականին հոգս է արել, որ ծարաւի չը մնան:

34. Եշրը որ Հաննիբալը քարենդոնից արտաքսվելով գնաց Եփե-
սոս և պանդխոտացաւ Անտիռօքտին մօտ, հիւրընկալքը հրամիրեցին Հան-
նիբալը, որ ականջ զնէ Փորմիոն փիլիսոփային: Ասումն թէ այս
փիլիսոփան քանի մի ժամ խօսեց զօրավարի պաշտոնի և պատերազ-
մական գործի վերաց: Եշրը որ միւս լսողքը շատ հաւանեցին Փորմիո-
նի ասածներին, հարցրեցին և Հաննիբալից թէ ինչ կարծիք ունի
այս փիլիսոփուսի մասին: Պատմումն թէ այն Պունիկեցին, թէպէտ
ոչ շատ լաւ յունարէն, բայց ազատօրէն պատասխան տուեց այս-
պէս. Ծատ խելագար ծեր մարդերի ականջ եմ դրած, բայց այնպի-
սի ծեր որ Փորմիոնից աւելի խելագար լինէր՝ մի հատ ևս տեսած
չեմ: Յիբաւի. պատմառ, ամենամեծ լրբուժին էր, որ մի յոյն մարդ
չը տեսած երբէք ոչ թշնամի և ոչ զորքի բանակ համարձակվու-
մեր պատերազմական գործի վերաց խրաններ տալ Հաննիբալի պէս
տղամարդուն որ այնքան տարիներ հռոմեական ազգի հետ վէճ ու-
նէր նախապատիւ իշխանութեան մասին:

35. Եշրը որ մի մարդ, յիշատակելով այն ոպարծանքի նշան-
ները որ Լակեդեմոնացիք յաղթելով Պարսից ազգին ստացել էին,
քաջալերումէր պատերազմ բանալ Մակեդոնացոց հետ, ասաց Եւդա-
միդասը. Այդ մի և նշն բանն էր, եթէ մի մարդ որ յաղթել էր
հաղար ոչխարի պատերազմէր յիսուն գայլի հետ:

36. Վիշերով փողոցի մջ ըրջումէր թեմիստոկլէսը, ըստ որում
քուն չունէր նա: Հարցնողներին թէ ինչո՞ւ այդպէս անքուն ես, ասաց.
Միլտիադէսի յաղթութեան յիշատակարանքը չեն թողում որ քու-
նըս տանի:

37. Եշրը Կալլիկրատիդաս, Լակեդեմոնացոց նաւախուրի առաջ-
նորդը, շատ կարօտ էր արծաթի նաւերի համար կերակուր պատրաստե-
լու, եկան նորա մօտ Լիւզանդրի քանի մի բարեկամքը, և տալով նո-
րան յիսուն տաղանդ պահանջումէին, որ թշշլ ասյ նոցա սովանել թըլ-
նամիներից մինը: Սոցա բարեաւ. մասցէք ասաց Կալլիկրատիդասը որի
աչքին արդարութիւնը գերազանց էր քան թէ արծաթը: Եսպա մօսե-
ցաւ Կլէանդրը և ասումէր. Ես այն տուած դրամը կ'ընդունէի, եթէ
Կալլիկրատիդասը լինէի. և ես, ասաց Կալլիկրատիդասը, եթէ Կլէան-
դրի տեղումը լինէի:

38. Եշրը մի շատախօս մարդ զանազան կատակներ առնելով
Արիստոտելի մօտ, ասաց վերջումը. գուցէ թէ ձանձրալի եմ քեզ իմ

կաստակախօսութեամբն . քաւ լիցի , պատասխանեց Արիստոսելը , որովհետեւ ուշադիր չէի քեզ :

39. Մ' ի մարդու , որ ամենեն լուռ էր մի հացիւրութեան մէջ , պատակն ասաց թէոփրատոսուը . Եթէ յիմար ես , իմասմնաբար է արածըզ , բայց եթէ իմաստոն ես , յիմարաբար է :

40. Գեմոկրիսոսից հարցրեց մի վայրաբան մարդ . Վաղիւը ո՞ր տեղ կարող եմ տեսանել քեզ . պատասխանեց գեմոկրիսոսը . Այն տեղ , ինչ տեղ ես քեզ տեսանելու չեմ :

ՏՐԵՅՈՒԹՅՈՒՆ ԽՈՍՔԵԾՈՅԻ.

41. Վագեղիլայսուը կամենալով անցանել դէս ի թրակիա՝ լրատարներ ուղարկեց Մակեդոնացց թագաւորի մօս , որ հարցանեն , արդեօք թշնամիների թէ բարեկամների հողի վերայով կը կամենար նա , որ ճանապարհորդէր Վագեղիլայսուը : Նրբ թագաւորը պատասխանեց թէ այդ մասին խորհարդ կ'առնեմ . Թա՞զ լինի այդ խորհրդածութիւնը , ասաց Վագեղիլայսու , բայց մէք կ'երթանք մէր ճանապարհը :

42. Վահիս , Լակեղեմնացց թագաւորը , լսելով թէ ոմանք զարհուրումն թշնամիների բազմութենից , ասաց . Հարկաւոր չէ հարցուափորձ առնել , թէ քանի հօգի են թշնամիքը , այլ թէ ուր են :

43. Վահիսից հարցրեցին . ինչքան զօրական ունիս , պատասխանեց . Այնքան՝ որքան բաւական էր թշնամին փախատական առնելու համար :

44. Լէսնիդաս , Լակեղեմնացց թագաւորը , հրամայողական թուղթ ստանալով քանիքականից՝ թէ ուղարկի՞ր քո զէնքը , պատասխանեց . Արի և վեր առ :

45. Երբ որ Լէսնիդասին ասաց զօրականներից մինը . ահա թը շնամիքը մօս են մեզ . Եւ մէք , պատասխանեց , մօս ենք նոցա :

46. Երբ որ թշնամի Պարսիկը խօսի մէջ պարծենումը ասելով . արեգակի լշուը մէր գեղարդների (մզրաղների) և նետերի բազմութենից չէք տեսանելու , պատասխան տուեց Լակեղեմնացց մինը . Ապա և մէք հօգարար ստուերումը պատերազմ՝ կը տանք :

47. Երբ որ Փիլիպոս թագաւորը Լակեղեմնացց անդերին հասաւ և գրով հարցնումէր թէ ո՞րն է նոցա կամքը այս երկուսի մէջ . Արդեօք որպէս թշնամի , թէ որպէս բարեկամ գայ . պատասխանեցին - ու մինը երկուսից :

48. Երբ որ թէրացի զօրականներից մինը տեսանելով որ Լակեղեմնացիք սարերի նեղ ճանապարհներով մօտենումին նոցա .

ասաց Պելոպիդասին, աչա յարձակվումնք թշնամիների վերայ, պատասխանեց Պելոպիդասը. Ասա մանաւանդ, թէ նոքա յարձակվումնն մեր վերայ:

49. Ո՞ի մարդու, որ ասումեր թէ շատ մեծ է թշնամիների բազմութիւնը, պատասխանեցին Լակեղեմոնացիք. Այնքան ևս մեծ կը լինի մեր պարծանքը:

50. Եցր որ թերացիք Լեռտրա քազաքի մօտ յաղթելով Լակեղեմոնացոց, յառաջ խաղացին մինչև Երուսալ գետը, և մի թերացի պարծենալով ասումեր, ուր են ապա Լակեղեմոնացիքը. պատասխանեց մի Ապարտացի, որ գերի էր ընկած թշնամիների ձեռք. Ներկայ չեն. ապա թէ ոչ, զուք չէիք կարող ոյս տեղ դալ:

51. Ո՞ի լսկոնացի կին լսելով թէ իւր որդին պատերազմի մէջ սպանվել է, պատասխանեց. Այն խորհրդով ձնած էի նորան, որ իւր հայրենիքի համար պատրաստ լինէր մեռանել:

52. Վլէքսաները լսելով թէ Դարեհէ, Պարսից թագաւորը, անհամար զօրքեր է ժողովում, պատասխանեց. Ո՞ի գոյլ երկիւշ շունի շատ ոչխարներից:

ՊԵՏԵԿԵՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Եցր որ մի Ռոտիկեցի զարկումեր Անոքարզիսի երեսին թէ սա ծնած էր Ակիւթիսցի աշխարհումը, պատասխանեց Անոքարզիսը. Ինձ նախատինք է իմ հայրենիքս, բայց դու նախատինք ևս քո հայրենիքին:

2. Ո՞ի վատառոչմիկ մարզու, որ ասումեր Լելիոսին թէ դու անարժան ես քո նախահօրներին, պատասխանեց Լելիոսը. Հերովդէս ասուուածը վկայ է, որ դու արժանի ես քո պապերին:

3. Եցր որ Ըրգերացոց զեսպանը շատախօսելով Եղիս թագաւորի առաջև, հազիւ թէ վերջացրեց իւր խօսքը և ապա հարցրեց թէ ինչ լուր տանեմ մեր քաղաքացիներին, ասաց Եղիսը. Այս լուրը տար, թէ ինչքան երկար հարկաւոր եղաւ քեզ խօսել, ոյն քան երկար հարկաւոր եղաւ ինձ լսել քեզ.

4. Կիսոցինէսը միանգամ լավաեր վառած հրապարակի մէջ շըջումեր լուսապայծառ ցերեկով, որպէս թէ մարդ է որոնում: Հարցրեցին նորան թէ ինչ ես որոնում. ասաց. Մարդ եմ որոնում:

5. Կայս փիլիսոփայից հարցնելով մինը թէ ինչո՞ւ համար մարդիկ դէպ ի մուրացկանները առատաձեռն են, բայց ոչ այնպէս դէպ ի փիլիսոփայը, պատասխանեց. Պատճառ որ նոքա աներկմատ դի-

տեն, թէ աւելի շուազվ կարող էին կաղանալ և կուրանալ քան
թէ փիլիսոփայ դասնալ:

6. Երբ Գեմանթենէսը առումմը Փոկիոնին. Ամենացիք կը
սպանեն քեզ, Փոկիոն, եթէ միանգամ սպանեին խելագարվել.
ասաց Փոկիոնը. Բայց քեզ կը սպանեն, երբ որ զատասացած էին:

7. Ամոնացի զեսպաներին, որ երգար ու ձիգ ճառ էին ասել,
պատասխանեցին Սպարտացիք. Առաջին ասածներդ մոտացել ենք,
վերջին ասածներդ չը հասկացանք, որովհետև առաջինները մորի-
րում չեն:

8. Կմեմոնաքսը տեսանելով որ մի մարդ պարծենումէ իւր ըշ-
զեսոսվը, բռնեց զգեստը և ասաց. Բայց այս հանգերձը քեզանից
յառաջ կրումմը ոչխարը և ոչխար էր:

9. Ո՞ր մարդ պարծենալով թէ շատ է խմում, բայց արբե-
նում չէ, ասաց նորան Արխատիպպոսը. Այդ կարգը է և ջորին:

10. Արատէս իմաստասէրը տեսանելով որ մի պատանի անա-
պատումը շրջումմէր, հարցրեց նորանից. Բնչ ես անում այս տեղ
մենակ. ասաց պատանին. Խօսումմմ ինքս իմ հետ: Սորան պատա-
խանեց Արատէսը. Զգոյշ կաց, որ վատ մարդու հետ չը խօսես:

11. Վրիստիպպոս փիլիսոփայի մօտ եկաւ մի ծնող և խնդրեց
նորանից որ յանձն անու զատիարակել իւր որդին: Երբ որ փի-
լիսոփան հինգ հարիւր դրաբնէ վարձ որահանջեց, հոյրը զարհուրե-
լով այս վարձաստրութենից, որ այն տգէս և ժշտ մարդուն անչափ
շատ էր երևում, ասաց. այդքան արծալով կարող եմ մի տարուկ
գնել: Բայս փիլիսոփան, Գնիր, ասաց. այն ժամանակը կ'ունենաս եր-
կու ստրուկ:

12. Ո՞ր մարդ տեսանելով մի տախտակ, որի վերայ պատկերա-
ցրած էին Սպարտացիք սպանված Ամենացոց ձեռքով, ասաց. Քաջ
մարդիկ են Ամենացիքը. այս բանս լսելով մի Լակոնացի, պատա-
խանեց. Այս, տախտակի վերայ:

13. Յարիա Դուլարելլա կինը ասելով Արենքոնին՝ թէ երե-
սուն տարեկան եմ. Ճշմարիտ է, ասաց Կիկերոնը, որովհետև այդ
բանը լսած եմ աչա քսան տարի յառաջ:

14. Օմեմիստոկլէս յշնը մի Սերբիիս անուն մարդու հետ հա-
կաձառելով, այս մարդը ասաց նորան. Դու ոչ թէ քո փառքովը,
այլ քո հոյրենի աշխարհի փառքովը պարծանք ես ստացել: Ասու-
մն, Օմեմիստոկլէսը պատասխանեց այսպէս. Վես է Ճերակլէսը, որ
ոչ ես, լինելով Սերբիիս, անուանի կը լինէի, և ոչ ոու, լինե-
լով Ամենացի, հոչակառոր կը լինէիր:

15. Φιλολησιανή από την περιοχή της Αρμενίας στην οποία έγινε γνωστή η λαϊκή μουσική της Αρμενίας.

16. Լիսիս Սալինատորը ձեռքից բաց թողելով Տարենտ քաղաքը, այնու ամենայնիւ պահպանեց զղեւեկը (բերդը): Երբ որ քանի մի տարի յետոց Մաքսիմոսը կրկին ձեռք էր բերած այն քաղաքը, Սալինատորը խնդրեց նորանից որ մասքերէ թէ իւր գործակցութեամբն է միւսանգամ տիրապետել է Տարենտին: Ի՞նչ մտաքերեմ, ասաց Մաքսիմոսը. ես չէի կարող միւսանգամ ստանալ, եթէ զու կորուսած չը լինեիր:

17. Վնաքարդիս մէիս թացին ներկայ գտանվելով Ամենացոց ժողովի մէջ, ասաց. Զարմանումեմ, որ Յունաց մէջ խօսողքը իմաստուններ են, բայց դատողքը յիմարներ:

ՕՐԵՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱՐՁՐ

1. Ιερηθαν ζπαμιγγεγήν, έρρη ορ θορα εύκερφε τις ποτιστέρ
φωρθουμέσιν ιερεώντας μιαρθίνει, ζωνδωμασωντας θωνας θυεραγ
ει αποτέλεσ. Θρωνας δέξιοι οικείας εύκερφε τις ποτιστέρ

2. Ապղիքա հռոմեացին տեսութիւն գնալով Էննիոս բանասակեղծին, հարցրեց դուք բաիցը. Էննիոսը տանն է: Սորա աղախինը սասաց. Տանը չէ: Կապղիքան կարձեց թէ ազախինը տանուաիրոջ հրամանով պատասխան արեց Նորան, և թէ Էննիոսը տանն էր: Քանի մի օրից յետոյ Էննիոսը եկաւ Կապղիքայի մօտ և հարցնումք դըռնիցը. Տանուաէրը տանն է: Կապղիքան ինքը ձայն տուեց, թէ տանը չէ. ապա Էննիոսը. Ի՞նչ ես խսում, չեմ հասկանում ասածդ: Պատասխանեց Կապղիքան. Անամոթ մարդ ես. երբ որ ես ործումէի քեզ, հաւասացի քա ազախին, թէ տանը չես. այժմ դու չես հաւասում ինձ որ թիւս եմ առում:

3. Կիովյանէաը տեսաննելով մի անշմառ նետաձիգ, շատ մօտ նատեց նպաստակին: Երբ որ հարցրեցին նորանից այդ բանի պատճառը, ասաց Դիոքինէս: Երկիրւղ ունիմ, թէ մի գոյցէ այդ նետընկէցը պատահմանը ինձ զարկէ:

Կ. Վ. Ե՞ն դիոզինէսը միանգամբ դալով Միւնդոս քաղաքը կարխայի, և տեսանելով որ նորա դռները արձակ ու փառաւոր շինածեն, բաց ինքը քաղաքը մի աննշան բան էր, ասաց. Միւնդացի տղամարդեր, փակեցէք դռները, որ քաղաքը դռւրս չը փախէի:

5. Վարսիմոս հիւպատոսը մեռած լինելով դեկտմբերի վերաբն օրումը, առաջին ժամու մէջ կեսօրից յետոյ, կանինոսը հիւպատոս քարոզվեցաւ մացած օրի համար։ Երբ որ ժողովուրդը, ինչպէս սովորութիւն էր, զիմումներ ողջունելու հիւպատոսը։ Ըստ պէտք, ասաց Կիկերոնը, քանի որ հիւպատոսը ներքեւ չէ դրեւ իւր իշխանութիւնը։ Այս կանինոսի մասին գրեց Արիերոնը։ Զարմանալի արժունն զտանվեցաւ կանինոսը, ըստ որում իւր հիւպատոսութեան բոլոր ժամանակը քուն չը տեսաւ երրէք։

Դիաս իմաստունը միանդամ նաւարկումքը ամրարիչու մարգերի հետ։ Թոթորիկ վեր կացաւ և նաւը սկսեց ալեկոծվիլ, և այդ մարգերը աղաղակումքին դէպ ի աստուածքը։ Աւեցէք, ասաց Դիասը, որ նորա շիմանան մէ զուք նաւարկումք այս տեղ։

7. Գիրոնեսիոսը նաւից ցամաք դուրս գալով Փելոպոնեսումը և մտանելով ոլիմպիական Դիսոի տաճարը, հանեց նորա վերայի սովորին ծանրաբշտու վերարկուն, ասելով. Ամառը ծանր է ոսկի վերարկուն, և ձևուը՝ ցուրտ. և հազցրեց նորան մի բրդեղէն վերարկու, բայ որում ասումքը. Այդ յարմար է ամենայն եղանակի համար։

8. Այս Դիսոնեսիոսը հրամացեց որ Էպիդաւրիան Էսկուլապիոս աստուածի սովորին մօրուքը վեր առնուն, ըստ որում ասումքը, թէ արժան չէ որդուն մօրուքաւոր լինել, պատճառ որ հայրը (Ապոլոնը) ամենայն տաճարների մէջ անմօրուք է։

9. Այս Դիսոնեսիոսը, յաղթութեան աստուածուհիների սովորին պատկերները և այն բաժակները և թագերը որ այդ կուռքերի արձանքը պարզած ձևորով բռնած էին, անխղճարար սեփականեց իւրեան, և ասաց. Այս բաները ընդունումք են և ոչ թէ յափշտակումք։ պատճառ, յիմարութիւն էր չը կանոնալ վեր առնուլ տարածեալ ձևորով մեզ պարզեածը նորանցից, որոնցից բարի չնորդներ ենք խնդրում։

10. Երբ որ Փիլիպպոս մակեդոնացին գատառոր նատեց երկու յանցաւորների վերայ, քննելով նոցա մեղապարտութիւնը, վճիռ տուեց, որ մինը Մակեդոնիայից փախառական լինի և միւսը նորա քամակից ընկնի։ Այս զուարձարան զատասանովը հրամացեց որ երկուքը ևս աքսոր գնան։

11. Ոի մարդ իւր բարեկամին հանդիպելով, ասաց. Երազումն տեսայ և խօսեցի քո հետ. պատասխանեց միւսը. ինդրեմ ներողութիւն, որ քեզ ականչ չեմ դրած։

ԱՐԵՎԻՑ ԽՈՍԹԵՎՈՐ.

1. Ո՞հ մարդուց հարցը երին թէ Աստուած ո՞ր տեղ է. պատասխանեց. Եսացեք յառաջուց, ո՞ր տեղ չէ:
2. Վրիստիպպոսին հարցնումէին թէ ինչ բանով զանազանվում իմաստունը շուտեալ մարդուց, պատասխանեց. Նրկուսը ևս մերկանդամ ուղարկիր անծանօթ մարդերի մօտ և կը տեսանես:
3. Պլատոնից հարցը ցի՞ն թէ ինչ զանազանութիւն կայ ինեւացի և չը ինեւացի մարդու մէջ, պատասխանեց. Եւն զանազանութիւնը, ինչ որ բժշկի և հիւանդի մէջ կայ:
4. Առնեից հարցը ցի՞ն. Ինչ բան է որէնքը, պատասխանեց. Մարդի ոստայն է, որի մէջ եմէ ճանձեր և մժեխներ ընկան, կը բռնվին, բայց եմէ պիծակներ և մշղաներ, կը պատառեն և կանցանեն մշցը:
5. Պիւթագորասին հարցնումէին, թէ ինչպէս արժան էր վարչիլ ապերախտ հայրենիքի հետ. պատասխանեց. Խնչպէս իւր մօտ հետ:
6. Առկրատէսին գանգատումքը մի մարդ, թէ իմ ճանապարհորդութիւնքս ոչինչ օգուտ չը մերեցին ինձ. Ոչինչ զարմանք չէ, ասաց Սոկրատէսը. պատճառ, ինքդ քո հետ էիր ճանապարհորդում:
7. Վնատիսթենէսին հարցը ցի՞ն. Ինչ օգուտ ես քաղել իմաստասիրութենից. պատասխանեց. Որ կարողանամ ինքս իմ հետ խօսել:
8. Դիրոգինէսը տեսանելով մի շույլ մարդ որ ճանապարհի հիւրանոցումը ձիթապատուղ էր ուտում, ասաց. Եմէ այդպէս նախաձայիկ ես առնում, ոչ այդպէս կարող էիր ճաշ ուտել:
9. Ո՞ի ըմենացի իւր մանուկ որդին ուղարկել էր Սոկրատէսի մօտ, որ սա քննէ և իմանայ նորա բնաւորութիւնը. Մանկածուն ներկայանալով նորան առումքը. Սոկրատէս, հայրը ուղարկել է իւր որդին ք մօտ, որ տեսանես նորան. Ապա ասաց Սոկրատէսը. Խօսմիր, մանուկ, որ տեսանեմ քեզ:
10. Կատոնը գրել է թէ Փուլինոս Սիփոփինը ասումքը յաձախ. Աչ մի ժամանակ այնքան փոքր պարագ չէի, ինչքան պարապութեան միջոցումը, և ոչ մի ժամանակ այնպէս փոքր միայնակ, ինչքան միայնութեան միջոցումը:
11. Ո՞ի սովինստ իւր սրամատութիւնը հանդէս հանելով Դիոնդինէսի առաջն, այսպէս էր հաւաքարանում. Ինչ որ ես եմ, զուշես: Երբ Դիոնդինէսը համաձայնեց, ասաց սովինստը. Ես մարդ եմ, ուրեմն դու շես: Ապա ասաց Դիոնդինէսը. Ակսիր ինձանով և եղակացութիւնդ ողիղ կը լինի:

12. Երբ որ մի վաճառականից կամենումէին իմանալ թէ ինչ կերպով և հաւաքել իւր հարսութիւնը, ասաց. Մեծերը, առանց դժուարութեան, բայց փաքքերը, աշխատանքով և առ սակաւ սակաւ:

✓ 13. Ենաբարդիսից հարցնումէին թէ ինչ բան մարդուս մէջ առանելապէս վաս և առանելապէս լաւ էր. պատասխանեց. Լեզուն.

✓ 14. Գիրդինէսը մի հարցնողի, թէ ինչ բան առելի շատով է մուացվում, ասաց. Քարերարութիւնը:

15. Ո՞ր առենաբան գատասանի մէջ պաշտպանելով պարսաւորված Արիստիպոսին, յաղթահարից հակառակորդի կողմը: Երբ որ առենաբանը, որպէս թէ իւր արուեստը գերազանց համարելով քան թէ իմաստափառութիւնը, հարցնումէր. Արիստիպոս, ինչ օգուտ բերեց քեզ Սոկրատէսը. Այն օգուտը, ասաց Արիստիպոս, որ քո առած իմ համար, ճշմարիտ եղաւ:

16. Ենաբանէնէսը լսելով թէ քանի մի ամբարիչո մարդեր գոված են նորան, ասաց. Կանկածումնմ թէ մի գուցէ անզգուշաթեամբ մի վաս բան արած լինէի:

✓ 17. Երբ որ Թալէսից հարցնումէին, թէ ինչ բան առանել չին է, պատասխանեց. Վստուած, պատմառ որ նորա գցյութիւնը անակիզրն է: Հարցրեցին, թէ ինչ բան ամենազեղեցիկ է, պատասխանեց. Աշխարհը, բայ որում Վստուծը գործ է, որանից առանել զեղեցիկ ոչինչ բան չը կոյ: Հարցրեցին, թէ որ բանը ամենից մեծ է, ասաց. Տարածութիւնը, որովհետեւ ամենայն բան պարունակումէ իւր մէջ: Հարցրեցին, ինչ բան առելի շատուարիցն է, ասաց. Միաբը, որովհետեւ թռչումէ և վաղումէ ամենայն տեղ: Հարցրեցին, թէ որ բանը ամենից զօրաւոր է, ասաց. Հարկաւորութիւնը կամ Օրհասը, պատմառ, ամեն բանի յաղթումէ: Վերջապէս հարցրեցին, ով է ամենից իմաստունը, ասաց. Ժամանակը, որովհետեւ ամենայն բան գտանումէ:

Ե.Օ.Ա.Տ.Օ.Ի.Կ. Խ.Օ.Ա.Խ.Ը.Ծ.Օ.Բ.:

1. Փիլիպոս թագաւորի մօտ, որ զինեցած (զինովացել) էր, գատաստան զնաց մի կին և անմեղութեամբ գատապարսովելով, աղաղակեց. Քո գատաստանիցը մի ոյլ մարդու մօտ եւմ բողոքում: Ազա որի՝ մօտ ես բողոքում: ասաց բարկացած թաղաւորը. պատասխանեց կինը. Սաստիկ արբեցած և քունը գլուխոը կօխած Փիլիպոսից զէպ ի անօթի և արթուն Փիլիպոսն եմ բողոքում: Այն կնոջ այսքան համարձակ պատասխանը զգաստացրեց թագաւորի թմրութիւնը և Առա ։

փախցրեց նորա քնածութիւնը։ Թագաւորը ոչ թէ միայն չը զարցաւ նորա վերայ, այլև նորա դատը աւելի մտադիւր քննելով, առաւել արդար վճիռ տուեց։

Վ. Ա՞ի աղքատ պառաւ աղաւումքը Փիլիպպոս թագաւորին որ նորա վեճը վճռէ. թագաւորը պատասխանեց, թէ ժամանակ շունիմ զորա համար քննեմ չունիս ժամանակ և թագաւոր լնելու, ասաց պատաւը վ Փիլիպպոսը զարմանալով այս պատահ աղաւախօսութեան վերայ, ոչ թէ նորան ականջ զրեց միայն, այլև իսկըն ունկնդիր եղաւ այն մեծ բազմութեանը որ իրաւունք էր պահանջում։

Յ. Փիլիպը թագաւորը լեւով թէ քանի մի Տարւնացք վատարանել են նորան, իւր մատ հրամայեց քերել բամբառողները և հարցնումքը. Արգեօք խօսէլ էր դուք այն բաները որ հասած էին իմ անկանչին։ Մինը պատասխան տուեց. Այս խօսել ենք, աշը թագաւորը, և աւելի ևս խօսած կը լինեինք, եթէ զինին աւելի առատ եղած լիներ։ Այսպէս լեզուի լրբութիւնը արբեցութաւ տալով, թագաւորի բարկութիւնը դեպ ի ծիծաղ շրջեցին։

Շ. Օգոստոս Կայսրը միանգամ դատաստանի վերայ լինելով, երեսումքը որ կամք ունի շատերին մահու պատիժ տալ Վերայ հասաւ. Մեկնասը, բայց չը կարողանալով չ չակայ բացմութիւնը ձեռշքել և անցանել, որ մատենար դատաստանական ամոռովն, զրեց տախտակի վերայ այս բառերը. Վեր կաց միանգամ, զահիձ դու, և ձգեց այն տախտակը դեպ ի Օգոստոս, որ կարգալով նորա վերայ գրած և, իսկըն վեր կացաւ տեղիցը, և ոչ ովլ չը պատժվեցաւ մահ վ.

Ո. Էլեքտանդը մեծին շատ գեղեցիկ պատասխան տուեց մի ժրոնված ծովային աւազակ։ Երբ որ թագաւորը հարցնումէ, առյան, թէ ինչ իրաւունքով դու անհանդիս ես առնում ծովը, ուստախանեց նա. Եօվա դու ինչ իրաւունքով բոլոր տիեզերքը. Բայց գործը մի և նշյն է, թէպէտ ես փոքրիկ նաւով նշյն բանը կատարելով աւլումմ աւազակ. դու, շատ որում բազմաթիւ նաւերը, զօրավար։

Դ. Ամէն քաղսքումը սովորութիւն կար, պարտաւորված մարդուց հարցնել թէ իւր խօստավանւթեամբը ինչքան պատիժի արժանի էր։ Երբ որ այս մասին հարցուփորձ էին առնում Սոկրատէսից, պատասխանեց սա, թէ արժանի է ստանալ ամենաճօխ պատիժ և վարձատրութիւն. այլև հասարակաց հացով պահպանվիլ Պրիտանէն ասած տաճարումը, որ շատ մեծ պատիժ էր համարվում Յշն աղջի մէջ։ Սոկրատէսի պատասխանի վերայ այնպէս զայրացան դատասրը մինչև առ ի մահ դատապարտեցին այն անմեղ և անարատ մարդը։

✓ 7. Ալրեսոսը, թագառորական աթոռի վերայ նստած և մեծավայեց-
լու զգեստներով զարդարված, հարցրեց Սոլնից. Արդեօք աե-
ած ևս երբէք մի աելի փառաւոր բան: Այու, ասաց Սոլոնը, զոր
օրինակ որձակները, փափանները և սիրամարգները որ բնատուր և
ոչ թէ արուեստահնար գոյներով և գեղեցկութենով շողջողումն:

✓ 8. Վլէքսանդրը Նվիտոս քաղաքումը քննելով իւր պատկերը
որ նկարել էր Ապելլէս, այն ժամանակի գերազանց պատկերահներ,
և զովեց արուեստաւորի գործը, բնալէս վայել էր: Այս պատկերը
ցուցանելով Վլէքսանդրը ձիու վերայ հեծած, Ապելլէսը հրամացեց
որ մի ձի գուր բերին: Երբ որ այս ձին տեսաւ իւր նմանը Վլէք-
սանդրի տակին, սկսեց խրինճալ, որպէս թէ և սա ճշմարիտ ձի
էր: Ապա ասաց Ապելլէսը, Ավ թմագաւոր, այս ձին աւելի տեղեակ
է երևում պատկերահնութեան արուեստին, քան թէ զու:

ԶԵԿՈՒՐԵԱԿԻ ԽՈՅՑՈՒՄԾՈՅԻ.

✓ 1. Պլատոնումն թէ Անաքսագորաս փիլիսոփոսը իւր որդու մահը
լսելով, ասաց. Գիտէի, որ նորան մահկանացու եմ ծնել:

2. Վնախմաբոս բանաստեղծը իւր շարադրութիւնը կարդումը
ժաղովի մէջ. երբ որ ընթերցանութեան միջոցումը ամենեքեան բաց
ի Պլատոնից թողեցին բանաստեղծը և գնացին, ասաց բանաստեղծը.
Այսու ամենայնիւ կը կարդամ, պատմառ որ Պլատոնը իմ համար,
թէ և մի միայն, բայց հաւասար է ամեներին:

✓ 3. Երբ որ Հարցրեցին Սոլնից թէ ինչո՞ւ պատիժ չես սահմա
նել ծնողասպան մարդուն, պատասխանեց. Ըստ որում մտքից անց
չէ կացել թէ ոյցպիսի յանցաւոր կարող էր գտանվիր:

4. Վազանութեան արժանի է այն խօսքը Արքիւտասի, որ
բարկանալով մի գիշզական անտեսսի վերայ, ասաց. Ի՞նչպէս կը պատ-
ճէի քեզ եթէ բարեցացած չը լինէի:

5. Երբ որ Սոկրատէսի աշակերտը, ամեն մինը իւր կարողու-
թեան պէս, զանազան ընծաներ էին մասուցանում իւրեանց վարդա-
պետին, ասաց Էսքինէս աղքատ աշակերտը. Չունիմ մի արժանի բան
որ քեզ ընծայ բերեմ, և այս պատմառով միայն չբաւոր եմ համա-
րում ինձ: Աւրեմն բաշխումը քեզ այն մի հաս բանը որ ունիմ,
այսինքն, իմ անառ իննդրեմ, որ այս պարզեը, ինչքան և փաքը
էր, քաղցրութեամբ ընդունես և մտածես, որ միւսերը շատ տալով
քեզ, աւելի շատ պահէլ են իւրեանց համար: Մի թէ քո տուած
պարզեը մեծ չէր, եթէ զու քեզ փոքր չես կշռում, ասաց Սոկրա-

տեսը. հոգաբարձռւ կը լինիմ որ քո անձը աւելի լաւ յետ դարձուցնեմ քեզ, քան թէ ստացած եմ:

6. Մարկոս Կատոնին մի մարդ բաղանիքումը զարկեց անզգուշութեամբ. և ով արդեօք այնպիսի մարդուն զիտութեամբ անիրաւութիւն կ'առներ: Երբ որ ոյն զարկող մարդը թողութիւն էր խընդում, ասաց Կատոնը. Մարիս չէ, թէ դու զարկել ես ինձ:

7. «Քանի մի, զիշերավ ուստող խմող մարդիկ հանդիպեցին ոիզ զիտարասոսի կնոջը և անպարինշատ բաներ շատ արեցին և խսեցին. Երբ որ սոքա միւս օրին իւրեանց արածի համար թողութիւն էին խնդրում Պիզիտարատոսից, սա պատասխանեց նոցա. Դուք այսուհետեւ առաւել հետեւեցէք համեստութեան, բայց իմ ամուսինս երեկ ոչինչ տեղ չէր գնացած:

8. Երբու զօրական թագաւորի վրանին շատ մատ վատարանումին Անտիկ անոսը. թագաւորը լսում էր բոլորը. պատճառ, նորա և զօրականների մջ ոչինչ չը կար բաց ի մի վարագուրից, որ և թագաւորը շարժեց մաղմով և ասաց. Գոնեայ փոքր մի հետի գնացէք որ թագաւորը չը լսէ ձեզ:

9. Ալէունեւ թագաւորի զուստր Գորգոնը տեսանելով որ Արիատագորասի կոշիկները հազցնում էր մի ծառայ, ասաց. Եյդ ինչ բան է. մի թէ ոյդ հիւրը ձեռքեր չունի:

10. Ալէունորոս փիլոսոփոսին Լիւզիմարոս թագաւորը սպառնացաւ թէ խաչ կը հանէ նորան. պատասխանեց փիլիսոփան. Խնդրիմ որ այդ զարհուրելի բանով աչ ձգես ոյդ քո ծիրանազգեստ մէծամեծների սիրոը. բայց թէուգորոսի համար մի և նշյն է, հողի տակին, թէ հողի վերեւումը կը փառէր:

11. Վաղիլայսունին յորդորում էր մինը, որ ականջ զնէ մի մարդու որ զարմանալի արուեստով նմանում էր սոխակի ձայնին: Վաղիլայսունը հրաժարվեցաւ ասելով. Ծատ անզամ լսած եմ նշյն իսկ բուն սոխակի ձայնը:

12. Երբ որ Դիտոնսիսը հարցուիորձ էր առնում Արիատիպոսից թէ ինչու, Սոկրատէսը թողած, եկել ես Սիկիլիա, պատասխանեց. Այն խորհրդով, որ բաժանեմ ինչ որ ունիմ, ստանամ ինչ որ չունիմ:

13. Ի՞հաս իմաստունի հայրենիքը, որ Պրիենէ քաղաքն էր, թշնամու ձեռք ընկնելով, բնակիչքը փախչում էին, շատ բաներ իւրեանց գշլից տանելով իւրեանց հետ: Մի մարդ խորհրդութ տալով քիասին որ նմանապէս փրկէ իւր գշլը, պատասխանեց նա. Ահա փրկումն իմ գշլը. պատճառ, ինչ որ ունիմ չունիմ իմ հետո է:

14. Պատմումն թէ Սոկրատէսը ապասկ կերաւ մի մարդուց և

ոչինչ ձայն չը համեց, բայց միայն ասաց. Եաւելի է, որ չը գիտէ
մարդ թէ երբ հարկաւոր էր սաղաւարտով դուրս գնալ:

✓ 15. Կը Սոկրատէսը միւսանգամ աքացի զարկ սոսնալով մի
անամօթ մարդոց, համբերութեամբ տարաւ այս անարգանքին: Բա-
րեկամները զարմանալով այս բանի վերայ, պատասխանեց Առկրա-
տէսը. Ի՞նչ էք մոսծում. Եթէ մի էշ աքացի էր զարկել ինձ, մի
թէ արժան էր ինձ նորա հետ դաստատան գնալ:

16. Երբ Արիստիպպոսը իւր բարեկամի համար աղաչումեր Գիո-
նեսիոս բռնաւորին, բայց նորա խնդրուածքը տեղ չը հասաւ, ապա
գեսնի վերայ պարզվելով սկսեց գրկել թագաւորի ոտքերը, և իւր
գործը յառաջ տարաւ: Քանի մի մարդիկ մեղադրումելին Արիստիպ-
պոսին այս ցած ընթացքի համար, ըստ որում անարժան էր փիլի-
ստիայի. պատասխանեց Արիստիպպոսը. Աշղատորը ևս չեմ, այլ Գիո-
նեսիոսն է, որ իւր ականջները իւր ոտքերի մէջ ունի:

✓ 17. Ոոկրատէսից հարցրեցին թէ ի՞նչ երկրից ես, պատա-
խանեց. Աշխարհացի եմ, ըստ որում իւր անձը համարումեր բոլոր
աշխարհի բնակիչ և քաղաքացի:

18. Արիստոսէլսուր լսելով թէ մի մարդ հայհցել է նորան,
ասաց. Եը ներկային թող և խարզանով կտրատէ:

✓ 19. Ոոկրատէս, գերազանց իմաստունը, ասումեր յաճախ, թէ
ինքը մի բան միայն գիտէ, այսինքն, թէ ոչինչ չը գիտէր, բայց
միւսերը և այդ չը գիտնի:

20. Երբ Գիոնեսիոս բռնաւորը ճաշ էր կերած Լակեդեմոն
քաղաքումը, ասաց թէ համ չը տեսայ այն սեւ թանիցը որ Լակե-
դեմոնացց սեղանի զլիսաւոր կերակուրն է: Հաջ եփողը պատաս-
խանեց. Զարմանք չէ, որովհետեւ համեմունքը պակաս են. Ի՞նչ հա-
մեմունք, հարցրեց Գիոնեսիոսիուր. ասաց միւսը. Որտղութեան աշխա-
տութիւնը, քրտինքը, վաղելու Եւրոպա գետի ափումը, սովոր և ծա-
րաւը, ահա սոված են Լակեդեմոնացց սեղանի համեմունքը:


✓ 21. Երբ որ Անգլասագորասը մեռնումեր Լամփսակոս քաղա-
քումը, և բարեկամները հարցրեցին. Կը ցանկանան արդեւք որ տա-
ննիք քեզ կը կլացումն հայրենիքը. Աչ, ասաց, որովհետեւ ամե-
նայն տեղից մի և նոյն շափ է տարտարոսի հանագարչը:

✓ 22. Պատմումն թէ Սոկրատէս ոյժը լարած ճան էր գալիս
մինչեւ երեկոյ: Հարցրեցին, ինչո՞ւ ես այդպէս աշխատում. պատաս-
խանեց. Վելիի լաւ ճաշ ուտելու համար, ճան գալով քաղցածու-
թիւն եմ ճարում:

✓ 23. Մի բարեկամ ասումեր Սոկրատէսին. որովհետեւ զու հիւ-

12557.

1/288II



բեր ունէիր ընդունելու, փոքր է տեսած պատրաստութիւնդ։ Պատրաստանեց Սոկրատէսը. Եթէ լու հիւրեր են, բաւական էր պատրաստութիւնը, բայց եմէ վաս են, բաւականից աւելի էր։

24. Ո՞ի ծառայ պատիժ ստանալով իւր տիրոջից, ասումէր. Եկամայ մշանչցի. ասաց տէրը. Արեմն և ակամայ պատիժ ստացիր։

25. Ո՞ի մարդ, իւր հանձարը ցաց տալու համար, շատ բանը խօսելով երկնային առարկաների վերայ, հարցուց Դիոգենէսը. Ե՞րբ ես եկել երկնքից։

26. Վեպարզիս սկիւթացին մի հարցանողի, թէ որ նաև ըը աւելի պահառով էին, պատասխանեց. Այն նաև ըը որ ցամաքի վերայ էին դրած։

27. Ծոերացած և մահոն շատ մատեցած Գորգիսա ճարտասանից հարցրեցին. արգեաք ախորժ է քեզ մոռանելը, ասաց. Ծառ ախորժ էր. պատճառ, գուրս կ'երթայի իմ փառած և ողորմէլի ընակարանիցը։

28. Երբ Հիերոն բանակալը Ամմոնիդէս բանաստեղծից հարցրեց, թէ ինչ է Ըստուած, մի օր մտածութեան ժամանակ պահանջնեց Ամմոնիդէսը. Միւս անգամ Հիերոնը նշն բանը հարցնելով նորանից, բանաստեղծը երկու օր խողրեց. Ճետց կրկին և կրկին անգամ աւելի ժամանակ։ Հիերոնը զարմացաւ և կամցաւ իմանալ այդ բանի պատճառը. պատասխանեց Ամմոնիդէս. Ահա պատճառը. Քանի որ մտածումնմ, ևս առաւել մը անումէ բանը։

29. Ո՞ի անխօնձ մարդ հարցնելով Քիասից, թէ ինչ է երկիւղածութիւնը, ոչինչ պատասխան չը տուեց Քիասը. Երբ այն մարդը կամցաւ իմանալ սորա լութեան պատճառը, Առև կաց, ասաց Քիասը, պատճառ որ այնպիսի բան ես քննում, որ քեզ երբէք չէ վերաբերվում։

30. Վէլքսանդրը հրամայած էր իւր գանձապետին, որ Անապատացու փիլիսոփային տար ինչքան որ կը պահանջէր նա։ Գանձապէտը լսելով Անապատացու պահանջումը, վրդովվեցաւ, և յայտնեցին Վէլքր անդրին թէ փիլիսոփան խնդրումէ հարիւր տաղանդ։ Օրինաւոր է դորա պահանջումը, ասաց Վէլքսանդր. Ըստ որում զիակ թէ ունի մի բարեկամ որ կարող էր և կը կամնար պղդքան տալ։

31. Ոսկրաս էքը տեսաւելով թէ Վէլիբիտէսը իւր հարսութենով մէծամալով է և պարծենումէ իւր կալուածների բաղնութեամբը, տարաւ նորան դէպի մի կողմ, ուր կախած էր մի աշխարհագրական տախտակ, և խնդրեց որ գտանէ սորա վրայ Ատտիկայի աշխարհը։ Երբ որ գտաւ, հրամայեց Առկ, առեսը, որ իւր կալուած

Ները որոնէ այն տեղ. երբ Ալիքիրիադէսը պատասխանեց, թէ գը-
րած չը կան, ապա ասաց Սոկրատէսը. Այն սեփականութենո՞վն ես
պարծենում դու, որ երկրի ոչինչ մասը չէ:

✓ 32. Ոոկրատէսը տեսանելով, որ անդրիագործները ամենամեծ
ջանադրութենով աշխատումն այն բանի վերաց որ քարը շատ նման
կացուցանեն մարդուն, ասաց. Զարմանումն, որ դոքա չեն նշյա-
ռիս ջանադրի որ իւրեանց անձը աննման կացուցանէին քարերի:

✓ 33. Եշր որ մի ծառայ, ուկով ու արծաթով բևռնաւորված,
տանջվումէր ճանապարհին, ասաց նորան Ըրիստիարդուսը. Ապա ճգիր
ինչ որ աւելորդ է, և տար ինչքան կարող էս,

34. Դիրքինեսը մի մարդու, որ հայհայումէր նորան, ասաց.
Ոչ ինձ կը հուասուր մի մարդ, եթէ զովէի քեզ, և ոչ քեզ, եթէ
վասարանումս ինձ:

✓ 35. Վգեղիլսյոսի հայրը պահանջելով իւր որդուց, որ մի դա-
տաստանական գործի մեջ օրէնքի ընդդէմ վճիռ տայ, ասաց Վգե-
ղիլսյուսը. Քեզանից, իմ հայր, սկսած մանկութենից ուսել եմ
հաղանդ լինել օրէնքին, ուրեմն և այժմ կը հնազանդեմ քեզ,
չը լուծանելով օրէնքը:

36. Ոիմնիդէս բանաստեղծը, շատ սրտակից բարեկամութեամբ
կապած լինելով թեմիստոկլէսի հետ, ինդրեց նորանից մի անիրաւ
բան. բայց թեմիստոկլէսը չը կատարելով նորա ինդիրը, ասաց. Ոչ
դու, ով Սիմոնիդէս, լաւ բանաստեղծ կը լինէիր, եթէ տաղիր շարա-
դրէիր բանաստեղծական արուեստի կանոններին ընդդէմ; ոչ ես լաւ
պաշտանաւոր կը լինէի, եթէ քեզ հաճախալու համար, հայրենա-
կան օրէնքներին ընդդէմ մի բան առնելի:

37. Եշր որ Դիոնը մի հացիրութենից յետոյ տուն եր զա-
լիս, մի վատարանով մարդ սկսեց ճանապարհին նախատել նորան,
ոչինչ պակաս խօսք չը թողելով որ շատէր, Դիոնը լուռ կացաւ:
Երբ որ մօտենալով իւր տանը, կամնումէր ներս մոռնել, հար-
ցրեց այն շարաթեղու մարդը. Ոչինչ պատասխան չունիս տալու ինձ.
Ամենեին ոչինչ, ասաց Դիոնը:

✓ 38. Ոոկրատէսից հարցրեցին, թէ ինչ մարդ կարող էր հան-
դարս կեանք վայելել. պատասխանեց Այն մարդը որի խղճմանքը
ազդաւ է խայտառակ գործերից:

39. Եշր ռ.ռ.ռ. Մարկելլոսը Տիբերիոսի խօսուածքի մեջ
մի բան պարսաւումէր, ըստ որում սիսալ լատինախօսութիւն եր, և
սորա հաշտակ հաստատումէր Ատէյս կապիտոնը պայպէս. Աւզիդ
լատինախօսութիւն է, և եթէ չէ, կը դառնայ: Ճշմարիտ, որ սուս

է խօսում կապիտոնը, ասաց Պոնպոնիս, պատճառ, զու, ովք կեսար, կարող ես մարդերին քաղաքականութիւն տալ, բայց քո խօսքերին, և ըստ ոչ:

40. Եւ կրիտոսից կամեցան իմանալ, թէ որ բանին աւելի կը ցանկար, արգելով Կրեսոն լինել, թէ Սովորատէս, պատասխանեց. Մինչև կենդանի էի, կը ցանկոյի աւելի Կրեսոն լինել, բայց մռանելու ժամանակը, Առկրատէս:

41. Հարցրեցին Արխատուելից, թէ ինչ օգուտ սոսացար դու պարապելով իմաստասիրութեան. պատասխանեց. Այն օգուտը, որ յօժարակամ առնեմ այս բանը, ինչ որ առաւել մած մասը մարդերի առնումէ, որէնքից վախենալով:

42. Ո՞ի գող մարդ իւր անձը արդարացուցանելով Գեմոսթենէսի առաջն, առումնը, 2ը զիտէի թէ այս քո սեփականն է: Բայց բաւական լաւ զիտէիր, որ այս քո սեփականը չէ, պատասխանեց Գեմոսթենէս:

43. Ենաբարդիսին հարցրեցին. Ինչ բան առաւել լինասակար է մարդուն. պատասխանեց. Ինքը իւր անձնին:

44. Ենտիպատրը Փոկիոնից մի անիրաւ բան ինդրելով, պատասխանեց Փոկիոնը. Դու չես կարող ունենալ ինձ միանգամայն բարեկամ՝ քեզ և մարդաշանց:

45. Փիդիստրատոսի սեղանակիցների մինը սաստիկ արբեցած, հայհց նորան, և բարեկամը յարերումին նորան որ պատիժ տայ այն մարդուն: Ըստումն թէ Փիդիստրատոսը այսպէս խօսեց. Ես նորս վերայ սյնքան փոքր տեղիր ունիմ բարեկանալու, ինչքան մի մարդու վերայ, որ կապած աշքերով իմ վերայ էր վաղում:

46. Եւրը որ մի մարդ Խիմիկրատէսի երեսին էր տալիս նորա անարդ տոհմականութիւնը, ըստ որում կօշկակար հօր որդի էր, ասաց Խիմիկրատէսը. Իմ ազգս ինձանով է սկսանում, բայց քո ազգը քեզանով կը վերջանայ:

47. Ո՞ի սնապաշտ մարդ տեսանելով, որ իւր կօշիկները կը թել էին մկները, և կարծելով թէ այս մի նորանշն բան է, հարցրեց Կատոնից թէ ինչ տեսիլը էր այս. Կատոնը ասաց. Այդ, տեսիլը չէ, որ մկները կրծել են քո կօշիկները, բայց եթէ քո կօշիկները կրծէին մկներին, այդ կը լիներ տեսիլը:

48. Եւրը որ Եղողոսին իւր տգեղութեան համար մեղադրումէին, ասաց. Մի նայեցէք իմ կերպարանքին, այլ իմ խելքին:

49. Ո՞ի մարդու, որ պարենումէր իւր բազմօրինակ հմուտմենովը, ասաց Արխատիպուս. Զոր օրինակ ոչ թէ շատակերը աւելի

առողջ են քան թէ նորա որ ուսումն ինչքան պէտք էր, նմանապէս ոչ թէ շատ իմացողքը, այլ պատակար բաներ իմացողքը պիտոյ է հմուտ համարվին:

✓ 50. Աղջնից հարցրեցին թէ ինչպէս կարող էր պահպանվիլ թագաւորութիւնը, պատասխանեց. Նրբ որ քաղաքացիք հնազանդ լինին իւրեանց մեծաւորներներին, և մեծաւորքը օրէնքներին:

51. Ո՞ի մարդ պարծենալով, թէ մի մեծ և անուանի թագաւորութեան հպատակ էր, պատասխանեց Արքասուութէս. Եյդ ոչինչ բան չէ, բայց արդեօք արժանի՞ն ես դու քո մեծ և անուանի հայրենիքին:

52. Անհիկերիս Ամուրենացին շատ մեծ կարծիք ունէր իւր ձիլնեացութեան և կառավարութեան արուեստի մասին: Սա կամենալով իւր հմտութեան փորձը ցցց տալ Պլատոնին, լծեց կառքը և շատ անգամ պտոյաբեց իւր ընթացքը ճեմարանի մէջ, այնպէս քաջ պահելով անիւների առաջն շատիցը աւազի վերայ, որ մի մազաւափ ևը ծավեցաւ նորանից: Եյս բանի վերայ հիացած մացին ամեներան և գովասանելով մինչև երկինք բարձրացրեցին այն կառավարը: Մի միայն Պլատոնին այդ քաջութիւնը աւելի նախառնի քան թէ պատուարժան թուեցաւ, որ և ասաց. Անկարելի է, որ այն մարդը, որ այդքան ջանադիր էր այդպիսի շնչին և անօգուտ բաների, անփոյթ չառնէր այն բաները որ առաւել խորհրդաւոր էին և զարմանալու ճշմարտապէս արժանի:

ԳԼՈՒԽԻ Բ.

ՕՐԻՆԱԿԱՆԻ ՕՐՈՅՑԵՆՔ.

✓ 1. Ո՞ի մարդ հարցնումէր մի աղքատ մուրացկանից. ինչով ևս պարում, Եղբատը պատասխանեց. Նթէ դու հարցրած լինէիր թէ ինչով եմ մուանում, կը պատասխանէի քեզ թէ մուանումմ սովից:

✓ 2. Ո՞ի Շվեդացի քնած լինելով պաշարեալ քաղաքի պարըսպի վերայ, եկաւ լմնդանօմի գունաը և տարաւ նորա գլուխը: Մի այլ Շվեդացի ականասես լինելով այդ դիպուածին, ձայն տուեց. Ահ, ինչպէս կը զարմանայ իմ ընկերս, երբ որ զարթնու և տեսանէ թէ անգլուի էր:

3. Ո՞ի գող դիշերով պատուհանից ներս մօսաւ մի աղքատ մարդու օմէւան և սկսեց մթնուամը ձեռքերը ոյս կողմ ոյն կողմ ձգել, որ մի գողանալի բան գտանէ: Եղքատը որ գեւաւ քնած չէր, ասաց նորան. Քարեկամ, զու եկել ես դիշերով մի բան որուն ոյն տեղ, ինչ տեղ ցերեկով չեմ կարողանուամ ես բան գտանել:

4. Ո՞ի գասկոնացի իւր թոշակը խնդրուամը զինուորական նախարարիցը. ինձ հարկաւոր է այդ, ասումէր նա, որովհետեւ մեռանուամը սովից: Կախարարը տեսանելով որ նորա գէմքը զուարթ և կարմիր էր, ասաց նորան. Քո երեսը սուտ է հանում քեզ: Ո՞ի խարվիք, պարոն, ասաց Գասկոնացին, այս գէմքը իմն չէ, այլ իմ տանուամիրովն է որ վաղուց պարոր է տալիս ինձ:

5. Ո՞ի զինուորական աստիճանաւոր, որ պատերազմի մէջ կորուսած էր մի սովքը, շինել էր տուած փայտից մի այլ սովք՝ ամենեւին նման բնականին: Ո՞ի քանի ժամանակից յետոյ թնդանօթի դունտը եկաւ տարաւ նորա փայտեաց սովքը: Նորա շրջակայ մարդիկը միտեցին ձայն տալ շնուր արեցէք, ասացէք որ դոյ վերարոյժը! Աչ, բարեկամը իմ, հանդարտօրէն ասաց աստիճանաւորը. Ասացէք որ դոյ աստղձագործը (խուագը):

6. Ո՞ի քանի զինուորներ իջևանած մի գեղում պատերազմի միջոցին, պատահեցին մի շինականի, ծեծեցին նորան և վեր առան նորա վերարիկուն և արծաթը: Շինականը գնաց գանգատուելու մեծաւորների մինի մօտ: Աս ասաց շինականին. Եղբայր, երբ այդ զինուորքը կողովուեցին քեզ, վերայիշ էր այդ զգեստը: Այս, զարոն, պատասխանեց նա: Ապա գնա, ասաց մեծաւորը, և միամիտ կաց որ դոքա իմ մարդիկս չեն, պատճառ որ սոքա քո վերայի շապիկը ևս հանած կը լինեին:

7. Ո՞ի պակասամիտ երխսասարդ կամանումը նամակ գրել իւր բարեկամին, բայց չը գիտէր թէ ինչպէս առնէ. զնեց մի նամակադիրը և գտաւ այն տեղ մի այնպիսի նամակ ինչպէս ցանկանուամէր. սրբնակից նորան ճշդութեամբ և ուղարկեց ինչ տեղ հարկաւոր էր: Առա բարեկամը ունենալով իւր մօտ նշյն գիրքը, գտաւ նորա մէջ այն նամակը և պատասխանեց իւր բարեկամին այս խօսքերով: Պարոն, ասացաց քո նամակը, ըթիքը թերթը և կը գտանես թղթիդ պատասխանը:

8. Վաստրիսի կայսր Յովանի երկրորդը իւր ճանապարհակից սպատասորներից յառաջ եկած լինելով Ֆրանսիայի մի քաղաք, Հիւրընկալու տանութիկները որ ուրախ բնութեան տէր էր, հարցրեց նորանից. Թագաւորի մօտի մարդերիցն ես զու: Աչ, պատասխանեց

Նա: Մի քանի ժամանակից յետոյ տանտիկինը մտաւ եկառորդ մենակը, երբ որ նա զբազած էր սակարգը լով մորոքը, և հարցրեց նորանից. Պաշտօն ունին թագաւորի մատ. Այս ասաց, երբեմն սակարումն նորա մը բուքը:

9. Ո՞ի գիւղացի գնացած լինելով բժշկի մատ, որ նորանից խորչուրդ հարցանէ իւր հիւնդութեան մասին, բժիշկը գննելով նորա ցաւը գրիւ վեր տուաւ և գրեց նորա համար մի պատուէր, որ և տալով նորան ասաց. Գործ դիր այս բանը էզուց առաւտուն, և շուտով կ'առողջանաս: Ծինականը կարծելով թէ այս թուղթը էր նոյն իսկ բժշկական գեղը, մէջ յուսով յետ եկաւ տուն, և միւս օրին կուլ տուեց նորան առաւտուն կանուխ և առողջացաւ կատարելապէս:

10. Ո՞ի աղքատացեալ աղնուական, չը կարողանալով հատուցանել իւր պարտատէրներին, ասումէր մի առաւստ, վեր կենալով անկողնիցը. Սատանան տանի այն բոլոր մարդիկը որ գալու են այսօր, արծաթ պահանջնելու ինձանից: Եսյս խօսքը բերանից հանած, լսեց աղնուականը որ զարդեռմէին դուռը. բաց արեց և տեսստ որ ներս են մասնում իւր պարտատէրներից չորս մարդ, որ և սկսեցին հարցնել նորանից այսպէս. արդեպ մոռացել ես քո պարտատէրը: Երգում ուտեմ, ասաց նոյա աղնուականը. Ո՞ի բոսկ յառաջ ձեր վերայ էի մտածում:

✓ 11. Ո՞ի արբեցեալ զինուոր հանդիպելով իւր զօրապետին ձիռ վերայ, գագարեցուց նորան, և ձիռ սանձիցը բռնած, հարցրեց թէ ձիռ գինը ինչ է: Զօրապետը տեսանելով թէ ինչ դրութեան մէջ էր զինուորը, հրամացեց տուն տանել նորան և հանգատացնել: Միւս օրին գնաց զօրապետը որ հարցանէր նորանից, թէ ինչ զին կը տայ իւր ձիռ համար: Տէր իմ, պատասխանից նորան ինէլքը գլուխը եկած զինուորը. Կա, որ երեկ երեկոյին կամնումը զնել ձեր ձին, այս առաւտուն վաղ գնացել է:

12. Ո՞ի յիմար երիտասարդ, որ ամենենին կարդալ չը գիտէր, պարզե ստացաւ մի գեղեցիկ գիրք: Առ ի ցյց, այն գիրքը իւր հետ տարաւ եկեղեցի և ձևանումէր որպէս թէ շատ ջերմուանդութենով կարդում նորան: Պատահէց ակյաջողութեամբ, որ մի պատանի մարդ, կանգնած նորա քամակումը, տեսաւ որ նա բռնել է գիրքը գլխի վայր: Պարուն, ասաց նորան, ներեցէք համարձակութեանս, որ հարցնումէմ ձեզ թէ ինչո՞ւ համար գուք ձեր գիրքը գլխիվայր էր բռնում: Պատճառ որ ես ձախէլիկ եմ, պատասխանեց այն յիմար երիտասարդը:

13. Ո՞ի գիտնական մարդ շատ պարագած լինելով իւր առանձնաբարանի մջ, ներս մտաւ մի փոքր աղջիկ և խնդրեց նորանից կրակ: Գիտնականը ասաց նորան: բայց դու չունիս մի բան, որանով տանէիր կրակը, և մինչև գիտնականը որոնումքը մի ամառ, այն փոքրիկ աղջիկը մօսեցաւ կրակարանին, վեր առաւ ձեռքի վերայ մի փոքր սառն մօխիր և դրեց սորա վերայ մի քանի վառ ածուխներ: Այս բանի վերայ այն չափ զարմացաւ այն գիտնականը, որ իւր դրբերի մինը վայր ձգեց ասելով: իմ բոլոր գիտնականութենովս չէի կարող գտանել այդքան բնական ճանապարհ:

14. Ո՞ի ազնուական մարդ քանի մի ժամանակ բացակայ (հետացած) լինելով իւր հօյրենի աշխարհից, հանդիսեց մի շինականի, որ նորա շրջակայ կողմերիցն էր: Զանազան հարցմանք առնելով իւր աշխարհի մասին, կամցաւ նոյնպէս իմանալ նորանից, արդեօք և այժմ կային այն տեղ այնքան յիմար մարդիկ ինչպէս առաջին ժամանակները: Աչ, պարոն, պատասխանեց շինականը. չը կան այն տեղ այնքան յիմարներ ինչքան ձեր ներկայութեան միջացումը: Ազնուականը հասկացաւ այս խօսքի կծանողական զօրութիւնը, և ոչ թէ միայն չը բարկացաւ նորա վերայ, այլև ասաց շինականին: Գուշեն երեւում ինձ այն յիմարների կարգումը:

15. Ո՞ի ազնուական պարոն ճանապարհորդումքը իւր ծառայի չետ: սորա քունը ձիու վերայ տանելով, կորցրեց իւր տիրոջ վերարկուն: Ազնուականը գարձուցանելով երեսը, տեսաւ որ իւր ծառան դողդոջումք, և չը տեսանելով ևս իւր վերարկուն, ճայն տուեց նորան իմացուցանելով իւր տհաճութիւնը. Յակոր, ուր է իմ վերարկուս, գրաւ եմ՝ բռնում որ դու կորուսել ես նորան: Ծառան այլ ևս չը տեսանելով վերարկուն, ասաց. Ես գրաւ չեմ բռնում, տէր եմ, պատճառ որ միամիտ եմ որ գուք կը տանեք գրաւը:

16. Ո՞ի մանուկ թագաւորացն իւր եօթնտարեկան հասակումը շատ քաղաքավար և շատ խելացի էր. միանգամ նորա վերայ զարմանումքը բոլոր ժօղովը: Ո՞ի ծեր զօրապետ ներկայ գտանվերով այս գովասանութեանը, որ տալիս էին թագաւորացն մանուկին, ասաց բաւական բարձր ճայնով: Այն երեխայքը որ այդպիսի մատան հասակում ունեին այդքան խելք, մեծութեան հասակումը պակասամիտ կը լինին: Թագաւորացը լսելով այս խօսքը, պատասխանեց նորան նցն կերպով: Պարոն զօրապետ, պէտք է որ գուք ձեր մանկութեան ժամանակին շատ խելացի լինէիք:

17. Վայն միջոցումը, երբ աւարտվումքը Փարիզի նորաշն կամուրջը, գործի յանձնառուքը տեսան մի մարդ որ զբաղած էր չա-

փելով կամորջը և ոչ ովի բան չէր ասում: Գործակատարքը կարծելով, թէ սա ճարտարապետ մարդ է, հրահիրեցին նորան, որ ճաշուել իւրեանց հետ: Անդանից յետոյ խնդրեցին նորանից որ ասէ նոցա իւր կարծիքը, որ, ինչպէս յօյս ունեին, կարող էր կատարել ազգործել այն շինութիւնը: Կարծումեմ, ասաց նոցա, որ դուք շատ իմաստուն էր եղած, այս կամորջը շինելով գետի լայնութեան վերայ, բայց եթէ գետի երկայնութիւնը շինած լինէիք, երբէք չէիք կարող գլուխ տանել գործը:

18. Ո՞ի գերձակ Սամարկանդ քաղաքի մէջ, որ բնակումէր գերեզմանասան կից քաղաքադրան մօս, ուներ իւր խանութիւ մէջ մի կաւեղէն կծոյց, կախ տուած մի բնեոնից, որի մէջ ամեն անգամ մի մի քար էր ձգում, երբ մի ննջեցեալ տաճումէին թաղելու. և ամեն ամսի վերջում համարումէր այն քարերը, որ իմանայ մեռանողների թիւը: Աերջապէս մոռա և ինքը. մի քանի ժամանակից յետոյ մի մարդ որ ըլ գիտէր գերձակի մահը, փակ տեսանելով նորա խանութը, հարցրեց թէ ինչ է պատահէլ նորան: Դրացիներից մինը պատասխանեց: Անքը գերձակը ընկել է կծումի մէջ, ինչպէս միւսները:

19. Ո՞ի շինական զնաց իւր դրացու տունը որ խնդրէ նորա էշը: Դրացին կամք չունենալով տալ իւր էշը, պատասխանեց: ցաւում որ յառաջուց շիս խնդրած այդ մասին, ըստ որում ուրիշին եմ տուել: Այս խօսքին մէջ զրաց էշը: Ո՛չ, ասաց շինականը, աշա քո էշը հաստատութիւն է տալիս քո ասածին: Երդարեն, զումի շատ քաղաքավար և զարմանալի մարդ ես, պատասխանեց տանուտերը. ինչպէս կարող էիր իմ էշիս աւելի հաւասար քան թէ ինձ:

20. Ո՞ի փաքը երեխայ միանգամ մեղանի վերայից մի կտոր միս խնդրեց: Հայրը սաստեց նորան ասելով, թէ անվայելու էր խնդրել, այլ թէ պէտք էր համբերել մինչեւ տային: Այս խնդը մանուկը մեսանելով, որ ամեներեւն ուռումն և նորան բան չեն տալիս, ասաց իւր հօրը. Խնդրեմ մի փաքը ազ: Ի՞նչ պիտի առնես աղը: Հարցրեց հօյրը. պատասխանեց երեխան: կամենումմ ցանել այն մսի վերայ, որ ինձ տալու էիր: Հայրը տեսանելով, որ ինդը երեխան մոռացված էր, տուեց նորան մի կտոր միս, առանց նորա խնդրելուն:

21. Ո՞ի գողաբարոյ մարդ տեսանելով որ մի վաճառական մըտանումէր խաղարկութեան տեսարանը, զնաց նորա հետեւից, յուսալով յափշտակել նորանից այն գեղեցիկ ուկի կոճակները որ ունէր նա իւր թաւշեղէն (մախմուռ) զգեստի վերայ: Իւր նպատակին յաջողութեամբ հասանելու համար, տեղ բռնեց նորա քամակումը:

Նըրք որ խաղարկութեան առաջին գործողութիւնը վերջանալու մերոյ էր, այն գող մարդը սկսեց կտրասել վաճառականի զգեստը, որ ստանայ կոճակները: Ա աճառականը իմանալով այս արարքը, կամաց կամաց հանեց մի դանակ իւր ծոցիցը, և այնպէս քաջ ընտրեց իւր ժամանակը, որ կտրեց գողի ականջը: Աս աղաղակեց խկոյն. Ականջը, ականջը. ասաց վաճառականը իւր կողմից, կոճակներա, կոճակներս: Ահա քո կոճակները, ասաց գողը. Ահա նցնողէս քո ականջը, պատասխանեց վաճառականը:

22. Ո՞ր գիւղացի տեսանելով որ ծեր մարդիկ կամնալով կարգալ, ակնոց (չէշմակ) են զործ ածում, գնաց մի ակնոց գնելու մերձակայ քաղաքումը: Ակնոցագործը, որի մաս եկել էր գիւղացին, մի ակնոց գրեց նորա քմիթ վերաց. գիւղացին խկոյն մի գիրք վեր տուա բաց արեց և տեսաւ որ ակնոցը ոչինչ օգնութիւն չէ տալիս: Ակնոցավաճառը տուեց նորան քանի մի այլ ակնոցներ իւր խանութի մէջ գտանված առաւել ընտիրներիցը. բայց ի վերոյ այդր ամենայնի գիւղացին չը կարողացաւ կարգալ: Ակնոցագործը համբերութիւնը կրուսանելով, ասաց նորան բարկութեամբ. Եղասյր, կարելի է որ զու կարդալ չը գիտես: Արդարեւ, ասաց շինականը, և մէկ կարգալ իմանոյի, ապա ինչ հարկաւոր էր ինձ քո ակնոցը:

23. Ո՞ր ազնուական Գասկոնացի, որ ոչինչ արծաթ չուներ, լսելով որ մի պանդոկապետ գատապարսված էր տասն մանեթի տուգանքով (Չարմայով), ըստ որում ապատակ էր զարկել մի այլ աղնուականի, գնաց բնակելու այն պանդոկապետի մատ, և կացաւ նորա մօտ երեք կամ չորս օր, այնպէս որ նորա հաշիւը հասանումէր մինչև վեց մանեթի. Երբ որ Գասկոնացին եկաւ, մնաս բարեւա տաւելու տանուտիրոջը, սա յայտնեց նորան, որ դեռ ևս պարտավճար եղած չէ, և խնդրեց որ համեցուցանէ իւրեան: Իմ պարոն, ասաց նորան Գասկոնացին. մի գահեկան ևս չունիմ Ես. և մէկ կամնուումս վճար ստանալ, մի պարտակ զարկիր երեսիս, և մնացորդը յետ տուր ինձ, ըստ որում մի պարտակը, ինչպէս յայտնի է քեզ, արժէ տասն մանեթ, բայց ևս պարտական իմ քեզ վեց միայն:

24. Ո՞ր պատանի իւր անհնազանդութենովը մաշել էր իւր հօր համբերութիւնը: Հայրը մի օր այնպիսի խստութեամբ պատժեց նորան, որ գլուխը քանի մի տեղ վիրաւորեց: Ապա հրամացեց բերել վիրարշյուը, և ասաց նորան որ ոչինչ չը խնայէ իւր որդու գլուխը բժիշելու համար: Արդին տեսանելով որ իւր հօրը թանգ է նստում՝ այդ բժիշութիւնը, ասումէր ինքը իւր մէջ. Հայրս պէտք է որ զգուշանայ և չը թափէ ինձ յետոյ: Բայց հայրը շուտով հա-

Նեց նորան իւր սխալնկից: Արդին առողջացած լինելով, հայրը հարցրեց վիրաբուժիցը, որդին ներկայ լինելով. ինչքան եմ պարտական քեզ: Երեսուն մանեթ, պատասխանեց վիրաբուժը. Ահա քեզ այդ դրամը, ասաց հայրը, և աշակ քեզ միւս երեսուն, գալոց անգամի համար, եթէ որդիս կամք կունենար ծեծ ուտելու:

25. Երկու երեխոյ մի ընկցյլ գտան մի ծառի տակ իւրեանց զիւղի մաս: Այդ իմա է ասաց Պետրոսը, ըստ օրում յառաջաց ևս տեսաց նորան: Աչ նա ինձ է պատկանում, հաստատեց Պօղոսը, պատճառ որ ես բարձրացրեցի նորան գեննիցը: Այս բանի վերայ մի սատովկ կուի ծագեցա: Ես կը հաշուցնեմ ձեզ, ասաց մի երիտասարդ որ այն բոպէին անց էր կենում այն կողմից: Այն երկու մանուկների մէջ մասնելով, կոտրեց ընկցյլը և ասաց. մի փեճնկը պատկանումէ նորան որ յառաջաց տեսել է ընկցյլը, միւս փեճնկը կը լինի նորան որ գեննիցը բարձրացրել է ընկցյլը, բայց մէջի նուշը կը պահէմ ինձ որդիս վարձ իմ արած զատաստանիա համար: Այսպէս է, ասաց նա, դատաստանների սովորական վերջը:

26. Ո՞ի գողարարոյ մարդ կամաց ներս մօռաւ մի տուն, ինչ տեղ շատ վարձառու աշակերտներ բնակումէին և ուսանումէին. Հնարացիութեամբ գողացաւ երեք վերարկու և հեռացաւ: Սանդուղից վայր իջանելով, հանդիպեց մի աշակերտի որ նոյնպէս կենումէր և ուսանումէր այն տեղ: Սորա վերայ զարմանք եկաւ, երբ որ տեսաւ այն բոլոր վերարկուքը և հարցրեց թէ ինչ տեղից ես վեր տոել դորանց: Սորա սյս տեղին քանի մի պարոնների վերարկուն են որ տուած են ինձ յստակելու, ասաց հանդարտապէս գոլ մարդը: Բարուք է, ապա յստակեցէք և իմն, ասաց նորան աշակերտը, տալով նորան իւր գեղեցիկ վերարկուն, ըստ օրում օձիքը (վիզը) կարօտ էին մարրութեան: Բայց ասաց նորան որ բերէ վերարկուն մինչև երեք ժամը: Անպատճան, ասաց գողը և զնաց տանելով իւր հետ չըր վերարկուքը, և չերեւց միւս անգամ:

27. Ո՞ի շինականի առաւել պատուական ձին գիշերով գողացել էին նորա ախոսից: Մի քանի օրից յետոյ զնաց շինականը ձիաների փողոցը որ տասն և հինգ մղոն հեռի էր իւր տանից, այն զիստաւորութենով որ մի այլ ձի գնէ: Շինականը շատ զարմացաւ, ձանանելով իւր ձին այն ձիաների մէջ որ բերել էին ծախելու. իսկցն բանեց ձիու սանձը և ձայն տուեց. այս ձին իմն է. աշակ երեք որ է որ գողացել են նորան: Դու սխալվումէս, Եղբայր, ասաց վաճառողը շատ քաղաքավարութեամբ, մի տարուց աւելի է որ ես պյս ձին ունիմ. առ ձերը չէ, բայց կարելի է որ ունենայ փոքր

ինչ նմանութիւն ձերի հետ։ Ծինականը շուտով երկու ձեռքը դըրեց ձիու աչքերի վերսոյ և ձայն արձակեց։ բարութ է։ Եթէ այդ ձին քո սեփականն է պղքան երկար ժամանակից, ապա ասա ինձ, որ աչքը կցը է։ Այն միւսը որ ստուգապէս ձիու դոլն էր, բայց նորա որովհութիւնը չէր քննած մանրամասնարար, մասց սառած կազմած։ Բայց որովհետեւ պէտք էր նորան մի բան ասել, պատասխանեց դիսուածով։ ձախ աչքն է կցը։ Ոչ, ասաց շինականը. այդ ձիու ձախ աչքը կցը չէ։ Այն տուեց խարերայ մարդը, ևս սիսալվեցայ. այդ ձիու աջը աչքն է, որ չէ տեսանում։ Ապա շինականը բացեց ձիու աչքերը, ասելով. Ահա բացայցայտ է որ դու գող և խարերայ ես. Կայեցէք և դուք, ընկերք, ձին ոչ մի աչքով կցը չէ. ևս այս հարցումը արեցի միայն, գողութիւնը յայտնելու համար։ Բոլը ներկայ մարդիկը սկսեցին ծիծաղել և ծափ զարկել, աղաղակելով։ Ահա, ահա բռնվեցաւ գողը։ Ծինականը վեր առաւ իւր ձին, և գողը բանտի մէջ դրվեցաւ և պատժվեցաւ ինչպէս արժանի էր։

28. Չորս թափառական երիտասարդ, լւա հացկերութենից յետոյ մի հիւրանոցում, խնդրեցին ծախքի հաշիւը։ Նկատ սպասառորը և բերեց հաշիւը։ Մինը ձեւանումէ, որպէս թէ ձեռքը տանումը գէպ ի ծոցը, միւսը արգելումէ նորան, ասելով թէ ևս կամիմ վճարել. երրորդը ցուցանումէ նզն կերպարանքը, չորրորդը վերջապէս առումէ սպասառորին։ Չը լինի թէ վեր առնում այս սպարնների արծաթը, ևս կը վճարեմ։ Եւ որովհետեւ ոչ մինը սորանցից չէր կամնում յալթիլ միւսիցը, ապա նորանցից մինը ձայն տուեց. մի ճանապարհ կոյ մեղ միարանվելու. սպասառորի աչքերը կը կապէնք, և որին կը բռնէ նա, այն մարդը վճարելու է հացկերութեան արծաթը։ Հաւանեցին այս առաջարկութեանը և կապեցին սպասառորի աչքերը. բայց մինչև նա խարիսխի լով կը որոնէր սորանց մենեկի մէջ, այս անզգամենքը կամաց մինը միւսի քամակից դուրս եկան, և երս մոտե տանուտէրը. սորան ըմբռնելով այն աչքկապուկ խաղաղօղը և կարծելով թէ ձեռք է ձգել այն չորս խարերաներից մինին, աղաղակեց։ Արգարե, դռն պիտոյ է վճարես հացկերութեան ծախքը։

29. Եշեք մարդ ճանապարհորդէլով միասին, զտան մի զանձ և բաժանեցին իւրեանց մէջ։ Ծարունակելով իւրեանց ճանապարհը, խօսումէին միմեանց հետ թէ ինչ կերպով պիտոյ էր դործածել իւրեանց հարստութիւնքը։ Ճանապարհի պաշարը վերջացած լինելով, միարանվեցան որ իւրեանց մէջից մինը զնայ քաղաք, կերակուր զնե-

լու, և յանձնեցին այս գործը աւելի փոքրահասակին։ Աս դնաց և ճանապարհին այսպէս էր խօսում ինքը իւր հետ։ Եհան հարստացայ ես, բայց աւելի հարստացած կը լինէի, եթէ մնակ հանդիպէի այն գանձին։ այս իմ երկու ընկերքը զրկեցին ինձ։ արգեղք չէր կարելի բոլոր գանձը իւրացուցանել ինձ։ Այս բանը հեշտ էր. կը թունառորեմ այն ուսելիքը որ գնելու եմ։ բայց իմ մասին կ'ասեմ, թէ ճաշել եմ ահա. իմ ընկերքս առանց կասկածելու կ'ուտեն և կը մեռանին։ Ես որ այժմ ունիմ այն գանձի երրորդ մասը, կը ստանամ ապա բոլորը։ Բայց միւս երկու ընկերքը իւրեանց մեջ խօսումէին այսպէս։ Այս ինչ բան է. մեք պարտական եղանք բաժանել գանձը այս պատանի մարդու հետ։ Նորա բաժինը աւելացրած կը լինէր մեր փարթամութիւնը, և մեք կը լինէինք կատարելապէս հարուստ։ Ըուտով յետ կը դառնայ նա, և մեք գործ դնենք մեր սուր գանձիները։ Պատանի մարդը եկաւ, թունառորեալ կերակորը բերելով. ընկերքը սպանեցին նորան, բայց ինքեանք ևս մեռան թոյնի ներգործութենից, և գանձը մնաց անտէր։ Եհան թէ ինչ պէս է ագահութեան պոտողը։

30. Մի խարերայ մարդ մեծապէս ցանկանալով հոգաւ իւր համար մի զյոյգ կօշիկ առանց ծախք առնելու, գնաց մի կօշկակարի մաս որ կարել տայ, և ասաց նորան թէ կօշիկները հարկաւոր էին իւրեան էգուց նօմն ժամուն։ Կօշկակարը խօստացած լինելով կարել կօշիկները, այն խարերայ մարդը գնաց մի այլ կօշկակարի մաս, որ նոյնպէս մի զյոյգ կօշիկ կարել տայ և խնդրեց որ պատրաստ լինէին վաղիւր ինն ժամուն անշուշտ։ յանձն առաւ արշեստառորը։ Առաջին կօշկակարը, իւր խօսքին համեմատ, եկաւ միւս օրին եսմն ժամուն և բերեց կօշիկները։ Խարերայ մարդը հազաւ կօշիկներից մինը որ շատ յարմարումէր ոտքին, բայց միւսը փոքր մի նեղ էր, նոյնելով նորա ասելուն, ըստ որում մի անգամ կոտրած էր այս ոտքը, թէպէտ մոռացած էր ասել կօշկակարին թէ պէտք էր մի կօշիկը փոքր մի լսյն շինել։ Բայց ասաց խարերան. այդ փոքր բան է. ես գնալու եմ ճաշից յետայ. տար կօշիկը և անցրու կազապարի վերայ. բայց կը պահեմ իմ մաս այն կօշիկը որ յարմար էր, և դու կը բերես միւսը ուղղակի ճաշին։ Մաս երկու ժամից յետոյ եկաւ նոյնպէս միւս կօշկակարը և բերեց կօշիկները։ Եւ սորա հետ այնպէս վարմիցաւ, ինչպէս առաջինի հետ, այսինքն մի կօշիկը յարմար կտանվեցաւ, բայց միւսը ոչ. յարմար կօշիկը յետ մնաց խարերայի մաս որ, կօշկակարը չեռացած լինելով, հազաւ երկու կօշիկները և անշայտացաւ իսկոյն։

31. Մի վայելազգեստ ճանապարհորդ կիւրակէ երեկոյին ներս
մտաւ մի գիւղաբազարի հիւրանոց և հրամայեց բերել մի խորաված
վառեկ և մի շիշ սրառուական զինի: Առաջին պատառը գետ ի քերան
տարած, իսկոյն սկսեց հառամել ողորմելի կերպով, և ասաց.
ահա երկու շարաթ է որ տանջվումեմ մի ահարկու առամբացաւով,
բոլոր այն տեղ ներկայ եղած շինականքը մեծ ցաւակցութիւն ցոյց
տուեցին նորան: Մի քանի բոպէ յետոյ վերայ հասաւ մի փորձա-
ռու բժիշկ որ նատելով մի անկիւնում, խնդրեց մի բաժակ ցրի:
Նրբ որ սորան տեղեկութիւն տուեցին այն օտարականի անհանգըս-
տութեան մասին, խոստացաւ տալ նորան մի լու ճար: Ճանեց իւր
փոքր արկդիցը մի պատառ ոսկեղծ թուղթ, արուեստով ծալած,
բացեց նորան և ասաց. ուարոն, պիտօյ եր միայն մատի ծայրը թըր-
շիլ, ապա մտել այս փառու մեջ և յետոյ զնել առամի վերայ: Օտա-
րականը արեց ինչպէս հրամայած էր, և իսկոյն ձայն տուեց. ինչ
շցյա հանգստառութիւն գտայ, բոլոր ցաւը շքացաւ մի բոպէում: Ապա
մի մանեթ բաշխելով բժշկին, հրաւիրեց նորան, որ սեղանակից
լինի իւր հետ:

Հիւրանոցում եղած բոլոր մարդիկը և գիւղաբազարի բոլոր
բնակիչքը շոտակեցին զնել այս պատուական փոշուցը, և խարերայ
բժիշկը ծախեց նորանից հարիւր փաթեթ, ամեն մինը տասերկու
արծաթով: Նրբ որ յետոյ մի շինական գանգստումեր առամբացա-
ւից, վաղեցին նորա մաս այն պանչելի բժշկական գեղովք, որ ոչ
ոքի թեթևութիւն չը հասցեց. այս բանի վերայ զարմացած մեա-
ցին ամենեքեան: Վերջապէս յայտնվեցաւ խարէութիւնը. իմացան
որ այն երկու ճանապարհորդը միմեանց խօսք էին տուել, որ խա-
րեն միամիտ շինականները: Այն փոշին ոչինչ բան չէր, եթէ ոչ
մի փոքր կատիճ (սպիտակ հող):

32. Կայսր Կարոլոս հինգերորդը ճանապարհից մալորված լի-
նելով որպումը, վերջապէս տեսաւ իւր առաջնել մի տուն, և ներս
մտաւ այն տեղ որ մի բան վկայէ: Այս տնումը գտաւ նա ջորս
մարդ հանգստացած գետնի վերայ որ մեանումեն որպէս թէ քնած
են: Արանցից մինը վեր կացաւ և մատնալով թագաւորին, ասաց
նորան թէ երազումը տեսել է, որ պիտօյ եր յափշակել նորա
ժամացցցը, և իսկոյն վեր առաւ նորան: Միւսը ասաց, թէ տեսիլք
եր տեսած, որ նորա վերարկուն յարմար կը լինէր իւր համար, և
կողոպտեց նորան: Երրորդը խլեց նորանից քսակը. վերջապէս, շոր-
բորդը խնդրեց նորանից որ չը նեղանայ, եթէ կը օրոնէր նորա
վերայի բանները: Այս գործի մեջ լինելով շինականը, տեսաւ նո-

րա վզին մի փոքր ուկի շղթայ, որանից կախ էր մի սուլսրան (շուի) և կամենումը կողոպտել նորան. բայց ասաց կայսրը. Բարեկամ, այդ սուլարանը դեռ ևս չը խլած ինձանից, թաղ տուր որ ուսուցանեմ քեզ նորա զօրութիւնը: Ասպա սկսեց կայսրը ամենայն զօրութենով սուլել (շվշացնել): Կայսրի սպասաւորքը որ ինդրումին նորան, լսելով այս նշանախօսութիւնը, վազեցին դեպ ի այն տունը և փոքր չէր նոցա զարմանքը, տեսանելով թաղաւորը այսպիսի չար մարգերի մէջ: Թագաւորը տեսանելով իւր անձը վասնգից դուրս, խօսեց սպասաւորների հետ այսպէս: Այս մարդիկը երազներ են տեսած ինչպէս կամեցած էին. այժմ երազ տեսանելու կարգը ինձ է հասել: Մի քանի բարեկ մտածութեան տալով, ասաց աւազակներին. Երազ տեսայ ես, որ դուք չորս հոգիքդ կախաղանի արժանի անզգամմեր էիք. և իսկոյն հրամայեց կախ տալ նորանց տան առաջնորդ:

33. Եցեք անպիտան երիտասարդ մի օր ման քալով քաղաքից դուրս, հանգիստեցին մի շինականի որ քնած էր խոտի վերայ, իւր էշի անձը բանած ձեռքին: Կորանցից մինը ասաց. Բարեկամը, պէտք էր այս շինականի հետ մի խարդախութիւն առնել. օդնեցէք ինձ, ինդրումմ: Արձակեց էշի կապերը, թերվեցաւ չորս ոտքի վերայ և համեսն ու անձը իւր վերայ դնել տուեց: Այս բանը եղած, ասաց իւր ընկերներին որ առնուն էշը և փախչեն: Շինականը, քընից զարթած, անշափ զարմացաւ տեսանելով մի մարդ իւր անտունի փոխանակ: Ի սէր Ասուուծոյ, ձայն տուեց այն ծաղրածուն, վեր առ ինձանից այս սանձը և բեռը: Այս ի՞նչ սատանայական բան է, ասաց շինականը. Ի՞նչպէս ես եկել դու այս տեղ. ուր է իմ էշը: Այց ինձ, պատասխանեց միւսը, ես որդի եմ մի կախարդի որ մի մենքն. մեղքի համար վեց ամիս ժամանակով փոխել է ինձ էշ: Այս ժամանակը անցել է աշա, և ես ստացել եմ իմ բնական կերպարանքը, գնա, ասաց գիւղացին արձակելով նորան. ես կամք չունիմ գործ ունենալ կախարդների հետ: Այն ծաղրածու մարդը ազատութիւն գտանելով, գնաց միացաւ իւր ընկերների հետ որ շատ ծիծաղեցին աղքատ գիւղականի պարզամտութեան վերայ, և բաժանեցին իւրեանց մէջ գողութեան արդիւնքը: Միւս օրին փողց գընաց շինականը, որ մի այլ էշ գնէ. շատ էշեր տեսանելով այս տեղ, ճանաչեց նոյնպէս իւր սեպհականը: Եւ զո՞ւ այս տեղ ես, ձայն տուեց նա. յայտնի երեսում որ նորուց խառնված ես քո հօր հետ, որովհետեւ նա միւսանգամ փոխել է քեզ էշ. զնա, ես կամք չունիմ զնել քեզ:

34. Յոյշտնի է, որ գերմանիայի գիւղականքը, երբ մի խող էին մորթած, սովորութիւն ունին պարզե ուղարկել խրեանց բարեկամներին երեշիկը և մի քանի լաւ կոսոր միա: Մի գիւղացի այս տեսակ ընծաներ այնքան ստացած էր, որ նոցա փոխարինելու համար հաղիւ մէկ բաւական էր այն խողը որ մորթել էր փոքր մի յառաջ: Տարակուսանքի մէջ լինելով գնաց իւր գրացիներից մինի մօտ և ասումէր նորան: Աննահայր, այս բոպէին մորթել տուեցի իմ խողը, որ մէկուտ փոքր չէ, բայց բաւական չէր, և մէկ կամենոցի պարզե ուղարկել ամեններին որոնցից ևս պարզե էի ստացած: ասա ինձ խնդրեմ, մէկ ինչպէս էր ձեր կարծիքը: Դրացին մի փոքր մասածէլով, ասաց. Աչինչ աւելի յարմար չեմ գտանում բաց ի սորանից, որ էգուց առաւօտուն ծանուցում առնէիր մէկ զիշերով գողցել էին քո խողը: Ծինականը ուրախանալով այս խրատի վերաց, խօսացաւ գործ գնել նորան: Բայց խորհրդատուն զանց շարեց դալ զիշերով և գողանալ սուուզապէս իւր դրացու խողը: Ի՞նչ ուկս էր խողը շինականի զարմացքը և տրամութիւնը, երբ որ նա միւս որին չը գտաւ իւր խողը: Բոլորովին խոռված, դուրս գնաց տանիցը. առաջին մարդը որին հանդիպեց, նշյն դրացին էր որ այս խարդախութիւնը արած էր նորան: Աննահայր, ասաց գիւղացին, ստուգապէս գողացել են այն խողը որ երեկ մորթել էի տուած. բարուճը է, ասաց դրացին, ահա այդպէս պիտոյ է ասել ամեններին, որոնց կը պատահէիր գու: Ծինականը պատասխանեց. Իմ խօսք կեղծաւորութիւն չէ, Տշմարտապէս գողացել են իմ խողը. կրկնեց դրացին. շատ լաւ է ասածդ և պիտոյ է այդ խօսքի վերաց հաստատ մնալ, և ամենոցն մարդ կը հաւատար քեզ, Խարված շինականը սկսեց երդումն ուսեւ և աղաղակել, մէկ իւր ասածը կատակ չէր. բայց որչափ նա բարկանումէր, այնքան և միւսը ասումէր նորան, մէկ ասածդ իրաւ է, և մէկ այն այդպէս պիտոյ է վարվիլ որ աղստվէիր ընծայ ուղարկելուց քո դրացիներին:

35. Ջրիդրիկոս մծը ձմռան մէջ ստացած լինելով քանի մի կեռաս իւր ոյգեապնիցը, մանկալաւիկներից մինի ձեռքով ուղարկեց նորանց թագուհու: Համար, որ շատ սիրումէր կեռաս: Մանկալաւիկը տանելով կեռաները, կամեցաւ իմանալ մէկ ինչպէս էր նոցա համը, ճաշակեց մինը և այնպէս պատուական թուեցաւ նորան, մինչեւ չը կարողացաւ համբերել և կերաւ բոլոր կեռաները: Մի փոքր ժամանակից յետոյ թագաւորը զնալով թագուհուն տեսութիւն, խօսքի մէջ հարցըրեց նորանից մէկ ինչպէս էր կեռասը: Ի՞նչ կեռաս, հարցըրեց թագուհին: — Այն կեռասը որ ես ուղարկեցի քեզ անցեալ

որը։ Կեռաս շնմ տեսած ես, պատասխանեց թագուհին։ Թագաւորը
շատ զայրացած մանկլաւիկի վերոց, յետ դառնալով իւր սենեակը
խկոյն թուղթ գրեց պահապան զօրքի պաշտօնատարին, ոյսպէս պատ-
ուէր տալով։ Այս թղթաբեր տղայիս մի փառաւոր ծեծ տաս։ Թա-
գաւորը կնքեց թուղթը և տուեց նոյն մանկլաւիկին, որ հասուցանեւ
տիրոջը։ Մանկլաւիկը ճանապարհի վերայ միտք բերեց իւր որկրա-
մուլութիւնը (փորաւերութիւնը) և երկիւղ ունէր թէ մի զուցէ ոյն
թղթի մէջ գրած էր որ պատժեն իւրեան, ըստ որում ասումէր
նիքը իւր մէջ, թէ թագաւորը այս առաւոտ թագուհու մաս էր, և
կարելի է թէ խօսած լինին կեռասի մասին։ Մտածելով այս բա-
ների վերայ, հանդիպեց մի Հրեայի որ ծանօթ էր նորան, և ասաց
նորան, պատուելի եղբայր, չնորհ արա, տար այս թուղթը իւր
տեղը։ Ես ուրիշ շատ յանձնարարութիւնք ունիմ կատարելու, և
ժամանակը շտապեցոցիք է։ Չատ յօժարութեամբ, ասաց Հրեան։
միայն տուեցէք ինձ այն թուղթը։ Ճեղ յոյանի է որ ես, ինչքան
կը բերէր իմ կարողութիւնը, պատրաստ եմ կատարել ճեր հա-
ճակը։ Հրեան զնաց, տարաւ թուղթը և յանձնեց պաշտօնատարին
որ կարդալով նորան, հրամայեց խկոյն զարկել թմրուկը, Հրեան
զարհութելով այս բանի վերայ, հարցրեց զոզգողալով թէ ինչ
խորհուրդ ունի այս թմրկահարութիւնը։ Կը տեսնէր խկոյն, պա-
տասխանեց պաշտօնատարը։ Ի՞նպէս, մի թէ պատժվելու եմ, աղա-
զակեց Հրեան։ — Այս, անպիտան գու, այսպէս է թագաւորի հրա-
մանը։ Ասուած իմ, Ասուած իմ, շարունակեց Հրեան։ Ի՞նչ եմ
արել ես թագաւորին։ Պաշտօնատարը տուանց ակնանջ դնելու այս
վատարազդի արդարացոցիք պատճառներին, ասաց տամապետին։
Կատարիր քո պարտականութիւնը և տուր նորան յիսուն գաւազանի
զարկ։ առա կը տեսանենք թէ ինչ պիտոյ էր առնել։ Խեղճ Հրեան
պնակէս թակվլցաւ որ մօտ էր հոգին աւանդելու, և պէտք էր տա-
նել նորան իւր տուել։ Միւս օրը զօրքին հանդէս առնելով թա-
գաւորը, հարցրեց պաշտօնատարիցը, թէ օրինաւոր պատժել էր
իւր թղթաբերին։ Այս, տէր թագաւոր, պատասխանեց նա. Ճեր
հրամանը ճշգապէս կատարիված է, և պատժվածը ողբալի դրութեան
մէջ տուն տարան։ Բարո՞ք է, ասաց թագաւորը տեսանելով իւր
մանկլաւիկը. այս հիւանդ է երկում սա և ներկայ է ահա։ Թողու-
թիւն ինդրեմ համարձակութեանս, եթէ պիտոյ է յայտնեմ թա-
գաւորին թէ ամենելին անկարելի էր պատժվածին ներկայ լինել այս
տեղ։ Ահա այն մարդը, շարունակեց թագաւորը մատնացոյց առնե-
լով իւր մանկլաւիկը։ Չը զիտեմ, թէ ինչ պատասխանեմ ճեղ,

ասաց պաշտօնատարը. ես չեմ տեսանում այն պատժվածը: Ի՞նչպէս.
մի թէ չէք տեսանում պյս տեղ իմ մանկլաւիկս, պատասխանեց թա-
գաւորը: Ներեցէք, Տէր թագաւոր, ծեծ կերածը դա չէ: Ապա ո՛վ
է, հարցրեց թագաւորը: Մի հրեց էր, ասաց պաշտօնատարը: Թա-
գաւորը չը կարողացաւ զապել իւր ծիծաղը պյս զուարձալի շիռ-
թութեան վերայ, բայ որում մինը միւսի փոխանակ պատիժ էր
ստացել. վերահասու լինելով բանին, ներեց իւր խորամանկ ման-
կլաւիկի որկրամութեանը, և կամենալով խեղճ Հրեցին մոռանալ
տալ իւր կրած ցաւը, ցաց տուեց նորան այն շնորհը որ ինդրած
էր նա մի քանի ժամանակից յառաջ:

Թէ յարմարվիս առն մարզու ասածի,

Ալ դնեն ուսիդ ծանրութիւնը և էշի:

36. Մի ծեր մարդ և նորա տան կամ տասերկու տարեկան
որդին կամաց կամաց վարումեխն իւրեանց տառաջն մի էշ դէպի ի մա-
տակայ քաղաքը, ինչ տեղ պիտոյ և ծախէին նորան: Անցաւորնե-
րից մինը հարցումն արեց այսպէս. ասա ինձ, ծեր դու, ինչպէս կա-
րելի է այդպէս յիմարանալ, որպէս դուք և ձեր որդին, որ ինք-
ներդ տուով էք զնում, բայց ձեր չծանրաբեռնած էշը մեղմ ու հան-
գարու քայլումէ ձեր առաջից: Ծեր մարդը հասկացաւ որ այն օտա-
րականը արգարե ունեէր ծաղրածութեան պատճառ: ուրեմն նստե-
ցրեց մանուկը էշի վերայ, և ինքը զնումէր մօտիցը: Մի փոքր յե-
տոյ ձայն տուեց միւս անցաւոր. տեսէք, տեսէք պյս մանուկը, պյս
ծայլ տղան, որ ինքը հեծած էր էշի վերայ, բայց իւր ծեր հայրը
պիտոյ և ոսով զնայ: Ծերը ոչինչն չը խօսելով, վայր դրեց մա-
նուկը և ինքը հեծած էշի վերայ: Մի քանի քայլ փոխած, ձայն
արձակեց մի պյլ մարդ, նայեցէք, նայեցէք պյս ծեր և զանդաղ ան-
պիտանին: Ինքը փառաւոր նստել է էշի վերայ, բայց նորա փոք-
րիկ նուազ մանուկը պիտոյ է սողալով հազիւ թէ յառաջ խալայ:
Ծերը մոտածեց: և այդ գործը կարելի է այլապէս անօրինել. վեր
առաւ մանուկը և նստեցրեց հետեից էշի վերայ: Անց կաշան մի
փոքր ճանապարհ, և ահա մի պյլ մարդ հարցումն արեց այսպէս.
պյդ էշը ձերն է. ասացին, պյու: Ապա խօսեց օտարականը. երբէք
անցած չէր մոքիցս, թէ իւր սեփական անասունը կարելի է այդ-
պիսի անողորմ կերպով բեռնաւորել: Ծերը վայր իջաւ էշիցը, և
շարժեց գլուխիը, ոյսպէս խօսելով ինքը իւր հետ. այժմ չը գի-
տեմ, թէ ինչ առնեմ, ինչպէս որ մինչ ոյժմ արեցի, միշտ նա-
խատինք տեսայ: Թող այժմ վերջին բանը փոքրենք: Ապա կապե-

ցին չուանով էշի տուերը, և անցուցին մէջից մի ձող, և ուսերի վերայ դրած, տարած փողոց։ Այժմ ամենայն կողմից ծիծաղեցին նոցա վերայ, ձայն տալով։ տեսէք, տեսէք այս տիմարները։

Ե՞ն ծեր մարդը, որ անդեւակ չէր աշխարհի որպիսութեանը,
շուտով յետ գարձաւ տուն, և այնուհետեւ կատարումք իւր գործը
ինչպէս հաճոյ էր իւրեան, այսպէս ասելով իմաստունի հետ:

... and you will find it well worth your while to do so.

如图 7-3-1 所示，当平行于光轴的光束射入透镜时，光束经透镜后会聚于一点，此点即为透镜的焦点。

¶ 1.010 - 9.

ՅԵՒՍՈՒՍԻ ԱՐՁԵՐՆԻ ՓՄԲՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1. Language — Text — Text — Text — Text — Text.

Պատմոն և Պիեթիսա Պիեթագորեանքը պյանդիսի հաւատարիմ
բարեկամութիւն հաստատեցին իւրեանց մէջ, մինչև պատրաստ էին
միմեանց համար մեռանել: Երբ Գիոնեսիսո բռնակալը կամենումը
սպանել Պիեթիսին և որը սահմանեց, դաստավարումածը խնդրեց մի
քանի օր ժամանակ իւր գործերը կարգի գնելու համար, և Դամնու-
երաշխառոր մեաց այն պայմանով, որ Եթէ իւր բարեկամը յետ չը
դառնայ, ինքը յանձն կ'առնուր մեռանել: Ամենեքեան, ևս առաւել
Գիոնեսիսը սպասումէին թէ այս նորանշան և տարակուսական բանը
ինչպէս կը վերջանայ: Մասնեցաւ սահմանեալ որը և չը վերջար-
ձաւ բարեկամը, ամենեքեան սկսեցին բամբասել այս երաշխառորը,
որպէս թէ յիմար էր բայց երբ որոշեալ օրումը իսկըն վերայ
հասաւ միւս բարեկամը, Գիոնեսիսո բռնակալը զարմացած ու հիա-
ցած նոցա հաւատարմութեան վերայ, փոխեց իւր վճիռը, և խըն-
դրեց որ նորան ևս ընդունեն իւրեանց մէջ իբրև երրորդ բարեկամ:

2. Ապրանք հայրենական իրավունք.

Երբ որ Գոռացոց զօրքը սրով և հրով ապահովումը Աստի-
կայի աշխարհը, Ամենացոց թագաւոր Կողը սրը անցըս լինելով իւր
և իւրայինների կարողութենից, մարդ ուղարկեց Գելիքեան պատ-
գամախօսի մաս, որ իմանան թէ ի՞նչ հնարքով կարելի էր այդ-

պիսի ծանր պատերազմից ազատվիլ: Ասումնն, թէ բպոլոն ասումածը պատասխանեց. Պատերազմը վերջանալու է, եթէ ինքը թագաւորը թշնամու ձեռքով ազանվէր: Այս համբաւը տարածվէլով ոչ թէ միայն Աթենացոց, այլև Դոռացոց բանակների մէջ, հրաման դուրս եկաւ, որ ոչ մի Դոռացի չը վիրաւորէ Կողբոսին: Բայց սա ցած դրեց իւր թագաւորական նշանքը, ծառայի պէս զցեատաւորվեցաւ և հանգեպ գնաց կերակուր ինդրող թշնամիներին, և սորանցից մինին զարկելով մանգաղի բերանով, առիթ տուեց սպանելու իւր անձը: Դոռացիք ճանաչէլով թագաւորի մարմինը, առանց պատերազմի ցան և ցիր եղան, և Աթենացիք իւրեանց առարինի առաջնորդի անձնազօն լինելովը հայրենիքի փրկութեան համար, ազատվեցան պատերազմից: Ո՞վ չէ զարմանալու այս Կողբոսի վերայ, որ այնպիսի ճանապարհով մահու տուեց իւր գլուխը, ինչ ճանապարհով միւսերը սովոր են պահպանել իւրեանց կեանքը:

3. ՊԵՐԻԿԼԵՏԻ ՀԵՂԱԳԻՒՆԻՆ:

Պերիկլեսը ատենի մէջ հասարակաց գործերի պարապած լինելով, մի ամբարիշտ և անզգամ մարդ սկսեց հայհցյել նորան: Սորան համբերեց Պերիկլեսը և ոչ մի բան պատասխան չը տուեց, բայց ի վերաց այդր ամենայնի այն մարդը բոլոր օրը չը դաշտարեց հայհցյելուց: Երբ որ երեկոյին հանդարտ երեսով և գնացքով տուն էր գալիս Պերիկլեսը, նոյն անամօմը նորա քամակից գնալով, ինչ նախատինք ասես, թափումը բերանից: Պերիկլեսը ներս մտած տուն, ըստ որում գիշեր էր աշա, հրամայեց իւր ծառաներից մինին որ ճրագ վառէ և առաջնորդէ այն մարդուն գէպ ի իւր տունը:

4. ՊԵՐԻԿԼԵՏԻ ՀԵՂԱԳԻՒՆԻՆ:

Պիւրհոս թագաւորի հետ պատերազմ՝ ունենալով Հռոմայիցիք, իւրեանց արգարութիւնը դէպ ի թշնամին մի մեծ օրինակով յայտնի կացուցին: Պիւրհոսով, առանց մի առիթ ունենալու, եկել էր զօրքով Հռոմայեցոց ազգի վերայ, և կոիւ բացվեցաւ նախաթռուշխանութեան մասին այն բարձրամտու և կարող թագաւորի հետ: Այս միջոցումը մի փախստական մարդ նորա կողմիցը եկաւ քարրիկիոսի բանակը և խոսացաւ նորան որ, ևթէ կը վարձատրէ իւրեան, ինչպէս ծածուկ եկած էր, այնպէս ծածուկ կ'երթայ Պիւրհոսի բանակը և կը սպանէ նորան մահաղեղով: Ֆաբրիկիոս Հռոմայեցին հրամայեց, որ այդ մարդը յետ տանեն Պիւրհոսի մօտ, և այս գործի համար Հռոմի ծերակցութը մէծ գովասանութիւն տուեց Քարրիկիոսին:

5. Հայութիւններուն առաջակացնելու մեջ.

Խպամիննդասի պարէն շտութիւնը փորձեց Դիոմեդոն Աիւղիկնեցին։ Սա Երաւաշէսի խնդրանքավ յանձնն առաւ դրամով կաշառել էպամիննդասը, և մի մեծ կշիռ ուկով եկաւ Թերա քաղաքը և Միկոս տղային, որ այն ժամանակը շատ սիրելի էր Խպամիննդասի աչքին, հինգ տաղանտով զեկ ի իւր կողմը դրաւեց, Միկիսոսը գնաց Խպամիննդասի մօտ և յայսնեց նորան Դիոմեդոնի գալստեան պատճառը։ Խպամիննդասը, Դիոմեդոնի Ներկայութենով, պատասխան արեց այսպէս։ Արծաթ ամենեն հարկաւոր չէ, պատճառ, եթէ թագաւորը այնպիսի բան է խնդրում, որ օգտակար է Թերացոցը, պատրաստ եմ ձրի առնել, ապա թէ ոչ. շատ փոքր էր նորա ոսկի ու արծաթը, բոլոր աշխարհի գանձի ու հարատութեան չետ չեմ կարող փոխանակել իմ հայրենափրութիւնը, քո վերայ, ով Դիոմեդոն, որ չը ճանաչելով իմ բնաւորութիւնը փորձեցիր ինձ և քեզ նման կարծեցիր, զարմանում չեմ, ոյլ Ներումեմ քեզ, բայց զնա, չեռացիր շուտով, որ մի գուցէ մոլորեցնես ուրիշները, որովհետեւ ինձ չը կարողացար մոլորեցնել Նու դու, Միկիսոս, իսկզն յիտ սուր սորան այն արծաթը, ապա թէ ոչ. կը տամ քեզ դատաւորի մեռքը, Դիոմեդոնը խնդրելով որ թշյլ տան նորան ապահով դուրս գնալ Թերա քաղաքից և յետ տանել իւր բերած արծաթը, պատասխանեց Խպամիննդաս։ Այդ մասին ես հոգաբարձու կը լինիմ, ոչ թէ քո, ոյլ իմ համար, որ մի գուցէ, եթէ դրամը յափշտակէն քեզանից, ասէր մի մարդ, թէ այն զրամը, որ ես չէի ընդունել որպէս ընծայ, հասաւ ինձ որպէս կողազուտ։ Խպամիննդասը հարցնելով Դէռմդոնից, թէ ուր կամ որ առաջնորդէին նորան, և առ ասելով, թէ զեկ ի Ամէնիք, նշյնչետայն պահապաններ զրեց նորա հետ, որ անվեաս հասանէ այն տեղ։

6. Աշխատիւններ Դիոմեդոնիներ.

Վրիստիդէսը լաւ դիտէր, որ Թեմիստոկլէսը թէ ծածուկ և թէ յայտնի հակառակ էր եղած նորան հասարակաց գործի կառավարութեան մէջ, գիտէր նշյնպէս, որ ես առաւել Թէմիստոկլէսի գործակցութենով արսոր էր ուղարկվել ինքը։ Բայց Վրիստիդէսը ցցց առեց իւր անշաւարութիւնը, երբ Ամէնիսցիք խորհուրդ էին կատարում, որ Թեմիստոկլէսը խեցեկոյտ վճռով արտաքսեն քաղաքից, Յիրանի, այս միջոցին շատ հետ կարող էր Վրիստիդէս վրէմիլն զիր լինել իւր թշնամուն, բայց նա հրաժարվեցաւ առնայն խօսքից և գործից, որ վնասակար էր իւր սոսին. և ինչպէս յառաջուց

Նախանձում չէր նորան, երբ նա հարստութեամբ և փառքով ճռիացած էր, նշյալէս չը կամցաւ վշտացնել նորան, երբ որ վտանգի մէջ էր, կամ թէ ուրախանալ նորա աքարանքի վերայ:

7. Երդում ուղեւը ուժեանուրութիւնը.

Պիւթագորասը խրատումէր իւր աշակերտները, որ սակայ և ոչ խկան երդում ուղեւն, բայց իւրեանց անձը պյանգէս արժանաւոր ցայց տան, որ մարդիկ նայելով նոցա անարատ կեանքին, հաւատուցին նոցա և առանց երդման: Այս պյանգէս, երբ Կլինիսու Պիւթագորեանը կարող էր երդումն ուղելով ազատիթիւ երեք տաղանդի տուգանքից, աւելի արժան համարեց պյդքան դրամ կորուսանել, քան թէ երդնուլ, թէ պէտ նորա երդումը չէր լինելու տասխոսութիւն, Պատմատ, Պիւթագորասը և նորա հետեւորդքը կարծումին, թէ ընդդէմ էր բարեկաշութեան և երկիւղածութեան, Վասուծոյ պատկառէլի անունը բերան առնուլ մարդկեղեն բաների աղադաւ, որոնց մէծերը ևս փոքր և չնչին էին:

8. Ճշորդի եւբարեւութիւննեւ.

Խրեանից յետոյ մշանչենաւոր պարծանք է թողել Պրոկուլէոսը իւր հայրանման սրտովը գէպ ի իւր Եղբայրները: Աս հոռմէական ասպետ էր և Օգոստոս թագաւորի բարեկամ: Հօր մեռանելուց յետոյ մնացած ժառանդութիւնը հաւասարապէս բաժանել էր իւր Մուրենա և Սկիպիոն Եղբայրների հետ: բայց սորա քաղաքական պատերազմի միջոցումը կորցրեցին իւրեանց բալոր գայքը, Պրոկուլէոսը կամնալով իւր Եղբայրների անբաղդութիւնը թեթեացնել, իւր ունեցածը միւսանգամ բաժանեց նոցա հետ:

9. Աէճ երիւ եւբարեւութիւննեւ.

Վշխատութեան արժանի էր ականջ զնել պյն վիճին որ պատահէլ է երկու Եղբօր մէջ ոչ թէ մի կոտոր հաղի վերայ, ոչ թէ արծաթագին ծառաների կամ թէ անասունի վերայ, այլ մի թագաւորութեան մասին: Երբ որ Դարեհ Պարսից թագաւորը վախճանել էր, վէճ ծագեց ամռոսի մասին Վրտամենէս աւագ որդու և Քաերքսէսի մէջ, որ իւրեանց վէճը միաբան սրտով իւրեանց հօրեղբայր Վրտամիերնէսին, որպէս ընտանի գատառորի, յայտնեցին: Վրտամիերնէսը ընտաներար քննելով վէճը, առաւելութիւնը տուեց Քաերքսէսին: բայց Եղբայրական սէրը այնքան դորաոր գտանվեցաւ, որ ոչ յաղթողը ամբարտաւան գէմք ցայց տուեց, և ոչ յաղթվածը ցաւեցաւ. և նոյն իսկ հակառակութեան միջոցումը մինը միւսին պարգև ու լնծայ էին ուղարկում: Այն դարումը, երկու Եղբայր մէծա-

մեծ աշխարհներ աւելի խաղաղութեամբ կարող էին բաժանել իւր-
ևանց մէջ, քանիթէ մանր ժառանգութիւններ մեր օրերումը:

10. ԱՌԵՎԵՐԵՎ ՔՐԵԱԿԱՆԱՑ.

Ճամփատոկիլէսը պարսից պատերազմի մէջ յաղթող գտանվելուց
յասց, ասաց Հանդէսի մէջ, թէ մի խորհուրդ ունիմ՝ որ Հասարա-
կութեանը օգտակար էր, բայց Հարկաւոր չէր որ Հրասարակովի՝ Պա-
հանձեց, որ ժողովուրդը նշանակէ մի մարդ որին կարող էր յայտ-
նել ոյդ գաղտնիքը: Նշանակեցին Արիստիդէսը. սորան տեղեկու-
թիւն տուեց Թեմփատոկիլէսը, թէ Լակեդեմոնացոց նաւերը որ Գիւ-
թէնի մօտ գաղարած էին, կարելի էր ծածուկ այրել, և սորանով
Լակեդեմոնացոց զօրութիւնքը կը խորտակվէին անպատճառ: Արիս-
տիդէսը լսելով այս բանը, եկա ժողովի մէջ, որ մեծ ակնկալու-
թեամբ սպասումէր նորան, և ասաց. Թեմփատոկիլէսի խորհուրդը թէ-
պէտ շատ օգտակար է, բայց և շատ անիրաւ է: Ասան այս պատ-
ճառի Աթենացիք մօտածելով, թէ ինչ որ անիրաւ է, որեմն օգ-
տակար ևս չէ, ոյն բանը, որ և լսելու արժան չը համարեցին, մի-
միայն Արիստիդէսի վիզյութենավ մերժեցին ամեննեին:

11. ՀԵՐԻ-ԵՐ ԴՐԻ-ԺԵ-Լ ԷՆ-ԵՒ-Ց.

Հնդկատանի պյուիացեալ կանչքը, եթէ նորանցից մինի տղա-
մարդը վախճանել է, վէճ և հակառակութիւն են սկսանում այն մա-
սին, թէ որ կինը աւելի ընդունելի էր եղած իւր ամուսնու աշ-
քին, ըստ որում Հնդկացոց մէջ մի տղամարդ կարող է շատ կա-
նացը ունենաւ: Ավ որ այս վիճարարութեան մէջ յաղթող հան-
դիւացաւ, նա ուրախութեամբ և ընտանիքը գնալով նորա հետ,
թշլ է տալիս որ իւրեան ևս իւր մեռած տղամարդի հետ միասին
զնեն փայտակցյան վերայ և այրեն: Բայց յաղթվածքը տրտում և
ախուր յետ են դառնում: Այս չար, և մոլորական կրօնից յառա-
ջացած սովորութիւնը, հին ժամանակներից մինչև այժմ, կայ Հընդ-
կատանի մէջ և այնքան խոր արմատացած է, որ Անդիացոց տէրու-
թիւնը ևս գժուարանումէ ամեննեին խախանել նորան:

12. ՄԵԴ-ՀԱՀՔ ՇԱ-Հ-Ց.

Եշր Դեմութենէս ճարտարախօսը բանտից և նոյն իսկ Աթե-
նացոց քաղաքիցը փախած էր, տեսաւ որ իւր թշնամիներից մի
քանիքը սաստիկ վազելով գալիս էին նորա քամինից, և վախենա-
լով մի թագչերու տեղ էր որոնում: Բայց նորա Դեմութենէսի
անունը ստէպ ստէպ ձայն տալով, վերջապէս հասան նորան և խըն-
դրեցին, որ չը վախենայ, այլ վեր առնու այն արծաթը որ տանից

բներել էին նորա համար որպես ճանապարհի պաշտը և օգնություն, այլև սիրո էին տալիս նորան, որ շատ չը տրամի իւր վաստակադղութեան վերաց : Կոցա պատամանեց Գևմանթենէսը. Ի՞նչպէս համբերեմ այն վաստարազդութեանը, որ հեռանումը այն քաղաքից որի մէջ այնպիսի թշնամիք ունէի, որ, եթէ նոցա պէս քարեկամներ ունենայի, շատ և շատ երջանիկ կը լինէի:

13. የጊዜውን በኋላ ስት ተደርጓል ይህንም መንገዶችን ተደርጓል ይረዳል

Նըր որ Պլատոնը և կած էր ովհիմպիկական խաղարկութեան հանդէսը, ինչ տեղ անշափ բազմութիւն բոլոր Յունաստանի քաղաքներց հաւաքված էին, ընկերակից եղաւ անձանօթ մարդերի, ինքը ևս անձանօթ լինելով նոյս, Պլատոնը, թէ իւր քաղցր և մզմ բարբով և թէ իւր խօսուածների մէջ ամեննին ցոյց չը տալով իւր անձը իրրե փիլոսոփու մարդ, այնպէս գրաւեց և կայսեր իւր հետ ընկերների սիրտը, որ այն ստարականքը շատ ուրախ էին այդպիսի սովորացի հետ ընկերակից պատահէլով: Աչ Ակադեմիայի և ոչ Ասկրատէսի մասին մի բան չը խօսեց նա, այլ ասաց միայն թէ իւր անունը Պլատոն է: Երբ որ նոքա, խօսրկութեան հանդէսը վերջացած, և կել էին Ամենք, Պլատոնը մէծ մարդասիրութեամբ՝ ընդունեց Նորանց: Ազա խօսեցին հիւրքը, Խնդրենք, որ ցցց տա մեզ այն քո անուանակից Պլատոնը որ Սոկրատէսի աշակերտ է եղած, և որի համբաւը ամենայն տեղ տարածված լած է: Տար մեզ Ակադեմիա և Ներկայացրու այն տղամարդին, որ և նորա խօսքերիցը օգուտ քաղէնիք: Պլատոնը մեզմարար ժապակով, ինչպէս սովորութիւն ունէր, պատասխանեց: Աչա ես ինքս եմ այն մարդը՝ Հիացած Թեացին նոքա, որ անգախութեամբ այդքան երկար խրեանց ընկեր էին համարած այնպիսի մեծ տղամարդը, և հակացան, որ այն կարող էր նա ամեննցուն սիրտը գրաւել, ինչ մարդու հետ ևս կինակից ունէր, առանց խօսք բանալու խմաստափական խնդիրների վերաց:

14. $\left\{ \frac{1}{2}, \frac{2}{3}, \frac{3}{4}, \dots, \frac{n}{n+1} \right\}$ \rightarrow $\left\{ \frac{1}{2}, \frac{2}{3}, \frac{3}{4}, \dots, 1 \right\}$

Օեւքսիս և Պարշբաղիս մեծանուն պատկերաշնչանքը վէճ ըսկ կսեցին միմանց հետ իւրեաց Տարասրութեան մասին։ Զեւքսիսը նկարեց խաղող, և այնքան կենդանի, մինչև թռչունները ցած էին թշնամում որ կառոց զարկեն նորան։ Պարշբաղիսը յառաջ թերեց մի նկարած վարագոյք, այնպիսի խելութեամբ պատկերացրած, մինչև Զեւքսիսը, որ թռչունների զատաստանովը փրացած պարծենումը, պահանջեց որ վերջապէս վարագոյքը յետ քարշած ցոյց տայն պատկերը։ Քայց Զեւքսիսը ջուտով հասկացաւ իւր սխալանքը և

ասաց. Յաղթեցիր ինձ, ովք պարհապիսու, պատճառ, ևս մոշուն-ները խարեցի, բայց դու, արտեստուորը, պատմումն թէ Զեւ-քսիսը միւսանգամ նկարեց մի մանուկ, խաղողի միուը (Ճութը) ձեռ-քին. երբ որ մոշունքը մասեցան խաղողին, բարկացաւ իւր պատ-կերի վերայ և ասաց. Խաղողը աւելի քաջ է նկարած քան թէ մանուկը. պատճառ, եթէ և սորան այնպէս կատարմէ լազործած լի-նէի, մոշունները պիտոյ է վախենային:

15. Փէշտենուի ռարենիսի բիշաւ.

Առանեառը գրելու վերայ աշխատումքը Սիկիլիայի բոնակալ Դիրոնեափուր և իւր ատղերովը աւելի էր պարծենում քան թէ իւր արած պատեթազմական գործերովը: Հաւաքել էր իւր մօտ բոլոր հրա-չափաւոր բանասուղծները և փառաւոր պատումք պահումէր նորանց և հարցնումէր նոցա կարծիքը իւր գրած ոտանաւորների վերայ: Եսո-քա չը կամնալով անհամոյ զտանվիլ թագաւորի աչքին, հաւա-նումին և գոլումեին ինչ որ շարադրումէր Դիրոնեսիուրը: Նոցա մէջ ներկոյ էր Փիլոքսենոս մեծանուն ճարտարապետը բարձրաթմուիչ բա-նասուղծութեան արուեստի մէջ: Աս միւսոյ տեղեւակ չը լինելով շողոմարարութեան, լիեց միանգամ Դիրոնեսիոսի անհամ տաղերը, և աղատորէն յայտնեց իւր կարծիքը նոցա մասին: Այս համարձակախօ-սութենովը վիրաւորվեցաւ թագաւորը և սկզոյն հրամայեց ծառանե-րին որ տանեն կոփեն նորան բանտի մէջ: Բայց միւս որը, բարե-կամների բարեխօսութեամբ թողութիւն ստանալով Փիլոքսենոսը, միւսանգամ զանցվեցաւ սեղանակից լինելու թագաւորին, որ իւր տաղերը, ինչպէս սովորութիւն ունէր, անչպէս դովասանեց և քանի մի շարքերի մասին, որոնց առաւելապէս հաւան էր ինքը, կարծիք ինդրեց Փիլոքսենոսից: Աս ոչ մի պատասխան չը տալով թագաւորի հարցուածին, գանչեց նորա սպասաւորը և ասաց նոցա. Առէք տա-րեք ինձ միւսանգամ զէպ ի բանտը: Այս զուարձալի աղատամու-թեանը, որ բալոր սեղանի վերայ նստողների ծիծաղը շարժեց, հան-դարտ սրաով համբերեց Դիրոնեսիուրը:

16. Ժբ-ըն-նու-նիւ-ն դո-ու-ը.

Ով որ կամնեամէ ճարտարախօս գառնալ, թող հետեւի այն ամենացի Դիրոնեթենեսին որին, առանց տարակումի, պատկանումէ խօսքի ամենամեծ ոյժը: Այս Դիրոնեթենեսը, ինչպէս պատմումն, այնքան ժիր և աշխատաւէր մարդ էր, մինչև բնութեան արգելնե-րին յաղթեց իւր հոգատարութենով և ջանաղրութենով. և որով-հետեւ այնքան թոթովախօս էր, որ չէր կարող արտասանել առաջին

տառը այն արուեստի (այսինքն Ծետորութեան), որին պարագում էր, վասն որոյ աշխատելով և վարժվելով այն անդը հասաւ, որ ոչ ով նորո պէս բացայստ արտասանող չէր համարվում: Պատմումն նշյալէս, թէ սա մանր մանր քարեր բերանը ձգած, բարձր ձայնով երկար խօսքեր մի շնչով արտասանումէր, և ոչ թէ մի տեղում կանգնած, այլ գնալով և գալով, այս և դէպի ի մի բարձր սար վէր քառլելով:

17. ԷՇԻՋՆԵՐԵՐ, ԵՐԵՎԱՆ ԴՐԱՅՎԱԿԵՐ.

Լզպամինոնդասը Լակեղեմնեացոց յաղթած լինելով Մանտինէա քաղաքի մատ, և նոյն ժամանակումը տեսանելով որ և ինքը սաստիկ վիրաւորված, պիտոյ է հոգին աւանդէ, բացեց աչքը և հարցրեց. Աահանս պահպանված է: Երբ որ իւրայնքը լալով և արտասուելով ասացին թէ պահպանված է, հարցրեց ապա. Հալածվէլ են թշնամիքը: Լզպամինոնդասը լսելով և այն, որին ցանկանումէր, հրամայեց ապա որ գուրս հանեն գեղարդը որ գեռեւ խոցի մէջն էր: Այսպէս, արիւնով շաղախված, ուրախութեան և յաղթութեան մէջ վճարեց իւր կեանքը:

18. ԶԵՐԵՆ ՀԷՇՈՒՐԻՆ:

ԱԵՆԿՐՈ ՀԱՌՈՄՍԵՑԲԻՆ (որ Կերոնի վարժուակն էր) այնպիսի քաջ յիշողութիւն ունէր, մինչև որ հրաշք էր գարձել: Եթէ նորա առաջն երկու հազար անուն կարդային, կարող էր կրկնել նորանց մի և նոյն կարգով, ինչպէս ասած էին, և իւր մատ ականջ դնելու եկած մարդերիցը մի մի տող ստանաւոր լսելով, որ երկու հարիւրից առելի էին, միւսանգամ տառմէր, սկսած վերջին տողից մինչև առաջնոր: — Հարսնազիս հոռմայեցին նշյալէս յաջողակ յիշողութիւն ունենալով, բոլոր որը հրապարակական վաճառածութեան հանդիսի մէջ նստած, ամենայն բաները, նոցա գիները և գնողները այնպէս ուղիղ կարգով համարումէր և անց էր կենում, որ ոչինչ բանում սիստլում չէր: — Մի ոչը մարդ մի բանաստեղծի բերանից մի նոր տաղերգութիւն լսելով, ասաց. Դա իմ է, և կամենալով ապացուանել իւր իրաւունքը, իսկզն տանց պատրաստութեան կրկնեց այն տաղաւախութիւնը, որ ինքը հեղինակը չէր կարող այդպէս անդիր ասել: — Հրաշալի յիշողականութիւն ունեցել են մի քանի խալացիք, զոր որինակ պիկուս Միքանդոլա մարդը կարող էր 2000 բառ գլուխ և վերջից կրկնել, առանց մի հաս բաց թոշնելու, կամ թէ սկսանելով մէջից, ինչպէս որ կամենումէր: Միւս խտալացի Մայլիարէքը անունով, որ ապրել է տասն և ութերորդ

Ո՞ի մարդ, որ ուսումներ վեց մարդու չափ, ներկայացաւ Հենրիկոս շորբորդին, յուսալով թէ այս թագաւորը կը տայ նորան մի բան որանով կարող էր պահպանել իւր այլքան սակաւագիւտ շրնորհքը: Թագաւորը որ աչա լսած էր այդ անուանի շատակերի համբաւը, հարցոցի նորանից. ճշմարիտ էր ինչ որ ասումէին քո համար, այսինքն, թէ զու ուսումն վեց մարդու չափ: Այս, Զերդ մեծութիւն, պատասխանեց նա: Եւ զու աշխատումնես ուտելուդ. համեմատ, հարց արեց թագաւորը: — Ես աշխատումնմ այնքան, ինչքան մի ուրիշը իմ ուժով և իմ հասակումն, պատասխանեց շատակերը, Անգլիան գու, աղաղակեց թագաւորը. եթէ ես ունենայի քո պէս վեց մարդ իմ թագաւորութեան մէջ, կը հրամայէի կախել նորանց. այդպիսի ցոփակեաց (ուտաղ խմող) մարդիկը շուտով կը բերէին սով իմ աշխարհիս վերայ:

9. Գրիգորիոս Բեդ.

Խօմնամեոյ պատերազմի ժամանակումը (որ ունէր Պրուսիա Վլսորիայի հետ 1756—1763 թ.) Գրիգորիկոս մէծի մօս մի մարդ բերեցին որ գտանված էր ավատրիական զօրագլուի պաշտօնումը և փախած էր նորա մատից: Այս մարդը յանձնեց թագաւորին շատ հարկաւոր մէղմէր որոնցից կարելի էր շատ տեղեկութիւնք քաղել թշնամիների գիտաւորութենների մասին: Գրիգորիկոսը հրամայեց, որ հաց զննն նորա առաջն և ապա ներկայացնեն իւրեան: Ես չեմ կարող լնդունել քեզ իմ պաշտօնի մէջ, ասաց Պրուսիացոց թագաւորը. պատճառ, ինչ հաւատ կարող էի ունենալ դէպ ի մի մարդ, որ իւր տիրոջը անհաւատարիմ է գտանվել: Աչա քեզ հարիւր ար-

ծալթ քո կարծեցած համոյակատարութեան համար. զնա, հեռացիր շուտով և զգուշացիր, որ միւսանդամ շերեխ իմ հողի վերայ կամ թէ իմ զօրբիս մէջ. տապա թէ ոչ, կը հրամայիմ կախ տալ քեզ:

10. Խ-Ք-Հ-Յ-Յ-Շ.

Լուղովիկոս տասն և միերորդը զնուես երիտասարդ լինելով, զնուումէր երբեմն մի շինականի մօս միրդ ուտելու. Երբ որ նա աթու նատեց, շինականը տարաւ նորան իւր պարտէզից մի շողգամ աշազին մածութենով: Թագաւորը չնորհակալ եղաւ շինականից նորա պարզնի համար, և հրամայեց տալ նորան հազար մանէթ: Գիւզատէր պարոնը լսելով թագաւորի պապիսի առատաձեռնութիւնը յշյս ունէր որ եթէ մի ընտիր ձի տանէր թագաւորին ընծայ, կը բաղդաւորվէր ամեննին: Այսպիսի պարզելով զնաց թագաւորի դուռը, և թագաւորը ընդունելով նորա բերած ձին, զովսամանեց ընծան և ասաց. Իւրեցէր իմ շողգամն, որ և տալով գիւղատէր պարոնին, ասաց. Այս ձեզ պարզ մի հազուագիւտ շողգամ, որ ոյնքան պատուակն է իւր տեսակների մէջ, ինչպէս ձեր ընծայ բերած ձին. բարեան մնաս. շնորհակալ եմ:

11. ՈՐԴԻ-Ե-Ն-Ե-Շ.

Մի չինէացի Մանդարին դասապարտված էր, որ մեռանի, բառ որում յանցաւոր էր գտանվել իւր պաշտօնի մէջ: Նորա տասն և հինգ տարեկան որդին դիմոց թագաւորի դուռը, որ աղաւէ և խընդուրէ թշյլուութիւն մեռանելու փոխանակ իւր ծնողին: Թագաւորը հիմնալով այս դործի վերայ, և դութը շարժվելով այս աղնիւ որդու հայրասիրութենից, չնորհչեց նորան հօր կեանքը, այլև կամեցաւ իւր կողմից ցցց տալ նորան առանձին պատիւ և մէծարանք, որ այնպիսի զաւակը օրինակ դառնայ առագայի համար: Սորանցից հրաժարվելով մանուկը, ասաց. Այսպիսի մի զերազանց չնորհ միշտ կը նոռ բոգէր այն պատճառների յիշատակը, որոնց համար իւր ծնողը զատապարտված էր, և կը լինէր կեղտ անուն որպէս մինի, նշյնպէս և միւսի համար:

12. Ա-Ք-Ե-Ն-Ե-Շ-

Վազեղիլայոս, Լակեղեմնանացոց թագաւորը, որ մինն էր այն մեծանուն իշխաններից որ մի ժամանակում կային Յունաստանի մէջ, ասես թէ իւր տան մէջ մոռանութէր այն բոլոր փառքը և մէծութիւնը որ նորա չորս կողմը պատած էին, կամնալով ազատորէն դգուել և փայփայել իւր որդին որ զեռ ևս մասուեկ էր: Յունաստանը նայումէր սբանչանալով, երբ որ այս թագաւորը, որանից Մ-Ա-Ն- ։

սարսափումէին Սպարտացոց թշնամիքը, մի գաւաղանի վերայ հեծած վազումէր, իւր աթոռի ժառանգը զուարձացնելու համար։ Մի ծաղրածու մարդ միանդամ՝ ականատես լինելով այս բանիս, որ ծաղրայի էր մի հասարակ մարդու աչքի, սկսեց ծիծաղել Ագեղիլայսոսի վերայ։ Կմ բարեկամ՝ պատասխանեց նորան այս իշխանաւորը, այժմ դռ հանդարս կաց և սպասիր մինչև հայր դառնաս, ապա կարող էիր ծիծաղել նոց վերայ որ հայր են ահա։

13. Ո՞ւ ի՞շ մարդու մասին պատմումն այս հնարագիտութիւնը։

Ո՞ւ կայր մարդու մասին պատմումն այս հնարագիտութիւնը։ Աս ունէր հինգ հարիւր արծաթ, որ թաղցրած էր իւր պարտեղի մի անկիւնումը։ Բայց մի գրացի, որ տեսած էր այս բանը, գնաց և հանեց հողի տակիցը։ Կայրը գալով և չը գտանելով իւր արծաթը, կարծիքի մէջ ընկա։ թէ ով կարող էր լինել գողացողը։ Սահմեց թէ ինչ կերպով պիտոյ էր տեղեկանալ այս բանին։ Գնաց իւր դրացու մաս և ասաց նորան թէ կամնումն խորհուրդ հարցնել քեզա նից։ Կայ իմ մաս հազար մանէթ որի կէսը թաղած եմ մի սպահում, և չը գիտեմ թէ հարկաւո՞ր էր և միւս կէսը դնել այն տեղ։ Դրացին խորհուրդ տուեց որ պշտպէս առնէ, և շտապեց իւր գողացած հինգ հարիւր մանէթը յետ տանել և դնել իւր տեղումը, յուսալով թէ շուտով կը հանէ այն տեղից հազար մանէթ։ Բայց կոյրը միւսանգամ գտանելով իւր արծաթը, տիրապետեց նորան և դանչելով իւր դրացին, ասաց նորան։ Սանահոյր, կոյրը աւելի պայծառ տեսան քան թէ երկու աչքով լուսաւորը։

14. գերեւո՞նի հեջ թուշ հոգի։

Երկու ուսանողը համալսարանի, Աեգովիխոյից գնալով Սարամանկա, հանգիստեցին մի գերեզմանի որի վերայ դրած էր ոյսպիսի տապանագիր։ Այս տեղ է թաղած պետրոս գարսիաս վարժապետի հոգին։ Նորանցից մինը շատ ծիծաղեց այս անմիտ դրուածի վերայ, ասելով։ Ո՞ւ թէ մարդու հոգին կարելի էր թաղել հողի տակ։ Ասրա ընկերը հասկացա։ թէ այն գրուածը կարող էր ունենալ մի խուցի խորհուրդ։ Այս պատճառով թող տուեց միւսին որ յառած գնայ, բայց նորը բարձրացրեց գերեզմանաքարը, փորեց հողը և գըտաւ նորա մէջ մի դանձ և մի այլ վերագիր պյապէս։ Դարձիր դուիմ ժառանգ, ըստ որում պյնքան խելք ունէիր որ վերահասու եղար իմ տապանագրի խորհրդին, և իմ արծաթը աւելի լաւ գործ դիր, քան թէ ես։ Եշակերտը շատ ուրախանալով այս գիւտի վերայ, քարը գլորեց իւր տեղը և հեռացաւ, տանելով իւր ծոցումը վարժապետի հոգին։

15. Հանձորեւ բարձր որդություննեւս իւր հայ.

Հեջաջ խալիվը, որ իւր անողոքմ գործերովը աչ և սաստնութիւն էր ձգել ազդերի վերսց, միանգամ շրջումներ իւր թագառորութեան մեջ առանց ընկերակցի և առանց իշխանական նշանների։ Հանդիսեց մի անապատական Արարացու և խօսեց նորա հետ այսպէս։ Եղբայր, ես կը կամնայի իմանալ քեզանից թէ ինչ մարդ է այս Հեջաջը որի մասին այսքան խօսումն։ Հեջաջը, ասաց Արարացին, մարդ չէ, այլ մի անողոքմ գաղան է։ Ինչ բանի մասին նախատելի էր նա։ Անհամար յանցանիւնների մասին։ Ցեսան ես զու նորան։ Ոչ Ապա աչքերդ բաց արա և տես, ում հետ զու խօսումնա, նա է Հեջաջը։ Արարացին ամեննեին անխոռվ մասլով և անշարժ աչքով նայելով նորան, ասաց գոռողաբար. Բայց զու դիմեն թէ ես ով եմ։ Ոչ Նորդի եմ Զօրայրի ազգատոհմից որի զաւակները ամեն տարի մի օր խելապարթումնեն, և այս օրը խելացնորութեան օրն է։ Հեջաջը ժպանեցա այս հանճարեղ խօսրի վերսց, որանով կամեցան էր Արարացին արդարացուցանել իւր անձը։

16. Հեքերութիւն հանձու Յշնը.

Վթենացիք պաշտրել էին թարա քաղաքը Լոգէյեան ծովի մեջ. քաղաքացոց մեջ մի զարհութելի սով յառաջացաւ, և ոչ մինը չեր համարձակվում առաջարկել որ անձնատուր լինին թշնամուն, ըստ որում մի օրէնք դրան կար, որ մահու պատժով արգելումներ խաղաղութեան դաշն կազել Աթենացց հետ։ Հեքետորիդէս, մի արժանապատի քաղաքացի թէ իւր ազգատոհմի կողմից, և թէ իւր առաջինական գործերովը, ցաւելով իւր հայրենիքի տառապանքի վերսց, մարգումը դրեց որ իւր անձն զոյէ նորա համար։ Գուրի եկաւ ժողովրդի առաջն, մի չուան վզին։ Քաղաքացիք, ասաց նա, ես լազ զիսեմ թէ ինչ կը լինի իմ վերջը. Բայց երջանիկ եմ համարում իմ անձը, եթէ կարող եմ իմ մահովը դնել ձեր փրկութիւնը, Խորհուրդ եմ տալիս ձեզ խաղաղութիւն կազել Աթենացց հետ։ Թարացիք հիացան նորա աշնուարացութեան վերսց, ոչ թէ միայն չը պատժեցին նորան, ոյլև վերացրեցին այն օրէնքը որ դըրած էին։

17. Ծառ և ինո՞ւ որդութիւն.

Ոի Արարացի եկել էր Սուլթան Մահմադ. Սուրությունի մատ և բազրումներ թէ երկու անձանօթ մարդիկ գիշերով գալիս էին իմ տունը և բանութիւն էին գործում իմ ինոջ հետ։ Սուլթանը հրամայեց գանգատառուրին որ գայ իմաց տայ իւրեան, երբ նոքա միւսանգամ կը համարձակվին գալ ։ Փամանակը հասած, ինքը

թագաւորը սուրը ձեռքին դնաց այն բողոքաւորի տունը, հրամայեց
հանգնել ճրագները, լմրոնց յանցաւորքը և սրամահ արեց նո-
րանց: Պատիժը տուած, հրամայեց Սուլթանը վառել ճրագները,
բարձրացրեց ձեռքերը և փառք տուեց Աստուծուն: Ի՞նչ ողորմու-
թիւն ստացար զու Աստուծուց, հարցրեց նորա վեզիրը: Սուլթանը
պատասխանեց. Ես կարծումի թէ իմ որդիքս եին այս բոնաւորքը,
և այս պատճառով կամցայ շիջուցանել ճրագները, որ չը տեսա-
նեմ մահապարանների երեսը. պատճառ, երկիւղ ունէի թէ մի զու-
ցէ հոյրական սրտի գումը խափան լինէր ոյն արդարութեանը որ
ինչպէս թագաւոր պարտական էի հատուցանել իմ հպատակներին:
Մտածիր ապա, ունիմ արգեաք իրաւացի պատճառ գոչութիւն մա-
տուցանելու Աստուծուն, տեսանելով իմ անձը արգար, առանց որ-
դեսպան լինելու:

18. ԱՆԴՐԻԴ ՌԱՅ-

Մի շատ աղքատ մարդ գտել էր մի քսակ, հարիւր հատ սկի
մէջումը: Այդ դրամը իմն չէ, ասումի ինքը խրեան. որոնենք սո-
րա տէրը: Խակոյն հրատարակիել տուեց նա, որ եթէ մի մարդ կո-
րուսած էր մի քսակ ոսկով լցրած, կարող էր դիմել նորա մօտ:
Կորուսանողը եկաւ նորա մօտ և ասաց քսակի նշանները, ոյնպէս
որ հաւտսոեց թէ նա խրեան է պատկանում: Աչան ձեզ ձեր քսակը,
ասաց աղքատը, և շատ ուրախ եմ որ կարողացայ միւսանգամ հա-
սուցանել ձեզ նորան: Այն մարդը անչափ ուրախանալով և շոր-
հակալ լինելով աղաւց որ աղքատը ընդունի քսան հատ սկի որ-
պէս նորա նորհակալութեան ապացցոյ: Աղքատը յանձն շտառ և
տասն հատ տուածիցը ևս հրաժարվեցաւ: Առա քսակի տէրը վեր
առաւ քսակը և ձգեց զէս ի աղքատը, ասելով. Պահիր դորան քո
մօտ, որովհեան զու շես կամենում ոչինչ ընդունել, ապա և ես
ոչինչ կորուսած չեմ: Աղքատը չը կամենալով վիրաւորել ոյն պա-
րոնին, վերջապէս վեր առաւ մի հատ սկի, որ և խակոյն բաշխեց
քանի մի ցաւագարեալ անբազդների որ անցանումին ճանապարհից:

19. ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԹԱՆ.

Սուլէյման գոռող Սուլթանը Տաճիկների, որի բնական ձիրքը
շատ մեծ էին, և պատռասիրութիւնը անսահման, յարձակվեցաւ
Հունգարիայի վերաց և առաւ թէլլրադ քաղաքը որ համարվումը
պահպանողական պարիսպ քրիստոնեայ աղդերի համար: Սուլէյմանը
այս երեւելի աշխարհակալութիւնը արած, և աչա մի հասարակ կին
մօտեցաւ նորան և արտասուելով գանգատումը թէ Սուլթանի զօ-
րականքը յափշտակեցին անասունքս որ իմ բոլոր ունեցած շունե-

ցածս էր: Պէտք է որ դու մի խոր քնի մէջ թաղած լինէիր, ասաց նորան Սուլթանը ծիծաղելով, բայ որում չես իմացել այն գողերի գալուստը: Այս, տէր, ես պինդ քնած էր, պատասխանեց կինը, բայց այն յուսով և հաւատով, որ ձեր մեծութիւնը արթուն էր հասարակաց ապահովութեան համար: Սուլթանը վեհանձն մարդ լինելով, հաւանեց կնօք պատասխանատութեանը, թէև շատ համարձակ էր, և պատշաճապէս փոխարինեց այն վնասը որ իւր պարտականութիւնն էր եղած խափանել:

20. Պատասխանը և դուռը.

Ապահոս տէար ծերունին հռոմէական Խռարեստների հրամանով դաստապարովլցաւ դէպ ի մահ, և մոտածելով թէ այն թշուլ և նուռազ կինդանութեան սակաւ օրերը որ գեռ ևս ունէր ապրելու, չարժէին աշխատութիւնը պահպանել նորան, յոյսը կորեց իւր փրկութենից և վճռեց որ հանդարս մնայ իւր տան մէջ և մուռանի: Բայց չը կարգացաւ ընդդիմանալ իւր որդու թախօննադին աղաւանքին, որ կամնուումը փրկել հօր կեսանքը, որ և վեր առեց նորան և դրեց ուսերի վերայ, և թեանաւորված այս պատուական ծանրութենովը գնումէր քաղաքի մէջից, մինի համար անծանօթ, միւսի թերանովը գովասանվելով: Պատասխի Ապահոսը յաջողութեամբ դուրս տարաւ Հռոմից իւր ձնողը: ապա օգնեց նորան օտք փոխելու, երբեմն պահելով նորան իւր ձնոցքը մէջ և երբեմն շալակելով նորան, մինչև ողջ և առողջ հասան ծովին, նաև նստեցին և անց կացան դէպ ի Սիկիլիա: Հռոմէական ազգը պահպանեց այս բարեւպաշտ գործի յիշատակը: Պատասխանը միշտ վերջանալով, պատանի Ապահոսը յես դարձաւ դէպ ի հաւատութիւն և սահած պաշտան էղիլսական (շինուածների վերակացուի) և հատուցին նորան կրկին շափով ինչ որ կորուսած էր:

21. Ամենայն ուշ իշել է Քռառել:

Մի նաւատուի (նաւի սպասաւոր) կամնուումը նաւով ճանապարհորդել դէպ ի Հնդկաստան: Մի քաղաքացի մարդ որ իւր անձը աւելի խելք էր համարում քան թէ այն ծովագնաց մարդը, ասաց նորան: Ոիրենի, ինչ տեղ է մոռել քո հայրը: Մի նաւարեկութեան մէջ, պատասխանեց նաւատուի: Եւ քո պահը: Երբ որ նա գնացել էր ձուկն օրսալու, բարձրացաւ մի աշնախի կատաղի փոթորիկ, որ նորան իւր նաւակով միասին ընկըմց ջրի տակ: Եւ քո նախապանը: Կա ևս անբաղդացել է մի նաւի մէջ որ ջարդվեցաւ զարկվելով մի ծովային քարաժայախ: Ապա օրեզէս, կրկին խօսեց քաղաքացին, համարձակվումն զու ծովին վերայ ճանապարհորդել, եթէ քո բոլոր

պապերը կորել են այն տեղ։ Պիտոյ է որ դու շատ խելագար լինիս։ Պարոն փելիսոփիայ, պատասխանեց նաւասին, խնդրեմ որ գումաս մնձ, թէ ինչ տեղ է մեռած քո հայրը։ Շատ հանգիստ, իւր մահմանի մէջ։ Եւ ձեր նախահարբը ո՞ր տեղ։ Կայս հանգարան իւրեանց անկողինների մէջ։ Եսա ասա դու մնձ, պարոն փելուսիս, խօսեց նաևաստին, թէ զու ինչպէս ես համարձակվում հանգստանալ մահմանի մէջ, եթէ քո բոլոր պապերը մեռած են այն տեղ։

22. Ահեղեկո հայոց հորդուհունչը.

Լանուտ մէծը, Դանեմարբի և Ընդիխայի թագաւորը, մի որ իւր բոլոր պալատականներով միասին կանգնած էր ծովի ափի վերայ, Նորա պալատականքը, այդ բանից առիթ քաղեցին առելու նորան, թէ թագաւորների թագաւոր ես և տէր ծովի ու ցամաքի, Կանուտը երկիւզած և առողջամիտ մարդ լինելով, կամցաւ ամաչեցնել իւր շողովիչքը (Հաճոյախօսքը) և ցուցանել նոցա, թէ փոքր մի աւելի խելք ուներ, քան թէ կարող էր անմտանալ նոցա յիմար խօսքերովը։ Այս պատճառով ծալեց իւր վերարկուն և նստեց նորա վերայ։ Այս միջոցին ծովը հեղեղի մէջ էր, և անուտը խօսելով ջրի հետ, ասումէր նորան, ցամաք հողը որի վերայ ես նստած եմ, իմս է, և ես քո իշխանն եմ, ուրիմն հրամայումէմ քեզ որ մնաս քո սահմանի մէջ և գուրս չը զայ թաց առնելու իմ տները։ Այս խօսքների լսողքը կարծեցին թէ թագաւորը խելագար է, ըստ որում մուածումէր թէ ծովը կը հնազանդի նորան։ Բայց ջուրը աւելի և աւելի յատաջ լուսով եկաւ և թաց արեց թագաւորի տները։ Ապա վեր կացաւ կանուտը և ասաց շողովիշներին։ Ահա զուք ականատես էք, թէ ես ինչպէս իշխան էի ծովի վերայ։ Սորանից իմացէք, թէ թագաւորների կարողութիւնը մի շատ փոքր բան է։ Չո կայ ոչ մի այլ թագաւոր, բաց ի Աստուծուց որ կառավարումէ երկինք և երկիր և ծով։

23. Թէ բնաւե ոչոյ և ծըս լինել.

Ոի ժլատ մարդ որ և իւր ժլատութիւնը պարծանք էր համարում իւր համար, լսելով թէ Դիւմուլէն անունով թժիշկը նորանից գերազանց է այս մասին, զնաց նորան տեսութիւն ձմեռնային երեկոյի ութ ժաման։ Վասնելով նորան մի սենեկի մէջ և նորա առաջն դրած մի փոքր լապտեր որ ծխապատելով տունը համարեան թէ ոչինչ լցու չէր տալիս, ասաց նորան ներս մնանելով։ Պարոն, լսած եմ որ դու շատ և շատ տնտես մարդ ես. Ես ևս մի փոքր տեղեակ եմ այդ արուեստին, բայց կը ցանկանայի աւելի լինել, և

խնդրումեմ որ բարեկամարար մի քանի խրատներ տայիք ինձ տընտեսութեան մասին։ Մի՛ թէ միայն այդ բանի համար էիր եկած իմ մաս, պատասխանեց նորան դիւմուլնել բարկանալով։ Կատիր, և խեղյուն հանգցրեց իւր լավամերը, ասելով։ Մեզ հարկաւոր չէ ճրագ խօսելու համար, և մթի մեջ աւելի ժողով կռւնենայինք մեր միտքը։ Ահ, պարոն, աղաղակից օտարականը. այդ տնտեսութեան խրատը բաւական էր ինձ. տեսանումնեմ, որ ևս, հանձման լով քեզ, անփորձ մանուկ եմ. բայց յայտնեմ քեզ որ քո խրատը գործ կը զնեմ անողատմատ։ Օտարականը հեռացա, կուրօնեն շօշափելով պատերը։

24. ՈՒ՞՞՞ ու ԴԱՇ ՊԵՆԴՐԱՆՆԵՐ ԱՌԵՇ.

Պիւթիասը, որ Լիւդիայի մի քաղաքի կառավարիչ էր, լինելով հարուստ և ժլաս մարդ, հրամայեց փորել իւր աշխարհի բոլոր սպիշանքները, մինչև որ գրեթէ ոչինչ հող չը մնաց երկրագործութեան համար։ Նորա կինը մի քաջ հնարագիտութենով հաշկացրեց նորան այդ գործի անմոռութիւնը։ Երբ որ իւր տղամարդը մի քանի ժամանակ բացակայ էր, հրամայեց նա շինել ոսկուց մի սեղան և նորա բոլոր սարք ու կարգը. նոյնպէս ոսկուց պատրաստել տուեց ձեւը և կերպարանքը այն կերակուրների որ սիրելի էին իւր ամոռանուն։ Երբ սա յետ գարձաւ, հացկերութեան ժամանակը գրեցին նորա տռաջն մի ոսկեղջն սեղան և նորա պատկանելիքը. այս տեսարանը յառաջ ուրախացրեց նորան, բայց քաղցածութիւնը ըսկելով տանքել, հրամայեց որ կերպուր բերեն. բերեցին այն ոսկեղն յօրինուածքը, որ ծածուկ պատրաստած էին։ Պիւթիասը ըսկեց ձանձրանալ այս խաղարկութենից և բարկանալով ամեննեին, ինդրեց ուտելու մի բան։ Եհա տես և հակացնը, ասոց նորան իւր կինը, թէ ոսկին չէ մնուցիչ մարդուս համար. դու մօածումն մի այն որ հողի ծոցից ոսկի հանես, փոխանակ պյնայիսի պառողներ կը թելու որ հարկաւոր էին կերակի պահպանութեան համար։ Դու խանգարումն ամենայն երկրագործութիւն, և քո հպատակը շուտով սովամահ կը լինին, եթէ շարունակես քո զնացքը։ Պիւթիասը օգուտ քաղելով այս խրատից, փոխեց իւր վայրը։

25. ԱՌԵՆՔ-ԲՐԱ ԱՌԵՆՔ.

Ո՞ի աւաղակ մարդ որ ահ ու սարսափ էր տարածել հորսիկա կղզումը, որ և աղատիվ էր ամենայն որոգայթներից, վերջապէս ըմբռնվեցաւ և յանձնվեցաւ մի զօրականի պահպանութեան։ Պատրաստվումէին որ պատժն նորան մահով, բայց կալանաւորը հնարք դտաւ սոյթաքել զսրականի արթնութենիցը և փրկվելով պատապարան դտաւ մի ծածուկ տեղում։ Զրանսիցիցի մօծաւորը պարտաորեց

պահապանին, ըստ որում անհոգ էր գտանքած իւր պաշտօնի մէջ. դասաստան բացվեցաւ և վճիռ կապվեցաւ որ մեռանի նա: Աւազակը լսելով այս լուրը, թողեց խկցյն իւր պատսպարանը և շատպեց մեծառի մօս: Ահա նորա խօսուածքը. Զէք ճանաչում ինձ. ևս լսած եմ որ ձեր զօրականների մինը շուտով կորնչելու է, ըստ որում չէ կարողացել պահել մի կալանառ որ կարող էր միւսանգամ ձեր ձեռքը հասանել: Կրկին հասանել մեր ձեռքը, ուր է փախել նա: Ահա ձեր աչբի առաջնեն է: Ինչ եմ լսում ես: Արդարեւ ես այն կարանառն եմ, որի վերայ դուք մահու վճիռ էիք կապել. աչա նկել եմ որ կրեմ այն պատուհանը որանից կարող էի աղաս մնալ: Իսկ համբերելու որ մի անմեղ մարդ պատժվէր փոխանակ իմ: Գրանխացի պաշտօնաւորը հիմանալով այս բարձրահայեաց արդարութեան վերայ, ձայն արձակեց. Դու արժանի չես մահու, ես շնորհումմա քեզ քո յանցանքը. խկցյն կ'աղասեն այն զօրականը, բայց դու աշխատիր քո աղնուաբարցութեան պատզը ժողովել: դու ստեղծած ես, որ լինիս առաքինի տղամարդ:

26. ԳՐԵՐԻՆ ԴՆ.

Քրիդրիկոսը միանգամ իւր սենեկի մէջ հնչեցուց զանգակը, և ոչ ով չերեւեց թագաւորի մօս: Նա բայց իւր սենեկի դուռը և տեսաւ որ իւր սպասաւորը քնած է մի աթուի վերայ: Յառաջ գնաց և կամնումէր զարթուցանել նորան, բայց հանդիպեց աչքին մի թղթի ծայրը որ դուրս էր ցցուած նորա ծոցիցը: Հետաքրիբ լինելով ցանկացաւ իմանալ թէ այդ ինչ գրուած էր. առաւ և կարդաց, և տեղեկացաւ որ իւր սպասաւորի մշյը գրումէր իւր որդուն և շնորհակալ էր լինում այն մասին, որ նա իւր թոշակի մի բաժինը ուղարկած էր, իւր մօր չքառութիւնը թէմեւացնելու համար: Այօր գրածը վերջանումէր այսպէս. թէ Աստուած կ'օրհնէ քեզ այս քո մույրասիրութեան համար: Թագաւորը կարդացած այս թուղթ, րոիկ մնջիկ մօսաւ իւր սենեակը, առեց մի փաթեթ սոկներ և այն թղթի հետ միասին մեղմով կոփեց իւր սպասաւորի ծոցի մէջ: Ենկա իւր սենեակը և այնպէս ստատիկ հնչեցրեց զանգակը, մինչև սպասաւորը զարթեցաւ և ներս մօսաւ: Դու շատ պինդ քնած էիր, ասաց նորան թագաւորը. սպասաւորը կամեցաւ թողովին ինդրել և իւր տարակուանքի մէջ պատուհամբ ձեռքը տարաւ զէս ի ծոցը և զարմացաւ զտանելով այն անշ մի փաթեթ բան, դուրս քարչեց նորան, այլագունեց և նայելով թագաւորին, արտասուքի գետ էր իջուածում, առանց կարողանալու մի բառ ևս դուրս բերել բերանիցը: Ի՞նչ բան է այդ. Ի՞նչ է պատուհել քեզ, ասաց թագաւորը: Ո՛չ,

Տէր թագաւոր, ասաց սպասաւորը խոնարհելով ծնկերի վերայ. Կամ մենումն կորուսանել ինձ, չը դիտեմ թէ այս ինչ արծաթ է որ իմ ծոցումն է: Կ'մ բարեկամ, ասաց Ֆրիդրիկոսը. Ասուած շատ անգամ իւր բարութիւնը պարզեւում մեղ քնի մէջ. ուղարկիր այդ արծաթը քո մօրը, ողջունիր նորան իմ կողմից և միամսութիւն տուր նորան որ ես հոգաբարձու կը լինիմ նորա և քո համար:

27. Ե-Ի-Դ-Ի-Շ-Ր-Հ-Յ-Ն-Ց.

Եւդամիդաս կորնթացին մեռանումը և մի կտակ արեց որ ծիծաղելի կ'երեւեր ամենայն ուրիշ մարդու: Կա մատենալով իւր կենացանութեան վերջին ժամուն, պիտոյ է իւր մայրը և գուստրը թողուր վերջին շքաւորութեան մէջ, ըստ որում ոչինչ գոյք շունէր բաց ի երկու հաւասարիմ բարեկամից Կարիքսէն և Արեթոս անունով: Բայց Եւդամիդասը չը սխալվեցաւ, իւր յատուկ սրտի պէս գատելով իւր բարեկամների սիրտը: Նորա արած կտակը որ պէտք է անմոռանալի մնայ, պատիւ էր. Ես կտակով յանձնումը Արեթոսին, որ անուցանէ իմ մայրը և պահպանէ նորան ծերութեան հասակումը. Կարիքսէնին յանձնումը որ ամուսնացնէ իմ գուստրը և տայ նորան պյնքան մնջ բաժինք, ինչքան կարող էր. և եթէ այդ երկուսից մինը մնանի, նորա հոգաբարձական գործը գնումնմ նորա վերայ, որ միւսից աւելի կապրեր Կարիքսէնը հինգ օրից յետոյ մեռանելով կամ սրտի ցաւիցը կամ թէ այլ դիպուածով, Արեթոսը կտարեց երկուսի վերայ դրած յանձնարարութիւնը, և կամենալով իւր գործը աւելի պայծառափայլ կացուցանել, մի օրի մէջ ամուսնացրեց իւր բարեկամի և իւր յատուկ գուստրը, և երկուսին ևս տուեց հաւասար բաժինք: Եթէ քննենք մօր վիճակը, սորան պահպանեց մինչեւ մեռանելը: Եթէ Արեթոսի ազնուարաբայութիւնը արժանի է զարմանալու, կտակարարի ազնիւ վատահութիւնը և հաւատը ևս առաւել արժանի է հիացման. պատճառ, նա որ ունէր համարձակութիւն պյդպիսի կտակ աւանդել, կարող էր ինքը ոչ թէ միայն կտատրել նորան, այլ մին բան ևս աւելի. և ոչինչ տարակուսանք չը կայ թէ նա կերաբելու էր իւր բարեկամի մայրը և ամուսնացնելու էր նորա գուստրը, առանց յատուկ յանձնարարութեան ևս:

28. Ե-Ի-Դ-Ի-Շ-Ր-Հ-Յ-Ն-Ց.

Լողովիկոս տաննելորսորդը հրաման տուեց Դիքէն զըրավարին որ ոմբաձիգ լինի Ալֆերա քաղաքի վերայ, որպէս պատիժ իւր անհաւատարիմ և անզգամ գործերի մասին: Ծովային աւազակները յուսահատվելով, ըստ որում չը կարողացան իւրեանց ծովափերիցը հեռացնել թշնամի նաւերը, որ թնդանօթների բերանից

կրակ ու կործանութիւն էին դուրս փախում, մի զարհուրելի խորհուրդ արեցին որ Ֆրանսիացի գերիքը կապեն թնդանօթների բերանի վերաց: Մի ալժերացի նաւապետ, որ իւր աւազակային գործերի մէջ ըստոնված էր և Ֆրանսիացոց կողմեցը շատ մարդասիրութիւն էր տեսած իւր կալանաւորութեան բոլոր օրերումը, իւր բարերար Ֆրանսիացուն ճանաչեց այն գերիների մէջ որ պիտոյ է հասանէին այս սարսափելի և չարաշնար պատուհանն: Նաւապետը իսկոյն սկսեց աղաւել, բարեխօս լինել, հարկադրել, իւր բարեգործի կեանքը պահպանելու համար. բայց զուր եղան նորա բոլոր ջանքը. կամցան կրակ տալ թնդանօթին որի վերաց կապած էր Ֆրանսիացին: Ալժերացին իսկոյն ձեռք իւր անձը նորա վերաց, պինդ դրկախտնեց նորան և խօսքը ուղղեցուցանելով դէպ ի թնդանօթաձիգը, ասաց. Արձակիր թնդանօթը. ըստ որում չեմ կարող իմ բարերարը փրկել, դոնեա կը ստանամ այն միսիթարութիւնը, որ մեռանումն նորա չետ միասին: Ալժերացի իշխանաւորը ներկայ լինելով այս տիսուր տեսարանին, այնպէս շարժվեցաւ նորա գութը, մինչեւ որ չնորշեց այն բանք որին ընդդիմացել էր յառաջ անողորմ վայրենամտութենով:

29. Գլուխ Ուկանա.

Ուոլսէ կարդինալը, Անգլիայի թագաւոր Հենրիկոս ութերորդի նախարարը և սիրելին, իւր տիրոջ աչքից ընկնելով, իսկոյն սկսեցին մեծամիջքը արհամարհէլ նորան, և ժողովուրդը, առել նորան: Ֆիտս Ուիլիամը լինելով մինը այն մարդերից որ կարդինալի հովանաւորութիւնը վայելած էին, մի միոյն էր որ համարձակվեցաւ պաշոպանել կարդինալի կողմը, ջատագովել նորա քանդակները և աչքից ընկած նախարարի մեծամեծ արժանաւորութիւնքը, Աւելի բան արեց նա. բաց արեց իւր ամարանոցի տունը Ուոլսէյի համար և աղաւելով աղաւեց նորան որ գոյ գոնեա մի օր անցուցանելու իւր մօտ: Կարդինալը չնորհակալութեամբ զնաց Ֆիտս Ուիլիամի մօտ որ և ընդունեց նորա սրբութիւնը, ամենախորին երախտագիտութիւն և վերապատութիւն ցոյց տալով: Թագաւորը իմանալով թէ այս մասնաւոր մարդը համարձակվել է ընդունել իւր տուն այնպիսի մի մարդ որպէս Ուոլսէն էր, հրամայեց որ ներկայանոյ Ֆիտս Ուիլիամը, և սորանից հարցրեց զայրացեալ դէմքով ու ձայնով. թէ ինչպէս համարձակվեցար գու ընդունել քո մօտ քրէական յանցանքով պարտաւորեալ կարդինալը: Տէր թագաւոր, պատասխանեց Ֆիտս Ուիլիամը. Ես շատ խոր զգումն իմ հնալանդութեան պարտականութիւնը գէպ ի ձեր մեծութիւնը. Ես չեմ ոչ վաս քաշաբացի

և ոչ վաս հպատակ, այն մարդը որ ես ընդունել եմ իմ մօտ, չէ ոչ երեսից ընկած նախարարը և ոչ տէրութեան յանցաւորը. նա իմ պաշտպանն է, իմ հաց տուողն է, իմ բազդի և խաղաղութեան պատճառն է. ոչ, տէր թագաւոր, եթէ ես անտես արած լինեմ նորան իւր անբազդութեան մէջ, պիտոյ է լինեմ ապերախոսների ապերախորը: Թագաւորը հիանալով և սքանչանալով, սկսեց այս բոպէից մեծարել և պատուել աղնուամիտ Ֆիտս Աւելիամուը. խեցյն ասպետ շինեց նորան և փոքր միջոցից յետոյ ընտրեց նորան իւր խորհրդական:

30. Անհետութեան դեռ է պատճենաւու.

Չինէացոց կայսր թէն քօնդը կարծումէր թէ ոչ թէ միայն պարտական էր ջերմ և երկիւղած սրտով երախուազէտ լինել իւր ուսուցիչներին որ լուսաւորած էին նորա մանկական միտքը, այլև ցուցանել նոցա ամենայն հպատակութիւն և մեծարանք: Մէ որ անցանելով իւր կառավարիչների մինի տան առաջից և իւր սովորութեան պէս ցցց տալով խորին յարգութիւն, այս բանի վերայ զարմացած մասց թագաւորի ընկերակիցների մինը: Այս, մի պարտականութեան հարկ է, ասաց թագաւորը, որ ես հատուցանում մի մարդու որ մեծ է իւր անձնական արժանաւորութենովը. իմ մեծութիւնը չէ, եթէ ոչ այն աշխարհներովը որ ունիմ ես: Բայց ինչքան պարտական եմ ես այն իմաստունին որ գիտացել է ուսուցանել ինձ ճանապարհը, որանով կարող էի բարձրանալ մինչև նորա առիմանը և ստանալ այն ճշմարիտ մեծութիւնը, որ ոչ մի տեղ չէ գտանփում, եթէ ոչ առաքինութեան մէջ:

Կայսր թէոդոսիոս մեծը Հռոմից Կոստանդնուպոլիս բերել տալով մի արժանաւոր մարդ Արևենիոս անունով, որ նորան ուսուցիչ կարգէ իւր մասուկ Արկադէոսի վերայ, որ աչա Օգոստոս էր ընտրած, հայրը տուեց նորան այն բոլոր իշխանութիւնը որ ունիր ինքը իւր որդու վերայ և ասաց դաստիարակին այս զեղեցիկ խօսքերը. Գու պյուհետե կը լինիս նորա հայրը, առաւել քան թէ ես: Թէոդոսիոսը միանդամ մոտանելով այն սենեակը, ուր Արևենիոսը զատիարակումէր Արգագէոսին, տեսաւ որ ուսուցիչը ոտքի վերայ կանգնած էր, բայց աշակերտը նատած: Այս բանիս չը հաւանեց կայսրը և յանդիմանութիւն տուեց ուսուցչին, որ իւր առաւելութեան պատիւը չէր պահպանում: Արևենիոսը անմեղազիր արեց իւր անձը ասելով, թէ անվայել էր որ մի ծիրանազգեստեալ թագաւորազն ոտքի վերայ լինէր իւր առաջեւը: Բայց թէոդոսիոսը կամենալով իւր որդու սրտի մէջ ազդել մի մեծ ակնածութիւն դէպ ի ուսուցիչը, հրամայեց նորան խեցյն ցած զնել կայսերական նշան-

Ները և գլխիբաց ոտքի վերայ կանգնել նստած վարժապետի առաջնեւ:
Կորերումս, այսինքն 1853 թուականին, Գօրդաստան լրագրի մէջ լինումէ այս պատմութիւնը: Արդայազն Ալբերտոսի մանուկ որդին, որ ասվումէ իշխան Վալէսի, միանդամ արքայական ամարանոցումը կանգնած էր պատուհանի մօտ, որի ապակիբը, ինչպէս քանի մի այլ այդպիսի շինուածների մէջ, վերևից հասանումն մինչև յատակը: Մանուկը պիտոյ է իւր դասը բերան ուսաներ, բայց պատուհանից դուրս էր նայում դէպ ի այդին և խաղումներ իւր մասներովը ապակիների վերայ: Նորա վերայ կարգած կառավարիչ կինը Հիլիարդ անոնով, որ մի քրիստոնեայ, ծանրաբարց ազնուական անձն էր, տեսանելով մանուկի գործը, քաղցրութեամբ խնդրեց նորանից որ իւր դասի վերայ մոտածէ: Մանուկ արքայազնը ասաց. Կամք չունիմ: Եպա պէտք էր ինձ, ասաց Հիլիարդ կինը, որպէս պատիժ, առանձնացնել քեզ անկիւնումը: Չեմ կամենում ուսանել, ամենեին խորիստարար պատասխանեց փարբիկ տղան, և պէտք չէր ինձ առանձնանալ անկիւնումը, ըստ որում ես Վալէսի իշխանն եմ: Այս բանը խօսելով, դուրս զարկեց ոտով լուսամուտի մի ապակին: Եպա Հիլիարդ կինը վեր կացաւ իւր աթոռից և ասումէ. Պարոն, պիտոյ է ձեզ ուսանել ձեր դասը, ապա թէ ոչ, պատիժ կը ստանաք: Կամք չունիմ, ասաց տղան, և դուրս զարկեց լուսամուտի միւս ապակին: Կառավարիչ կինը զանդակը հնչեցուց. Եկաւ արքունի ծառան, և սորա բերանով այն կինը իմաց տուեց մանուկ իշխանի հօրը, թէ խնդրումներ որ նորա արքայական բարձրութիւր աշխատէ զայ այն տեղ, ըստ որում մի շատ հարկաւոր բան ուներ խօսելու նորա հետ իւր որդու մասին: Բարեմիտ հոյրը եկաւ իսկոյն և իւրեան պատմել տուեց ինչ որ փոքր մի յառաջ պատահած էր. ապա դարձուց դէմքը դէպ ի մանուկ որդին և ցայց տալով նորան մի փոքրիկ նըստարան, ասաց. Դու նստիր այս տեղ և մաս մինչև ես դամ: Ալբերտոսը զնաց իւր մենակը և դուրս բերեց այն տեղից աստուածաշունչ գիրը և սկսեց խօսել պյսպէս. Ականջ դիր այժմ, գու փոքրիկ Վալէս, թէ սուրբ Պողոս առաքեալը ինչ է ասում քեզ և քո պէս երեխաներին: Եպա կարգաց հօյրը Գաղատացոց գլ. 4.
Հ. 1, 2. „Այս բանը ասումեմ ես. ինչքան որ ժառանգը տղայ է, նա չէ առաւել քան թէ մի ծառայ, թէպէտե տէր էր ամենների վերայ, այլ հաղարապեաների և դաւառապեաների ներեց էր մինչև իւր հօր սահմանեալ ժամանակը“: Ճշմարիտ է, շարունակեց Ալբերտոս հօյրը. Դու Վալէսի իշխանն ես, և եթէ ունիս արքանաւոր զնոցք, կարող ես մի երեւելի մարդ դառնալ, կարող ես միանգամ,

Երբ որ կը մեռանի քո մայրը որ Աստուած թօղ Երկար պահպանէ մեր համար, Անգլիայի վերայ թագաւոր նստել, բայց այժմուս զու փոքր երեխոյ ևս և պարտական ևս հնազանդել քո առաջնորդերին և հոգասարներին: Բաց ի սորանից պէտք էր ինձ պայծառապէս հառկացնել քեզ մի ուրիշ խօսք որ ասած է Առղօմնն իմաստունը իւր առակների մէջ. գլ. 13. չ. 24. „Ով որ խնայումէ իւր գաւաղանը, նա առումէ իւր որդին, բայց նա որ սիրումէ, ինամ տանելով խրատումէ նորան: Ապա գուրս քարշեց հայրը մի գաւաղան և թագաւորութեան ապագայ ժառանգին ծեծ տուեց լաւ զգալի կերպով, յետոյ կանգնեցրեց նորան անկինուումը և ասաց. Դու կը մաս այդ տեղ, և կուսանիս քո դասը, մինչև Հիլիարդ կինը թոյլ տայ քեզ գուրս գալ: Բայց մի մոռացիր երբէք, որ դու մնչպէս այժմ քո հոգաբարձուների և խնամատարների իշխանութեան տակ ես, այնպէս ևս յետոյ կը լինին աստուածադիր օրէնքի ներքոյ: Աչա մի գեղեցիկ քրիստոնեական ձև դաստիարակութեան, որ ամենայն քաղաքացի և շննական ծնող պիտոյ և միտ առնուր և որպէս բարի սրբնակ գրէր իւր սրտի վերայ:

31. ՇՄՏՔ-Ն Բ-Ք-Ն-Շ Կ-Ր-Շ Դ-Ե-Ւ-Ե-Ր-Շ.

Այս թագաւորը, որին կարելի է տաել Հիւսիսի ԱԼՔսանդր, 1709 թուականին պաշարելով Պալտավա քաղաքը, հրացանից մի հարուած տասցաւ, որ ծակելով կօշիկը հասաւ ոտի կոճին, և վիրաւորեց նորան ծանրապէս, բայց իւր քաջարաւութեամբը յաղթելով ցաւին, շարունակեց քննել և փորձել բոլոր գործողութիւնքը և մնաց ձիու վերայ մինչև մօտ վեց ժամ, առանց մի նշան տալու որանից կարելի էր կարծիք առնուլ թէ վիրաւորված է: Ապառէ զօրագլխի սպասաւորը տեսանելով թէ շատ արիւն է գնում նորա կօշիկից, իմաց տուեց իւր տիրողը: Յառաջ կարծեցին որպէս թէ արիւնի պատճառը այն էր, որ թագաւորի կօշկախմանը վիրաւորել է ձիու մորթը. բայց այն սպասաւորը հաւասացուցանելով թէ արիւնը թափկումէ թագաւորի կօշիկի մէջից, բերել տուեցին վիրաւորը մներ, որ քննեն բանը: Նորա ոտքը ըստ բաւականին ուռած էր, պիտոյ էր նորան ցած իջուցանել ձիուց: Ալիրարշյաբը քննելով թագաւորի վէրբը, երկիւղ ունեէն թէ մի գուցէ քաղցինդ գոյանայ վէրբի մէջ, և հարկաւոր համարեցին կտրել նորա ոտը: Այս վճիռը գետնին զարկեց բոլոր զօրքը. վիրաւոյժների մինը, Նէյման անուն, առելի հմուտ լինելով բան թէ իւր ընկերը, ասաց թէ հնար կոյ առողջացնել թագաւորի ոտքը, առանց կտրելու նորան, բայց այդ ճարը ցաւալից էր, և ինքը չուներ համարձակութիւն զործ զնել

դորան։ Ի՞նչպէս, ասաց թագաւորը բարկանալով։ Ես չեմ պահանջում, որ դու ինձ աւելի խնայես քան թէ իմ վերջին զինուորին։ Ես կամենում որ դու միակերպ վարդիս և իմ չետ։ Ես հրամայում մեմ քեզ։ Հնագանդիր։ Նէյմանը սիրտ ստանալով այս խօսքից, խոր հատուածներ արեց թագաւորի ոտի մէջ, և սա երբէք ցցց չը տուեց որպէս թէ ցա էր զգում։ Այսպէս փոքր միջոցում այնքան առողջացաւ թագաւորը, որ կարող էր պատգարակի մէջ նատած ման գալ։

32. Աբբեյ-Ռեան Ներք-Շառ-Ռինը.

Խան - Հի կայսրը Զինէացոց սովորութիւն ունէր սեղանի վերայ գործ զնել եւրոպական գինիք։ Միանգամ այս իշխանաւորը հրամայեց իւր առաւել հաւատարին և սիրելի մանդարինն զինի ըմպել իւր հետ և արբեցաւ։ Մանդարինը վախենալով թէ մի գուցէ ոյս անչափաւորութենից մի շար բան ծնանի, գնաց սպասաւորների սենեակը և ասաց նոցա թէ թագաւորը զինովացել է, թէ զգուշալի էր, մի գուցէ նա զիննեմոլ դառնար, ըստ որում զինին ևս առաւել կը սասակացնէր նորա ի բնէ թօւնդ խաւնուածը (կազմածը), և նա այս որպիսութեան մէջ չէր խնայելու և ոչ իւր ամենասիրելի մարգերին։ Այս մէծ շարիցը ազատ լինելու համար, խօսեց խմատուն մանդարինը, պէտք էր որ դուք կապէիք ինձ շլդթաներով և զնէիք մի խաւար բանտի մէջ, որպէս թէ հրաման էր եկել թագաւորից։ Աբբունի սպասաւորը հաւանեցին այս մորին, իւրեանց յատուկ սպտի համար։ Կայսրը արթնանալով իւր թմրութենից, զարմացաւ իւր միայնութեան վերայ և հարցրեց թէ ուր է իւր սեղանակից մանդարինը։ Պատասխաննեցին, թէ նորան, ըստ որում անհաճոյ էր գտանվել թագաւորի աշքին, իւր յատուկ հրամանով դրել են մի նեղ զնդանի մէջ ուր և պիտոյ է մեռանի նաւթագաւորը մի քանի ժամանակ մտածութեան մէջ լինելով հրամայեց ազատ, որ յառաջ բերեն մանդարինը որ և շղթաներով ծանրիւնած ներկայացաւ իւր տիրոջ և ընկաւ նորա ոտքերը ինչպէս մահապարտ յանցաւոր։ Ով է քեզ հասուցել այդ փիճակին, ինչ յանցանք ես արել զու, հարցրեց նորանից կայսրը։ Կմ յանցանքը յայտնի չէ ինձ, պատասխաննեց մանդարինը։ պայքան միայն զիտեմ որ ձեր մէծութիւնը հրաման արեց ձգել ինձ մի խաւար բանտի մէջ, որ այն տեղ մահու պատիժ ստանամ։ Կայսրը մի խոր մտածութեան մէջ ընկաւ, երեւումք հիացած և տիտուր. վերջապէս, մնայլեցուցիչ արբեցութեանը տալով այն բանաւորական գործը որ ամենեին մոռացել էր, հրամայեց արձակել մանդարինի շղթապը և ասաց նորան, թէ այսուհետեւ կը զգուշանամ չափալանց զինի ընկելուց։

33. Խաբերոյ Հորդը Բնշ Է- Դ- Դ- Դ- Դ- Ա- Ե.

Ո՞ի քրիստոնեայ վաճառական մի տաճիկ ըղտապանի յանձնելով մետաքսի կծիկներ որոշեալ թուով, որ տանէ նորանց Հալեպից Կոստանդնուպոլիս, ճանապարհ ընկաւ նորա հետ. բայց ճանապարհի միջոցումը (կէսումը) հիւանդացաւ. և չը կարողացաւ հետեւ կարաւանին, որ նորանից շատ յառաջ տեղ հասաւ. Ըղտապանը տեսանելով թէ այն մարդը մի քանի շարամից յետոյ չնկաւ, կարծեց թէ մեռած էր, վաճառեց մետաքսի կծիկները և փոխեց իւր պաշտօնը Նկաւ քրիստոնեայ վաճառականը և երկար ժամանակ որոնելով գտաւ իւր բեռնակիրը և պահանջեց նորանից իւր ապրանքը, Խարերոյ մարդը այնպէս ձեւացաւ որպէս թէ նորան ճանաշում չէր, և ամեննեին ուրացաւ իւր ըղտապանութիւնը. Դատաւորը, որի մօտ առեան գնացին, ասաց քրիստոնեայ մարդուն. Ի՞նչ ես պահանջում գու. «Աս պատասխանեց. քսան կծիկ մետաքս, որ յանձնել եմ պարզապանին. Ի՞նչ պատասխան ունիս սորան ընդդէմ, հարցրեց ըշփապանիցը. Պատասխանեց. ես չը գիտեմ թէ ի՞նչ է սա կամենում ասել իւր մետաքսի կծիկներով և իմ ըղտապանութենով. և դորան ոչ տեսած եմ երբէք և ոչ ճանաչումեմ. Ապա դատաւորը դառնալով գէպ ի քրիստոնեան, ասաց. Ի՞նչ ապացոյց ունիս քսհաստած բանի համար. Վաճառականը ոչինչ չը կարողացաւ յառաջ բերել բաց ի սորանից, թէ հիւանդութեան պատահելով յետ ընկայ կարաւանիցը. Դատաւորը ասաց երկուունին ևս թէ կարճամիտ մարդիկ էիր դուք. գնացէք հեռացէք աչքից. «Ա զարձուց քամակը, և մինչեւ այն երկուքը գնումեին, մօտեցաւ պատուհանին և ձայն տուեց բաւական բարձր. Ըղտապան, ըղտապան, մի խոսք ունիմ ասելու քեզ. Տաճիկը իսկոյն յետ նայեց առանց միտք բերելու թէ ուրացել էր իւր ըղտապանութիւնը. Ապա հրամայեց դատաւորը որ ծեծ տան տաճիկն և վճաեց որ նա վճարէ քրիստոնէի մետաքսը, և բաց ի դորանից բաւական մեծ տուղանք իւր սուս երդումի համար:

34. Կիբեռի Դիմու (Խանութը).

Եսկոր թագաւորը աշխատելով Անգլիայի թագը վերատին բատակած, բայց անյաջող գտանվելով այս բանումը, նորա կողմանակից անգլիացի պարաները գատապարտվեցան որ մեռանին դաշնի ձեռքով. Նորա պատուհանվեցան 1716 թուականին. Առաջի 16 ումը, Նիմիադէլ լուգը պէտք է կատարվէր նոյն կերպով, բայց փրկվեցաւ իւր ամուսնու հնարագէտ սիրովը. Թոյլ էր տուած կանանցը որ, մեռանելուց մի օր յառաջ, տեսութիւն գնային իւրեանց ամու-

սիններին և վերջին հրաժարական ողջյն տային նոցաւ Կիթիսդէլ տիկինը երկու աղախին առած իւր հետ, մի թաշկինակ երեսի վերայ, կերպարանքը մի անմսիթմար կնամարդի պէս, ներս մտաւ այն բերդի մէջ, ինչ տեղ բանտարկված էր իւր ամուսինը: Բանտի մէջ լինելով կինը, առաջարկեց լուղին, որի հասակը հաւասար էր կը-նոց հասակին, զգեստը փոխել և դուրս գնալ նշյն կերպարանքով բնշպէս ներս էր մտած բնքը, և ասաց ամուսնուն թէ իւր կապը կը տանէ նորան մինչև Խճէմլ գետի ափը, ինչ տեղ նա գտանելու է մի նաւակ որանով կը հասանէ մի նաւի որ պատրաստ էր պար-զել առաքաստը դէպ ի ֆրանսիա: Կիթիսդէլ տիկինը հնարապի-տութիւնը յաջողվեցաւ, և լուգ Կիթիսդէլը աներեսութանալով, առաւտու երեք ժամուն հասաւ կալէ քաղաքին: Ուրբ հողի վե-րայ դնելով վեր թռաւ և ձայն արձակեց: Գոհչութիւն ըստուծյ, ահա փրկվեցայ: Այս համարձակ ուրախութիւնովը յայտնեց իւր որ-պիսութիւնը միւսերին, բայց չէր այլ ևս թշնամիների կարողու-թեան տակ: Միւս օրը առաւտուն անգլիացի նախարարը գնաց բերգը, որ պատրաստէ կալանաւորը դէպ ի մահ: Նախարարի վե-րայ մի օտար զարմանք նկատ, երբ որ նա բանտի մէջ փոխանակ մի տղամարդի գտաւ մի կնամարդ: Այս բանի համրաւը տարածվեցաւ խեցյն: բերդի մեծաւորը խորհուրդ հարցնելով պալատիցը, հրա-ման առացաւ աղասութիւն տալ այն կնոջը, և այսպէս Կիթիսդէլ տիկինը գնաց միացաւ իւր ամուսնու հետ ֆրանսիայումը:

35. Մէ շնորհակ ու բարեգործութիւն.

Հոգու մեծութիւնը չէ պաշհանջում հարկաւորապէս, որ լի-նէրնք մի բարձր ազգատօհմի զաւակ: աղնիւ զգացողութիւնքը դը-տանվութեն շատ անգամ քազաքացիների ամենացած կարգերի մէջ: Այս բանիս գիտութեան արժանի օրինակ է տալիս մի շինական մարդ գիւնիա (Գանեմարբին պատկանեալ) աշխարհիցը: Կրակ էր ընկել այն գիւղի մէջ ուր բնակումքը այս շինականը. վաղեց օգնու-թիւն տալու այն տեղերումը ուր կարօտ էին օգնութեան: նորա բռ-լոր ջանադրութիւնքը անօգուտ գտանվեցան: Հայրեացքը սաստկա-ցաւ շուտով. եկան իմաց տուեցին նորան թէ այրիւմն իւր տունը: Նա հարցրեց, արդեօք իւր դրացու տունը վնասված է: Ասացին թէ այրվումէ, և թէ կորուսանելու ժամանակ չունէր, եթէ կամնումն փրկել իւր տան կարասիքը, Պատասխանեց խեցյն: Ես աւելի թան-գագին բաներ ունիմ փրկելու: իմ անբաղդ դրացին հիւանդ է և չունի կարողութիւն փախչելու կրակիցը, նա անպատճառ պիտոյ է կորչի, եթէ օգնութիւն չը ստացաւ, և ես անշուշ հաւատումն

որ նա յոց ունի իմ վերայ: Խակոյն թուաւ սլացաւ դէպ ի այն վատարաղդի տունը, և առանց մտածելու իւր տան մասին որ նորա բռլոր ունեցածն էր, ներս վազեց բոցի մէջ որ ահա հասանումը հիւանդի մաշճին. մի քառված գերան մօտ էր կործանվելու շինականի վերայ, բայց նա փորձեց յառաջ գնալ մինչև հիւանդի մօտ, և յուսաւ լով թէ արագաշարժութեամբ կարելի էր աղասիի ոյս վասնդից, որից անսարակոյս յետ կը փախչէր ամենայն միւս մարդ, ձգեց իւր անձը իւր դրացու մօտ, բարձրացրեց նորան իւր ուսերի վերայ և յաջողապէս դուրս բերեց կրակի մէջից:

Քեօրն Հավելի տնտեսական կառավարութիւնը գութ շարժմելով ոյս անսովոր մարդասիրական գործի վերայ, ուղարկեց այն շինականին մի արծաթի բաժակ լցոցած ոսկով. նորա խովիր ունէր իւր վերայ մի քաղաքական պատկ որի կողմերումը կախած էին երկու փոքրիկ յիշտափարանը և նոցա վերայ համառա փորագրան էր շինականի արիական գործը: Ծառ մասնաւոր անձինը ընծաներ արեցին նորան, կամենալով փօխարինել նորա տան և նորա կարասիքների կորուստը: Աոցա բարեգործութիւնը արժանի է գովասանութեան. առարինութիւնը վարձատրել այնպէս էր, որպէս թէ սիրա տալ առարինութիւն գործելու:

36. ԳԵՐԵԶՈՒ + ՅԱՎԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԵՐ.

Պարոն Իհշարդսօնը, մի անդլիսական վաճառական նաւի գլխաւոր, Դանցիղ քաղաքի մօտ հանդիպելով մի կատաղի փոթորկի, բռլոր գիշերը պատերազմեց ալիքների հետ: Թէպէս նաւի առաջատանիը պատառսոված էին և չուանները կորատված, բայց այնպիսի հնարաց խոռոչեամբ և աշխատութեամբ խողացրեց նաւը, մինչև կարողցաւ մասնել Դանցիղի նաւահանգիստը, օրամուտից յառաջ: Ցամաքի մօտ հասած, խիզյն դնաց նա մի նաւի մէծաւորի մօտ, որ խարիսի էր ձգել, և գդնութիւն խնդրեց տասնութեց մարդու համար որ ածսած էր ամենամեծ վասնդի մէջ մի նաւի տախտակամածի վերայ, որ պատկանումէր Դանցիացոցը: Օտար նաւապետը պատասխանեց թէ կամք չունիմ իմ անձը վասնդի մէջ ձգել: Իհշարդսօնը ասաց. Բարւոչ է, որովհետեւ վասնդից վախենումն գու, ապա ես, թէպէտ և շատ վաստակած էի, կամենումն քաջութեամբ հանդեւզ գըն նալ նորան. խնդրումն միայն որ տաս ինձ քո մարդերը, պատճառ որ իմերս աշխատանքից և անքնութենից ջարդված են: Եւ այս օգնութիւնը չը կամեցաւ տալ, ապա Իհշարդսօնը աղաւեց միայն, որ տայ նորան մի թեթեւ նաւակ որ աւելի մէծ էր քան թէ իւրը, բայց և այս ինդիրը մէրժեց այն նաւապետը: Ընդլիացի նաւավարը բար-

կանալով այդքան խստարսութեան վերայ, դուրս գնաց նաևիցը և մատա իւր նաւը և խօսեց. Անդիմացիք, ես այս տեղ գտանումէմ վատթօար և տարդի հոգիք. ցնց տանք դոցա գործով, որ մեր հոգիքը այդպէս չեն, և շտապէնք օգնութիւն հասուցանել այն վատթօարդներին որ տագնապի մէջ են: Ամեներեան հաւանութեամբ պատասխան տալով, թեմեւ նաւակը ինուցին ծովի մէջ, և հանդէպ գընալով ալիքների կատաղութեանը, յաջողապէս փրկեցին այն տանուվեց նաւարեկնալ մարդերի կեանքը, երեք անգամ կրնելով ճանապարհը, ըստ որում շատ փոքր էր իւրեանց նաւակը, Պրուսիայի թագաւորը տեղեկանալով այս առաքինական գործին, պատուիրեց իւր գործակատար զօրագլխին Դանցիդ քաղաքումը, որ նորա կողմից մասուցանէ իւր տանուվեց հպատակների ազատողին մի սոկեղն Ճիշտակարան: Աորա վերայ մի կողմից յօրինած էր թագաւորի պատկերը և միւս կողմից գարնեայ և մրտեայ պատկի: Այս յիշտակարանը մասուցին Պարոն Իհշարդունին, ներկայ լինելով Դանցիդ քաղաքի իշխանաւորը և քաղաքացի Անդիմացոց մէծ մասը, այլ շատ ոտարականք որ ամենայն կերպով գովեցին և բարձրացրեցին նորա գեղցիկ արարքը:

Վրդարեւ, Իհշարդոսն նաւապէտի քաջասրութիւնը մի առաքինական գործ էր և արժանի է գովասանական յիշտակի. Նորս ձեռքով փրկվեցաւ տանուվեց մարդու կեանք. բայց բնչքան տիտուր և արտասուելի բան կը լինէր մտածողի համար, եթէ մի արիասիրս ազնուամիտ մարդ կամենալով իւր լնկերը փրկել, զոհէլ է իւր կեանքը և իւր մարդասիրական գործը ստացել է իւր մահով: Այս բանիս օրինակ է առաջիկայ անցքը:

Հազար եօթն հարիւր եօթանասուն և չորս թուականին, չոկտեմբեր ամսի մէջ բարձրացաւ մի այնպիսի աշացուցիչ փոթորիկ, որի նմանը միտք բերել չէին կարազ և շատ հասականոր մարդկը. ամեներեան աշի և տարակուսանքի մէջ էին և աղօթք էին առնում այն խղճալի մարդերի համար, որոնց կեանքը բեկանուս նաւերի մէջ թողած էր հողմերի կատաղութեան կամքին Աիրառ վաճառաշաղաքից և նաւահանգստից Արևելեան ծովի վերայ, Ռուսաստանին պատկանեալ կուրլանդիայի աշխարհումը, տեսան շուտով մի հոլլանդացի նաև որ կամենումէր ներս վազել նաւահանգիստը, բայց նորուիկի պատճառով չէր կարողանում: Այս նաւը երեք օր և երեք գիշեր ալիքների խաղալիք էր, մինչև այն գիշերին, որ Հոկտեմբերի 12ից գնումէր գէպ ի 13ը, մի քանի հարիւր քայլ ծովամիջը հեռի խրվեցաւ աւազի վերայ, Փոթորիկը աւելի և աւելի սաստիանա-

րով, կատաղի ալիքը հետզետե խլումնեն և տանումքին նաւի տախտակները. մահու տաղնապ և յուսահատութիւն եկաւ նաւաստիների և նաւի մեջ նատած ճանապարհորդների վերայ, ըստ որում գոռացող փոթորիկը և զայրացած ջրերի ալիքը ամենեն կորել էին նոցա փրկութեան յշուը, Շովափումը կանգնած տեսանողների մեջ գուցէ թէ կային ումանք որ յօժար էին իւրեանց կեանկը վտանգի տալ իւրեանց վշտացեալ եղբօրների համար, եթէ չը լիներ շատ բացայայտ, թէ ապստամբ տարերի բռնութիւնը կը ոշնչացներ նոցա ջանադրութիւնքը, Աերջապէս եկաւ և տեսաւ պյս բանը թուգէ անունով մի մարդ որ ձկնորսների և նաւերի ուղեցոյց էր. սա աւելի քան թէ երեսուն տարի իւր համար յատուկ դործ էր շինած օգնութիւն տալ և նաւաշանգիստ հասուցանել պյն մարդիկը որ հողմի և ալիքների հետ կոխ ունեին. Այս գործի մեջ տեսած էր նա երախտագիտութեան մի քանի արտասուզ թափելով աղատվածների երեսից, և մի քանի մօլորեալ հոգիք, որ փրկվելով վտանգից կակղացել էին և յետ էին գարձել դէպ ի լստուած. այսպիսիների գարձը նորա ամենամեծ ուրախութիւնն էր. թօդէն տեսանելով նաւի մեջ նատած մարդերի տառապանքը, իսկոյն շատապեց տան, որ պատրաստէ հարկառ հնարիները, նոցա օգնութիւն հասուցանելու համար. Կինը փաթաթվեցաւ նորա վզին, խնդրեց և աղաւեց, որ ինայէ իւր կեանկը, ըստ որում անկարելի էր մօտենալ ջարդված նաւին: Երեխոյցը գրկախառնեցին նորա ծունկերը, պինդ բռնելով նորան աղաղակութիւն. Հայր, մի թէ շնու լսում դռւ, Բնչպէս կատաղած է ծովք, Բնչպէս զարհութելի փշումն հողմը. մնայ մեր մօտ, առա թէ ոչ. անհայր կը թաղում մեզ. Աչինչ հոգս չունիմ կատաղած ծովքի մասին, ասաց նա, և ոչ հողմի գոռալու մասին. ևս ոչինչ չեմ լսում բացի պյն վատաբաղդների ողորմելի աղաղակը որ տարերիքի խոռոչութեան մեջից թափանցումէ իմ ականջի ներսը. Թոնդ տուեցէք ինձ. ահա պարզումն նորա իւրեանց ձեռքերը դէպ ի ինձ, և գուք, իմ երեխոյցը, ունիք մի այլ հայր երկնքումը. նա հրամայումէ ինձ պյս բանը և կ'օգնէ իմ վերագարձիս: Նա շատ անգամ ահա փըրկել է ինձ ամենամեծ վտանգներից, և եթէ կը մեռանիմ ես, նա ձեզ անտես չէ առնելու:

Այս բառերը բերանին, գրկախառնեց իւր ամուսինը և երեխոյցը, և ութ քաջ, իւր ստորագրեալ նաւաստիներով գնաց ծովքի ափը. Նոքա թուան մի նաւակի մեջ, քաջութեամբ թիավարեցին ընդգում ալիքներին և դէպ ի վատաբաղդների նաւը, բայց զուր եղաւ նոցա ջանքը. Զորա անգամ գործ գրեցին ամենայն զօրութիւն, և

շորս անդամ՝ հողմի բոնութենովը յետ զարկվեցան դեպ ի ամբ։ Զօրութենից սպառված և քրտինքը թափվելով վերայից, տուն եկաւ թօգէն որ փոխէ հանդերձը։ և կինը, որ աշա պատրաստել էր ճաշի հացը, ուրախանալով խնդրեց նորանից որ իւր գտնն աշխատանքից յետոյ վերատին նորոգէ իւր զօրութիւնքը։ Այժմ՝ հաց ուտելու ժամանակ չէ, պատասխանեց նա. զեռ ևս ոչ մի մարդ չեմ փրկած։ Նախ և յառաջ կամենումի միւսանդամ գնալ այն տեղ, ապա... Այսպէս, զգեստը փախած, մտաւ իւր սենեկի մէջ, ընկաւ ծնկերի վերոյ և խնդրեց Վասուծուց սիրտ և զօրութիւն, և նորա խնդիրը լը սելի եղաւ։ Ըստ անօգուտ չարշարվելոց յետոյ, վերջապէս յաջողվեցան նորան մնանենալ նաւին և տասն և մի հոգի ողջ և առողջ ցամաք հասուցանել։ Խայցն լուր ուղարկից իւր կնոջը, թէ տասն և մի մարդ փրկված են։ ուրախացիր և շնորհակալութիւն տուր Վասուծուն, մինչև հասանեմ և ազատեմ միւսերը։ Ապա իւր սպանեկաների հետ միւսանդամ նստեց նաւակի մէջ և գնացին։ Սորա հասանելով նաւին, սորա միջի վաստարդդը մէծ յուսով մի շուան ձրգեցին դեպ ի նաւակը, որ սորան մաս քարշն իւրեանց, բայց յանկարծ մի ահագին կոհանկ վեր ի վայր ըրջեց նաւակը և անդունդըի մէջ թաղեց այն ազնիւ ազատող մարդը նորա ուժ օգնականների հետ միասին։ Ինքը ազատողը կանգնած էր նաւի զեկի մաս և ահա երկոյնումը իւր ձեռքերը, որ ըմբռնէ շուանը։ Այրեմն նորա վերջին զգացաղութիւնքը էին ամենաջերմ շնորհակալութիւն դեպ ի Վասուծած, և ամենաբարձր ուրախութիւն իւր ազնիւ զործի յաջողութեան վերոյ։ Այսպէս տեղափոխվեցան նա մշտնջնաւորութեան օթևանը, որ կարողանայ ամենեկն սուրբ և անխոտն վայելնէ լ այն երանական վիճակը, որ արժանացել էր լինել իւր ընկերների ազատի։ Սորա կինը և երեխայքը զեռ ևս իւրեանց ծնկերի վերայ ազօմումին, երգելով գոհաբանական երգեր, երբ որ բերեցին այն սարսափելի լուրը, թէ նոցա ամուսինը և հայրը ծովահեղձուկ եղաւ (ծովի մէջ խեղջվեցա)։ Նոցա ցաւը և արտասուրը խօսքով նկարագրել ոչոք կարող չէ։ Բայց Վասուծած ողորմից նոցա և նոքա շուտով խելամուտ եղան թէ բնչպէս երանելի էր այն մարդը որ այդպիսի կոչման մէջ մեռաւ։ Այս մտածութիւնը սահման դրեց նոցա լացին և արտասուրին, և նոքա որէ օր աւելի աշխատումին բարեգործ գտանփիլ, որ և նոցա նոյնպիսի առարինական գործի մէջ հասանէր մահը։ Ըստիրը որ անսած ու լած էին այս անցքը, ուղղեցին իւրեանց սիրտը, և Վասուծած այնպէս առաջնորդեց, որ փրկվեցան նոյնպէս և նաւի աւերակի վերայ յետ մնացած մարդիկը որ

ականատես էին այն տղամարդի կորուստին, որի վերայ դրած էին իւրեանց յշյը: Այս զարմանալի ազատութիւնը քաջ վկայութիւն տուեց նոցա որ, եթէ վերջանար և ամենայն մարդկեղէն օգնականութիւն, եթէ կայծակը ահա պիտօյ է փշրէր ու խորտակէր մեղ և զետինը կործանվէր մեր ոտքի տակին, և ծովի ալիքները ահա ծածկութիւն մեր գլուխը, այնու ամենայնին զիտէ Աստուած թէ ինչ հնարքով ու ճանապարհով կարող էր մեղ պահպանել, եթէ բարի էր, որ մեք աւելի երկար կենդանի մնայինք:

37. Կանոնութիւն բարձրացնելու մասին:

Հոգհաննէս թագաղիր իշխանաւորը Սաբսոնիայի քաջ հոգաբարձու էր այն բանին, որ իւր որդիքը ուսանին ժրաջան: Քանի մի ազնուատոյմ մարդկի անհաւան էին այդ գործին և ասումնեն այն իշխանաւորին թէ մանուկ արքայալներին պիտօյ էր ուսանել ձի հեծանել և այլ ասպետական վարժութենների պարագել: Յոհաննէսը պատասխանեց այսպէս: Ես կարծում որ ինքն լաս ինքեան կարելի էր ուսանել թէ ինչպէս պէտք է երկու ոտքը կախել ձիու վերայ, կամ թէ մի նապաստակի քամակից վազել. այդ բաներին անզեակ են իմ բոլոր ձի նատող տղայքը. բայց այն բանը, թէ ինչ պէս պէտք էր աստուածաւէր լինել, քրիստոնէական հոգով թագաւորել և երջանիկ կացուցանել իւր աշխարհը և հարատակը, պիտօյ է որ իմ որդիքը, առաջնորդելով նոցա Աստուծոյ հոգին և նորհը, ուսանին իմաստուն մարդերից և պատուական գրքերից:

38. Հաւաքաջնորդութիւն:

Ուստազգի զօրագլուխ Սուվորովը շատ խիստ կառավարութիւն ունէր, և կամենալով իւր անձը օրինակ կացուցանել այն հնաղանդութեան մասին, որ ինքը պահանջումէր միւսերից, շատ մնդամ զնումէր իւր անձը իւր յատուկ հրամանի տակ, թշու տալով որ իւր աջակից (աղիւտան) պաշտօնեալիքը, ինչ զժուար գործ կը կամենային, իւր յատուկ հրամանով հրամայեն իւրեան, և յետոյ ինքը ամենայն ճշգութեամբ կատարումէր իւր վերայ դրած գործը: Սուվորովը միանգամ շատ զայրացած լինելով մի հասարակ զինուորի վերայ, որ իւր պաշտօնի մէջ սխալված էր, հրամայեց խեղյն ծեծ տալ նորան: Կորա աջակից պաշտօնակալներից մինը գում շարժվելով այն զինուորի ցաւալի աղաղակիցը, սիրո վեր կալու և ասաց. Զօրագլուխ Սուվորովը հրամայել է թէ չէ պէտք թշու տալ, որ բարկութիւնը յաղթէ մարդուս: Սուվորովը իսկցն դադարեցրեց պատիմը և պատասխանից: Եթէ հրամայած է զօրագլուխը, աղա

39. Թ-Ա-Հ-Ե-Շ-Յ-Ւ-

Անգլիացի փիլիսոփայ Լոքքէն միանգամ տեսութիւն գնաց արքունի առենադպիր Լուդ Էշլէի մօտ և գտաւ նորան, մի քանի բարեկամների հետ թուղթ խաղալու վերայ: Լոքքէն նստեց նոցա մօտ և մի քանի ժամանակ հանդարտ նսյութեր նոցա խաղի վերայ. վերջումը հանեց իւր գրատախտակը և միջոց առ միջոց գրումքը նորա վերայ, որպէս թէ մօտառու էր նոցա խօսածին: Արքունի առենադպիրը հետաքրքիր լինելով հարցրեց թէ ինչ է գրում: Լոքքէն պատասխանեց. Վաղուց աշա փափագումքի ես մեր ժամանակի ամենամեծ և շատահանձար տղամարդերի ընկերութեան մէջ լինել. այժմ հասանելով իմ սրտի ցանկութեանը, կամցայ այդ բանից սգուա քաղել, ինչքան կարելի էր շատ. այս պատճառով նշանադրեցի մեր խօսկցութիւնը իմ տախտակիս վերայ. Եթէ թշլ կը տաք, աշա կարդամ ձեզ իմ գրածը: Լոքքէն կարդաց. նորա լսածը ոչինչ բան չէր, և թէ ոչ, հատուկոր բառեր և թուղթ խաղացողների սովորական խօսուածքը: Ազա ամաշցին այն պարոնները և ընտրեցին մի աւելի արժանաւոր բանախօսութիւն:

40. Մ-Ե-Ք-Ք-Դ-Դ-Ե-Շ-Յ-Ռ-

Ո՞ի Արարացի մոլորվէլ էր մի չերմ աւազուտ գաշտում և սաստիկ սոված էր և այրվումքը ծարաւից: Երկար ժամանակ թափառելով եկաւ մի ճանապարհի վերայ, ինչ անդից կարաւան էր անցել, և շուտով գտաւ այս տեղ մի մաշկելէն քսակ որ կար աւազի վերայ: Նա վեր առաւ այն քսակը և գուրսից փորձելով նորա միջի եղածը, ձայն տուեց ուրախանալով և զարմանալով. Այս, սորա մէջ կան արմաւ (խուրմա) և ընկուզ: Անհամբեր շտապով բացեց իւր կարծեցած քաղցր կերակուրը, բայց տեսանելով թէ ինչ էր քսակի մէջ զրած բանը, տրտնջեց, բաց ձգեց նորան և յօդոց հանեց ասելով. ոչ, քսակի մէջ մարդարիստներ էին:

41. Ա-Ճ-Ւ-+Ե-Շ-Յ-Ռ-

Ո՞ի մեծատուն Զինացի պարծենումք կրելով իւր վերայ մի զրեստ որ բոլորովին զարդարած էր թանգագին աղնիւ քարերով: Ո՞ի ծեր, աղքատ հանդերձով իմաստուն, հանդիպեց նորան փողոցումը, մնաց նորա առաջնե կանդնած, նայեց նորան սորից մինչև գլուխ, երկրպագութիւն տուեց նորան և շատ քաղցր սրտով շնորհակալ եղաւ նորանից իւր աղնիւ քարերի համար: Եղբայր, ասաց նորան մեծատունը. Ինչ պատճառ ունիս չնորհակալութեան. քեզ երբէք աղնիւ քարեր բաշխած շեմ: Այս, երբէք ոչ, պատասխա-

Նեց իմաստունը, բայց դռւ ինձ ջերար տուեցիր տեսանելու քո աղջ նիւ քարերը, և դռւ մի աւելի վայելչութիւն չունիս դրանցից, քան թէ ես ու ըրեմն իմ ու ք մէջ ըլ կայ մի այլ զանազանութիւն բաց ի նորանից, որ դռւ ծանրաբեռնած ես պատուական քարերով և պիտոյ է պահապան լինիս նոցա, բայց ես աղատ ևմ պյդ ծանրութենից :

42. *q̄-q̄-q̄-q̄-q̄-q̄* *q̄-q̄-q̄-q̄-q̄-q̄*.

Ակ գիւղացի մեծատուն որ դրացի շինականներին երևելի արծաթ պարտք էր տուած, սովոր միջոցումը իւր մատ հացիւրութիւն հրաւիրեց իւր ազգատ պարտապանքը, երբ որ հասել էր տարեկան տոկոսիք վճարելու ժամանակը, Նկան նոդա, բայց ծանր սրտով, որովհետեւ կարծումէին թէ կոչաստէրը կամենումէ տոկոսիք պաշանչել նորանցից։ Տանուտէրը ընդունեց նորանց մարդասիրապէս և քաղցրութեամբ, և սեղանը առատ և փառաւոր կերակուրներով զարդարվեցաւ։ Բայց հիւրբը ոչ ախորժակ ունեին և ոչ ուրախ էին։ Ես իմանումէմ, ասաց մեծատունը, թէ ինչ պատճառով կերակուրը ախորժելի չէ ձեզ, բայց ահա տամ ձեզ մի փոքրիկ ճար որ կ'ամրացնէր ձեր տտամնքսը։ Խսկցն տուեց նոցա մի տոմսակ որի պարունակութիւնը այս էր. Վկայումէմ, թէ ստացոյ իմ տարեկան տոկոսիքը, որ այն սովոր ժամանակումը շինականներին շատ գժուար էր հասուցանել։ Հիացած պարտապանքը ուրախութեան արտասուրով շնորհակալ եղան իւրեանց բարերարին, և այնուհետեւ սեղանը պայծառացաւ, և համեղացան կերակուրը։

43. $\text{H}_2\text{O} + \text{Na}_2\text{S} \rightarrow \text{NaHS} + \text{H}_2\text{S}$

Ո՞ի մանուկ իւր ծնողների քառարութեան պատճառով հարկադրվեցաւ հովի զառնալ մի շինականի մօտ ։ Կա մի որ ոչխար արածեցնելու տեղումը տեսաւ մի արևնոյս քրանչիսկեան կարգից, որ մալորվել էր ձանապարհիցը, վաղեց նորա քամակից, որ ցուցանէ նորան ուղիղ ձանապարհը։ Արեկան ուրախացաւ այս մանուկի վերայ և այնքան հաւանեց նորա ուսումնասէր խօսուածքին, մինչև վեր առաւ նորան և բերեց Ասկոլի քաղաքը և ուղարից ոյն տեղ ուսումնարան։ Կորա յառաջադիմութիւնը զարմանալի էր, վարքը մէծ պատի թերեց նորան։ Այս մարդը դարձաւ յիտոյ քրանչիսկեան կարգի կրօնաւոր, աստուածարանութեան ուսուցիչ, յիտոյ, վանահայր, ապա, եպիսկոպոս, յիտոյ կարդինալ, և վերջումը, անուանի Ալիքսասոս հինգերորդ, պապ Հռոմի։ Այն ամբարտաւան աղնուականներին, որ կային նորա մօտ, ասաց նա միանգամ. Պարոններ, մի

լինիք ոյդովէս անապարծ ձեր մէծատոհմութենովը, և նս մի պայծառափայլ անից եմ. պատճառ, յայտնի լինի ձեզ որ իմ ծնողքը կենումն մի անծածկոց տան մէջ և ամենայն կողմից պատճան էն պայծառափայլ արևով:

44. Կոստնելու գուշակը.

Կոստնելու գուշակը քաջ և ազնուասիրու Պոլոնային միանգամ կամքան մի հոգեռորականի Սոլոսուրն քաղաքումը մի քանի շիշ պատառական դինի ուղարկել: Այս բանի համար ընտրեց մի երիտասարդ մարդ Ցելթնը անունով, և նորան ճանապարհ ձգեց իւր յատուկ ձիռու, ևս կամք չունիմ միւսանգամ ձեր ձիռով ճանապարհորդել, ևթէ չը տայիքի ինձ նոյնպէս ձեր քսակը: Ինչ կամիս ասել, հարցրեց Կոստնելուն, պատասխանեց Ցելթնը: Երբ որ մի աղքատ մարդ ճանապարհն զգակը վեր տուած տուրք էր ինդրում, իսկոյն դադարումքը ձին և տեղիցը չեր շարժվում, մինչև մուրացիանը մի բան չեր տուացած. բայց երբ որ արծաթս հատու, հարկաւորվումէր հաճեցուցանել և յառաջ խաղացուցանել ձին, կեղծաւորվելով, որպէս թէ խնդրողին մի բան տուեցի:

45. Կոստնելու գուշակը.

Ո՞ի վանքում կենումէր մի կրօնաւոր, որ երեկոյեան պահուն երևումէր շատ վաստակած ու թուլացած: Վանահայրը միանգամ հարցրեց նորանից դորա պատճառը: Ա՞-, պատասխանեց կրօնաւորը: Ես ամենայն որ այնքան դործ ունիմ կատարելու, որ իմ զօրութիւնքս չեին բաւական, ևթէ բասուծոյ շնորհը չը լինէր ինձ օդնական: Ես երկու արծիւ ունիմ սանձնլու, երկու նապաստակ դադարեցնելու, երկու բազէ կրթելու, մի վիշապ յաղթահարելու, մի առիւծ նուաննելու և մի հիւանդ պահպաննելու: Դոքա, պատասխանեց վանահայրը, յիմար գանգատներ են. ոյդպիսի զանազան գործեր միասին չեն յանձնում մի մարդու, և իմ վանքումն երբէք լսած չեմ, թէ մը եղբայրները պյուղպիսի պարտականութիւններ ունէին: Այնու ամենայնիւ, պատուական հոյր, ուռւտ չասացի ես, պատասխանեց կրօնաւորը: Երկու արծիւքը իմ աչքերս են. սոցա վերաց պիտոյ է մեծ զգուշութենով հսկող լինիմ, որ մի զուցէ հաւանին այնպիսի բաների որ կարող էին վնասել իմ յաւիտնական երանութեանը: Երկու նապատակները իմ սովերս են. սոցա պէտք է խափան լինիմ, որ չը վազեն կորստական ուրախութենների քամաքից և ման չը գան յանցաւոր ճանապարհներով: Երկու

հետ։ Նա լսումէ վարագուրի քամակից որ եկել է մի օտարական և
ասումէ. Ողջըն ձեղ, գուք այս տեղ զուարճանումք և հացիերու-
թիւն ունիք, ապա թոյլ տուեցէր ինձ, աղքատ ճանապարհորդիս, որ
նստեմ ձեր մատ. գորա փոխարէն տաղ կ'ասեմ ձեր համար։ Բար-
ով է, ասաց Քուրշուդ Բէզը։ Վայս տեղ ընդունելի են երգեցողը
և կարափէք (պար եկողներ), որովհետեւ հարսանիք է ասու. Ավ Աշրջ,
երգիր մի տաղ և ևս կը վարձատեմ քեզ մի լի բուռն սոկով։

Վայս Քուրշուդ Բէզը հարցրեց նորան. ինչպէս է անունգ, ով
ճանապարհորդ։ Իմ անունս է Շինդի Գեօրգիսը, ասաց երգե-
ցողը։ Այդ ինչ անուն է, ձայն տուեց միւսը ծիծաղելով. ևս ա-
ռաջին անգամն եմ լսում սցդպիսի անուն։ Օտարականը պատաս-
խանեց. Երբ որ իմ մայրը յշի էր ինձանով և սաստիկ տանջու-

մեր ծնանելու միջոցին, շատ դրացիներ գալիս էին դրան մատ հարցնելու, թէ Աստուած տղայ է պարզեց, և թէ աղջիկ. նոցա պատասխանումէին. Շինդի գնորուրը ըլ: Այս պատճառով տուած են ինձ պյտ անունը, երբ որ ծնեցայ: Եսկա վեր առաւ նուագարանը և սկսեց երգել:

Խալաֆ քաղաքումը ըմբումի Նդիպոսոսի գինի. բայց Աստուած թէներ տուեց ինձ, և ես երեք օրի մէջ թռայ հասայ այս տեղ:

Քուրշուդ Բէդի եղբայրը պահանամիտ մարդ լինելով, գուրս հանեց սուրը և ձայն տուեց. Դու սոււտ ես ասում. ի՞նչպէս կարելի է երեք օրի մէջ Խալափից հասանել այս տեղ:

Խնչ պատճառով կամնումես զու սպանել ինձ, ասաց Աշըլը. Երգեցողքը սովորաբար հաւաքվումն մի տեղ ամենոցն կողմից. Ես ձեղանից ոչինչ չեմ պահանջում. կամնաք, հաւատացէք, չը կումնաք, ձեր կամքն է:

Թռաջ շարունակէ նա, ասաց նորափեսան. և Աշըլ Քերիլը նորուց սկսեց երգել ոյապէս:

Առաւատեան աղօթքը կատարեցի Արզինեան ձորի մէջ, կտսորի աղօթքը Արզում քաղաքումը, արել գեռ ևս շմանծ աղօթքիցի Ղարս քաղաքումը և երեկշեան աղօթքը արեցի Թիֆլիզի մէջ: Աւ լահը տուեց ինձ թէներ և ես թուչելով հասայ այս տեղ. Աստուած օրհնէ այն սպիտակ ձին. նա վաղ տուեց արագութեամբ ինչպէս մի հրաշլի լրախաղաց, սարից զեպ ի ձոր և ձորից զեպ ի սար. մեր Տէրը թէներ տուեց Աշըլին և նա թուչելով հասաւ Մահուլ Մհէնիրու հարանիքին:

Ապա Մահուլ Մհէնիրին ճանաչելով իւր Աշըլ Քերիլի ձայնը, բաց ձեզ թօյնը և դաշնակը: Այդպէս պահեցիր դու քո ուխոր, ասաց նորա ընկերակից աղջիկը. ուրեմն զու այս զիշեր կը լինիս Քուրշուդ Բէդի ամուսինը: Դու չը ճանաչեցիր, բայց ես ճանաչեցի իմ սիրելու ձայնը, պատասխանեց Մահուլ Մհէնիրին, և վեր կալաւ մկրասը, մէջից կտրեց վարագըրը: Լաւ նայելով և ստուգապէս ճանաչելով Աշըլ Քերիրին, ձայն տուեց և փաթաթվեցաւ նորա վզին, և երկոքը վզյր ընկան թռւլցած: Քուրշուդ Բէդի եղբայրը սուրը ձեռքին վերայ վազեց, կամնալով սպանել երկուը միասին, բայց Քուրշուդ Բէդը խափանեց նորան, ասելով. Հանգըստացիր, եղբայր, և իմացիր թէ ինչ որ դրած է մարդուս ճակատին նորա ծնանելու ժամանակը, անպատճառ պիտոյ է կատարի:

Մահուլ Մհէնիրին զգատանալով, կարմրեց ամօթից, ձեռքով ձածից երեսը և թաք կացաւ վարագուրի միւս կողմումը:

Այժմ անտարակցոյ յայտնի է որ դու ևս Աշըզ Քերիբը, առաջ նորափեսան. բայց պատմիր մեղ, թէ բնչպէս կարողացար գու այդպիսի կարճ ժամանակում այդքան մեծ ճանապարհ անցանել: Արպէս ապացոյց ճշմարտութեան, պատասխանեց Աշըզը, իմ սուրս կը կտրէ քարը մէջիցը. բայց եթէ սուր ևմ ասում, ապա թող իմ վիզս բարձականայ թելից աւելի: Բայց ամենից լաւ ապացոյցը այս էր. քերեցէք իմ մօր մի կոյր կին որ եօմն տարի տեսած չէր Աստուծոյ լոյսը, և ես կը զարձուցանեմ նորա տնառութիւնը: Աշըզ Քերիբի քոյրը կանգնած լինելով տան գաւիթումը և լսելով այս խօսքը, վազեց մօր մօտ և ձայն տուեց. Մայր իմ. առ ստուգապէս իմ եղբայրն է և քո որդի Աշըզ Քերիբը, և մօր ձեռիցը բռնած թերեց նորան հարանիքի հանդէսի մէջ, Ապա Աշըզ Քերիբը դուրս հանեց իւր ծոցից մի կոտոր հող, թրջեց նորան ջրով և օծեց մօր աշքերը, ասելով. իմացէք ամենեքեան, թէ բնչպէս կարող և մեծ է Հազրիլիազը, և մոյրը տացաւ իւր տեսութիւնը: Այնուհետեւ ոչ ով չը համարձակվեցաւ երկրայել նորա խօսքերի ճշմարտութեան վերայ, և Քուրշուդ թէզը առանց հակառակութեան հրաժարվեցաւ գեղեցիկ Մահուլ Աեհերիսուցը:

Վայս ուրախանալով Աշըզ Քերիբը, առաջ նորան. Նզրայր քուրշուդ թէզ, ես կը մսիթմարեմ քեզ. իմ քոյրս վաս չէ քան թէ քո առաջին հարուր. ես հարուստ եմ. նորա արծամն ու սոկին պակաս չէ լինելու. ուրեմն ան քեզ ամուսին իմ քոյրս, և երջանկացէք դուք այնպէս, բնչպէս ես իմ պատուական Մահուլ Աեհերիսուց:

2. Զարհաւունք ուղարկեան.

Ասուսած հայաւուր է անմզութեանը:

Վզնուական Գրիւնաւ տիկինը իւր գեղեցիկ դաստակերտումը վարումէր մի տիսուր և առանձնական կիսանը: Յօնելի պատահարներ մինը միւսի քամակից հասանելով նորան, կործանել էին նորա երջանկութիւնը: Երկու տարի յառաջ մահը յափշտակել էր նորանից իւր քաղցր սիրելի ամուսինը: Կա իւր երեք մասաղ երեխաների ձեռքը բռնած ուղարկաւորել էր գեպ ի գերեզման իւր ննջեցեալ ամուսինը: Մի տարի յետոյ այն մանուկներից երկուքը, որ շատ սիրելի և բարեկյալ տղայք էին, վախճանվեցան ծաղիկ հանելու մէջ. և այն տառապեալ մայրը յաճախ յաճախ գնումէր արտասուր թառ վելու ոյն ծաղիկների վերայ որ անկած էր այն երեք գերեզմանի վերայ: Այն տարու սկզբումը, երբ պատահած էր այս անցքը, լուր

բերեցին Գրինաւ արկնոջը թէ նորա մի հաս եղրայրը, որ քաջ զարական էր և շատ տարիներով ծառայումէր, մեռել է պատուալ, որպէս իւր հայրնեկի պաշտամ: Այս վերջին հարուածը լրացրեց նորա խորին ցաւերի պակասորդը: Մի հաս դուստր Աւելանիա անունով, ուժից մինչև ինը տարեկան մնումը նորան, և սա էր նորա մի հատիկ միսիմարութիւնը աշխարհի վերայ:

Վ.Յ. Քնքուշ մայրը կամացաւ Բնքը լինել իւր երեխայի դաստիարակը: Մի օր նստած էր նա իւր աշխատութեան փոքրիկ սեղանի մօս պատուհանին մերձ, և Ավելանիան կանգնած մօր կողքին կարդումէր մի քրիստոնէական միսիմարութեան գիրք: այս միջոցին բացվեցաւ դուռը, ներա մասաւ մի օտար մարդ բաւական անճռոնի կերպարանքով, և հանելով ծոցից մի կոռու թուղթ, ասումը: Եկել եմ պահանջնէլու մի հին պարտը որ հանգուցեալ պարոն Գրինաւը տանել է ինձանից, օտարականը ասումը: թէ այս պարագը մի շնչին արծաթագլուխ էր, այսինքն երկու հազար մանէթ: Գրինաւ տիկնոցը անհաւատութիւնութեացաւ այս բանը. Նախ, որ իւր ամուսինը նորան բան չէր ասած այդ պարտքի մասին, և երկրորդ, այն մարդը որ ձեւանումը պարտատէր, իւր շարժուածքովը և կերպարանքովը աւելի նման էր մի աւալակի, քան թէ մի այնպիսի մարդու որ կարող էր փոխ տալ այդքան երեւելի արծաթագլուխ: Գրինաւ տիկնոցը մեծ դժուարութեան մէջ էր, ըստ որում, մի անբաղդ պատահմանը, այս բոպէին ոչ մինը նորա ծառաներից տանը չէր: Սպասաւոր կինը խնդրել էր և ստացել էր թոյլուութիւն գնալու դրացին քաղաքը և տեսանելու իւր մերձ ի մահ հիւանդ մայրը, և ձիավարը առաջնորդել էր նորան այն տեղ՝ միւս ծառուայրը աշխատումին դաշտումը, խոտը սայլերի վերոյ բարձելով և տուն բերելով: Գրինաւ տիկնոցի ասաց կամաց, որ աղջիկը զնոյ գտնչէ տնտեսին: Խակցն եկաւ ծերը և նայելով պարտքի վիայագրին, ասաց որ սուսէ, և ստորագրութիւնը շնորի: Օտարականը ձայն բարձրացրեց և զարհութեալի երդումներ ուտելով, հանգուցեալ պարոն Գրինաւի յիշաամկը հայհայեց ծանը ծանը մեղադրանքներով և զրպարութեններով: Այրի կինը չը կամենալով որ Ավելանիա դուստրը ականջ դընէր այդպիսի ասելի խօսքերի, հրամացեց նորան որ զնոյ և զրօնու պյգումը: Օտարականը սկսեց յիտոյ մէջ բերել մի երկար ու ձիգ խառն ի խուն պրասնութիւն որանով աշխատումը բացայացա կացուցանել, թէ պարոն Գրինաւը իւր մանկութեան ժամանակին, ուսանելով համալսարանումը, փախ էր ասած այն արծաթագլուխը որ կարողանար յառաջ տանել իւր զրասահրութիւնը: Աերջապէս ձե-

րունի տնտեսը անհամբերանալով, աղաղակեց. Հեռացիր աչքից. դու զրպարտիչ և խարերոց մարդ ես: Եթէ իմ հանգուցեալ պարոնը պարուական լինէր քեզ տան մանէթ, մինչև այժմ հազար անգամ յետ պահանջած կը լինէիր այդ արծաթը, որին, ինչպէս երկումէ, դու շատ կարօտ ես: Դու չեիր համբերելու մինչև այսօր, որ երկու տարուց աւելի է, պարօնի մեռանելուց յետոյ: Բայց օտարականը կամակորսելով իւր պահանջաղութեան վերայ, նորա և տընտեսի մէջ բացվեցաւ երկար ու սաստիկ կուտ: Գրինաւ տիկնոջը ցանկալի կը լինէր որ նորա սպասաւորը ներկայ լինելով այժմ, դուրս վարեին այն մարդը կամ մէջ բանտի մէջ զնէին: Աւերջապէս հեռացաւ առարականը, կատաղի սրտով և աչ տալով մէջ կամի դատաստան բանալ այս մասին:

(Օտարականը հեռացած էր, և դրինաւ տիկինը գեռեմ շատ պղտորված այս անցքից, իջաւ այդին որ տեսանէ իւր մանուկը. բայց ամենայն տեղ որոնելով նորան, չը դտաւ, փոքրիկ Անլանիան չբացել էր: Այդու վերջումը անցանումէր մի բաւական սրբնմաց գետ. ազգառաժուտ եղբի վերայ տեսաւ նա այն փոքր ցնցուղը (ջուր ցանելու գործին) որանով մանուկը սովորաբար ջուր եր սրսկում իւր ծաղիկների վերայ: Տառապեալ մայրը զարհուրանքի մէջ, համարեամ մէջ իսելացնոր եղաւ: Այս բուքեռումը մի համբիւ տղայ, որ ոչխարները պահառներ այն տեղի մօտ, վազ տալով բերեց Անլանիայի յարդից հիւսած գդակը և յայտնեց մօրը, մէջ տեսած էր այդ գդակը, որ լող տալով ջրի երեսին զնաց պատասխանցաւ: մի գետափնեայ փոքրիկ ծառի ճիւղերի վերայ, և մէջ այն գեղեցիկ կապօյտ ժապաւենից (զայթանից) օրանով շրջապատած էր գդակը, իմացաւ նա որ դա այն փոքրիկ աղջկայ դիսի ծածկոցն էր: Աղօրման Աստուած, աղաղակեց մայրը գունաթափ լինելով և բարձրացուցանելով ձեռքերը գեպ ի երկինք. մի գուցէ մէջ իմ մանուկը ընկել է զետի մէջ: Ահա, պատասխանեց հովիւ տղան չեծեծելով, այն կասկածումէմ որ փոքրիկ աղջկիը մի գուցէ խեղջված լինի: Ահա, տիկին, սկսեալ այն տեղից, ուր տեսանումէք նորա ցնցուղը, մինչև զետի ափիը բռլորովին ոտնակոխ է արած խօսքը. ովք պատուական Անլանիա, ինչքան ցաւումէմ նորա վերայ: Երեկ իսկ երեկոյեան պահուն բերեց ինձ մի պատառ ընտիր հաց: Աւատաբազդ մայրը ձայն արձակեց. Ահա, վազիր վազիր շուտով և մարդ գանչիր, գուցէ մէջ զեռեմ կարելի էր փրկել իմ մանուկը: Կոյն բռպէին վաղեց և ինքը գեպ ի տնունու: աղաղակելով յուսահասութեամբ, մէջ Անլանիան չբացել է, Անլանիան ջուրն է ընկել: Իոլոր գլուզը վերայ հասաւ, մանուկը որոնելու համար, բայց ամենայն հարցուխնդիր անսպաւ եղաւ:

Վայումնեաւ խղճալի մայրը օր ու գիշեր անցուցանումէր ցաւով ու տրամաւթենով: Այս ինձ ասումը նա անդադար: Իմ ամենասիրելի ամուսնից, իմ երեք մասուկներից զրկվեցայ ևս. Եղբայրա մեռաւ օտար աշխարհում: Իմ ազգաստոհմից մնացել եմ ևս միայն աշխարհի վերայ, ոյրի, անզաւակ և անազգական: Կայս վայելչութիւնին կարող են ինձ տալ իմ հարստութիւնքը: Բոլոր աշխարհը ահարկու անապատ է իմ աչքին:

Վայց Գրիգորա տիկնոջ եղբայրը, պարոն Բերդ անունով, մեռած չէր, ինչպէս որ կարծումէին: Որպէս մեծաւոր Հռոմարեան զօրքի վերաւորված էր պատերազմի մէջ և ձիուցը վայր էր ընկել սաստիկ կըռուի մէջ. Նորա ընկերակիցքը մեռած կարծելով նորան և թող տալով պատերազմի դաշուումը, նորան վեր էին առել թշնամիքը և տարել էին Սիրերիայի Խոր կողմը: Այս տեղ պարոն Բերդը ոչ-ինչ ճանապարհ չուներ նամակ հասուցանելու իւր ազգականներին, և ոչ ինքը կարող չէր լուր ստանալ նոցանից:

Ա երջապէս գագարից պատերազմը, և պարոն Բերդը այն գերիների համարումը լինելով, որ պիտոյ է ազատութիւն ստանային, և հասանելով մայիստրական կարգի, իւր զօրագոնդի հետ միասին ճանապարհ ընկառ դեպ ի իւր հայրենիքը: Վնցանելով մի փոքրիկ քաղաքից, անդեկացաւ որ, մի քանի մղոն հեռի այն տեղից, իւր բարեկամների մինը բնակումէ սարերի մէջ առանձնացած մի ամրոցում: Պարոն Բերդը տեսութիւն գնաց նորան, և այս տեղ լսեց այն ցաւելի համբաւը թէ իւր քուեր մարդը վախճանվել է. բայց նորա բարեկամը չը կարողացաւ տալ նորան ոչինչ ստոցդ տեղեկութիւն այրիցաւը քուեր և նորա երեք մասուկների ներկայ դրութեան մասին: Երեկոյին ո՛. Բերդը իւր սպասաւորի հետ գուրս և կառ որ յետ գոյ այն փոքրիկ քաղաքը, ուր նորա զօրագունդը իջևանել էր, բայց չը լինելով տեղեակ այն անապատ և վայրենի աշխարհին, մալորմեցաւ ճանապարհիցը: Եշունը շատ յառաջացել էր ահա, լուսինը ծածկվեցաւ, թանձը ամպեր պատեցին երկինքը, մի սաստիկ հողմ ցնցումէր անտառի ծառերը և մի անձրեւ ջրհեղեղ, խառն ձիւնի տարիների հետ, զարկումը Մայիսօրի երեսին: Մժութիւնը այնպէս թանձրացաւ որ դժուարաւ կարելի էր ճիշդերի մէջից ջոկել երեսնակամարը: Ո՛. Բերդը ասաց իւր սպասաւորին: Ենք ձիանքը վաստակած են. թէև վասթար է եղանակը, պիտոյ էր մեղ անցուցանել զիշերը վայրենի անտառի մէջ: Բարունք է, պատախանեց Պարոնին իւր Հռոմարը, Հասկա անունով. ես կը վառեմ ոյս տեղ մի լաւ կրակ, և թէպէս բան չունենք ոչ ուտելու և ոչ ըմպելու,

գոնեայ կը տաքանայինք: Հասկան այս խօսքը ասած, ցած իջաւ ձիցը, կապեց ձիանքը մի ծառի վերայ և որոնեց մի տեղ, ուր պաշտպանութիւն կար հողմի և անձրեւ երեսից: Ե զուր անցաւ նորա աշխատութիւնը կրակ վառել, որովհետեւ ձիւղերը և տերեները անչափթաց էին և դած: Փոքր առ փոքր հանգարանց փոմերիկը և անձրեւ, և յանկարծ թուեցաւ նոցա, որպէս թէ լսումին հեռուից շան հաշելու ձայն: Օրհնեալ է Աստուած, աղաղակեց Հասկան, պիտոյ է որ մեզ մօտ լինի մի դիւդ կամ աղարանկ: Ես ևս պյդպէս եմ կարծում, ասաց Մայիսօրը, ապա հեծանենք ձիաների վերայ և զնանք գեղ ի այն կողմը, ինչ կողմից դալիս է այդ ձայնը:

Ո՞ի քանի ժամանակ քայլելոց յետոյ, աեսան նորա հեռուից մի ճրագ որ փայլումէր ծառերի միջովը: Այս ճրագը երբեմն չքանումէր և երբեմն կրկին երեւմէր մի քանի բռպէից յետոյ: Ա երջապէս հասան մի տան մօտ որ միայնակ կար անտառի մէջ: Այս տուշը ունէր շանմարան, ախոռ և այգի, բոլորը շքջապառած մի բառական բարձր ոպարապով. մի լուսապայծառ մէջ կրակ վառվելով խոհանոցի կրակառեղումը տարածումէր մի կարմրագոյն փայլ ծառերի վերայ և փոքր մի լուսաւորումը խաւարը: Այս տունը երեւմէր շատ ամուր շինած, նորա պատոհանները յօրինած էին երկաթի վանդակներով: Նրկու ձիաւորը ներքեւ թջան և ասնձից բռնած վարելով ձիանքը, մաս եկան այս շինուածի չորս կողմովը, որ մի մուռք գտանեն, և գտան ձիաների ելումուաքի դուռը: Ապասաւորը մի քանի անգամ զարկեց դուռը, բայց չը բացեցին. սկսեց միւսանգամ զարկել ամենայն կարողութենով: Ա երջապէս բացվեցաւ մի փոքր դռնակ շինած մէջ դրան թէերի մինի վերայ. մի լոյս փայլեց այս բացուածի նեղ վանդակի միջովը, և մի ձայն հարցրեց. ով էք դուք: Մեք, պատասխանեց Հասկան, ճանապարհորդք ենք մոլորված անտառումը: Հըմ, հըմ, մոլորաց այն ձայնը. ձեր դալուսար տարածամ է. ինչքան մարդ էք: Մեք երկու ենք և մեր երկու ձիանքը, պատասխանեց Հասկան: Հըմ, հըմ. կրկին մոլորաց այն ձայնը. ուրիմն բոլորովին չորս գլուխ: Այս խօսքը ասած, մի խորշումալ (ծալբը լած) երեսով պառաւ մօտեցաւ այն փոքրիկ դռնակին, որ աւելի լաւ հարցաբնեւ օտարականները:

Պատշելի, մտածեց Մայիսօրը. եթէ չը լինէր այդ կանացի գրլ խօսպարդը, երդումն կուտէի թէ այդ կնոջ գէմքը մի պառաւ հուսարի թթու կերպարանք էք: Մայիսօրը մօտեցաւ և ասաց. Տիկին, լաւութիւն արա, օմեւան տալով մեզ այս գիշերիս համար: Բարձուք է, ասաց պառաւը. որովհետեւ զու երեւմին ինձ շատ պառուե-

լի երիտասարդ պարոն, պատրաստ եմ յօժարութեամբ հիւրասիրութիւն ցոյց տալ քեզ: Այս խօսքը ասած, նա բացեց արձակ դրան մի թեւը. ներս մուս Մայիսօրը և նորոս քամակից իւր արասասառը, սանձից բանած վարելով ձիանքը: Աչա ախոսի դուռը, ասաց պառաւը. ներս մտանելով կը գտածէք աջ ձեռքի վերայ կախած մի լապտեր. տուեցէք նորան ինձ որ վառեմ: Ձեր ձիանքը կ'ունենան լաւ հանդատարան և խոտ, ինչքան կամենան. զարին ևս չեմ պակասացնելու:

Հասկան տարան ձիանքը ախոսի մէջ. Մայիսօրը ներս մուս նոյնպէս որ տեղիկանոյ, թէ արդեօք այն անզը յարմար էր ձիաներին, և շատ հաւանեց: Այս միջոցումը որոտաւը փակից պարապի դուռը և բանալիքը դրեց ծոցի մէջ: Այժմ, պատուելի՛ ասպետ, ասաց հիւրընկալու պատաւը, աշխատուեցք տուն մտանել Ծատ յօժարութեամբ, պատասխանեց Մայիսօրը, ասելով. բայց իմ պատուական մայրը, խընդրեմ որ շուտով պատրաստես ինձ լնթրիք, և մանաւանդ մի լաւթան որ կարողանոյ տաքացնել իմ տուանքսը, ըստ որում դողումմամ ջուր ընկած շան պէս, և մեք քաղցած ենք ինչպէս գայլը, բարու՞ք է, ասաց պառաւը, բայց շատ ցաւումմամ որ կարող չեմ այնպէս մեծարել ձեղ, ինչպէս կը ցանկայի: Տանուաէր որդիս ներկայ չէ, բայց ես կ'աշխատեմ լցուցանել այդ պակասորդը, ինչքան որ ձեռնհաս էի: Ինչպէս դուք տեսանումք, ես կող եմ և ծանրաշարժ, կերակուր եփել, սեղան զնել և սպասաւրութիւն առնել ի միասին գժուար զործ էր իմ համակիս համար: Աւրեմն կը գանչեմ իմ Ռւրսուլ աղջիկ թռուը որ ծառայէ ձեղ սեղանի վերայ: Այդ անբազդ մանուկը համբ (անլեզու) է. նա չէ կարող արտասանել մի բառ. և այս ցաւելի էր այդ, պատճառ որ նա շատ սուր ականչ ունի և ընտիր հասկացալութիւն. համեմատելով նորա մանուկ հասակին, արդարեւ անաշողակ չէր: Բայց մի կէս ժամկից յետոյ իմ որդիս կը վերադառնոյ և ապա սպասաւրութիւնը և խօսակցութիւնը աւելի լայ յառաջ կ'երթայ:

Մայիսօրը նստած էր կրակարանի առաջեւ, որ մի փոքր ջերմանայ, և աչա ներս մուս մի աղջիկ, դեռևս շատ մանուկ, որ ունէր ձեռքին սեղանի ափաոցը և հանգերձանքը: Սա այն մանուկ Աւրառուն էր որի մասին պառաւը խօսել էր Մայիսօրի հետ: Այս աղջիկը անչափ գժգչոն (գոյնը թռած) էր, թէպէտ երեսի գծագրութիւնքը նուրբ և բարեձե էին. Բայց մի խօր արտմութիւն նկարած էր նորա կերպարանքի վերայ: Այս տիրութիւնը այնպիսի քնքուշ հասակում, շատ շարժեց Մայիսօրի դուռը: Սա սկսեց սիրով խօսել այն աղջը կոյ հետ և ասաց նորան, եթէ շատ ցաւումմամ որ չէի կարող լլ-

սել քո խօսակցութիւնը։ Մանուկ աղջիկը քաղցր բայց շաւալից աչքով նայեց նորան և հաճոյական յարդութեամբ յայտնելով իւր շընորհակալութիւնը Մայիօրի բարեկամական ցաւակցութեան համար, մատը գրեց շրթունքի վերայ, որպէս լոռիթեան նշան, ապա սկսեց ծածկել սեղանը և հեռացաւ։

Ո՞ի քանի բոպէ յետայ, դարձեալ եկաւ Աւրսուլը և բերեց թանը։ Մայիօրը վեր կացաւ տեղիցը և բազմեցաւ (նստեց) հաց ուտելու։ Խոր ակնկալութենից դուրս նեղանեց նա որ սեղանի կոտակիքը շատ մաքուր և գեղլցիկ էին, որ սեղանի անօթները, աղամանը, ձեմի շիշը արծաթից էին։ Եւ թանը շատ պատուական էր նոյնպէս. ապա խօսեց Մայիօրը. Փառք ըստուծոյ. այս տեղ գտայ ևս հանգիստ օժեվան։ Ի՞նչպէս լաւ կը քննեմ և կը հանգառանամ ճանապարհի բոլոր նեղութեններիցը։ Այս ուրախ ձայնարկութեան մէջ, մանուկ աղջիկը մի անպատճելի ցաւալից երեսով նայեց Մայիօրի վերայ. Նորա աչքերը լցվեցան արտասուրով և նա շուաբեց դուրս գընալ սենեկից։

Ո՞ի հրաշալի բան է, մասհումեր Մայիօրը, որ այս աղջիկը պյապէս տխուր է։ Կարողանալ կատարել լապէս հասկանալ լսածը, բայց չը կարողանալ պատասխանել մի բառ, արդարեւ շատ վշտալի է։ Բայց ես կարծումն մէկ այս մանուկի տրամադրիւնը պիտօյ է ունենայ սյլ պատճառներ։ Սառւգապէս ցաւումն այս աղջկայ վերայ. Երանի թէ կարողանայի այս սիրելի երեխայի տրամադրեան բռն պատճառը իւմանալ, այն դիտաւորութենով մանական գինէի նորան։

Ո՞ի բոպէից յետայ եկաւ Աւրսուլը և բերեց այծեամինի (ֆէյրանի) միտ խորոված շամփուրի վերայ և աղցան։ Այս կերակուրը դնելով սեղանի վերայ, ծածկարար սահմեցուց գէպ ի Մայիօրի ամանը մի կտոր թուղթը, նշանացի խօսելով և ուղղելով աչքերը երբեմն գէպ ի թուղթը, և երրեմն, գէպ ի խոհակերոցի պատուհանը, և ապա հեռացաւ շատապով։ Մայիօրը նայելով իւր չորս կողմը, նկատեց որ այն մանուկի ցցց տուած պատուհանը նայումէր գէպ ի խոհակերոցը որ կից էր այն սենեկին, և թէ պառաւ տանտիկնը ականջ էր զնում և լրտեսումէր ամենայն բան ինչ որ լինումէր սենեկի մէջ։ Մայիօրը հասկացաւ անլեզու աղջկայ նշանախօսութիւնը, թէ պիտօյ էր այն թուղթը ծածուկ կարդալ։ Առանց բարձրացուցանելու թուղթը, մատեցրեց նորան իւր ամանին, և կարդաց նորա մէջ այս խօսքերը որ գրած էին կապարեայ զբշով և դողդողուն ձեռքով։

..Պառք ընկել էր աւաղակների վիրառ (փռու). այս գիշեր ան-
Մ-ն ։

պատճառ կը սպանեն ձեզ, զգանստ կացէք. ողորմած Աստուածը սդ-
նական լինի ձեզ և փրկէ ձեզ... և ինձ ես ազատէ ձեր հետ միասին,»

Վ.յս բանը կարդալով զարհութեց Մայիսօրը և մտածեց իւր մէջ
թէ ինչ հնար պիտօյ էր գործ զնել. այս տեղից փախչել արդեօք,
եթէ պաշտպանութեան պատրաստութիւն տեսանել: Բայց դեռևս չէր
հաւատում թէ վասնից կար տառապակէս:

Վ.յս բառէին ներս մտաւ Մայիսօրի հաւատարիմ սպասաւոր Հաս-
կան և բերեց իւր տիրոջ վերարկուն և ճանապարհի մաղախոր որ տա-
րունակումէր իւր մէջ այն բոլոր բաները որ կարող էին հարկաւոր
լինել իւր պարօնին, դիշեր անցուցանելու համար: Զը լինի թէ պա-
ռաւ տանտիկինը բան հասկանայ, Մայիսօրը իւր ծառայի հետ խօսեց
հունդարերէն և յայտնեց նորան այն թղթի մէջ գրածը, որ միա-
սին խորհուրդ կատարեն թէ ինչ հնարդով պէտք էր պահպանել
իւրեանց անձը մատակայ վտանգից: Հասկան զարհութեց ոյս բանից:
Ո՛չ, ասաց Մայիսօրը, այժմ՝ պիտօյ է քաջ պահէլ իւր սիրութ. թէ-
պէտ այս գործը երրէք ծիծաղելի չէր, բայց այնպէս ձևանակը որ-
պէս թէ այդ մասին խօսումէինք ծիծաղաբար: Պատճառ, եթէ տան-
տիկինը նկատէր մէր վերայ հօգածու և տրոտում կերպարանք, այնուհե-
տեւ այդ անիծեալ պառաւը կարող էր կասկած տանուլ: Հասկան խո-
կըն ծիծաղեց բարձրաձայն, որպէս թէ նորա պարօնը ասած էր մի
շատ ծաղրալի բան: Այդպիսի բարձրաձայն ծիծաղ հարկաւոր չէր
յատկապէս, ասաց պարօնը. զնա՞բեր յատաջ իմ թամրի վերօյի
թափանչաները որ անպատճառ ձեռնոտու կը լինին ինձ ձախորդու-
թեան մէջ, ապա այս սուրը, որ տեսանումէս, նշյնովէս բաւական պի-
տանի կը լինի: Բայց աշխատիր դու փորձել և քննել այս տան ծակ
ու ծուկը. տես, գուցէ թէ զտանես քանի մի կասկածելի բաներ,
թէ զենք, թէ զողացած աղբանք. գուցէ թէ մի քանի մարդ թաք
կացած լինէին, և թէ պէտք էր արդեօք շատապէլ փախչել այս տե-
ղից, եթէ ոչ Մինչև դու այդ գործը կը կատարես, ես կը հետե-
ւեմ յետ ձգել այդ պառաւը և խափանել նորան, որ չը գայ քա-
րամակից և չը լրտեսէ քեզ: Նրբ որ նա գուրս կը դայ խոհանո-
ցիցը, ես նորան կը դանչեմ այս անզ, և անզադար կը զբաղեցու-
ցանեմ նորան զրոյց տալով:

Հասկան զնաց. մի քառորդ ժամից յետոյ վերադարձաւ, բե-
րելով Մայիսօրի թափանչաները որ և զրեց սեղանի վերայ: Հասկան
զարհութեած կերպարանքով տեղիկութիւն տուեց իւր տիրոջը, խօսե-
լով. Բաւական բաներ տեսայ ես. ախտախ ներսումը նկատեցի մի խորշ
(քունջ) և այն տեղ մի ննջարան որ, ինչպէս երեսումէր, առհմանած

է ախոռապետի համար։ Այն խորշը որինաւոր քննելով, գտայ մը գետնադուռն, բացեցի սորան և ցած իջայ, և ինչ տեսայ այն տեղ, ողորման վասուած, միմանց վերայ դիզած զգեստներ ամենայն տեսակ նուրբ չուխայից (մաշուղից), բարիտուղէն, մետաքսեղէն, ըստ մեծի մասին արիւնաշաղաթ։ Նշյալքս մի փայլուն կերպասի բամկոն որ պիտոյ է պատկանէր մեծասուն մարդու, ծակոտած դաշնակի հարուածով այն տեղումը ինչ տեղ սիրոն էր, և բոլոր բամկոնը պատած էր արիւնով։ Դողից ու սարսափից վեր ցցուեցան գլխիս մազերը, բացայն է աչա, որ մէք ընկած ենք աւազակների և շարագործների փոս, և փրկութեան ճար չը կայ։ Զիաների ելումուտքի դուռը ամուռ փականքներով կապած է, և բանալիքը զգուշութեամբ թագուցած կը լինի այդ սատանայ պառաւը, Պարսպի պատրշատ բարձր է, քան թէ կարելի էր վեր ելանել առանց երկար սանդուղի։ միւս որ, պիտօյ էր այն ժամանակը հրաժարվիլ մը ձիաներից, բայց երևումէ, թէ գոնեայ այս բոպէիս ոչ մի աւազակ չը կայ այս տան մէջ, և լինէ լինէին և տասերիու մարդ աւազակ, ձայն արձակեց Մայիսօրը, երկիւղ չունիմ նոցանից, այսու ամենայնին մասնամեմ ես, որ աւելի լաւ կը լինէր գործ գնել պարագ ժամանակը։ Պառաւ տանտիկինը միայնակ է տանը. մի կերպով ստիպնել նորան որ տայ մեղ բանալիքը, հեծանենք ձիաների վերայ և գնանք որոշնենք մեղ մի ապահով և արքանաւոր պատսպարան։ Ես չունէի ցանկութիւն հարկադրվիլ արիւն թափնէլ։

Պատուելի՛ տանտիկին, աղաղակեց ազա Մայիսօրը, եկեցէք այս տեղ, մի խոսք ունիմ ասելու մեզ, Պառաւը ներս մասաւ փարք ինչ կազաւով և տասց. Պարուն, աշաւասիկ եմ, ինչ հարկաւորութիւն ունիք։

Վայն բոպէին ձայն եկաւ, որ երեք անդամ զարկեցին պարըսպի դարպանը, Պառաւը ասաց. աչա գալիս է տանուտէրը. թողեցէք որ գնամ, շուտով բանամ դուռը, ազա պատրաստ էի կատարել մեր համոյքը. Մայիսօրը վեր կալաւ ճրագը և գնաց դէպ ի պարսպի զարպանը, որպէս թէ քաղաքալուրութիւն ցցց տալով կամենումը լուսաւորել տանուտիրով գալուստը, թէպէտ Մայիսօրի ճշմարիս խորհուրդը այն էր, որ տեսանէ միայն էր արգելք տանուտէրը, եթէ ունէր իւր հետ աւազակնեց լնիերներ, Կա միայն էր. Մայիսօրը առաջնորդեց նորան մինչև ի սենեակը, ազա նստեց սեղանի մօտ, երկու թափանչաները մատին. Խսակցութիւն բացեց տանուտիրով հետ, պատմեց նորան իւր ճանապարհորդութիւնքը և պատերազմի անցքերը, խօսեց քաղաքական բաների վերայ և այլն, բայց այնպիսի հանդարտութեամբ, որպէս թէ ոչինչ կասկած չունէր երբէք։

Պայիօրի սպասաւորը աւարտելով իւր հոգատարութիւնը ձին աների համար, ներս մտաւ և նստեց մի այլ սեղանի մոտ, ինչ տեղ բերեցին և նորա ընթրիքը: Պայիօրը ասաց նորան հանգարերէն. շուտով կեր հացդ, ապա ասա, որ ցայց տան քեզ իմ ննջելու սենեակը, և տար այն տեղ իմ բաները, յետոյ խնդրիք քեզ օժեւան և զնա քո սենեակը, բայց արթօն կաց. երբ դու կը լսես որ մտանումէի իմ սենեկի մէջ, արի կամաց և հասիր ինձ. դու կը բերես քո սուրը և թափան շաները:

Հասկան կատարելով իւր տիրոջ հրամանը և նորա բաները տանելով այն սենեակը որ սահմանած էր նորա համար, յետ գարձաւ դէպի ի սեղանատունը և սկսեց յօրանջել այնպէս, որպէս թէ քունը շատ յաղթումէր նորան: Ընկեր, ասաց նորան տանումէրը, դու պատասխան լսյն ևս բաց առնում բերանդ, որպէս թէ կամք ունէր կուլ տալ ինձ մի պատառ հացի պէս: Եյ՛, պատասխանեց Հասկան բարձրաձայն ծիծաղելով. ևս ունէի այդ կամքը, բայց այս բոպէիս աւելի ցանկալի էր ինձ հանգտանալ: Եյ՛ս առաւտա շատ վաշ եմ վեր կացել և բոլոր օրը ձիռ վերայ եմ անցուցել. այս դիշեր կը քննէի ևս խորդալով (Խրխուալով) որպէս շուն: Ինդրեմ զաք զարթուցանելու ինձ եգուց լցուը ծագած, որ ժամանակ ունենայի հոգալ իմ ձիսները, ճանապարհ գնալու համար. բայց ասեմ ձեզ թէ պիտոյ էր սասատիկ զարկել իմ դուռը, մի դժոխային խոռվաթիւն ձգել. այլապէս չէի լսելու ձեր ձայնը:

Տանումէրը շատ ուրախացաւ, որ յառաջաց կարող էր տանել քունը լունել Պայիօրի սպասաւորը. վեր կալսա լսպանը և լցոյ տուեց նորան անցանելով սրահիցը և հասանելով այն փոքրիկ սենեկին որ կից էր խոհանոցին, ուր և պատրաստած էր Հասկայի հանգտարանը: Երբ որ տանումէրը յետ եկաւ, Պայիօրը յառաջ տարաւ իւր խօսակցութիւնը նորա հետ:

Բայց Պ. Քերդը Նկատելով որ տանումէրը ժամամակ առ ժամանակ գողի աջքով նայումէր թափան շաների վերայ, հարցրեց նորանից, իմ թափան շաներին հաւան ևս դու, Եյ՛, ամենեին գեղեցիկ են, պատասխանեց տանումէրը. բայց պիտոյ էր թողուլ նորանց թամրի վերայ ախոռի մէջ. ձեզ հարկաւոր չէին այդ վէնքը. պատահումը բերել է ձեզ մի այնպիսի տուն որ առաւել ազահովն էր աշխարհիս վերայ, որպէս և ես մի հաւասարիմ մարդ եմ: Տարակցյա շանիմ այդ մասին, պատասխանեց Պայիօրը, բայց իմ սովորութիւնն է միշտ աչքիս առաջն ունենալ իմ զէնքը, և որպէս այս թափան շաները լցրած էին, նոքա կարող են մի ձախորդու-

թիւն պատճառել։ Մի հեշտ հնար կար զգուշանալու ամենայն վը-
տանգից, ասաց տանուտէրը. թողէք միայն, որ դնեմ նորանց այս պա-
հարանի մեջ որի բանալին կը պահէք ինքներդ, եթէ կամենաբա։ Ոչ,
պատճառելի՛ տանուտէր, կրկնեց Մայիսիրը, մի՛ աշխատէք. այս թափան-
շաները կը տանեմ իմ հետ նեչարան։ այնպէս բարի կամ շար սո-
վորութիւն ունիմ, որ չեմ կարող գլուխ ցած դնել, մինչև լցրած
թափանշաներս չը լինէին անկողնիս մօտ։

Տանուտէրը երևումէք փոքր ինչ շուտրած։ մի քանի բռպէտ շրջե-
ցաւ սենեկումը մատանջ լինելով. ասպա ձայն տուեց յանկարծ։ Այս
ինչ բան է. այժմ միայն իմանումն ես որ դուք սեղանի վերայ
խմած էք միայն ջուր. իմ մօր գլուխը ցանցառ է, նա մոռացել է
գինի մատուցանել ձեզ։ Այս սխալանքը ուղել, իմ պարտականու-
թիւնն էր. կ'երթամ որոնելու ձեր համար իմ ներքնատան աւելի
աղնիւ գինին, և մեք կ'ըմպենք մի քանի բաժակ միասին։

Այս բանը խօսած, գուրս գնաց տանուտէրը և սկսեց ձայն տալ
գէպ ի խոհակերոցը. Մայր իմ, գու մոռացել ես գինի տալ այս պա-
րոնին. առ լապտերդ և արի իմ հետ. գնանք, գինի հանենք այն
տակառից, որ պահած ենք միծահարիկ դիպուածների և առանձին բա-
րեկամների համար։

Ի՞նչ է այս մարդու դիտաւորութիւնը, մտածեց Մայիսիրը. մի՛
թէ աս միտք ունի տալ ինձ մի թմրեցուցիչ դեղ, կամ թէ կամի
թունաւորել ինձ։ Զգաստանանք։

Մի բռպէից յետոյ վերադառնալով տանուտէրը, սաստկու-
թեամբ բացեց գուռը և աղաղակեց. Պարոն, ի փառս Աստուծոյ, իւղն-
դրեմ օգնութիւն հասուցանել մեղ. իմ տառապեալ ծերունի մայրը,
որ լցու էր տալիս ինձ, սայթաքեց (ոսքը գուրս պրծաւ) և սանգու-
դի վերևից վայր ընկաւ գետնատան մեջ. լապտերը նորա հետ միա-
սին վայր ընկաւ նշանպէս. չը դիսմ՝ արդեօք կենդանի՞ է նա, թէ
մոռած է. եկեցէք օգնել ինձ բարձրացնելով և տանելով նորան իւր
անկողինը։ Յօժար եմ, պատասխանեց Մայիսիրը. վէր առեցէք ճրազը
և յառաջ գնացէք։

Հասան նորա ներքնատան մուտքին որ ունէր մի տեսակ գետ-
նադուռն։ Կայեցէք, պարոն, աչք ձգեցէք ներքն, ահա իմ վատա-
րազդ մայրը տարածված է գետնի վերայ և ոչինչ կենդանութեան
նշան չէ ցուցանում։ Պարոն թերգը չը դիտէր, արդեօք ոյն պա-
ռաւը առուգապէս վայր էր ընկել, թէ մի խորամանկ հնար էր այդ,
որանով տանուտէրը կամենումը որսալ նորան ներքնատան մեջ։ Մայ-
իսիրը դադարեց մուտքումը և ասաց. յառաջ գնացէք, պատճելի

տանուտէր, և զգուշութեամբ լիյս տուեցէք ինձ, որ մի գուցէ ևս սայթաքեմ այս անպիտան սանդուղի վերայ:

Տանուտէրը յառաջ գնաց. Մայիօրը հետևելով նորա քամակից տեսաւ մի գաշնակի ծայր դուրս ցցուած այն մարդու թեհ տակից. սորանից հասկացաւ բանի զօրութիւնը: Ապիրատ դու, մոտածեց պարոն թերգը. դու կամիս որաւալ այն րոպէն, երբ պիտոյ է բարձրացուանէի այն անիծեալ պառաւը, որ յարձակվէիր իմ վերայ և սպանէիր ինձ: Մայիօրը խակոյն գործ դնելով իւր հնարը, ձայն տուեց ովլ որ լարումէ որոգայթ, ինքը կանկանի նորա մէջ: Նոյն րոպէին այնպէս սաստիկ խթեց աւազակի հողը, որ գլխիվայր կործանեց նորան սանդուղի վերըից: Տանուտէրը ցած գլորվեցաւ տանտիկնոց վերայ: Պառաւը վեր կացաւ խակոյն, բանեց իւր արժանի որդու մազերը և նախատեց նորան այսպէս. յիմար, անմիտ, ապիրատ, դու ջարդեցիր իմ կողերը: Մինչև նորա կովումէին միմէանց հետ, Մայիօրը շտապեց փակել ներքնատան դուռը և ամրացրեց դուրսից առաջին սողնակներով:

Ապա պարոն թերգը վաղեց գէտ ի սրահը և ձայն տուեց. Հասկա: Հասկա: Հաւատարիմ սպասաւովը խակոյն վերայ հասաւ ինչպէս ճշմարիտ հունգարեան Հուսար, ամեն մի ձեռումը մի թափանչա և մերկացրած սուրը ատամների մէջ: Մեզ այժմ հարկաւոր չէ զէնք, ասաց Մայիօրը մպաելով. անսիտաները բռնվեցան. տանտիկնոր և տանուտէրը փակվեցան ներքնատան մէջ: Հատ գեղեցիկ է. յաղթեցինք, պատասխանեց Հասկան, ուրեմն տէր ենք այս տանուտեղի վերայ: Օրինաւոր քննենք այժմ այս տեղի որպիսութիւնը որ կարողանայինք պաշտպանել մեր անձը, երբ կը պահանջէր հարկը. ամենից յառաջ աշխատենք քանանել բանալիքը և տիրանանէք նոցաւ Այս տեղ այն տեղ որոնելով գտաւ Հասկան բանալիքը մի հին շուրջ տուած կծուճի տակ: Զուարձամիտ Հուսարը դրեց բանալիքը մի սկոտեղի (թենիշիու) վերայ և այնպիսի հանդիսով ներկայացրեց իւր պարոնին, ինչպէս սովորական էր մի ամրոցի բանալիք յաղթազ զօրագլխին յանձնելու ժամանակը:

* Ախու և յառաջ ճշդապէս քննեցին այս հին տան ստորևայրկի (տակի հտամի) բոլոր մասունքը, ապա գնացին վերնայարկը և ման եկան նեղ անցքերի և բոլոր սենեակների մէջ, որ ստուգէին թէ ոչ ով թաք կացած չէր այն տեղ Մասնալով մի սենեկի, լըսեցին կամաց ձայնով խօսուածք. ականջ զրեցին և խմացան որ աղօթք էր ասվաւմ: Բարի Աստուած, խօսումը մի ձայն, ողորմիր այս պատուական պարոնին և նորա հաւատարիմ սպասաւորին, պաշտպա-

նիր նոցա, աղօսոիր նորանց պյս վտանգաւոր բնակարանից և աղօստիր ինձ ես:

Մայիօրը բացեց դռւը, և սառեցաւ զարմանքից. պյս ինչ բանէ, ձայն տուեց նա. մի թէ գու էիր, Աւրառւը, ոյն չերմեռանդ աղօմողը որի ձայնը լսեցի ես. ուրեմն դռ չես անլողու, Ոչ, պարոն, պատասխանեց փոքրիկ աղջիկը, բայց հարկաւոր տեսան պյդպէս հաւատացնել միւսերին. Այս տան վատթար բնակիչը սպանելով մի օտարական պարոն, որ հանգստացած էր պյս տեղ, ահ տուեցին ինձ թէ կորելու են իմ վիզը, Եթէ կը համարձակվէի մի բառ դուրս բերել բերանիցս օտարականների առաջեւ, Հանդարտիր, մանուկ իմ. պյուշեան. ոչ տանուտէրը և ոչ տանափիկինը կարող չեն վնասել քեզ. մեք նոցա ձեռքերը կայել ենք պյժմ: Ըստուած իմ, աղաղակեց բարի աղջիկը. արդեօք սպանել էք նորանց: Ոչ, պատասխանեց Մայիօրը. ես բաւականացայ գեռես, փակելով նորանց ներքնատան մէջ. արի, մանուկ իմ, ցած իջիր մեր հետ, ուրախակից գարճիր մեզ և ապա կը պատմես թէ ինչ ձախորդութենով բերված ես դու ոյս տեղ: Ավ պարոն, կրկնեց աղջիկը. մի կարծէք դեռես թէ սպահով էիք. պյս անտառումը ահ է աւաղակների երեսից. պյս տեղ գտան վումն գտնեայ քան հատ, և այս զիշեր պիտոյ է վերադառնան մեր մաս տասն մինչև տասերեք հոգի: Այս բանը յայտնի է ինձ, պատմառ որ տանտիկինը, ինչպէս տեսայ ես, պատրաստումէր ընթրիք պյդքան թուռվ հիւրերի համար. ուրեմն ջանք արեցէք, որ այս ահարկու շարագործքը ըլ կարողանան ներս մտանել պյս տեղ. ապա թէ կորած ենք:

Բարւոք է, հետեւիր ինձ, Հասկա, ասաց Մայիօրը. գնանք պատրաստենք մեր հնարագործութիւնքը որ կարողանանք ամրապէս պահպանել մեզ: Ես մտածումը, պատասխանեց Հասկան, դարձուցանելով զէմքը զէպ է փոքրիկ Աւրառւը, թէ չէ կարելի այլապէս ներս մտանել պյս տեղ, եթէ ոչ պարապի գարպասովը: Այսո, ասաց Աւրառուլը. բոլոր պատուհանները ամուր վանդակներով պատած են. պյս շինութեան անկիւնումը կայ մի լուսամուտ տանիքի վերայ, պատից գուրա ցցուած, որ զողերը ասումն իւրեանց լուսատու ձրացը: Տանուտէրը, ինչ գիշեր սպասումք գողերի գալուն, ձրագ է դնում պյն լուսամուտի մջ որ առաջնորդէ նոցա: Նըր գալիս են աւաղակները, իմաց տալու համար զարկումն գարպասը երեք անգամ. պյս է նոցա պայմանադրած նշանը. ապա տանուտէրը կամ տանտիկինը բացումք գարպասը: Բարւոք է, ասաց Մայիօրը. եթէ նոքա չը համարձակվին դաշտականը բոլոր տասերկու հոգովը միւսին, ապա ներս կը թո-

դունք նորանց, Մի վեց մարդ աւազակ ջարդել, այնքան գժուար գործ չէր մեր համար։ Արի՛, Հասկա, պատրաստվենք ընդունել նորանց ինչպէս հարկն էր, բայց յառաջուց զնա՞ւ և տնս թէ գետեմ վառվում լապտերը տանիքի լուսամուտումը։

Հասկան զնաց. մի բոպէից յետոյ գարձաւ և ասաց ծիծաղելով. Երեւում թէ տանուտէրը և տանտիկինը ճիշդ հօգաբարձութիւն են արած, ըստ որում իւրեանց բանտարկութենից յառաջ աշխատել են նորոգել ճրագի խղը. լապտերը այնպէս պայծառ լուսառում գուրսի առարկայքը, որ հեշտ կը լինէր իմանալ այս աւազակների թիւը, որ գալոց էին այս զիշեր, բարի՛ է, Հասկա, ասաց պարոն բերզը. իջանենք այժմ և վեր առնունք մեր զենքը. Քաջասիրտ զօրականը ցած զնելով իւր վերաբուն, ասաց ծիծաղելով. իմ հուսաբեսն զգեստի տեսութիւնը միայն հերիք էր որ նոցա սիրտը դող ձգէր. վեր առ նոյնպէս այս չուանները. դոքա ձեռնուու կը լինին, այս անպիտանները կապելու համար։

Վայ բոպէին լովիցաւ, որ գարզափի երկաթը զարկեց երեք անդամ. Հասկան շուտով վեր ելաւ գեսպ ի տանիքի լուսամուտը, գարձաւ իսկոյն և ասաց կամաց ձայնով. Երկու հոգի են միայն, բարձր է, ասաց Մայիսօրը. զնա և բաց արա պարապի գուռը, և թաք կացիր զրան քամակումը. առաջին մոռնողը գործ կունենայ իմ հետ, միւսի հետ կը պարապես գու. Ցած դիր լապտերդ այս տեղ։

Հասկան զնաց և բացեց գուռը. պարոն բերգը ըմբռնեց առաջին աւազակի զզից, թափանչայի բերանը ցրեց նորա կուրծքի վերայ և ձայն տուեց որոտագին. անձնատուր եղիր, ապա թէ ոչ. կը մեռանիս աչա. Զարագործը շուարած ու զարհուրած ընկաւ կատաղած Մայիսօրի սոգերը և ողբրմութիւն խնդրեց. Հասկան իւր կողմից գետին էր զարկել միւս աւազակին. Սոցա սոգերը և ձեռքերը պինդ կապած քարշեցին և ձգեցին զաւիմի մի կողմը, և Մայիսօրը ասաց նոցա. Եթէ կը շարժվէր անկերիցդ, կամ մի խօսք բերաններիցդ կը հանէք, իսկոյն կը հրամայեմ որ ցրուեն ձեր ուղեղը.

Ո՞ի բոպէից յետոյ լսեցին, որ երեք անգամ զարկվեցաւ գուռը. Եկած էին երկու միւս աւազակ, բերելով իւրեանց հետ մեծ մեծ կապցներ. Արանց ներս տարեցին նոյն կերպով, վայր ձգեցին և կապեցին. Քաջասիրտ Մայիսօրը և նորա տղամարդ Հուսարը արթուն մնացին մինչև լուսաբացը, բայց չեկաւ աւելի աւազակ. Ձեմ հասկանում թէ Էր չեն գալիս միւսերը, ասաց Հասկան. մի թէ մի բան մարդարէացիւ է նոցա հոգին. Թո՞ն չը գան, բայց սոքա, որ բըռնված են, չեն կարող ազատվիլ իւրեանց արժանի պատժիցը։

Վարեգակալը շողշողումների ահա մութն անտառի եղևնների վերայ, լցուր սկսեց ծագել: Ճանապարհ ընկնենք, ասաց Հասկան, ըշտապենք դուրս գալ այս անիծեալ վիրապից. բայց Մայիսիը պատասխանեց. մեք դեռևս շրջապատած ենք վտանգներով. դու լսեցիր, որ քսան հոգի աւազակներ ահ են ձգել այս անտառի մէջ. գուցէ թէ այն բոպէումը, երբ մեր անձը ապահով էինք կարծում, ծառերի միջից հասանէր մեղ մի հրացանի գնտակ և ցած գլորէր մեղ, յառաջ քան թէ տեսած էինք թշնամին. ուրեմն յառաջուց մտածենք, թէ ինչ հնար աւելի փրկաւէտ էր:

Հանկարծ աղաղակեց Հասկան, ահա շատ ձիաների ոտնաձայն է գալիս հեռուից. կարծեմ որ աւազակների բոլոր ընկերութիւնը ոտով ու ձիով քայլումէ զէպ ի այս տեղ: Ծուտով վեր ելաւ սանդովը և սկսեց նայել լուսամուտից. մի քանի բոպէից յետոյ ներքեւ իջաւ և ձայն տուեց ուրախութեամբ. մեր բարեկամներն են, գալիս են Հուսարներ մեծ բազմութենով: Ծուազով բաց արեց պարըսպի գոները և Հուսարները ներս մտան, և ամենեքեան ուրախ ձայնով ողջունեցին պարոն Քերդը և իւրեանց ընկեր Հասկան: Ապա յառաջ եկաւ նոցա գլխաւորը և իւր մէծաւորին սովորական ողջոյնը տալով, ասաց նորան. Մայիսի, մեք անհանգստութեան մէջ էինք ձեր մասին. ճանաչելով մեղ ինչպէս ճիշդ պահպանող զինուորական կարգի, և տեսանելով թէ քանի մի ժամ սահմանադրեալ բոպէից յետոյ չը վերադարձաք, մտածեցինք թէ դուք մոլորված էիք անտառումը, կամ թէ ընկած էիք այն աւազակների մեռքը, որ ահ են տարածել այս սահմանումը: Ուրեմն հրաման ստանալով գնդապետից, չեծանք ձիաների վերայ և ճրագներ վեր առած, այս գիշերը մանեկանք բոլոր անտառի մէջ: Անըապէս երկու ձիու քայլերի հետք գտանք. տեսէք, ասացի Հուսարներիս, ահա Մայիսի կարմիր ձիու կոխած ոսնառուղիքը. մեր բոլոր զօրացնդի մէջ չը կայ մի հաս ձի որ այնպէս լաւ պայտած (նաև զարկած) լինէր, ինչպէս նորանը: Հետևելով այս նշանին, հասանք այս տեղ, ինչպէս տեսանումք:

(Օրհնեալ լինի Ռատուած որ բերեց ձեղ այս տեղ, պատասխանեց Մայիսիը. զգումնմ ձեր սէրը առիս և ամենայն սրտով շնորհակալ եմ ձեղ այդ մասին:

Վայն, այն, ձայն տուեց Հասկան. այժմ իմանումն թէ ինչո՞ւ համար միւս աւազակները չեկան իւրեանց ժողովարանը. ձեր ներկոյութիւնը անտառի մէջ փափցրել է նորանց:

Մայիսիը կարճառօտ պատմեց ինչ որ պատահել էր նորան մի օր յառաջ և հրամայեց ասելով. Գլխաւոր, պահպաններ դիր այս Մահ =.

շորս կապած մարդերի վերսոյ, որ աչա տեսանումնս. կապեցէք նցյն-պէս տանուտէրը և տանտիկինը, որ փակած են նելքնատան մէջ, և դրեցէք նորանց սոցա մօտ: քննեցէք բոլոր առւնը, բացէք պահա-րանները և արիզները, որոնց մէջ պիտոյ է գողացած բաներ լինե-ին, և գոյելեցէք, ինչպէս կամիք, ուտելիքը և լմակելիքը որ պիտո-է առատութեամբ լինէին այս տեղ:

Նուսարները վշյր իջան ձիաներից և ճշդապէս կատարեցին Մայ-իօրի հրամանները, մանաւանդ թէ ուտելի և ըմբելի պաշարների մասին: Կորա վշյր լիցին ազնիւ պատուական և առատ սեղանը որ մի որ յառաջ պատրաստած էր աւատակների համար:

Վայս միջոցումը պարոն թերդը գնաց այն երեխայի մօտ որի խորհրդավ փրկութիւն էր զտել: Պատուն լով նորան դիմերացին անց-քերի բարիւածող վերջը, ասաց նա, Նստիր իմ մօտ, ով պատուական աղջիկ, և ասա ինձ այժմ, թէ ինչ պատահմամբ զտանվումն դու այս տան մէջ, ըստ որում ևս չեմ կարող հաւատալ թէ դու ստուգա-պէս լինէիր այս աւազակի գուստը, և այս անիծեալ պառաւը լի-նէր քո մած մայրը: Պատումբ ինձ քո ձախորդութիւնքը, կատարեալ հաւատով, ոչինչ աչ մի ունեցիր, իմ սիրելի Ռւբաուլ, ևս կարող եմ պաշտպանել քեզ:

Իմ սույգ անունս Ռւբաուլ չէ, պատասխաննց մանուկը. իմ ա-նունը Մելանիա է: Ըւազակները յափշտակեցին ինձ իմ մօր մատից և տեղափոխեցին այս անապատ տան մէջ. իմ հայրը մեռած էր եր-կու տարի յառաջ, երբ որ պատահեց այս անցքը, և ասվումէր պա-րոն Գրինաւ:

Վատուած իմ. Պարոն Գրինաւը քո հայրն էր, ձայն տունց հիացած Մայիօրը: Ռւբաուլն դու իմ քուեր աղջիկն ես, և ես քո քե-ռին եմ. գրկախառնիր ինձ, սիրելի Մելանիա: Զորքի մէջ գնալուց յառաջ տեսած էի քեզ միանգամ, զու գեռես օրօրոցումն էիր. վեր առայ քեզ իմ դիրքս և օրհնեցի քեզ, և այժմ դու ևս այն բարի հրեշտակը որ աստուածային նախամանամութիւնը ուղարկել էր իմ փրկութեան համար աւազակների սրից:

Պարոն թերդը կցեց ձեռքերը, և նորա Նորհակալու հօյեց-ուածքը մի քանի րոպէ մնացին վերուղղած դէպ ի երկինք: Երբ նո-րա սրտի առաջին շարժուածքը փոքր մի հանդարտել էին, ասաց Մայիօրը. ասք պատմիր ինձ, սիրելի Մելանիա, թէ ինչ կերպով յափշտակեցին քեզ:

Ո՞չ, պատասխաննց մանուկ աղջիկը. այդ անցքը միշտ անմոռա-նալի կը մնայ իմ մոքումը: Մի օր իմ սիրելի մայրը և ես նստած

էինք միահին տան մէջ, տեսանք, որ ներս մտաւ վատթար կերպարանքով մի մարդ, սա ցոյց տուեց մօրս մի գրուած, և մի քանի բռապէ սաստիկ խօսակցութենից յետոյ սկսեց խռովութիւն գործել և անիծել զարչուրելի կերպով։ Այս բոպէումը հրամայեց ինձ մայրս չեռանալ և գնալ շրջելու պյուտմը։ Հասած չը հասած պյուտն, մի այլ մարդ աւելի վատթար կերպարանքով, որ թաք էր կացել այն տեղ, յարձակվեցաւ իմ վերայ, ըմբռնեց ինձ, կապեց բերանս թաշ կինակով և բերեց ինձ մի մօսակայ անտառ, ինչ տեղ սպասումը մեզ մի ժամանակ սայլ։ Առաջին մարդը համարեա թէ իսկցն հասաւ մեզ, նստեց նոյն սայլի մէջ, և պյուտս բերեցին ինձ այս տեղ։

Վայիօրը Մելանիայի հետ միասին ցած իջաւ գաւիթը և ցոյց տուեց նորան կապած աւաղակները։ Տես, քեսի, ձայն տուեց մասնուկը, ցոյց տալով աւաղակների մինը սեաւ և գանգուր մազերով։ ահա սա էր, որ մի թուղթ ձեռքին եկել էր մօրս մօտ, և ահա այն միւսը կարմիր մազերով և մօրուքով, յափշտակեց և տարաւ ինձ։

Պարոն քերդը և Մելանիան մի քանի պատառ հաց կերան, ապա Վայիօրը հրաման արեց Հուսարներին որ ճանապարհ ընկնեն։ Նա վեր տառաւ Մելանիան իւր ձիռ վերայ, Կալանաւորքը, ձեռքերը քամակեց կապած և չուանը զերին, զնումնեն շրջապատած պահապան Հուսարներով։ Չորս հօգի զօրագնդիցը մասցին վերակացու այն տան և նորա մէջ եղած զողացեալ բաների վերայ, մինչև կառավարութիւնը հրամայէ տիրապետել այն տեղին և քննել այն գործը։

Վայիօրը քաղաք հասանելով, գնաց յայտնեց գործը զատաւորներին և յանձնեց նոցա իւր բերած կալանաւորքը։ Անյապաշտ հրաման ստացաւ մի մէծ զօրագունդ, որ շրջափակէ բոլոր անտառը և ամենայն կողմից հալածէ աւաղակները։ Այս զօրաւոր գործողաւթիւնը արգիւնաւոր գտանվեցաւ, ինչպէս ցանկալի էր. ըմբռնեցին համարեա թէ բոլոր շարագործները, դատաստանի քննութեան մէջ յայտնեցաւ պյուտս. մի ազնուական, Քլաներդ անունով, Գրինաւ տիկնոջ մի հատ ազգականը, որ շատ հարուստ, բայց և նոյնպէս շատ արծաթակէր, վատթար և անօրէն մարդ էր, լսելով թէ Գրինաւ տիկնոջ ամուսինը և նորա երկու որդիքը վախճանած էին, թէ նորա եղբայր պարոն քերդը մոռել է պատերազմի մէջ, և թէ Գրինաւ տաւ տիկնոջ անչափ հարստութենների համար ոչ մի այլ ժառանգ չը կար, բաց ի փոքրիկ Մելանիայից, պյուտս էր կապել աւաղակների գլխաւորի հետ, խօսանալով սորան շատ արծաթ, որ յափշշտակէր այս մանուկը, բայց շապանէր, այլ տանէր նորան մի հետի և շատ հետի տեղ և թաքուցանէր մի այնպիսի առաջանով վայրում, որ

չը կարողանային գտանել նորան. այսու ամենայնիւ թռող նա հոգաբարձու լինէր երեխային և ոչինչ չը պակասեցնէր նորանից:

Վազակների առաջնորդը կատարեց այս առելի յանձնարարութիւնը. սա ինքն էր, որ ներս մտանելով Գրինաւ տիկնոջ ամրոցը, մի հին պարտք պատճառ բերելով, սկսեց մի երկար վիճարանութիւն տիկնոջ հետ. այս միջոցին նորա ընկերը շրջելով տան շրջ կողմը, ներս պրծաւ այգու մջջ, ձեռք բերեց փոքրիկ Մելանիան, և երեխայի ցնցուղը ցած դնելով գետի ափումը և նորա յարդահիւս դդակը փաթաթելով մի փոքրիկ ծանի վերայ, փախաւ տանելով իւր աւարը.

Վազակների մեծաւորը և նորա բոլոր ընկերակիցքը, այլև տանուտելը և տանուիկինը դատապարտվեցան դէպ ի մահ, Գրինաւ տիկնոջ յանցաւոր ազգականի վերայ մի ծանը տուգանք դրեցին և քսան տարի բանտարկութիւն:

Փարան Բերգը շատակեց փոխել Մելանիայի խոշոր (կոպիտ) ըզ գեստը մի այնպիսի հանգերձով որ աւելի պատշաճ էր իւր ազգատոհի արժանաւորութեանը: Ազա իւր մեծաւորից թոյլուութիւն տանալով, փոքրիկ Մելանիայի հետ միասին գնաց Գրինաւի ամբոցը: Գիտելով որ իւր քոյրը մեռած էր կարծում նորան, արժան համարեց մարդ ուղարկել, որ յառաջուց պատրաստէին նորան դէպ ի այն ուրախութիւնը, որ միւսանգամ տեսանելու էր իւր դուստրը: Եյս պատճառով իջևանեց նա Գրինաւի գեղումը տնտեսի մօտ. այս բարի ծերունին սրանչացաւ ուրախութենից, ողջ և առողջ տեսանելով Մայիսօրը և Մելանիան. երեսումք նոր կինդանութիւն տացած, և չը գիտէր ամեննեին թէ ինչ խօսքերով հասկացնէ նոցաիւրի զգացողութիւնքը: Բարի ծերունին վազեց դէպ ի ամրոցը:

Գրինաւ տիկինը, տրում, գունամափ, հալ ու մաշ եղած սրտի ցաւից, նտած էր ամոռուի վերայ և ունէր ձեռքումը մի գիրք որ դժուար թէ կարող էր փարատել նորա ախրութիւնը: Երբ որ նա լսեց տնտեսի բերանից թէ իւր եղբայրը զեռես կենդանի է և եկել է իւր գիւղը, իսկոյն վեր կացաւ տեղիցը և կամեցաւ հանդէս դնալ: Բայց Մայիսօրը աշա մասանումք նորա սրահը. Գրինաւ տիկինը տեսանելով նորան, գրկախանեց նորան, ձայն տալով. եղբայրի իմ, ամենասիրելին եղբայր իմ, վերջապէս տեսանումք քեզ. զու կենդանի ես զեռես: Պարոն Բերգը նտաեց իւր քուեր կողքին և խնդրեց նորանից որ պատմէ այն բոլոր անցքերը որ անցել էին գերդաստանի մէջ իւր գնալուց յետոց: Ազա Գրինաւ տիկինը արտապւելով և մորմորին լով պատմեց նորան, թէ այնուհետև վախճանվեցաւ իւր սիրելի ամուսինը մի երկար և վշտալի հիւանդութենով, բայց

ամենայն համբերութեամբ և քրիստոնէական հաւատով, ոյլն իւր երկու որդէքը մեռան ծաղկացաւով, և թէ, ձախորդութենների շափը ամենենին լրացուցանելու համար, իւր մի հատիկ զաւակը, իւր պատուական փոքրիկ Մելանիան, խեղդվեցաւ մատակայ գետի մէջ,

Պարոն թերգը շատ սրտացաւութեամբ ականջ դնելով պս պատմութեանը, պատասխանեց. ինձ ամենենին անհաւատալի է երեսում, որպէս թէ Մելանիան խեղդվել է. պատճառ, նորա մարմինը զատծ չեն: Երանի՞ թէ, ձայն տուեց մայրը. և նորա աչքերը շողշողեցին հոգեպայծառ յուսով. Երանի՞ թէ իմ զաւակս կենդանի լիներ տական. եթէ աչքերս խիմելուց յառաջ միւսանդամ արժանանայի տեսանել և գրկախառնել նորան, ոյդ կը լիներ մի մեծ միսիթարութիւն իմ օրսիս համար: Միամիտ կաց, քըյր իմ, Մելանիան չէ մոռած. հաւատացնեմ քեզ, որ մեր հօրեղբօր որդի Քլաներգը պյու տեղ մի իւր նման տմարդութիւն է արած, և շատ հաւանական է, թէ Մելանիան աւազակների ձեռքով գողացվել է և ծածկած է նոցա բնակարանումը: Ո՞չ, Ասուուած իմ, աղաղակեց մայրը, և առաւել ևս փախառ. նորա գշնը, և աւելի շատ արտասուք թափիվեցան նորա թառամեալ թշերից: Աւելի բարուք կը համարէի ես, եթէ Մելանիան մեռած լիներ, քան թէ կենակից լիներ շարագործների հետ, որոնց խօսուածքը և օրինակը ոյնքան վտանգաւոր են մանուկ հասակի համար: Պատուական քըյր, պատասխանեց Մայիօրը. քաղցր է ինձ տեսանել ձեր մէջ ոյդպիսի աղնիս մոտածութիւնք, և այլ մոտածութիւնք ունենալ ի հարկէ անկարելի էր ձեզ, բայց կարող էր հաւատալ ինձ, որ Մելանիան ունի միշտ ոյդ մաքուր, ոյդ հրեշտակացին անմեղութիւնը որ դուք ինքներդ սիրումք: Դուք շուտով կը տեսանէք իմ խօսքի ճշմարտութիւնը: Մելանիան աղատմիւն է աշա իւր, յափշտակողների ձեռքից:

Վայս խօսքերը լսած, խկոյն վեր թուաւ մայրը և ուրախութենից սրանցած, ձայն արձակեց. Ասուուած իմ, ի՞նչ էք ասում, ըստ ոյդ է ձեր ասածը. Եղբայր իմ, աղաւեմ, ոչինչ մի թաքցրէք ինձանից, ասացէք ինձ բոլորը. զուք տեսած էք Մելանիան, զուք խօսել էք նորա հետ. կարելի է որ ոյս բոպէիս հեսի չենա այս տեղից. եկեցէք, պատուական եղբայր, տարեցէք ինձ նորա մաս:

Մայիօրը գնաց և բացեց գուռը. Մելանիան ներս վազեց և ընկառ. իւր մօր գիրկը. ոչինչ չը կարողացաւ ասել բաց ի ոյս խօսքերից. մայրիկ իմ, մայրիկ իմ, քաղցր մայրիկ իմ:

Մայրը ձայն տուեց. Վայս զո՞ւ ես, իմ զուատը, իմ շատ սիրելի զուատը. ոյս զո՞ւ ես. զու կրկին յետ զարձար իմ մատ: Վա-

տուած, գթած Աստուած, օրչնեալ լինիս դռ հաղար անդամ։ Եւ քաղցր արտասուր թափելով և սեղմէլով սրտին իւր սիրելի զաւակը, կրնուումէր անդադար. Աստուած իմ, ի՞նչպէս գոհարան լինիմ քեզ։

Վազա խօսեց մայրը. արի, իմ զաւակ, նատիր իմ և քո քեռու մէջ տեղը, և պատմիր մեզ մանրամասնաբար ինչ որ եկել է քո գլխին, սկսեալ այն ժամանակից, երբ փախցրեցին քեզ։

Ո՞չ, ասաց Մելանիան, ես աչ ու դողից գրեթէ մռած էի այն բռպեռմը, երբ որ գողը ըմբռնեց ինձ և իւր ընկերի հետ միասին տարան ինձ սոցլով մի անապատ տուն անտառի մէջ՝ պառատանտիրկինը անշափ ուրախութենով ընդունեց ինձ և ասաց, թէ երկար ժամանակ սպասումէր իմ գալստեանը։ Կա ինձ խրատեց, որ լաց չը լինիմ և տուեց ինձ անուշ անուշ կերակուրներ, բերեց ինձ զահմէ, շօրուադ, պունչ և հարկադրումէր ինձ ճաշակել նոցանից, բայց ի զուր։ Վազա տարաւ ինձ մի փոքրիկ բաւական գեղցիկ սենեակ, տես, ասաց ինձ, ահա քո ննջարանը. Նայիր թէ քո անկողինը ինչպէս փախուկ է, և նորա կոսուիքը ինչպէս նուրբ և սպիտակ. դռ կը հանգստունաս որդէս մի մանուկ արքայազն։ Վազա խօսելով իմ հետ կերակրի մասին, համարեց մի ըստ միոջէ բոլոր պատուական խորտիկները որ կամնուումէր պատրաստել իմ համար, և երեւումէր, թէ այս բաները այնպիսի արժանաւորութիւն ունէին նորա աչքումը, որպէս թէ մարդու ճշմարիտ երջանկութիւնը լաւ հացկերութեան մէջ էր, որպէս թէ մարզս աղրումէր միայն աշխարհի վերայ, ուսելու և խմելու համար։ Կա հանեց վերայից իմ յատուկ զգեստը և հացցնելով ինձ շինական աղջկայ հանդերձ, ասաց, ահա թէ ինչպէս լու էր. այժմ դռ մեղանից ես, այսուհետեւ տանուտէրը կը լինի քեզ հոյր, և դռ կանուանես ինձ քո մեծ մոյր։

Վայս երկու հոդին ամենայն կերպով աշխատումէին հանգստացնել և ուրախացնել ինձ. բայց անկարելի էր ինձ սովորել այս կոպիս մարդերի կենակցութեանը. Իմ սիրուը ցանկանումէր միայն յետ դառնալ քո մատ, իմ քաղցր մայրիկ. ով, ինչքան զանազանութիւն կայ ձեր ընկերութեան և այս մարդերի ընկերութեան մէջ. ոչ մի ժամանակ չեմ լսած ես, որ մի երեկուզած խօսք դուրս գար դոցա բերանից, ոչ մի ժամանակ չը տեսայ ես որ դորա աղօթք կատարեն կամ առաւօտուն, կամ երեկոյին, ճաշից յառաջ կամ յետոյ, բոլոր տան մէջ չը կար մի հաս դիրը. նոցա բոլոր խօսուածքը էին միայն արծաթմէ և հարստութեան վերայ, նորա անդադար գոլումին իւրեանց գլուխը և վատարանումէին բոլոր միւսերը, ես չեի հա-

մարձակվում խօսակցութիւն բանալ նոցա հետ. պյնքան գարշն է և ին ինձ դոքա.

Ես փախչումի դոցանից, երկիւղ ունեի դոցա երևից, և աւելի ախորժ էր ինձ նաև միայնակ իմ փոքրիկ սենեկի մէջ, որի պատռհանը նայումէր զեկ ի պյդին. Այս տեղ միայն կարող էի մատել այն երկիւղածութեան և առաքինութեան խրաժների վերայ, որ ստացել էի քեզանից, իմ քաղցր մայրիկ, և այն սրտաշն պատմութեաների վերայ, որ դու արած էիր ինձ. ՎՇ. քանի անդամ, դիշերային պահան, երբ որ լուսինը պայծառացնումէր իմ տիսոր և միայնակ օմեկանը, արտասուել եմ ես և աղօթք եմ արել:

ՎՃ. Երկու չարագործքը, որ յափշտակեցին ինձ, շատ անգամ դալիս էին հանգտանալու այս իջևանումը, և յաճախ բերումէին իւրեանց հետ իւրեանց պէս ընկերներ. այս բոլոր մարդիկը, որ կարծումէին որպէս թէ իւրեանց տանն են, աւելի ևս վատթարաբարց էին քան թէ տանուուէրը և պառաւ տանտիկինը. Կոքա արբենումէին, թուղթ էին խաղում, զարհուրելի հայշցութիւնք դուրս ժայթքելով բերաններից. Նոքա տաղեր էին երգում և խօսեր էին խօսում, որոնց միաբը անհասկանալի էր ինձ, թէպէտ դոցա վերայ բարձրաձայն ծիծաղումէին նոքա. սորանից եղագակումէի ես, թէ այդ երգերը և զրցցքը պիտոյ է շատ գարշելի լինէին, որովհետեւ սյդպիսի վատթար մարդիկ ուրախանումէին նոցանով. Երբեմն լինումէր նոցա մէջ և կուր. սրուակներ և բաժակներ նետումէին մինը միւսի զլօսին և փոքր էր մնում, որ խեղդէին միւսանց. Այսիսի միջոցներում ես, անբաղդ մանուկս, աչ ու զողով փրկումէի իմ անձը, չեռանալով զեկ ի իմ սենեկը և մատումէի յատկապէս, թէ ինչ հնարքով կարելի էր աղատիլ այս դժոխային բնակարանից, բայց բոլոր պատուհանները վանդակապատ, և դուռը փակած էր միշտ ըշդուշութենով:

ՎԻ Երեկոյ տեսոց ես, որ եկաւ այս իջևանը մի ճանապարհորդ վաճառական, որ կամնումէր այս տեղ գիշեր անցուցանել: Դա երեսումէր մի պատռելի և բարի մարդ և ուներ իւր հետ թանգագին ապրանքներ և շատ արծաթ: Առան սպանեցին գիշերով: Լույս նորա ցաւալից աղաղակը, շուտով ցած եկայ իմ սենեկից և ներս մասյ սառին յարկի դահլիճը. աչ ու սարասի բռնեց ինձ, երբ որ տեսայ աչքիս առաջն այս անգութ արիւնչեղութիւնը. Նախատեցի սպանողների շարագործութիւնը և ստացի նոցա, թէ Բառուած վրէժինդիր կը լինի նոցա արածին: Ծիծաղեցին իմ վերայ և պատուիրեցին ինձ, որ ոչ ովի շասեմ ինչ որ անց էր կացած,

և իջնանի տանուտէրը ձայն արձակեց. Լսիր, ահա ասումնմ քեզ, որ ոչինչ ժամանակ մի խօսք բերանիցդ դուրս չը բերես դու օտար ների ներկայութեամբը. միսեալ այս լուպէից, դու կը լինիս անլեզու: Այս հերիք չէր. տանուտէրը ըմբռնեց ձեռքիցս և բանութեամբ տարաւ ինձ սպանած մարդու արիւնաշաղախ մարմնի մօտ և գոռաց վայրենի ձայնով. Կայիր, եթէ կը համարձակիցիս դու մի խօսք բերանիցդ հանել որ և իցէ մարդու առաջն, բաց ի այն ժամանակեց, երբ իմ մայրը, ես և դու միայն էինք. ահա տես, թէ ինչպէս կ'առնենք քեզ:

Ես վերտառնալով իմ սենեակը, ընկոյ ծնկերիս վերայ, բարձրացրեցի ձեռքերս դէպ ի երկինք և արտասուալից աշքով աղաւեցի Աստուած, որ փրկէ ինձ այս աւաղակների ձեռքից: Աստուած լըսեց իմ խնդրուածքը. բարի Աստուածը հրաշալի կերպով ուղարկեց ինձ աղատիչ հրեշտակ, և այս հրեշտակը իմ սիրելի քեռին է և քո շատ սիրելի եղբայրը:

Վրդարե, պատասխանեց երկիւզած մայրը. Նա, զթութեան Աստուածը, ցյց է տուել իւր աստուածային ողորմութիւնը դէպ ի մեզ. նա էր թշրուողը, որ դու, իմ սիրելի մանուկ, նախ և յառաջ գերի գնայիր, որ յետոյ կարողանայիր փրկել իմ եղրօր կեանքը. և քեզ, պատուական եղբայր, առաջնորդել է Աստուած դէպ ի աւաղակների բնակարանը, որ կարողանայիր լինել իմ սիրելի ազգայ աղատիչը: Ամենայն բան, ինչ որ առնումէ Աստուած, քարոզումէ նորա իմաստութիւնը և հայրական խնամքը:

Յ ԽՈՏԱՐԻ ԴՐԱՄԱԿԱՆԱԾ.

Ա խոտարի, վենետիկեցի աղնուականը գնացած լինելով որս, ընկաւ մի փոսի մշ, որ փորած էին, վայրենի դաղանք որսալու համար: Այն տեղ անցուց աղնուականը մի ամերող օր ու գիշեր, և թէ ինչ տառապանքի մշ էր, կարելի է նկարագրել մօրով: Ակտալիսը կամենալով քննել այս փոսի որպիսութիւնը, դուցէ թէ կը գտանէր հողիցը դուրս ցցուած մի արմատ, որանով կարող էր իւր անձը դուրս քերել այս բանտից, լոեց այնպիսի խառնիխուռն և անսովոր ձայներ, այնպիսի աղօտ խանչինք, այնպիսի խեղղված շշինք և այնպիսի կողկողակին ունացք, որ դող բռնեց նորան, և կծկվելով փոսի մի անկիւնումը, երկիւղից մեաց անշարժ և ստած ու կապած: Ոիւս որը առաւօսուն լսեց նա, որ մի մարդ անցանումէր այն փոսի մատից, մի ողբայի ձայն արձակելով, աղաւակեց նա, թէ Աստուած կը սիրես, ողնիք ինձ ով դու, հանիր ինձ այս տեղից:

Այս անցաւորը շինական մարդ էր՝ որ գնումներ անտառի միջով. լսելով այն ձայնը փոսի միջից, վախեցաւ ոկղումը, ապա սիրու տանալով մասեցաւ և հարցրեց թէ ովք էր այն տեղ, ոկտասախան եկաւ ոյսապէս. մի վատարաղդ որսորդ, որ անզգուշութեամբ ընկած էր այս տեղ, որ և աչա մի ձիգ օր ու դիշեր անցուցել է այս բանտի մէջ. թէ Աստուած կը սիրես, հանիբ ինձ, հանիբ ինձ այս փոսից, և ես առաստաղէս կը վարձատրեմ քեզ: Ես գործ կը դնեմ, ինչ որ կարող էի, ասաց շինականը:

Այս ժամանակը Մազաշխօն (այսպէս էր այն շինականի անունը) հանեց սուրը որ ուներ իւր գոտու մէջ, կորեց ծառիցը մի երկար ճիւղ որ բաւական ամուր էր մի մարդ գուրս քարշելու համար, և մասեցաւ փոսին ասելով. պարոն որսորդ, լիիր աշա, ինչ որ առումնեմ քեզ. ես ցած կը թողում այս ճիւղը փոսի մէջ, կամ բայցնեմ նորա ծայրը փոսի բերանի վերայ և կը բռնեմ. այս կերպով գուրս կ'ելանես զու: Ծառ լւա է, պատասխանեց Այստալիսը, ուրիմն պահանջիր ինձանից, ինչ վարձ կամենումնս, և ես կը տամ քեզ: Շինականը ասաց. Ես ոչինչ ինդիր չունիմ քեզանից այդ օդութեան համար. յայտնի լինի, որ ես կամք ունիմ ամուսնանալ, ուրիմն զու կը չնորհես իմ նշանածիս, ինչ որ հաճոյ էր քեզ:

Վապա Մազաշխօն ցած թողեց ծառի ճիւղը և զգաց խկոյն որ ծանրանումներ ճիւղը. Նոյն րոպէին ուրախութեամբ գուրս թռաւ փռսիցը մի կապիկ, որ նոյնպէս ընկած էր փոսի մէջ, ինչպէս Այստալիսը, բոլց սորանից յառաջ ձեռք էր ձգած Մազաշխօնի ներքե թողած ճիւղը: Այս ինչ գե էր, որ խօսեց իմ հետ այս փոսից, ասաց շինականը և փախաւ: Ուրիմն զու թողումնս ինձ այս տեղ, կրկին անգամ կողկղաղակին ձայն եկաւ փոսիցը. ոչ. բարի մարդ զու, թէ Աստուած կը սիրես, հանիբ ինձ այս տեղից, ինզրեմ և ազաւմը քեզ: Ես կը պարզեատրեմ քեզ, կը հարստացնեմ քեզ. Ես պարոն Այստալիսն եմ, մեծառուն Վենետիկիցի. մի՛ թողուր ինձ սովամահ լինել այս դարչուրելի վիրապի մէջ: Մազաշխօնի գութը շարժվեցաւ. Նա յետ եկաւ զետի փոսի բերանը, միւսանգամ ներս թողեց ծառի ճիւղը և գուրս քարշեց ինչ. մի առիւծ որ ուրախուպէս կաղկանձելով գուրս թռաւ փոսիցը: Այս ինչ ստանապ էր և այս անգամն, աղաղակեց Մազաշխօն, և զարչուրած թողեց փախաւ: Բայց մի քանի քայլափոխ արած դադարեց շինականը, լսելով Այստալիսի սիրու դղրդով աղաղակը: Աստուած իմ, Աստուած իմ, ձայն էր տալիս սա, մի՛ թէ պիտոյ էր ինձ սովամահ լինել այս փոսի մէջ, մի՛ թէ ոչ ով չէր դալու ինձ օդութիւն. ով և էիր զու,

ազալում քեզ, դարձիր, մի՛ թող, որ մոռանիմ ես այս տեղ, ըստ
որում կարող էիր փրկել ինձ. ես կը բաշխեմ քեզ մի տուն, մի
դաշտ, կովեր, ուկի, և ինչ որ կը կամենայիր դու. ազատիր ինձ,
աղատիր ինձ միայն:

Վաղաչչին յետ դարձաւ և ցած թողեց ծառի ճիւղը և գործ
քարշեց մի օձ, որ զուարձապէս փշալով դուրս պըծաւ փոսիցը: Ծի-
նականը վայր ընկաւ ծնկերի մերայ, կիսամեռ լինելով ահ ու դո-
ղից: Աւշը վերադարձաւ միոյն, հասանելով ականջին Ախտալիսի յու-
սահատական աղաղակը: Ով մարդ, դոչումէր սա, ով մարդ, ուրեմն
պիսի մոռանիմ ես այս տեղ. Աստուած իմ, ասումէր նա լալով և
հատաշելով: Այս, այս, մարդու ձայն է այս, ասաց Վաղաչչին:
Եթէ գու գեւես այդ տեղ ես, ձայն տուեց Ախտալիսը, ուրեմն ա-
ղաչչիմ քեզ քո առաւել սիրական և թանգարին բանի անունով,
որ ազատես ինձ, որ գոնեայ մոռանէի իմ տան մէջ, և ոչ թէ այս
ահարիկու խոր վիրապումը: Համբերութիւնս հատաւ արգէն, ձայնս
սպառվել է. փրկիր ինձ: Եթէ կամենուումս իմ ազարանքը Անեն-
տիկի մէջ, իմ գոյքս, արժանաւորութիւնը, բոլորը ընծայ լինի
քեզ. թող աւանդեմ հոգիս այս փոսի մէջ, եթէ չը կատարէի իմ
խոյքս. կինդանութիւն, կինդանութիւն միոյն, Վաղաչչին չը կարո-
ղացաւ լնդդիմանալ այդքան աղաչանքներին, որ խառն էին այդքան
շահաւետ խոսանունքի չետ. միւսանդամ ցած թողեց ծառի ճիւղը,
ասելով. ահա բանիր Ախտալիսը ամրանալով նորա վերայ, շինա-
կանը դուրս քարշեց այժմ տառապեալ մարդը: Այսպէս, Ախտալիս
մեծատունը դուրս եկած փոսից, հալումաշ դրութեան մէջ, ուրա-
խութեան ձայն արձակեց և նուաղեցաւ շինականի գրկումը:

Վաղաչչին ոսքի վերայ պահեց նորան, օգնութիւն տուեց նո-
րան և ուշը յետ բերեց. յետոյ տալով նորան ձեռքը, ասաց. զնանք
ապա և դուրս ելանենք այս անտարից: Ախտալիսը դժուարանումէր
ոտք փոխել, նա ապաված էր առվից: Կեր այս կոտոր հացը, ասաց
նորան Վաղաչչին, տալով նորան մի պատառ հաց, որ ունէր իւր
պարկի մէջ:

Իմ բարերար, իմ փրկիչ, իմ պահապան հրեշտակ, ասումէր
Ախտալիսը Վաղաչչիօ շինականին. ինչպէս կարող էի վարձատրել
քեզ: Ծինականը ասաց. դուք խոստացել էք ինձ հարսնական բա-
ժինք իմ նշանածիս համար և ձեր ապարանքը Անենետիկի մէջ, իմ
համար բնակութիւն: Ախտալիսը, որ սկսել էք միւսանդամ տառանալ
իւր զժը և դօրութիւնը, խօսեց. այս, առանց տարակուսանքի, ես
բաժինք կը տամ քո նշանածին, և մէջ բաժինք. ես կը ցանկայի

որ դու լինէիր ամենահարուստ շինականը քո գիւղի մէջ. ինչ տեղէ և քո օթևանը, Շինականը պատասխանեց. Քաղալետա զիւղումը անտառի մէջ, բոյց ուրախութեամբ կը հրաժարվէի իմ գիւղից, որ գայի հաստատէի իմ բնակարանը Աւենետիկի մէջ, ոյն ապարանկումը որ խոստացած էք դուք ինձ, Աչա դուրս եկանք անտառիցը, և ես այժմ զիտեմ իմ ճանապարհը և չորհակալ Եմ քեղանից, Մաղաչ չիս: Ե՛րբ կարող եմ գալ ստանալ իմ նշանածի բաժինքը և քո խոստացած ապարանքը, Ե՛րբ որ համց է քեղ: Այսպէս խօսելով հրաժարվեցան նոքա միմեանցից: Ախտալիսը ներս մտաւ Վենետիկ, և Մաղաչին, Քաղալետա: Շինականը գլխի անցքը պատմեց իւր նշանածին, յշու տալով նորան, թէ այսպիսի ինչ պարոնից ստանալու. Էր պատուական բաժինք, բոյց ինքը, մի գեղեցիկ ապարանք Վենետիկի մէջ: Մաղաչի շինականը միւս օրին, առաւատուն վաղ ճանապարհ ընկաւ դեպ ի Վենետիկ, և տեղ հասած, սկսեց հարցուփորձ առնել Վիտալիս պարոնի ապարանքի մասին. գնաց ներս մտաւ այն տեղ և ասաց թէ եկել էր խողիսը լու այն բաժինքը, որ խոստացած էր նորան Վիտալիս իշխանը, և թէ յետոյ կամք ունէր իւր նշանածի հետ փառաւոր կառքով տեղափոխվիլ դեպ ի Վենետիկ և հաստատել իւր բնակարանը այն ապարանքի մէջ. որ պարոն Վիտալիսը խոստացել էր նոյնպէս տալ նորան:

Մաղաչին համարվեցաւ խելազար. ծառայքը յայտնեցին Ախտալիսին թէ մի շինական մարդ է եկած, որ որհանջումէր հարսնական բաժինք և ասումէր թէ ապարանքը պատկանումէ իւրեան: Վանցէք դորան, հրամայեց Վիտալիսը, այդ շինականը չեմ ճանաչում ևս: Ծառապլը կասարեցին իւրեանց տիրոջ պատուէրը, և Մաղաչ չին յուսահատութեան մէջ վերադարձաւ դեպ ի իւր խրճիթը և ներս մտաւ, առանց համարձակվելու գնալ տեսանել իւր նշանածը: Կրակարանի մի կողմումը նատած էր կապիկը, միւս կողմումը առինքը, և առաջեւը, տականի օդի ովես ոլորված տարածվել էր օձը. սոքա էին այն իւրեք անտառային հիւրքը, որ շինականի գործակցութենով ազատուած էին փոսից: Երկիւղ եկաւ Մաղաչիցի վերայ, նայելով ոյս գաղաներին. նա մտածումէր այսպէս. մարդը հալածումէ ինձ, առինքը կուլ կը տայ ինձ, օձը կը խածանէ ինձ և կաղիկը ծաղը կ'առնէ իմ վերայ. աչա իմ վարձը: Այս խօսուածքից յետոյ կապիկը բարեկամարար ծամեց երեսը նայելով շինականին, առինքը հանդարտապէս շարժեց պոչը և մօտեցաւ որ լիզանէ նորա ձեռքը, ինչպէս մի շուն որ կամնուումը փայտայել իւր տերը, և օձը պարզելով իւր ոլորած մարմինը, զբօսնումէր սենեկի մէջ զուարիթ և և-

բախտամանաւ դէմքով, որ սիրտ տուեց Մազաշչիցին: Վատարաղդ
անսառունք, ասաց շինականը. գուք աւելի յարգելի էիք, քան թէ
Վիտալիս իշխանը. այդ ապերատորը հալածումէ ինձ որպէս մուրաց-
կան. երանի թէ գորան թողած լինէի իւր փոսի մէջ: Աւ իմ նշա-
նածս. վայ ինձ, ևս կարծումէի թէ փառաւոր հարսանիք կը կատա-
րեմ. բայց այժմ չը կայ մի կոտոր փայտ իմ շնումարանում, ոչ մի
կոտոր միտ իմ սեղանի համար, և ոչ ևս արծավթ ձեռք բերելու. այդ
կարիքները: Չունիմ կարողութիւն գնել և մի ոսկի քորոց իմ կնոջ
համար:

Մազաշչին արտասուն լով այսպէս, կապիկը սկսեց խանչել,
առիւծը շարժել իւր տուտը, օձը ոլորվիլ և պարզվիլ. առա կա-
պիկը մօտեցաւ նորան, որպէս թէ կամենումքը առաջնորդել, և ար-
դարեւ տարաւ նորան դէպ ի փայտի շունմարանը, ցցց տալով նո-
րան առաս պաշար փայտի, որ կարգով դրած էր միմանց վերաց և
բաւական էր շինականի բոլոր տարու գործածութեան համար: Կա-
պիկն էր որ այս փայտը բերել էր անտառից դէպ ի Մազաշչիցի
խոճիթը. Մազաշչին գրկափառնեց իւր բարեսիրտ կապիկը: Եպա-
առիւծը հանդարտապէս ոռնալով, տարաւ նորան դէպ ի խոճմի մի
կողմը, ուր դրած էր փայտի մնելէնի անչափ պաշար. երկու եղջե-
րու, երեք այծեամեն, մած բաղմութիւն նապաստակների և ճագարնե-
րի և մի գեղեցիկ վարագ. և այս բոլորը պատշաճապէս ծածկած ծա-
ռի ճիւղերով, որ մնային թարմ և անլիաս: Այս ուտելիքը որսա-
ցել էր առիւծը իւր բարերարի համար: Մազաշչին շաղգործեց
առիւծի բաշը: Բայց դու, խօսեց շինականը օձի չետ, ոչինչ շնո-
հոգացել իմ համար, Վիտալիսի պէս ես դու, եթէ մի բարի և աղ-
նիւ կենդանի, ինչպէս այս կապիկը և առիւծը: Օձը արագապէս սո-
ղաց մի շոր տերեակցատի տակ, առա զուրս երեւելով այն տեղից և
ոլոր ոլոր լինելով իսկոյն բարձրացաւ. դէպ ի վեր, պահելով բե-
րանումը մի ընտոիր գոհար: Վիշապները և մեռը, ինչպէս յայտնի
է, տեղեակ են ծածկած գանձերին: Ահա մի գոհար, ձայն տուեց
Մազաշչին, պարզեց ձեռքը հրաշալի օձի վերաց որ շաղգործէ նո-
րան և վեր առնու գոհարը:

Վայ Մազաշչին ունէր փայտ, վայրի միս, և կարող էր իւր
հարսանիքը մեծ տօնախոմրութեամբ կատարել. նորան պակաս էր մի-
այն արծավթ. բայց գորան կարօղ էր ձեռք բերել գոհարովը: Ու-
րեմն իսկցյն ճանապարհ ընկաւ դէպ ի Վիշապները և մեռը, ինչպէս յայտնի
է, տեղեակ են ծածկած գանձերին: Ահա մի գոհար, ձայն տուեց
Մազաշչին, պարզեց ձեռքը հրաշալի օձի վերաց որ շաղգործէ նո-
րան և վեր առնու գոհարը:

ուստի թանգարին քարը և տեսաւ որ շատ պատուական ջուր ունի:
Ի՞նչքան էր կամենում: Երկու հարիւր արծաթ, պատասխանեց Մա-
զաղացին, կարծելով թէ շատ էր պահանջում, թէպէտ նորա պա-
հանջած դինը դժուար թէ քարի արժանաւորութեան տասներորդ
մասն էր: Ակնազմառը նայեց Մազաչիցի երեսին և ասաց. Այս-
պիսի թեթև դին պահանջելով, պիտոյ է որ դու գող լինէիր, և
ես կը տամ քեզ բանտ դնել: Եթէ իմ գոհարս արժէ անելի փոքր,
ապա տուր ինձ փոքր գին, պարոն վաճառական, ազաղակեց Մազա-
շիօն, բայց ես գող չեմ, այլ բարերարց մարդ: Օձն է տուել ինձ
այդ գոհարը: Այս միջոցին վերայ հասաւ և պալիցիան, և շնչականը
տարան դատաւորի առաջն: Այս աեզ Մազաչիօն պատմեց իւր գոլ-
իսի անցքը, որ երեւումք մի անհաւատալի բան. բայց որովհեաւ Այս-
տալիս պարոնը խառն էր շնչականի պատմութեան մէջ, զատաւորը
յանձնեց գործը տէրութեան քննիչներին, և Մազաչիօն երեւցաւ
նոցա աւաշէը, պատմիր մեզ քո զիսի անցքը, ասաց քննիչների
մինը, բայց սուս չասես, ապա թէ ոչ, կը հրամայենք ձգել քեզ
Ազրիատեան ծովի խորշերի մէջ:

Մազաչիօն պատմեց իւր զիսի անցքը: Աւրեմն դու փրկել ես
պարոն Այստալիսի կեանքը, հարցրեցին նորանից. Այս, պարոններ,
ասաց շնչականը: Եւ նա խոստացել է քեզ բաժինք քո նշանածի
համար, և իւր ապարանքը Աննետիկի մէջ յատկապէս քեզ: Այս,
պարոններ: Եւ նա հրամայած է, որ վանեն քեզ որպէս մի մուրաց-
կան: Ո՛չ, այս, պարոններ, որպէս մի մուրացկան, ինձ, որ այնքան
պազատագին աղաչած էր նա, ինչքան որ փոսումն էր կապիկ, ոճի
և առիւծի հետ միասին: Ասացին որ դայ պարտն Այստալիսը: Այս-
տալիսը գալիս է: Ճանաչումէք այս շնչականը, պարոն Այստալիս,
ասաց քննիչը: Ոչ. չեմ ճանաչում գորան, պատասխանից Այստ-
ալիսը: Սա հաստատումք, թէ փրկել է քո կեանքը: Ամենեին չեմ
ճանաչում զորան:

Քննիչը խորհուրդ արեցին իւրեանց մէջ: Այս շնչականը,
ասումէին նորա, խօսելով Մազաչիցի վերայ, յայտնադեմ խելա-
գար է, կամ թէ խարերայ. պէտք էր դնել դորան բանտ. Ժամա-
նակը լուսափայլ կը կացուցանէ գործը: Պարոն Այստալիս, դուք կա-
րող էք այժմ հեռանալ: Ապա քննիչը նշանացի արեց պատասխ-
ներին, որ տանեն դնեն շնչականը բաղադրական բանտի մէջ:

Մազաչիօն խօնարչեցաւ ծնկերի վերայ առենի մէջ և քե-
րան բացեց պարունակութանքը. Ով պարոններ դուք, կարելի է որ գոհարը լի-
նէր զողացած. այդ ինձ յայտնի չէ. ևս ստացել եմ նորան օձիցը,

գուցէ թէ դա կամեցել է խարել ինձ, ինչպէս որ խարել է մեր մայր Նւան. կարելի է, որ կապիկը, առիւծը և օձը մի ցնորական խաղ էին, որ սատանան արել է իմ հետ, բայց ես առուգապէս փրկել եմ այս պարոնը. այս բանը վկայում ես: Կա այնքան ես գուշամթափ, այնքան ես նուազ, այնքան ես կիսամեռ է այսօր, ինչպէս այն ժամանակը, երբ որ դուրս եկաւ փոսիցը, և երբ որ ես տուեցի նորան մի պատառ հաց իմ պաշարից. բայց ես վերտան ճանաչում նորան. դորա ձայնը մի և նոյն ձայնն է որ աղաղակումքը փոսիցը. փրկութիւն, փրկութիւն, որանով և այսօր ուրանումք, թէ չեմ ճանաչում այս շնորհանը: Պարոն Վիտալիս, ես չեմ խնդրում քեղանից ոչ իմ հարսի բաժինքը, և ոչ քո մարմարոնեայ ապարանքը. բայց խօսիր դու մի բառ իմ համար, մի թողուր, որ ինձ բանո դնեն: Անես մի արա ինձ, ես քեզ անտես չարեցի այն թշուառ փոսի մէջ:

Պարոններ, ասաց Վիտալիսը, գլուխ տալով ատենի մէջ Նըստած զասաւորներին. Ես կարող եմ միայն կրկնել այն խօսքը, որ ասացի ձեզ աշա. այսինքն, Ես չեմ ճանաչում այս մարդը. դա հնարել է իմ վերայ մի խելազար առասպելք, ունի՞ դա վկայ կամ ապացոյց: Այս բոպէին մի ահ ու դողի սասանութիւն ընկաւ ատենի սպասաւորների մէջ, և առիւծը, կապիկը և օձը հանդիսացան դատարանի մէջ. կապիկը չեծել էր առիւծի վերայ և բանած էր օձը ձեռքին ուրած: Կերս մտանելու ժամանակը ունաց առիւծը, խանչեց կապիկը և վշաց օձը: Ո՞՛հ, սոքա այն փոսի մէջ եղած գազանքն էին, ձայն արձակեց ուշը վերացած Վիտալիսը: Պարոն Վիտալիս, խօսեց քննիչների ատանորդը, երբ որ այս տեսարանի խոռոչութիւնը մի փոքր հանդարտած էր. Գուք հարցուում էիք, թէ ուր էին Մաղաչչիցի վկայքը. աշա տեսանումքը գուք, որ Աստուած ուղարկել է նորանց սահմանեալ բոպէումը մեր ատենի առաջև: Եթէ Աստուած վկայ է ընդդէմ քո, ապա մէք պարտական կը մնայինք նորա առաջև, եթէ չը պատժէինք մեր անշնորհակալութիւնը: Չեր ապարանքը, մեր գոյքը ձեղանից կը Խլզին, և գուք ձեր մնացած կեանքի օրերը կանցուցանէք մի նեղ բանափ մէջ. գնացէք: Բայց դու, յառաջ տարա նա խօսքը, դարձուցանելով գէմքը դէս ի Մաղաչչիօն. դու որ միեւ չեւ այժմ փայտփայտմէիք քո առիւծը, կապիկը և օձը, որովհետեւ մի Վենետիկեցի խոսացել է քեզ մի մարմարոնեայ ապարանք և բաժինք քո հարսի համար, այժմ Վենետիկեան հասարակալութիւնը կատարումէ այդ խօսուումը. Վիտալիսի ապարանքը և դզքը քո սեփականն է: Եւ դու, ասաց քննիչը ատենազորին. արձանազրիք այս

բոլոր անցքը, և ծանուցումն արա ժողովրդին, որ նա իմաստ, թէ
տէրութեան քննիչների դատաստանը այնքան ևս արդար է, ննջան
որ խիստ է:

Վազաչչին և նորա կինը երկար ու ձիգ տարիներ ապրեցին
Ախտալիսի ապարանքումը կապիկի, առիւծի և օձի հետ միասին: Վա-
զաչչին հրամայեց այս անսառութը ձևակերպել իւր ապարանքի պա-
տի վերաց, այնպէս, ինչպէս նորա եին մոտած դատարանի մէջ,
առիւծը կրելով իւր վերաց կապիկը և կապիկը կրելով ձեռքին օձը:

Այս պատկերը կարելի է տեսանել և ոյսօր Սան Կարլո անու-
նով ապարանքի մէջ Աննետիկումը:

4. ԳԵՂՋԻ ՌԵՀԻՆ և ԳԵՂՋԵՆ.

Լշջած է մի ժամանակ մի անչափ հարուստ վաճառական, որ ու-
նէր վեց զաւակ, երեք տղայ և երեք աղջիկ. որովհետեւ այս վաճա-
ռականը խելք մարդ էր, ոչինչ չը խնայեց իւր զաւակների կըր-
թութեան համար: Նորա աղջիկները շատ գեղեցիկ էին, բայց ամե-
նից կրտսերը մանաւանդ զարմանալի էր իւր գեղեցկութենով, և ինչ-
քան նա փոքր էր զեռ ևս, զանցումին նորան գեղեցիկ աղջիկ: Այս
կրտսերը որ աւելի գեղեցիկ էր քան թէ իւր քցրերը, էր նշյանպէս
աւելի բարեսիրտ քան թէ միւսերը: Նրկու աւելի հասակաւորքը
շատ ամբարտաւան էին և պարծենումին իւրեանց հարատութենով.
սորս ամենայն օր երթումին կարտաւչանդէս, կատակերգութեան տե-
սարան և զրօսանք առնելու, և ծիծաղումին իւրեանց փոքրիկ քուեր
վերաց որ իւր ժամանակի մէծ մասը գործ էր գնում կարգալով ըն-
տիր ընտիր գրենանք: Որովհետեւ յայսնի էր ամենեցուն, թէ այս աղ-
ջիկները հարուստ ծնողի զաւակը էին, այս պատճառով մեծամեծ վա-
ճառականներից շատերը խնդրումին նոցա հարսնութիւնը, բայց երկու
աւելի հասակաւորքը պատասխանեցին թէ կարք չունէին երրեք ա-
մուսնանալ, եթէ չը գտանէին իշխանառոր փեսայք: Քելլան (այս-
պէս էր աւելի կրտսեր աղջկայ անունը) շատ քաղաքալարի նորա-
հակալութիւն արեց այն աղամարդերին որ ցանկանումին նորա հար-
անութեանը, և ասումէր թէ նա զեռ ևս շատ մանուկ էր և թէ ցան-
կալի էր նորան մի քանի աարի ևս ընկերակից լինել իւր ծնողին:
Այս վաճառականը յանկարծ զրկվեցաւ իւր գչըրից, և չը մնաց նո-
րան ոչինչ բան, բաց ի մի փոքրիկ տնից պատրակումը, որ բաւա-
կան հետի էր քաղաքից: Հայրը արտասուելով ասաց իւր զաւակնե-
րին, թէ պիտոյ էր տեղափոխիլ գեղ ի այն տունը և աշխատել
այն աւել շինականների պէս, որ կարողանայինք ապրել: Նրկու ա-

ւելի հասակաւոր աղջիկները պատասխանեցին, թէ նոքա կամք չու-
նէին թողուլ քաղաքը, և թէ ունեին շատ սիրողներ, որ երջանիկ
կը համարէին իւրեանց անձը ամուսնանալով նոցա հետ և առանց
հարուստ բաժինքի. բայց այս պատուիլի աղջիկները սիսալվումէին,
որովհետեւ նոցա սիրողքը չէին կամնուում նոյն էլ անգամ նոցա վերայ,
երբ որ նոքա աղքատացած էին: Արոյիշետեւ ոչ ով չէր սիրում նո-
րանց, տեսանելով նոցա ամրարուստանութիւնը, ուրեմն և, ասումէին,
նոցա վերայ անարժան էր ցաւիլ. շատ ուրախ ենք, տեսանելով նո-
ցա հարաբութիւնը ցածացրած: Բայց սորա հակառակ, ամենայն մարդ
ասումէր Բելլայի մասին. շատ ցաւիլի է մեզ Բելլայի վասարազգու-
թիւնը, զա շատ պատուական աղջիկ է, զա ոյնքան քաղցրութե-
նով խօսումէր աղքատ մարդերի հետ, զա այնքան հեղաբարայ և հա-
մեստ էր, այս կային ևս աղջիկ աղամարդեր շատ, որ կամնումէին ա-
մուսնանալ Բելլայի հետ, թէ չունենար նա մի դրամ: Բայց Բել-
լան ասումէր նոցա, թէ կարող չէ անտես առնել իւր աղքատ հայրը
նորա վասարազգ օրերի մէջ, և թէ նորա հետ գնալու է աղքարակ,
միսիթարելու. նորան և օգնելու նորան աշխատակից լինելով հօրը:
Խղճալի Բելլան սկզբուումը շատ ախրած էր իւր ճնողի հարաբութեան
կորստի վերայ, բայց ասած էր ինքը իւրեան. Ծառ ու շատ ար-
տասուելով, կարող չէի վերստին գարձուցանել իմ հօր գոյքը, ու-
րեմն պիտոյ էր աշխատել երջանիկ լինել և առանց հարաբութեան.
Երբ որ նոքա տեղափոխված էին իւրեանց աղքարակը, վաճառականը
և նորա երեք որդիքը սկսեցին պարապել երկրագործութեան: Բել-
լան առաւտուն վեր էր կենում չորս ժամին, շատապումէր սրբել
տունը և պատրաստել ճաշ գերգաստանի համար: Առաջին օրերումը
շատ գժուար էր նորան պյուղիսի գործակաստարութիւն, բայց
նա սովոր չէր աշխատելու աղախինի պէս. բայց երկու ամիսը լրա-
ցած, ստացու նա աւելի զօրութիւն, և սյդ չարչարակքը տուեց նո-
րան մի կասարեալ առողջութիւն: Բելլան աւարտած իւր գործը,
կարգումէր, ածումէր նուազարանը կամ թէ երգումէր մասնելով: Սո-
րա հակառակ, մահու շափ տաղտկանումէին նորա երկու քՄՐՔ,
քնումէին մինչև առաւտու տասն ժամը, զրօնումէին բոլոր օրը և
անցուցանումէին ժամանակը ախ ու վախ քարշելով այն գեղեցիկ
զգեստների և վայելչութենների վերայ, որոնցից զրկված էին: Կայ-
եցէք մեր փարբիկ քուեր վերայ, առավելին նորա իւրեանց մէջ, զա
ունի պյուղան ցած և յիմար հօդի, որ բաւականանումէ իւր թշուա
գրութենովք: Բարեմիտ վաճառականի կարծիքը ամենեին այլ էր. նա
դիաէր, որ Բելլան աւելի քան թէ իւր քՄՐՔ, կարող էր վայ-

Եւ հանդէսների մէջ. նա հիացած էր այս փոքրիկ աղջկայ առաքի-
նութեան և մանաւանդ թէ նորա համբերութեան վերայ. պատճառ,
նորա քոյրերը հերիք չէր որ բոլոր տնտեսութեան գործերը թողել
էին նորա վզին, ոյլ անարգումեն նորան ամենայն բոսէ:

Այս գերգաստանը մի տարի ապրած այս առանձնութեան մէջ,
վաճառականը գիր ստացաւ քաղաքից, որանով տեղեկութիւն էին
տալիս նորան, թէ մի նաև որի վերայ ապրանք ունէր նա, տեղ է
հասել: Այս համբաւը փոքր էր մնացել, որ պատճե նորա երկու
հասակաւոր դուստրների գլուխը. սոքա մտածումն թէ շուտով ահա
կարելի էր թողաւը այս ագարակը, ինչ տեղ նորա տաղտկանումն ին
այդքան: Հայրը ճանապարհի պատրաստութիւնը տեսած, կամնալով
հրաժարվիլ գեղ ի քաղաք, աղջիկները խնդրեցին նորանից որ բե-
րէ նոցա համար զգեստներ, պարանոցի մուշակներ, գլխի զարդեր
և ամենայն տեսակ պաճուճանք: Բելլան ոչինչ չը խնդրեց, ըստ
որում մտածումքը իւր մէջ, թէ ապրանքների բոլը արծաթը չէր
բաւական գնելու այն բաները, որոնց ցանկացած էին իւր քոյրերը:
Դու ոչինչ բան չեմ խնդրում ինձանից, ասաց Հայրը Բելլային:
Արովինու դու այդպէս քաղցրասիրտ ես, որ մտածումն իմ վերայ,
ասաց նորան աղջիկը, ապա խնդրումք քեզանից, որ բերես ինձ մի
վարդ, որովինու այս տեղ ոչինչ վարդ չէ բուսանում: Բելլան ա-
րեց այս խնդիրը, ոչ թէ այն պատճառով, որ կարօտ էր վարդի,
այլ չը կամեցաւ իւր օրինակովը զատապարտել իւր քոյրերի պանա-
սիրութիւնը, որ պիտօյ է բամբաւէին նորան, որպէս թէ կամեցած
էր իւր անձը գերազանց կացուցանել ոչինչ չը խնդրելով հօրիցը:
Բարեմիտ վաճառականը հրաժարվեցաւ, բայց եկած չեկած քաղաք,
իսկոյն գատաստան բացեցին նորա հետ եկաւոր ապրանքների մասին,
և նա շատ նեղութիւն կրելուց յետոյ, դարձաւ գեղ ի տուն նշն-
ովէս աղքատ, ինչպէս որ էր: Նա պիտօյ է երեսուն մղնն ճանա-
պարհ կտրէր մինչև տուն հասանելը. և նորա սիրտը զգումքը ար-
դէն այն ուրախութիւնը, որ տեսանելու է իւր զաւակների երեսը:
Բայց որովինու հարկաւոր էր անցանել մի մեծ անտառի միջով,
մինչեւ կը հասանէր տուն, մոլորվեցաւ նա ճանապարհից: Չիւն էր
թափում ահարիտ կերպով. հողմը այնպէս ստատիկ էր, որ երկու
անգամ վայր ձգեց նորան ձիու վերայից: Գիշերը վերայ հասանե-
լով, կարծումք նա, թէ մուանելու է սովից կամ ցրտից, և կամ
թէ կուտէին նորան գայլերը, որոնց գոռազըը լսումքը իւր շրջա-
կալքումքը: Յանկարծ նայելով գեղ ի մի ծառազարդ ճանապարհի
վերջ, տեսաւ նա մի փառաւոր ճրադ, բայց դա երևումքը բաւական

Հեռի: Կոր ընթացքը ուղղելով դեպ ի այն կողմը, նկատեց որ այդ լոյսը տարածվումէր մի ապարանքից որ բոլորսին զարդարած էր ճրագներով: Ամձառականը փառք տուեց Աստուծուն որ ուղարկել էր նորան այս օգնութիւնը, և շոսապեց հասանել այն ապարանքին. բայց շատ զարմացա նա, երբ որ ներս մտանելով ապարանքի գաւելմը, չը գտաւ այս տեղ ոչ մի մարդ: Նորա ձին որ զնումէր նոր քամակից, տեսանելով մի բաց ախու, դիմեց դեպ ի այն կողմը, և սովից կիսամահ եղած անսառնը տեսանելով այն տեղ խոս և զարի, սասատիկ ախորժակով վերս վակեց: Ամառականը կապեց ձին ախոռումը և զնաց դեպ ի ապարանքը. այս տեղ ոչինչ մարդ չը տեսաւ. ներս մտած մի զահը մեջ, հանգիստեց մի փառաւոր կրակի և մի սեղանի, որի վերս դրած էին մակղեն կերակուրք և մի մարդու համար պատրաստած սպաս: Որովհետեւ անձրեւ և ձիւնը թաց էին արել ճանապարհորդը մինչև նորա ոսկրների մեջը, մօտեցաւ նա կրակին, և ասումէր ինքը իւրեան. տանուտէրը և նորա ծառացը կը ներեն իմ համարձակումենան և անտարակցյա պէտք է որ երեկին շուտով: Երկար ժամանակ սպասեց վաճառականը, բայց 11 ժամը զարկած լինելով և ոչ որ չերմեկով, ճանապարհորդը չը կարողացաւ դիմանալ քաղցին, վեր առաւ սեղանից մի խորոված հաւ, և կերաւ նորան դողդողալով: Խոնց և մի քանի ումազ գինի և աւելի պնդացաւ սիրուց: Նա գուրս եկաւ այս զահը մեջ և ման եկաւ մեծամեծ շատ սենեկների մեջ, որ փառաչեղապէս զարդարած էին: Յետոյ հանգիստեց մի սենեկի, որի մեջ կար մի լաւ հանգստարան, և որովհետեւ անցել էր կէս գիշերը և նա վաստակած էր, ապա փակեց գուռը և հանգստացաւ:

Վուաւոտո տասն ժամն էր, երբ որ վաճառականը զարթեց, և շատ զարմացաւ տեսանելով իւր մօտ դրած մի յստակ զգեստ փոխանակ իւր սեփական ապականեալ զգեստին: Ճշմարիտ, ասաց նա ինքը իւրեան. այս ապարանքը պատկանումէր մի բարեսիրս կախարդի որ գութ է ունեցած իմ զրութեան վերս: Ամձառականը դուրս նայեց պատուհանից և չը տեսաւ ոչինչ ձիւն աւելի, բայց միայն ծաղկապատ հովանոցներ որ զմոյլեցուցանումին մարդու տեսութիւնը ներս մտաւ զահը մեջ, ինչ տեղ հաց էր կերած անցեալ երեկոյին և տեսաւ մի փարբիկ սեղան և նորա վերս մի բաժակ շօկուրդ: Ընորհակալ եմ քեզանից, պարոն կախարդ, խօսեց վաճառականը, որ գու այդպէս մարդասէր ես եղած, հոգալով իմ նախաճաշիկս: Ամձառականը վայելեց շօկուրդը և գուրս զնաց որունելու իւր ձին, և անցանելով մի վարդաղարդ հովանոցի տակից, մասրերեց որ

իւր զուստր թելլան խնդրած էր նորանից մի վարդ, և կարեց ոչն տեղից մի ճիւղ, ըստ որում շտաները կային: Խակըն լսեց նա մի մեծ ազմուկ, և տեսաւ որ գալիս է նորա վերայ մի անձունի գաղան, մինչեւ համարեա թէ ուշը վերացաւ սատրականից: Դուք շատ ապերախտ մարդ էք, ասաց նորան գաղանը սարսափելի ձայնով. ևս փրկեցի ձեր կեանքը, ընդունելով ձեղ իմ ապարանքի մէջ, և իմ հիւրասիրութեանս փոխարէն, գողանումք դուք իմ վարդերը, որ սիրելի էին ինձ քան թէ ամենայն բան աշխարհի վերայ: Պարս է ձեզ մոռանել ոյդ սիսալանքի համար. ևս շնորհումք ձեզ մի քառորդ ժամ միոջոց, որ թողութիւն խնդրէիք Աստուծուց: Վաճառականը խոնարհեցաւ ծնկերի վերայ և ասաց գաղանին, կցելով ձեռքերը. պատուելի պարոն, ներեցէք ինձ, ևս չէի կարծում վիրաւորել ձեղ, կտրելով մի վարդ իմ աղջիկների մինի համար, որ ոյդ մասին խնդրած էր ինձ: Իմ անունս պատուելի պարոն չէ, պատասխանեց անձունի կինքանին, այլ գաղան. ևս չեմ սիրում քաղաքավարական ձեռքը, ինձ հաճելի էր որ դուք խօսէիք ոյնպէս, ինչպէս որ մոռանումք. ուրեմն մի կարծէք, որ ձեր քաղցրախօսութենովը կարող էիք շարժել իմ գումաւ դուք ասացիք ինձ, թէ ունիք աղջիկներ, ևս կամենումն ներել ձեզ ոյն պայմանով, որ ձեր զուտրներից մինը կամաւոր կերպով գար մռանելու ձեր փոխանակ: Ըստ մի խօսիք, գնացէք, և եթէ ձեր աղջիկները կամք չունեն մռանել փոխարէն ձեր, ապա երգումն կերեցէք, որ վերադառնալու էք այս տեղ երեք ամսի մէջ: Վաճառականը կամք չուներ ոչ մինը իւր աղջիկներից զոհել այս անարդ հրէշին, բայց ասումէր ինքը իւրեան. զոնեաց կը քաղցրանայ սիրոս միւսանգամ՝ գրեախառնելով իմ զաւահները: Ուրեմն նա խոսացաւ վերագառնալ, և գաղանը տաց նորան, թէ կարող էր զնալ երբ որ կամենումէք, բայց յաւելացրեց այս խօսքը. ինձ հաճայ չէ, որ զու զատարկ ձեռքերով զնոյիք այս անդից. դարձիր զէպ ի ոյն սենեակը, ինչ տեղ հանգստացած ես. ոյն տեղ կը գտանես զու մի զատարկ արկղ. զու կարող ես զնել նորա մէջ, ինչ որ կամենումէք, և ես կը հրամայեմ տանել նորան քո տունը: Եօյն ժամուն չեռացաւ գաղանը, և վաճառականը ասումէք ինքը իւրեան. եթէ պիտոյ էր ինձ մռանել, ապա կը միիթարվէի նորանով, որ կարող եմ թողուլ մի փոքր հաց իմ աղքատ զաւահներին:

Վաճառականը վերադարձաւ իւր հանգստարանը, և զանելով այս տեղ անչափ բաղմութիւն ունեցաւ կոսորների, լցրեց նոցանով ոյն մեծ արկղը որի մասին խօսած էր զաղանը, և փակեց նորան: Ապա դուրս բերելով իւր ձին ախոռից, հրաժարվեցաւ պար-

բանքիցը այնպէս տխուր սրտով, ինչպէս ուրախ սրտով եկած էր այն տեղ: Կորա ձին, ինքն ըստ ինքեան վեր առաւ մի ճանապարհ անտառի միջովը, և փոքր ժամանակի մէջ տուն հասաւ վաճառականը: Կորա զաւակները հաւաքվեցան նորա շորս կողմը, բայց հայրը փոխանակ ընդունելու նոցա սիրու փայփայանքը, սկսեց լալ, նայելով նոցա երեսին: Այն վարդի միջը, որ բերած էր իւր հետ, տուեց թելլային ասելով. Ահա քեզ, թելլա, քո ինդրած վարդը, բայց դա պիտոյ է շաս թանգ նատի քո վատարաղդ ծնողին. և իսկ դյու պատմեց իւրայիններին այն տրոռում անցքը որ պատահել էր իւրեան: Այս պատահարը լսելով, լաց ու արտասուք բարձրացուցին երկու աւելի հասակաւոր աղջիկները և նախատինք տուեցին թելլային, որ լաց չէր լինում: Այսպէս էին խօսում նոքա. տեսէք ահա, թէ ինչ է ծնանում այս փոքրիկ աղջկայ ամրարտաւանութենից. ինչու համար դա չը խնդրեց, ինչպէս մեք, կանացի զարդեր. բայց ոչ այդ փոքրիկ աղջիկնը կամենումէր իւր անձը գերազանց կացոցանել, դա մահու պատճառ կը լինի մեր հօրը, և լաց չէ լինում: Թելլան բացեց բերանը այսպէս. լաց ու արտասուք ամեննեին անօգուտ էին. ինչու պիտոյ է արտասուել իմ հօր մահը, նա մեռանելու չէ. Որովհեաւ այն հրեշը կամք ունի ընդունել իմ հօր աղջիկներից մինը, ահա պատրաստ եմ ևս յանձն առնուլ այդ դաշտանի բոլոր կատաղութիւնը և երջանիկ եմ համարում ինձ, որովհեաւ ուրախ էի մեռանելով փրկմէ իմ հայրը և ապացուցանել նորան իմ երեխայական սէրը:

Ո՞ւ մէք քըր, ասացին երեք եղբայրքը. դու չես մեռանելու. մէք կ'երթանք հանգիստելու այդ հրեշին և կը մոռանենք նորա հարտածների տակ, եթէ կարող չէնք սպանել նորան: Այդ յուսալի բան չէ, իմ զաւակներ, ասաց նոցա վաճառականը. այս գտղանի կարողութիւնը այնքան ահազին է, որ ինձ անկարելի էր երեսում սատակնել նորան: Ես հիացած եմ թելլայի պատահական սրտի վերայ, բայց չը կամին նորա գլուխը մահու տակ զնել: Ես հնացած եմ և տնեի միոյն փոքր ժամանակ ապրելու, ուրեմն պիտոյ է կարուսանեի մի քանի տարի կեանք, որ և խնայելի էր ինձ մեր օգտի համար միայն, սիրելի զաւակներ: Ես հաւատացնում քեզ, իմ հայր, ասաց թելլան, որ աւանց իմ չէիր զնալու այն ապարանքը և չէիր կարող խափան լինել իմ հետեւելուս քեզ: թէպէտ և մանուկ եմ ես, բայց այնքան սաստիկ սիրով կազմած չէի կեանքի հետ, և աւելի քաղցր էր ինձ, որ այն հրեշը կուլ առյ ինձ, քան թէ մեռանեի ես սրտացաւութենից, որ պատճառ էր քո կորուսաը:

Արդարեւ, թելլան անպատճառ կամք ունէր գնալ գեղի ի գեղեցիկ ապարանքը, և այդ բանի վերայ շատ ուրախ էին նորա քյորերը, որովհետեւ այն փոքրիկ աղջկայ առաքինութիւնը մեծ նախանձ էր բորբոքել նոցա սրտի մէջ:

Ա աճառականը այնպէս զրաղած էր այն տրտում մօտածութեան թէ պիտոյ է կորուսանէր իւր քաղցրիկ դուստրը, մինչև մոռոցաւ իւր, ուկով լցուցած, արկղը. բայց երբ որ առանձնացաւ իւր սենեկի մէջ որ հանգստանոյ, շատ զարմացաւ նա, զտանելով արկղը իւր մաշճի մօտ Մտքումը դրեց, որ չառէ իւր զաւակներին, թէ ինքը այդքան հարստացած էր, որովհետեւ նորա դուստրները կը կամենոյին վերադառնալ գեղի ի քաղաք, բայց նա հաստատ կամք ունէր մեռանել այս ազարակումը: Այս խորհուրդը յայտնեց նա թելլային միայն, և լաց նորանից, թէ իւր բացակայութեան ժամանակը նկած էին մի քանի աղնուական պարոններ, և թէ սոցա մէջ կային երկու մարդ որ սիրումին նորա քյորերը, թելլան ինդրեց իւր հօրից որ ամուսնացնէ նորանց, և ասաց, թէ ինքը սիրումէր իւր քյորերը և ամենոյն սրուով ներումէր նոցա արած վասութեանը: Այն երկու շարամիտ աղջկները սոխով տրոքեցին իւրեանց աչքերը, որ լաց լինին, երբ որ թելլան հօր հետ միասին գնումէր գեղի ի ապարանքը. բայց նորա եղբայրը արտասվումին անկեղծ սրուով, ինչպէս և վաճառականը: թելլան չէր արտասվում ամենեին, ըստ որում կամք չունէր կրակ տալ նոցա ցաւին: Չին վեր առա այն ճանապարհը որ տանումէր գեղի ի ապարանքը, և երեկոյեան պահուն տեսան նորա ապարանքը այնպէս լուսաւորած, ինչպէս առաջին անդամը: Չին ամենեին միայնակ գնաց գեղի ի ախոռը, և վաճառականը իւր աղջկայ հետ միասին ներս մօտա ապարանքի մեծ դաշնի մէջ, ուր զտան նորա մի փառաւորապէս պատրաստած սեղան և նորա վերայ դրած երկու հոգու հացերութեան սովաս: Վաճառականը սիրու չունէր հաց ուտելու, բայց թելլան աշխատելով երենել հանգիստ, նստաւ սեղան և սպասաւորեց հօրը: Ըստա խօսումէր նա ինքը իւր հետ, Այս գաղանը կամենումէ ինձ պարարտացնել և յետոյ ուտել, ըստ որում այսպիսի պատուական հացերութիւն է պատրաստել ինձ: Երեկոյեան հացը կերած, լսեցին սորա մի սաստիկ խռովութիւն, և վաճառականը լալով, հրաժարական ողջոյն տուեց իւր աղջկան. պատճառ, կարծումէր, թէ աչա գալիս է գաղանը: թելլան չը կարողացաւ պահէլ գողը, տեսանելով այս զարհուրելի կերպարանքը. բայց ժողովվելով զօրութիւնքը միւսանգամ սրտապնդվեցաւ: Քեզլուցից հարցրեց հըկչը, արդեօք իւր կամքով եկած էր նա: Այս, պատճառ

խանեց աղջիկը: Դու շատ բարեսիրտ ես, ասաց նորան գաղանը, և ես շատ չնորհակալ եմ քեզ, բայց դու, բարի մարդ, գնահ հեռացիր էզուց առաւոտ, և միւսանգամ չը համարձակվիս գալ այս տեղ: Անաս բարեաւ, ովք Բելլա. մնաս բարեաւ, ովք գաղան, պատասխանեց աղջիկը. գաղանը հեռացաւ իսկըն: Ա՛հ, իմ գուստը, խօսեց վաճառականը, գրիելով Բելլան. ես աշ ու գողից կիսամու եմ ահա. աղաչումմ քեզ, որ թողուս ինձ այս տեղ: Ա՛հ, իմ հոյր, խօսեց քաջութեամբ աղջիկը. դու էզուց կ'երթաս այս տեղից և կը թողուս ինձ երկնային այցելութեանը, գուցէ թէ նա կը ողբրի ինձ: Կոքա գնացին հանգատանալու և կարծումքին թէ անքոն կը մնան բոլոր գիշերը, բայց մոտած չը մոտած մահճի մէջ, իսկըն փակվեցան նորա աշքերը՝ քնի մէջ տեսաւ Բելլան մի տիկին որ առումքը նորան. Ծառ հաւան եմ ևս քո բարի սրտին, ովք Բելլա. այն գեղեցիկ գործը, որ դու գործումմա, տալով քո կեանքը քո ծնողի կեանքի փոխանակ, չէ մնալու անվարձ: Բելլան արթնացած լինելով, պատմեց իւր հօրը այս երազը, և թէպէտ դորանով մի փոքր մինիթարվեցաւ հօյրը, բայց այնու ամենայնիւ լաց ու կոծ բարձրացրեց, երբ որ պիտոյ է հրաժարվէր իւր սիրելի գուստիցը:

Երբ որ վաճառականը գնացել էր, Բելլան նատած մէծ գահչէնի մէջ, սկսեց լալ նշնապէս, բայց ըստ որում քաջասիրտ աղջիկ էր, յանձնելով իւրեան լսուունոյ պաշտպանութեանը, մոքումը գըրեց որ չը տրամի այն փարբ միֆոցի համար որ զեռ ևս ունէր ապրելու. պատճառ, կարծումքը նա, այս երեկոյին անտարակոյս ուտելու է նորան այն գաղանը: Բայց յառաջուց կամեցաւ ման առնուլ գեղեցիկ ապարանքի մէջ և քննել նորա որպիսութիւնը. Նա չը կարողացաւ չը հիսնալ նորա փառահեղութեան վերայ, բայց շատ զարմացաւ հանդիսելով մի սեննեկի որի դրան վերայ գրած էին այս բառերը. Բելլայի սեննեակ: Ծառապով բացեց այս գուռը և ինչ տեսաւ. մի մէծ գրատուն, մի նուազարան և շատ երաժշտական գրքեր: Չեն կամեցած, որ ես ձանձրանայի այս տեղ, ասաց Բելլան կամաց ձայնով, յետոյ մոտեց այսպէս. եթէ մի օր միայն ունէի մնալու այս տեղ, ապա ի՞նչ հարկաւոր էր այսպիսի պատրաստութիւն: Այս մոտեռնունը սիրու տուեց նորան. բըրբեց դրեանքը և զտաւ մի գիրք, որի մէջ ուկի տառերով գրած էր այսպէս. Յանկացէք, հրամացեցէք, դուք այս տեղ թագուհի էր և իշխան: Ա՞յ ինձ, ասաց Բելլան հառաչելով. ոչինչ բանի ցանկութիւն չունէի ես, բաց ի տեսանելուց իմ վատարազդ հօյրը, և իմանալուց թէ ինչ դրութեան մէջ էր նա: Այս բանը ինքը իւր հետ խօսեցած, աչք ձգեց

մի մեծ հայելու վերայ, և ինչպէս զարմացաւ տեսանելով նորա մէջ իւրեանց տունը, հայրը տերագէմ տեղ հասած, իւր քոյրերը յառ ուաջ գնալով նորան և թէպէտ կեղծառովնելով որպէս թէ տրտում էին, բայց նոցա երեսի վերայ պատկերանումէր այն ուրախութիւնը, որ զգումէին էին նորա իւրեանց քուեր կորատի վերայ: Մի բոլէ յետոյ չբացաւ այս բոլոր տեսարանը, և թէլլան հարկադրված մտածել, որ այս գաղանը շատ հաճոյակառար էր, և թէ ինքը տեղիք շունէր կասկածելու դորանից: Ճաշու ժամանակը, թէլլան տեսաւ սեղանը պատրաստած, և հացիերութեան միջոցն լսեց մի հրաշալի նուազածութիւն, բայց չը տեսաւ ոչ մի մարդու երես: Երեկոյին գնալով դէղի ի սեղան, լսեց նա մի խոսվութեան ձայն, որ պատճառումէր գաղանը, և չը կարողացաւ պահել սարսափը: Ով թէլլա, ասաց նորան հրէշը, կամիս, որ ուղարկեմ քեզ երեկոյեան հաց: Տանուտէրը դու ես, պատասխանեց թէլլան, դոզդողալով: Ոչ, պատասխանեց գաղանը: այս տեղ ոչինչ տանտիկին չը կայ, բաց ի քեղանից: դու կարող ես միայն ասել ինձ, որ հեռանայի, եթէ տաղտկալի եմ քեզ, և ես կը հեռանամ իսկոյն: Ասա ինձ, այնպէս չէ, որ ես շատ տգեղ եմ մեր աչքում: Այդ ճշմարիտ է, ասաց թէլլան: պատճառ, սուստ ասել չեմ կարող, բայց կարծեմ, որ դու շատ բարեսիրս ես: Չեր ասածը ուղիղ է, պատասխանեց հրէշը, բայց թողի իմ տպեղութիւնը, ես անխօն եմ նոյնողէս, և լաւ գիտեմ, որ գաղան էի միայն: Մի կենդանին չէ կարող գաղան լինել, կրկնեց թէլլան, եթէ նա կարծումէր թէ իմ նոյնողի: Ճիմար մարդիկը չեն իմացել իւրեանց յիմարութիւնը: Հաց կեր, ով թէլլա, ասաց նորան հրէշը, և աշխատիր չը տաղտկանալ քո տան մէջ, ուստիսու, այս բոլորը քո սեփականն է, և ինձ մեծ տրտումութիւն կը լինէր, եթէ քո սիրոտ նեղանար այս տեղ: Դու շատ բարեսիրս ես, ասաց թէլլան: Խոստովանիմ քեզ, որ շատ հաւան էի քո սրտին, և երբ որ մտածումէի քո մարդկասիրութեան վերայ, այնուհետեւ չքանումէր քո տպեղութիւնը: Այսո, ով տիկին, բարի սիրս ունիմ ես, բայց հրէշ եմ: Կան շատ մարդիկ, որ քեղանից աելի տպեղազէմ էին, ասաց թէլլան, բայց դու աւելի սիրելի ես ինձ քո կերպարանքը, քան թէ նորա որ մարդկային կերպարանքի տակ ծածկումն մի խարեւայ, պատկանեաւ, անշնորհակալ սիրս:

Թէլլան մեծ ախորժակով կերաւ երեկոյեան հացը, և համարեան թէ աւելի երկիւղ շունէր այն հրէշից: Բայց մերձ ի մաշ սարսափ եկաւ նորա վերայ, երբ որ հրէշը ասաց նորան: Ով թէլլա, կամիս լինել ինձ կին: թէլլան մի քանի բոլէ չը կարողացաւ պա-

տասխան տալ, և երկիւղ ունէր, մի գուցէ հրաժարվելով այդ բանից, զօյրացնէր հրէշի սիրտը: Եվ վերայ այդր ամենայնի դոզդողալով ասաց նա. Ոչ, ովք գաղան, Այն բռպէին հրէշը կամենալով հառաջել, մի այնպիսի աշաւոր շառաշխին դործեց, որ թնդաց բռլոր պալաւը. բայց Բելլան շուտով հանգստացաւ, ըստ որում գաղանը տրասում սրտով բարեւա մեջ ասելով, զուրս զնաց սենեկից. և ժամանակ առ ժամանակ վերադառնումէր որ նայէ Բելլայի վերայ: Աղջիկը լինելով միայն, շատ ցաւակից էր լինում այս խղճալի գաղանին և ասումէր. ախսո՞ս, որ այս գաղանը այսպէս տգեղ է. դա ոչդքան քաղցրասիրտ էր:

Դելլան երեք ամիս կացաւ այս պալատի մեջ բաւական հանգստապէս. ամենայն երեկոյ գաղանը դալիս էր նորան տեսութիւն, խօսակցութիւն էր առնում նորա հետ բաւական խելացի կերպով, բայց ոչ երեք այնպիսի հանձարով, բնշպէս այդ բառը հասկաց վում աշխարհային կարգումը: Ամեն օր Բելլան մի նոր գեղեցկութիւն էր նկատում այն հրէշի մեջ. յաճախ անսանելով նորան, սովորած էր նորա տգեղութեանը, և այնուհետեւ ոչ մէ վախենում չէր նորա այցելութենից, այլև շատ անդամ անհամբերութեամբ նայումը ժամացուցին, որ իմանայ, արդեօք ի՞նն էր ժամը, որովհետեւ գաղանը ուղղակի այս ժամին գալիս էր անպատճառ: Ահ բան միայն զժուարութիւն էր պատճառում Բելլային, այսինքն այն բանը, որ հրէշը, հանգստանալուց յառաջ, հարցնումէր նորանից, արդեօք կը կամենար լինել իւր ամուսինը, և երկումէր խոր վշացած, երբ որ լսումէր Բելլայից մի հրաժարական պատասխանի: Բելլան ասաց նորան մի օր. ովք գաղան, շատ և շատ ցաւելի է ինձ քո դրութիւնը. Ես կը ցանկայի, որ հնար լիներ ինձ ամուսնանալ քո հետ, բայց իմ արդարամտութիւնս թշուլ չէ տալիս ինձ որ հաւատացնեմ քեզ, թէ այդ բանը երբ և իցէ կարելի էր: Ես կը լինիմ միշտ քո բարեկամը. բաւական կացիր սորանով, Այժդպէս ես պատշաճ էր, պատասխանեց գաղանը. Ես ինքս դատելով արգարապէս, քաջ գիտեմ իմ կերպարանքի աշաւորութիւնը, բայց շատ սիրումէմ ձեզ, և շատ երջանիկ եմ որ կամք ունիք ընկերակից լինել ինձ, մեալով այս տեղ: Խոստացէք միայն, որ երեք հրաժարվելու չէիք ինձանից: Բելլան կարմրատակեց խեցյն այս խօսքի վերայ. Նա տեսած էր հայելու մեջ, որ իւր հայրը հիւանդ էր սրտացաւութենից. Նա ցանկանումը միւսանգամ տեսանել նորան: Ես կարող էի խոստանալ քեզ, ասաց Բելլան գաղանին, յախունան չը հրաժարվիլ քեղանից, բայց այնպէս փափագելի էր ինձ կրկին անցամ տեսանել իմ հայրը, որ ե-

թե զրկելի ինձ ոյս հաճութենից, կը մռանէի ևս: Ես ինքս աւելի էի հաւան էի մնանել, ասաց հրեշը, քան թէ ցաւ պատճառել քեղ. ևս կ'ուղարկեմ քեզ քո հօր մօտ. դու կը մնաս այն տեղ, և քո խղճալի դաղանը հալումաշ կը լինի սրտաշաւութենից: Աչ. ասաց նորան աղջիկը արտասուելով. ես ոյնպիսի մերս սիրով սիրում քեզ, որ չէի կարող պատճառ լինել քո մահուն. ևս խռասանումեմ քեզ, ութ օրի մէջ վերագանալ քո մօտ. քո հնարագործութենովը տեսած եմ ևս, որ իմ քոյրերս ամուսած էին ևս, բայց քոյրերս ամուսած էին և իմ եղբայրքս գնացել են պատերազմ. իմ հայրս միայն է. թէյլ տուրինձ մնալ նորա մօտ մի շարաթ: Դու եգուց առաւոտ այն տեղ կը լինիս, բայց չը մռանաս քո խռատումը. քեզ հարկաւոր էր միայն քո մասանին զնել սեղանի վերայ, հանգստանալուգ միջոցին, երբ որ կը կամնասյիր վերագանալ այս տեղ. Բարեաւ մնաս, Բելլա, Գաղանը, իւր սովորութեան պէս, յոդոց հանեց, ասելով այս խռարերը, և Բելլան գնաց հանգստանալու, բայց տիսուր մասնութեան մէջ էր, տրամադրուցանելով գաղանի սիրուը:

Իշր որ Բելլան զարթեց արաւոտուն, տեսաւ որ իւր հօր տանն էր և հնչեցուցանելով փոքրիկ զանգակը որ իւր մահճի մօտ էր, երեւցաւ աղախինը որ և խկյուն մէծ աղաղակ բարձրացրեց, տեսանելով նորան: Հայրը այս ձայնի վերայ վազեց զեզ ի այն կողմը, և փոքր էր մնացել, որ մռանի ուրախութենից, միւսանգամ տեսանելով իւր սիրելի դուստրը, և նորա գրկախառնած մնացին մի քառորդ ժամից աւելի: Բելլան այս քաղցր տեսութենից յետոյ, մռարերեց, որ զգեստ չուներ, վեր կենալու մահճիցը. բայց աղախինը իմաց տուեց նորան, թէ մսակաց սենեկումը զտած է մի մէծ արկդլցրած սակեղէն և գոհարազարդ հագուստներով: Բելլան շնորհակալ եղաւ բարեսիրա գաղանի քաղցր հոգաբարձութեան համար: Կա վեր առաւ այս հանդերձներից աւելի փոքր թանգարինը և հրամայեց սպասաւորին փակել միւսերը, որ կը կամնար ընծայել իւր քուրերին. բայց սյս խօսքը ասած, խսկյուն աներեւութացաւ այն արկդլը. Հայրը ասաց Բելլային, թէ գաղանի կամքը այն է, որ Բելլան այս թանգարին զգեստները պահէ իւր համար, և նոյն բոպէին որպէս հանդերձնեղը նշոյնպէս և արկդլ երեւցան իւրեանց տեղումը: Բելլան զգեստուորվեցաւ, և այս միջոցին տեղեկութիւն տուեցին նորա քուրերին Բելլայի գալուստի մասին: Առքա խկյուն ներկայացան իւրեանց ամուսիններովը և երկուքը ևս շատ անբաղդ էին: Թէսկէտ Բելլան շատ սիրով փայփայեց իւր քոյրերը, բայց չը կարողացաւ շիջուցանել նոյցա նախանձը, որ ևս առաւել բորբոքվեցաւ, երբ որ

լոեցին թե լլայի բերանից, թէ բնապէս երջանիկ էր նա: Երկու նախանձու քսրերը իշան դէպ է այդին, որ լաց լինին իւրեանց ուրատի կամցածի պէս, և ասումնին միմանց. նույն պիտոյ է այս մեր փոքրիկ քսրը մեզանից աւելի երջանիկ լինի, մի թէ մեք աւելի սիրարժան չենք քան թէ նա: Կ'մ քսր, ասաց աւելի հասակաւորը, ևս մի բան եմ մօսածել. աշխատենք յիտ պաշել դորան ութ օրից աւելի: գորա յիմար գաղանը կը բորբոքվի բարեւթենով, ըստ որում թելլան ուխտազանց գտանված կը լինէր, և կարելի է, թէ կուլ տայ նորան: Աւդիլ ևս ասում, քսր իմ, պատասխանեց միւսը: Այս խորհրդով պիտոյ է մեծ փայտայանք ցցյ տալ նորան: Այս վճիռը կապելով իւրեանց մէջ, զնացին նորա, և այնքան սէր ու զգումնք ցցյ տուեցին թե լլային, որ նա արտասուեց ուրախութենից, Պայմանեալ ութ օրը անցած, այն կեղծաւոր քսրերը փետքին իւրեանց մաղերը և այնքան տրտում ձևացան նորա հրաժարման վերայ, որ նա խոտացաւ մասլ միւս ևս ութ օր:

Դայց թելլան ինքը իւր անձը նախառումքը, որ իւր բացակայութենովը պիտոյ է մեծ ցաւ. և տրտութիւն պատմառէր իւր սիրելի գաղանին. այլւ ծանր էր թելլայի սրտին այդքան երկար զուրկ լինել նորա տեսութենից: Ցանեներորդ գիշերին, որ անցուցանումքը իւր հօր տանը, մի երազ տեսաւ նա, որպէս թէ ապարանքի այդումն էր և տեսանումքը գաղանը թաւալված խոտի վերայ և մերձ ի մահ, յանդիմանելով թելլայի ապերախտութիւնը: Թելլան վեր թռառ քնից և արտասուեց: Այս, մի վատթար աղջիկ եմ ևս, ասումքը նա, որ ցաւեցնումքի այնպիսի մի գաղան որ այդքան կամակատար էր դէպ ի նա: Մի թէ յանցաւոր էր նա, լինելով տղեղ, և հանձարով պակասաւոր. նա բարեսիրտ է, և այդ բանը աւելի արժանաւորութիւն ունի քան թէ բոլոր միւս բաները: Ընդէր չը կամցայ ևս ամուսնանալ նորա հետ: Ես աւելի երջանիկ կը լինէի նորա կենացութենով, քան թէ իմ քսրերս իւրեանց ամուսինների հետ: Աչ թէ ամուսնու գեղեցկութիւնը կամ թէ նորա հանձարն է, որ բազ դառորումք մի կին, այլ նորա բնաւորութեան պատուականութիւնը, նորի առաքինութիւնը, նորա կամակատարութիւնը. և այն գաղանը ունի այդ բոլոր գովանի յատկութիւնը: Այս շունիմ ևս սէր դէպ ի նա, բայց ունիմ յարդութիւն, բարեկամութիւն և երախտագիտութիւն գէպ ի նա: Արեմն չէ պիտոյ անբաղդ կացուցանել նորան. ապա թէ ոչ, պէտք է բոլոր կեանքիս մէջ յանդիմանէի իմ անշնորհակալութիւնը: Այս բաները ասած, խէցյն վեր կացաւ թելլան, զրեց իւր մատանին սեղանի վերայ և հանգստացաւ: Մտած չը

մասած մահմանի մէջ, իսկոյն տարաւ քունը. և երբ որ զարթեց առաւ-
լառուն, ուրախացաւ տեսանելով, որ գաղանի ապարանքումն էր: Կա
զգեստառորմեցաւ փառաւորապէս, որ քաղցրանայ հրեշի աչքին, և
մահու շափ տաղտկացաւ բոլոր օրը, ապասելով երեկոյի ինն ժամին.
բայց այս զարթեց և պատի ժամացցցը, բայց գաղանը չերեւեցաւ. ա-
մանեին: Բելլան երկիւղի մէջ էր, մի գուցէ այն գաղանը մնած
լինէր նորա կարստից. ման եկաւ բոլոր ապարանքի մէջ, մեծ աղա-
ղակ բարձրացնելով, և յուսահատութեան մէջ էր: Ըստ որոնելուց
յետոյ, միոք բերեց իւր երազը և վաղեց այդին դեպ ի ջրանցքը,
ինչ տեղ տեսած էր նորան երազի մէջ: Այս տեղ, խղճալի գա-
ղանը գլորիած էր գետնի վերայ, առանց զգացյութեան, և երևո-
մէր մահացած: Բելլան վայր ընկաւ. նորա մարմին վերայ առանց վա-
խենալու նորա կերպարանքից, և տեղեկանալով, որ դեռ ևս զար-
կումէր նորա սիրտը, ջուր վեր առաւ ջրանցքից և ցանեց նորա գըլ-
խի վերոց: Կիսամեռ գաղանը բացեց աչքերը, և խօսեց այսպէս. ովլ
բելլա, զու մուացար քո խօսումը. զրկիլով քեզանից և ըլ զսա-
նելով մսիթարութիւն, հաւանեցի յանձն առնուլ սովամահ լինել:
բայց ևս մեռանումեմ խաղազ սրտով, որովհետեւ արժանացայ միւսան-
գամ տեսանել քեզ: Ոչ. իմ նազելի գաղան, զու չես մեռանելու,
ասաց բելլան. զու կապրիս, որ փեսայանաս ինձ. այսուհետեւ տա-
լիս եմ քեզ իմ հարմական սերը, և երգումն եմ ուտում, որ ես
այժմ քոն եմ: Բելլան այս խօսքերը արտասանած, ապարանքը իս-
կոյն զարդարմեցաւ ճրագներով, արուեստական կրակներ, նորազա-
ծութիւնք և պատարաստութիւնք գուշակումէին մի աօնախմբու-
թիւն: Այս բոլոր հրաշալի տեսնիլները չը կարողացան զրաւել Բել-
լայի աչքերը. նա դեռ ևս որոնումէ իւր սիրելի գաղանը որի մերձ
ի մահ դրութիւնը գող էր ձգել նորա սրտի մէջ. բայց ինչպէս զար-
մացաւ բելլան, երբ որ, փետանակ կարծեցեալ գաղանին, տեսա-
խիր ոտքի առաջն մի թագաւորազն պատանի, աւելի հրաշալի գե-
ղեցկութենավ, քան մէ սիրոյ աստուածը, որ չնորհակալութիւն էր
մատուցանում բելլային, կախարդութեան ընթացքը վերջացնելու
համար: Թէպէտ այս թագաւորազը արժանի էր բելլայի բոլոր ու-
շադրութեանը, բայց նա չը կարողացաւ առանց հարցուիրոքի թո-
ղուլ գաղանի աներեւութանալը: Ահա նա ձեր աչքի առաջն է, ա-
սաց նորան իշխանազը. մի չար կախարդ կին գատապարտել էր ինձ, որ
մնայի այդ գաղանի կերպարանքի տակ, մինչ որ մի գեղեցիկ աղջիկ
հաւաներ ամռանանալ իմ հաւան, և նա պատուիրել էր ինձ, որ ցայց
չը տամ իմ հանձարը: Այսպէս, աշխարհիս մէջ չը կար ոչ ոք բաց

ի քեղանից ոյնքան բարեսիրտ որ կարողանար ճանաչել իմ բնաւորութեան քաղցրութիւնը. և ես մատուցանելով քեզ իմ արքայական թագը, շեմ կարող դեռ ևս լցուցանել ոյն շնորհակալութեան հարկը, որ ինձանից կը վայելէր քեզ:

Ա ԵՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԺԻՆ.

Ի ԵԼՊԱՆ զմայլած լինելով այս տեսարանի վերայ, ձեռքը տուեց թագաւորակնին և բարձրացրեց նորան. նորա միասին զնացին զեզի ապարանքը, և թելլան անոպատելի ուրախութեան մէջ էր, տեսանելով մեծ դաշինումը իւր հայրը և իւր բոլոր ընտանիքը, որ այն, երազի մէջ երեած, զեղեցիկ կինը կախարդութեամբ տեղափոխել էր ապարանքի մէջ: Ավելի թելլա, ասաց նորան ոյս կինը, որ մեծ կախարդուհի էր, եկ, ստացիր այն վարձատրութիւնը որ զու ինքնդ ընտրել ես քո համար. զու նախարատի համարեցիր առաքինութիւնը քան թէ զեղեցկութիւնը և հանձարը. այժմ արժանի ես զու այս բոլոր յատկութիւնները գտանեն միաւորված մի հատ մարդու մէջ: Դու պիտոյ է գտանաս մեծ թագուհի: ես յօյս ունիմ որ թագաւորական աթոռը չէ աւերելու քո առաքինութիւնքը: Բայց դուք, ով տիկնաշը, ասաց կախարդ կինը թելլայի երկու քցրերին: ես գիտեմ ձեր սիրու և այն բոլոր շարութիւնը, որ բունաւորված են նորա մէջ. գարձեք դուք երկու արձանք, բայց պաշեցեք ձեր բանականութիւնը այն քարի տակ որ կը շրջապատէ ձեզ: Դուք կանգնած կը մնաք ձեր քուեր պալատի առաջն, և ես ձեր վիրայ ոչինչ պատիմ չեմ զնում, բացի նորանից, որ լինէք վիզայ նորա բաղդասորութեանը: Դուք ոչինչ կերպով չէք կարող միւսանգամ ստանալ ձեր առաջին կերպարանքը, եթէ ոչ. խօսառվանելով ձեր սխալները. բայց ես շատ կասկածում եմ, թէ մի գուցէ մնայիք դուք միշտ քարեղեն արձաններ: Այն կարելի է ուղղել իւր ամրաբաւանութիւնը, իւր բարկացեռութիւնը, իւր շատակերութիւնը և ծուլութիւնը, բայց հրաշքի պէս մի բան էր, փախել չար և նախանձու սիրու: Այն բոլէին կախարդ կինը զարկեց գաւաղանով, և այս դաշինի մէջ եղած մարդիկը տեղափոխեց արքայազնի թագաւորութեան մէջ: Կարա հպատակքը ուրախացան տեսանելով նորան. նա ամուսնացաւ թելլայի հետ, և սոքա ապրեցին շատ երկար և կատարեալ երջանկութեան մէջ, որովհետեւ նոցա երջանկութիւնը հիմնաւորված էր առաքինութեան վերայ:

5. ԵՐԵՒ ՉԱՆԱՌԵՐԻ ՀԱ.

Եղած է մի մարդ, որ շատ ունեօր չէր. աս ամուսնացաւ մի զեղեցիկ կնոջ հետ: Մի զիշեր, ձմբան մէջ, նասած կին նորա կրա-

կի մօտ և խօսումնեին իրեանց դրացիների բաղդաւորութեան վերայ, որ աւելի հարուստ էին քան թէ ինքեանք: Ա՞չ, եթէ կարողանայի ես ձեռք ըերեւ այն բոլոր բաները որոնց ցանկանումներ սիրոս, ասաց կինը, ապա աւելի երջանիկ կը լինեի քան թէ այս բոլոր մարդիկը: Բայց ես, ասաց տղամարդը, կը ցանկանայի կախարզների կացած ժամանակներումը լինել, և հանդիպել նոցանից մինին, որ մարդասիրութեամբ կատարէր իմ ամեն մի արած խնդիրս: Կայն բռպէին երեցաւ նոցա առաջն մի շատ գեղեցիկ կին, որ տասց նոցա, ես կախարդ կին եմ և խօստանումն պարզեւ ձեղ այն առաջն երեք բանը, որ կը խնդրեիք: Բայց զդուշացէք. Երեք բան խընդրելոց յետոյ, ես չեմ չնորհելու ձեղ ոչինչ միւս բան, կախարդ կինը աներևութեանցած լինելով, երկու ամուսնութը շատ մեծ դժուարութեան մէջ էին: Իմ կողմից, ասումքը կինը, եթէ կարողանայի ես, պիտին թէ ինչ պիտոյ էր խնդրել. բայց զեռ ես չեմ խընդրում: Խճ երևումէ, թէ չը կար աւելի լաւ բան, քան թէ լինել գեղեցիկ, հարուստ և արժանաւոր: Տղամարդը պատասխանեց. թէ ունենայիր դու այդ բարութիւնը, ոյնու ամենայնիւ կարելի էր հետանգանալ, վշտանալ և մեռանել մանուկ հասակի մէջ: աւելի խելացի կը լինէր, խնդրել առողջութիւն, ուրախութիւն և երկար կեսանք: Բայց ինչ օգուտ երկարակեցութիւնը, եթէ աղքատ էինք մէք, ասաց կինը. զորանով կարելի էր աւելի և վաստարադդ լինել: Արգարեւ, կախարդ կինը պիտոյ է խօստանար չնորհել մեզ մի տասերկու բան, որովհետեւ կար մի տասերկու բան որոնց կարու էի ես: Այդ ճշմարիտ է, ասաց տղամարդը, բայց զործ զննելք ժամանակը, պիսորից մինչև վաղիւը քննենք այն երեք բանը որ առաւելազես հարկաւոր էին մեզ, ապա խնդիր առնենք: Այդ մասին կը մասածեմ ես բոլոր գիշերը, ասաց կինը, բայց մինչև ժամանակը կը հասանէ, վառենք կրակարանը, բատ որում ցուրտ է: Այս միջոցին կինը վեր առաւ ունելին և յարմարեց կրակը, և տեսանելով որ կրակարանի մէջ լաւ վառվել էր փայտը և կարմիր ածուխ շատ կար, խասեց առանց մասածելու: աչա՛ մի պատուական կրակ: Կրանի թէ ունենայինք մի լաւ երշիկ մեր երեկցյան հացի համար, մէք կը խորովէինք նորան հեշտութեամբ: Այս խօսքը բերանից հանած, խակըն վայր ընկաւ: մի երշիկ կրակարանի ծխանցքից: Կորչէ, զնոյ այդ շատակերը, և իւր երշիկը նորա չետ, ասաց տղամարդը, նախատելով իւր կիս անխել խնդիրը, այնուհետ զայրացած էի, որ կը ցանկանայի, որ այդ երշիկը կաեվէր քթիցդ: Այն բապէին հասկացաւ տղամարդը, որ ինքը ես առաւել խելազար էր բան թէ իւր կինը.

պատճառ, այս երկրորդ խնդրուածքովը, երշիկը թռառ և կախվեցաւ այն ողորմելի կնոջ քթից։ Այս ի՞նչ վասարազգութիւն է, աղաղակեց կինը, դու մի չարեացակամ մարդ ես, որ ցանկացար երշիկը ամրացած տեսանել իմ քթիս վերս։ Հաւասացնեմ քեզ, սիրելի՛ կողակից, երբէք մասած չէի ես այդ բանի վերս, ասաց աղամարդը, բայց ի՞նչ ճար կար. ես կը խնդրեմ մեծամեծ հարատութիւնք և կը հրամացնեմ շինել մի տակեղն պահարան, որի մէջ կարող էիր գու փակել քո քթի երշիկը։ Զգուշացիր դորանից, կը քինց կինը. պատճառ, ես մահու կը տամ իմ գլուխը, եմէջ հարկաւոր էր ինձ ապրել այսպիսի խայտառակութեան մէջ, Այսուհետեւ մնումէ մեզ մի հատ խնդրուածք. թող որ ես առնեմ այդ խնդիրքը. պար թէ ոչ, կ'երթամ, վայր կ'ընկնիմ պատուհանից։ Այս խօսքը ասած, վայեց կինը դեպ ի պատուհան, բայց նորա մարդը որ սիրումէր նորան, ձայն տուեց. կացիր, սիրելի կին. ես տալիս եմ քեզ աղատութիւն ցանկանալու ի՞նչ որ կամնայիր։ Ապա ուրիմն, ասաց կինը, ցանկանումէի, որ այս երշիկը քթից վայր ընկնի դեպ ի գետին. իսկոյն ցած ընկառ երշիկը. և կինը որ խելացի էր, ասաց իւր տղամարդին։ Այս կախարդը ծաղը է արած մեր վերս և ունէր այդ մասին իրաւունք։ Կարելի է, որ մեք լինէինք աւելի վասարազդ, եթէ աւելի հարուստ լինէինք քան թէ այժմ։ Չէ. սիրելի՛ ամուսին, պյուսուհետեւ չը ցանկանանք ոչինչ բանի, ոյլ բաւական լինինք նորանով, ի՞նչ որ հաճոյ էր լսաւուծուն ուղարկել մեզ, Այժմ վայելնք երեկոյնան հացը մեր երշիկով, ըստ որում մեր խնդրուածներից չը մեաց մեզ ոչինչ բաց ի սորանից։ Տղամարդը մոսածեց, որ իւր կինը ուղիղ էր ասում։ Նորա հաց կերան ուրախութեամբ և մոռացութեան տուեցին այն բաները որ կամնանումէին խնդրել։

6. Փարէի այշեդաշ.

Վակորի Մարկիզը պյուխացած լինելով, ունէր մի մանուկ որդի, Մարկիզը յիսուն տարեկան էր, երբ որ մեռաւ նորա կինը, և թէպէտ սա մի շատ պատուական անձն էր, բայց Մարկիզը չէր ցաւում այդ զրկանքի վերս, պատճառ որ ծառայ էր զարձած բոլոր ախտերից գուցէ թէ առաւել վատթարին, այսինքն ժլատութեան։ Այլև պատճումէին այն գեղումը, որի կալուածառէրը այս Մարկիզն էր, թէ սա իւր զարշելի արատովը անբաղդացուցել է մարկիզուհին որ տրոտմէլով և ցաւելով այն բանի վերս թէ ամուսնացած էր պյուխից արծաթուապաշտ մարդու։ Հետ, վախճանվեցաւ։

Որպէս և էր այդ համբաւը, թող լինի. բայց Մարկիզը զըր-

կլած լինելով իւր ամուսնուց, կարծումքը թէ զօրանով փոքրացած էին իւր գերդաստանի ծախը և կարելի էր աւելի արծաթ յետ ձգել. պյուռչեան առաւել ևս անձնատուր եղաւ նա մի ամենախայտառակ ժշատութեան: Չը կամենալով բաղմաթիւ սպասաւորներ պահել, թող տուեց որ իւր կալուածքը, իւր պյուն և ապարանքը խանգարվին. տեղից վեր էր կենում ցերեկով, գնումքը խսկցն քնելու, երբ որ մթնացած էր, ուտումքը փոքր, ըմպումքը ջուր և չունէր իւր վերայ մի կոտոր հանդերձ որ չը լինէր ծակծակած կամ կարկատած. վերջումքը մինչև պյուն աստիճան հասաւ. նորա խնայութիւնը, որ վարժապետին վարձ չը տալու համար, ամենեին անդաստիարակ թողեց իւր որդին. գրել ու կարդալ ձրի ուսուցանումքը Մարկիզի որդուն դիւղի վարժապետը, կամնալով հաճայանալ իւր պարոննին. պյու վատարազդ մանումքը կրումքը, որպէս իւր հայրը, հնոտի հագուստներ և օրէ որ աւելի յիմարանումքը, խաղալով գիւղան երեխանների հետ:

Ի՞սպաց Մարկիզը ունէր մեծ գըլք. ինչ սգուտ ունէր պյու հարլստումենից. թէ ինչ սգուտ ունէր, աչա պատմեմ քեզ, խելացի՝ ընթերցող. Այդ Մարկիզը իւր ապարանքի հիմնաշենքումը հրամայել էր ամուր քարից պատրաստել մի գետնատուն, որի մուտքը յայտնի էր ինքնան միայն. դորա ներսումքը դրած էին շատ կարսաներ լցրած ոսկով ու արծաթալ, և ոյն դռւը, որանով փակվումքը գետնատունը, այնպիսի հնարագիտութեամբ կաղմած էր, որ եթէ մինը կամնար խարերայտական կերպով բանալ նորան, խսկոյն պիտոյ է փակվէր մի երկաթի վանդակի մեջ, որ հողի տակից դուրս էր արձակվում: Մարկիզը կամնալով բանալ դռւը, յառաջուց բաց էր քերում ոսքի տակի հողը, յետոյ երեւումքը մի պղնձի կոճակ, որ նա դէպ ի մի կողմ ոլորելով զապումքը ճնճանոցը և հաստատումքը զուգակշխուը որանից պյու երկաթի վանդակի ստանումքը իւր շարժողութիւնը: Առանց պյու զդուշութեանը, բաւական էր միայն չօշափել փականքը և խսկոյն ներգործումքը մեքենան:

Մարկիզի մի սպասաւորը, որ տեղեակ չէր պյու հնարագործութեանը, մի թեմե գողութեան պատճառով, արտաքսված լինելով Մարկիզի մօտից, մօրումքը դրեց վրէժիսորդիր լինել աշխատելով բանալ նորա դանձը: Այս սպասաւորը շատ անգամ լրտեսած էր իւր պարոնի քամակից, երբ որ սա ցած իջանելով դէպ ի իւր գետնատունը, բացումքը դռւը, փակումքը նորան և ամրող ժամեր մնումքը պյուն տեղ: Այդ վատթար ծառան, որ յառաջուց փականադործ էր եղած, պատրաստեց ամենայն տեսակ սուս բանալիք, ապա ներս

տողաց տպարանքի մէջ և ցած իջաւ զէս ի գետնատունը: Կամիս և յառաջ բացեց մի գուռը, տպա երկրորդը, յետոյ երրորդը, որով հետեւ կոչին երեք դուռն, մինչև հնակումներ գանձառան գուռը: Մատենալով նորան, և կանենալով իւր բանալիքը փորձել, խոկոյն բարձրացաւ երկամի վանդակը և դողը փակվեցաւ նորա մէջ, որ տանջմի: յուսահառութենով:

Խնչուս զարմացաւ Մարկիզը, երբ որ միանդամ կամենալով տեսութիւն գնալ իւր գանձին, տեսաւ ցածումը մի գող որ փակված էր բանտի մէջ: Աղաղակեց խոկոյն, զայրացաւ և աչ տուեց սորան, բայց մոտածէլով որ, եթէ մասնէր սորան դատաստանի ձեռքը, այն դեռատան և երկամի վանդակի գաղանիքը պիտոյ է հրատարակվէր. ոյս պատճառով արձակեց նորան և պատուեր տուեց որ ոչ ում չառ այս անցքը: Աւխոս զրեց գողը և պահպանեց նորան իւր յատուկ ապահովութենան համար:

Տարուց տարի յաւելացաւ Մարկիզի գանձը, և ոյս միջնորդին նորա որդին գարձած էր տան և ոթ տարեկան և էր մի մեծամարմին, վայելակազմը և բարետնեսիլ երիտասարդ, բայց անշատ տղէտ էր: Սա զգալով իւր մէջ ախտերի զարթնութը, սկսեց կոռել իւր ծնողի հետ նորա ժամանական վերայ: Մարկիզը շատ զարմացած իւր որդու յանդիմանութենների վերայ, սկսեց վարդիլ նորա հետ առաւել խոսութենով. սորա հետեւնքը այն եղաւ, որ երիտասարդը, ինչ որ տան մէջ ընկնումներ նորա ձեռքը, տառ և ծախուց, Հայրը շատ բարեկացաւ ոյս բանի վերայ, բայց որդին ընդդիմացաւ, և ոյսպէս խոսվութիւնը անպակաս էր ապարանքի ներսումը:

Ո՞հ օր, երբ որ կոմիր սովորականից գուրս տաքացաւ, կամենմեր Մարկիզը, որի հայրական սիրոս քարացել էր այն տրատից որ աիրումներ նորա վերայ, իւր որդին գուրս ձգել տանիցը, և հրամացեց նորան որ հեռանայ և միւսանդամ ուոր չը կոտէ նորա սեամի վերայ: Նրիտասարդը արհամարհաբար ծիծաղեց և երգումն կերաւ թէ այնու ամենայնի մեալու է: Մարկիզը վեր առաւ մի քաւազան և կամենմեր զարկել նորան, բայց որդին չափից ու սահմանից գուրս դալով, հայհցէց իւր հայրը և վերջումը առաց նորան, թէ ինքը քաջ տեղեւէ էր նորա թաքուցած գանձին և աչա մի քանի բան այն տեղից հանել է, և նորա բոլոր գանձերը դուրս հանելու է: Ժլատ Մարկիզը լսելով այս, իւր համար զարհութելի, սպառնալիքը, կառաջութեամբ գուրս է վաղում սենեկիցը, փակումէ գուռը, երկու անդամ՝ ոլորելով փականքը, թօղումէ իւր որդին սենեկի մէջ փակած և շատագումէ զէս իւր գետնատունը: Բարկութիւնը յիմարի-

ցնումէ նորան, նա չդիմէ իւր արածը, մոռանումէ սովորական դդումիւնը և բանտարկվումէ երկաթի վանդակի մէջ, թէ ճնշգէս կատաղումէ և աղաղակումէ Մարկիզը ոյս դրութեան մէջ, շատ հեշտ էր հասկանալ, բայց ողորմէի Մարկիզի ձայնը ոչ ով չէ լսում. նա մնումէ փակած ուր փակվել էր:

Վայովէս, հայրը և որդին բանտարկված էին, ամեն մինը իւր կողմից բայց որդին պատանի և յաջողակ մարդ էր. սա երբ որ անսաւ թէ գիշերը մօտենումէ և հայրը չէ վերադառնում, որ աղասէ նորան, հաւաքումէ մի քանի անկողնի պատառներ, կապումէ նոցա վերջերը միմեանց հետ, և որովհետեւ առաջին յարկումն է, հեշտութեանով ցած է իջանում դէպ ի այգին, վազումէ դէպ ի կերակրատոնը, դէպ ի սրահը, դէպ ի ամենայն կողմէ և հարցնումէ թէ ուր է իւր հայրը, Սպասաւորքը չը գիտեն, ինչպէս նա: Բոլոր գիշերը անցանումէ հարցուփորձով, և երիտասարդ Մարկիզը, որ մեծախօսութեամբ պարծեցած էր թէ գիտէ իւր հօր թագուցած գանձը, չը կարողացաւ գուշակել թէ ինչ տեղ էր ընկել իւր հայրը: Անց է կինում ուժ որ, առանց ծանօթութիւն ստանալու ծեր Մարկիզի մասին: Աերջապէս լսումէ այս բանը ապարանքի փականագործը, որ եկած էր մի քանի բաներ նորոգելու համար: Այս մարդը, որ իբրև գաղտնիք շինած էր յիշեալ վանդակը և նորա սարք ու կարգը, իմանումէ իսկոյն թէ ինչ ձախորդութիւն պիտոյ է պառահած լինի. ասումէ պատանի Մարկիզին: արի՞ իմ՝ քանիակից. այս երկուքը գտանումն անբաղդ Մարկիզը սովից ու յուսահատութենից մնաց իւր բանտի մէջ, և ինչպէս, ով արդարագատ լսուում: ամենեին մատ նոյն ոսկուն և արծամին որ չէին կարողացել մի պատահ հաց տալ սոված Մարկիզին: Այս անցքը սոսկալի է, բայց կորող էր խրատ լինել այնպիսի մարգերի, որ հազարներ հազարների վերաց կուտակումն առանց ինքեանք վայելելու և իւրեանց ընկերների կեանքը վայելացնելու:

Որդին, աւելի լաւ բնաւորութեան տեր քան թէ հայրը, դառնապէս արտասուեց իւր ծնողի մահը, փառաշեղ հանդիսով թաղեց նորան և տիրապետեց գանձին. հրամայեց կործանել զետնատռնը, այն երկաթի վանդակը և նորա բոլոր սարք ու կարգը: Ինչ ուրախութիւն այս երիտասարդի սրտին. ունենալ մի մեծ բազմութիւն լցրած կարաների, միները սոկի մանէթներով, միւսերը արծամին մանէթներով. սորա արծամին մանբագրամեերավ, նորա ամենայն տեսակ գահէկաներով: այն որչանց հագի ժլատը հաւաքել էր մինչեւ հինգ կողեկանոցներ: Այնուհետև երիտասարդ Մարկիզը, որ հա-

մարտմբ իւր անձը հարուստ մինչեւ իւր մահը, զնեց մի փառառը ապարանք Փարիզի մեջ, սկսեց տանախմբութիւնը կատարել, մէծ բազ մութիւն բնդունել իւր մօտ և յիմարաբար ռատել ու խմել իւր դպրը բարեկամենի և նենգաւորների հետ, որ մինը միւսից առաւել կողոպատմենին նորան Որովհեան պատանի Մարկիզը յիմար ու տգետ էր, ոյցի լութիւն էին գալիս նորա մօտ, ոչ թէ նորան պատուելով և սիրելով, այլ, սորա հակառակ, յայտնի ծիծալումենին նարա յիմարութեան վերաց, բայց հաճոյանումենին նորան, որովհեան բաղդաւոր էր:

Պատանի Մարկիզը իւր հայրենական ապարանքը նորոգել ու զարդարել էր տուած. այս տեղ անցուցանումը ամենայն առան իւր բազմամի կարծեցեալ բարեկամերովը, և բոլոր գիւղը գովասանումը նորան, ըստ որում նա բարեկեցութեան և ուրախութեան պատճառ էր այն տեղ: Երդարձե պիտօյ է խոստվանել, թէ նա բարի սիրա ունէր, այն անշափի բարի սիրո, իւր արծաթը անխափի առասանեանելով ամենայն մարզու որ խնդրումը նորանից: Ծառ տուրք էր առջիս նա իւր աշխարհումը, հազարաւոր բարեգործութիւնը էր ցուցանում անբաղդացած գերգասասաների, թէ բարի և թէ վարանի համար զուրս էր տալիս արծաթ, առանց հաշիւ ու համար տեսանելու իւր հետ:

Վի առաւօտ, երբ որ նա զրօնումը արձակ դաշտումը, տեսաւ մի աղքատ մանուկ որ լաց էր լինում դառնապէս արտասուելով: Ինչ ցաւ ունիս դու, իմ բարեկամ, ասաց նորան երիտասարդը մեղմապէս: Աղորմած պարոն, աղաղակեց մանուկը խոնարհելով ծնկերի վերաց, ողորմած պարոն, ցաւակցութիւն ունեցիր իմ հետ: Ինչ ցաւ ունիս դու, ինչ է պատահել քեզ, կրկնեց երիտասարդը: Աղորմած պարոն, ասաց մանուկը. իմ անունս Հարել է. ոչ հայր ունիմ և ոչ մայր, գիւղացիքը խոնարհով իմ վերաց յանձնումենին ինձ իւրեանց ոյծերը որ ես ամեն որ տանումի գեպ ի դաշները արածելու: Այդ ոչինչ վաս բան չէ. ինչնու ես լաց լինում: Տես ահա, ողորմած պարոն, երեկ պատահեց ինձ ձախորդութիւն և ես կորցրեցի իմ այծերից մինը որ պատկանումէ Մարթա պառաւին. զիտէք դուք այն պարարա այծը որ առաս կաթն էր տալիս: Ես երբէք տեսած չեմ նորան, մանուկ. ապա ինչ կոյ: Աղորմած պարոն, ահա Մարթա պառաւը պահանջումէ, որ հատուցանեմ իւր այծի արժեքը. զատասատան արա, ողորմած պարոն, արդեօք կարաղ եմ ես այն տասն կամ տասներկու զահեկանից որ վաստակումէմ որը, վճարել այծի զինը: Ասա ինձ, քո անդզաստութենո՞վն ես կորցրել այծը,

եմէ մի այլ կերպով։ Աղօրմանծ պարոն, Արթուր պառաւը յանձնել էր ինձ այծը ոչ թէ տառասոից, այլ 9 ժամից։ Նո քնած մինելով դաշտումը, բերել էր իւր այծը, ինչպէս ասումէ. չը կամենալով արթնացնել ինձ, թողած էր այծը հօտի մէջ. բայց առաջի Աստուծոյ, ողորմած պարոն, երգումն եմ ուստիմ, որ աչքս բաց արած, չը տեսայ այդ այծը, այդ թշուառ անսառունը։ Այլ իմ Աստուծ, երանի թէ ունենայի մի երամակ այծեր, ես չէի տանջելու պյապիսի մի խզմալի մանուկ, որ ահա բառական թշուառ էր, հարկադրութան լինելով վաստակել իւր օրական հացը։

Երիտասարդի գութը շարժվեցաւ, և կամելով մի բարեգործութիւն կատարել, որ յաճախ պատահումեր նորան, բայց չոփից ու սահմանից գուրս և շասյլարար, տուեց մանուկ այծեպանին իւր քըսակը ասելով. առ քեզ ահա, դորա, մէջ կան 25 լուիդոր. եղաց տօնավաճառի օր է, այն անդ վաճառելու են այծեր. գնիր քեզ այնքան, ինչքան կարող էր եւ վճարիր քո պարագը, և բաղդասոր եղիր։ Երեխան մնաց հիացած, և երիտասարդը հեռացաւ, որ չը լուն նորա շատախօս շնորհակալութիւնը։ Այս բարեգործութիւնը անտարակոյս գովանի է, բայց արած է անխօրհրդարար. արդեօք երիտասարդը ծանօթ էր այն մանուկի որպիսութեանը, որ կարող էր լինել տասն և մի տարեկան։ Երկրորդ, ինչպէս վարդ ուներ այդ մանուկը և ուղիղ էր նորա ասածը. այլէ, մի թէ աւելի լաւ չէր գնել նորա համար այծեր, յանձնել նորան և ապա նկատել թէ ինչպէս էր դործ զնում այդ պարգելը որ նորա համար թանգ արժեր. Բայց պյապիսի մտածութիւնք հետի էին այն երիտասարդից։ Նա վարվումէր, ինչպէս որ թելաղբառմէին նորան իւր գլուխը և սիրաը, և նա ուրախ էր բաղդասոր կացուցանելով այս փոքրիկ այծեպանը։ Մի քանի բոպակ խօսքը կորենք այս մանուկից և հետեւնք մեր շասյլ և վասնող երիտասարդի քամակից որ գործումէ յիմարութիւնք յիմարութիւնների վերայ։ Բայց ոյս բոլոր բանները մանրամասնարար պատճեն ձեզ մի շատ գժուար կատարելի գործ էր. բառական էր ձեզ իմանալ պյապան, որ թեղթախաղութիւնը, բարեկամները, ամենայն տեսակ վնասակար վայելչութիւնքը նուազեցուցին նորա ունեցած արծաթն ու ուկին։ Նա պարագ արեց իւր անշարժ գոյքը գրաւ գնելով, և պայմանեալ ժամանակին չեղաւ պարտահատուց. կարճ ասեմ, նո զբոկիցաւ։ իւր բոլոր կալուածներից և ընկաւ մի զարհութելի չքառորդութեան մէջ։ Այժմ քան և վեց տարեկան էր նա. ուժ տարու մէջ վասնելով սպառնել էր այն ահագին ժառանգութիւնը որ նորա հայրը թողել էր նորան։ Այնուհետեւ հրաժարվեցան նորանից

իւր բոլոր բարեկամները, և նա վերջին յուսահատութեան մէջ էր պատճառ, չը գիտէր ոչինչ արտեսա, որովհետեւ ոչինչ բան ուսած չէր, ուրիմն և չը զատա ոչ մի պաշտօն և ոչ մի պարապումն որ հասուցանեին նորան ապրուսա: Այսպէս, երբ որ մի քանի ունեցածները, որ գեռ ևս մնումէին, ծախած էր, անմիտիմար սրտով հրաժարվցա Փարիզից անիծելով սորան, և կամցաւ ամենեին հեռանալ ընկերութենից և առհասարակ մարդերիցը, որոնց շատերը առելի կերպով խարած էին նորան: Երկար ժամանակ թափառելով, դադարեց մի հեռաւոր դաւառում մի բարի պառակի դրան առաջեւ, որ պատրաստումէր կաղամիքի թան: Այս աեղ կանգնած Ասկօրի մեծանուն երիտասարդ Մարկինը, վաստակութեան և չբաւորութեան մէջ, շատ երջանիկ կը համարէր իւր անձը մասնակից լինելով ազքատի խոշոր կերպակրին: “Կերս մտաւ և հարցրեց, արդեւք կամէին տալ նորան արծաթով մի փոքր ունելի բան, նորա պատված զարութիւնքը վերստին նորոգելու համար: Բարի պառաւը ասաց թէ պատրաստ էր ընդունել նորան. ճաշու հացիկերութիւն տուեց նորան. յետոյ ցուցանելով ասարականին իւր բնակարանը, տարաւ նորան զէսի ի մի փոքրիկ մարդարարդ սենեակ իւր աւերակ տան քամակումը և ասաց թէ կամք ունի այս փոքրիկ սենեակը տարաւ գեղցիկ միջոցին վարձու տալ մի մարդու որ կը ցանկանար վայելել դաշտի ողը:

Եշրիտասարդը վճռեց իւր մէջ, որ առանձնական կեանք վարէ, անշայտութեան մէջ, որ և իցեւ պատասխարանում, ուր կարող էր միայն հեռի մեալ մարդկային հազրդութենից: “Նա վարձումէ այն սենեակը և իւր հացիկերութեան համար թոշակ է սահմանում այն պառակին, առանց մասքերելու թէ մի քանի մանեթով որ ունէր քսակի մէջ, չէ կարող երկար ժամանակ ապրել: Բայց երիտասարդի սրտումը կար մի զարհութելի խորհուրդ, այսինքն անձնասպան լինել, եթէ չունէր աւելի ոչինչ ապրուսա: Այն բարի պառաւը մեծապէս ուրախ էր ընդունելով իւր մօտ այդ երիտասարդը և աշխատումը ամենայն տեսակ փոքրիկ բաներով համցյանալ հիւրին, այսպէս, անց կացաւ երկու ամիս, և պառաւը ոչինչ հատուցումն չէր պահանջած նորանից:

Ո՞ի երեկոյ, երբ որ երիտասարդը զբոսանք էր գնացած մի ախորժելի դաշտում, և ախօնը սրտով վերապատնումէր զէսի ի տուն, զարմացաւ լուելով մի ձայն, որ չէր նորան անծանօթ: Մի երամակ այծեր որ արածումէին այն աեղ, պատճառ տուեց նորան մօսածելու, թէ նոցա հովիւր հեռի չէր. և սա էր որ ուրախանայն երգումէր:

Երեք տարի էր, որ երիտասարդը չէր տեսած այն փոքրիկ այ-
ծեպանը որին բաշխել էր 25 լուիդոր, բայց նորա կերպարանիը
մնացել էին տպաւորված երիտասարդի յիշողութեան մէջ։ Նրիտա-
սարդը սկսեց խօսել ինքը իւր հետ. Աս Հարելն է, սա նա է ստու-
գապէս. սա դարձել է աչա տասն և չորս տարեկան, զօրացել է և
հասել է իւր շափին։ Այս ինչ բան է. մի թէ նա սուր աշխար-
հում էր, մի թէ այցերի երամակը իւր սեփականը չէր. մի թէ իմ
ընծայած արծաթը գործ է դրել վատմարատպէս։ Աչա երիտասար-
դի խորհրդածութիւնքը. բայց նա չը կամենալով յանձն առնուլ այն-
քան անարգութիւն, որ յառաջուց ողջըն տար այծեպանին, թո-
ղումէ որ սա անցանէ նորա առաջնից։ Մանուկ այծեպանը տեսա-
նորան, սաւնասիրտ նոյեց նորա վերայ և շարունակեց իւր ճանա-
պարհը երգելով իւր տաղի վերջը. Երածեցէք, իմ փոքրիկ այծեր,
աճեցէք, իմ գառնիկներ։ Այս ինչ բան է, խօսեց երիտասարդը
ինքը իւր հետ. մի թէ այդ տղան չը ճանաչեց ինձ. անկարելի է
ոյդ. ևս նորա գիւղառերն էի, նա բաւական յաճախ տեսած է ինձ...
Կա պիտոյ է լած լինի իմ ձախորդութեան համբաւը, և այս ողոր-
մելի փոքրիկը յանդզումէ արհամարչել իւր բարերարը. զա մի ա-
պերախտ հոգի է, որ կարող էի դասակից առնել միւս ապերախտներին։

Այս անակնկալ հանդիպումը անշափ ցաւեցուցիչ եղաւ երի-
տասարդին. մի փոքրիկ շինական, մի մանուկ, իւր հին գիւղացինե-
րի մինը պիտոյ է ոյժմ երեսը շրջէր նորանից, ողջըն չը տար նո-
րան, այս մի անամօթ կերպով նայէր նորա վերայ։ Վատարազդ
մարդը մեծացնումէ ամենայն բան որ տեսանումքը կամ թէ կարծումքը
թէ տեսանումէ. Նրիտասարդը յետ է գալիս տուն, տրում, սիրու
նեղացած, և շատ պատրաստ բռնութեամբ կարճել իւր կեանքը,
ըստ որում տարած էր այդպիսի անարդութեան։ Միւս օրին վաղ
խողրումէ նա պառախից, որ հաշիւը տեսանեն, որովհետեւ կամենու-
մէ նա հասուցանել վճարը. Ինչ է խօսում պարոնը, պատասխանեց
տանտիկինը. ևս ստոցել եմ իմ վարձը, և, առաջի բատուծոյ, շատ
առատ վարձ։ Խաղ ևս առնում դու, տանտիկին, ևս զեռ ևս ոչինչ
չեմ տուած քեզ։ Բայց մի պյու ոք վճարել է փոխանակ ձեր, ար-
ժանի պարոն։ Ամենայն երեկոյ բերումն ինձ քառասուն արծաթ
պարոնի հացիկրութեան և ինակութեան համար. պյօքան չէր վարձը
որ պայմանադրած է մըր մէջ։ Անտարակցոյ. բայց... Ուրեմն պարոնը
ոչինչ պարուական չէ ինձ, ամենենին ոչինչ, և ևս շատ շնորհակալ
եմ և ցանկանումէմ որ համոյ լինէր պարոնին աւելի երկար հիւր
մնալ իմ մօտ։ Այդ ինչ առապել է, որ դու պատմումս ինձ,

մայրիկ. ովլ պիտոյ է հոգաբարձու լինէր իմ համար և վճարեր իմ օմեւանի և կերակրի վարձը թէ ովլ այն անձը որ ինձ ըերումէ արծաթ, որ և խնդրել է, որ շասմ ձեզ ոչ նորա անունը և ոչ նորա պաշտոնը. ես առաջի լսուուծոյ երգումն եմ կերած, որ ծածուկ պահեմ այդ խորհուրդը, և կամք չունիմ երգմազանցութենով իմ հոգիս մշտնջնաւոր կրակին տալ Հաւաստի էք ամենեին, որ այդ արծոթը որոշած է իմ համար Ամենեին Հաւաստի. ամենայն երեկոյ գալիս է այն անձը և առումէ բնձ. աշա քեզ պարոն Ակօրեան Երիտասարդի պահպանութեան օրական վարձը. այսպէս չէ՝ ձեր անունը. ուրեմն աներկմու գիտեմ ես, ինչ որ խօսումնամ: Խոյց ովլ էր այդ անձը, կնամարդ թէ տղամարդ: Ոչ կնամարդ է և ոչ տղամարդ: Այդ ինչ խսպէ է. աշխարհի վերայ կան միայն երկու անոք. ձեր ասածը հիացք բան է... պարոն, ասաց տանտիկինը, ես աւելի բան չունիմ ասելու ձեզ. դուք պիտոյ է հիերիքանաք նորանով որ անվարձ ապրումէիր իմ մօս: Եթէ ես ունենայի մի այդպիսի բարի ողի որ ամենայն տեղ վարձահատոսյց լինէր իմ համար, ապա իմ սիրու չէր այդքան նեղանալու, ինչպէս երեւում թէ պարոնի սիրու նեղանումէ: Գորա պատմաւը այն է, որ դուք չէք զգում թէ ինչ պէս անարգված է զրանով իմ արժանաւորութիւնը: Այդ գեղեցիկ արժանաւորութիւնը. Եթէ մի մարդ ոչինչ չունի, առա լու էր յանձն առնուլ այն անարգութիւնը, որ մի այլ մարդ օգնական էր նորան: Եթէ մի մարդ ոչինչ չունի, ասումք դուք: Ակայ է Ասուած, իմ սիրելի պարոն, որ ես այլապէս եմ Հաւաստում քան թէ լսած էի չար բերաններից, ժանախուը դիպչի նոցա. իմ կարծիքս այն է, պարոն, որ դուք առաւել պատուելի մարդն էիք որ ծանօթ էր ինձ:

Պառաւ կինը Հաւաստա մնաց իւր կամքի վերայ, ծածուկ պահւելով իւր խորհուրդը. բայց Երիտասարդը փոխանակ շնորհակալ լինելու անանուն բարերարիցը որ հոգաբարձու էր նորա պիտոյը ներին, ևս առաւել վշտացաւ այդ բանի վերայ: Ակսեց Երեկոները և առաւատները նկատել, որ իմանաց թէ ովլ էր այդ օգնական բարեկամը որ զղորմութիւն էր տալիս նորան. Ակրատի պա բարեգործութիւնը ողղորմութիւն էր Համարում նա և կարծումէր թէ այս մարդը պիտոյ է լինի այն նենդաւորներից մինը, որ կողապտել էին նորան, որ և այժմ ցաւակցութեամբ կերակրումէր նորան. Խոյց ոչ ովլ չեկաւ այն պառաւի խուղը, բարի տանտիկինը դուրս էր գնում և ներս էր գալիս, միշտ միայն, և Երիտասարդը պիտոյ է մտածէր, թէ պառաւը պատմել է նորան մի առապէլ, միայն թէ պատմաւ լինէր մտածելու թէ պառաւը օդուտ ունէր այդ առապէլից:

Վիսեալ այս բովէից երիտասարդը անձնատոր էր մի տիտոր մասնածութեան, որ պիտօյ և գերեզման իջուցանէր նորան, եթէ նա իւր մէջ զնուած չը լինէր հրաժարվիլ կեանքից, յառաջ քան թէ կը հասանէր նորան մի հալող ու մաշող հիւանդութիւն։ Այս վատարազդ, նաւը կոտրած երիտասարդը, մի որ գաշտումը դանակով խոցուեց իւր մարմինը և արիւնաթաթաւ վայր ընկաւ, շինականներ որ գուրսից ճանաչումէին նորան, վեր առան տարան նորան այն բարի կնոջ տունը, ուր շուտով վաղեց և մանուկ այծեպանը լալով և գոռալով, գիւղի սափրաւերը որ և նորա վիրաբոյժն էր, գանչեցին, և սա խոստովանեց թէ երիտասարդի վերքերից ոչ մինը վտանգաւոր չէ։ Կրկին դարձուցին նորա ուշը իւր վերայ, և նա շատ զարմացաւ տեսանելով իւր մահճի մօտ նստած Հարելը։ Նս եմ, յոդոց հանելով խօսեց մանուկ այծեպանը, նս եմ որ ձեզ ձգել եմ այդ վտանգի մէջ. բայց իմ գիտաւորութիւնու բարի էր. ևս մասնեցի ինքս իմ մէջ, թէ պատուին պարոնը ամաչելու և յանձն առնուլ օգնութիւն և աւելի եմ կը նեղանոյ իմանալով, թէ ինչ մարդու ձեռք էր որ համարձակվումէր այդ օգնութիւնը հասուցանէլ նորան։ Այս ինչ բան է, Հարել, մի թէ զու էիր որ մինչեւ այժմ ինձ այս առարութեան մէջ... Այս, խօսքը կորեց պատաւը, զա է այն Հարելը որ ամենեքնանքս սիրութիւնը։ Արովչեաւ զա ամաչումը մնալ իւր գեղումը, ուր տեսած էին նորան որպէս երամակների պահապան միայն, այդ պատճառով տեղափոխ եղաւ այս տեղ իւր հօրենգրօր մօտ որ սկզբումը մէրժել էր նորան, որովհետեւ սա աղքատ էր։ Հարելը գնեց այս տեղ այծեր և պահումէր նորանց հետեւով թէ իւր յօժարութեանը, թէ սովորութեանը։ Կա տեսաւ ձեզ, ձանաչեց ձեզ, և զիսելով թէ ինչպէս ցաւելի գրութեան մէջ էր դուք, շինեց ինձ իւր խորհրդապահը և ստիպեց ինձ ամեն օր ընդունել ձեր մասին մի փոքր արծաթ, որ ստանումէր նա իւր այծերի եկամորդից։ Ավ հաղուազիւտ երախտադիտութիւն, ձայն արձակեց երիտասարդը. պատուակնան սիրտ, իմ սիրելի՝ Հարել, իմ միակ բարեկամ։ Վայ ինձ որ կարգացել էի ամաչել քո բարեգործութենից. զա արժանի է պատռելու, Մի փոքրիկ շինական մանուկ, մի այծեպան կրկին միտք է բերել ինձ և իմ բոլոր բարեկամները անտես են արել ինձ։ Երբ որ աղքատը բարեգործութիւնը ունի, պատասխանեց պատաւը, զոքա աւելի գերազանց են քան թէ հարսականների բարեգործութիւնը. ևս ասումէմ, եթէ աղքատը ունի մի քանի բարեգործութիւն. պատճառ, չար մարդիկ կան ամենայն պաշտօնի մէջ։

Եցրիսասարդը հետ զհետէ վերատին ստացաւ իւր առողջութիւնը շարէլի գովանի հոգաբարձութենով. այս բարի այծեպանը յետոյ սովորեցրէց նորան աշխատել, այլև մի փոքր վաճառաշահութիւն առնել. նա օգտակար եղաւ երիտասարդին իւր խնամատարութենով, իւր խորհրդով և արծաթով. և Ասկորեան պարոնը ամուսնանալով մի բարի զիւղացի աղջկոյ հետ, դարձաւ յետոյ մի ունեոր վարձատէր, մի բարի ամուսին, զերդաստանի հոյը. նա զգուշացաւ նոյնպէս այն երկու վտանգաւոր ծովաժպակերիցը, այսինքն Ժամատութենից և շոյլութենից, և մասց անմեկնելի բարեկամ Հարէլի հետ, որի բաղդասորութեան պատճառը եղած էր ոյդ երիտասարդը, որ պէս դարձեալ սորա բաղդասորութեան պատճառը եղած էր Հարէլը, Աչ ով ցառում չէր այն բանի վերայ, թէ Ասկորեան պարոնը կորուել էր իւր աղնուական արտօնութիւնը. աւելի լաւ է լինել մի պատուելի երկրագործ քան թէ մի մեծ պարոն առանց ճաշակի, առանց դասողականութեան, առանց հաստատուն բնաւորութեան և գնացքի:

7. Պայշտոյ.

1. Պայշտոյի երեխայութիւնը և վաստարազութիւնը:

Ով է այս Պայշտոյը և այս ինչ օտարութի անուն է, ասելու էիր գու, ով իմ հայկական մանուկ. բայց ուշադրութենով կարդա՞ գու այս պատմութիւնը և շնորհակալ կը լինիս պատմողի աշխատութեան համար:

Հաս հին ժամանակներում, հազար տարիներով յառաջ Հայնդիաստանի մեջ գանգէսի գետափումը ապրումէին երկու բարեկալատ ամուսինը և կերակրվումէին իւրեանց ձեռքի աշխատութենով. Կորեանց փոքրիկ տան մօտ ունեին մի կանաչ մարգագետին, որի վերայ արածումը մի կով ձիւնի պէս սպիտակ, և մի փոքրիկ այգի որի մեջ բուսուցանումէին նորա քանի մի տեսակ մրգէղին և կանաչէն: Եյն փոքրիկ տան մօսից մինչև գետը կանաչապատ ձգվումը մի անտառ նուիրական ծառերով որ շատ դարերի հասակ ունեին: Եյս տեղ յաճախ յաճախ գալիս էին այն ամուսինը, աղթմելու գէալ ի Աստուած, այլև ամառնային ժամանակին պաշտպանութիւն որոնելու արեգակի սյրող չերմութենից: Բայց աւելի յաճախ գեմումէին նորա այն գետի ափը, որ բռլոր Հնդկացիք պաշտումն որպէս մի սուրբ բան, որպէս մի բարերարութիւն որ ցուցել էր նոցա Աստուած, անտեսանելին և ամենակարողը: Ամենայն առաւոտ և ամենայն երեկոյ, արևարացին և արևամուտին տեսանվումէին այս

Երկու ամռանիքը նորա ափումը ծնկերի վերայ չոգած պաշտելով
անսահման և սիրալից էակը, արեգակի և լուսաւորների տեսակով։
Այս խաղաղ պաշտօնասիրութեան միջոցին վեր էին կալնում իւր-
եանց հետ և իւրեանց փոքրիկ մանուկը, որ Աստուծոյ սէրը և Եր-
կիւդը ծնողական օրինակից ևս արմատանայ նորա փափուկ սրտի մէջ,
Բայց նոքա ունէին այս մի հատ որդին որ ասվումէր Պայզայ. Աս-
տուծոյ և այս զաւակի հետ միասին ապրումէին նոքա իւրեանց առ-
անձնական փոքրիկ բնակարանումը, անտառումը և այգումը այնպի-
սի խաղաղ և երջանիկ կեանկով, որ սկսեալ Աղամից դժուար թէ
երկու ամռանիք այս աշխարհի վերայ այդպէս ապրած էին։

Մանուկ Պայզայը դարձել էր հինգ տարեկան և մի գեղցիկ
ու ամրակազմ տղայ էր, այնպէս հրաշալի և քաղցր կերպարանքով,
որ ինչ մարդ տեսանումէր նորան, դադարումէր և զմոյլումէր նորա-
նով։ Այն հինգ տարին որ ապրած էր, անցած էին նորա համար
երջանիկ անմեղութեան մէջ, ծառերի և ծաղիկների մէջ և խոյսա-
ճապնուկ թռչունների և թրթուրների մէջ, և այս աշխարհի խարդա-
խութենից ու ցաւից ամեննեին անփորձ էր նորա սիրութ. Երբ որ
Պայզայի հինգերորդ տարին լրացած էր և նա մոռնումէր գեղցերոր-
դի մէջ, գտաւ իւր համար մի քաղցր ընկեր որի հետ կարող էր
նա բոլոր գարունը և ամառը խաղալ և ուրախանալ։ Այսինքն, երբ
որ Պայզայի հինգերորդ ձևից յետոյ գարձել էր գարուն, այգումը
նորա փոքրիկ բնակարանի մօտ իջևանել էր մի թռչնիկ, մի այնպէս
խոյսաճամուկ և փայլուն և շողշողուն թռչնիկ որի նմանը երբէք
տեսած չէր աշխարհի վերայ, այնպէս որ կարելի է ասել թէ ամենա-
հմառա արուեստաւորը չէր կարող երբէք ձևացուցանել այդպիսի փա-
ռահշեղութիւն, թէեւ մի այդպիսի ճարտարապետական գործ կազմե-
լու համար տոյին նորան բոլոր ծաղիկների, աստղների, պատուա-
կան քարերի և անգամանդների փայլողութիւնը և վայելութիւնը,
թէեւ տային նորան կարողութիւն այդ փառահշեղ գործի վերայ
կեանք և շունչ փշելու. Ինչ մարդ, որ այդ թռչնիկը տեսանումէր,
հիանումէր նորա սակաւագիւտ գեղցիկութեան վերայ և այն կայծա-
կնացայտ գուների վերայ որոնցով շողշողումին նորա փետուրները,
Բայց այս թռչնիկը շատ ընտանի էր և թռզումէր ամեն մարդու նկա-
տել նորան մատից և չէր բաց թռչում, բայց ձեռքով ըմբունել իւր-
եան ու մինին թշուլ չէր տալիս, եթէ ու փոքրիկ Պայզային միայն,
որի ձեռքերի և ուսուրի վերայ ինքն ըստ ինքեան սատուատումէր և
օրօրիւումէր նորա սեաւ զանգուուր մազերի և քաղցր ճակատի վերայ,
ինչպէս մի թրթուռ ծաղիկների վերայ, Բոլոր մարդիկը գտանումէին

մի առանձին բան ոյց փոքրիկ թռչունի մէջ, և իմաստունները առանձին, զա պիտոյ է ուղղակի երկնքիցը եկած լինի և մի խորհուրդ ունենայ Պայշվայի համար, պատճառ, պայշվայի հարավի դուռավագ փետուրներ չեր կարաղ գայացնել Հողեղն երկիրը:

Ունուկ Պայշվայը անշափ սիրումեր ոյց թռչունիկը և սա սիրումը նորան նշնպէս շատ, մինչև որ երկու բարեկամիքը անմեկնելի ու անբաժանելի էին մինչև հասանումէր գիշերը: Այսուհետեւ թռչունիկը նստումը պատռէ հանի մեջ Պայշվայի փոքրիկ սենեկի առաջն և երգումը մանուկնեն մի քաղցր քնաքեր տաղ, որովհետեւ նա գիտեր երգել նշնպէս գեղեցիկ երգեր, ինչպէս խայտաճամուկ էին նորա փետուրները: Բաց երբ որ մանուկնեն քունը տարել էր, ապա թռչունիկը հանգատանումէր նորա սեաւ գանդուր մաղերի վերոյ և իւր թռենրովը հով էր զարկում նորա երեսին, կամ թէ նստումը մի խաղողենու ճիւղի վերայ որ ցած էր կախված դեպ ի Պայշվայի մաշիճը, և ապա իւր կոսուցիկը կոխումէր իւր փոքրիկ թռեկ տակ: Պայշվայը այս թռչունին իւր պէս անուն տակց Պայշվացցու:

Երբ որ մի քանի տմիս անցած էին, եկա այն տեղ մի ոյլ թռչունիկ, ոչ այնպէս խայտաճամուկ, ինչպէս առաջինը, ոյլ աւելի թէ զորշագզն, և սա էր Պայշվացցոյի կղը: Այս երկուքը համբուրեցին միմանց կտուցի զարկելով և իւրեանց համար բայն շինեցին խաղողենու ճիւղերի վերայ պատռէ հանի առաջն, և կղը ձուեր զբեց, նստեց նոցա վերայ և թուխս հանեց: Պայշվացցոն հոգաբարձու էր բերելով նորա համար հատիկներ, որ նա ըլ քաղցենար: Երբ որ ձագերը գուրս եկան, սպա ևս աւելի հոգաբարձու էր Պայշվացցոն հատիկներ ժողովելով և մերելով, և մօյրը թռչումը ի միասին, կերակուր որունելու ձագերի համար, ոյն և Պայշվայը երբեմն ժողովումէր հատիկներ և զնումէր նորանց իւր պատռէ հանի վերայ որ և յետոյ կրկտումէր Պայշվացցոն: Երբ որ ձագերը բանի մէջ բաւական թռեաւորված էին, իւրեանց ծնողների հետ թռչումէն դեպ ի անտառը, և Պայշվայը միշտ շրջապատած էր խայտաճամուկ թռչունիներով որ նորա չորս կողմը խաղումին և երգումին. բայց Պայշվացցոն ամենեց առաւել գեղեցիկ ու սիրելի էր: Յաճախս պատճառմէր, որ Պայշվայը այս իւր փոքրիկ խայտաճամուկ փետրաւոր ընկերների հետ առաւտից մինչև երեկոյ թափառումէր անտառների և մացաների մէջ. Նորա ծնողը ոչինչ կասկած չունեին այդ մասին. պատճառ, նոցա որդին ամենայն երեկոյ վերադառնումէր դեպ ի տուն, և նոցա թվումը թէ Պայշվայը որէ օր աւելի սիրելի և մղմարարոյ և լինում, կենցաղավարվելով այն գեղեցիկ և զուարձ

թոշնիկների հետ, այնպէս որ մայրը շատ անգամ ասումէր հօրը. Եթէ Պայմուցցօն չը լինէր փետրաւոր, ապա կարելի էր կարծել թէ նա որպէս Աստուծոյ հրեշտակ ուղարկած էր մեզ, որ մեր մանուկը կրթէ և զատարարակէ:

Վայսպէս, ուրախութեամբ անց կացաւ ամառը, բայց աշունը արտամարեր եղաւ. պատճառ թոշնիկները փախան զնացին, և նոցա հետ նցյն ինքն Պայմուցը:

Պայմուցը մի առաօտ իւր ընկեր թոշնիկների հետ դուրս գնաց դարձնալ դէպ ի այդին, անտառը և գէպ ի հեռաւոր մացաները. Բայց Պայմուցցօն այս անգամը չը մնաց այնպէս հանդարտ ինչպէս առաջին միջոցներումը, երբ որ ողջշն ժամեր սովորութիւն ունէր Պայմուցի ձեռքերի և ուսերի վերայ նստելու. և երգելու, այլ հետ զշիտէ աւելի հեռի թոթուալով, և նորա էգը և նորա ձագերը զնացին նորա քամակից և Պայմուցը նոցա հետեւից. Այսպէս, երկու մղոնի չափ հեռացած էին նորա տնիցը և զտանցումելին մի խիս արմաւատանի մէջ, երբ որ արեգակը ահա չկղէլ էր իւր դրսութիւնը դէպ ի երկիրը և մօտ էր մտանելուն: Այս միջոցին յանկարծ եկաւ նոցա վերայ մի մեծ բազմութիւն կապիկների, այս թուով երկու հարիւր: Թոշնիկները վախեցան, թաթուացին և աղմանկ դործեցին, և Պայմուցը աղաղակեց և փախաւ, բայց կապիկները աւելի արագ լինելով քան թէ նա, շուտով հասան նորան, և մի մեծ կապիկ առաւ. նորան իւր գերգիրը և տարաւ խիս անտառի ներալ: Երբ որ երեկոյացաւ և Պայմուցը տակաւին չը վերագարձած տուն, նորա ծնողքը մեծ հոգսի մէջ էին: Նորա սրունեցին իւրեանց զաւակը անտառի և մացաների մէջ, ձայն տալով նորա անունը, բայց չը զտան նորան. միւս օրին նոր ի նորոյ ման եկան շրջակայթումը, բայց անօդուու եղաւ նոցա ջանեցը: Այնուշեաւ ոչ այլ ինչ չը կարողացան մտածել, եթէ ոչ, թէ Պայմուցը պիտոյ է պասաւված լինի գոյրենի գաղաններից, և շատ արտում էին գորա վերայ: Այն տեղումը, պայտու մէջ, ուր Պայմուցը սիրումէր խաղալ, շինեցին ծնողքը, մի փարբէկ միշտակարան և այս տեղ արտասուք շատ թափեցին իւրեանց սիրելի զաւակի համար:

Բայց կապիկները Պայմուցին ևս առաւել հեռացուցին տարան անտառի խորբը ուր նոցա օմեանն էր: Օդուտ չունէր Պայմուցի զաւապէս լալը. վերջապէս վաստակածութենից նորա քունը տարաւ, դեռ ևս շատ օրեր ու շարաթներ մեծապէս տրտում էր նա իւր ծնողների և իւր գեղեցիկ խայտակաճամուկ թուունների պատճառով, և շատ ուրախութեամբ յմտ կը դաւնար, բայց կապիկները մեծ

զգաստութեամբ հսկումէին նորա վերայ. ուր մնաց, որ չէր կարող նա դուռնել և ճանապարհը, թէև աղասիված լինէր. պատճառ, այս կապիկները թափառումէին մի տեղից միւս տեղ, մի անտառից միւս անտառ, և այսպէս մի ամսից յետոյ հարիւր մղոնից աւելի հեռացած էին այն սահմանից, ուր ծնած էր Պայմանը: Այժմ պիտոյ է սա մանուկ կապիկների հետ կենակից լինէր, խաղար, և հաւանէր ոյս կեցութեանը, որովհետեւ անձարացած էր: Կա ուտումէր և ըմպումէր նոցա հետ, որկորածէտութիւն և գաղտ գողութիւն էր առնում նոցա հետ, և վերջումը սովորեց նշյանիւս ոստնուլ և գեղի վեր մազլցել ծառերի վերայ, ճիւղերից կախ ընկնել և ճաճիլ աւելի յաջողապէս քան թէ ամենավարժ կապիկը: Պայմանը զգեստը վերայից պատառել էին կապիկները, այս պատճառով այրվեցաւ նա արեգակից և թխացաւ ամեննեին. Նորա մարմի վերայ բուսան խոչշոր մազեր և նորա գեղեցիկ գանգուր մազերը փուշ փուշ եղած կախվեցան աչքերի վերայ. կարճ ասեմ, մի տարուց յետոյ նորա կերպարանքը դարձաւ. մի կապիկի կերպարանը, նա չէր ևս խօսում ոչինչ մարդկային բառ, որովհետեւ չէր լսում ոչինչ մարդկային ձայն, և վերջումը սկսեց աւելի վազել չորս թամերի վերայ քան թէ երկու ոսքի վերայ, ըստ որում տեսանումէր կապիկների օրինակը, Պայմանը գեղեցիկ երեխայական տարիքը դարձան նորա համար մի գեղեցիկ երազ:

Այսպէս, Պայմանը երեք տարի կապիկների հետ թափառելով վայրենութեան մէջ, մոռացաւ ամեննեին թէ ունեցած էր հայր ու մայր, կամ թէ մի սիրելի թռչնիկ Պայմանը անունով: Յետոյ պատահեց մի անցք որանով Պայմանը աղատվեցաւ կապիկների իշխանութեան տակից:

Ո՞ի գիշեր, բոլոր անտառարնակ կապիկները մինչև չորս հարիւրի շափ, և Պայմանը նոցա հետ միասին իջած էին մի այգու մէջ և ամեննեին տմարդաբար կողմագումարմէին այն տեղի ծառերը: Այս կապիկները, թէպէս իւրեանց սովորութեան պէս պահապաններ էին կացուցած, բայց սոքա անզգաստ գտանիւլով, այգետիրոջ ծառայքը յանկարծ ամենայն կողմից յարձակվեցան կապիկների վերայ, մեծ մասը սպանեցին և շատերը գերի արեցին: Գերի ընկած կապիկներից պառաւները սպանվեցան նշյանիւս, և մասցին կենդանի մանուկները միայն: Սոցա մի մասը վաճառեցին երեսէի քաղաքների մէջ ձեռնածուների և հրապարակական վիճականների վերայ, որ այդ կապիկները ամենայն տեսակ արուեստների մէջ վարժեցին և նոցա հետ շըջումէին այս տեղ և այն տեղ. միւս մասը վաճառեցին օտարական

Նաւարկուների որ վեր առան և տարան նորանց Եւրոպա և Ամերիկա, արծաթով ցոյց տալու ժողովրդին զբոսանքի համար: Մանուկ Պայշվայր գտանվումէր Նոյնպէս ոյս գերի տարած կապիկների մէջ և իւր ընկերներից շատերի հետ միասին, Գուղուրամ քաղաքի տանավաճառումը ծախովեցաւ մի թափառական ձեռնածուի վերայ մի քանի կոտոր արծաթով: Այս թէ բնչքան թեթեագին էր գարձել Պայշվայր որի համար իւր սիրելի ծնողքը, եթէ կարողանային գնել նորան, յօժարութեամբ առած կը լինեին իւրեանց բոլոր գամբը:

Վայն ձեռնածուն, որին հասել էին այդ կապիկները, իւր արուեստի մէջ շատ յաջողակ էր, և իւր աշակերտը անդադար թակելով կրթումէր, որ նորա հնագանդութիւն ուսանին: Պայշվայր միուն չը կերաւ ոչինչ ծեծ, որովհետեւ ամենայն բան առնումէր յօժարութեամբ, այնպէս որ ձեռնածուն զարմանալով ասումէր: Այս փոքրիկ կապիկը ասես թէ մարդկույին բնութիւն ունի: այս պատճառով սիրումէր նորան և ոչինչ ցաւ չէր պատճառում նորան, այլ կերակրումէր նորան առաւել լաւ քան թէ միւսերը: պատճառ, Պայշվայր ուսանումէր աւելի շուտով և նորա կապիկների մէջ առաւել գեղեցիկն էր:

Երբ որ ձեռնածուն մի քանի շարաթ իւր կապիկները տրորել ու վարժել էր, մի քանիսը նորանցից վաճառեց և միւսերը առած իւր հետ ման էր զալիս Հնդկաստանի քաղաքներումը և ցցց էր տաւիս իւր հնարագիտութիւնքը: Այս գործի մէջ շատ օգտակար էր նորան փոքրիկ Պայշվայր, որովհետեւ սա իւր զարմանալի յաջողակութեներովը մօտեցնումէր ձեռնածուին մէծ բաղմութիւն, և ամենների աշքումը անշափ գեղեցիկ ու սիրելի էր: Այս, շատերը հասատումին թէ չէր կարող լինել մի առաւել գեղեցիկ կապիկ քան թէ սա: Կային և այնպիսի մարդիկ որ յօժար էին գնել նորան, բայց նորա տէրը պահանջեց մի այնպիսի մէծ գին, որ ոչ ով կամք չունէր գնել նորան:

Ջեռնածուն ճանապարհորդելով եկաւ և դեհէլի քաղաքը, և այս տեղ իւր կապիկներով, շներով և թութակներով և այլ տեսակ անառուներով որ ունէր իւր հետ, ցցց տուեց իւր ճարսարութիւնքը: Դեհէլին բոլոր Հնդկաստանի մայրաքաղաքն էր, ուր նասումէր Հնդկաստանի մէծ կայսրը: Այս տեղ Պայշվայր կապիկի գովասանութիւնը շուտով տարածվեցաւ, և նորա համբաւը հասաւ: մինչեւ կայսերական ապարանքը: Այս բանը պատճառ տուեց կայսրի մօրը ցանկալ տեսանել միանգամ այդ փոքրիկ գեղեցիկ կապիկը: Հրամայեց, որ գայ ձեռնածուն և ցուցանէ իւր անառուների խաղարկու-

թիւնը։ Պայտվայը մի քանի ձարսարութիւնք արած թէ չարած կայսերամօր առաջն, սա խկոյն ձայն արձակեց հիացած։ Աչ այդպիսի կապիկ չեմ տեսած ես։ Կարծես թէ մարդ է դա, եթէ կապիկի պէս չը ուստատէր և չը ծոմէր երեսը։ Այդ կապիկը պիտոյ և անոպատճառ իմ լինի, թէ և արժէր ինձ բալոր դանձնը։ Նա հրամայեց խկոյն առնուլ տանել կապիկը, և վճարեց տիրոջը ինչ որ սա խնդրեց։ Այս մարդը ատացաւ մի աշազին արծաթ, և ոչ մի կապիկի համար, ինչքան որ տեսած ու լսած էին մարդիկ, չէ վճարված այդպիսի թանգ գին։

2. Պայտվայի վրկութիւնը և Դատիքարակութիւնը.

Իրայսերամայրը հրամայեց մանուկ Պայտվայը փակել իւրեան մատելոյ մի սեննիկի մէջ։ յաճախ յաճախ գուրս էին բերում նորան, և նա կայսերամօր, պալատականների, այն և կայսրի առաջն խաղումը ցուցանելով իւր հնարագործութիւնքը։ Պալատի հասարակութիւնը դուռարացնելու համար, Պայտվայը առնումէր հազար տեսակ սաստանք, շարժուածք և խողիկոտակութիւնք։ Նկատելով թէ ոչ ոք չունի համարձակութիւն վշասայնել նորան, ըստ որում կայսերամայրը հրամայել էր զգուշութիւն, սկսեց խորամանկի խողիկ առնել պալատականների հետ։ այս բաների մէջ բալոր կապիկները վարժապետնեն, և Պայտվայը ուսած էր այդպիսիներից բաւական շատ։ Պայտվայը մի քանի շարաթ այսպէս խաղալով և ապրելով մարդերի մէջ, և աշա պատահէց մի անցք որանով կապիկը յանկարծ մարդ դարձաւ կրկին։

Իրայսերամայրը վաթսուներորդ անդամը տօնումէր իւր ծննդեան օրը։ բալոր պալատականքը փառահէղ զարդարված հաւաքվեցան նորա մօտ և շնորհաւորումէին այս օրը։ Յանկարծ, մեծատուն մարդերի ու կանանց մէջ, հանդիսարար վեր բարձրացաւ երկու ոտքի վերայ Պայտվայ մանուկ կապիկը, վշցելութեամբ զլուխ տուեց և բացայաց ձևյնով ասաց։ Եւ ևս շնորհաւորեմ այս օրը, ով մեծազօր, մեծափառ կոյսրուհի։ Այս բանը, միտ դնելով այն մեծահարկի ծանրութեանը որ առել էր նորա կերպարանքը, այնքան ծիծաղելի երեւցաւ, մանաւանդ կապիային զգեստի մէջ, մինչև մարդու կին կոտորվեցան ծիծաղելուց։ Բայց կոյսերամայրը հրամայեց հեռացնել այն կապիկը։ պատճառ, անպատշաճ էր բազմութեանը ծիծաղել նորա առաջն։

Այս հանդիսականարութիւնը վերջացած լինելով, կոյսերամայրը ուղարկեց խկոյն իւր աղախինը և բերել տուեց այն կապիկը.

պատճառ, շատ տեսակ բաներ էին ծագել նորա մոքումը. Նա ըստ կույց կապիկի հետ խօսել, որպէս թէ մարդ էր, և աս պատասխանեց նորան շատ բան, և յիրաւի ոչինչ պակաս յաջողակութենով քանի թէ նորա հասակի երեխոյքը: Եւ աշա կայսերամայրը ձեռքերը զարդ կեց գլխին և ձայն արձակեց. Կամ թէ կախարդված էինք մէք, կամ թէ սա կապիկ չէ, կամ թէ գոնեայ կախարդութենով կապիկ փոխված մի մարդ է: Խոկոյն հրամայեց որ գան սպասաւորքը, տանեն ոյդ կապիկը մազերը խռովելու, պատուական իւզերով տրորելու. և լուանալու. նորան գլխից մինչև տոք և հացցնելու նորան զարդարուն զգեստներ, որպէս թէ մարդ էր: Կայսերամայր հրամանը կասարեցին և մի քանի ժամկեց յետոյ կրկին յառաջ բերեցին կապիկը: Եւ աշա տեսան ամենեքեան, որ արդարե մարդ է զա և մի շատ սիրուն երեխոյ, թէն շատ թխացած և գորշացած, թէն շարժուածքը կապիկանան: Կայսրուհին անշափ ուրախացած լինելով ոյս յեղափառութեան վերայ, առա փոքրիկ Պայտվայր իւր գիրեքը, շողորոք թեց նորա թշերը, համբուրց նորան, լաց եղաւ և ձայն տուեց. Գու վաստարադդ մանուկ, բնչակէս ընկար գու այզպիսի դարշելի անասունների մէջ. ինչպէս տրամած պիտոյ է լինին քո ճնողքը քո պատճառով: Այժմ գու իմա ես. Ես կամիմ հոգալ քո պիտագրը. Եթէ սիրումէի քեզ որպէս կապիկ, ես առանել կը սիրեմ քեզ որպէս մարդ. Եթէ վճարեցի 20.000 մանէթ մի անասունի համար, ապա ծանր չէր ինձ որ մարդը ևս առանել արժէր ինձ: Այս բոլոր բաները այժմ հասկանումէր Պայտվայր և ցուցանումէր որէ սր առելի մարդկային վարք և խօսումէր որ ըստ որէ առելի բառեր:

Եզր Պայտվայր յեղափախմել էր պյուտէս և կրումէր գեղեցիկ հագուստներ և կայսերամոն սկզբանակից էր և համարձակութիւն ունէր գլուխը զնել նորա ծնկերի վերայ և քնել պյուտէս. այնուհետեւ բոլոր պալատականների աշքին երեւցաւ նա սիրուն և նազելի: Եւ արդարե շատ սիրուն և սիրելի էր նա. և մի քանի շարաթ սպիտակվելով նորա գշնը, դարձաւ նա մի քաղցրասեսիլ մանուկ: Բայց ոչ թէ միայն նորա մարմնաւոր գեղեցիկութեան վերայ ունէին նորա զարմանալ, այլև նորա բանականութիւնը զուարթ ու ախորժելի էր: Օր ըստ որէ առելի պայծառապէս փայլառակումէր նորա, կապիկների և անասնական վայրենի կեցութենով նսեմացած, բանաւորութիւնը, և մի քանի ամսի մէջ մուացաւ նա իւր մազելը չորս թամների վերայ, և քայլումէր օրէ որ առելի կանգուն և այնպէս տմուր ինչպէս մի մարդ: Այժմ կարող էր նոյնպէս մի քանի բան պատմէլ մտարենելով իւր երեխայական տարիքը և իւր կապիկային թափա-

ռականութիւնքը : Բայց այս զրոյցները այնպէս մուժն և փոքր էին, որ ոչ ով չը կարողացաւ իմանալ թէ ինչ երկրից էր այդ երեխան, թէպէս կայսրուհին մծապէս փափագումքը վերահստու լինել պահին :

Ո՞ի բնական բան էր, որ Դեհլի քաղաքումը և շատ մղան նորա շրջակայթումը ոչինչ միւս խօսակցութիւն չը կար, եթէ ոչ, Պայմայի, կայսերամօր սիրածի վերայ, որ լինելով կապիկ, յեղափառ վել էր: Այսու ամենայնիւ կայսրուհին յանձն առաւ մարդասիրապէս հոգաբարձու լինել Պայմայ մանուկի համար. պատճառ, նա մի բարեպաշտ և երկիւղած կին էր: Աս շատ լաւ հասկանալով թէ պալատումը, ուր Պայմայը յառաջուց երեւել էր որպէս կապիկ, կապիկոյին արտօնաններ կուսուցաննեն նորան, ոյլու նորա սիրու կապականվի շղողմարարութիւնով. Եիրախ, կայսերանոյրը մի մեծ գործ կատարեց հրամացելով պալատից հեռացնել այն մանուկը որ շատ սիրելի էր նորան, և ուղարկելով մի իմաստուն վարժապետի մօտ որ մի օրինաւոր մարդ շինէ նորան:

Վայ վարժապետը իւր բանագէտ օգնական դաստիարակների հետ միասին կենումքը մայրաքաղաքից և մարդերի աղմուկ ու շփաթից հետի, մի առանձնական ձորի մէջ, ննդոս գետի մօտ: Սորա իմաստութիւնը, աստուածսիրութիւնը և մարդասիրութիւնը բռլը Ասսիայի մէջ գալասանած էին, և թագաւորները և իմաստունները հեռաւոր աշխարհներից ուղարկումին իւրեանց որդերը նորա մօտ, որ դաստիարակէ նորանց դէպ ի ամենայն առաքինութիւն և բարելաւութիւն: Սորա մօտ ուղարկվեցաւ և Պայմայը, երբ որ գնումքը դէպ ի տաներորդ տարին:

Եւ մանուկը ստացաւ բարի բնաւորութիւն, նորա մէջ չը մնաց ոչինչ հետք այն չար կապկային խորամանկութենից և նենդառութիւնից որոնց մէջ երկար ժամանակ կացնել էր. այն և այն անմեղ և բարեսիրա խաղարկութիւնը որոնց դեռ ևս անձնատուր էր նա, հրաժարվեցան նորանից, և մի քաղցր շնորհը և մի մեղմ ծանրութիւն փայլումքին մանուկի ճակատի վերայ, որ հետ գչետէ մասենումքը երիտասարդական հասակին: Նա դարձաւ իմաստուն վարժապետի սիրելին, ըստ որում Պայմայի աշքը և սիրու ուղղած էին դէպ ի Աստուած և երկինք, և նա այնպէս արագ ու զարմանալի յառաջադիմութիւնը գործեց բնագիտութեան և աստեղաբաշխութեան մէջ, որ իմաստուն վարժապետը ցաւումքը այն բանի վերայ, երբ որ կայսերամայրը կրկին պաշանչեց նորա զարձը դէպ ի պալատը և աղմակից կեցութիւնը քաղաքի մէջ: Այս մանուկը, յաճախ ասու-

մեր վարժապետը իւր մօներիմ բարեկամներին, պիտոյ է լինի մի արժանի անօթ Աստուծոյ ձեռքումը, ինձանից յետոյ քնողունելու և յառաջ տանելու այս իմ գործը, երբ որ ևս ծերութենից տկարացած ու խախուտացած էի. բայց և աշխարհը կարօտ է հանդարս և խորախորհուրդ մարդերի. այս և սուրբ աւելի քաղցրապէս փայլումէ երկիրդած մարդու ձեռքումը:

Պայմայը ինչպէս եռանդուն սրտով և զգաստ մոտքով ըմբռունումէր և պահպանումէր իմաստութենան խրատը, նշյնպէս շշու և արագ էր մարմնաւոր կրթանքների մէջ, այնպէս որ ըմբռամարտութենան, ոստչելու, վազելու, սուր ու նիզակ խաղացնելու և բոլոր միւս զինուորական շարժողութենների մէջ աւելի շուտափոյթ էր քան թէ շատ շուտափոյթները: Այս պաշտոնի մէջ շատ օգտակար գտնվեցաւ նորան այն զինքարձութիւնը և զինքաթեքութիւնը որ ուսել էր նա ընկերակից լինելով կապիկներին անտառումը և ձեռնածուների հեարագիտութենովը: Այլև վայրենի անապատումը ապրելով, ամուր և անլասատէլի էր կացոցցել իւր մարմինը որ և հեշտ կարող էր տանել ցրտի և ջերմի, ամենոյն աշխատութենան և գործի:

Պայմայը դարձել էր տասն և եօթն տարեկան, մի նուրբ և նշանաւոր հասակով երիտասարդ, այնպէս որ նա երկայնութենով գերազանց էր հասարակ մարզերիցը. ով որ տեսանումէր նորան, ամենեքեան միաբերան խօստովանումէին թէ նա երիտասարդների մէջ առաել զեղեցիկն ու համեստն էր: Պայմային պիտոյ էր աշա թռուլ իւր իմաստուն վարժապետը և իւր խաղընկերը և վերադառնալ դէպ ի փառաւոր և ազմկալից Դեհին, պյրի կոյսրուհու պալատը:

Վայրի կայսերամայրը ընդունեց նորան իւր ապարանքումը շատ սիրով և քաղցրութենով, և այնպէս սիրումէր նորան որպէս թէ իւր թռուն էր: Այս վեհապատիւ կինը արգարե շնորհ ունենալով իւր որդեգրի վերաց, կրկն հեռացրեց նորան իւր մօտից և պալատիցը: Աւզարկեց նորան պատերազմ դէպ ի արմեմատք, ուր երեք տարի արգէն սաստիկ կախ էր ընդդէմ Պարսից այն աշխարհների մասին որ հիւսիսակողմումը տարածվումէին դէպ ի սարերը: Այս պատերազմը տեսեց տակամն երեք տարի, և Պարսիկը վերջապէս ստիգմացան խաղաղութիւն խնդրել, Պայմայը պատերազմից յնտ եկաւ մէծ յաղթութենան հանդիսով. Նորա կորիչ սուրբ պյնողիսի պարծանք էր ճարել նորա համար, որ նա մի մէծ հրամանակալութիւն տառցաւ և զարձաւ կուտակալ այն աշխարհների վերաց որ միւսանգամ առած էին Պարսից ձեռքից: Այսպիսի պաշտօն յանձնումէր կայսրը այնպիսի մարդերի որոնց առաւելապէս բաշխել էր իւր հաւատը:

Իսոց և այս դրուժեան մէջ երկար չը մնաց Պայմանը, նորա զարմանալի ճակատագիրը պյանդիս բերեց, որ նա պիտօյ է արժանանար աւելի բարձր պատուի և հասաներ պյանդան բարձր փառքի, որ այս աշխարհի վերաց դրանից աւելի բարձրին հասանել չէր կարելի:

Յ. Պայմանը բարձրանալը և փառարթիլը:

Կայսրը, այրի կայսրուհու որդին, որ իւր աթուանիստը ունենալով գեհի քաղաքումը, տիրումը բոլոր Հնդկաստանի վերայ, ուներ մի հաս աղջիկ: Բանը պյանդիս լինելով, պատահեցաւ մի անցք որ սովոր էր պատահել այն տեղ, ուր չը կային թագաւորական աթուի ժառանգներ: Ժողովուրդը վրոգովիցաւ, որովհեաւ պատուաւէր և գահասեր մարդիկ շատ վեր կացան այս տեղ և այն տեղ և ծածկապիս ամենայն տեսակ չար խորհուրդներ սերմաննեցին: Այս գործի մէջ շատ արի էին մասնաւոր թէ կայսրի աղդականըը, որ կարծումին թէ իրաւունք ունին ամեռի վերայ: Այս բանը դառնացրեց թագաւորի օրերը և նա հոգսի մէջ էր, առանելովէս երկիւղ ուներ այն կարող պատերացման մարդերից որ հօթն առարի ընդդիմացած էին Պարսիկներին և վերջումը յաղթող էին գտանվել: սոցա մէջ կար մի զօրագլուխ քննքաբետ անտեսով, մի յանդուզն մարդ որ իւր նախապապի կողմից ասումը իւրեան թագաւորի եղբարորդի, որ և ամենից առաւել աշխատումը ձեռք ձգել աբրայական թագը: Այս դժուարութեան մէջ պիտօյ է կայսրը գտաներ իւր համար մի յաջորդ, որ մի գոյցէ տակաւին իւր կենդանութեան սրերումը ապաստրութիւն ծագէր: Այս բանը հետ կատարելի էր, բայց կայսրը ցանկանումը, որ այն մարդը որ իւրանից յետոյ թագաւորելու էր, լինի նոյնպէս իւր փեսան և իւր աղջկոյ ամուսինը: Բայց սորան չուներ նա համարձակութիւն ընտրելու, ոյլ ընտրութիւնը ստորագրած էր մի անողորմ օրէնքի տակ, որ Հնդկաստանի թագաւորները, սկսեալ շատ վաղ ժամանակներից, սահմանած էին այն խորհրդով որ մի գոյցէ թուլամորթ մարդիկ ամոռ նատէին: Այս օրէնքին հետեւլով, օրդին ժառանգումը հայրենական թագաւորութիւնը: բայց եթէ կայսրը ուներ միայն դաստիներ և կանոնամը անդրանիկը պահպանել աթուի վերայ, ապա հարսնանումը նա այն երիտասարդին որ կուռի մէջ յաղթող կամ բաղդաւոր էր գանգված, և այնուհեաւ կայսրի փեսան աների մահուց յետօյ նատումը աթու: Այս կոխւը պիտօյ է լիներ մի վագրի կամ առիւծի հետ արձակ հրապարակի մէջ, ուր պիտօյ էր յանձն առնուլ մահ և կեանք, ամենամեծ պատուին հասանելու համար, և արգեւք պատերազմողը

պիտոյ է մանուկ հասակում գերեզման իջանէր, թէ կայսերական ամոռին արժանանար, այդ բանը շատ անդամ կախ էր մի լոկ բոպէի բերման վերաց:

Ասրա համար կայսրը ծանուցարար մարդիկ դուրս ուղարկեց դէպ ի ամենայն աշխարհ։ սոքա փողը փշելով քարոզ կարգացին, թէ Հնդկացոց կայսրի գումարը, գեղեցիկ որսէս արեգակ, ախորժելի որպէս լուսին, լինելու և այն մարդու ամուսինը որ դաշնակով ու սրով արձակ հրապարակի մէջ զգետնելու է մի բննդալեան վազր կամ առիւծ, և այս յաղթող ամուսինը ժառանգելու է թագաւորութիւնը։ Այնուհետեւ եկան հաւաքվեցան թագաւորներ և իշխաններ, կոմսեր և ասպետներ մօտից և հեռուից, բայց տէրութեան իշխանքը և մէծամեծքը պատրաստվեցան հանդիսակից լինելու այս օրին։

Երբ որ լուսացաւ այն առաւօտը, երբ պիտոյ է կատարվէր կոխւը, վաղվազ դռւրս թօղվեցաւ վազրը իւր երկաթի վանդակից հրապարակի մէջ, որ ամենեքեան նկատն նորան։ Այնուհետեւ բնչ մարդիկ զեռ ևս ցանկութիւն ունեին պատերազմելու այն գաղանի հետ, յայտնեցին իրեւանց անունները հանդիսի գլխաւորին, գատառորի մօտ, և սա կարգով գրեց այդ անունները, միտ զնելով ամեն մինի տոհմանականութեանը և աստիճանին, այնպէս որ առաւել երեւելի մարդը պարտական էր և յառաջ հանդիսել գաղանին։ Բայց վազրը էր մի այնպիսի չար գաղան, այնպէս բարձրահասակ և յաղթանդամ, որ կոռաւաէր եկաւորների մէծ մասը յետ քարշվեցաւ և մնացին մի քանի մարդիկ որ կամք ունեին մնակուի լինել վազրի հետ։ Այս մէջ առաւել երեւելին էր Պարսկաստանի թագաւորազը։

Երբ ժամանակը մատնումէր կեսօրին և բոլոր ժողովուրդը և իշխանները և ասպետները և աղամարդիկը ժողոված էին, ապա հերեւան կայսրը և կայսրուհին և կայսերամայրը, նոցանից յետոյ երեւցաւ և թագաւորազն աղջիկը բերդի գուրս ցցուած պատուհանումը որ ցած էր նոյում ասպարեզի վերայ, ուր շինած էին աթոռներ ամենեցուն համար, թագաւորազն աղջիկը փոյլաստակումէր ու կուց, պատուական քարերից և անդամանդներից, բայց նորա գեղեցկութիւնը և ծաղկափթիթ մանկութիւնը նսեմացուցանումէր այս բռլոր փառահեղութիւնքը։ Աբբայալն աղջիկը, սպիտակ որպէս ձիւն, նստած էր այն տեղ տրտում, աշքերը դէպ ի ցած թողած, ահ ու դողի մէջ մէ մի գուցէ պատահմանը մի վասթար ամուսնու վիճակի, այլէ վախենալով վազրի ճանկերից և այն զարհութելի խաղարկութենից որին պիտոյ է ականատես լինելը ինքը, Շատերը տեսանելով սորա ծաղկափթիթ ախորժելի մանկութիւնը, մտածումէին

Խորեանց մէջ պյափէս. Եթէ վագրը չը լինէր պյդքան սոսկալի, այս պյդպիսի սակաւագիւտ հարսն ստանալու. համար կը մոռանէինք ասպարէզ և կը փորձէինք բաղդի յաջողութիւնը:

Իսլոր բաները կարգի դրած լինելով, կայսրը պատուհանից գլխով արեց և հանդիսի դատաւորը նշան տռւեց: Փաղերը և թըմ բուկները հնչեցին, ասպարէզը բացվեցաւ և Պարսկաստանի թագաւորազը ներս մտաւ ամուր և համարձակ հօգոսվ, մի գեղեցիկ և քաջ տղամարդ, որի պատերազմական յաջողակութեան փորձը Հնդկացիք տուած էին զանազան ջերմ կուների մէջ: Սա արիստիրոս մտեցաւ գաղանին, որպէս մէկ կամենումէր առաջնուից յարձակվիլ նորա վերայ. բայց վագրը յանկարծ, օճային խորամանկութենով մոռաւ նորա վերայից և քամակից պատառեց նորան վերուստ ի վայր: Թագաւորազնի սրբարինը ծուխ արձակեց գեա ի երկինք. բայց կայսերազն աղջիկը ու շամափ եղաւ. պյա ողորմէլի տեսարանի վերայ և վայր ընկաւ. աթուիցը, Բոլոր ժողովրդի դողը զարկեց և մի մահանման հանդարտութիւն եկաւ բազմութեան վերայ:

Կոռուպներից մի քանիքը, որ կամեցած էին ասպարէզ մտանել, տեսանելով այս քաջ տղամարդի արագ ու զարհուրելի կործանումը, պյափէս ահաբեկ եղան, որ չամաչեցին խորեանց անոււները ջնջել տալ և կամաց կամաց հեռանալ, որպէս մէկ ամենաեին չեին եղած այն տեղ: Եւ որովհետեւ թագաւորները և արքայազունքը պակաս էին կոռու ասպարէզումը, դործը հասաւ աւելի ցած կարգի մարդերի: Այժմ դուրս եկաւ մի մարդ որին ասումէին Հնդկաստանի հսկայ, և որի անունը մէծ համբաւ ուներ պատերազմի մէջ: Սա էր Միրդասի իշխանը, մի ածխագործի որդի, Լահօր աշխարհից, որ իւր քաջութենովը հասել էր բարձր պատուի և մեծարանքի, և թագաւորը գովասանումէր նորա յաղթութիւնքը, բայց երկիւղ ուներ նորա յատուկ անձնից: պատճառ, մի վայրենի և խոշոր մարդ էր, և խաղաղութեան միջնցին ևս արիւստա սուրը մերկացրած էր նորա սրտի մէջ. այլէ մարմով տգեզ ու անձնունի էր: Կայսերազն աղջիկը մտւացաւ տեսանելով նորան ասպարէզ մտած, և շատ յօժար կը լինէր ինքը կրառւել վագրի հետ, քան մէ այդպիսի մարդու ամուսին դառնուլ: Բայց Աստուած աղասեց նորան պյտ ցաւիցը. պատճառ, Միրդասը թէն շատ զօրեղ մարդ էր, այնու ամենայնիւ սպանվեցաւ. Նորա սուրը սայթաքեց աւազի մէջ, երբ որ նա կամնալով բաղիւել վերայ վաղող վագրը, չը կարողացաւ իւր զարկը դիպեցնել այն աեղին, ուր հարկն էր, և վագրը շուտով մոռաւ նորա վերայ և բաժանեց գլուխը ուսերից: Այս բանի վերայ ուրախութեան ձայն բար-

ձրացրեց ժողովուրդը. պատճառ, Միջրախը առելի էր ամենեցուն աչքին, և բոլորեքեան հոգսի մէջ էին իւրեանց սիրեցած թագուշու պատճառով:

Դիմունը արիւնաշաղախ դրած էին այն անդ, և ասպարէզը փակվեցաւ. փողը հնաց և թմրուկը որոտաց, բայց չերենցաւ ոչինչ կռուող, կայսրը տագնապի մէջ էր մասծելով, եթէ վագրը մնաց անյաղմելի, առա թագաւորութիւնը իւրանից յետոյ կը պատկանէր օրէնքով իւր աւելի մերձաւոր եղրորդուն: Ամենեքեան նայումէին ահա հօպարտ ֆերդամի վերայ, որ կայսրից յետոյ երկրորդական պատիւը ունէր, որ և արհամարհաբար ժպտումէր, երբ որ ասպարէզը դատարկ մնաց: Այս ֆերդամը քաջ մարդ էր, բայց յանդուզն և անիրաւ և կայսրին թշնամի. այս պատճառով ցանկանումէին ամենեքեան, որ թագաւորական աթոռը պահպանվի կայսրի աղջկոյ համար, որովհետեւ կայսրը և նորա թագաւորազն դուստրը միշտ մարդասէր և ողորմած էին դէպի ի ժողովուրդը: Բայց և այս անդամն աղաստիվցաւ կայսրը իւր տագնապից, որովհետեւ ասպարէզը կը լինի անդամ բացվեցաւ և ներս մտաւ. մի գեղեցիկ նրբահասակ տղամարդ: Աս էր Պայշվայը. ժողովուրդը տեսանելով սորան, խեցյն ցնծութեան ձայն արձակեց և ծափ զարկեց. Պայշվայը բարձր ձայնով խօսեց այսպէս. Ես հրապարակ եմ դուրս եկել ոչ թէ տղիսանաւով իմ չափը, այլ երկար միջոց սպասած եմ, որ ննձանից մի աւելի լաւը հանդէս գար. այժմ թող Աստուած օգնական լինի ինձ և ողջութիւն պարզեւէ կայսրին և թագաւորազնուհուն: Այս խօսքը ասած, նա յարձակվեցաւ գաղանի վերայ, և գաղանը նորա վերայ. բայց այս անդ կարելի էր նկատել, թէ աստուածային նախանձութիւնը ինչ խորհրդով թոյլ էր տուել Պայշվայի անտառակեաց լինելը. Պայշվայը կապիկների մէջ ուսած, վագրի ամեն մի վերայ թուչելու բռուէին, կարող էր դէպի ի մի այլ կողմ թուչել, նորա ամեն մի խորամանկութեանը հանդիպել մի այլ խորամանկութենով, այն գաղանի ամեն մի քայլարիսը և հայեացքը այնպէս չտինել ու կշռել, որ վագրը շուարած մնաց և հանդարսեց մինչև միւսանգամ յարձակվիլը: Բայց նայեցողներին մի ահարիսու տեսարան էր սա. Երկու հակառակորդները արած էին ահա քսան սատինը մինը միւսին փոխանակելով, և Պայշվայը դեռ ևս խեթկած չէր այն գաղանի մարմինը. վերջումը դիմուկ բռուէ զտանելով, ուժը լարած վեր թռաւ չար գաղանի շալակի վերայ, շրջափակեց նորան և իւր լայն դաշնակը խմեց մինչև ի կոմը վագրի ուսերի մէջ: Գաղանը դուաց, մաշու տագնապի մէջ քսան քայլաւոփ միւս կողմը թռաւ, յետոյ

ձգեց ուները և սատակվեցաւ: Բայց ռայլվայը մինչև վերջը մնաց նըստած իւր տեղումը և պինդ կացել էր վագրի շալակումը, որ մի՛ գուցէ սա իւր վերջին ցնցիւների մէջ ճանկերով վեասէր նորան: Եմնելքեան ցնծացին և ուրախութեան ձայնը թնդաց ասպարէզի չորս կողմը որպէս հողմի մըրիկ:

Վայնուհետեւ կայսրը ցած իջաւ իւր բարձր ամօսից և պալատի պատուհանիցը, ներս մտաւ ասպարէզի մէջ և բարձր ճայնով խօսեց ժողովրդի առաջն ոյսպէս: Օրհնեալ լինի Աստուած, որ ընտրել է ինձ վեսայ և փոխանորդ այս տղամարդը, առաւել իմաստունը և առաւել քաջը իմ հպատակների մէջ: Գրեախառնեց և համբուրեց սորան ժողովրդի ներկայութեամբը, և ժողովուրդը ցնծաց ոյդ բանի վերայ: Ռայլվայը խոնարհեցաւ կայսրի առաջն մինչև գետին, համարեան թէ իւր ճակատով շշափելով հողը, բայց կայսրը բարձրացրեց նորան, և վեր տարաւ դէպ ի պատուհանը իւր թագաւորացն աղջկայ մօտ: Սա դրեց երիտասարդի գլուխը մի կանաչաղաղարդ պատի որպէս յաղթութեան նշան, և հազցրեց նորա մասի վերայ մի ոսկի մատանի, արսէս նշան վեսայութեան: Բոյց ով որ այս անցքի վերայ առաւելապէս ուրախացած էր, իմացիր դու այրի կայսերամայրը, որի ձևուով այս յաղթուզ տղամարդը զնած էր որպէս կապիկ և տուած էր գաստիարակիլու այն իմաստուն վարժապետին ինդոս գետի մօտ: Այժմ շատ և շատ ուրախանալով համբուրեց նա ռայլվայի երեսը, նաշեց դէպ ի երկենք և մայն արձակեց ասելով: Շղորմած Աստուած, այսպէս էր համոյ քեզ և այսպէս ևս թշյլ տուեցիր դու որ կառարվի ամենայն բան, որ մի՛ գուցէ օտարականներ տիրեն մէր ժողովրդին, այլ մէր ծերութեան որերումը ուրախութիւն պատրաստվի մեզ:

Լշրը որ ռայլվայի ամուսութիւնը թագաւորացն աղջկայ հետ մած փառքով կատարվեցաւ, և նորան կայսրը հանդիսապէս ամօսի յաջորդ կարգեց, և թագաւորութեան իշխանը և ժողովուրդը ընդունեցին նորան, ապա ուղարկվեցաւ նա դէպ ի հարաւ որ կառավարէ թենդալիսյի աշխարհը և այն մէծ գաւառները որ գարսից դէպ ի այն կողմը մինչև Զինաստանի սահմաններ տարածվումէին: Այն տեղ բնակումէր նա իւր ամուսութեան մի մէծ քաղաքի մէջ գանձէսի մօտ, որ ասվումէ Կալկաթա:

Վայս տեղ միանգամ որս էր գնացած ռայլվայը և վաղելով որսի քամականվեցաւ իւր ընկերներից և մոլորվեցաւ խոր անտառի մէջ: Գիշերը վերայ հասնելով, ստիգմեցաւ նա բացօմնայ լինել: Վեր մազլցեց մի ծառի վերայ և հանգստուցաւ այն տեղ, որ

ապահով լինի վայրենի գաղանների երևից, Առաւտուր բացուած, տեսաւ մի չուր որ շողջողումներ, և իմացաւ որ միւսանգամ՝ զտանցումէր գանգէսի զետափումը։ Մի զարմանալի կերպով խաղաց նորա սիրտը, նորան թվումներ որպէս թէ մի ժամանակ տեսած էր այս ծառերը և մարդագետները, Յառաջ գնալով և տեսանելով մի փոքրիկ եղէզնապատ տուն և մի կանաչ այգի նորա մօտ, ակամայ արտասուր եկան նորա աշքերը։ Բայց նա չը գիտէր թէ այս ինչ գութ է նորա սրտի մէջ և ինչ էր դորա խորհուրդը. պատճառ, նորա մանկութեան քաղցր յիշատակութիւնը վերստին նորոգվեցան. բայց չէին այնքան պայծառ նորա հոգու մէջ, այլ այնպէս էր նորան, ինչպէս սովոր է լինել մարդուն երազի մէջ։ Բայց երբ որ Պայմանը մօտեցաւ այն փոքրիկ տանը, յանկարծ նորա առաջեւ լուսափայլեցաւ բոլորը. Ճայն արձակեց նա կրկին և կրկին անգամ։ Այդ Պայմանը, Պայմանը, և ջերմագույն տանաւ նա իւր սենեկի փոքրիկ լուսամուտը, և զեռ ևս կանաչ էր խաղողի ծառը, որի վերայ Պայմանը թունիկը շինած էր իւր բշնը, և տակաւին այն տեղ, այգու դրան առաջեւ կանգնած էր հին արմաւենին որի տակ մանուկը այնքան յաձախ խաղ էր արած, Այս միջացին մօտեցաւ նորան մի կին ձիւնափայլ սպիտակ մազերով և հիմնումներ Պայմանը վերայ. սա իմանցաւ խակցոյն որ այդ պատաւը իւր մօյրն է, փաթաթվեցաւ նորա պարանոցին, համբուրեց նորան, շատ արտասուեց և ասաց յետոյ. Ես Պայման եմ, ք կորած որդին։ Պայմանը չը կամեցաւ սկզբումը հաւասար, բայց երբ որ Պայմանը պատմեց նորան իւր գլխի բոլոր զարմանալի անցքերը, առա հաւատաց մայրը և ուրախացաւ վերստին զտանելով իւր որդին։ Պատաւ կինը ապրումներ այժմ միայնակ այն տան մէջ, որովհետու նորա ամուսինը երկու տարի յառաջ վախճանած էր։ Այսպէս աշա, երկարատեւ տրտութենից յետոյ միւսանգում ջերմացաւ պառափ սիրտը ուրախութեան ձառագայթներից։

Վայման հրաժարվեցաւ Պայմանը իւր մօրից և յետ եկա դէպի կալքաթաւ։ Ապա իւր ամուսինը առած իւր հետ, բերեց մօր մօտը, որ ուրախացնէ պատափ սիրտը. այլև Պայմանը հրամացեց շինել մի վառաւոր ապարանք այն փոքրիկ տան և անտափ մօտ ուր ինքը որպէս մանուկ խաղ էր արած, և կենումէր այն տեղ բոլոր ամուտը։ Ամենայն ամառն գալիս էր այս տեղ և խնամարկումներ իւր մայրը, որ մնաց իւր եղէզնաշէն տան մէջ մինչև իւր վերջը։ Մի քանի տարուց յետոյ մեռաւ կայսրը և Պայմանը թագաւորեց բոլոր Հնդկաստանի վերայ և կառավարեց իւր տէրութիւնը այնքան արդարապէս

և կարողապէս, որ վաղուց չեր թագաւորած մի ոյզպիսի մնջ և բարդաւոր կայսր:

8. ԶԵՐ ԱՅԻՆԴՆ ՔԱՐԵՒՄՆԵՐ.

1. Օտարուի դատաստանը:

Պարտկաստանի թագաւոր Սարրազը, իւր ապարանքի մնջ սրահումը, փաւաւոր արքայական աթոռի վերայ նստած, դատաստան էր առնում: Նորա յաջողակութեան վերայ գատավճիռ կորելու մէջ, որ ստացած էր բազմաժամանակեայ փորձով, զարմանումէր բոլոր Նսիան: Բայց միանգամ նորա թագաւորական աթոռի առաջն երեւան երկու մարդ և յառաջ բերեցին մի շատ դժուարին և տարակուական վէճ: Այս մարդերից մինը էր մի ծերունի գունաթափ և նուազ երեսքով, առաջնորդելով նորան մի երիտասարդ որ նման էր մի լիբ վարդակունի որ աչա կամենումէր բացվիլ: Ծերունի մարդը վշոր ընկաւ երեք անգամ, իւր ճակատով շօշափեց գետինը և խօսեց պյառէս: Ով թագաւորների թագաւոր և Աստուծոյ տեղակալ, ևս մօտենումմ քո արքայական աթոռի ոոքին և խոնդրումմ քեզանից գատաստան: Ես ունէի մի հատիկ որդի, որ իմ կեանքի ուրախութիւնն էր. իմ սիրտը քննուշ սիրով կապած էր նորա հետ, և ես լինելով հարուստ և պատուեալ, ոչինչ բանի կարօտ չէի: իմ երջանկութիւնն լրացուցանելու համար: Երբ որ իմ որդին ունի տարիկան էր, պատահեց ինձ իմ առուորական գործերի համար յանձն առնուլ մի հեռաւոր ճանապարհորդութիւն: Ծանր էր իմ սրտին հրաժարվիլ այն սիրուն և նազելի տղայից, որի բանականութիւնը և մարմինը ծաղկումէին և մթթումէին անսովորապէս արագ կերպով: Իմ անշափ մնջ սէրը կուրացրեց իմ աչքը, որ ես մոռացայ հեռաւոր ճանապարհորդութեան վտանգը և առայ նորան իմ հետ: Ապա ինձ, ոյդ անզգուշութենից հասել է ինձ երկար ու զառն աղէտք: Անապատումը, մէր կարաւանի վերայ յարձակվեցան աւազակներ: Ես ծանրապէս վիրաւորվեցայ և պիտոյ է իմ յատուկ աշքովս տեսանէի, որ իմ սիրելի զաւակս խլած ինձանից տանումէին: Ես աղաղակեցի նորա քամակից, նա իւր փոքրիկ ձեռքերը պարզեց կողկողազին դէպ ի իիս, բայց աւազակները ունէին քարեղէն սիրտ և չլռացան տանելով իմ զաւակը: Այս ցաւը և յուսահատութիւնը որ տիրեցին իմ սրտին, անպատճելի են: Կիսամեռ տարան ինձ իմ ընկերը, բայց կենդանացայ ես որ ազրիմ և երկար ժամանակ արտասուեմ իմ յիմարութեան վերայ:

Հս վերադարձայ իմ հայրենիքս և մարդիկ ուղարկեցի դէպ ի

աշխարհի ամենայն կողմեր, որ հարցուփորձ առնեն իմ զաւակի համար. բայց նա կորած էր և ես տասն տարի տրտմութենով անցուցի առանց մի լուր ստանալու նորա մասին: Իմ գանձերը դիզվում էին միմեանց վերայ առանց կամքողութեան, ևս ծերացայ և ցաւսդարվեցայ, պատճառ, մի մշտնջենաւոր վիճա հալումեր ու մաշումեր իմ կենդանութիւնը. ամենայն օր պասումին իմ վախճանին: Որովհետեւ ժառանգ չունեի, իմ հարտութեան առաւել մեծ մասը կոսկեցի արբունի գանձատանը և մնացածը իմ աղդականներին և ծառաներին. կոսակը յանձնեցի դատաւորին: Ես կարօտով փախազումի իմ մահուն, և ահա այս երիտասարդը որ այժմ կանգնած է քո արքայական մեծութեան առաջն, ներս մոռա. իմ մօտ և յայտնեց ինձ թէ իմ որդին է. նորա բոլոր խօսուածքը համանայն էին ձըշմարտութեան, նա ամենեն ճիշդ պատասխանեց իմ հարցուածներին. իմ սիրու շարժվեցա գթով դէպ ի նա. Ես խելամուտ եղայ, որ նա իմ կորուսած որդին էր, և ուրախանալով նորա վերադարձի վերայ, վերստին առողջացայ: Ես գնացի դատաւորի մօտ և յետ պահանջնեցի իմ կոսակը. բայց դատաւորը հաստատումէ թէ այս պատանի օտարականը մի խորերայ մարդ է և ոչ թէ իմ որդին, ըստ որում ատնտու կինը չէ գտանում նորա վերայ այն նշանները որ նա ունեցած էր երեխայութեան ժամանակին: Այս պատճառով ահա զիմեցի քո արքայական աթոռի առաջն, որ լուսաւորումէ արդարութեան և իմաստութեան արեդակը, և աղջումեմ քեզ, որ քո իմաստութենով վերահասու լինիս ճշմարտութեանը:

Ես տեղ ծերունին լուռ կացաւ և արտասուեց. բոլոր ժողովի սիրու շարժվեցա ծերունու պատմած բանիցը, և համարեա թէ ոչ ով տարակյա չուներ, թէ այս օտարականը, որի արտաքին կերպարանքը վկայութիւն էին տալիս նորա համար, ծերունու որդին է: Ամենայն մարդ ցանկանումեր լսել թագաւորի վճռական պատահանը, և զարմացած էին, որ նա, ընդդեմ իւր սովորութեանը, լուռ էր և երեւումէր թէ մասհութեան մէջ է:

Բայց ազահութիւնը տիրել էր թագաւորի սրամն, երբ որ նա լից թէ այն օտարականի գալսեան պատճառով իւր գանձարանը զբկվելու է մի ճոխ ժառանգութենից: Այս ազահութիւնը խաւարեցրեց նորա հոգին. շարժվեցա նորա բարկութիւնը և նա խէժաշբով նոյեց երիտասարդի վերայ, որ համեստ համարձակութենով կանգնած էր այն տեղ: Աերջապէս, թագաւորը բացեց բերանը և ասաց: Դատաւորը կատարել է իւր պարտականութիւնը. ատնտու կը նոշ վկայութիւնը միայն կարող է այս տեղ վճիռ տալ բանին, և

18. Վ. Ռ. Հ. Հ. Հ. Հ.

Մի մանուկ կանցնած էր վարդի թուփի մատ, որ իի էր կոկններով և ծաղկափթիթ վարդերով, բաղնալրազ ուրախութեանը նկատումը մանուկը երբեմն այս, և երբեմն այն վարդը, այս տեղ մի ծաղկի թերթ, այն տեղ մի կոկն: Հայրը հեռուից ծածուկ նայու-

մեր մանուկի վերայ. Նա կանգնած էր հովանաւոր տաղաւարի տակ, և խորին սիրով հանգստանումներ նորա աչքը իւր սրտի սիրածի վերայ. Արդեռք, չը վկայում սիրտս, խօսեց հայրը իւր մէջ, որպէս թէ մի աստուածեղէն մարդարէական ձայն այս վարդի թուփից բարբառումներ իմ հետ և այն կոկոնների և ծաղկների մէջ ցուցանումներ ինձ գալոց հայրական ուրախութենների նախապատկերը: Կամ թէ ինչ բան էր, որ այն մանուկը իմ աշքին այնքան հրաշապէս գեղեցկացնումներ և սիրելի էր շինում ծաղկափեթիթ վարդի թուփի մօս:

Ի՞ոյց մանուկը չէր յագենում նկատելով և հիանալով. սքանչացումը գեղեցիկ բանի վերայ զարթուցանումն իմացութիւնը ճըշմարիտ բանի: Մանուկը կամնումներ քննել, թէ ինչ կերպով կոկոնը կերպարանվամիք որպէս վարդ. Նա զրեց միմանց վերայ իւր մանուկ ձեռքերը և անդարձ աշքով նոյտումն կոկոնի վերայ: Հայրը ժպանցաւ: Այս, կարող էին աւելի բարձր էակներ ժպանը, երբ որ տեսանումնեն մի երկրաւոր իմաստուն իւր զրահաւորեալ աշքերը ուղղեցուցանելով դէպ ի մի աստղ կամ թէ խորամուխ առնելով մի հրափայլ փոքրիկ ճիճուի ներա:

Ո՞անուկը իմացաւ շուտով, որ իւր բրոլոր ճպնողութիւնը զուր էր. Նա քաղց մի կոկոն, բացեց նորան և նկատեց ներսի բանը մէջ ու շաղրութենով: Այս տեղ վերայ հասաւ հայրը:

Ի՞նչ բանի վերայ պյղպիսի ծանրութենամբ մտածումն զու, իմ մանուկ, հարցրեց հայրը: Ավագ իմ հայր, ասաց մանուկը, ինձ ցանկալի էր իմանալ, թէ ինչպէս էր այդ կոկոնը վարդ զառնում. այս պատճառով կորեցի նորան և բացեցի, բայց ես տեսանումնեմ միայն փոքրիկ և անշան թերթիկներ, ծալմած և խորշումած. երանի թէ շաւերած լինեի նորանց:

Այս չունի վեստ, իմ մանուկ, պատասխանեց հայրը. բնութիւնը հոգացողութիւն է ունեցել լիութեան համար. Նա ուշադիր է եղած ոչ թէ միայն մեր պիտոյլքներին, ոչը մէր ուրախութեանը և հարցամիրութեանը: Դու ուսար գոնեայ, թէ այնպէս հեշտ չէր խորամուխ լինել բնութեան գաղտնի բաների մէջ:

Ի՞ոյց դրանով աւելի իմաստնացած չէմ, քան թէ յառաջուց էի, ասաց մանուկը:

Թէ ոչ, պատասխանեց հայրը. Բայց զու ունիս ճշմարիտ զիտաւորութիւն ուսանելու, և մի բարի դիտաւորութիւն, ինքն ըստ ինքեան լու բան էր: Յաջողութեանը չէր միշտ կախ մարգաց. և դիցուք թէ յառաջ գնաց զործը, ոյնու ամենայնիւ բարի կամքը էր միշտ առանել պատուական բանը:

Ո՞ի փոքր յետոյ ասաց մանուկը համեստ հարցախիռութենով .
Ապա դու ասա ինձ, սիրելի հայր, թէ ինչպէս էր կոկոնը կերպա-
րանվում որպէս վարդ:

Հայրը պատասխանեց. իմ մանուկ, ես կարող եմ երեք բա-
ռով միայն հասկացնել քեզ թէ ինչպէս էր լինում. Կոկոնը անու-
մէ մեծութենով, գեղեցկութենով և զայելութենով, մինչև հասա-
նումէ իւր կատարածին: Միւս բաներին այնքան փոքր անզեակ էի
ես, ինչքան զու բնութիւնը տալիս է մոզ կատարելագործած զե-
ղեցիկը, բայց թաքրուցանումէ այն ճարտարապետական ձևոքը որա-
նով ծնուցանումէ և մատոցանումէ մեզ:

Ապա, մանուկը միւսանգամ վեր առաւ կտրած կոկոնը և խօսեց
հար հետ. Եթէ կոկոնը կարող է ինքը իւրանով ոյսպէս գեղեցիկ
կերպարանվիլ, աւելի գեղեցիկ քան թէ ամենայն բան որ շնուռմին
մարդիկ, ապա ընդեր չէ կարող պաշտպանել իւր անձը մի երեխայի
թշլ մասի երեսից: Ինչո՞ւ համար, մի և նոյն ժամանակում, կա-
րող է նա այդքան շատ և այդքան փարբ:

Ո՞ի թէ կոկոնը կարող էր ինքը իւրանով կերպաւորվիլ, ով
դաւիմ, հարցրեց հայրը, և քաղցր ծանրութեամբ նայեց մանուկի
երեսին:

Ամենեին ոչ, պատասխանեց մանուկը. ծաղիկները ունին նոյն-
պէս, ինչպէս ես, իւրեանց մոցը և հայրը, որ նորանց անոցա-
նումը, խնամարկումը և դաստիարակումը:

Այս մի և նոյն հայրը մեր հետ, պատասխանեց մանուկի ծնողը
քաղցրացած սրտով. բայց մեք չենք տեսանում նորան, մեք զգումնոք
միայն նորա կարողութիւնը և նորա սէրը մեր մէջ և մեր չորս կողմէր:

Այսպէս խօսեց նա: Մանուկի սրտումը գցացաւ մի յառակ բղ-
գացողութիւն. պատմառ, նորա հայրը ներս էր դրել նորա սրտի մէջ
մի թանգազին բան: Մանուկը ոյսուհետեւ համարումը այն վարդի
թուփը և դաշտի ծաղիկները որպէս հանգարտ եղբայրակից արա-
րածներ և անումը հասակով, իմաստութենով և զայելութենով:
Բայց հայրը պահպանումը սրտի մէջ մանուկի խօսուածքը և պատ-
մեց մանուկի խանդակամբ մորը:

Ո՞հ, ասաց մոցը. ինչպէս մօտ էր անմեղ տղայական մորին
ամենավերինը ճշմարտութենների մէջ:

19. Թառչութեամբ:

Աստուածային Պլաստնի աշակերտներին ընկերացաւ մի պատմ-
նի բանասեղծ, որին տուած էր արարիչ հօդի և ականաւոր ընդու-

Նակութիւնք: «Նորա տաղերգութիւնքը գովասանվումին ամենների բերանում, որ ճանաչումին նորան, և Հելլասը յօյս ունէր նորանից, թէ լինելու է երկրորդ Սովորկլէս և Պինդար: Քայլ բացմաւթեան գովասանութիւնը թմրեցրեց և փացուց նորան մինչև այն աստիճան, որ նա համարձակվեցաւ վատարանել Հեղիոդոսը, Այսքիւսը և միւս տաղերգութեան չեղինակները: Այս բանը ցաւեցրեց աստուածային իմաստունի սիրտը և նա կամեցաւ բժշկել այն մասվար երիտասարդի հոգին: Ես, խօսեց նա, սորանով աւելի արդիւնաբեր կը լինէի իմ հայրենիքին, քան թէ նորա համար տիրապետելով մի աշխարհի: Պատմառ, սուրբ բանաստեղծութիւնը տուած է մարդուն, որ բարձրացնէ նորան երկրից զեկ ի վեր. նա չէ հեւանդ հոգիների սեփականութիւնը»:

Ո՞ի գալնանացին երեկոյ, երիտասարդ բանաստեղծը մատեցաւ պլատոնին, երբ որ նա Ակադեմոսի այցումը զրունումէր միայնակ. Երիտասարդը ողջշն տուեց իմաստունին և ասաց. Ես համարեա թէ վերջոցոցել եմ իմ տաղերգութիւնը, որ պիտոյ է հիացներ Հելլասը և հասուցանէր ինձ անթառամ դաբնեայ պսակ:

«Ընորհաւորումմ քեզ, պատասխանեց Պլատոնը, եթէ յաջող էիր գտանված»:

Եշ ինչպէս կարելի էր ինձ անյաջող լինել, պատասխանեց շուառը երիտասարդը:

Պլատոնը խօսեց ապա. Տաղերգութեան չնորհը, իմ բարեկամ, բղխումէ աստուածներից. նորա են, որ պարզեւումն նշնչէս յաջողութիւնը. բայց դռւ, ինչպէս երեւումէ, մատածումն ոչ թէ նոցա, այլ միայն քո վերայ յատկապէս:

Եշրիտասարդը. Ես զգումմ Աստուածութիւնը իմ մէջ:

Պլատոնը. Աւելի լաւ էր, եթէ զգայիր քեզ Աստուածութեան մէջ:

Եշրիտասարդը. Մի թէ մի և նշյն չէին այդ երկուը:

Պլատոնը. Լմննեին ոչ: Այժմ խօսումմ գու միայն քո մասին, և մատածումն և հաւատումն քեզ և քո զօրութեանը միայն. բայց այլապէս, դռւ կը լուէիր և կ'երգէիր: Փառք մարդու բերանից և ամբոխի գովասանութիւն է քո առաջին ճշնազութիւնը. բայց, եմ սիրելի, սուրբ բանը պիտոյ է նախադաս լինի երկրաւորին:

Եշրիտասարդը. Ես չեմ հանկանում քեզ, ով Պլատոն:

Պլատոնը. Ես համենումմ խօսել քո չես տաղերգուների և աստանազների նախահօր բերանովը: Թէպէտու դռւ, ինչպէս լուսմամ, կամք շունիս անհամանելի համարել նորան, այնու ամենայնին:

է նաև առաւել ծերը, և Երիտասարդների պարսականութիւնն է առկանց զնել ծերերին:

Երիտասարդը. Այս, ևս չաւան ևմ դորան, թւակէտ նաև չեր կարող երբէք լինել բնձ ամենավերին կատարելութեան օրինակ, բայց խօսիր գու:

Պլաստնը. Այսուու ամենայնին ուսուցանումն նա պէսպէս իշմաստութիւնք իւր հին աւանդութեանների մէջ, որ գու չէիր կարող արշամարհնել. ահա լիք նոցանից մինը:

Պլաստնը տարաւ երիտասարդը մի անուշահու հոյանոցի տակ. նստեցին նորա, և իմաստաւնը պատմեց ոյս բանը:

Թամիրիս, Թրակիայի քաղցրախօս տաղերգուն եկաւ Օլքալիոյի թագաւոր Երիտոսի մօտ, որ առատապէս վարձարեց նորան իւր Երդասացութեան համար և մէծարեց նորան որպէս մուղաների սիրելին: Բայց արքայական գովասանութիւնը և փառահչեղ վարձատրութիւնը մէւերեցին պատուական տաղերգուի սիրալ: Վատճառ, իւր չափը մոռանալով պարծեցաւ նա յայտնապէս, թէ յաղթող էր լինելու երգեցողութեան մէջ, թէև նցյն խակ մուղաքը հանդէս դուրս գային ընդդէմ նորան:

Մուզայրը, որ այն գարումը դեռ ևս կենակից էին մարդերի չետ, հանդիպեցին նորան իւր ճանապարհի վերաց և պատեցին նորա յանդգնութիւնը. նորա պատմեցին նորան կուրութեանով, այլև, ոչ, խիցին նորանից Երգեցողութեան շնորհը և քաղցրահայն քնարածութեան հմտութիւնը:

Խնչպէս կարողացան աստուածքը, հարցրեց Երիտասարդը, բնքեանք իւրեանց հակառակելով, դարձմաւ ոչնչացնել այն աստուածեղն բանը որ պարզեած էին տաղերգուին:

Ոչ թէ նորա, պատասխանեց Պլաստնը, այլ նա թնբը ոչնչացրեց այդ աստուածային պարզելը: Նորա մէծամութեանից յառաջաւ նորա կուրութիւնը և պատիժը:

Բայց լիք գու, շարունակից իմաստունը, թէ ինչ աւելի ևս պատմում աւանդութիւնը: Մուզայրը չը ոչնչացուցին այն աստուածեղն բանը. նորա թոյլ տուեցին որ Թամիրիսի հոգին փոխանցի՛ մի սոխակի մէջ. լսումն զու նորա ձայնը այն անդ առերի մէջ. ճառնաշումն մուղաների սիրելին: Նորա կերպարանքը և շատ պարզ և անզարդ. նա թաքչում աւելի մութ մացաների մէջ և սիրում առաւելապէս հանդարտ դիշերներին հնչեցուշանել իւր եղանակաւոր երգեցողութիւնքը: Կա չը գիտէ, թէ կըումեր իւր քնիուշ կուրծքին մէջ թամիրիսի հոգին:

Պլատոնը լոեց և ականջ էր դնում սովորի երգատացութեանը։ Երիտասարդը վեր կացաւ և դառնացած սրտով հրաժարվեցաւ աստուածային խմասունիցը, և արհամարչելով բնութեան և խմասութեան խրատքը, չը վերադարձաւ ոյլ ևս Ակադեմոսի այգին։

Բայց և այս երիտասարդի անունը չէ յիշատակվում չելլենական տաղերգուների շարքումը։

20. ԲՐԵԴԱՆԴԵՐԻ ՅԵՇ.

Հնդկաստանի առաւել զեղեցիկ սահմանների մինումը, մշտապայծառ երկնակամարի տակ, դտանվումն մի լեռնապատ, խաղաղաւեա ձոր, որի մէջ վաղ ժամանակներից բնակումն սուրբ Քրամայի երկիւղած պաշտօնեալքը։ Այս տեղ հանդիսեց միանգամ, վոյր իշանելով սարերից, մի մանուկ թագաւորացն Հնդկաստանի, և կամենումն խօսել խաղաղաւուն քրամինների նահապեսի և գլխաւորի հետ Կորա խնդիրը կատարվեցաւ. մի ծերունի մարդ, բարձր և ազնիւ հասակով ընդունեց ոյն անծանով երիտասարդը, ասելով. Օտարական պատանի, ողջշն քեզ մէր խաղաղաւէս ձորի մէջ, թէ գիտութեամբ եկած էիր մէր մօտ, և թէ ճանապարհից մոլորվելով. „զիտութեամբ, ասաց պատանին, եկայ մէր մօտ, որ...“

“Օչերունին կորեց նորա խօսքը և սկսեց այսպէս. օտարականը միշտ համելի է մղմբ ձորի մէջ. միք կատարումն է հիւրասիրութեան պարտականութիւնը դէպի ի ամենայն մարդ, առանց հարցափորձելու թէ ով էր նա, կամ թէ ինչու համար էր եկած, որովհետեւ միք դեռ ևս պահպանումն է ոյն հին սովորութիւնը, չը քննել օտարականի անունը և խնդիրը, եթէ ոչ երեք օրից յետոյ և թէ ոչինչ ստիպողական գործ չունիս, որ կարօտ էր մէր պղնութեանը, ապա արի որպէս մարդ և եղբայր մէր ընկերութեան մէջ, և վոյշելիր ուրախ սրտով ինչ որ միք ձեռնչան էինք մատուցանել քեզ։

Մանուկ թագաւորադը գլուխ տուեց և գնաց ծերունու հետ բարձրահասակ արմաւենի ծառերի հովացուցիչ ստուերի տակը, ինչ տեղ ժողոված էր մի բաղմամիւ զերգատան։ Մարդ ու կին, տղապառ ու աղջկունք, բոլորը ազնիւ կերպարանքով և քաղցր սրտով հանդէպ եկան օտարականին և ողջունեցին նորան մի այնպիսի համարձակ կերպով, որպէս թէ տարիններով ճանաշոն ու սիրած էին նորան։ Երկիւպը սատանելով նորա չորս կողմը, մատուցանումին նորան ծաղիկներ։ Ո՞չ, այս ինչ անմեղութեան և ուրախութեան բնակարան է, ասաց աբբայազը։ յոդոց հանելով։ Աորա միշտ բնակումն այս տեղ միասին, պատասխանեց ծերունի բրամինը. որովհե-

ու քրամա աստուածը կենդանի է մեր հոգու և սրտի մէջ, այս պատճառով մեր զգացողութիւնը չեն ծերանում, մեք տեսանումներ Աստուած նորա արարածների և պարզեների ամեն մինի մէջ, սորա համար ոչ մի ժամանակ ուրախութիւնը չէ պահասում մեղ. նշյալքս անծանոթ են մեզ այն կարիքները որ լուսանել կարող չէինք մեք:

Ո՞ր խորին ականայ հառաջանք գուրս եկաւ արբայազն պատահու կուրծքիցը: Դու ճանապարհից վաստակած ես, ասաց ծերունին, և ակնարկի արեց: Խաղոյն մօտեցան երկու մանուկ և բերեցին ոտնալուայի աման, որ լուսանան օստարականի ոտերը. և երկու ծագիափելին կոյս աղջիկ մասուցին նորան ձորի ամենազնիւ որուողներիցը:

Աբբայազը չը կամեցաւ թողուլ, որ լուսանան նորա ոտերը: Այս, հիւրասիրութեան սուրբ օրէնքն է, պատասխանեց ծերունին, և մի հուշացուիչ հնար, որ աւելի զուարթը կամաւոր պատրաստութենավ մասուցանում վաստակած մարդուն: Այս տեղ ոչինչ խորի չը կայ տիրոջ և ծառայի մէջ. մեք պատվումներ ամենայն ճանապարհորդի մէջ այն մարդկային կերպարները, որ քարոզումէ, թէ նա մարդասէր բրամայի զաւակն է:

Աբբայազը լուս կացաւ, բայց մի վառուն կարմրութիւն պատեց նորա երեսի վերայ և նորա ծունկերը գողումին: Նորա որպիսութիւնը լսու չէ, ասացին մանուկները որ նորա համար ոտնալուայ էին պատրաստել. նորա ծունկերը գողումն. նա մեր պատվներից սչինչ չը կերաւ, ասացին ցաւակցարար կըս աղջիկները:

Ապա մատեցաւ նորան ծերունի Քրամինը և բանեց նորա գողուն ձեռքերը, իմ օրդի, ասաց նա. ցերեկի տօթը վաստակեցուցել է քեզ. կամենում տանել քեզ մեր բնակարանը, որ դու մի փոքր հանգստանաս. քունը կը նորոգէ քո սպառեալ զօրութիւնքը, և դու կարող էիր մասնակից լինել մեր ուրախութեանը այն սուրբ տօնի մէջ, որ էկուց կատարելու ենք:

Վանուկ թագաւորազը զնաց քաղցրասիրած ծերունու հետ գեղի նորա խրճիթը. այս տեղ պատրաստած էր ննջարան անուշահոտ խոսերից և նոցա վերայ սփառած էր մի նուրբ ծածկոց, այնպէս սպիտակափայլ, որպէս նոր եկած ձիւն: Ահա, ասաց Իրամինը, կարող ես դու այս տեղ հանդարս ննջել, լսու որում դու կը հանգստանոյիր ամենասէր Քրամոյի գրկումը, որ օրչնել է այս ձորը: Այդ բանը փորձավ կը հաստատեն քեզ այս կակուլ և մեղմահոտ խոտերը որոնց վերայ կը հանգչիս դու, և այս ձիւնափայլ ծածկոցը անմեղութեան նշանն է:

Ծերունին այս խօսքի վերայ լինելով, ներս մօսան երկու մաս Մ-Հ 2.

Նուկ բերելով մի բաժակ մշտ կարմիր գինի: «Ծերունին առաւ բաժակը և խօսեց թագաւորացնի հետ. Ահա մեք վայելումնիք միայն դաշտի, ծառերի և որթատունկերի պառողքը, ինչպէս բնութիւնը տալիս է մեզ. բայց հիւանդների և վաստակածների համար քամումնիք խալող, սա մի հատ արիւնն է, ասաց նա ժպանելով, որ մեք թափումնիք, բայց այդ արիւնչեղութիւնը լինումէ առանց հառաջանքի, և հառաջանք մեղմացնելու համար. խմբը, իմ սիրելի. դա առողջարար կը լինի քո սրտին:

Պատանին գողդողալով առաւ բաժակը և ըմպելով նորան, մի սաստիկ սարսափ բռնեց խրեան: Երբ որ բաժակը յետ տուեց բրամինին, լսեց հեռուից մի մեղմ՝ չանդիսաւոր, բազմաձայննեայ երգասացութիւն: Այս ինչ բան է, հարցրեց թագաւորացը:

Վայ, մեր երեկոյեան ժամերգութիւնն է, պատասխանեց բրամինը: Արեւ մտանումէ. մեք բրամային մատուցանումնիք մեր հասարակաց շնորհակալութիւնը այն երկնաւոր լուսի համար որ ներքեւ է ուղարկել մեզ, և այն կեանքի համար որ պարզեցել է մեզ: Մեք հաւատումնիք, թէ ամենեան մարդասէր և բարերար էակին կարող է միայն հաճշյանաւ ինդութեան և սիրու երգը: Այս պատճառով մատուցանումնիք նորան մեր շնորհակալութիւնը երգասացութեանով և ընկերութեանով: Եւ քեզ մեք ազօթքի մէջ մոռանալու չնիք, ըստ որում և դու այժմ պատիկանումն մեք գերդաստանին. բրաման թաղ պարզեց, որ անոյշ քննես և ուրախ զարթնուս:

Վայէս խօսեց ծերունին քաղցր հաճշյականութեանով և հեռացաւ թագաւորացնիցը. բայց սա ծածկեց գեմքը և չը կարողացաւ նայել այն պատիկանելի աղնիւ տղամարդի երեսին և փոխարինել նորա ողջոյնը:

Վայէմ միայնակ էր պատանին, բայց ոչնիչ քուն չնկաւ նորա աշքերի վերայ. թվումէր նորան, որպէս թէ արիւնը եռումէ երակների մէջ. Նա լսումէր իւր սրտի զարկողութիւնքը. անցած օրի պատիկերը դրած էր միշտ նորա հոգու առաջեւ, և այնքան աւելի լուսափայլ և ճառագայթաւէտ, ինչքան որ խաւար էր նորա հոգու խորքի մէջ: Հանգարա և լուսակ գիշերը, որ տերեների սօսափիւնով ներս էր փայլում նորա օմեանի մէջ, անչափելի երկարացաւ նորա համար: «Նա կարօտով սպասումէր առաւօտու լուսանալուն. բայց յետոյ ընկաւ մի անդանման քնի մէջ, որ շատ անգամ խափանվումէր ահարկու երազներով: «Նա զարթեց արեագալի հետ միասին. մի քաղցը երգ, որ փոխ առ փոխ ասումէին տղամարդիկ և կանայք, լըսվեցաւ հեռուից աւելի ծանր և հանդիսաւոր կերպով քան թէ ան-

ցեալ երեկոյի երդասացութիւնն էր: Այս, Քրամինի գերդաստանի առաւօսեան աղօթքն էր: Թագաւորապնի սիրտը անձառելի կերպով շարժվեցաւ զորանից, և նա կամենումքը մասնակից լինել հասարակաց աղօթքին, բայց չը կարողացաւ:

Վապա մեղմով բացվեցաւ ննջարանի գուռը. ծերունին նոյեց բացուածիցը, ըստ որում հոգսի մէջ էր այն հիւանդ կարծեցած երիտասարդի մասին և չը կարողացաւ համբերել մինչև նորա զարթնուլը: Նա կամենումքը հանդարտ յետ դառնալ, եթէ երիտասարդը զեռ ևս քնած էր, բայց երբ որ տեսաւ, թէ զարթել է, ողջունեց նորան քաղցրութեամբ և հայրական սրտացաւութենով հարցրեց նորա առողջութիւնը: Երիտասարդի սիրտը սաստիկ շարժվեցաւ և նա խօսեց. «Տէ, այս ի՞նչ սէր է, որին հանդիպումմ ես ձեր ձորի մէջ, Կմ որդի, ասաց Քրամինը, մք պաշտումնք մի մէջ Հայր և սիրումնիք նորա ամեն մի արարածը, որպէս նորա իմաստութեան և բարութեան պատկեր, բայց ամենայն մարդ, որպէս նորա որդի և նմանակից, և բոլը մարդկութիւնը որպէս մեր եղրայրներ: Մանկութենից սկսեալ սովորած լինելով սրտի պարզութեան և երիխոսական անմեղութեան, այս կեանքը գարձել է մեր համար երկրորդ բնութիւն: Եւ մէք չնք պահանջում ոչինչ չնորհակալութիւն, որ չէ վայելում մէզ: Այժմ զու մեր հետ միասին կը կատարես Անրուուրախ առնը:

Հազիւ թէ ծերունին աւարտել էր իւր խօսքը, և ահա երիտասարդը բաց թողից աչքերիցը արտասուրքի հեղեղ և աղաւց ծերունին, որ նորան գուրս տանի ձորիցը, ոյն ճանապարհով, ինչ ճանապարհով եկած էր այս տեղ:

Քրամինը զարմացաւ այս այլանդակ օսարականի վերայ և լուսթեամբ առաջնորդեց նորան այն ճանապարհով, որ զուրս էր տանում ձորիցը: Վապա խօսեց պատանին. ես յաւիտեան հրաժարվումմ ձեր ձորից. այս տեղ կարծումքի խաղաղութիւն գտանել ձեր մէջ, բայց դժու իմ կեանքի առաւել ահարկու տանջանքը:...

Չեմ հասկանում ձեր ասածը, պատասխանեց Քրամինը, և տարակուսական աչքերով նոյեց երիտասարդին. մեր խաղաղաւետ ձորը... Այսո, ձեր ձորը, պատուարժան հայր, ձայն արձակեց երիտասարդը, «Խաղաղութեան և անմեղութեան բնակիրան է»: Աեղանում, ասաց ծերունին երկնաղայծառ խաղաղութենով, չէ թափվում ոչինչ արտասուրք, եթէ ոչ, ուրախութեան և չնորհակալութեան արտասուրք. ոչ մի կաթել արիւն չէ թաց առնում հողը, և ոչինչ վըշտացրած անմեղ սրտի հառաջանք չէ ապականում Քրամինի շունը:

Այն գետինը որ մեղ կրումէ և մնուցանումէ, այն օդը որ մեղ շըր-ջապառումէ, մաքուր և անարատ է:

Իսոյց ես, ձայն տուեց թաղաւորազը, ես պիղծ եմ. ոյս է ա-հա, որ ձեր անմեղ ձորը փոխարկումէ իմ համար մի տանջանքի բնա-կարան: Ծերունին լսեց, և գթութեան և ցաւակցութեան արտա-սուքի հեղեղ թափվեցաւ նորա խոշոր աչքերից այն վատարազդ ե-րիտասարդի վերայ:

* Առա կանգնած էին ձորի սահմանի վերայ, երիտասարդը միւ-սանդամ խօսք վեր կալաւ և ասաց. պատկառելի ծերունի, քո գութը պատառոսումէ իմ սիրտը, բայց Երանի թէ կարողանար և բժշկել նորա ներսի խօսքը: Այժմ լին դու իմ դլիսի թշուառ անցքը: Ես Ամանդուա թագաւորի որդին եմ, պիտոյ է ժառանգէի նորա աթոռը և բոլոր Հնդկաստանի թագաւորութիւնը. բայց իմ ձեռքերս ապա-կանված են անմեղ արիւնով. մի այրի կնոջ միամօր որդի սովանվեցաւ իմ սրովը. արիւնով, արտասուրով և հառաւանքով ծանրաբեռ-նած եմ ես. իմ աշարկու գործը պատկերացնելով ինձ, ահ ու զո-ղի մէջ էի, թողեցի իմ ապարանքը և յշս ունէի ձեր ձորի մէջ դտանել այն խաղաղութիւնը որ խնդրումէի. բայց ես գտոյ ոյն տեղ իմ կեանքի ամենադառն ժամերը. ձեր խաղաղութիւնը դարձաւ ինձ տանջանք, ձեր անմեղութիւնը երևեցաւ ինձ մի խիստ յանդիմանու-թիւն իմ յանցաւորութեանս, և ձեր ամեն մի սիրախառն նայե-ցուածը ներս ընկաւ իմ սրտի խաւարի մէջ, ինչպէս մի բոցավա-կայծակն ներս է ընկնում մի մույլ գիշերական արհաւիրքի մէջ:

Ա այ ինձ. ես բերեցի իմ անձը, իմ անձը, որից փախչումի ես, այս խաղաղութեան բնակարանների մէջ. ներեցէք ինձ, և եթէ կարելի էր, աղօթեցէք իմ համար: Ես գնում այն տեղ, ինչ տեղ արժան էր ինձ գնալ, այսինքն, Ապաշխարողների մօտ:

Այս խօսքերովը հրաժարվեցաւ նա Քրամինից և խաղաղաւետ ձորիցը. ծերունին երկար ժամանակ նայում էր նորա քամակից, մին-չե նա ելանումէր սարերի վերայ: Ապա բարձրացրեց նա ձեռքերը դէպ ի երկինք, աղօթեց, և դարձաւ խրայինների մօտ, որ տօն էին կատարում:

21. ԱՆԴՐԱ ՊԱՐ:

Ոի հարուստ և բարեգործ մարդ կամենումքը բաղդաւորել իւր ծառաներից մինը, և բաշխելով նորան աղասութիւն, հրամայեց պատ-րաստել նորա համար մի նաւ, տեսակ տեսակ թանգագին ապրանք-ներով: Գնա, ասաց նորան, այդ ապրանքները տար նաւով մի օտար աշխարհ, օգուտ ու շահ ստացիր, և բոլորը քեզ լինի:

Օստաւան ճանապարհ դուրս գնաց, բայց մի քանի ժամանակ ծովի վերաց շրջելով, և աչա բարձրացաւ մի սասափի մըրիկ, զորկեց նաւը մի քարածոցի և խորակեց նորան։ Կորա թանգարին ապրանքները խորասոյց եղան ծովի մէջ, նորա բոլոր ընկերակիցքը կորան, և նա ինքը անչափ նեղութենով հասաւ մի կղզու եղի։ Քաղցած, մէրկ և անօդնական, ներս գնաց նա աշխարհի մէջ և լաց էր լինում իւր անբաղդութեան վերաց։ Այս միջոցին տեսաւ նա չեռուց մի մեծ քալաք, ինչ տեղից բազմաթիւ ժողովուրդ ուրախութեան ձայն բարձրացնելով, գալիս էր նորան հանդէպ։ Ո՞ղջ լինի մէր թագաւորը, աղաղակիցին ամենեքեան։ Նորան նստեցրեցին մի փառաւոր կառքի վերաց և ներս տարան քաղաք։ Կա ներս մտաւ թագաւորական պալատի մէջ, ինչ տեղ ձգեցին նորա վերաց մի ծիրանի վերարկու, թագ զբեցին գլուխը և բազմեցրեցին նորան մի ուկեղէն աթոռի վերաց։ Մեծամեծները շրջապատեցին նորան, վայր ընկան նորա առաջեւ, և բոլոր ժողովրդի անունով երգում կերան, հաւատարիմ լինել նորան։

Եւոր թագաւորը կարծումը, թէ այս բոլոր փառքը և մեծութիւնը մի գեղեցիկ երազ է, մինչև որ նորա բաղդի տեսղականութիւնը փարասեց ամենայն տարակուսանք այս հարշալի անցքի մասին։ Ես չեմ հասկանում, ասաց նա ինքը իւրեան, թէ ինչ բան կուրացրել է այս զարմանալի ժողովրդի աչքերը, որ սոքա մի մէրկ օտարական ընտրումն իւրեանց վերաց թագաւոր, սոքա չը զիան, թէ ո՞վ եմ ես, չեն հարցնում թէ ինչ տեղից եմ եկած, և ինձ փառաւորումն արբայական աթոռով։ այս ինչ օտարանշան սովորութիւն է։

Վասպիսի մտածութեան մէջ էր նա, և նորա հարցասիրութիւնը այնքան զօրացաւ, իւր ընտրութեան պատճառը իմանալու համար, մինչև որ մաքումը դրեց, այս անհասկանալի բանի խորհուրդը հարցնել իւր պալատի մեծամեծների մինից, որ երեսումը նորան իմաստուն մարդ։

Պատուելի՛ վեղիր, խօսեց նորա հետ օտարականը, ասա ինձ, թէ ինչ պատճառով դուք ընտրել էր ինձ թագաւոր ձեր վերաց, ինչպէս կարողացաք դուք իմանալ, թէ ես եկած էի ձեր կղզին, և ինչ պիտոյ է լինի իմ վերջը։

Տէր, պատասխանեց վեղիրը, այս կղզումը բնակումն հոգիներ սոքա երկար ժամանակներով յառաջ խողրած են Ըմբնակարողիցը, ամենայն տարի մի արամորդի ուղարկել նոցա վերաց թագաւորելու համար։ Ամենակարողը լսելով նոցա ինդիրը, թոյլ է տալիս մի

մարդու ամենայն տարի մի և նոյն օրում ցամաք գուրս գալ այս
կղզու վերայ, Ապա բնակիչքը, ինչպէս դռ տեսար աշա, շատապու-
մն ուրախութենով հանգէս զնալ նորան և բնդունումն նորան
որպէս իշխանաւոր իւրեանց վերայ. բայց նորա թագաւորութիւնը
չէ տեսում մի տարուց աւելի: Երբ որ այս միջոցը անցած, և այն սահ-
մանեալ օրը հասած էր, ապա զրկվումէր նա իւր արժանաւորութե-
նից. նորա վերայից հանումն թագաւորական զարդը և հազցնումն
նորան անպիստան զգմասներ: Նորա ծառայքը բռնութեամբ տանու-
մն նորան դէս ի կղզու եղրը և գնումն նորան մի նաւի մէջ, որ
յատկապէս շինած էր նորա համար, որ և պիտոյ է տանէր նորան
մի այլ կղզի: Այդ կղզին անապատ ու անշնչն է. ամենայն մարդ,
որ մի քանի օր յառաջ հզօր թագաւոր էր, գալոց է այս տեղ մեր-
կանդամ և չէ գտանելու ոչ հպատակ, ոչ բարեկամ: Ոչ ով չէ
լինելու նորա անբազութեանը ցաւակից, և նա այս անապատ աշ-
խարհումը վարելու է մի տրտում և տառապելի կեանք, եթէ իւր
թագաւորութեան տարին իմաստնապէս գործ դրած չէր: Ճին թա-
գաւորի արտաքսվելուց յետոյ, ժողովուրդը այն նոր թագաւորին,
որ Ամենակարողի նախախնամութիւնը ամենայն տարի ուղարկումէ ան-
հատապէս, հանդէս է գնում իւր սովորական կերպով, և այնպիսի
ուրախութենով բնդունումէ նորան, ինչպէս առաջին թագաւորը:
Այս բանը, ով տէր, այս թագաւորութեան մշնչնաւոր օրէնքն
է, որ ոչ մի թագաւոր չէ կարող խախտել իւր թագաւորութեան
միջոցին:

Վարդեգ և իմ նախնիքը, հարցրեց թագաւորը, տեղեակ էին
իւրեանց փառքի կարճատեռթեանը: Այժմ, տէր, պատախաննեց վե-
զիրը, ոչ մինչ նոցանից անտեղեակ չէր այս անցաւորութեան օրէն-
քին. բայց մի քանիքը թոյլ տուեցին այն փայլողութեանը, որա-
նով շրջապատած էր իւրեանց աթոռը, կուրացնել իւրեանց աչքերը.
Նոքա մոռացան տրտում ապագան, անցուցին իւրեանց կեանքը ա-
ռանց իմաստնանալու: Միւսերը արբեցան իւրեանց բազզի քաղցրու-
թենովը և չը կամեցան միտք բներել այն անապատ կղզին, վախելով
թէ մի գուցէ զառնացնեին իւրեանց ներկայ կեանքի վայելչութիւնը,
և այդպէս, դինովացածների նման գլորվեցան մի ուրախութենից դէս
ի միւս ուրախութիւն, մինչև լրացաւ նոցա ժամանակը և նոքա ձըգ-
վեցան այն նաւի մէջ: Աւատարադութեան օրը վերայ հասած, ա-
մենեքնան սկսեցին գանգատել իւրեանց վերայ և արտասուել իւրեանց
կուրութիւնը. բայց ժամանակը անցել էր, և նոքա ժառանգեցին
այն թշուառութիւնը որ սպասումէր նոցա, որանից և իմաստութեամբ
ազատել իւրեանց անձը կամեցած չէին:

Այսպիսի պատմութիւն այն հոգու բերանից, աչ ու դող ձգեց
թագաւորի վերայ. նա զարհուրեցաւ առաջին թագաւորների դլիսի
անցքերից և ցանկացաւ ազատ մնալ նոցա վասարազդութենից: Մեծ
անհանգստութեան մէջ լինելով, որ այն կարճատև տարուցը անցած
էին աշա մի երկու շաբաթ, մոածեց թէ պիտոյ էր նորան շոազել
ևս առաւել օգուտ քաղել իւր թագաւորութեան մացած օրերիցը:

Ով իմաստուն վեղիր, պատասխանեց թագաւորը այն հոգուն.
Գու յայտնեցիր ինձ իմ ապագայ դրութիւնը և իմ թագաւորական
իշխանութեան կարճատևութիւնը. բայց ինդրիմ քեզանից ասել ինձ
նշնպէս, թէ ինչ պիտոյ էր առնել ինձ, և թէ կամենայի աղատվիլ
իմ առաջների թշուառութենից:

Միաբ բեր, ով տէր, պատասխանեց հոգին, որ զու մերկան-
դամ եկել ես մեր կղզին. պատմառ, և այսպէս պիտոյ է քեզ դուրս
գնալ այս տեղից, վերադառնալու միջոցին: Աւրեմն մի հատ ճանապարհ
կայ փրկելու քեզ այն կարօտութենից և թշուառութենից, որ հասա-
նելու է քեզ այն աքսորական աշխարհումը: Ճանապարհը այն է, որ
դու այդ անշեն-աշխարհը պտղաբեր շինես և բնակիչներով լցու-
ցանես: Այս բանը թշլ է տուած մեր օրէնքներով, և քո հպա-
տակը այնպէս հնազանդ էին քեզ, որ պատրաստ էին գնալ, ուր
դու կուղարկես նորանց. ուրեմն ուղարկիր այն տեղ շատ մշակներ
և հրամայիր այն անշեն դաշտերը դարձուցանել պտղաբեր անդեր,
քաղաքներ և շնեմարաններ շնիր և ժաղովիր նոցա մէջ կեանքի
բոլոր հարկաւոր պաշարները. մի խօսքով, պատրաստիր քեզ մի նոր
թագաւորութիւն, որի բնակիչները ուրախութեամբ կընդունէին քեզ
պիտութելուց յետոյ. բայց շապիր, թող որ մի բոլէ ևս անօգուտ
անց չը կենայ, ըստ որում կարճ է ժամանակը, և ինչքան աւելի
կաշխատես գու քո ապագոյ բնակարանի համար, այնքան ևս երջա-
նիկ կը լինի քո կացութիւնը այն տեղ: Այնպէս համարիր, որպէս
թէ քո թագաւորութեան տարին վերջանալու էր էգուց. գործ դիր
քո աղատութիւնը, որպէս մի խելք փախստական, որ կամք ունէր
աղատվիլ իւր կորասից: Բայց եթէ զու կարհամարհեա իմ խրատը,
կը ծուլանաս և քնածութեան կը տաս քո անձը, ապա կորած էիր
դու և քո բաժինը կը լինի երկարատև թշուառութիւն:

Թագաւորը խելք մարգ էր. վեղիրի խօսակցութիւնը թեւեր
տուեց նորա մոտածութեանը և գործականութեանը: Խակցն դուրս
ուղարկեց նա մի մեծ բազմութիւն, որ գնացին ուրախութեամբ, և
չերմութեամբ սկսեցին գործը: Աղջին սկսեց գեղեցկանալ և, յառաջ
քան թէ լրացած էին վեց լուսին, բարձրացան քաղաքներ նորա

ծաղկալարդ գաշտերի վերսոյ: Այնու ամենայնիւ թագաւորը չը դադարեց իւր գործերից, այլ ևս առաւել բնակիչներ ուղարկեց այն կողմը, և յետոյ գնացողները աւելի ուրախ էին քան թէ առաջնորդը, որովհետեւ մի այնպիսի շնչ աշխարհ էին գնում, ինչ տեղ կարող էին գտնանել իւրեանց բարեկամբը և ազգականբը:

Եւ աչա օրէ օր աւելի մասնումեր տարու վերջը: Առաջին թագաւորները աչ ու զողով էին մտածել այս բռակի վերսոյ, երբ որ պիտոյ է կորուսանեին իւրեանց անցաւոր փառքը և մեծութիւնը, բայց սա մեծակարօս փափառվ սպասումեր այդ ժամանակին, ըստ որում գնալու էր այնպիսի աշխարհ, ինչ տեղ իւր իմաստուն ժրադինութենով պատրաստել էր իւր համար մի տեղական բնակարան վերջապէս հասու սահմանեալ օրը: Ըմբռնեցին թագաւորը իւր յատուկ պալատի մէջ, կողոպտեցին նորա թագը և արքայական զարգերը, և նորան զրեցին այն անփախչելի նաւի մէջ, որ պիտոյ է տանէր նորան իւր աքսորանքի տեղը: Բայց նոր կղզու եղբին հասած նա, իսկըն բնակիչքը ուրախութեամբ հանդէպ եկան նորան, մէծ պատուով ընդունեցին այն եկաւորը և նորա գլուխը, փոխանակ այն թագին, որի վայելութիւնը տեած էր մի տարի միայն, զարգարեցին մի անթառամ ծաղկի պակով: Ամենակարողը վարձասրեց նորա իմաստութիւնը, բաշխեց նորան իւր հոգատակների անմահութիւնը և կացուց նորան յարիսնական թագաւոր նոցա վերսոյ:

Այն հարուստ և բարեգործ մարդը Աստուած է, ծառան, որ նորա տէրը գուրս ուղարկեց, և մարդը որ գալիս է աշխարհ: Աըդ զին որի վերսոյ ցամաք է գուրս գալիս նա, աշխարհս է: Այն բնակիչքը որ ուրախութեամբ հանդէպ են գնում նորան, նորա ծնողին են, որ հոգաբարձու էին մերկանդամ լացողի համար: Այն վեղիրը, որ տեղեկութիւն է տալիս նորան տիսուր ապագայի մասին որ պիտոյ է հասանէ նորան, և իմաստութիւնը: Նորա թագաւորութեան տարին է մարդուս կեանքի ընթացքը, և այն անապատ կրզին, որ տարվում նա, և ապադայ կեանքը: Այն մշակները որ նա դուրս է ուղարկում, նորա բարի գործերն են, որ իւր կենդանութեան միջոցին գործում նա: Այն թագաւորները, որ նորանից յառաջ գնացած են այն տեղ, առանց մտածելու իւրեանց ապագայ թշուառութիւնը, են մարդերի մէծ մասը որ զրազած էին երկրաւոր վայելչութեններով միայն, առանց քննելու թէ ինչպէս կը լինէր նոցա կեանքը մահուց յետոյ: Կոքա կը պատժվին կարօտութենով և թըշուառութենով, ըստ որում Ամենակարողի ամոռի առաջն երկումերն դատարկանեռն և անարդին:

22. ԱՐԻ-ԴՐԵՎԻ ԷՐԵՄ-ՀԱՅ ՀԱՅԱԳՈՎՐԾ ՀԱՅԻ.

Յակորը տան և հինգ տարօք մանուկ էր, այսինքն, մի այն-պիսի տղայ, որ ուներ լաւ դիտառութիւններ շատ, բայց չէր հե-տևում նոցա, և լի էր սխալանքներով, որոնց վերայ ցաւումէր ամե-նայն օր, Կա առ ի սրտէ սիրումէր իւր հայրը և վարժապետը, բայց ևս առաւել սիրումէր իւր ախորժելիքը. Նա պատրաստ էր զոհելնոցա իւր կեանքը, տարութերվումէր ապաշաւանքի և մեղքերի մէջ, և վեր-ջումը նորա փոփոխական ընթացքը լաւ խորհուրդների և կորուսա-կան սխալանքների մէջ ռշնչացրեց ուղղութեան յշուը թէ նորա բա-րեկամների և թէ իւր յատուկ սրտի մէջ ։ Այսուհետեւ նորա հայրը, որ մի արժանաւոր մէծատուն մարդ էր, չը կարողացա երբէք դուրս հանել իւր այնքան յաճախ վիրաւորված սրտից այն հոգսը և ցաւը, որ իւր Յակոր որդին հեռանալով հայրական տանից, թափառելով այս կողմ և այն կողմ, զանազան մոլորեցուցիչ, ծաղկաւէտ և լը-պրծուն ձանապարհների վերայ, ինչ տեղ չէր կարող հասանել նո-րան ոչ հայրական զգուշացուցիչ ձեռքը և ոչ ծնողական խրատա-բարբառ ձայնը, կործանվելու է մի արատից միւս արատի մէջ, և վերջումը վիրադանալու է մի ապականեալ և այլանդակեալ հոգով, որ կորուսած էր իւր մաքուր գեղեցկութիւնքը և ամենայն բան, մին-չե առաքինութեան նշյլը ևս, այսինքն մի ապաշաւող սիրտ:

Վայ մէծատուն մարդը ուներ քնքուշ, մեղմ և երկիւղած հոգի, բայց հիւանդոս և չափից դուրս փափկահիտ էր։ Իւր կողակցի գե-րեզմանը ասես թէ դրած էր նորա կենդանութեան ուագի տակ և փո-րելով աւերումէր ամենայն ածու, ինչ տեղ նա ծաղիկներ էր որո-նում։ Այժմ հիւանդացաւ նա իւր ծննդեան օրին և գուցէ թէ այն օրի պատճառով, ըստ որում նորա գօսացեալ սրտին ծանր էր այն օրը, որ առաւել ուժգին կենդանացնումէր նորա մէջ իւր հանգու-ցեալ կողակցի յիշատակը։ Որովհետեւ չօր սիրտը անդադար թուլա-նումէր, մտատանջեալ որդին գնաց գէպի ի այն ծառաստանը, ուր գը-տանվումէր իւր մօր շիրիմը։ այս ծառաստանը շինել էր տուած հայրը իւր կեանքի տիսուր օրերի մէջ։ Այս տեղ, իւր մօր հոգուն ուխա կատարեց Յակորը, որ այսուհետեւ պատերազմէ իւր բարկաց-կոտ բարբի և հեշտասէր սրտի հետ։ Զօր ծննդեան յիշատակը ար-գարեւ յորդորումէր նորան այսպիսի ձայնով։ Այն բարակ հողի թէրթը որ կանգուն էր պահում քո հայրը, որ և բաժանումէր նորան քո մօր գերեզմանի փոշոց, շուտով փուլ կը գայ, և կարելի է թէ մի քանի սրտ մէջ, և ապա վշտացած և անշրջ սրտով մեռանելու է նա

և կը դառնայ գեպ ի քո մայրը, բայց չէ կարող լուր տանել նորան, թէ զու ուղղել ես քո բարբը: Այն ժամանակը սասարիկ արտասուրք թափից Յակովը, բայց, ով անբաղդ Յակոբ, ինչ օգուտ դորանից, որ փայփանումէ քո սիրտը և դու լաց ես լինում, առանց ուղղելու քո անձը:

Ո՞հ քամի սրից յետոյ միւսանգամ հաստատվեցաւ հօր առողջութիւնը. գութը անչափ շարժվելով և յշսը շատ զօրանալով, սեղմեց նա զղացող պատանին իւր տենդանման ախտացեալ կուրծքի վերոյ: Յակովը արբեցաւ ուրախութենից, տեսանելով իւր հօր վերաբին առողջանալը և ընդունելով նորա ծնողական համբորը. ևս առաւել թեթևամետց նա, վայրենացաւ նորա բարբը և վասթարցաւ նորա վարբը: Նորա դաստիարակը կամենալով իւր զօրաւոր խստութեամբ անվնաս կացուցանել հօր հիւանդուտ փայփասարութիւնը, ընդգէմ զուրա եկաւ Յակովի մոլեգին ուրախութեանը: Յակովը վասովեցաւ, անչնաղանդ եղաւ իւր դաստիարակի պատուերներին, որ չէին երեսում նորան այնպէս կակուղ ինչպէս իւր հօր պատուերները. և երբ որ դաստիարակը կրկնեց իւր խրաները հաստապէս, զօրաւորապէս և հարկաւորապէս, Յակովը, անզգամ Յակովը շատ խոր վիրաւորեց իւր խիստ բարեկամի սիրտը և անարգեց նորա պատիւը, և այս լիբր ստահակութիւնը գեպ ի դաստիարակը, թունաւոր նետի պէս թռու և հանդիպեց յուսացող հօր այնքան յաճախ խոցոտված սրտին, այս մէրբին չը կարողացաւ տանել հայրը և վայր ընկաւ հիւանդութեան մահճի մէջ:

Ես կամք շունիմ նկարագրել ձեզ, սիրելի մանուկներ, ոչ Յակովի վիշար և ոչ նորա մեղքերը. բայց այն խիստ դաստատանոյ, որանով պարա էր ձեզ դատել Յակովի արարբը, դատեցէք և ձեր արարբը որ գուցէ թէ նշնպէս նախատելի էին: Ո՛չ, ինչ զաւակ կարող էր մօտենալ իւր ծնողների մահու մահճին, առանց պիսրական լինելու խօսել այսպէս. Նեմէ նոցա կեանքից չէի պակասեցրած ոչինչ տարիներ, այս արժեն եմ ես նոցա շարաթներ և օրեր: Ո՛չ. այն ցաւը և վիշտը, որ կամենումէի թեթևացնել այժմ, գուցէ թէ ես ինքս հասցրած էի կամ թէ զօրացրած, և այն քաղցր աչքը, որ ուրախ կը լինէր զեռ ևս մի ժամի չափ երկար նայել կեանքի վերայ, վաղաժամանակեայ խփումն իմ սխալանքները: Բայց խելագար մահկանացուն գործումէ իւր մեղքերը նորա համար միայն այնպէս համարձակ, որովհետեւ նոցա սպանողական հետևանքը ծածկած էին նորանից. նա բաց է թողում իւր սրտի մէջ կապած պատառոց գաղանքը, և թոյլ է տալիս նոցա գիշերով յարձակվիլ մարդերի

մշ. բայց նա չէ տեսանում, թէ այդ, կապից դուրս պրծած, գաղանները քանի անմեղները ըմբռնումն և դիշատումն։ Աանձակոտոր մարդը թեթևամտութենով ցանումէ իւր չողմը իւր մեղերի վառուն ածուխները, և երբ որ նա ամփոփած էր գերեզմանի մշ, նորա քամակից կրակվումն շինուածքը նորա ձեռքով դրած կայծերից, և ծխային սիւնը, մի խայտառակութեան սիւնի պէս, ցցվումէ նորա գերեզմանի վերայ և մոռմէ յալիտեան։

Յակորը անշոս լինելով իւր ճողի առողջութենից, չունէր կարողութիւն նայելու իւր հօր հալումաշ կերպարանքի վերայ. նա առանձնացած էր մատակայ սենեկի մշ և խոնարհած էր ճնկերի վերայ, երբ որ նորա հօր կեանքի հետ խաղ էր առնում մաշու վըտանդը, նա չողած էր այն տեղ որպէս մի չարագործ, լուս և անրարրառ, աչքերը կապած գալոց դատաստանի առաջն, մինչև կարձակիչը այն սասանեցուցիչ ճայնը, թէ հայրը մեռաւ աչա.

Ա երջապէս Յակորը եկաւ մօտեցաւ հիւանդին, որ հրաժարական ողջոյն և թողութիւն առնու. բայց հայրը տուեց նորան միայն իւր սէրը, բայց ոչ իւր հաւատը, և ասաց. Աւզին քեզ, իմ որդի, բայց մի խոստացիր բերանով միայն։

Յակորը ամօթուց և արտօնութենից գետնի զարկված, նստած էր մատակայ սենեկի մշ, և աչա որպէս թէ քնից զարթած, լսեց որ հայրը օրչնում նորա ծերունի դաստիարակը որ իւր հօր դաստիարակն էր եղած, որպէս թէ մի ամենատեւ գիշեր պիտոյ և արդէն պատէ նորա սառած կենդանութիւնը։ Ննջիք քաղցր, ասաց դաստիարակը, ով գու առաքինի մարդ, զու հաւատարիմ աշակերտ, Այն ընտիր կանոնքը, որ գու պահպանել ես, այն յաղթութիւնքը, որ գու արել ես յաղթելով քո անձին, և քո բոլոր գեղեցիկ գործերը պիտոյ և այժմ, որպէս պայծառափայլ երեկոյեան ամպեր, քո մահու ալօսալցոյը փառաւորեն։ Քո վերջին ժամու մշ յօյս ունեցիր քո անրադդ Յակորի վերայ, և ցնց տուր մի ժակու, եթէ կամու լսել ինձ, և եթէ քո բնեկեալ սրաի մշ կայ գեռ ևս մի խընդութիւն։

Հիւանդը չէր կարող ժողովել իւր զօրութիւնքը այն թուլութեան ծանր, նորա վերայ կուտակած սառուցի տակ. նորա բեկեալ զգայարանքը համարումէին դաստիարակի ճայնը, որպէս թէ որդու ճայնն էր, և նա թուլովելոց այսպէս. Յակոր, ևս չեմ տեսանում քեզ, բայց լսումմ քո ճայնը, դիք ձեռքդ իմ վերայ և ուխտ դիք, որ կ'ուղղես քո անձը։ Որդին ներ վազեց որ երդումն ուտէ. Բայց դաստիարակը ակնարիկի արեց, զրեց ձեռքը մեռանողի սառած սրտի վերայ և ասաց մեղմապէս. Աչա երդնումմ քո անունով։

Դաստիարակը զգաց խիշյն, որ մեռած է նորա սիրող և հանգստացել է կեանքի երկար շարժողութենից: Փախիք, վաստաբազդ դու, ասաց նա Յակոբին, քո հայրը անյօւսալի մեռած է:

Յակոբը չեւացաւ ապարանիցից, ո՞չ, ինչպէս կարող էր նա տեսանել և մասնակից լինել մի տրոմութեան, որ նա ինքը բերել էր իւր հօր բարեկամների վերայ: Կա խոստացաւ միայն գաստիարակին, որ վերադառնալու է և որոշեց ժամանակը: Դողդովելով, և բարձրաձայն լալով եկաւ իւր հօր տնկած ծառասոանը և տեսաւ սպիտակաշնչ գամբարանները որ գունաթափ ոսկերոտիների պէս դուրս էին ցցված կանաչաղարդ տերենների մէջ: Բայց նա չունէր այնքան սիրոտ, որ շօշափէ իւր ծնողի ապագայ հանգստարանը. նա հաստատեց միայն կողքը այն միւս դամբանական արձանի վերայ, որ իւր տակին ծածկումէր մի սիրոտ, որ չէր մեռած իւր մեղքով, մայրական սիրոտը, որ վաղուց աշա դադարել էր խորտակեալ կուրքի փոշու մէջ: Յակոբը ըը կարողացաւ ոչ լալ և ոչ ուխտ կատարել. լուս, գլխակոր և գժուարութենով կրումէր իւր չետ իւր ցաւը. ամենայն տեղ հանդիպումէին նորան կորստի և մեղքի յիշատակութիւնք. ամենայն երեխայ որ արդիւնաւոր հասկերի հնձով հանգէպ էր զնում իւր ծնողին, զարթուցանումէր Յակոբի մէջ մի տխուր մտածութիւն. ամենայն զանգակի ձայն լսվումէր նորա ականջումը որպէս թաղման զանգակի ձայն. ամենայն փոս երեւումէր նորա աչքին գերեղման, ամենայն ժամացուցի բեկո յիշեցնումէր նորան (ինչպէս Վերսայլեան արցոցի արքայական ժամացուցի վերայ) իւր հօր կեանքի վերջին ժամը միայն:

Հինգ օր մնայլ տիրութեան, ապաշաւանքի և ցաւի մէջ անցած էին, և Յակոբը կարօտութիւն առացաւ. վերադառնալ իւր հօր բարեկամի մօս և շատ փափագումէր միսիթարել նորան իւր ուղղութեան նորահաս պտղովը: Մարդու իւր սիրելիների համար կատարումէ աւելի գեղեցիկ մեռելուհանդէս, որոր լով ուրիների արտասուքը, քան թէ թափի լով իւր յատուկ արտասուքը. և առաւել գեղեցիկ, ծաղկահիւս, նոճեայ պակը, որանով կարող էինք մեք զարդարել մէր թանգագին սիրելիների շիրիմը, էր բարի գործերի պտղաշիւս փունջը:

Յակոբը կամենումէր գիշերով միայն իւր, ամօթուց կարմրատակած, երեսովը ներս մտանել ծնողական տխուր օթևանի մէջ: Երբ որ նա անցանումէր ծառաստանի միջովը, հանդիպեց նորան հօր գերեզմանի սպիտակաշնչ արձանը կանաչաղարդ ծիւղերի մէջ, այնպէս սարսափելի, ինչպէս պարզ երինակամարի կապտութեան մէջ լող էր

տալիս մի ոյրած ու աւերած զիւղի մոխրագոյն շողեղէն ամզ։ Կա իւր կորացած դլուխը տուեց կոշտ և սառն արձանին և կարողացաւ միայն լուս ու մունջ կերպով լալ, և նորա խաւար, տանջանքով լի որտի մէջ չէր երեւում ոչինչ մատածութիւն։ Այս տեղ կանգնած էր նա, որպէս թէ մի անապատի մէջ, ոչինչ մեղմախօս ձայն չէր տառմ նորան։ բաւական էր քո պատիմքը։ Ծառերի կատարների սոսակիւնը թվումէր նորան բարկութեան խոռովութիւն, և գիշերի աղջամուղջը, անգունդք։ Այս անդառնալի կորուսոր պատել էր նորա շորս կողմը մի լայն ու արձակ ծովի պէս, որ ոչ շարժվումէր տեղից և ոչ նուազումէր երբէք։

Ա երջապէս մի հատ արտասուր թորելուց յետոյ, տեսաւ նա մի մեղմափայլ ասալ երկիցի վերայ, որ քաղցրութեամբ, ինչպէս մի երկնաւոր հոգու աչք, ծառերի կատարների միջովը դէպ ի ցած էր նայում։ մի քաղցր գումը եկաւ նորա սիրտը, նա միոք բերեց իւր ուղղութեան երդումը, որ պատառել էր մահը, և ապա կամաց կամաց խօնարշելով ծնկերի վերայ, վեր նայեց դէպ ի ոյն աստղը և տասց։ Ո՛վ հայր, հայր, ցաւից երկար միջոց խեղջվելով ձայնը. աչա քո թշուառ որդին շողած է քո գերեզմանի մատ, և ուխտ է գնում քեզ. ով մաքուր, երկիւղած հոգի, ոյս՝ կը փոխեմ ես իմ բարբը. ընդունիր ինձ միւսանգամ։ երանի թէ կարողանայիր դռւ մի նշան տալ, թէ լսած էիր իմ պաղատանքը։

Ո՞ի շարժումն եղաւ նորա շորս կողմը. մի ծանրաշարժ կերպարանք յետ դարձուց ծառերի ճիւղերը և ասաց նորան. Ես լսեցի քո խօսուածքը և յուսով եմ կրկին. այս կերպարանքը նորա հայրն էր։

Այն միջին բանը մահու և քնի մէջ, մահու եղասպր նուազումն սրտի, որպէս մի առողջարար խօր ննջողութիւն, միւսանգամ պարզել էր նորան կեանք, և նա կրկին ազատված էր մահուց։ Ո՛վ բարի հայր. թէ և մահը փոխարերած լինէր քեզ ոյն միւս աշխարհի պայծառութեան մէջ, այնու ամենայնիւ քո ծնողական սիրտը չէր կարող ճաշակել այնպիսի քաղցր և յորդառաս ուրախութիւն, ինչպէս այս յարութեան բռպէումը, երբ որ քո որդին խօր տըրտմութենից փոփոխելով իւր բարբը, աւելի մաքուր սրտով մօտենում քեզ և նորոգումէ հայրական սրտի ամենագեղեցիկ յշակը։

Իսցց յառաջ քան թէ այս տեսարանի վարագուրը ցած էր թողած, հարցնումէմ ձեզանից, սիրելի մանուկ ընթերցողներ, և թէ ունէիք դռւք ծնողներ, որոնց գեռ ևս չէիք տուած դեղիցիկ յշակը, ապա խօնմանքով միոք բերեցիք, որ գալու է մի օր, երբ զոք ոչինչ միսիթարութիւն չէիք ունենալու և այն կ'արձակէիք.

Ո՞՛, իմ ծնողքը շատ և շատ սիրած են ինձ, բայց ևս թողեցի նոց ալյոյս մեռանել, և ես նոցա վերջին ցաւի պատճառն եմ:

23. ԹԱՐԱՎԵՐԻՆ ՀԱՐԴԻ ԴՐԵՆԱԳՐԻՆ:

Ո՞ի ծերացած մարդ, կէս գիշերի մէջ որ պիտոյ և լուսանար գէոյ ի նոր տարու առաւօտը, պատուհանի մատ կանգնած, աշաւոր յուսահատութեան մէջ վեր էր նայում դէպ ի անշարժ մշտափայժառ երկինքը, և ցած գէոյ ի հանդարս և ձիւնապատ երկիրը, որի վերս այս բոպէիս ոչ ով չը կար այնպէս անմիտմար և անքոն, ինչպէս ինքը: Որովհետեւ նորա աչքի առաջն դրած էր իւր գերեզմանը, պատած միայն ծերութեան ձիւնովը և ոչ մանկութեան կանաչութեամբը. և նա իւր բոլոր լի ու առատ կեանքից ոչինչ բաժին չէր ստացել, իթէ ոչ մոլորութիւններ, մեղքեր և ցաւեր, մի աւերակ մարմին, մի անապատ հոգի, սիրտը լի թունով, ծերութիւն զղջանալի: Նորա մանկութեան գեղեցիկ օրերը, այսօր կերպարանք առած, երմեցան նորա աչքին և տարան նորան միւսանգամ այն պահառ և զուարթ առաւօտու հանդէպ, երբ նորա հայրը յառաջուց ցոյց էր տուած նորան այն երկնիւղ ձանապարհը որ, դէպ ի աջ կողմը, առաքինութեան արեգակնախայլ շաւիդով տանումէ մի արձակ, խաղաղ աշխարհ լի լուսով, օրհնութենով և երանութենով, և գէոյ ի ձախ կողմը, ցած է բերում արատների խլրդային գնացքների մէջ, իջուցանումէ մի աղջամուղջ վիրապի մէջ, որ լի էր թունաւոր կաթուածներով, սուլիչ օձերով և տօմթագին շոգիներով:

Ո՞՛. օձերը կախվեցան նորա կուրծքից և թունաւոր կաթիլքը նորա բերանից, այժմ հասկացաւ նա, թէ ինչ տեղում էր:

Ուշամափ և անասելի տրտում, ձայն բարձրացընց դէպ ի երկինք, ասելով. Տուր ինձ միւսանգամ իմ մանկութիւնը, ով հայր, միւսանգամ դիր ինձ այն երկնիւղ ձանապարհի վերս, որ այժմ կարողանայի այլապէս ընտրել:

Բայց նորա հայրը և նորա մանկութիւնը վաղուց անցած գնացած էին. նորա աչքին երկումէին մոլորական կրակներ, թռչմը ընչելով ձախինների վերս և շիջանելով դերեղմանատնումը: Կա խօսեց. սոքա իմ յիմարութենով աղրած օրերն էին: Ցեսաւ նա մի ասող որ փախչելով երկնիւցը և լուսախայլ ներքեւ իջանելով, չքացաւ երկրի վերս. Այս բանը ես եմ, ասաց նորա վիրաւոր սիրտը, և զղջան օձային ատամները փորումէին նորա խոցերի մէջ, իսոր և աւելի իսոր:

Աորա վառված երեակայութիւնը ցցյ տուեց նորան, որպէս

թէ զիշերտաշընկ մարդեր վաղումէին տանիքների վերայ, որպէս թէ հողմաղացը բարձրացնուումը իւր թմերը, որ ջարդէ ու սատակէ նորան, և որպէս թէ դաստարկ մատուռի մէջ մի վաղուց դրած թողած մեռելոտի փոքր առ փոքր իւր նման կերպարանք էր ստանում, Այս տագնապի մէջ էր, երբ աշտարակի նուագարանը հնչելով դէպ ի ցած, հրատարակից նոր տարու սկիզբը, Այս ձայնարկութիւնը որ հնչումէր նորա ականչին որպէս մի ժամերգութիւն հնուռից, մեղմարար շարժեց նորա սիրտը, նա աչք ման ածեց հորիզոնի և երկրի վերայ, և միտք բերելով իւր մանկութեան բարեկամները, որ այժմ աւելի երջանիկ և աւելի բարի լինելով քան թէ ինքը, ուսուցիչ էին աշխարհի, երջանիկ զաւակների և օրհնեալ մարդերի ծնողք, խօսեց այսպէս. Յիշասի՛, և ես կարող էի ձեր պէս այս դիշերը ցամաք աշքով անցուցանել քնի մէջ, եթէ միայն կամցած լինէի, ո՞չ, թանգարին ծնողներ, ես կարող էի բաղդասոր լինել, եթէ լսած ու կատարած լինէի ձեր բարի բարի խնդիրը և խրառները որ տուած էիք ինձ նոր տարու օրին:

Վ.յս տենդանման բորբոքեալ մտածութեան մէջ իւր մանկութեան օրերի վերայ, թուեցաւ նորան, որպէս թէ ոյն մեռելոտին իւր պէս կերպարանք առած բարձրանումէ անդիցը. վերջապէս, ինչպէս մոլորահաւատ մարդիկը կարծումն, որպէս թէ նոր տարու զիշերին կարելի է տեսանել ապագայի ոգիքը, կենդանացաւ այն մեռելոտին որպէս պատանի մարդ:

Վ.յս տեսարանին նա չը կարողացաւ նայել աւելի, ծածկեց երեսը, և հաղար արտասուք թափկեցան ցամաքելով ձիւնի վերայ, միայն թէ գեռ և և հառաջումք մեղմարար, անմիաթար և ուշաթափ, ասելով. Երի՛ միւսանգամ, ով իմ մանկութիւն, արի՝ միւսանգամ:

Եւ նորա մանկութիւնը յետ եկաւ. պատճառ, նա տարեմասի զիշերին այդպէս զարհուրելի երազ էր տեսած. նա դեռ ևս մասնուկ էր, միայն թէ նորա մոլորութիւնքը չէին եղած երազ, Կա շնորհակալ եղաւ Աստուծուց, որ զեռ ևս մասնուկ էր, որ կարող էր տակաւին արատի տղմու ճանապարհներից հրաժարվիլ և յետ դառնալ զէպ ի առաքինութեան արեգակնախափայլ ճանապարհը, որ տանում զէպ ի օրհնեալ հունձերի առասարեր երկիրը:

Եւ գու, ով պատանի, յետ գարձիր նորա չետ, եթէ այդպիսի մոլորաշափող ճանապարհի վերայ կանգնած էիր: Այս աչաւոր երազը կը լինի յետոց քո դատաւորը, այն ժամանակը թէւ դու ձայն տացիր կողկողացին. յետ արի, իմ գեղեցիկ մանկութիւն, նա յետ չէ դալու միւսանգամ:

1. ԱՅՆ ԽՈՐՀԵ ԿԱՌՈՄՄԵՆԻ:

Վայեմ պատմեմ ձեղ, սիրելի երկրաւոր բնակարանի և նորա մէջ եղած արժանի գիտութեան բաների մասին, Աւշադիր կացէք ինձ: Երկիրը, որի վերայ բնակումնք մէք, է մի լոկ փոքրիկ բաժինը Տիեզերքի, որանով հասկանումնք մի անսահման տարածութիւն, որի մէջ աշխարհային մարմնքը շարժվումն աստուածադիր անփոփոխնիւի կարգով և օրէնքներով: Սոցա վերայ խօսումէ մի ջոկ գիտութիւն որ ասվումէ Աստեղաբաշխութիւն, կամ Աստրօնօմիա:

Տիեզերի մէջ կոյ անհամար բազմութիւն աշխարհային մարմինների, որոնց մէջ շատերը իւրեանց մեծութենով գերազանց էին մէր երկրից, նոցանից մի քանիքը, պայծառ գիշերով տեսանումնք անշափելի երկնակամարի վերայ. դոքա իւրեանց չեռաւորութեան պատճառով երեւումն մէջ որպէս փոքրիկ փայլուն կէտեր կամ ճրագներ: Եւ մէք այդպիսի հեռաւոր մարմններ չէինք կարող տեսանել, եթէ ըլ լինէին աշխագին մեծութենով, Մէք ընծայումնք նոցա ընդհանուր անունն Աստեղք: Էռաւել մեծը սոցա մէջ, ինչպէս երեսումէ, Արեգակն է. որոր ճառագայթները անցանելով մի անշափելի ճանապարհ երկնքիցը գէպ ի ցած, ծաւալվումն երկրի վերայ, լուսաւորումն և ջերմացնումն նորան, և ամենայն տեղ թափումն կենդանութիւն և պաղաքերութիւն: Ամենից մօտ մոլորական աստղը, որ կարող էր տեսանել մեր աչքը, է լուսինը. և պյս մարմննը իւր ճառագայթներով լուսաւորումէ մէր երկրաբոլրակը, բայց նորա լոյսը չէ այնպէս պայծառափայլ, ինչպէս արեգակի լոյսը, և չէ տալիս ջերմութիւն: Այն մէծ կապտագոյն կամարը, որ մէք ասումնք երկինք, մի անշափելի տարածութիւն է, որի մէջ երկիրը, արեգակը, լուսինը և անհամար աստղներ պատուավումն և շարժվումն: Այս բոլը մարմինները ասվումն՝ ուն-բայ-ին-յին իւն-երբայ-ին ժորբին, և ամենեքնան միասին բաղկացնումն այն բանը որ ասվումէ երկնքի Հայութական: Ի՞նչքան փոքր էր մէր երկիրը, համեմատելով տիեզերքի հետ. արեգակը միայն աւելի մէծ է քան թէ երկիրը, միլիոնաշափ ու կէս անգամ. նա իւր ճառագայթներովը լուսաւորումէ և ջերմացնումէ ոչ թէ միայն մէր երկիրը, այլև ուրիշ շատ աշխարհներ, որ մէր երկրի պէս պատուավումն նորա շորս կողմով: Այս աշխարհներից քսան և երեքը կարող ենք պարզապէս տեսանել երկնքի վերայ, բայց աստեղաբաշխները քննութենով և հաշուարարութենով այն տեղ են հասած, որ իմացել են, թէ ամեն մինը սո-

ցանից ինչքան հեռաւորութիւն ունէր արեգակից, թէ ինչքան երկար էր այն ճանապարհը (շրջանառութիւնը), որ կատարումէր նա արեգակի շորս կողմով, և թէ ինչքան ժամանակ հարկաւոր էր այդ բանի համար: Արեգակին աւելի մօտ եղած աստղը (որ ասվումէ Մերկուրիս) 88 օրի մէջ կատարումէ իւր լնժացքը կամ շրջանառութիւնը արեգակի շորս կողմով, և ամեն մի սեկոնդի մէջ անցանումէ 42 վերստ: Մեր Երկիրը իւր գնացքը արեգակի շորս կողմով կատարումէ 365 օրի և 6 ժամի մէջ, և այս միջոցումը անցանումէ 131,185,000 մզոն, կամ թէ 918,275,000 վերստ: Լուսինը մշտապէս ընկերակից է Երկրին այս ճանապարհի վերայ: Բոլոր Երկնային մարմիններից սա առաւել մօտ է մըր Երկրին, և այդու ամենայնիւ հեռաւոր էր մեղանից 51,600 մզոն (361,200 վերստ): Այս ամենպերական մարմինը, որ աւելի հեռի էր արեգակից, ասվումէ Ռւրանոս, որ և իւր անընդհատ շարժողութիւնը արեգակի շորս կողմով լցուցանումէ միայն 83 օրի մէջ: Ինչքան արագութենով թռչումէ թընդանօթի գնտակը: այդու ամենայնիւ, պիտոյ էր նորան 26 տարի ճանապարհ գնալ, որ կարողանայ արեգակիցը հասանել դէպ ի Երկրի:

Այս աշխարհային մարմինքը, որ մըր Երկրի նման պատցտ են դալիս արեգակի շորս կողմով և լուսաւորվումն նորանով, տացել են ընդհանուր անուն Մալբրոն: Տարակցս չը կայ, թէ նոքա նման էին մըր Երկրին և սորա պէս ունէին տարու եղանակներ, փոփոխութիւն օրի և գիշերի, և թէ նոքա, Երկրի պէս, բաղկանումէին ծովից ու ցամաքից: և այս պատճառով անտեղի էր Երկիր լինել, թէ ունէին իւրեանց մէջ և բնակիչք: Միւս աշխարհային մարմինները, որ անհամար բազմութենով տեսանելի են մեզ Երկնքի հաստատութեան վերայ, ինչպէս Երեսումէ, ըստ մէծի մասին արեգակներ են, այսինքն ունին իւրեանց սեփական լոյսը, որ և, մըր արեգակի պէս, լուսաւորումն խաւար Երկնային մարմինքը և տաքացնումն նորանց, իւրեանց ճառագայթներով: Այս բոլոր Հրեղեն աշխարհային մարմինքը ասվումն Անշրջ՝ սորեւու: Ուրեմն մըր արեգակը մի անշարժ աստղ է, և, ինչպէս հաւանական էր, շատ փոքրիկներից մինը, ըստ որում այլապէս կարելի չէր մեզ տեսանել միւս անշարժ աստղները, որ անասելի շատ հեռի էին մեղանից, քան թէ մըր արեգակը, եթէ նոքա արդարեւ չը լինէին արեգակից աւելի մէծ: Կարո՞ղ էք գուք, իմ սիրելի մասութիւնը, այս բոլոր բաները պատկերացնել մըր հոգու առաջև, առանց զարմանալու աշխարհի փառաւոր և աշագին կազմածի վերայ, առանց չիւնալու և աչ ու գողութեամբ խոստվանելու Արարչի ամենակարտղութիւնը:

2. Երևան և Հայոց բնակչութեա:

Ա Երևանը ասացինք մէք, թէ Կրկիրը, թէ պէտք Երևում շատ մէծ, այնու ամենայնիւ տիեզերքի մի փոքրիկ մասն է միայն։ Թէ ինչ ձեւակերպութիւն ունի Երկիրը, գդուար է պատկերացնել մոքով, որովհետեւ մի հայեցուածով կարելի է աշքի տակ ձգել նորա փոքրիկ մասը միայն, և որովհետեւ մէք ինքններա դժունվամենք նորա վերայ, և ամեն մինը մեղանից բռնումէ նորա վերայ այնքան փոքր տեղ, որ աւելի սակաւ էր քան թէ այն տեղը որ բռնումէ մի փոքր մըդղուկ մի մէծ խնձորի վերայ։ Բայց որ և իցէ մարմնի ստուերից կարելի է բաւարան հաւանականութենով իմանալ, արդեօք բոլորակ էր նա. և եթէ մի մարմնի ստուեր ամենայն կողմից և ամենայն ժամանակ բոլորակ էր, ապա բացայաց է, որ այն մարմնը ևս պիտի լինէր նշնագէս բոլորակ։ Այս բանը հանդիպումէ մէր երկրին, լուսնի խաւարման ժամանակը։ Այս միջոցին լուսնի բոլորակի վերայ տեսանվումէ մի բոլորակ ստուեր, և ապացուցով հաստատած է, որ այս ստուերը ձգումէր լուսնի վերայ մէր երկիրը, երբ որ սա իւր շրջանառութեան մէջ արեգակի չորս կողմով, գէմուդէմ հանդիպումէ արեգակի և լուսնի մէջ։ Սորանից կարելի է հաւանականարար եղբայրակել, որ երկիրը պիտոյ է ունենար գնտաձև կերպարանք։ Բայց ի դրանից, մի միայն բոլորակ մարմնի չորս կողմով կարելի անցանել ամենեին այնպէս, որ, եթէ միշտ միատեսակ ուղղութենով յառաջ խաղայիր, կրկին վերադառնալու էիր այն տեղ, ինչ տեղից ճանապարհ էիր գուրա գնացած։ Աւրեմն, երկիրը ունենալով գնտաձև կերպարանք, կարելի է հաւասարապէս ճանապարհորդել նորա չորս կողմովը։ Եթէ մի որոշեալ տեղից զիմէիը ուղղակի գէպ ի արեմուտք, ապա հակառակ կողմից, այսինքն արեւելքից պիտոյ է յետ դաւանայիր։ Այս փորձը արած են շատ ճանապարհորդներ և ծովագնացներ, որովհետեւ երկիրը իւր բոլոր տարածութենով շրջապատած է ջրից կամ ծովից։ Այս ճանապարհորդութիւնը երկրի չորս կողմով, կարելի է կատարել մի տարու մէջ, եթէ ոչինչ տեղ երկար չը դադարէիր, և եթէ եղանակը և հողմբը բարեյաջող էին։ Երկիր շրջապատը բաղկացնումէ 5,400 մղոն կամ թէ 37,800 վերատ:

Ա յս իրողութենների պատճառարանութիւնքը, որ Խորհրդով չնք գնում այս տեղ, ըստ որում կամք չունինք ծանրաբեռնել մանուկների միտքը, ապացուցանումն, թէ երկիրը մի մէծ գունատ է, բայց անհաւասար, ըստ որում շատ սարեր կոչին նորա վերայ, թէ պէտք այս սարերը, ինչքան և մէծ լինէին, այնու ամենայնիւ խափան

շնորա դնտաձեռութեանը, ինչպէս որ մի քանի աւազի համիկ-
ներ մի խնձորի վերայ չեն կարող խափանել նորա բոլորակութիւնը:
ջուրը երկրագնափի երեսի վերայ բոնումէ երկուպատիկ աւելի
տեղ, քան թէ հողը, կան պատափերացացներ, որ բոլոր երկրագնտի
երեսը ձևացնուումն փոքրադիր կերպարանքով. նոցա տալիս են ա-
նունս Ա-ր-րէց կամ Լ-ո-դի-բուր: Սոցանից մինի վերայ տեսանվուումն
երկու մեծ բոլորակներ, բայց սորանից չե պիտոյ եզրափակել, որ-
պէս թէ երկիրը բազկանուումէր երկու այդպիսի բոլորակից. այդ ձե-
ւափերովութիւնը յառաջանումէ այն բանից, որ մեք կամենալով պատ-
կերացնել թղթի վերայ երկրագնտի բոլոր երեսը, կարող չենք այ-
լապէս նկարել դորան, և թէ ոչ, այս կերպով: Զոր օրինակ. և թէ
ցանկանուումէք դուք մի խնձորի բոլոր երեսը ձևակերպել, պիտոյ եր
ձեզ պատփերացնել նորան որպէս երկու կամարակապ բոլորակներ:
Այսպէս ևս պիտոյ է գործ կատարէ նա, որ կամենումէ երկրի ձևը
դուրս բերել թղթի վերայ. սյսպէս յառաջանուումն երկու մեծ մեծ
բոլորակներ որ պատփերացնուումէն երկրագունտը կարտի վերայ: Դուք
տեսանումէք, որ այդ կարտի վերայ քանի մի տարածութիւնք նկա-
րած են խայտաճամուկ գուներով, բայց միւսերը թողած են սպի-
տակ: Խայտաճամուկ տարածութիւնը ցուցանումն Հողը, բայց սպի-
տակները, ջուրը որ շրջապատումէ երկրագունտը և ասվումէ Ծ-Հ:
Ամուր, կամ ցամաք հողը բաժանումն հինգ մեծ մեծ բաժիններ
որ այս պատճառով անուանվումն Մ-Հ-Ն-Հ-Ե-Ր-Ի կամ թէ Մ-Հ-Ն-Հ-
-Ե-Ր-Ի-Հ: Աշխարհի ամեն մի մասը ունի իւր յասուկ անունը. դո-
ցա մէջ առաւել փոքրը, որ դրած էր գեղի ի վեր աջակողման կի-
սազնափի վերայ, ասլումէ Ե-Ր-Ի-Հ: այդ անդ է գտանվում այն աշ-
խարհը ուր բնակումնք մեք և դորանից ասլումնք Եւրոպայեցիք:
Կայն կիսագնտի վերայ դրած են երեք այլ մասներ աշխարհի, որ
ասվումն Ա-Հ-, Ա-Ֆ-Ի-Հ և Ա-Ռ-Պ-Է-Ւ-Հ: Զախակողման կիսագնտի վե-
րայ ձևացրած է Ա-Ֆ-Ի-Հ և Ա-Ռ-Պ-Է-Ւ-Հ մի մասը:

Դուք, կարելի է, թէ զարմանայիք ըս գտանելով կարտերի
վերայ ձևակերպութիւնք քաղաքների, սարագօտիների, անտառնե-
րի, բուսականների և գաղանների որ կային երկրի վերայ. այլ լոկ
անուններ: Բայց մտածեցէք, թէ ինչպէս ահազին պիտոյ է լինէր
այն կարտը որի վերայ պէտք էր ձևաւորել այդ բոլոր բաները, և
մի թէ կարելի էր այդպիսի մի կարտ պարունակել աչքով: Աւրեմն
պիտոյ է ձեզ բաւականանալ և նորանով որ գտանումէք կարտերի
վերայ աշխարհների շրջանագիծքը և նոցա անունները, գլխաւոր
քաղաքների անունների հետ միասին: Մեծ մեծ տասներով նշանա-

կումմն աշխարհների անունները։ Սեաւ ոլորուն գծերը ցուցանումն գետերի ընթացքը, բայց բոլորակ, կամ երկայնաձև սեաւ բիծերը աշխարհների մէջ, մէծամեծ լիները։

պատճառով, որ նոցա գլուխը, կործքը և իրանքը մինը միւսից բաժանված էին որպէս թէ միջակուուր լինելով, միջատվելով, և աւելի շատերի մէջ միաւորված էին որպէս թէ թնելով: Այսպէս ահա բառու Մէջու նշանակումէ միջահատած, միջակուուր կենդանի: Թողարակ այս նորա որոշմանը նիրեանց շօշափական եղջիւրներով ճակատի վերայ և ոտերի բազմութենով, որովհետեւ ոմանը նոցանից ունին գոնեաց 6 ոտեր, միւսերը 12, 20, այն մինչև 100 կամ 150. բայց առաւելապէս յատկանումն միջատները, եթէ քննէինք նոցա մարմին պատեանքը: Ծառ և շատերը, զօր օրինակ Ակարարէոսքը, զգեստաւորած են Աղջերանման պատենով, որի տակ գտննվումն փոքրիկ թեւեր, բայց միւսերը նուրբ մազերով: Թըթուրների և մի քանի այլ միջատների թեւերը ունին փոքրիկ փետուրներ, կամ աւելի ճիշդ խօսելով, մի թեւի ամենազեղջեցիկ գուներով. առշասարակ, միջատների կարգումը հանդիպումն մեզ անպատճելի գեղջեցկութենով կենդանիք. շօշափողական եղջիւրքը, որպէս գործէք շօշափութեան, շատ օգտակար էին միջատներին, այն պատճառով մանաւանդ, որ չեն կարող շարժել իւրեանց աչքերը, որ և նոցա արտաքին պատեանը ամենեին զուրկ էր զգայութենից: Միջատներ կարելի էր գտանել դրեթէ ամենայն անասունների վերայ և միջատների մէջ կոյին այն և այնպիսիք, զոր օրինակ սկարարէոսք և մեղուքը, որոնց վերայ կոյին այլ միջատներ, որպէս որդունք և ոչիլք: Ծառ փոքր բուսականներ կոյին, որոնց վերայ չունենային իւրեանց համար բնակարան մի տեսակ ժժմակներ. զոր օրինակ կալնիների վերայ բնակումն աւելի քան թէ 100 տեսակ զանազան ժժմակներ: Սակայ միջատներ միայն առումն մի տեղ ընկերապէս. ոմանը վերամն լով ամբոխապէս, որպէս սարդերը, շուտով առա ցիր ու ցան են լինում և կենումն բաժան բաժան որպէս անապատակեացք: Մի քանիքը կառուցանումն իւրեանց համար շատ ճարտարապերմար բնակարանք, կամ թէ պատճառ վելով փակիլումն իւրեանց հիւսուածի մէջ, և թէ համել էր ժամանակը, տեղական մահապէս քնի մէջ ընկնելու, որ սովորական էր նոցա: Զարմանալու արժանի է այն ճարտարութիւնը, որանով մի քանի տեսակ միջատներ ճարտառմն իւրեանց կերակուրը. ովկարող էր նայել սարդի վերայ, առանց հիանալու նորա ճարտարապետական նուրբ և մանը սոտայնի վերայ. նշնչափ զարմանալի է և այն ճագառաձեւ փոսը, որ ճանճի շափ մրջնառիւծը գիտէ շինել հսանուուտ աւազի մէջ. Նա ինքը թաղվումէ աւազի մէջ և սպասումէ այլ մրջիների որ անզգուշապէս մօտենալով նորա փոխին, ցած են գլորվում գեղ ի նա, հսանուուտ աւազի վերայով: Մի ջոկ, զարմանալու արժանի բան

են այն շինուածքը որ իւրեանց համար կաւից ու տղմից պատրաստումն սպիտակ մրջիւնները կամ Տերմիտը, որ ապրումին Ամերիկայի և Աֆրիկայի մէջ. այս շինուածքը կոնուածն էն, ըստ մեծի մասին վերջանումն շատ սրածայր, ներսից ունին բարձր կամարներ և 10ից մինչև 12 ոտնաչափ բարձրութիւն, և երբեմ այնքան բազմաթիւ մինը միւսի մօտ կառուցած էին, որ հեռուից երևումին որպէս գիւղեր, Պատուրի մէջ անցուցած էին մեծ ու ընդարձակ գնացքներ, բայց այնպիսի ամուր կամարներով, որ կարող էին դիմանալ մի քանի մարդու ծանրութեան: Այնքան ևս արժանի է ուշադրութեան մեղունների բնակարանը, նոցա վիթմակը իւր ճարտարապետական բջիջներով, որոնց կանոնապատշաճ շինութեանը չէր կարող նմանել ոչինչ մարդկուղին ձևոք: Միջատների սննդառութիւնը խորհրդաւոր է երկու կերպով. նոքա պիտոյ և ուտէին ոչ թէ միայն յագենալու համար, այլ և բնացննջ տոնելու սատակած մարմնիքը, կամ թէ այլ վնասակար միջատներ, կամ թէ անպիտան խոտեր, ըստ որում նորա շատ մեծ ախորժակ ունին և անչափ բազմակեր են: Թրթուրը 24 ժամի մէջ, ուտումէ երեքպատիկ աւելի քան թէ ինքը մեծ էր:

Միջատների մեծ մասը յառաջանումէ ձուերից, որ էդ միջատները մի հրաշալի բնական ազդեցութենով գնումնն յատկապէս այնպիսի տեղերում, որ ապագայ սերունդը աւելի հեշտ և ապահով կարող էին հայթայթել կերակուր իւրեանց համար: Մի քանիքը իւրեանց ձուերը գնումն այլ տնասկ միջատների մարմնների մէջ, թրթուրների կամ պաճուճապատանների մէջ, կամ թէ այլ միջատների ձուերի մէջ: Սակայ միջատներ միայն ծնուցանումնն կենդանի ձագեր. թե՛ւառոր միջատը ընդունումնն զանազան կերպարանք, մինչև ստանային նմանութիւն այն կենդանու հետ, որանից յառաջացած էին: Այս բանը ասլումէ միջատների կերպութեանիւննէ: բայց սա չէր յատկապէս կերպարանափառութիւն, ըստ որում սորանով յայտնադրժումին միջատի այն անդամքը որ յառաջուց այնպէս ծածկած էին, որ չէր կարելի տեսանել նորանց: Այն փոքր կենդանին որ գուրա է սորում ձուիցը, ասվումէ դիմակ: Այսպէս, թրթուրը էին դիմակներ, որ գուրա էին գալիս թիթեաններից: Մորթապատ միջատները էին մայիս ամսու բղեղների դիմակները. շատ որդունք համարվումն ճանձերի դիմակներ: Այս դիմակները ոչինչ գործ չունին բաց ի անդադար ուտելուց, մի քանի անգամ փոխելով իւրեանց մորթը և ստանալով նոր մորթ: նոքա մի քանի ժամանակից յետոյ պատրաստումն իւրեանց համար պատեան, և սորա մէջ հանգստա-

ցած էին առանց մի բան ուստեղու. այս դրութեան մէջ ասվումն ուս-
ճուծապատճեք: Այն միջոցին, երբ որ այսպէս հանգստացած էին,
ինչպէս երեւումէր, ամենեին անզդայ և թմրած իւրեանց պատենի
մէջ, կատարվումէր նոցա վերայ մի մնջ, զարմանալի փոփօխութիւն,
որանով նորա դիմակներից ձեւորվումէին կատարեալ միջաներ և,
սահմանեալ ժամանակից յետոյ, նոր միջառը դուրս է դալիս իւր պա-
տենից: Այս դրութեան մէջ չն աճում նորա աւելի, ուստեմն փոքր,
կամ թէ ոչինչ, և շատ անդամ ապրումն մի քանի ժամ միայն,
յառաջուց կատարելով իւրեանց սահմանեալ պաշտօնը, որ էր հոգ
տանել իւրեանց սեռի պահպանութեան համար, այսինքն ձուեր ածել
յառաջուց: Ամանք միջառք գործ նն ածվում օրպէս կերակուր, զոր
օրինակ խօսքներինը և խոշոր մարախուր որ հաղուազիւտ է և դասն-
վումը միայն Ասիսյի մէջ և Առուսաստանի քանի մի գաւառներում:
Մետաբագործ շերամը շատ օգտակար է մարդուն իւր գեղեցիկ հիւր-
ուածով, որ արձակվումէ երկայն թէլերով և տալիս է մետաքս:
Կորոգելով իւր խորխուր, չնոտ զշեսէ աւելի մեծանումէ նա և մի քանի
օրից յետոյ, չորրորդ անգամը նորոդելով իւր խորխուր, փակվումէ
իւր հիւրուածի մէջ: Դուրսի առէշը, որ նա փաթեթումէ առաջին
անգամը, բաւեկան անկարգ է, այս է բամբակինյ մետաքսը, երկրորդ
օրումը չենումէ (հինումէ) իւր երկրորդ պատեանը և սորանից սոսց-
գումն աչա օրինաւոր թէլերը. վերջումը երեւումէ խիտ կարծը: Ծե-
րամները փակած մետաբանդէն պատենի մէջ, ասվումն բոժոժները.
Նորանց մեռուցանումն տաքացրած հնոցի և ջրի մէջ, և այն ժամա-
նակը բացգումէ բոլոր հիւրուածը: Մի քանի շերամներ պահպանու-
մն, և նոցանից, երեք շաբաթից յետոյ, դուրս է գալիս մի սպի-
տակ թիթեան, որ ձուեր ածելուց յետոյ մեռանումէ: Մեղոնները
պատիկանումն նշյալքէս միջատների սեռին. մեր ընտանի մեղոնն մի շատ
արքանի յիշատակի միջատ է, և հարկաւոր էր այս տեղ աւելի ման-
րամանաբար խօսել դորա վերայ, ոչ թէ միայն այն օգտի պատճա-
ռով, որ նա հասուցանումէ մարդուն, այլ նորա զարմանալի ճարտա-
րասիրութեան, նորա դիմացիսու ժրածանութեան և նորա օրինակելի
կարդասիրութեան պատճառով, ինչ բաներով նա գերազանց էր բո-
լոր միջատներից, այս և շատերիցը աւելի բարձր տեսակի նշաւոր-
ների մէջ:

Վեղրագործ մեղոնների մնջութիւնը, կերպարանքը և գոնը
բաւեկան ծանօթ էին ձեղ, բոց դժուար թէ ծանօթ էր նոցա ար-
ժանի պատճութեան կեանք ու վարբը:

Վեղոնները կազմումն իւրեանց օթելանը կամ դուրսումը, գո-

զաւոր ծառերի մէջ, կամ թէ մարդու ձեռքով յատկապէս նոցա համար շինած փեթակների մէջ Ամենայն փեթակում համարումէին առելի քան թէ 20,000 շինուագործ մշտակ (դրեմէ 1600 թուլա նըստող մեղուք, կամ որձամեղուք, որ մեծութենով գերազանց էին բոլոր միւսներից և չընկեն խայթոց), բայց մի հատ մայր մեղու, թագուհին Թագուհին էր, որպէս թէ, հասարակաց շարժող հոգին, որ բոլոր ընկերութիւնը շէն ու հասառա էր պահում. առանց նորած անկարելի է մի մեղուական ընկերութիւն։ Աշխատաւոր մեղուքը, որ առելի փարու էին, քան թէ թագուհին, պիտոյ և գործ կատարելին փեթակի մէջ. որքա բոլոր ամառ ապրումն, ասիս թէ անդադար երթևեկութեան մէջ և վայելումէին բոլէական հանդիսա ներկայամը, բայց ևս առանել և ամենայն զօրութենով ապրումէին ապագայի համար, որի համար ժաղովելով ժողովումէին, որ այդպէս մի ամրող գալոց ազգ նուցանեն և մեծացնեն։ Սոցանից կարող էր առանել մարդը նոյնպէս ներդործական լինել, և հասառա թեամի հոգ առանել ապագայի համար։ Այս հրաշալի մեղրաճանձերը անհամար բայսերի և ծառերի ծաղկներից հաւաքումն ծաղկափոշին և սուրբ փերաց տանելով զէով ի խրեանց փեթակը, նախ և յառաջ թըրջումն նորան խրեանց բերանից թափակած մի խռնառութենով, և լաշաղախած դորան տալիս են որպէս մոմի ալիսը միւս աշխատաւոր մեղուներին, որ ուստումն նորան և խրեանց աղիքների մէջ պատրաստումն մոմ, որ և ապա նոցա յետակողման մօրմնի վեց աղերեցը դուրս և ծորում։ Այս մոմիցը պատրաստումն յետոյ մօմի բէիթները, որ բաղկանումէին կանոնաւոր վիցանկիւնի բջիջներից։ Այն կարգը, գործականութիւնը և հոգութիւնը որ ամեն մի աշխատաւոր մեղու ցուցանումէ իւր պաշտօնի մէջ, արժանի է ամենամծ զարմանքի. ով մանուկներ, դոցանից օրինակ վերառէ ձեր աշխատաթեների մէջ։

Ա Եցանկիւնի բջիջները շտեմարանք էին կէս մի մեղր պահեզու համար, և կէս մի բյուներ լինելու ձագերի կամ գալոց սերունդի համար։ Կոյս մէջ թագուհին, բոլոր ամառան միջոցումը, զնումն 30 մինչև 40 հազար ձռւ. Նախ և յառաջ դնումն նա այն ձռերը բընցից յառաջանումն աշխատաւոր մեղուք, ապա այն ձռերը, որոնցից պիտոյ և ծնանեին որձամեղուքը, և վերջումը, առանձին շինած բջիջների մէջ, զնումն միւս 10 ձռւ, որոնցից զյանումն թագուհիք բայց, ինչպէս էին մեղր պատրաստում աշխատաւոր մեղուքը, պացա խրեանց փոքրիկ էնձիթներով ծուռմէին ծաղկների քաղցր հիւթը, կլանումէին նորան և պատրաստումէին ապա խրեանց մզ-

բագործ ստամբի մէջ . սա մի փոքր փամիուշտ է , որի մէջ հիւթը դառնումէ մեղը , որ ապա դուրս են ձգում նոքա իւրեանց բերանից :

Եթէ մի փեթակի մէջ անչափ բազմացած էին մեղուքը , և եթէ կային այն տեղ շատ թագուչիք , ապա նոցանից մի մասը արտաքսվումէ : Այս փախառական մեղուքը ասվումն Աւանդէր ուր հետեւլով իւրեանց թագուչուն , կոնոնաձե շարված զագարումն այն տեղ , ինչ տեղ նստումքը թագուչին . այսոյէս ըմբռնվումին նոքա մի գատարկ փեթակի մէջ և իսկոյն սկսումին տուն ու տեղ հաստատել իւրեանց համար : Եթէ շատ թագուչիք եկած էին նոր փեթակի մէջ , աւելորդները սպանված դուրս էին ձգվում փեթակից . պատճառ , մի թագուչի միայն կարող է հրամայել : Մեղուների պարգով ման գալը պատահումէ մայիս և յունիս ամիսների մէջ : Օգոստոսին , երբ որ ձադեր հանելու ժամանակը անցել է , աշխատաւոր մեղուքը յարձակվումն որձամեղուների վերայ և սատակեցնումն նորանց : Երբ որ սկսանումք ցուրտը աշնան վերջումը , մեղուքը , ինչպէս այլ միջատները , ընկնումն ձմռնային քնի մէջ , և եթէ տեղական էր ցուրտը , միւսանդամ զարթնումն դալոց գալուն ժամանակին : Մեղուների ազգը շատ բազմաթիւ է . կային գոնեայ 200 տեսակներ : Եշխառասէր մրջինքը պատկանումն նոյնպէս այն միջատներին , որ ասլրումն ընկերապէս :

ՈՒՐԴՅԱՆ + :

Ուշպէտ որդունքը ևս ունին նոյնպէս սպիտակագոյն , տառն արին , ինչպէս միջատքը , բայց չունին նոքա շօշափական եղիւրներ և ոչ յօդաւոր գործարաններ շարժողութեան համար : Կոցա մարմինը , ըստ մեծի մասին , փափուկ է , անսակր է , խօսյին և մերկ , այսինքն առանց մաղերի , կեղերի և խօյթոցի , Ամանք որդունք ապրումն պինդ , սոկրանման բնակարանների մէջ , որ ամրացած էին նոցա վերայ , որպէս կողինջները և ստրեւյքը : Փոխանակ շօշափական եղիւրների շատ որդունք ունին գլխի վերայ ունչիկներ ասած բաներ , որ քանի միների մէջ բաւական երկար էին : Շատ տեսակ մարտիների մէջ , աչքերը զետեղված էին առաջից : Ամանք որդունք ունին այնպիսի պարզ կազմած , որ չեր կարելի նկատել նոցա մէջ համարեա թէ ոչինչ անդամներ . մեծութեան մասին շատ զանազան են նոքա . կային այնպիսի ևեցեմորթք որոնց ծանրութիւնը հասանումէր մատ 15 պուդի , և սորա հակառակ կային այնպիսի մանր որդունք , որ կարելի էր միայն որոշել նորանց խոշորացուցի օդնութենով : Որդունքի մեծ մասը բնակումէ ջրի մէջ , միւսերը ապրումն միայն հո-

զի տակին, այլ միւսերը ուրիշ շնչաւորների մէջ և մարդու աղիք-ներումը, զըր օրինակ փորածնիքը: թէպէս մի քանի տեսակ որդունք դատանվումն մէծ բազմութենով միմևանց մօտ, ինչպէս ոստրէսյքը, բայց նոքա չեն ապրում ընկերական միարանութենով: Որդունքը ճարումն իւրեանց համար կերակուր բնութեան երեք թագաւորութենից ևս. պատճառ, ոմանք ուտումն նշյապէս հող և կիր, Շատերը նոցա մէջ, մանաւանդ կողին նշները և տղրուկները կարող են երկար ժամանակ անկերակուր մնալ: Մի քանիքը նոցանից դնումն ձուեր, միւսերը ծնանումն կենդանի ձագեր: Արժանի է ուշադրութեան քանի մի որդունքի կենդանութեան դիմացիուութիւնը և վերածնելութեան զօրութիւնը: պատճառ, կարելի է նորանց երկու կոտոր առնել, բայց նոքա դորանից մեռանում չեն, այլ կարճ միջուցում բաց կարած անդամները միւսանգամ աճումն նոցա վերայ, ինչպէս որ բուսանումն մարդու մազերը կամ եղանգները: Խեցեմորթերի մէջ շատերը ուտելիի են և բազկացնումն ծովագնացների և ծովեղերայ բնակիչների գլխաւոր կերակուրը: Անակածնին տալիս է մի այնպիսի ծուծ, որանից կարելի է թանաք պատրաստել: Ծովագիետուր անունով կոնքիլոսի մորթից ստացվումէ մի տեսակ սեամ մտաքս որ շատ լաւ կարելի էր պատրաստել: Շատ տեսակ խեցեմորթեր պարունակումն իւրեանց մէջ թանգագին մարգարիտներ և տալիս են պատուական սաղափ, որանից շնուռմն հոտոտելի թարակի տուփեր և այլ անօթք զարդարանքի համար: Խտական սպունգը, հաւանական է, թէ բնակարան էր մի որդնի, որ ասվումէ Պոլիայ: Անհամար խեցեմորթեր կարելի է այրել և կիր դարձուցանել:

Վնողնաշար (Ավերտերաստա) շնչաւորների համարումը են նշյապէս Սարդը և կարիճը: Սարդերը, ըստ մէծի մասին, ունին մի բարակային մարմին, որ մէծութենով աւելի գերազանց էր քան թէ գլխի հետ միացած կուրծքը: Առօր վերայ նստած էին չորս զցդ ու աներ, բայց ոչ երրէք թեներ: Նոցա վերայ նկատումն օգամուաքեր, որոնցով, ինչպէս միջաների մէջ, օգը տարվումէ դէպ ի ներս և զուգաւորվումէ արիւնային անօթների հետ: Գլխի հետ միացած կուրծքի վերին կողմից դրած են հասարակ աչքերը, որ թուով 2 մինչև 8, այյո և մի քանի կարիճների մէջ, 10ից մինչև 12 պատահումէն: Սարդերը կարելի է դարձնալ երեք կարգ որոշել: այսինքն կարիճներ, խկական Սարդեր և նւտիճներ:

Կարիճները զանազանվումն սարգերից իւրեանց երկոյնաձև մարմնովը, որ նմանումէ մի յօդաւոր պոշի, որի ծայրումը դատանվումը մի դատարկ խցիքոց, կապակից մի թունաւոր փամփուշի հետ:

Խայլը եւրոպական կարիքի, որ պատահումէր հարաւային Եւրոպայումը, մահացուցիչ և փարբիկ անսառւների համար, այլև պատճառումէ բորբոքումն և մեծերի մէջ: Առաջ հակառակ, Հնդկաստանի մէծ, մինչև Կ ճկութաշափ երկար կարիքը համարվումէ մահառիլ թռւնաւոր:

Ծ. Տնկականքը կամ անդամական բաժնութեան:

Ծնկականքը օրդանաւոր էակներ են, այսինքն այնպիսի էակներ, որ ինչպէս մարդու և գաղանը, պարունակումն յատուկ յատուկ անօմների մէջ ամուր և հոսանուտ մաներ, ուղեղ, հիւմք և օդ: Կորա աճումն և ունին նոյնպէս կենդանութիւն, ինչպէս շնչառը և մարդու, բայց կարող չեն կամակար կերպով շարժվիլ իւրեանց տեղից և, ինչպէս երեսում, չունին իսկական զգայութիւն, իւրեանց մնունդը ընդունումն ուրաք փոքրիկ շատ ծակերով, կես մի արմատներով հողից, և կէս մի տերեներովը, օդից: Ծնկականների բաղմանթիւնը ահագին է. այս տեղ կարող ենք միայն փոքր ի շատէ ծակութացնել ձեղ մի քանի սովորական ծառերի, թռւփերի, խոտերի, բանջարների, ուռնկերի և մամուռների հետ. բայց աւելի ուսումնական ոճով կը խօսենք անկականների վերայ այլ տեղում:

Օյառերը ունին բուն, ամուր արմատներ, ստեր, ձիւղեր, պտուկներ, ծաղիկներ, տերեններ և պտուղներ. կեղեց պատում բունը. արտաքին կեղեւի տակին կայ մի այլ երկրորդական կեղեւ և սորա ներքեւումը փափուկ փայտ, որ ասվումէ Ալբուրնում. ծառի բունի մէջ տեղումը տեսանլումէ ուղեղը կամ ծառի պորտը: Թռւփի արմատից արձակիլումն բաղմանթիւ նուրբ բուներ. այն ծառերը որ բերումն որոտղը, ասվումն պտղատու ծառեր, բայց բոլոր միասերը, անտառային: Մի քանի թռւփեր բերումն նոյնպէս ուտելի պտուղներ, զօր օրինակ անտառի ընկուղենիքը, հաղարջենիքը, կարմրահատիկ և սպիտակահատիկ մանրօդինայի թռւփը, բարբարիսենին, մորենին. Նոյն իսկ խաղողը աճումէ թռւփերի վերայ: Անտառային ծառերը են կամ ուեւունեսուք, կամ թէ ուեւուսուք. սոցա վերայ նատած էին շատ նեղ և սուր տերենք, որ ասվումն ասեղներ, որովհետեւ ծակող էին ասեղների պէս: Տերեւաղեստների մէջ առաւել հասակաւոր և ամուր ծառերը են կաղնիքը և փեկոնները: Այն ծառը, որի կեղեց տալիս է խցանի փայտ, պատկանումէ նոյնպէս կաղնիների տեսակին. փեկոնի փայտը պէտք է ածվում աւելի հիւսնութեան քան թէ ատաղձագործութեան համար. նա աւելի պատռական վառելին է, տալիս է ընտիր մօսիր և գործ է ածվում նոյնպէս սայլաշնութեան հասար: Փեկոնի պտուղներովը կամ թէ կաղնիներովը պարաբռա-

յնումն ընտանի անասունը, նորանից պատրաստումն նշյնդէս պատուական ձէթ: Ապիտակ փեկոնը գործ են ածում կանաչատունկ պարիսպների համար, նորա փայտից պատրաստումն ընտիր ցորենահար գաւազան և գլանակներ կտաեղէնի համար: Բետուլա (բերեզղնի) ծառը նոյնպէս շատ պիտանի է. նորանից ստացվումէ ընտիր ածուխ և պատրաստվումն շատ և շատ բաներ տնարարութեան համար. բետուլայի տերեներից պատրաստվումէ գեղին ներկ, ձանձախարիթէց, մուր գրատպութեան: Նորա ճիւղերից շինումն տուն սրբելու աւելներ և բաղանիքի մշտիկներ (Առուսաստանումը): Այնոս ծառը ածումէ բարձր և ուղիղ, սիրումէ աւելի ճախնային հող. նորա փայտը գործածական է ջրանցական փողովակների և տաշուերի համար և հեշտ ընդունումէ աև և գարսինադոյն ներկ: Նորա կեղելը գործ է ածում խաղաղորդը, փշորելով նորան մանրաղացի մէջ: Հացի ծառը տալիս է ընտիր փայտ սայլաշէն, ճախարակագործ և հիւսն արուեստաւորներին: Ձերմ աշխարհներումը աճումէ մի տեսակ կաղամախ, որանից դուրս է բղխում բժշկական հիւթ, մանանոյ անունով: Միւս տերեւաւոր ծառեր էին կնձնին (ուլմնին), ուռենին, բարտի ծառը, տիլիս կամ լինդենին, խաղողակեռասենին, սին և աշոն ծառերը. վշյրնի շագանակնին, Եկացիան օտարերկրինայ ծառեր էին, բայց յաճախ հանդիպումն մեր աշխարհներումը և յօրինումն գեղեցիկ զրոսարանը սյդիների մէջ:

Կանդնաւոր ծառերիցը աճումէ մեղանում ամենից առաւել եղեւինը կամ Մայրը. նա բարձրանումէ 60ից մինչև 80 ոտնաշափ, և թէպէտ դորա փայտը դիւրաբեկ էր, բայց շատ քաջ ընդդիմանումէ խոնաւութեան և փտութեան: Պինոս ծառը, մի գեղեցիկ տունկ, աճումէ մանաւանդ սառն յատակի և քարերի վերայ. նա տալիս է ընտիր փայտ շինութեան: Ապիտակ պինոսից պատրաստվումէ տերպենտին: Մայր ծառի գերանները պիտանի էին մանաւանդ նաւակայցերի համար: Քէյմութեան կամ ծովեղերեայ եղեինը բարձրանումէ մինչև 50 կազ և պատահումէ շատ տեղերում: Լարիքս ծառի վերայ աճումն բարակ և քնքուշ ասղատերեներ ժողով ժողով. նա բարձրանումէ մինչև 80 ոտնաշափ և տալիս է ամուր փայտ շինութեան, ըստ որում աներձնալի է որդունքի համար: Պինոս և մայր ծառերից ստացվումէ կուպր կամ կպրային հիւթ, որ լուծանելով ջրի մէջ մէծ մէծ սաներում, ածումն պարկերի մէջ և քամումն: Կըսրաձիւթը որ գործ են ածում կօշկակարքը և նաւասակը, էր կըկն անդամ եփած և չորացուցած կուպրը. սորան ճմլումն եղենու խժային արմատներից:

Այն օտարերկրեայ ծառերի մէջ, որ դաստիարակումնք մէք արուեստի օգնութենով, կէս մի ջերմատներում կամ Օրանժենրից քի մէջ, արժանի են յիշատակութեան մանաւանդ թէ սոքա. կիտրոնի ծառը, նարնջենին, որի պտուղքը այլազգի բառով ասլումն պոմերանցք և օրանժք, և այս բառից րղնումէ ձայնս Օրանժերիա: Այլ զաշվիչի ծառը, որի պտուղքը նման են փոքրիկ կեռասների և պարունակումն իւրեանց մէջ լուրիսներ որ յայտնի էին անունով Պահվէ: Թէյի ծառը չինչական տունկ է. նորա չորացրած տերեքը տալիս են այն հասարակեալ ըմպելին թէյ, և այնքան թանգագին են, ինչքան որ լաւ տեսակիցն էին: Այն ծառերը որ տալիս էին մեխակ և մշկահոտ ընկոյզ, դաբնին և դարիսնին. սորա կեղեր տալիս է մի սաստիկ համեմ, որ ասլումէր յունական բառով կինամոմն: Փայտի գեղեցկութեան մասին, օտարերկրեայ տունկերից արժանի են տեղեկութեան Մահագոնի կամ կարմիր ծառը որ աճումէ Ամերիկայումը. Նա մշյդ կարմիր է, ընդունումէ գեղեցիկ ողորկութիւն և անչափ ամուր է. երենուսեան կամ սեաւ ծառը որ ընդունումէ գեղեցիկ փայլողութիւն յդկելու ժամանակը: Բրազիլան ծառը որանից պատրաստումն ընտիր ներկ. Բակիկառտեան ծառը որի փայտից շինումն սրինգ, սանր, ատամամանցրիչ և պէսպէս նուրբ բաներ: Չինարի կամ Սօսի ծառը, որ յաճախ տնկումն և աճեցնումն մէր աշխարհումը: Կայնչափ արժանի են յիշատակութեան այլ օտարերկրեայ ծառեր, որոնց առաս պտուղքը լինումն մարդուս կերակուր, զոր օրինակ թղթնին, որ երբէք ծաղկում չէ, բայց բերումէ շատ պտուղ, թուղ անունով. ձիթենին որի պտուղներից մղումն ձէթ, և առաւել պատուականը ֆրանսիայի Պրօվանս գաւառումը, որ և ասլումէ պրօվանսեան ձէթ կամ իւղ: Արմաւենիքը, որ ունին միայն գեղեցիկ բուներ, շատ անգամ բարձրանումն մինչև 80 կազ, բայց չունին ոչ սատեր և ոչ ճիւղեր, այլ միայն նշյն իսկ ծայրումը տերեակիունցիք: Կոկսեան արմաւենին, որի պտուղքը այնքան մէծ են, ինչպէս մի երեխայի գլուխ, որոնց մէջ պարունակվումէ կաթնային հիթ, որ լինումէ զուարթարար ըմպելի. նորանից պատրաստումէ նշյնպէս պատուական իւղ. այն թնկերից, որոնցով պատած է կոկսեան ընկուղի կեղեր, ոլորումն չուաններ, և ահագին տերեներիցը հիւսումն սակառներ և գդակներ: Դոքա գործ են ածվում նշյնպէս տան ածկոցի համար, որովհետև իսիս և ամուր են: Փիւնիկեան արմաւենին տալիս է պատուական պտուղք, որոնց սերմերը աշումն և շինումն ալիսուր Սագօ ասած ծառի ուղեղը պատրաստումն որպէս սննդարար ալիսուր: Հացատու ծառի պտուղները ունին սե-

ինի կերպարանք, որ բոված լինելով ստանումն ցորենային հացի համա շացառու ծառը ամենայն ժամանակի պաղարեր է և այնպիսի տուատութենով, որ երեք ծառ կարող էին բոլոր տարին կերպուր տալ մի մարդու:

Այն բուսականներից, որ աճումն թուփերով և մամուներով, նշանակենք այս տեղ շլորենին, պատառուկը, այծատերել հոտաւետ ծաղիկներով, զայլախաղողը, որի կեղևը ունի մի ուսուցարեր զօրութիւն, և մեջ դնէիր նորան մարմին վերայ. զմնիկը կամ վայրի վարդը և սպն Շանօթութենան արժանի է թուչունի առուցար, որ երբէք չէ աճում հողի, այլ ծառերի վերայ. Նա բարձրանում է կաղազափ և թրում թափանցիկ պտուղներ: Այն թուփերին, որ չեն մեր կիմային խփափէս սեփական, պատկանումն յասմնը, թանթընին, սումախը կամ գեղին ծառը: Օտարերկրեայ թուփերից յիշառակենք այս տեղ պղպեղի թուփը, որի հասուն ունդերը տալիս են սպիտակ պղպեղ, բայց խակերը, սեւ պղպեղ: Այլ Սպանիական պատենաւոր պղպեղը, կապարի թուփը, որի ծաղկեայ աչքերը պատրասած քացախի և աղի մեջ, սալումնն կապարի թմթու, և այն բուսականը որ տալիս է տրագանտեսան խէժը, պիտանի ներկարարներին և այլ արուեստաւորների:

Միւս տեսակ բուսականք էին Գիլիցէս անունով, ըստ մեծի մասին, խոշորատերե և եղերը գեղեցկապէս ներս կտրած խոտեր, որ գերմաներէն ասլումն քարնքրէյթը, այլ մամուռներ և սունկեր: Ըստաջին ազգին պատկանումէ Շախմէշալմ ասած խոտը որ անպատճառ հարկաւոր էր արուեստաւորներին, ողջորկութիւն տալու ժամանակին: Մամուռները բուսանումն ծառերի, քարերի և ապառաժների վերայ. մի քանի տեսակ մամուռներ ծածկումն ձախինների երեսը և նոցանից ժամանակով յառաջանումէ այն կպրախառն վասելի հողակոշոր, թուով անունով: Խալանդեան մամուռը տալիս է շատ առողջարար և սննդական կերպուր. սունկերի մեջ կան թունաւոր կամ ուտելի տեսակներ, թունաւորքը ունին մոյզ և խայտաձամուկ գոյն և դատարկ կոմի. Տրիֆֆլ ասած աճեցականքը էին նոյնպէս մի տառնձին բուսական անարմատ, առանց կոմի և տերմեների, որ աճումէր հողի տակին:

Դաշտույին բուսականների կամ ընդեղէնների կարգումը էին բոլոր հացառու ցորենանքը: Հիւսիսացորեանը տալիս է շատ սննդարար հաց և առաւել սովորական և առաս էր թուսաստանի մեջ, որովհետեւ քանի մի աշխարհներում մի շափ սերմանածից ժաղվումն տասն շափ և աւելի ևս. այս մինչև վաթսուն շափ, եթէ հողը

կյս էր: Միւս հացատու ընդեղէնքը ևն ցորեան, կարմրացորեան, գարի, ձիացորեան, բուխվէյցն, կորեակ, սմինդր և բրինձ որ ամենից զլուառը կերակուրն է ասիական ազգերի մէջ: Նղէգը և պյլ ծնկաւոր բշյերը պատկանումն նշյնպէս դաշտային աճեցականներին: շաբարաբեր եղէգը շատ մեծակշիռ էր այն քաղցր հիւմիի պատճառով, որանից պատրաստումն շաբար. նա աճումէ ըստ մեծի մասին Ամերիկայի և Աֆրիկայի մէջ: Բամբուս եղէգնատունկը, որի ճիւղերից մեզանում շինումն գաւազաներ, հասանումէ մինչև 40 ոտնաշափ բարձրութեան. Նորա հայրենիքը է արևելեան Հնդկաստան և Ամերիկա: Սպանիական եղէգը գործ է ածվում աթոռների հիւսուածի և գաւաղանների համար:

Վ. յն բուսականներին, որ բաղկացնումն դաշտային տնտեսութեան մի մասը, վերաբերումն կտաւը, կանեփը, Հօպֆն բոյաը, թարաքը, իւղատու կաղամբը, շոշտամը, թարաբը ամերիկային բոյ է, թէպէտ ոմանք համարումն նորան ասիական, որպէս և թարաք քարշելը, չին ասիական սովորութիւն, Խրոպայումը յայտնվեցաւ թարաքը 1560 թուականին, Ֆրանսիացի Ցոլիչաննէս Կիկոտը, որ զեսպան էր Պորտուգալիայի դրանը, առաջին անգամ ուղարկելով նորան Գաղղիա: Թարաք քարշելը, որ մեր ժամանակումը թէ անկիրթ և թէ կրթված ազգերի մէջ շատ սովորական է դարձել և մծ վաճառաշնչութիւն ունի, մի ընդգէմ բնութեան բան էր և անցեալ դարերումը օրէնքով արդելած ևս: Զոր օրինակ, 17 Երորդ դարումը կոստանդնուպոլիսի մէջ, ինչ Տաճիկ որ ըմբռնվումէր թարաք քարշելը վերայ, ծխափողը քիմը կոխած ման էին ածեցնում բոլոր քաղաքի մէջ. և ում անյայտ էր, որ Ռուսաստանումը 1634 թուականին այնպիսի խիստ պատիժ էր դրած թարաք դործածողի վերայ, որ պատուիրանազանցի քիմը կտրումէին: Պիտանի ընդեղէնք էին սիսեռը, ոսպը և լուրիան. սոքա ասլումն պատենաւոր բուսականք և նշյնպէս յաճախ սերմանլումն դաշտումը, թէպէտ ըստ մեծի մասին բուսուցանվումէին բանջարանոցներում. սոցա կարգումն էր և մեկոնը (խաժխամքը): Որպէս ներկարարական բուսականներ յայտնի են սոքա, տորոն, Ապյդ տունկը, սարրէթ, ըստ մեծի մասին վայրենի գեղնարշուը (ուղեղդա տուտէօլա) կրոկոս (վայրի քըրքում) քառդեան տատասկները և քըրքումը (զավիրան):

Իւանջարեղէն բուսականների անունով հասկացվումն այնպիսի խոտեր և աճեցականք, որ կամ թէ ինքեանք պատրաստվումն որպէս կերակուր, կամ թէ գործ են ածվում որպէս համեմք. սոցա կարգումն են, զոր օրինակ հասարակ մոխրագոյն կաղամը, ծաղկե-

զէն կաղամբը, կարմիր կաղամբը, սպիտակ կաղամբը որ թթու են դնում: Պաղարմատ բուսականներին պատկանումն գաղար, կարմիր շղգամբ, ճակնդեղը որ շատ անգամ՝ լինումքը մինչև 10 ֆունտ կշիռ, որի հիմից պատրաստումն այժմ շաբար. փոքրիկ սպիտակ շղգամբ, ստեղին, քաղցր արմատը և այլ միւսներ: Սոյա պատկանումն նշնակս համեմբը կարսոն (մաղդանոսը), բողկ, ուզիսք և վայրի բողկ:

Վառաձին տեսակ բուսականներ բաղկացնումն սոխատունկերը որնց վերաբերվումն նշնակս մի քանի ծաղկաբշս սոխներ, որպէս յակինթը (սումկուլ), կակաչը, շուշանը և այլն: Աւտելի և որպէս համեմ գործածական, կերակրի մէջ, են այս սոխաբշսքը. հասարակ սոխուր, պուսը, սխտորը, մանրասոխը, ծաղկեղէն կաղամբը: Աւոռոցաւոր անձականքը նման են պտղարմատեան բշյուրին. սոյա պատկանումն նեխուրը, կարսովիլը, գնտնամինձորը, լամիրիսը, տոպինամիուրը կամ գետնատանձը:

Խողոր, կամ թէ, ինչպէս ասվումն, Ռուսաստանի Լուրիսյը, վարունդ, սեխ, գդում, հազար, եղերգակ, կոտեմ, ծներէկ, շոմին, ելակ և կանգառ էին բանջարանոյի բուսականք. պիտոյ է ամենայն բարեկարգ բանջարանոցի մէջ գտանվէին և այս համեմարդոյաքը. Քերըլը, սալրէյ, պատրինջ, փեղենայ, անդլիական անանուխ, պօրտուլակ, թրմնջուկ, գրգալարցոս, մայիսօրան, քեմոն, անիսօն, սամիթ, ծոթրին (թիմիան), նուիկ կամ վիշապախոտ, թարխուն, քննդար, մանանիսխ և այլն:

Վ.յս բուսականներից որոշումն բժշկական խոտերը որ գործ են ածվում ախտաբուժութեան մէջ. այսպիսիների կարգումն են մատուտակը կամ քաղցրարմատը, որի հիմից պատրաստումն Լակրից դեղը. ռամինդ, վալերիան, երիցուկ, հազարատերևեան, բերբերիսան խաղողը, գեղին գտանիճը, Յովշաննիսեան խոտ, կովցորեան և միւսներ:

Խնչքան որ օգտակար էին այս խոտերը, այնքան և վեսակար էին միւսները, որ և այս պատճառով ասվումն նունուոր էտուր: Սոցանից պիտոյ է շատ զգուշանալ, որովհետեւ նոցա գործածութիւնը յառաջացնումէ վտանգաւոր հիւանդութիւնք և մաչ ևս: Գոյցա կարգումն էին սոքա. մոլախինդ, որ շատ նման է կարսոնին և աճումէ ծմակային և գիջային տեղերում. հիւոսկիւամոն նիգեր, գորշ ծաղիկներով և կապտակցյն երակներով նորա վերայ և մի սերմնապար կով որ նման էր չորացուցած ընկուզի. ակնիստում լիւկոկոսոնում, գեղեցիկ կապտագոյն ծաղիկ, որ նման է ձիաւորի կօշկախթաններին

և շատ անգամ հանդիսումէ այդիների մէջ. իշխաննձոր, երկար ձագառամէն ծաղիկով և սերմապատենով, որ դուրսից ծակոտով է և նման վշրունի շագանակի պտղին. գեղեցիուհի (ըելլա դօնա), մի թուփ կապցատ ծաղիկով և կեռասանման պտղով: Այս խոտերը պատշաճապէս գործ ածվելով բժիշկանութեան մէջ, շատ օգտակար էին:

Կային նոյնպէս խոտեր, որոնց խնամատար էին այն պատճառով մանաւանդ, որ տալիս էին յարմարաւոր և անդարար կերակուր ընտանի անասուններին, և դորա համար ասվումն ուժութեանց խորեւ: Այս տեսակից են սոքա. Առուցյա (Եօնչա), որձակի կատար և էսպարցէտ, լիւցերնա կամ սպիտակ առուցյատ. կանկասխանոի մի քանի տեսակները, այլև խոշոր այրողական աղինչը:

Վ. Յն բուսականքը որ դաստիարակվումն այդիների մէջ, առաւելապէս իւրեանց գեղեցիկ և հօտաւէտ ծաղկիների համար, ասվամն ծաղկարշաք. Նոցա մէծ մասը պատկանումէ խոտերին: Առաւել ծանօթքը (բաց ի վարդերից որ վերաբերվումն թիզյին տունկերին) են սոքա. կակաչ, յակինթ, ժանքիլ, տացետ, նարկիզ, շուշան, աւրիկուլ, նախածաղիկ, ունղեղա որի աղդին պատկանումէ և զեղնածաղիկը, ներկարարական բոյս, լիվից, ոսկեծաղիկ, տառեղածաղիկներ, բանունկուլ, ձիաւորի խթանք, բալասանարշաք, և այլն:

(Ծարերկրեայ խոտերի և բուսականների համարումն են մանաւանդ մէկ սոքա, որ շատ օգտակար էին կամ որպէս համեմք, կամ մէկ որեիցէ այլ կերպով. Կոճապայիզը եղէդնանման ստեղնով, որի արմատքը շատ համեմային են. վանիլը, մի պատառվոլ բոյս և պատիճներով, որոնց մէջ գտանփումն ողօրի և շատ համեմային սերման հատիկներ, որ գործ են ածվում շքօլադը համեմելու համար: Անանաս, ամերիկեան բոյս, որ և մեր աշխարհներումը շատ անգամ դաստիարակվումէ սաստիկ վառած ջերմանոցներում և բերումէ թանգարին շատ համեղ պառուղներ: Պիղանդ (մուզա պարագիզիակա), բարձրաբուն տունկ, վարունդ անման, շատ համեղ պառուղներով, և երկար, երեք կազաչափ տերեւներով. Բամբակիարշաք որ ածումէ կամ խոտի կամ թէ թուփի ոլէս, մանր մանր ընկուղների մէջ պարունակումէ գեղեցիկ մանրաթելք, որ յայտնի են անունովս բամբակ, որանից պատրաստումն բազմաթիւ և բազմատեսակ նիւթեր, զոր օրինակ չիթք, մուսանին, նանքին, բօմբազէն (թաւ կտաւ), կանիփաս, բամբակեայ բարխոտ, կամ մանչեստր. Լեզակ, մի բոյս խոտերի աղդից, որի տերեւները տալիս են պայծառ կազցյա ներկը. Հալուէ, ծակոտիչ և մատնաշափ լոյն տերեւներով բոյս, որ գործ են ածում Ամերիկայումը, տանիքները ծածկելու համար: Մի տեսակ

Հալուէից ստացվումէ դառն հիւթ որ գործածական էր բժշկականութեան մէջ:

6. Հանուէն բարեպահութեան:

Իոլոր հանքերը բաժանվումն այս չորս դասակարգերը.

1. Հողեր և Քարեր: Զանազան հողերի մէջ, իւրեանց օդտակարութեանով առաւելապէս արժանի են յիշատակութեան սոքա. գոյշախաղեայ հողը, որ, խառնելով նորա հետ բուսական մոխրի աղ, հալվումէ և դառնումէ ապակի. լիոնային բիւրեղը, քալցիտնը, որի պոլի, չեչաքար, գայլախաղ կամ հրացանի քար, յասպիս, լազորեան քար, պատուական կապշոյ գունով, գրանիտ (որձաքար), և շատ միւսեր պատկանումն գայլախաղերին. կաւային հողը, որին պատկանումէ ոչ թէ միայն հասարակ կաւը (բրոխ կաւը), Պարֆուեան կաւը, բօլուս կամ կնքահող, չուխայ տրորելու կաւ, որ հեշտութեամբ ներս է ծծում իւր մէջ ճարպը, պաղեղեան կաւը, կամզէն սեաքարը (որ կարելի է դիւրութեամբ տախտակ տախտակ սղոցել), տապիդը, այլև մի քանի ազնիւ քարեր, որտէս շափիւզան, յակինթ քարը, զմրուտուր, տպաղիսնը և միւս շատեր, այն պատճառով, որ նոցա մի բաղկացական մասը էր կաւ, որ և մեղ անհասկանալի կերպով ստացել էին այնքան կարծրութիւն, թափանցիկութիւն և փայլունութիւն: Սուսեւ լապէս արժանի տեղեկութեան քարի տեսակը էր կիճը, որ այնպէս կակուղ ստացվումէ հողի տակից, որ կարելի էր տաշել նորան փայտի պէս. նորանից շինումն պատուանդանք, կճշցներ և լապտերը: Կշնագիսի յատկութիւն ունի և օձաքարը. բռանիւթ կաւը ունի այն որպիսութիւնը, որ եթէ ջուր ածեիր նորա վերայ, իսկըն բորբոքվումէ. Նա այնպէս կարծր է, որ եթէ զարգէիր նորա վերայ պողովասով, գուրա կը ցայտվէին կայծեր. շտագեցիկ քարեր ոչինչ բան չեին, եթէ ոչ բռանիւթ քարեր, զոր սրինակ մարմարիսնը, կաւիճը, պարարտահողը, գաճը կամ հում ալերսասորը. սոքա բոլորը զանազան տեսակ բռանիւթք էին:

2. Ա առուն հանքերը, վառվելու ժամանակին, փշումելին իւրեանցից մի առանձին, նոցա սեփական հոտ. բայց եթէ նոքա չեին վառվում խկապէս, գոնեայ բորբոքվումէին առանց բոցի և կարող են պահպանել կրակը: Առցա կարգումն են ծծումը, սաթը, լեռնոյին ձեթը կամ նաֆթը, լեռնային կամ հրեական ձիւթը (ասֆալտը), ածինքարը, քարեղէն գրիչը կամ սեաքարը որպանից պատրաստումն գրիչներ և հալոցներ, որ և պէտք էր ածվում նշյն գործի մէջ, ինչպէս ձանձախարիթը: Այն իսկ գոհարը (ալմազը) որ անինիւնամե յօրինվելով, ստանումէ անուն բրիլիանտ, պատկանումէ

վառուն հանքերին, թէպէտ նա էր ամենասլինդ քարը լոլոր մղ ծանօթ հողերի մջ, և ոչինչ աղօց չէր կարող վնասել նորան:

3. Անտալներ: Սոքա են ամենածանր մարմինքը բնութեան մջ. սոքա ունին իւրեանց փայլը, որ և այդ պատճառով ասվումէ մետալական փայլ. Նոքա կարող են ծալվիլ (մանաւանդ թէ անադը և կապարը), կրանվիլ այնպէս, որ չնար էր նորանց ձեղքել ամենանուրը թերթեր (մանաւանդ թէ ոսկին և արծաթը), և ձգական էին մինչև այն աստիճան, որ կարելի էր նոցացից դուրս քարշել մետալնելն թելեր: Բոլոր մետալքը հրահալելի են, բայց երկաթը և պլատինան կարօտ են սաստիկ կրակի, որ հալվէն: Մետալքը գտանվումն հողի տակին կամ բնուծէն, այսինքն անխառն և անարատ, կամ թէ հանաւազել, այսինքն խառնած ուրիշ հանքերի հետ, որպէս ծմբի, կամ բռւռի հետ: Մինչև այժմ առաւելապէս ծանօթ մետալքը են այս 19 հատը. ոսկի, պլատինա, արծաթ, պղինձ, ժիպակ, երկաթ, անադ, կապար, ցինք, վիսմութ, անթիմոն, քօրոլդ, նիտրը, մանգանէզ, վոլֆրամ, մօլիբդէն, արսենիկ, ուրան և տիրաց տան. կային և միւս շատերը:

Վ. Ա. մարմինների հետ խառնած մետալը կամ անշեն հրահալելին մաքրումն մետալագործքը, նախ և յառաջ մանրելով նորան, այսինքն մուրճերով ջարդելով նորան փոքրիկ կտորներ, ապա մեքենաների օգնութենով փոշի դարձուցանելով: Այս փոշին մաղումն, որպանով ստացվումէ յստակ հրահալելին. մի քանի հում հրահալելիք, մանրելուց և լուսանալուց յառաջ, այրվումն, և այսպիսի կերպով. փոխ առ փոխ գնումն մի շարք հում մետալ և մի շարք փայտ կամ ածուխ և ապա կրակումն տակիցը: Այսպէս բաժանումն մետալը իւր հողային մասներից, շինումն նորան փուխը և յարմար հալելու համար, ուրեմն և մաքրումն նորան:

Երկաթը պէտք է ածվում շատ և շատ զանազան կերպով. նորանից կամ թափումն տախտակներ, թնդանօթներ, գնտակներ և այլն, կամ թէ աչագին մուրճերով կրանումին երկաթի թերթեր, կամ թէ պատրաստումն նորանից մետալալմելք: Երկաթի շերտերից յօրինումն գանակներ, մկրաներ, սղոցներ, անիսների միջադիր օղեր, լիսեռներ, գերանդիք, մանգաղներ, փակարանք, թափանչէք, հրացանք, դաշնակներ, սուր և թուր և հազարաւոր այլ բաներ որ գործ են ածվում տնտեսութեան մջ:

Պղնձէից շինումն պղնձագործքը սաներ, կայաճներ, տապակներ, մղնիսաւոր սաներ, թէ արանք և զանազան այլ ամանեղնենք: Երբ որ պղինձը հալումն ուրիշ մետալների հետ միասին, դորանով ստանումն տօմբակ և գեղնապղինձ:

Վնագը և կապարը պէտք են ածում անագագործքը. այս երկու մետալներից կռանումն շատ նուրբ թերթեր, որ ասվումն քոյլէ և գործ են ածվում հայելիների քամակը պատելու համար, կապարից շինումն հրացանի գնատեկներ. նորանից յօրինած թերթերով երբեմն ծածկումն տանիքները,

Ոսկին և արծաթը գործ են ածվում առաւելապէս դրամ հատանելու համար, բայց ոսկերիչքը պատրաստումն նոցանից զանազան բաներ զարդարանքի և փառակեցութեան համար. նոքա այս մետալներից շինումն նոյնպէս շատ բարակ թերթեր զանազան տեսակ պիտառութեան համար. ոսկուց և արծաթից հիւմումն նշնպէս ժապաւենք:

Պլատինան յայտնի է Եւրոպային, ոչ աւելի քան թէ 120 տարի. այս մետալը լինելով ամենածանրը բոլը բնական մարմինների մէջ, գտած է նախ և յառաջ Ամբիկայի մէջ, ապա Ապանիսյումը, և յետոյ բաւական առատ, Ռուսաստանի մէջ: Նթէ նա կատարելապէս յատակած էր, նման է գունով արծաթին, շատ հեշ կոանելի է և շատ դժուար հալելի: Կա չէ ժանդապում երբէք և ընդունումէ պատուական ողօրկութիւն: Ռուսաստանումը, թող այլ տեսակ գործածութիւնը, կարումն պլատինայից դրամ: Այս մետալը խառնվելով պղնձի և արսենիի հետ, տալիս է պատուական հայելիք հեռացցների (դիտողական փողովակների) համար:

4. Վղեր: Ազի անունով հասկանումնենք առ հասարակ մի պյնկիսի մարմին, որ շատ հեշտ և ամեննեին հալվումէր ջրի մէջ և լեղուի վերայ թողումէր մի սաստիկ և այրողական համ: Աղերին սեփական է նոյնպէս կարծրանալ և աւելի քան թէ միւս հանքերը խառնվել օտար նիւթերի հետ: Բոլը հանքերը և աղերը բաղկանումն որ և իցէ թթվութենից և ալքալի անունով նիւթից, որ ունէր մի այրողական համ և տալիս է ջրին սապոնային յատկութիւն: Առաւել արժանի յիշատակութեան աղերը են սոքա. կերակրային աղը որ ըստ մնջի մասին ստացվումէ ծովային ջրից և աղջին աղբիւրներից: Քարեղեն աղը գտանումն հողի մէջ աշագին կշյաերով. անուշաղը պատահումէ մանաւանդ թէ հրաբուղին սարերի մօտակայքումը որպէս բնածին, կամ թէ արուեստով ստացվումէ կովի և ուղարի քակորից, և գործ է ածվում բժշկականութեան մէջ որպէս վերլուծանող, գրգռիչ, փտութեան ընդդիմացող և աևնդ հանգստացնող դեղ, այլև ոսկի հալելու, ամանեղենք կլայեկնելու և ներկելու համար: Գլաուրը բան աղը գտանվումէ բնածին կերպով. պաղեղը, քաղցրաթթու աղը (շիպը) գործ է ածվում մանաւանդ

կերպասները ընդունակ կացուցանելու զանազան գուների: Արջասպը, մի տեսակ աղ, որ ստացվումէ մետաներից, այսինքն երկաթից, պղղնձից և անագից, շատ օգտակար է բժշկական դեղերի և ներկարարութեան մէջ: Բորակը, գլխաւոր բաղկացական մասն վառանիթի, որ ստացվումէ աւելի արուեստով քան թէ բնածին, պիտառական է զանազան կերպով:

ԹԱՇ ԵԿԵԶ Ե՛ ՄԱՐԴԻՆ:

1. ՄԱՐԴԻՆ ՌԱՋԱՎԱՐԱՐԱԿԱՆԻՑ:

Համեմատիր քո անձը որ և իցէ անասունի հետ. անասունը ման է գալիս գլխակոր դէպ ի գետին, բայց դու ման ես գալիս ուղիղ: Անասունը կարող է միայն տեսանել այն բանը, որ նորա առաջն է, բայց դու կարող ես տեսանել ինչ որ քեզանից բարձր է և քո շրջակալքումը կայ. դու կարող ես նկատել երկնիքը նորա աստեղների հետ միասին, արեգակը և լուսինը: Դու ունիս ձեռքեր. բայց ոչինչ անասուն չունի նորանց, և ինչքան օգտակար էին մարդուս նորա երկու ձեռքերը և մատերը, որնցով կարող է նա իւր ճարտարայարմար զգեստը և օժեկվանը պատրաստել, իւր ոյգին անկել, իւր անդը սերմանել, իւր պտուղքը ժողովել: Նորա իշխանութիւնը բոլոր անբան արարածների վերայ, բաց ի նորա հանձարից, հիմած էր նորա ձեռքերի կազմութեան վերայ: Պատկերացուցէք ձեզ, որպէս թէ շատ և շատ հանճարեղ մարդիկ, փոխանակ մասների, ունեին սմբակներ ինչպէս ձին, ամեն մի ձեռքի վերայ, ինչ պիտոյ է յառաջանար այդ կոսիտ ու բիրս բաներից: Ինչպէս կարող էին նորա տուն և օժեկվան շնուր, կանեփ, կտու և բուրդ մանել, չուխոյ և կտուիք պատրաստել: Ինչպէս կարող էին վարուցանք առնել, իւրեանց պտուղքը ժողովել, եզերը և ձիաները սանձահարել: Առանց ձեռքի պիտոյ է մարդս իւր բանականութենովը աւելի և թշուառ լինէր: Բայց Արարիչը պարգևել է նորան և մի գեղեցիկ և աղնիւ կերպարանք, մի կենդանախօս երեսը, մի հոգելից աչք. նա տուել է նորան կարողութիւն խօսելու և բացայստելու իւր մտածութիւնքը. մի կարողութիւն իւր անդամները աւելի բազմազան կերպով շարժելու, քան թէ որ և իցէ զաղան, և ճարտարութենով լցուցանելու այն ոյժը որ պակաս էր մարդուս: Եւս առաւել գերազանց է մարդը անասունից իւր հոգեղէն ընդունակութեններովը: Նախ և յառաջ ծանօթանանք այս տեղ մարդու

մարմնաւոր կազմածի չետ, ապա վորքը ի շատէ տեղեկութիւն կը տանք ձեզ նորա հոգեղջն խորհրդաւորութեան մասին։

Մարդս կարող է ապրել 60, 70 և 80, այն և 90, 100 և 150 տարի, բայց մեծ մասը անասունների չեր և կիսով չափ այդքան երկարակեաց. միայն շատ սակաւքը նոցա մէջ հասանումն այդպիսի խոր ծերութեան, զոր օրինակ փիլերը, կրիտքը, արծիները և թռթակները։

Մարդս ունի աւելի կենդանական զօրութիւն քան թէ անասունքը. նորա մարմնը կարող է տանել ամենամեծ ծանրութեների և ամենասաստիկ ցաւերի. մարդս կարող է ապրել երկրագնդի բոլոր աշխարհների մէջ և տանել տաք, ցուրտ և չերմ կլիմաների. բայց սորա հակառակ անասունը կամ մուանումէ կամ նուազումէ և կամ թէ հիւանդանումէ: Եթէ անասունը տեղափոխված է իւր հոյրենի աշխարհից մի օսոր երկիր, նա կորուսանումէ առհասարակ իւր բնական գեղեցկութիւնը և ցժմ. սակաւ անասունք միայն կարող էն ապրել ամենայն կլիմաների մէջ: Եւ սորանից ևս բացայցտ է մարդուս առաւել մեծ կենդանական զօրութիւնը, համեմատելով անասուններին։

Այս, անասունը, օրպէս և մարդս, կարող է կամակար շարժվիլ մի տեղից դէպ ի միւսը. բայց նա չէ կարող գործել այնքան բազմազն շարժողութիւնք իւր մարմնովը, ինչպէս սա: Խնչքան յամբաշարժ և ծանրաբայլ էին արջերը, կապիկները և շները. թէ և նորա արուեստով ուսած էին կաքաւել, բայց ինչքան անաշղակ և տգեղ էին այդ գործի մէջ: Մարդը, մի բառ ևս չը խօսելով, այլ միայն իւր մարմնի շարժուածքով, մանաւանդ թէ ձեռքերի, զլիսի և աչքերի, կարող է բացայայտել միւսերին իւր մասհութիւնքը և ցանկութիւնքը. նա կարող է խօսել մարմնաշարժութեններով: Այս մասին բաւական յաջողակ էր և շունը աչա, որ գալարելով իւր մարմնը և սողալով բացատրումէ իւր աչը և երկիւղը, բայց շարժելով իւր պոչը, ուրախութիւն։

Անասունը կարող է նոյնպէս հոգ տանել իւր մնունդի և պահովութեան համար, կարող է պաշտպանել իւր անձը արշաւանքի երեսից և հնարագործ լինել ընդդէմ վոանդների, բայց քանի և քանի բաներով պահասաւոր է նա քան թէ մարդը: Սա ունի անհամար հնարներ պահպանելու և պաշտպանելու իւր կեանքը. սա շինումէ իւր համար ամուր բնակարանք, որոնց մէջ բնակումէ պատահան ցրտից, չերմութենից, անձրեից և հողմից: Կորան ծանօթ էին այնքան շատ

խոտեր և բուսականներ, որ ունեին բժշկական զօրութիւն և ցաւերի փարատիչ էին։ Մարդս թումբներով պաշտպանումէ իւր անձը ծովի և գետի ջրհեղեղից, շանթապահ գործիներով, աւերածներից որ կարող էր պատճառել կոյժակը. պաշարի շումարաններով նա պահպանումէ իւր անձը պակասութենից և սովից, զգեստով, ցրտից և անձրևից։

Աթէ դու սոված շան առաջև ձգէիր խոտ, մի՛ թէ կ'ուտէր նա. (և ո՞ր անասունը կ'ուտէր նորան յօժարութեամբ)։ Ի՞նչ է այս բանի պատճառը, որ ոչ մի շուն չէ ուտում խոտ, և ոչ մի ձի չէ ուտում միտ Մի՞ թէ զիտէ շունը, թէ խոտը վնասակար է նորան, բայց միսը օգտակար. ոչ. Նա չը դիտէ այդ բանը, բայց ի բնէ ունի նա յօժարութիւն դէպ ի այն ամենայն բանը, որ նորան օգտակար էր, և գարցութիւն ամենայն բանից որ նորան վնասակար էր։ Ամենայն անասունք ի բնուատ հակամիտած են դէպ ի քանի մի գործողութիւնք որ հարկաւոր էին նոցա կեցութեան համար. զոր օրինակ բոլոր թռչունքը ի բնէ ունեին յօժարութիւն իւրեանց համար բայց ներ շինել և թռչել, ձկները, սագերը, բադերը և կարապները ունին յօժարութիւն լողալու, կատուքը, սողալու և մուկն որսալու. շոնչքը վազումն միւս անասունների քամակից և այլն. Չաս թը ընչունք ունին հակամիտութիւն հեռանալու մեղանից ձմեռնային ժամանակը, բայց որում այդ միջոցին չէին գտանում մեր մօտ կերպուր։

Եւ մարդիկ ունին բնասուր հակամիտութիւնք, այսինքն ընդարոյս կարողութիւնք մի բանի ցանկանալ, մի գործ գործել, կէսօրին զգումէ մարդը յօժարութիւն ուտելու, բայց երեկոյին, երբ որ նա վաստակած էր, քննելու Ոչ մի մարդ ուրախ չէր, երկար ժամանակ մնալ միայնակ, որովհետեւ ամենայն մարդիկ ունեին յօժարութիւն ապրելու իւրեանց նմանների լընկերութեան մէջ. Բոլոր երեխայքը նմանումն չափահասակներին, որ գտանվումէին նոցա աշքի առաջև, որովհետեւ մարդը ունի հակամիտութիւն նմաննելու միւսին։

Ո՞արդուս հակամիտութենների մի քանիքը տեսանվումն նոցնպէս և մի քանի անասունների մէջ. զոր օրինակ հակամիտութիւնը առվրելու ընկերագէս իւրեանց նմանների հետ. Մեղուքը, մըլլէնքը, ջրշոնքը, կապիկները ապրումն մեծ մեծ ընկերութեններով. վայրենի քօշերը որ շատ նմանութիւն ունին ընտանի այծերի հետ, նոցնպէս մեծ ժողովներով շրջումն, որոնելով իւրեանց համար կերպուր, և պահպաններ են կացուցանում, որ պարտական էին սատկապէս սուլլերով զգաստացնել միւսերը մօտակայ վոտանգից. Բոլոր տեղափոխական թռչունքը, մանաւանդ թէ կռունկները, թռչու-

մն երամովին և ազգու աղաղակով շատ հեռուից ձայն են տալիս միմանց, որ չը հեռանային միմեանցից, Կոքա թռչումն սահմանեալ կարդով, և առաջնից թռչողքը, մի քանի ժամանակից յետոց, փռ խռոմեխն իւրեանց կարդը հետուից թռչողների հետ:

Բայց մարդկացին ընկերութիւնքը աւելի բարեկարգ են և աւելի տեղական քան թէ անսառւների ընկերութիւնքը, Մարդիկ ասլումն միասին քաղաքների և դիւղերի մէջ, որ օգնական լինին միմանց աշխատութեան և կարօտութեան մէջ, որ միաբան զօրութեանով պաշտպանեն իւրեանց անձը վասնգների և վաստրաղդ դիպուածների երեսից, մանաւանդ թէ վայրենի գաղանների երեսից, այնպէս որ մինը հոգաբարձու էր միւսի բարեկեցութեան համար:

Մարդերի յարակցութիւնքը իւրեանց մէջ և ընկերութիւնքը որոնց մէջ կենումեխն նոքա, անշափ բաղմաղան են: Առաջին քայլափոխից դէպ ի կեանքի ասպարէզը, մարդս կապակից է իւր ծնողների և ընտանեկիցների հետ: Երբ որ նորա բանականութիւնը ըսկումէ բացվիլ, նա մօտառորդումէ վարժապետների, ընկերների, ապա ծանօթների, դրացների, քաղաքակիցների կամ թէ հայրենակիցների, մէծաւորների, պաշտպանների և տէրութեան հետ:

Ունանք մարդիկ իւրեանց պաշտօնի վիճակի պատճառով ունին շատ լցոնարձակ կապակցութիւնք ուրիշների հետ: Վաճառականը ունի յարակցութիւն երկրի բոլոր բաժինների մէջ եղած մարդերի հետ, որովհետև նա ստանումէ ապրանք զանաղան և շատ հեռաւոր աշխարհներից, զոր օրինակ. կիտրոն և նարինջ Խոտալիայից, զինի Սպանիայից և Պօրտուգալիայից, զահվէ Ամերիկայից և Ասիայից, և շատ անգամ մի քանի հազար վերստ ևս աւելի հեռուից: Երկաթ Ռուսաստանից և Շվեյչառյայից, անագ Անգլիայից, բուրդ Շլեզիայից և այլն: Մարդիկ կարողանալով կապակցութիւն ունենալ ամենահեռաւոր աշխարհների բնակիչների հետ, այդ մասին շնորհապար են երկու տեսակ հմտութենների, ծովագնացութեան և գրութեան արուեստին: Եթեամեն նաև երբ վերայ մարդիկ շրջելով անցանումն աշխագին ծովերից, որ բաժանումէին նորանց միմեանցից, բայց գրութեան միջնորդութենով կարող են հեռաւորներին ծանուցանել իւրեանց խորհուրդները և ցանկութիւնքը այնպէս բարւոք, որպէս ներկայ լինելով, երես առ երես խօսումէին միմեանց հետ:

Վմնայն մարդ կարող է որոշել, թէ ինչ բան ճշմարիտ, և ինչ բան սուտ է, նա կարող է համակարգել իւր մօքումը անթիւ բազմութիւն ուղիղ իմացութենների, որովհետև նա կարող է բոռնել, և այս բանը նորա առաւել մէծակշիռ և առաւել գերազանց

պատուականութիւնն է, եթէ համեմատէիր նորան անասունների հետ։
Զոր օրինակ մարդու տեսանումներ որ նա չէ կարող ապրել առանց
կերպուր և ըմպելի գործ զնելու, առանց զգեստի և բնակարանի։
ուրեմն զիտէր նա, որ չէ կարող հրաժարվիլ այս երեք բանից, և
այսպէս տառապմէ տեղեկութիւն նիւթեական պիտոյքների։ Այն բա-
ներից որ տեսած, լսած ու հասկացած էր մարդու, կարող է նա սահ-
մանադրել իւր համար շատ և շատ կանոններ ։ Նա լսած է, թէ մինը
շափից գուրս ուտելով չիւանդացել է, և այս փորձից եղրափակու-
մէ նա այն կանոնը, թէ չէ պիտոյ շափից գուրս ուտել, եթէ կա-
մանումներ առողջ լինել ։ կամ թէ լսած է, թէ ծառերը մօտ են
քարշում կայծակը, ուրեմն սորանից եղրակացնումէ նա, թէ չէ պէտք
փոթորկի ժամանակը գաղաք առնուլ ծառի տակին։ Այսպէս աչա,
բանականութեան առաջնորդելովը, սովորումէ նա ճանաչել օգտա-
կարը և վնասակարը, ձեւնտուն և ընդդեմը մարդուս կենդանու-
թեան։ Ավագ մանուկ գու գնումն ուսումնարան, և այն խորհր-
դով, որ ուսանի մի օգտակար բան և իմաստնանաս ։ բայց եթէ զու-
ուսումնարանումը ուշադիր չես, շատախօսումնս, խաղումնս, թափա-
ռումնս դասասան մէջ, ապա գու վարժումներ անխորհուրդ կերպով,
որովհետեւ այդպէս չէիր կարող հասանել քո նոպատակին, այսինքն
իմաստնանալ ։ Բանականութիւնը շինումէ մարդու խելացի և հմուտ, և
ինչքան զարմանալի են մարդկեղեն հանձնարի հնարագործութիւնքը։
նայիր միայն այն հշյակապ շինուածներին, այն մեծամած նաւերին
և շոգենաւերին, այն երկաթի ճանապարհներին, որոնց վերայ թէ-
ւաւորված շղեկառքը թուլումէ ծափ պէս, քարշելով իւր քամա-
կից անչափ վագոններ, նայիր սատացնանկի բազմաճարտար գործա-
րանների վերայ և այլն և այլն։ Առանց բանականութեան չեր կա-
րող մարդու տեղեակ լինել երկրագործութեան, արուեստների և ճոր-
տարութենների և այլ հազարաւոր օգտակար պաշտօնների։

Անծ և անպատմելի՛ Են առաւել լութիւնքը որ ամենարարի Առ-
տուածը առատաձեռնել է մարդուս, թող ուրախանակը այս պատ-
ուական պարզենների վերայ և նորհական լինինք Առաւեստը դոցա
համար, խոհեմութեամբ և բարեխիղճ կերպով օգուտ քաշելով դո-
ցանից և պահպանելով դորանց։

2. Մ-րու Հ-րինը։

Վարդուս մարմինը, այս հրաշալի և բազմամանեայ ճարտա-
րաշեն տաճարը հողու, կազմած է շատ հեղանուտ և ամուր մասնե-
րից և այս բոլոր, կարելի է ասել, անհամար մասները կերպով դո-
ցանից և պահպանելով դորանց։

բումեն մի մէքենայ, որի զուգապատշաճութիւնը թէպէտ այնքան աչ-
քի տակ չէին ձգում մարդիկ և չէին նորան այնքան ուշադիր, ինչ
պէս հարկն էր, այնու ամենայնիւ դա էր առաւելապէս, որ ցուցա-
նումէր մեզ Արարծի կարողութիւնը և ամենիմաստութիւնը:

Ուիշերը:

Մեր մարմին հիմնական սիւնքը են ոսկրները. սոքա պինդ և
կարծր են, ունին ամրապէս կազմութիւն, այն խորհրդով, որ կա-
րողանացին գէպ ի վեր պահել մարմին ծանրութիւնը. առանց նոցա
մարմինը կը լինէր փափուկ և տկար, բնչպէս լինումէ միսը բաժա-
նած ոսկրներից: Յօդուածների միջնորդութենով ոսկրները առուր
կապած են միմեանց հետ. յօդուածքը պատած են կակող և ձգա-
կան աճառներով, նորա համար, որ չը տրորվէին միմեանց վերայ.
այլև ունին պինդ կապեր, որ մինը միւսի միջից գուրս չը պրծնի:
Յօդուածների գլուխքը և յօդուածների ամանիկքը պատած են ներ-
սից մի անչափ կոկ աճառով, որանից որոշվումէ մի գիշութիւն եր-
կոցունց մէջ տեղումը, անգամների շարժողութիւնը հեշտաշարժ կա-
ցուցանելու համար: Բոլոր ոսկրները, կապերով և աճառներով պի-
աւորած, բաղկացնումն այն բանը, որ ապաւմէ Ուիշերի կամ Ավե-
չու մարդկացին մարմին: Կոցա թիւը շամարումն մօտ 261: Ուկր-
ները ունին կէս մի փողովակաձև, և կէս մի տափարակ ու լոյն էեր
պարանք, և շատերը ներսից գատարկ են: Մեր 32 ատամները պատ-
կանումն նոյնպէս ոսկրներին: Միւս ոսկրներից զանազանվումն սո-
քա այն բանով, որ իւրեանց պահեների վերայ պատած են ոչ թէ
մի քնքու նիւթով, այլ մի ամուր առականիւթի պէս բանով: Ոս-
կրների գատարկութիւնը պարունակելով իւր մէջ փոքրիկ ուղղողը,
պատած է ոսկրակից նուրբ մաշկով: Բոլոր Ակելետը բաժանումն ե-
րեք կարգ. Գլուխ, իբան և Անդամ: Գլուխ սկաւառակը բաղկանումէ
զանազան համակարգած մանենիրից, թէպէտ, հարեւանցի նայելով, ե-
րեւումը բաղկացած մի կտորից: Եյլ մասունքը էին Հունա-ունի, Հուն-
ի և Հունա-ունի անդամները: Երեսի վերայ կան քթի, արտասուրի և քիմ-
քի, ոսկրները. սոքա ձևացնումն ծնօտի փոսերը. վերին և տառին
ծնօտների մէջ ամրացած են ատամները: Ոշնաշարը, կուրծքը և տաշոր
բաղկացած մանենիրից: Աղնաշարը է մի սիւն, բաղկացած 2/4 ողնական
ոսկրներից, որ վեր է պահում գլուխը: Կորա վերին ծոյրումը կան
եօթն պարանոցական ոսկրներ. առա հետևումն 12 ողնական ոսկր-
ներ քամակի վերայ, ապա 5 ողնական ոսկրներ մէջքի վերայ: Քա-
մակի ողնական ոսկրների վերայ շատ ամուր կապերով հաստատած

Են կողերը, որոնցից եօթն համ կորացած Են և ձեւացնումն աղջ չեր, որ միաւորվումն կուրծքի տափակ ու նեղ ոսկրի հետ, մշղ անզումը: Կողա շրջապատումն կուրծքի փոսը: Հինգ միւս կողերը կուրծքի ոսկրին չեն այնպէս խիս մօտակայ, ինչպէս վերինքը, և ասվումն ուշում կամ ուշում կողեր: Այն տեղ, ինչ տեղ վերջանումէ ողջաշարը, երկու կողմից դատանվումն Անձնաւ ասած ոսկրները. սոքա միաւորված Են միւսերի հետ և ձեւակի բալումն մի տաշտ, և այս պաշտառով ասվումն Տաշտային ոսկրները: Շայրութեններին պատկանումն ձևուրը և ուսերը, որ շատ նման են միմնանց, որ և նցնպէս բաղկանումն զանազան առանձին մասներից. ձեռը ունի երեք կարգ. Արմատ, Միջնաձևն և Մասեր: Ոսերը բաղկանումն ազդրներից, սրունդներից և ոտնաթաթերից: Վզրը սկսանվումէ տաշտային ոսկրներից և հասանումէ մինչև ծունկերը. ծնկածալի տակից պարզվումէ սրունդը, ձգվելով մինչև ոտնաթաթը:

Վայ ըոլոր ոսկրները յառաջաց լինումն կակուղ և աճառային, բայց առ փոքր փոքր կարծրանումն և ամրանումն: Զար օրինակ, երեխանների մշղ բոլոր զլիսի սկաւառակը կակուղ է և ունի բաց տեղեր, մորթով ծածկած վերայից, որ փակվումն յետոյ: 15 տարեկան, և քանի միների մշղ 20 տարեկան հասակութը միայն, կատարելապէս ամրանումն ոսկրները. ծերութեան ժամանակին նոքալինումն աւելի կոշտ և բնեկանուտ (հեշտ փշոելի):

Մասկուլներ ու Մասկուլներ:

Մասկուլների գործը այն է, որ ջիղերի ազդեցութենով շարժեն մարմինը, և սոքա էին, որոնցից բաղկանումներ համարեան թէ բոլոր մարմինը: Մարմինի համօրէն մասնիւթը բաղկանումն մատ 238 չոկ չոկ բաժններից, որ, մինամե բոլորակված, երկու բարակ կապերով ամրացած էին ոսկրների վերայ: Ահա սոքա են մուսկուլները: Ամենայն մուսկուլ բաղկանումն առանձին թելերից, որ շատ անգամ առաւել բարակ էին, քան թէ հասարակ թելերը և պատած նուրի մորթով, կամ աղիւակաւոր ասած մաշկովը: Այն ոյժը որանով մուսկուլը կծկվումն և պարզվումն, անշափ մեծ է, և ասլումէ հայունական: Վայ զըրութիւնը իւս մի ներգործումն մեր կամքով, զոր օրինակ, երբ որ շարժումնք մեր ձեռքը կամ ոտքը, երբ որ քայլումնք, աշխատումնք, վեր ենք կալնում մի բան կամ ըմբրոնումնք, և կես մի ակամայ, զոր օրինակ սրտի զարկողութեան, շլնչառութեան մշղ: Մի քանի մուսկուլք այնպիսի ամենիմաստութեամբ կարդարած են Արարայից, որ երբէք չեն վաստակում և չեն դա-

դարսում ներգործելուց, այլ միշտ և հանապաղ շարժողութեան մէջ են և, ասես մէ, երբէք հանգստանում չեն:

Այսուհետեւ առաջարկութեան գործորոշում, ի՞մ նէ որդինէ դարձութերու նէան անընելը, ի՞մ նէ երուիւը:

Այսուը մի զատարկ մարմին է, բաղկացած ամուր մանղէն կապերից և զետեղված է կուրծքի փոսումը մի մաշկեղէն պարկի մէջ որ ասվում Պերիքարզիսն: Արտի բոլոր գոգաւորութիւնը բաժանվումէ երկայնութեամբ: Երկու փոս, որ ասվումն սրտի մենեակներ, և ամեն մի մենեակը ունի գարձեալ երկու գոգաւորութիւն: Այս, այս զանազան սրտասենեակների հետ կապակից են արինատար երակները որ էին մաշկեղէն փողովակներ, որոնցով արիւնը սրտի միջից հոսումէ զեկ ի մարմին ամենայն մասունքը: Արտի գործակոսութիւնը այն է, որ արիւնը տանի հասուցանէ մարմին ամենաշեռաւոր մասներն և յետոյ գարձեալ ընդունի նորան, որ միւսանցամցուրս թողու խրեանից, այս բանը ասվում Արինատարութիւն, կամ թէ արիւնի շըջագայութիւն: Գոտ էր պատճառը, որ սիրոր ամենասաստիկ զօրութենով փոխ առ փոխ հծկվումէ և պարզվումէ: Արիւնը նախ և յատաջ մասնում Արտա անունով երակի մէջ և սորանից թափվումէ երկու աւելի փաքը երակների, աղօ ևս աւելի փաքըների մէջ, որ հաւասարագէս ճիւղաւորված էին մարմնումը: Երբ որ արիւնը պիտոյ է վերադառնայ զեկ ի սիրուը, ընտրումէ իւր համար այլ ճանապարհ, այսինքն այն աւելի նուրբ երակներովը որ ասվումն արիւնաբեր երակներ (Անապյ), և ներս է թափվում աջակողման սրտասենեակի մէջ, որ ապա միւսանցամց շարունակէ իւր ճանապարհորդութիւնը մարմին մէջ: Արարիչը այնպիսի իմաստութեամբ տնօրինած է, որ բոլոր արիւնը պիտոյ է կատարէ իւր ճանապարհորդութիւնը թոքերի միջից, հովանումէ և զուարթանումէ: Այս ճանապարհը որ արիւնը իւր շըջանառութեան մէջ պիտոյ է կատարէր, ունի 150 տանաչափ երկայնութիւն. ի վերայ այդը ամենայնի, նա կատարում այդ ճանապարհը մի բոպէի մէջ: Մարդու արիւնի ջերմութիւնը ունի 29 աստիճան թէօմիւրի ջերմաշափի վերայ. Նորա մէջ զտանված բոլոր արիւնի շափը սահմանումն 24—30 ֆունտ:

Վառող մարդու սիրուը, մի բոպէի մէջ, զարկում 60/ց մինչեւ 80 անգամ, ուրիմն մի ժամի մէջ 3600 անգամ: Կնչքան արժանի

է զարմանալու ոյս բանը, մանաւանդ եթէ մոտածէինք, թէ սիրու
ինքն ըստ ինքեան շարժվումէ առանց մի խթանի կամ գրգռողութեան
դուրսիցը. ինչպէս անպատմելի է Արարչի ամենիմաստութիւնը, որ
այնպէս էր տեսրինած մեր սիրու, որ սորա զարկողութիւնը կամ
թէ հծկողութիւնը և պարզողութիւնը չէ կախ մարդկային կամից,
այլ լինումէ առանց նորա կամբին և գիտութեանը: Բայց եթէ ոյդ
բանը կախ լինէր մարդկային կամից, ինչպէս հեշտ կարող էր պա-
տաշնէլ, որ մեք որպէս և իցէ զանցառու լինէինք այդ մասին, այ-
նուհետեւ մեր կենդանութիւնը պիտոյ է վերջանար իսկոյն:

Եթէ դու բարբորված էիր, ապա քո բոլոր մարմնիցը գուրս
է գտիս մի ջրային խոնաւութիւն, որ ասվումէ Քըոբն+ կամ Գուբ-
ն+: Արովչետև քրտինքը ոյն ժամանակին միայն գուրս է թորում
մարմնիցը, երբ որ արիւնը ջերմութենից, վաղելուց կամ թէ աշ-
խատութենից սկսած էր շարժվիլ անսովոր արագութենով, ապա
յոցանի է դրանից, որ քրտինքը քամիւմէ արիւնից: Արտասուքը
պատկանումն նոյնպէս ջրային գիշութեններին, որ դուրս է բրդ-
խեցնում արիւնը. նոքա գուրս են բջիսում փոքրիկ փամիկուշանե-
րից, որ ասվումն արտասուքի մասներ և զետեղված են աչքերի
փոսերի մէջ: Արտասուքի գիշութիւնը շատ օգտակար էր աչքերին,
որովչետև զա պահպանումէ աչքը չորութենից և ձեռնոտու է նորա
շարժողութեանը: Այս գիշութիւնը դործակառար է նոյնպէս աշքի-
րի մաքրութեան համար, պատճառ, նա մի և նոյն միջոցին լուանու-
մէ և փոշին և այլ միւս ապականութիւնը, ընկած աչքի մէջ. և այս
պատճառով ասուուածային բարութիւնը այնպէս է սահմանել, որ ար-
տասուքը խկզն թափվումէն աչքերից, երբ որ ընկած էր նոյս մէջ
փոշի կամ թէ այլ և իցէ կեղտ: Մեր մարմնից անդադար դուրս
են գալիս ջրային գոլորշիք, այն և այն ժամանակը, երբ չենիք քըր-
տնում. այս գոլորշիքը գոյանումն նոյնպէս արիւնից: Մի այլ աշ-
համ խօնաւութիւն, Մեջ, ամեն օր և շատ յաճախ որոշվումէ ա-
րիւնից: Այս մէզի պատճառատութիւնը լինումէ երիկամունքի մէջ, որ
դրած էին ողնաշարի ստորին մասի մատ, որ և տանումն մէզը դեպ
ի միզի փամիկուշը: Այս պատճառով, երիկամունքը պարունակու-
մն շատ արիւնային անօթներ, որոնց միջից անցանումէ արիւնը, որ
ազատվի ջրային և աղային գիշութեններից:

Թուրքի և Շահապետական հայն:

Կուրծքի փոսը, ինչ տեղ դրած է սիրութիւնը լինումէ երիկամունքի մէջ, ունի
մի միջնապատ որ բաժանումէ այդ փոսը փորից. այս սահմանապատը

բաղկանումէ ցամաքերակ մուսկուլներից որ պարզած էին մաշկի պէս. դորան ասումն Միջոցամորթը (դիաֆրագմա) կուրծքի և փորի մէջ: Նա բաղկանումէ փափուկ մինամիսերից, այս պատճառով, որ մի գուցէ քնքուշ թոքերը, որ հասանումին կուրծքի և փորի միջոցապատճն, ձնչվէին և տրորվէին միմեանց վերայ:

ԱԵր մէջ գտանված երկու թոքերից մինը դրած է աջակողման կրծափոսի և միւսը ձախակողման կրծափոսի մէջ. այս պատճառով մինը ասկումէ աջակողման և միւսը ձախակողման թոք: Թոքերը են փափուկ, սպնդային մարմիններ և պարունակումն շատ ոգային անօթիկներ կամ օդեղէն փամփու շտիկներ:

Իսոյց թէ օդը ինչպէս է ներս մտանում թոքերի մէջ, կը հարցանէիք գուք, ազնիւ մանուկներ. ահա պատճենք այս տեղ համառոտապէս: Պարանոցի յառաջամասնի վերայ կարող էք գուք խկցն մորթի տակին, շնչափել մի փոքրիկ փողովակ, որ բաղկանումէ մի քանի աճառային օղերից. այս էր Ծնչափողը: Որովհետեւ սա պիտոյ է տանէր օդը երկու թոքերի մէջ ևս, այդ պատճառով, երբ որ նա մտանումէ թոքերին, բաժանվումէ երկու ձիւղ, որոնց միջնորդելով ներս շնչած օդը անցանումէ թոքերի մէջ, բերանով և քթով ներս ենք ձգում օդը. սա բերանի յետնակողմովը, որ ասկումէ կոկորդ, ներս է մտանում շնչափողի բացուածի մէջ, որ գլխումն էր: Այս բացուածը շատ նեղ է և նման է մի ձեղքի: Այն միջոցին, երբ որ ներս շնչած օդը միւսանգամ գուրս է գնում այս նեղ ձեղքից, յառաջանումէ մի հեցին, որ ասումնք Յայ, և այդ պատճառով շնչափողի մուտքը, ասումն իշխորք բացուած: Ամենայն կերակուր, որ ուսումննք, պիտոյ է այս շնչափողի բացուածի վերայից անց կինոյ, որ հասանէ աւելի հեռակայ, գեղի ի յետին կողմը դրած, կերակուր ընդունող փողովակին. և այս խորհրդով կոկորդի ձեղքը ունի իւր վերայ մի խուփ. պատճառ, եթէ ըլ լինէր այս խուփը, շատ հեշտ կարող էր պատահէլ, որ ծամած կերակուրը վայր ընկնէր շնչողական փողի մէջ, և եթէ պատահէց այս, ապա պիտոյ է շնչափուր լինի մարդը:

Օդը ինքն ըստ ինքնան շնչափողովը անցանումէ գեպ ի թոքերի օդային անօթիկները, և այս միջոցին կուրծքի փոսը լայնանումէ կուրծքի և փորի միջոցամորթովը, կողերովը և փորի մինամիսերովը: Երբ որ կուրծքի փոսը դարձեալ կծկվումէ, ապա ներս շընչած օդը դուրս է ձգվում օդային անօթիկներից և դուրս է դալիս շնչափողովը, ձանապարհ տալով, որ մի նոր շնչելի օդ յաջորդէ նորա տեղը:

Վայքմ խնդրեմ ու շաղիր լինել այն օդտին, որ շնչառութիւնը
տնի մարդուս համար: Այս բանով նախ և յառաջ հովանումէ ա-
րիւնը թոքերի մէջ, ուր և անդադար նորոգվումէր օդը շնչառու-
թեան միջնորդութենով, և հովանալով աղասիվումէր նոյնպէս իւր
անմարուր մասներից, որովհետեւ սօբա շողիների պէս, երբ որ ա-
րիւնը անցանումէր թոքերի միջից, բաժանվումին, և զուրս գնացող
աղի հետ փարատվումին: Սորանից հեշտ էր հասկանալ, որ այն ու-
նիկի մէջ, ուր կային շատ մարդիկ միասին, օդը վերջապէս ապա-
կանվումէ և ծանրանումէ: Բայց սորս հակառակ, արիւնը դարձեալ
հանումէ ներս շնչած սղից նորա աւելի ընտիր մասները և այդպէս
աւելի լաւանումէ շնչառութենով: Այս լաւափոխութիւնը արիւնի
կարող է միայն յառաջանալ այն ժամանակը, երբ որ թոքերը ըն-
դունումն իւրեանց մէջ դալար և մաքուր օդ, բայց եթէ սղը չէր
մաքուր և զարյար, ապա ոչ թէ չէ լաւանում արիւնը, այլև աւե-
լի վաստանումէ, և մարդս զգումէ վհասարութիւն և ներքին բորբոքու-
թիւն: Այս պատճառով, ամեննին չէ կարելի առողջ և զուարժ լի-
նել մի սենեկի մէջ, որ լցուած էր վեսասակար շողիներով, կամ թէ
ուր պատուհանքը երբէք բաց չէին լինում:

Որովհետեւ ստամբը, այս մորթեղէն կամ մաշեղէն պարկը,
դրած է կուրծքի և փորի միջոցամորթի մօտ, և այս միջոցապատը
շարժվումէ շնչառութենով, ապա և շնչառութիւնը ձեռնոտ է շար-
ժութեանը ստամբի և փորի այլ մասներին, որ կապակից են ստա-
մբի հետ: Կչա մի այլ օգուտ, որ հասուցանումէ մեզ շնչառու-
թիւնը: Դորս վերաց յաւելացնենք և այն օգուտը, որ շնչառութե-
նով յառաջանումէ ձայնը. պատճառ, հնչիւնքը զոյանումն այն ժա-
մանակին միայն, երբ որ մէք շնչափողիցը արձակումնք օդ և սա
դուրս է թռչում կոկորդի բացուածից:

Թէ ինչո՞ւ է լինում ժբառաւ-նիւնը:

Եթէ մէք կամենումնք մէր մարմինը առողջ պահպանել, ապա
ամեն օր պիտոյ էր մեզ կերակուր ընդունել, որովհետեւ արիւնը ան-
դադար մաշվումէ և նուազվումէ կէս մի զուրս արձակիլով գոլրշի-
ներ, և կէս մի սննդարար հիւթերը բաժանելով մարմնի զանազան
անդամներին և տալով նոցա կենդանական կարողութիւն: Այս կո-
րուսաը արիւնի պիտոյ է վերստին լցուցանել, և այս լինումէ կերա-
կուր ընդունելով: Կերակուրը մարտվումէ, այսինքն փոփովումէ հիւթ
և արիւն, զանազան գործարաններով: Բերանը է առաջին մարտողա-
կան գործարանը մարմնի համար: Այն միջոցին, երբ որ ամուր կե-

բակուրը միջնորդութենով լեզուի, որ նոյնպէս մկնամիս է, պահվում է բնբանի մէջ, առամենը աշխատումն ծամելով նորան. Նոյն միջին կերակուրը խառնվում է մի հեղանիթիթի չետ, որ ասվումէ Լույս-Հուն+, որ և գյանում բնբանի մէջ եղած փոքրիկ փամիտուշոներից, որ ասվումն Լույս-Հուն+ է:

Ա երեսումը ասածից յայտնի է մեղ աչա, թէ կոկորդի մէջ, դէպ ի յետին կողմը, չնչափողի մօտ, մի այլ փողովակ ունի իւր բացուածը, որ ասվումէ կերակրափող: Ծամած ու լորձունքով պատած կերակուրը կոկորդի միջով անցանումէ դէպ ի կերակուր ընդունող փողովակը որ այս պատճառով պատկանումէ մարտողով թեան գործարաններին: Անբակրափողի առաւել մած մասը գտանվումէ փորափոսի մէջ: Այս փոսը բաժանած է կուրծքի փոսից այն միջոցամաշկովը որ կոյ կուրծքի և փորի մէջ: Եայց առշապին սոկներովը փակվումէ նա ներքեից: Այժմ հասկանալի է աչա, թէ ինչ պատճառով այս ոսկրները ձևացած են տաշտապէս, որովհետեւ նոքա պիտոյ է պարունակեին կերակուր ընդունող փողովակի ստորին վերջնորը որ ասվումն Աղիքներ:

Եթէ կամնումէք իմանալ, թէ կերակուր ընդունող փողովակը ինչպէս է հասանում՝ մինչև փորը, ապա միտ առէք, որ նա սրտապատենի (ոնբիքարդիտնի) քամակեց, կուրծքի ողնաշարքի երկունութենով անցանումէ դէպ ի միջոցամորթը և այն տեղից մի բացուածով ցած է իջանում դէպ ի փորը: Համառա ասեմ: Կերակուր ընդունող փողովակը ներս մտանելով փորի մէջ, շատ լայնանում, ձևաւորվէ լով որպէս կռնուս:

Այսամբք, որ լինելով մի խօսորնակ դրութեամբ պարկի սէս մարմին բազկանումէր շատ թաղանթներից, զետեղված է առաջին կարգումը, նայելով նորա մշակաբյութեանը միջոցամորթին. Խիստ կապակեց է կերակուր ընդունող փողովակի չետ և իւր աջակողմովը հպաւորվումէ լեարդին, բայց ձախակողմովը փոյժեալին: Այսպէս, կերակրափողից զնումէ կերակուրը ուղղակի դէպ ի ստամիք, ներս մտանելով նորա վերին բացուածից, որ ասվումէ ստամոքի բնբան: Այս տեղ կերակուրի չետ խօսնվումէ մի կծու չիւթ, որ ստամոքի շարժողութենով գյանումէ այն փոքրիկ փամիտուշոներից որ դրած էին ստամոքի պատեանների մէջ: զա ասվումէ ստամոքի չիւթ: Բայց կերակուրը չէ մնում միշտ ստամոքի մէջ, այլ նորանից փախանցումէ աղիքների մէջ: ապա ուրիմն ստամոքը, բաց ի բնբանից, ունի և այլ բացուած սրանով կերակուրը տարգաւմէ աղիքների մէջ: Աղիքները են կակաւդ փողովակներ, ողորկ և ներքուստ խօսապատ մոր-

թից բաղկացած. որքա ոչինչ այլ բան չեն, եթէ ոչ, մի մեծ կանալ, կամ փողովակ, որ վեցապատիկ աւելի էրկար էր քան թէ ինքը մարմինը: Այսու ամենայնիւ, դորա ամենենին բարեզ տեղաւորվումէին փորի մէջ, ըստ որում ունին գալարածոյ դրութիւն: Այս փողովակի վերին մասը ասվում է Տասերկու մատնաշափ, բայց ստորին մասը, յետանցական կամ ուղիղ աղիք: Կերակուրը որ ստամբի մէջ փոխվել է խիստ, տասերկու մատնաշափ աղիքի մէջ միւսանգամ աւելի մանր մալցումէ նորա ուժգին մուսկուլեան թելքի ճնշողութենով, զանցվումէ և խառնվումէ լեղու հետ որ մի գտան և խօսին գիշութիւն էր: Այս խառնութենով, սննդական մասունքը բաժանվումն էրակրից և յետոյ անցանումն ուրիշ աղիքների մէջ, որ ապա յեղափոխումն նորանց մի սպիտակ կաթնանման հեղանիւմ, որ ասվումէ անդական հիւմ:

Հետո կարող էիք դուք դուշակել, որ աղիքները պիտոյ է մի սննդարար շարժողութեան մէջ գտանվէին, այնպէս որ կերակրախիւսը մի աղիքից փոխադրվէր միւս աղիքի մէջ, և նոյն միջոցին մանրանար աւելի: Եղիքների, որպէս և ստամբի շարժողութիւնը որդնանման է, այսինքն, նորա շարժվումն համարեա թէ այնպէս, ինչպէս սողուն որդնը: Բայց որովհետև աղիքները փորի մէջ դրած էն զուգախառնած միմեանց հետ, ապա անդադար շարժվելով, շատ հեշտ կարող էին տրոյել միմեանց և խառնախնդրովիլ: Այս բանիս խափան լինելու համար, աղիքները կազած են միմեանց հետ մի ճարպապատ մաշկով, որ ասվումն Միջնդելք (Մեղնիթեր): Մի այլ, նոյնպէս իւղալից մորթ, ճարպաթաղանթ անունով, պահումէ բոլոր աղիքները, որպէս թէ մի պարկի մէջ և չէ թողում, որ նոքա աճելով միանային փորի մաշկի հետ: Սաստիկ վեր թուչելուց կամ վայր ընկնելուց, կամ թէ չափազանց լարելուց իւր զորութիւնը, այլև մի ծանրութիւն բարձրացնելու ժամանակին, կարող է պատավիլ ճարպաթաղանթը. առա, աղիքները դուրս գալով իւրեանց կայարանից, հասանումէ մարդուն այն ցաւը որ ասումնք Փոշտանկութիւն կամ Աղեթափութիւն:

Լեարդը որ փորտակիքների առաւել մէծն է, դործակասար է պատրաստելով լեղին արիւնից, Կա գտանվումէ իսկոյն միջոցամորթի տակին և ծածկումէ ստամբի աջակողմը. բայց փայծեաղը, որ դրած է ստամբի ձախակողմումը և խիստ կապակից է նորա հետ, օգնական է մարտողութեանը, որովհետև նա բերումէ արիւնը լերդի մէջ և տալիս է նորան կարողութիւն պատրաստելու լեղին: Փայծեղի կերպարանքը նման է լեզուին, ունի երկայնաձև բոլորակութիւն

և բաղկանումէ բազմաթիւ արիւնեղէն անօթներից և աղիւսակաւոր մաշկից, և այս պատճառով սպնդային է:

Ահա, սիրելի երեխայք, տեսանումքը դուք, որ տասմաքի կծու հիւթը չէ միայնակ գործակատարը կերակրի մարտողութեան և վերլուծութեան մէջ, այլ թէ այդ բանին ձեռնտու է նշյալէս տասմաքի և աղիւների որդունաման շարժողութիւնը, գորանից յառաջացած չերմութիւնը, այլև միապէս օգը որ պարունակվումը կերակրի մէջ: Մարտողութեանը օգնական էր նմանապէս, ինչպէս ծանոթութիւն տուեցինք վերևումը, և լեղին մի քանի այլ հիւթերի հետ միասին:

Անդարար հիւթը անց կենալով բարակ աղիւների միջից, մածնումէ սոցա ներքին մորթի վերայ, և այս տեղ ներս են ծծում այդ հիւթը փոքրիկ անօթներ, որ ապօւմն կաթնեղէն անօթիկներ, որովհետեւ նորա կերակրի խիստիցը դուրս են հանում մի նուրբ կաթնանման հիւթ: Բնական է, որ այս խիստը այդ պատճառով աւելի թանձրանումէ, և Շեղ (Նիշար, մնակուշական) աղիքումը, ինչ տեղ գալիս էր յետոյ, համարեա թէ ամենեին կորուսանումէ իւր չեղանուտութիւնը, որովհետեւ կաթնեղէն անօթիկները անդարար դուրս են ծծում նորանից կաթնային հիւթը: Ինչ որ, այս դուրս ծծելոց յետոյ, մումէ Շեղ աղիքի վերջումը, անպիտան էր մարմինի մուռնի համար: Այս պատճառով լինութիւնը տեղափոխումէ նորան հաստակի մէջ, և սորա միջովը, մանաւանդ թէ յետանցական ասած աղիքովը դուրս է ծգում մարմնիցը, որովհետեւ յետանցական աղիքի մի ծայրը բացվումէ մարդու յետակողման մասնումը: Այն առաջ խժանիթը որ դանալումէ յետանցական աղիքի մէջ, օգնական էր, կոշտացած ապաւառը հրաժարեցնելու և նորա կոշտութիւնը անվաս կացուցանելու աղիքի համար: Առողջ մարդու մէջ, գիշեր ու ցերեկ, այս մաքրութիւնը կատարվումէ մի, կամ երկու անդամ: բայց սովորութենով կարելի է այն տեղ հասուցանել, որ այդ կարիքը լցուցանիլը մի սահմանեալ ժամանակում:

Անդական հիւթը, ինչպէս լինցինք վերևումը, պիտոյ է առ փոքր փոքր յեղափոխի արիւն, որ այդպէս հասուցանէ արիւնին միշտ նոր և թարմ մասներ: Այս պատճառով նա աւելի անօրանումէ Միջընդերքի մանններովը, որոնց մէջ պարունակած է ջրալի հեղանիթ, ապա Վենայքովը կամ արիւնադարձական երակներով տարվումէ դեպ ի սիրտը, որ և ոչ այլապէս, եթէ ոչ մի քանի ժամից յետոյ յեղափոխումէ արիւն: Այս յեղափոխութիւնը լինումէ և նորանով, որ սիրտը իւր մուսկուլուների զօրութենով սեղմումէ և տրարումէ կաթնեղէն հիւթի հետ խառնած արիւնը:

Ա-ՀՀԱ. ԱՆ-Ե-Ն Շ-Ե-Լ Ե-Ր-Բ-Ն-Ե-Ր և Ք-Ե-Ր-Ռ *):

Դառք գիտէք ահա, սիրելի մանուկներ, որ Երկարաձեւ բոլորակ սոկրը որ բաղկացնումէ զլիի վերին և ստորին մասը, ասումն Սկաւառակ. բայց խօսելով ճշդապէս, պիտոյ էր ասել նորան Ազեղի սկաւառակ, որովհետեւ նա ատացնել է իւր անունը ուղեղից, որ դրած էր սկաւառակի ներսումը: Աւղեղը զլիի ամենակակուղ մասն է և բոլոր մարմնի առաւել կարեսը և նուրբ բաժինը. հասանելով նորան մի շատ փոքր վիաս, կարող էր շատ անգամ խկզն յառաջանալ մահ: Զարմացէք Աստուծոյ ամենիմաստովեւան վերայ, որ այդ նուրբ մասը շրջապատել է ոսկրներով, որ նորա համար մի ամուր, անթափանցելի վահանի փոխանակ էին. միտ առէք նոյնպէս, որ չափահանների ուղեղը ունի չաղիւ թէ: Յ փունտ կշիռ, բայց այդու ամենցնիւ պարունակումէ վեցերորդ մասը արիւնի որ կայ մարդու մարմնի մէջ:

Ուղեղից և ողնական ուղեղի երակից դուրս են գալիս շատ, սպիտակ թեւելը և կապեր զանազան հաստութեւով, որ տարածվումն մարդկային մարմնի համարեա թէ բոլոր բաժիններումը: Կորանց ասումնն է քիչ և նորա կապած էրն իւր առաջանց ասումնն ունցոյ, Լասներէն ուրուս, այսինքն մարդկեղին և չնշառը մարմնի մէջ դուռաված չիւը: յաջականը կամ թէ մանաւածն ուներակազը, մինամանակազը, որոնցից կամ է մարմնի բոլոր լարողական գորութիւնը և ամրութիւնը: Վեցը բուռն նշանակածն յանականումը և մի լոր կամ կազ: շնան շնչառուների ջնիրից, այլև աշեղի լորը. ունի և այլ նշանակութիւնը, զոր օրինակ աղիք նուազարանի պատրաստած շնչառուների ջնիրից: նրաթէլք բուռնականի կազմածի մէջ, որ էն գոխանակ ան ջնիրի որ կային շնչառուների մէջ: Այլաբանուրէն: լարողական գորութիւն, ամրութիւն, ազգութիւն, մարմնի ոյժ: Բայց բառս ունցոյ կամ ուրուս, ուղեղից դուրս արձակվոյ զբայական զարծարանների նշանակութիւնը, զործ է անգում դեռամեան մէջ սկսեալ Արիստոտելից միայն: Այսա սկզբնական և յետոյ ժամանակի նշանակութիւնը բացայցանէլուց յետոյ, պիտոյ է ասել թէ Հայոց բառն բառը և ջեղ կամ ջիւ որ աշխարհաբառումը ունի միայն բոլոր նշանակութիւնները յանականին ունցոյ և լատինականներ ուրուս, մինչև Արիստոտելէն: բայց մեք նոյն բառովը, ինչպէս այժմեան Երրորդից, հասկանումնէց այս անց այն բանը, որ Արիստոտելից յետոյ հասկացումէ զբանագիք զիսութեան մէջ:

*): Այս բառը Երկնական լինելով Հայերնում, պիտոյ էր այս անց վեցը ինչ ճանունը աբանութիւն զիսունների համար. բայց այդ երկինութիւնները ունի մի լոկհանուր պատճեա: Ինչ որ Հայերն ապօպան մէջ կամ թիւ, նոյն է ինչ որ Յանական ասումնն ունցոյ, Լասներէն ուրուս, այսինքն մարդկեղին և չնշառը մարմնի մէջ դուռաված չիւը: յաջականը կամ թէ մանաւածն ուներակազը, մինամանակազը, որոնցից կամ է մարմնի բոլոր լարողական գորութիւնը և ամրութիւնը: Վեցը բուռն նշանակածն յանականումը և մի լոր կամ կազ: շնան շնչառուների ջնիրից, այլև աշեղի լորը. ունի և այլ նշանակութիւնը, զոր օրինակ աղիք նուազարանի պատրաստած շնչառուների ջնիրից: նրաթէլք բուռնականի կազմածի մէջ, որ էն գոխանակ ան ջնիրի որ կային շնչառուների մէջ: Այլաբանուրէն: լարողական գորութիւն, ամրութիւն, ազգութիւն, մարմնի ոյժ: Բայց բառս ունցոյ կամ ուրուս, ուղեղից դուրս արձակվոյ զբայական զարծարանների նշանակութիւնը, զործ է անգում դեռամեան մէջ սկսեալ Արիստոտելից միայն: Այսա սկզբնական և յետոյ ժամանակի նշանակութիւնը բացայցանէլուց յետոյ, պիտոյ է ասել թէ Հայոց բառն բառը և ջեղ կամ ջիւ որ աշխարհաբառումը ունի միայն բոլոր նշանակութիւնները յանականին ունցոյ և լատինականներ ուրուս, մինչև Արիստոտելէն: բայց մեք նոյն բառովը, ինչպէս այժմեան Երրորդից, հասկանումնէց այս անց այն բանը, որ Արիստոտելից յետոյ հասկացումէ զբանագիք զիսութեան մէջ:

զեղից ճիւղաւորվումն տասն և մի զցզդք, բայց ողնաշրաբկան երակից աւելի քան թէ երեսուն զցզք: Զիղկը էին մըր մարմնի անշափ կարեոր և անհրաժարելի մասները, որովհետեւ նոցա գրգռականութենովը միայն կարող ենք մեք զգացզաւմիւն ունենալ: Այս պատճառով մըր մարմնի ոյն մասունքը միայն զգումն, որոնց միջից անցանումն չիղեր, բայց միւսերը, զոր օրինակ մազերը, նզունգները և ոսկրները ամեննեն անզգայ են: Բոլոր ջիղերը հանդիպումն միմանց ուղեղի մէջ, և այս էր պատճառը, որ եթէ ձնչէիր մարդու ուղեղը, կորուսանումէ նա ամենայն զգայութիւն, որ և նա, որի ձեռաջիղերը կորած էին միջից, ոչինչ ցաւ չէր զգալու իւր ձեռի մէջ, թէ և դանակով կտրէիր նորան: Բայց ջիղերը ոչ մէ միայն զգայութեան, սցլե շարժողութեան գործարանք են. պատճառ, եթէ մի չիդ կորեէիր միջիցը կամ թէ կապէէիր վերայից, ասպա բոլոր անդամքը, որոնց հասանումէր վնասած կամ կապած ջիղը, կորուսանութեան իւրեանց շարժականութիւնը և գուանումն: Մի խօսքով՝ անազօրեղ մուսկուլական կազմածը պիտի անգործ գաղարէր, եթէ չը կար աղջեցութիւն չիղերի կողմէց:

Digitized by srujanika@gmail.com

Ք. բոլոր զգայարաններով ստանումն գու տպաւորութիւնը
և պատկերացնումն քեզ պյն բոլոր բաները, որ կային քեզանից
դուրս կարող էիր դու պատկերացնել քեզ վարդի հօտը, եթէ դու
երբէք հստոտել չեն նորան. կարող ես դու նկարագրել մոքավ
թշնանթի արձակումը, կամ սեաւ գցնը, եթէ գու ոչ մինը լսած
էիր, և ոչ միւսը տեսած զատամիք դու կըսր ծնածին սեաւ գցնը,
և խուլ ծնածին մի դեղշցիկ նուազածութիւն, ինչքան կարող ես
ճիշդ և հասկանալի կերպով. պյնու ամենայնիւ նորա չեն կարող այդ
մասին ոչինչ պայծառ պատկերացը ստանալ:

Աախ և յառաջ խօսնելք ՀՅԱՀԻՆ-ԲԵՇՆ զգայարանի վերայ, Եթէ կամնումնելք իմանալ, արգեօք հռչու է մի բան, թէ կակուդ, սառն, թէ տաք, խորտաբարտ թէ հարթ, սորա համար գործ ենք ածում մեր ձեռքերը, և մանաւանդ թէ մասերի ծայրերը, որով-չեակ սոցա մէջ գտանվում ամենանուրբ շօշափութիւնը: Խոց ինչ է պատճառը, որ մէք մասերի ծայրերով կարողանաւմնել այդպէս նուրբ տպաւորութիւն ստանալ, ոյս է աչա: Նոցա վերայ կոյ մի շատ բարակ և փափուկ մորթ և նոցա մէջ վշրջանումն ըազդմա-թիւ ջղողեր, լոցց ոչ թէ մասները միայն էին շօշափութեան գոր-ծարանը, այլև բայց մարմինը: Քո ո՛չ ամենայն զգայաւութիւնը միա-

տեսակ են. ճշմարիտ չէ, որ դու մի անախորժ տպաւորութիւն ես զգում, երբ որ մի չերմ սենեկից դուրս ես գնում գեղ ի ցուրտը. բայց քեզ հաճց էր ցրտիցը ներս գալ մի չերմ սենեկի մէջ. Ահա սորանից տեսանումն դու, որ քո զգայութիւնքը այնքան ևս զանազան են, ինչքան և տպաւորութիւնքը, որ ներգործումին քո վերայ արտաքին առարկայը, Եթէ այս տպաւորութիւնքը թշլ են, ապա և մարմնի զգայութիւնքը թշլ են, բայց Եթէ նորա ուժգին են, ապա և դու զգումն աւելի սաստիկ ազդեցութիւնը. Երբ է քո զգայութիւնը ևս աւելի զօրաւոր. արդեռ այն միջոցին երբ քո ընկերից մինը անզգուշութեամբ վայր էր ձգած ոտքիդ վերայ մի ծանր տախտակ, կամ թէ, երբ նա հազիւ թէ կոխած էր քո ոտքը. Կնչքան ցաւեցոցիչ է այն տպաւորութիւնը, երբ ճշշումին քո մատը եղունգի հետ միասին. բայց չէր այնքան ցաւեցոցիչ, Եթէ ճնշեին քո ձեռքը, որովհետեւ սա չէ այնպէս զգայուն, ինչպէս մատը. Նթէ մի սուր բան ծակիել է գարշապարդ, չէր այնքան զգալի, ինչպէս լինումը, Եթէ ծակէր ձեռքդ, որովհետեւ մարդու ոտքի տակոմը կոյ մի հասա մորթ որ շափաւորումը ցաւը. Սովորութենով և կրթութենով կարող է անզգայանալ մարմնի որ և իցէ մասը, ինչպէս պատահչում գարբիններին, փականագործներին և այլն. Արովհետեւ այս մարդիկը անդադար գործ ունին կրակի հետ, և ամենայն օր աշխատումն ծանր կուններով, այդ պատճառով նոցա ձեռքի ներքին երեսի վերայ բուսանումէ մի այնպիսի հասա կաշի, որ նորա բաւական երկար ժամանակ կարող էին պահել ձեռքի մէջ մի վառուն երկաթ, առանց ցաւ զգալու. Բայց ինչ կրողութեան վերայ հիմնած էր այս զգայութիւնը. կէս մի տպաւորութեան որպիս սութենների վերայ և կէս մի այն բանի վերայ, թէ ինչպէս մէծ կամ փոքր էր զգայականութիւնը այն անդամի որ ընդունումէր ազդեցութիւն. Առաւել ուժգին զգացողութիւն ունի մարդը աչքի մէջ, և այս պատճառով ամենափար շիզը, որ ընկած էր դորա մէջ, պատճառումէ աչա սաստիկ ցաւ:

Ճ-ՇՀ զգայութիւնը ունի աւելի մօտ նմանութիւն շօշափութեան հետ. լեզուն է ճաշակի գլխաւոր գործարանը. երբ որ դու լեզուի երեսը շօշափումն մատով, ապա զգումն բազմաթիւ փոքրիկ փոքրիկ բարձրութիւնք, որ շատ զրդուկան էին, ըստ որում այս բարձրութենների մէջ վերջանումն ջիզեր. աչա այս պոտենիներին պիտոյ է տալ այն բանի պատճառը, որ մարդ զգումէ ճաշակ, և սորա համար ասումն նոցա ճ-ՇՀ ջէտէ. Արովհետեւ կերակուրը ունի ոչ միասեսակ բաղկացական մասունք, ուրիմ պիտոյ է ունենայ և շատ

այլշայլ ճաշակ. սորանից էր նոյնպէս, որ նոյն կերակուրքը յառաջնութեն մի մարդու մէջ շատ ախորժ տպաւորութիւնք, բայց միւս սի մէջ, շատ անախորժ, ուրեմն և մինի համար քաղցրաճաշակ էին, բայց միւսի համար զգուելի կային մարդիկ որ չեն կարող ուտել ամենազատուական կերակուրներ, զօր օրինակ պտուղ, իւղ, որովհետեւ շատ անախորժ էին նոյն ճաշակի համար: Եւ այս բանը ունի մի բնական պատճառ. որովհետեւ կերակուրքը բերանի մէջ խառնվութեն այն տեղ գտանված հիւմերի հետ, և այս հիւմերը ամեն մարդու մէջ չէին միատեսակ: Թէ այս հիւմերը և մանաւանդ լորձունքը շատ ձեռնուու են ճաշակի փոփոխութեանը, ոյս բանը բացայատ է հիւմանդների որպիսութենից: Անոք բերեցէք, երբ որ դուք երբ և իցէ հիւմանդ էիք, ապա թվումէք ձեզ ամեն բան դառն, և դուք զգումէիք զղուանք ամենալաւ կերակուրներից: Եւ բնչակէս կարող էր այլապէս լինել. ձեր հիւմքը ապականված լինելով, և այս աւերված հիւմերի հետ խառնվելով ձեր կերած կերակուրը, և հարկէ պիտոյ է ունենար ձեր համար դառն համ: Թաղ այս. ճաշակը ուսուցանու մէ մեզ զանազաննել աւերված կերակուրը լաւ և թարմ կերակրից և զգուշացնումէ այնպիսի կերակուրների գործածութենից որ կարող էին վկասակար լինել մեզ, ինչպէս նոյն ճաշակը ախորժելի է կացուցանում մեզ լաւ կերակուրը, բարեհամութիւն տալով նորան:

Դ'աշակը իւր համար հաւատարիմ լնկեր ունի Հայուսանեան զգայութիւնը. և Երարիչը իմաստուն խորհրդով հստառութեան գործարանը, քիմը, գրել է բերանի վերայ, որ մարդը հստառութենով աչա փախէքր այնպիսի բաններից որ վկասակար էին նորան. յառաջ քան թէ նորա հասած էին նորա բերանին: Բերանը մի փոսէ, ուկրներից ու աճառներից բաղկացած, մի խոտորնակ պատով բաժանած երկու մասն և բացուած առաջուստ և յիշուստ: Նորս յետակողման բացուածը տարածվում մինչև նոյն խէկ կոկորզը. քմի փոսը ներսից պատած է առատ խէժով. դորս համար այն մաշկիկը որպանով պատած է ներսից, ասվումէ խժային մաշկիկ որ ամեննեին լցուած է մասներով և խժալից փամիշտիկներով, որ միշտ, և մանաւանդ խժալից թաղանմի լորրոքութեան ժամանակը (Հարրուղիսի մէջ) դորս են թորում խէժ: Թանձր քթային խէժը, որ արտասուրի հեղանիւթի հետ անդադար իջանումէ քթի մէջ, մինչև արտասուրի փալովակը խանգարված չէր, անօրբանումէ և պահպանվում հեղչեղուկ: Բոլոր զդայութենների մէջ, Հստառութիւնը ներգործումէ ամենասաստիկ տպաւորութիւնք. պատճառ, մի քանի տեսակ հստաւէտ նիւմերից կարող է յառաջանալ սրտի նուաղումն. միւս

տեսակները կարող են զուարթացնել սաստիկ թուլացած սիրուր Ավոր քնած ժամանակը ներս է շնչում սաստիկահոտ ծաղիկների հօտ, նա կարող է ստանալ զարկուած և մեռանել: Այն պատճառը որ իսկապէս յառաջացնումէ հոտառութիւնը, սյսինքն, հոտը, մի շատ նուրբ անտեսանելի և անշափ հոտառութ նիւթ է: սակաւ մարմիններ միայն չեն դուրս վշտում՝ իւրեանցից հօտ, կամ թէ չէին շոգիանում: Ներս շնչելով կամ թէ ներս ձգելով օդը, նորա մէջ պարունակած նուրբ հօտը տարբառում գէպ ի ամենազգայուն ջիղերը, որ գտանվումն խժալից թաղանթի մէջ, ինչ տեղ նա գոյացնումէ ապա սպառորդին: Կամ դէ ներս կարող է առնուլ վառողի հօտը, և շատ հեռուից դուշակել, որ գտանվումն մի տեղ թարմ ճարպ, որովհետեւ իւղային և աղային մասունքը, որ արճակիլումն այս սաստիկահոտ մարմիններից, լոլ և տալիս օդի մէջ և օդի հետ միասին ներս են քարշվում քթի մէջ, ուր նորա գրգռումն ջիղերը որ կոյին խժալից թաղանթի մէջ և սյզուկս յառաջնացնումն հոտառութիւնը: Մարդս կարող է սովորել ամենայն հօտերի, այն և այն հօտերին, որ յառաջուց պատճառումն նորան զգուանք բայց ինչո՞ւ համար Արարիչը պարզել է մեղ հօտոտելիք: անտարակցու, այն խորհրդով, որ մէք վշելով զուարթարար անուշահոտութիւնը ծաղիկների և խոտերի, կերակուրների և ըմպելիների, այլև այն խորհրդով, որ կարողանայինք որոշել վնասակարութիւնը և անվնասակարութիւնը օդի, կերակրի և ըմպելի բաների, և հոտառութիւնը զգուշանայինք վնասակար օդից և վնասակար կերակուրներից: պատճառ, անուշահոտ կերակուրների մէծ մասը օդտակար էր նոյնպէս, և ժամանակութիւնը մէծ մասը, վնասակար: Հոտոտելով զգումնք շոգիք սենեկի մէջ, երբ որ այն տեղ կային վառուն ածուխը, կամ թէ երբ որ հեռոցը փակած էին յառաջ քան թէ փայտիք ածուխը վառված ու պրծած էին: Հոտոտելիքը զգուշացնումն մեղ մօտակոյ վտանգից: պատճառ, ով որ քուն կը մտանէ մի շոգելից սենեկի մէջ, ինչպէս առնումն յիմար և անըլ դաստ մարդիկ, նորա վերայ գալիս էր մի թմրութիւն որ լինում մահու պատճառ:

Վ. Եժմ գանք քննելով այն զգայարանը, որ երեխայք, մանաւանդ թէ ուսանելու ժամանակը, պարտական էին գործ դնել, այսինքն Լուսու դժուդուն: Չեղ ամեներիդ յայտնի է որ ականջները

էին լսողութեան գործարանքը, բայց դուք դեռ ևս ամսներն անոնեցիակ էք նոցա ներսի կաղմածին և կը զարմանաք, Երբ որ ծանոթանայիք նորան: Դուրսից տեսանելի ականջը, այսինքն, այն երկարածե գալարածոյ աճառը որ ունէր այնքան բազմատեսակ խորոշիքոսք, մեր ականջի ամենափոքր մասն է: Երկարածն բոլորակ գնացքը, որ դուրսի ականջից տանումէ դեպի ի ներսի ականջը, գնալով գնալով աւելի նեղանումէ: Միտ առեք, որ դորան ասումն Լուսաւութեան: Դուք ինքներդ կարող էք շօշափելով տեղեկանալ, որ լսողական գնացքի արտաքին մասը աճառեցն է: Բայց ներքին մասը սոկրեղէն: Կարող էք նոյնպէս շօշափելով իմանալ, որ լսողական ճանապարհի մէջ դտանվումէ մի մածուցիկ չիւթ, որ պատումէ նորա ները և ասլումէ ունչի իւղ: Այս հիմքը գեղին ու գառն է, և ունի այն խորհուրդը, որ ըլ թողու սողուններին ներս մտանել ականջների մէջ: Նոյն խորհրդով դտանվումն այն տեղ փոքրիկ մազեր, որ աճումէն լսողական ճանապարհի նեղ մասի մէջ: Ականջի կեղոր գործակատար է և որպէս ականջի պաշտպան օդի երեսից, որ, եթէ ըլ լիներ այդ կեղար, պիտոյ և ասատիկ դրդուեր լսողական ճանապարհի քնուու մաշկը և ցաւ պատճառէր գորանով: Լսողական ճանապարհի ներքին նեղ բացուածը փակած է երկայնանե բոլորակ նուրբ թաղանթով որ պարզած էր նորա վերայ թմրկամորթի պէս և այդ պատճառով ասլումէ նոյնպէս նշքիւթեան: Այս փոքրիկ մորթի քամակից կայ մի փոս որ մի փողովակի միջնորդութեանով կապակից է կոկորդի հետ: զա ասլումէ նշքիւթեան բնակչութեան, և պարունակումէ երեք հատ մանր սոկրեներ, որ նոյնելով նոցա առանձին կաղմածին, ապլումն բարձ, աւ և սողութեան: Մուրձի կոթը հանգստանումէ թմրուէի մորթի վերայ: մուրձի դլիսի հետ կապած է սալը և սալի մի կողմը կապած է նոյնպէս ասպանդակի հետ: Ուրեմն, եթէ թմրուէի մորթը դզրդվումէ մի ձայնարկութեանով որ թափանցումէր ականջի մէջ, ապա և այս երեք մանր սոկրեները մինը միւսի քամակից սկսանումն շարժվիլ: Թա՞ղ այս ականջի ներսումը դտանվումէ մի փողովակ, որ կողինջի խեցեմորթի պէս գալարուն է և այդ պատճառով ապլումէ իսչիւթեան բնայ: Եթէ կամիք գիտել, թէ ինչպէս է կատարված լսողութեան գործը, ապա ուշադիր եղիք այս բանիս: Եթէ դուք դանակով կոծէիք մի ապակեցն բաժակ, ապա կը լսէիք մի ձայն և կը տեսանէիք: որ բաժակը դողումէ: Այդպէս աչա զողդողալով սկսանումէ շարժվիլ օդը, որ շրջապատումը բաժակը, և այդպէս յառաջանումէ այն բանը, որ մէք ասումնք հանձ: Եթէ այս հնչիւնը տարածվում, դորա պատճառը

ոյն է, որ օդի մասները ոյնքան ևս խիտ կապակից են միմանց չետ, ինչպէս և ջրի մասները։ Եթէ գու մի քար ձգումն ջրի մէջ, սկսում մ շարժվել ու թէ այն ջրամասը միայն, ինչ տեղ ընկել է քարը, այլ և բոլոր շրջակայ ջուրը, և մի ալիք բարձրանումէ մի ալիքի քամակից։ Կայն բանը լինումէ և օդի մէջ, և դուք կը հասկանայիք թէ ինչպէս մի հեռաւոր զանգակի ձայն հասանումէ մեր ականջն, կամ թէ մէք կարող էինք լսել նորան, և թէ ինչպէս էր լինում, որ մէք աւելի լաւ էինք լսում, երբ որ ականջի արտաքին կողմը յառաջ էինք թեքում, ինչպէս որ առնումն ծանր լսող մարդիկը։

Այժմ մնումէ մեզ խօսելու Տեսաբեմ զգացրանի վերսց։ Այս զգացրումնան գործարանքը են Աշեցը, երեսի վերին մասի վերսց ամրացած այն փասերի մէջ, որ ասվումն Անտառէն։ Դուք կարող էք շօշափելով ատուգել, որ այս մասերը բայցանումն ոսկըրուներից և այս էր մի անձառնելի իմաստուն տնօրէնութիւն Արարացի կողմից, որովհետև այս ամուր ոսկրները պահպանումն քնքուշ աշքերը զարկուածների երեսից և չեն թողում, որ այնպէս չեշասանէր աշքերին մի վեսա։ Կայն խկ օգտարերութիւնը ցուցանումն աշքերին արտեւանունքը, որովհետև աշքերը նոցա մէջ զետեղված են որպէս թէ մի պատսպարանի մէջ։ Վերին և ստորին արտեւանունքի եղերներումը նկատումք դուք փոքրիկ մազեր, թերթերութիւներ, որ գտանգումնին խիտ միմանց մօտ։ Այս փոքրիկ մազերը նշնչպէս պաշտպան էին աշքերին, թոյլ չը տալով, որ լուսի շառաւիդների բազմութիւնը միասնէր հասանէր աշքերին, և յետ պահէլով փոշին և այլ բաններ, որ կարող էին ընկնել աշքի մէջ։

Երկու մինամիսք շարժեցնումն արտեւանունքը և փակումն նորանց, երբ որ ննջումնինք։ Յանքերը նշնչպէս օգտակար են, յետ պահէլով կծու քրտինքը որ երեսում ճակատի վերսց արագ շարժողութենից կամ թէ ծանր աշխատութենից, որ և, եթէ չը լինեին յօնքը, կարող էր շատ վեսակար լինել աշքերին։ Կայն խկ աշքը, կամ, ինչպէս ասվումէ, աշքի ինձորը գնդաձեւ է. դուրսի և ներսի մորթը որ շրջապատում աշքի բիրը, ունի պինդ կազմուած, և ասվումէ Ամուր պատեան։ Կորա քամակից և նորա չետ կապակից է մի սեագոյն անօթալից մորթ։ Միջին բոլորակ և թափանցիկ մաշկը հաստ է և աալումն նդիներուց պատեան։ Սորա քամակից դրած է մի այլ մաշկ որ ունի ճառագայթանման և գունագոյն շերսիր, որ և ասվումէ Շիշ-Շիշ Շիշ-Շիշ։ Կամ թէ Երի։ Կորա մէջ տեղումը կայ մի բոլորակ բացուած որ ասվումէ աշքի Բէ՛՛, նման մի սեաւ բծի։ Հնդկերորդ մաշկը պատումէ սեաւ մաշկի ներսի կողմը և ասվումէ

շահագործութեանը, որովհետեւ նորա կազմածին, նման էր ցանցի: Նորան շրջապատումէ մի թափանցիկ մածուցիկ հեղանիսթ, որ ասվումէ Ապունին, որովհետեւ նման էր հալած ապակու: Առաջնից, այս ապակենման հեղանիսթի մէջ կայ մի բոլորակաձև փոս, որի մէջ դրած է այն փոքրիկ, պայծառ և թափանցիկ մարմինը, որ ասվումէ Բէրեւայն կամ Հէլեուան: Այն տարածութիւնը որ գըտանվումէ նղներեայ պատենի և բիւրեղանիսթի մէջ, պարունակումէ մի շրալի գիծութիւն որ ձեռնոտու էր աչքի գարձուածներին: Այն խորհրդով որ աչքը կարողանայ շրջմիւ գեղի ի ամենայն կողմ, կարգել է Արարիչը աչքի բբի վերայ վեց մկնամիսը:

Վհա, սիրելի մանուկներ, փոքր ի շատէ ծանօթացաք դուք այն մասներին, որոնցից բաղկանումէ ձեր աչքը, բայց դուք չը գիտէք զեւ ևս, թէ ինչու է կատարիվում տեսութեան գործը, այսինքն, թէ ինչ պատճառով դուք պարզապէս որոշումէք ձեր աչքերովը այս կամ այն մարմինը որ դանավումէք ձեր շրջակայքումը: Խաւար սենեկի մէջ, կամ թէ մութ զիշերով դուք չէք կարող տեսանել. լցուը տեսանելի է կացուցանում ձեզ առարկայքը. լուսեցէն շառաւիղբը բացարձակիվ լով առարկայիցը, որի վերայ նայումէք դուք, թափանցումն աչքի գիծութեան պատեաների մէջ և այնպէս կոտրատվումն, որ, հաւաքվելով ցանցատեսակ թաղանթի վերայ, փոքրան պատկերացնումն նորա վերայ առարկայի կերպարանքը, այնպէս, ինչպէս նոյն բանը աւելի մեծ ձեռով լինումէ հօյելու: Եթէ առարկան շատ մօտ էր մեր աչքին, մէք չենք տեսանում նորան, որովհետեւ նորա պատկերը ընկնումէ ցանցատեսակ թաղանթի քամակը, բայց ևթէ նա շատ հեռաւոր էր, ապա նոյնպէս չենք տեսանում առարկան, որովհետեւ նորա պատկերը այն միջոցին ընկնումէ ցանցատեսակ թաղանթի առաջնութեան մասին: Ծօշափական զգայութիւնը համարեա թէ բոլը առարկաների մէջ պիտոյ է օդնէ տեսողական զգայութեանը, եթէ կամենումնք որ և իցէ առարկայի մասին ստանալ կատարեալ, ուղիղ և պայծառ տեղեկութիւն:

Մ-ԱՇ, Մ-ՀՐԸ և ԽԵՆՔՆԵՐԸ:

Մեր բոլոր մարմինը ծածկած է մի կակուղ և ամուր պատեսվով, որ ասումնենք Մ-ՀՌ: «Սա կարող է անշափ պարզվիլ, և կծկվելով ազա, միւսանգամ ստանալ իւր առաջին կերպարանքը: Սորանից բացայատ է աչա, որ նա ձգական է: «Նորա տակից ճիւղաւորված է անշափ բազմութիւն արիւսալից անօմների, և այդ պատճառով, նա զանազան տեղերում կապտագոյն է, կամ թէ կարմրագոյն: Որովհետեւ արիւնը անդագար գուրս է թողում մաշկի միջից ջրալի գոլորշիք, ապա նորա մէջ գտանվումէն և այնախիսի անօմներ կամ պահարաներ, որ պարունակումէն այս հեղանիթքը: Այլ անօմնիկներ մաշկի մէջ գործակատար են, ներս ծծելով օդը, որ մաշկը անդագար առնումէ և տանումէ մարմին: Մաշկը իւր բոլոր տարածութեան մէջ ունի մեծ գրգռականութիւն: մատերի ծայրերի վերայ առաւել զօրաւոր էր այդ գրգռականութիւնը, և այդ պատճառով շաշիութեամբ ստանումնեք մեք աւելի ազդու տպաւորութիւն: Ճառ չիդեր վերջանալով անշափ մանր պտուկներով, յառաջացնումն այս զգայականութիւնը, որ աւելի նուազումէ այն բարակ մորթովը որպանով պատած է իսկական մաշկը: այս բարակ մորթը ասվումէ Ա-Ե-ՇԻ Հ-Ե-Ր: սա անզգայ է: սորան կարելի է ծակել ասեղով, առանց յաւ պատրաստելու: բայց եթէ նորան տրորերի կամ սեղմէիր, ինչ պէս պատաշումէ ծանր ձեռագործերի մէջ, ապա հաստանում նա և ամրանումէ: Եւ այս էր պատճառը, որ այն մարդիկ, որ հարկադրած էին պարապել ծանր ձեռագործերի, ունին շատ կոշտ ձեռքեր, և նոցա շօշափական զգայութիւնը ձեռքերի մէջ մեծ չէր: Այս պատճառով ամուր էին մարդու գարշապարբը:

Մաշկի գոյնը բոլոր մարդերի մէջ միատեսակ է, այսինքն սպիտակ: պատճառ աֆրիկացի մարդու սկութիւնը, Արաբացու մոյժ դեղին գոյնը, Ամերիկացու պղնձագոյն կարմրութիւնը և Խորոպացու սպիտակութիւնը չէին իսկապէս մաշկի գոյնը, այլ այն խօսյին նիւթի գոյնը, որ ցանցի նման սիրած է վերին մորթի և յատուի մաշկի մէջ և ասվումէ Հ-Ե-Ր-Լ-Ե-Ր-Հ-Ե-Ր: բայց որովհետեւ վերին մորթը բարակ և կիսով չափ թափանցիկ է, ապա սորա միջից դուրս է փայլում ներքին ձարպալից մորթի գոյնը, և այդպէս երկումէ, որպէս թէ վերին մորթը ուներ այն գոյնը, որ յատկապէս պատկանումէր ձարպալից մորթին:

Մաշկի գուրսի կողմը ըստ մեծի մասին պատած էր մազերով, որ մի քանի տեղերում միայն բուսանումն առատապէս և լինումն երկար և հասաւ: Միւս տեղերում չը կան նորա ամենեին, զոր օրի-

նակ գարշապարների, ձեռքի ներքին տափարակութեան և արտեւանունքի մակերեսութիւնի վերայ։ Այս մազերը դուրս են գալիս փոքրիկ գնդակներից որ դրած են աղիսակաւոր մորթի մէջ և մաշկի տակ, և ասլումն արմատներ։ Հազիւ թէ կը հաւասայիք դուք, սիրելի մանուկներ, թէ ամեն մի և ամենարարակ մազը ուներ մի գասարկ, ամուր և ձգական փողովակ և լցուած էր հիւթով, որ եթէ ցանաքէր, ապա մեռանումէ մազը և դուրս է թափում։ Արմատները տալիս են մազին սնունդ և դորանից էր, որ նա չէր բռւսանում վերատին, եթէ արմատախիլ էր արած։ բայց աճումէր լաւ, եթէ նորան կորեինք միայն արմատի մօտից։ բայց դուք կը հարցնէիք, ինչ օգուտ կար մազերի այլքան բազմութենից։ նոցա օգուտը այն է մանաւանդ, որ նոքա դշացնումն մի մածուցիկ և ճարպալից հեղանիով և տաքացնումն և պահպանումն նոցանով ծածկած մաները։ Այս բանը փորձով դիտեն նոքա, որոնց գլխի մազերը դուրս են թափած կամ ըսա մեծի մասին, կամ թէ բոլորովին։ Այն ցաւից և անախորժութեններից, որ յատ աջանումէ անմաղութենը, ազատ լինելու համար պիտոյ է կնտակ մարդիկը գործ զնէին ամենայն տեսակ արուեստական ծածկոցներ։

Այս, փոքրից ու շատից տեղեկացանք մէր մարմնի ճարսարացէն կազմածին, հասանելով Եղունգներին։ Աոցա մասին միտ առեք միայն, որ սյս ամուր, կոկ և անզգայ փոքրիկ տախտակները հաստած են արմատների վերայ այն խորհրդով, որ սյս արմատները տային եղունգներին աւելի ամրութիւն և գորանով օդնական լինէին մարդուն, երբ որ նա կամենումէր մի բան վեր առնուլ, դրիել, այլ և քայլելու կամ թէ սոք կոնելու ժամանակին։ կարգասէր մանուկները կը հօգան, որ նոցա եղունգները լինին մաքուր և աւելորդ ծայրերը կտրած։ պատճառ, երկար եղունգների վերայ նայել մի գարշելի բան էր. թէպէտ ոմանք, այն և Հայերի մէջ, ունին սովորութիւն կրել երկար եղունգներ, որ ասլումէին Եւրոպայումը Եւնադներ Անդիւցաց դէ։

3. Մ-ը հ-ին։

Այնչւա այժմ քննեցինք մարդու մարմինը և տեսանք նորա հրաշալի ճարտարաբետական կազմածը։ բայց մարմինը առանց հոգու մնուալ է. մարմինի կենդանութիւն տուողը, մարմնի շարժարանը հօդին է։ Մարդուս կենդանութեան հանդէսը կատարվումէ միայն մարմին և հօդու լծակից ներդործութենովը, և հիմնուորված է սյս բանի վերայ։ Այն զիտութիւնը որ խսումէ յատկապէս Հոդու կարս-

զութենների և նոցա պաշտօնների մասին, ասլումէ Հաքեբան-Բիշա, յունական խօսքով, Պէտքէ:

Եղած են մարդիկ, որ ուրացել են հոգու գյուղեթիւնը. սորա հակառակ միւսերը հաւատումէին, որ կայ մի հոգի, բայց տարակուսանք են ունեցած մարդիկ գյուղեթեան մասին: Բայց ոչ մի մարդու մոքից անցած չէ, որ ուրանար ինքը իւր գյուղեթիւնը: Պատճառ, դիցուք թէ ամեն բան երազ էր. այդու ամենայնիւ հարկաւոր էր մինը, որ այդ երազը երազէր իւր մէջ.

Ո՞ւք գիտենք, որ ինքներս կանք և մտածումնք. մէր զգացողութիւնը ասումէ մէջ, թէ մէր մտածողական զօրութիւնը չէ մէր ձեռքերի կամ սուերի մէջ, այլ զրած է գլխի մէջ: Ուրեմն հաւանական է, թէ հոգու բնակարանը է Աւղեղը. բայց թէ հոգին ինչ բան է և ինչ տեղում է խսկապէս, այդ ոչ ով չը գիտէ. մէք ճանաչումնք միայն նորա զօրութիւնքը նորա ներգործութեններից:

Փորձով դիտենք մէք, որ մէր հոգին անդադար, քնի մէջ ևս, գործակասար է, երբ որ երազ էր տեսանում: Քանի որ մարդու կենցանի է, նա նկատումէ, մտածումէ, զգումէ, ցանկանումէ: Այսպիսի կերպով անդադար լինումն փոփոխութիւնք նորա հոգու մէջ: Այս գիտութիւնը որ խօսումէ այս փոփոխութենների յառաջադայութեան, որպիսութեան և ներգործութենների վերայ, ասլումէ Փառքան-Բան-Հաքեն-Բիշա, սյսինքն փորձերի վերայ հիմած ճառ հոգու մասին:

Եւ անաստոնքը, ինչպէս երևումէ, ունին հոգի, բայց աւելի նուազ զօրութենով, քան թէ մարդք. Նորա չեն կարող մտածել պատճառի և ներգործութեան վերայ, քննողական հաշիւ ու համար կատարել, նորանոր ճշմարտութիւնք յայտնագործել: Մի կապիկ որ տաքանումքը վառած կրակի մօտ, չունէր այնքան խելք, որ կրակի վերայ փայտ յաւել լացնելով պահպաներ նորան: Ապա ինչպէս կարելի էր նորան երբ և իցե հասանել այն ճարտարութեանը, որ կարողանար ինքն ըստ ինքնեան կրակ վառել, երկու կոտոր փայտ տրուելով միմանց վերայ, կամ պողովատը գայլախազին զարկելով:

Վարդս իւր հոգեղէն ընդունակութիւնը միւսորելով իւր ձեռքերի յաջողակութեան հետ, կացուցանումէ իւր անձը առաւել ազնիւ և առաւել կարող բոլոր արարածների մէջ, թէպէտ շատ անասուններից աւելի նուազ էր ուժով, արագութենով և զգայարանների սրութենով: Հազարաւոր հիանալի հնարագործութիւնք, որ հասուցանումն մէջ այնքան օգուտ և ուրախութիւն, հազարաւոր ճարտարութիւնք և գիտութիւնք էին մարդկեղէն հոգու գործը: Այս հոգին ամենայն տեղ գործումէ իմաստնապէս կշուելով, սահմանեալ

Խորհուրդների և պիտոյքների համեմատ։ Մեր տները չենք շինում մեք այնպէս, ինչպէս ծիծեռնակը իւր բցնը, մի և նոյն կերպով, ինչպէս որ հազար տարի յառաջ շինած էինք. մեք անհամար փոփոխութիւնք ենք գործ դնում այն տեղ, որոնց ամեն մինը ունի իւր յատուկ բանաւոր պատճառը։ Արևիմ հոգեղեն զօրութիւնքը են և առաւել ազնիւ զօրութիւնքը մարդուն մէջ. այս պատճառով արժան էր առաւելապէս կրթել և մարզել նորանց և գործով արդիւնաւոր կացուցանել։ Ավ որ իւր հոգեղեն կարողութիւնքը անշնչն ու անգործ կը թողրւ, նա փոքր ինչ, կամ թէ ամենեին չէր զանազան վում անասունից. եթէ յաւելացաւ սորա վերայ և մարմնի զանդաղ կոտութիւնը, այն ժամանակը մարդս աւելի պակաս պիտանի էր քան թէ անասունը։

Հոգու երկու նախապատիւ կարողութիւնքը են ձեւալունաւ և ՑԱՆԿԻՆԵՆ Դաւիթի տեսանումէ Եղիսաբէ նոր զգեստը. Նա խոստավանումէ դորա գեղեցկութիւնը և ցանկանումէ նշյնպէս ունենալ նորան. Դաւիթի ցանկականը զարթնումէ. Մի այլ անդամ՝ տեսանումէ նա մի բաժակ բժշկական զեղ որ պիտոյ է ըսպէր նա, թէպէտ գիտէ ահա, որ զղուելի էր նա. այս մասձութիւնը զարթուցանումէ նորա մէջ տհաճութիւն. Նա գարշումէ, նա փախչումէ դորանից։ Այս տեղ դաւիթի ցանկականը երեսում ներհաւ էրորդ։ Բայց եթէ դաւիթը պիտոյ է ցանկանար նոր զգեստին, ուրեմն նախ և յառաջ պիտոյ է պատկերացներ իւր մօքումը կամ թէ իմանար նորա զեղեցկութիւնը, ապա ուրեմն պիտոյ է դորա վերայ մասձէր։ Կա զալիս է յետոյ տուն, ինչ տեղ չէ տեսանում աւելի այն զեղեցիկ զրեստը. բայց իւր հոգումը զեղ ևս պահած է նորա պատկերը. Նորա ՑԵՍՊԻՆԵՆ պահպանել է այդ բանը։ Ա-Հ-Յ-Ե-Ր-Ի-Ն- Ա-Ր-Ա-Ռ-Ի-Ն- միւսանգամ պայծառապէս նորոգումէ դորան նորա հոգու մէջ. բայց ԵՐ-Լ-Ի-Կ-Ի-Ն- Ա-Ր-Ա-Ռ-Ի-Ն- աւելի զեղեցկացնումէ նորան։ Ապա Դաւիթը իւր Կ-Ա-Ջ-Ա-Ն- Ա-Ր-Ա-Ռ-Ի-Ն- կամ թէ Խ-Ա-Ջ-Ա-Ն- Ա-Ր-Ա-Ռ-Ի-Ն- համեմատում այն զեղեցիկ զղեստը իւր հնացած և մաշված զղեստի հետ, և իւր Դաւիթ-Ա-Ր-Ա-Ռ-Ի-Ն- ճանաչումէ, որ նա աւելի զեղեցիկ և պատուական էր քան թէ սա։ Բայց այժմ հարցուինդիք կար, ուղիղ է արդեօք նորա զարողութիւնը։ Այս պատճառով քննումէ նա իւր Բ-Ա-Ջ-Ա-Ն- Ա-Ր-Ա-Ռ-Ի-Ն- և գուցէ թէ խելամուտ է լինում, որ սիալված էր։ Յայտնվում որ նորա զղեստի նիւթը աւելի ընտիր և նորր է, որ նա աւելի լաւ աստառ, աւելի լաւ կոճակներ և աւելի ներքին արժանաւորութիւն ունի, ուրևիմ նորա հին հանդերձը աւելի պատուական է, քան թէ այն նորը։

Խամցութիւնը պյն բոլոր բաների, որ կային մարդուց զուրս, հասանաւում է նորա հոգուն զգայարանների միջնորդութենավ միայն, Հոգին տեսանումէ, լսումէ, ճաշակումէ, հոտոտումէ, շօշափումէ զգայարանների ձևորով, որ ծառայումն նորան որպէս սպասարորք բայց փորձը ուսուցանումէ, որ ոչ ամենայն զգայական խմացութիւնը հաւասարագէս պայծառ և զօրաւոր էին, և թէ շատ անգամ մննը միւսով թևալցնվումէ: Զոր օրինակ, մօտից տեսանումեմ և լսումը ես աւելի յայտնապէս, քան թէ հեռուից մի սպիտակ պատի վերոց աւելի պայծառ էին առարկացը, քան թէ մի սեւ պատի վերոց: Արեւի լուսի մէջ համարեած թէ անտեսանելի էր ինձ լազարի լցուր:

Վայսպէս, արտաքին առարկայի ըլլա յառաջացնումն մեր հոգու մջ
որիշ որիշ (ջոկ ջոկ) փոփոխութիւնք. բայց և ցաւով և ուրախու-
թենով, մտածութենով, վաստակեցնելով կամ թէ այլապէս դորձ
գնելով ոյն զօրութիւնքը, որ կային մեր մէջ և ոչ թէ արտաքւաս
յառաջանումն, շարժվում մեր հոգին: Ելդրպիսի տպաւորութիւնքը
ասվումն Ավետէ, Կարողութիւնը զգալու այս ախտերը ասվումն Ներ-
շն գոյցըն: Այս խելամուտ լինելը մեր սրտի մէջ ասվումն Ավե-
տին գոյցըն: Խաչերուն: Մի քանի փոփոխութենների, որ գոյանումն
մեր մէջ, այնպէս սովորած ենք մէք, որ ամենեին այլ ևս չէինք զո-
ցա ու շադիր, որ նոցա երրէք էլլուիչ չէինք ևս, զոր օրինակ շըն-
չառութիւնը, արտեանունքի բանալը և փակելը, անդամների շար-
ժողութիւնը: Նոյն կարգումն էին արտաքին տպաւորութիւնքը, ո-
րոնց շատ փաք ու շադիր էինք: Մեք անցանումնք մի տան մատից
առանց սրտի վկայութեան. մէք տեսած ենք մի մարդ և խօսած ենք
մի մարդու հետ առանց կարողանալու տաել թէ ինչ զդեստ կար նո-
րա վերայ. մէք կարգացել են մի գիրք, լոել ենք մի քարոզ, ա-
ռանց կարողանալու տաել նոցա բովանդակութիւնը: Խնչքան առա-
ւել սովորում մարդ սրտի վկայութենով ամենայն բան տեսանել,
լսել, գործել, նշյնքան ևս պայծառ էին նորա մտաւորական պատ-
կերագիրքը, այնքան ևս կը ճոխանար և կը լուսաւորվէր նորա ի-
մացականութիւնը: Եւյս Խորհրդով պիտոյ է նորան նոյնպէս ժրա-
ջան կրթութենով սրացուցանել իւր արտաքին զգայականը, իւր ըլլ-
գոյարանքը: Եւյս բանի հնարաւորութիւնը հաստատվում ամենօրեաց
փորձով. զոր օրինակ, մի որսորդ տեսանում մի նապաստակ այնպէս
չեռուից, ինչպէս ոչ մի մարդու աչք չէր տեսանում նորան: Ամե-
րիկացի վայրենարնակ մարդը տանտաեղերից ճանաչում այն ճանտ-
ուարչը, որ ընտրել է իւր համար մի փախտական թշնամի:

Վամենայն զգալի տպաւորութեններից, ամենայն ախտերից, թէ

և անցած ու զնացած էին, պյուռ ամենայնիւ մնամեին հոգու մէջ չետքեր, սյսինքն պատկերադիբբ, Այս կարողութիւնը, որանով պահպանվումն այս հետքերը, ասվումէ Յէլլունաւ. և այն կարողութիւնը որ վերատին նորդումեր նորանց յիշողութեան մէջ, ասվումէ Ուլլբերնան վրան, ինչպէս վերեւումը զրած օրինակովը բացայացացինք:

Ինչ բան որ շատ երկար կամ շատ յաճախ, կամ թէ շատ մտադիր տեսած, լսած կամ թէ այլապէս իմացած էինք, այդ բանը շատ խոր տպաւորած պահպանումնք Յիշողականի մէջ. զոր օրինակ. Ես լսած եմ այս տասն անդամ կախարդական սրնգածութիւնը Մօցարթ հռչակաւոր երաժշտի, և այդ պատճառով դեռ ես ամենեին յիշելի էին ինձ բոլոր հանդէսքը և բոլոր երգասացութիւնքը այդ տեսարանի մէջ: Առա հակառակ, ինչ բան որ սակաւ անդամ, կամ թէ մի կարճ միջոց, կամ թէ առանց մոռադիրութեան նկատած էինք, այդ բանը շատ չետքութեամբ կրկին մոռացվումէ: Շատ անդամ մի դործ կատարումնք, բայց մեր միտքը միւս գործի վերայ է: Այս էր Զբանաւ ժողով: Շատ մարդիկ որ պիտոյ է մեղաղրէին իւրեանց մոքի զբանաւքը, մեղաղրումն իւրեանց վաս յիշողականը:

Մատուերս թէ նենով աշխատումնք օգնական լինել յիշողականին. օրինակ. ես չը գիտեի այլ ևս, թէ որ օրում արձակել էի իմ նամակը. ապա ուշաբերումնմ, որ այս այն օրումն էր, երբ որ ես զնացած էի մի ժողովի մէջ, որ գիտեի թէ պատահած է այս ինչ օրում: Այսակս ահա ժողովներ, որ իմ նամակագրութեան թուականը երեքշաբաթի էր: Աւրեմն ուշաբերութիւնը երկրորդական հանգամանքներով՝ առաջնորդումէ յիշողականին զեզ ի ուղիղ շափիլը. միւս օրինակ. ես տեսանումնմ մի մարդ, որի դէմքը երեւումէ ինձ ծանսթ. ես մատածումնմ ապա տեղը և պարագայքը, որոնց մէջ միանգամ տեսած եմ նորան և ժողովներ, թէ ով էր նա. բայց ոչ միշտ կարելի էր այդ բանը. այդպիսի հոգեղէն անկարողութիւն մտարերելու միանգամ ունեցած պատկերագիբբ, ասվումէ Մատուցունին:

Երեւունին վրանին նոր ի նորոյ լրացնումէ հոգու մէջ ահա ունեցած կամ հաւասարատեսակ պատկերագիբբ, կամ թէ նոցանից բազկացնումէ նոր նոր պատկերներ: Զոր օրինակ, մի պատկերահան իւր երեւակյութենով այնպէս կինդանի մտարերումէ մի մարդու կերպարանք, որ նա տեսած էր, մինչև առանց աչքի առաջն ունեւալու նորան, ստուգապէս պատկերացնումէ նորան պաստառի վերայ: Կամ թէ նա մտարերումէ մինի քաղցր երեսը, միւսի ազնիւ հասակը, մի այլ միւսի գեղիցիկ բաղուկները և ձեռերը, և դոցանից իւր երեւակյութենով բաղադրումէ մի նոր պատկեր, որ զուգախառնումէ

իւր մէջ այս ամենայն գեղեցկութիւնքը: Երեակայութեան զօրութեանով, մարդս և մանաւանդ կենդանագիրը, բանաստեղծը, քանդակագրութը, ճարտարապետը առհասարակ սիրումէ վերացուցանել իւր հայեացքը աւելի լարձը քան թէ սովորական իրքը էին. նա հնարաստեղծումէ էակներ, հանդէսներ, գրութիւնք, որպիսութիւնք, որ երրէք տեսած չէր իրօք, և այդպիս լինումէ արարիչ կամ երազող մի նոր աշխարհի, որի մէջ և միւսերը զէպ ի վեր է քարշում իւր կենդանի նկարացրութենովը: Այսպէս, երեակայութենից յառաջանումն բանաստեղծական կարողութիւնը և բանաստեղծութիւնքը, որոնց պատկանումնն նմանապէս այն անսովոր առասպելքը, որ այնքան համեմ էին երեխաներին:

Հոգու երեակայական և բանաստեղծական կարողութիւնը գործունեայ է և քնի մէջ, երբ որ նա երազանումէր: Երազները լինումն շատ անգամ անշափի կենդանի և քնած ոք մինը զգումէ այնքան ուրախութիւն և տրտմութիւն, ինչպէս արթնութեան ժամանակին: Այս երազները, երրեմ շատ և երրեմ նուազ, և շատ անգամ ոչինչ կապակցութիւն չունին այն մտածութենների հետ, որ ունինք մեք զէպ ի քուն գնալու ժամանակը: Հոգին վեր է կալնում այն տեղ իւր յատուկ մտնէքը. նա տեղափոխումէ ուրիշ քաղաքների և աշխարհների մէջ, այլ աշխարհասահմանների մէջ, զէպ ի երկինք և զէպ ի գժուխ:

Ո՞ի մարդ, որ իւր անձնով միայն զբաղած է և անիշխ է ուրիշների ուրախութեան կամ ցափ մասին, ասվումէ ԷՇԵՐԻՌ, այսինքն անձնապատճ, ինքնամոլ: Բայց մարդկային սիրտը սովորապէս յօժար է մասնակից լինել ուրիշների ցափին կամ ուրախութեանը: Այս զեղեցիկ և մարդապալսութու կարողութիւնը ասվումէ առհասարակ ԷՇԵՐԻՌԻՆ, ԷՇԵՐԻՌԻՆ, և եթէ դա վերաբերվումէր զէպ ի տառապեալ արարածքը միայն, ասվումէ ՔԱ-Ռ, Ա-Ռ-Ք-Ի-Ն:

ՈՒՐԻ-ԷՇԵՐԻՆ և ՏՐԵՄ-ԷՇԵՐԻՆ, որին մասնակից էր հոգին ուրիշների համար, զգումէ նա աւելի ուժգին իւր յատուկ անձնի մէջ, Բայց ինչ է ուրախութիւնը և ինչ է տրտմութիւնը. ուրախութիւն ասելով հասկանումնք մի վերին աստիճան համութեան այն բանի վերայ, որ համարումէինք գեղեցիկ, բարի և օգտակար: Սորա հակառակ, տրտմութիւն ասելով իմանումնք տհաճութիւնը այն բանի վերայ, որ երեսում մեզ չար կամ վնասակար: Ամէ մի մարդ Լուտերիայի մէջ տարել է մեծ վիճակը, ապա մեծապէս ուրախ էր այդ ստացուածի վերայ, ըստ որում այն արծաթի գումարը որ վճարումէին նորան, համարումը նա մի բարի բան. բայց սորա հակառակ, եթէ

մի աւազակ յափշտակել էր նորանից իւր արծամի քսակը և ոսկի ժամացոյցը, ապա տիսուր էր նա այս բանի վերայ, ըստ որում համարում այդ բանը մի չար անցք:

Նոգին ընդունակ է նոյնպէս Ալբել-Ռեն և Արել-Ռեն, Բարեն-
ցի-Ռեն-Ռեն և Կաբենյառ, Յանցու-Ռեն և Շնորհայ-Ռեն և միւս
շատ ախտերի: Ախտեր ասվումն սրտի բոլոր սաստիկ կրողութիւնքը:

Ոէրը փափառով հաճութիւն է մի ուրիշի կատարելութիւնների վերայ, որ գրաւումէին մեր սիրտը. նա յառաջանումէ և այն ժամանակը, երբ որ մեք անսառների և անշունչ բաների վերայ նկատումնք մի յատկութիւն որ գրաւումէ և համեցնումէ մեզ: Սորա հակառակ, Ատելութիւնը մի յօժարութիւն է ուրախանալու մի մարդու վատարաղդութեան և ամենայն չարի վերայ որ հանդիպումէր նորան:

Բարեն-Ռեն-Ռենը լցուցանումէ մեր սիրտը հաճութենով օտարի բաղդաւորութեան վերայ, բայց նախանձը տհաճութենով այդ բանի վերայ: Արեն-Ռեն-Ռենը է մի ծաղրական ուրախութիւն ցաց տալը ուրիշի պակասութեան կամ վատարաղդութեան վերայ, կամ մէկ կատակօրէն քրքրելը նորա ծիծաղելի որպիսութիւնքը:

Են-Ռեն-Ռենը է մի հանդարս հաճութիւն մեր որպիսութեան վերայ, կամ մէկ այն բարեկործութեան վերայ, որ կատարել ենք մեք. ոգրա հակառակ, Արեն-Ռեն-Ռենը է տհաճութիւն կամ տրամաւթիւն այն բանի վերայ որ արած ենք մեք:

Պարա-Ռեն-Ռենը այն ճգնողութիւնն է, որ մեր գնացքը այն-պէս լիներ, ինչպէս ուրիշներին հաւանելի է և նոցա կողմց համարլումէ ուղիղ և բարի: Սորա հակառակ, Ամօմը այն տհաճութիւնն է որ զգումնք, եթէ արած էինք մի բան, որի մասին կը դատապարուէ մեզ աշխարհը:

Բարեն-Ռեն-Ռեն ու Ռեն-Ռեն հասկանումնք այն յօժարամտութիւնը որ ունինք դէպ ի մի անձն, նորա ախորժելի բարք ու վարբի համար: Շնորհայ-Ռեն-Ռենը կամ մէկ Երեն-Ռեն-Ռեն-Ռենը է այն բարեգործութեան խօստավանութիւնը, որ մի մարդ ցոյց է տուած մեզ և այն սէրը, որանով աշխատումնք փոխարինել նորա բարերարութիւնը:

Ենը է այն հաճութիւնը որ մեք զգումնք մի հաւասարի բաղդաւորութեան վերայ, որին կարող էինք հասանել: Եթէ գիտէինք սրտի վկայութենով, որ դա մեզանից փախչելու չէր, այնուհետեւ յշոր դառնումէ Արեն-Ռեն-Ռեն կամ Հեն-Ռեն-Ռեն: Սորա հակառակ, Երեն-Ռեն այն աչ ու դոզն է որանով մի մատակայ վատարաղդութիւն լցուցանումէ մեր սիրտը: Եթէ գիտէինք, որ ոգրանից անզերծանելի էինք, այնուհետեւ մեր երկիւղը զառնումէ Յան-Ռեն-Ռեն:

ԵՐԵՒԱՆՆԵՐԸ մի խառնուրդ է ուրախութեան և տրտմութեան մի բանի վերայ, որ գեռ ևս չը զիտէինք հաւաստի, արդեօք հասանելու է ձեղ, թէ ոչ Փուրանուն-Ռին հասկանումնք շտափով հրաժարվիլը յոյսից, թուլասիրտ և անդիմացկոտ լինելը: Բոռնչուն է կարօսագին ակնկալութիւն մի ցանկալի բանի, որ երկար մնումը անկատար:

ԵՐԵՒԱՆՆԵՐԸ երեւումէ մի սաստիկ, ատելութեան հետ կապակից, զայրացութիւն մի անիրաւութեան կամ վիրաւորութեան վերայ, որ պատճառումն մեղ կամ թէ մերայիններին: Ծառ անդամ՝ զուզակից են զորա հետ պատռասիրութիւն, ամօթ, ապաշառութիւն, երկիւղ, աչ և յոյս, որ և շինումն բարիութիւնը մի ամենասաստիկ ախտ:

Ուժգին ախտերի մէջ, հոգին կորուսանումէ իւր հանդիստը մինչև այն աստիճան, որ այլ ևս չէ կարող առնել ոչինչ սառն խորհրդածութիւն: Ծառ անդամ, այս պատճառով, մարդը այսպիսի ախտառոր որպիսութեան մէջ սանձակոտոր տարվումէ գէոզ ի այնպիսի գործողութիւնք, որ թէ յառաջ և թէ յետոյ պիտոյ է ապաշաւէր նա,

ԲՆԱԿԱՆ ԹԻՒԴԵՐ:

ԲՆԱԿԱՆ ԹԻՒԴԵՐ է բնութիւն, աղնիւ մանուկներ: Այդ բանը շատ մօտ է ձեղ, զորա ազդեցութիւնը ամենայն տեղ ընկերակից է ձեղ, և գուք ոչ մի քայլափոխ չէք կարող առնել առանց հանդիպելու զորա օրէնքներին, թէպէտե զուք վերահասու չէիք նոցա: Ծառ և հրաշալի բաններ կային բնութեան մէջ, բայց մէք խօսենք համառօտ պյն անսինների վերայ, որոնց տեղեկութիւնը կարելի էր տալ ձեղ, ձեր իմացականութեանը համեմատ:

* ախտ և յառաջ պիտոյ է միտ առնուլ, որ բոլոր, աշխարհի մէջ եղած, առարկայքը ըշանակվումն անունով ԲՆԱԿԱՆ: Յատկութիւնքը, զօրութիւնքը և ազդեցութիւնքը այս առարկաների, որ առ վումն և ՄԵՐԻՆ, ուսանումնքը ճանաչել ԲՆԱԿԱՆ-ՌԻՆ մէջ, որ նշյալ պէս ծանուցանումէ մեղ պյն փոփոխութիւնքը որ պատահումն պդ մարմիններին. և այս բոլոր փոփոխութիւնքը յառաջանումն կանոնով ու սահմանով որ առվումն ԲՆԱԿԱՆ-ՏՐԻՆԻՆՔ:

Ծառ մարմիններ պյնպէս, ինչպէս որ տեսանումնք նորանց, անմիջապէս յառաջացած են բնութեան զործատնիցը, զոր օրինակ քարը, մետալանիթքը, ցորեանը, կտաւը, բուրդը, և այս պատճառով առվումն ԲՆԱԿԱՆ-ՏՐԻՆԻՆՔ: Միւս մարմինքը յառաջացուցել է մարդկային հանճարը և ճարտարութիւնը, պատրաստելով նորանց

բնատուր նիւթերից, որ ասլումն նշյալէս ընդունակ բերք: Նոցա կարգումն են շինուածք, դահնեկանք, հաց, հանդերձնեղենք և այլն. սոցա ասումն ուստի ուստի հորինել, ըստ որում արուեստով յօրինած էին:

Ումանք մարմինք իւրեանց ներսումը ունին զանազան անօթներ, որոնցով հասանումէ նոցա աննդական հիւթ. այս անօթները ասկումն Օքնան կամ Գործարուն, և այն մարմինները որ պարունակումէին ոյդպիսի անօթներ, ասկումն ըբդունակ կամ քործունակ հորինել:

* Բայց շատ մարմիններ կերպարանադղործումն այնպէս միայն, որ հաւասարասեսակ կամ ազդակից մասներ դուրսից հաւաքվումն միասին և կապակցվումն միմևանց յետ. սոքա ասլումն նուրբունակ կամ թէ անորդառան հորինել:

Ո՞ր քանի օրդանական մարմինների մէջ տարբխումէ աննդական հիւթը զանազան ծծողական անօթներով. այս մարմինքը ասլումն բառունակ է: Միւսերը ունին արտաքուսա մի բացուած կամ բերան, որանով ընդունումն իւրեանց մնունդը. սոցա ասումն Շնչառն: Օրգանական մարմինքը ասկումն նշյալէս իւրեանակ մարմինք, անօրգանականքը, անիւթն:

Եւս բազմազան մարմինքը, որ կան բնութեան մէջ, այլև նոցա յատկութիւնքը և նոցա վերաց հիմնաւորված պատճառքը և ներգործութիւնքը ճշղապէս ուսանելու և ճանաչելու համար, հարկաւոր է մասդիւր նկատողութիւն: Բայց միանգամ արած նկատողութիւնը հեշտ կարող է խարել և մոլորեցնել դէպ ի սխալանք: Եւս պատճառով, կարելի է միայն բազմապատիկ նկատողութիւնով, Փոքրէ, հասանել դէպ ի ճշմարտութիւն: Պիտոյ է կրկնազարձ տեսիլները նկատել շատ անգամ, նմանակիցքը համեմատել միմևանց չետ, միւս դիպուածների, դրութնեների և կապակցութենների մէջ քննել նորանց, կայունը և հաւասարը, որ երեւումէ սոյդ զանազան տեսակ յօյտնութենների մէջ, աչքի տակ առնուլ և պահել ամրապէս: Եւս նկատողութիւնքը կարող էր մարդը ևս առաւել ախորժելի և արդիւնաւոր կացուցանել իւր համար, իւրեանից հնարասաւեղծած քորերէ: Կա, առիթ ստանալով մի տեսիլքից, հարկազրումք բնութիւնը, որ սա նորա զիտաւորութենների համեմատ, մի այլ կերպով յառաջարերէ մի այլ յայտնութիւն: Սորանով ճոխանումէ մարդու փորձը և հաստափումէ, և նորա հոգին առաջնորդվումէ դէպ ի նորանոր յայտնագործութիւնք:

Որովհետեւ բնախօսութիւնը պարունակումէ մի լոյն ու արձակ սահման, աղա նորա տեղեկութիւնը պիտոյ է շատ օգտակար լինի մեզ: Կարա ազդեցութիւնը տարածվումէ համարեա թէ մարդերի բո-

Ըսր վաստակների և գործերի վերայ և կապակից է համարեա թե մարդկային կեանքի ամենայն հարկաւորութենների հետ, Կա ուսուցանումէ մեղ, թէ ինչ հնչ հնարիներով կարող էինք պահպանել մեր առողջութիւնը. Նա տալիս է մեզ իւր օգնական, բարեկամական և պաշտպանողական ձեռքը, կեանքի կարիքների, ուրախութենների և վոանգների մէջ: Կա ազատումէ մեղ յիմարական սնապաշտութենից, վախկոտ երկիւղից, երբ որ պատահումէին աշարկու, շատ անգամ սոսկալի փառաւոր բնական տեսիլներ, ըստ որում տեղեկացնումէ մեղ նոցա պատճառներին, խորհրդին և օգտին: Եւ ինչ տեղ կարող է ինը աստուածեղէն Արարչի ամենակարողութիւնը, իմաստութիւնը, բարութիւնը և սէրը առաւել բացայաց և առաւել ուղիղ ճանաչել, եթէ ոչ այն հյափապ բնութեան մէծ տառերով գրուածիցը, Արդարեւ արժան չէր, որ նորա մէջ պատահչելի հանդէսների պատճառքը և հետեւանքը օտար մեջին մեղ:

Առաջնունք յատիւններք հասին:

1. Ընդհանուր սեհնեն:

Առարմինների վերայ գտանումնք յատկութիւնք որ սեփական են բոլը մարմիններին առանց բացառութեան, և յատկութիւնք որ ու ամեններին, այլ միայն քանի մի մարմինների սեփական են: Այսպէս աշա ամենայն մարմինք են տարածուն, անթափանցելի, բաժանմի և այլն, բայց ոչ ամենայն մարմինք են կոշտ, կակուղ, ջլաձիգ, հեղանուա: Առաջինքը ասվումն ընդհանուր յատկութիւնք, վերջնուքը, սեհնեն:

2. Տարածութիւն:

Ամենայն առարկայ որ ասվումէր մարմին, պիտոյ է տեղ ու կայան ունենար, այսինքն, պիտոյ է լիներ տարածուն զեսի ի երկարութիւն, լցունութիւն և բանութիւն: Այս տարածութենով սահմանվումէ մարմինի երկարութիւնը. և որովհետեւ այս մեծութիւնը ևս ունի իւր սահմանքը, ապա պիտոյ է, որ ամենայն մարմին ունենայ մի լեզութեամբ, կամ յլ: Ուրեմն տարածութիւնը պատկանումէ մարմինների ընդհանուր յատկութեններին, որովհետեւ Նա գտանվումէ նոյնպէս ևս արևի հիւլէնների մէջ, որ հազիւ թէ կարող էր նկատել մարդկային աչքը, ինչպէս որ աշխարհի աշագին կազմածի վերայ:

3. Անդադաշտութիւն:

Երկու մարմինք չեն կարող մի և նոյն միջոցին զետեղվիլ մի և նոյն տարածութեան մէջ. այս յատկութիւնը ասումն մարմինների

Անմատութելունիւնը։ Եթէ մի մարմին պիտոյ է ներս բերվէր մի տարածութեան մէջ, որի մէջ գտան վումեր մի այլ մարմին, ապա պիտոյ է աս հեռացնի յառաջուց։ Երբ որ մէք շարժվումնք, մղումնք մէր առաջն մեղ շրջապատող օդամարմինը. այս բանը չէր մեղ այնքան զգալի, որովհետև ողը մի շատ նուրբ մարմին է, բայց առաւել զգալի էր, երբ որ շարժումնք մէր անձը ջրի մէջ։ Այս երեսումքը, որպէս թէ ոմանք մարմինք թափանցումէին ուրիշների մէջ, զոր օրինակ ջուրը սպունդի մէջ, որպէս և ջուրը գինու մէջ, երբ որ երկուքը խառնվումէին միմեանց հետ, բայց ջուրը հալածումէ միայն օդը սպունդի միջոցներից, և, երբ որ խառնվումէր գինու հետ, ջրային և գինեղէն մասները զետեղվումն ջոկ ջոկ տեղերում միմեանց մօտ, վերայ, և տակ։ Այս յատկութիւնը կարելի է բացայցյա տեսաննի կացուցաննել, եթէ մի դաստիք ապակեղէն բաժակ դեպ ի վայր շրջած կոտսէիր ջրի մէջ։ Այս տեղ, թէպէտ ջուրը մի փոքր ներս կը մտանէ բաժակի մէջ, որովհետև օդը կարող է կծկիլ, բայց բաժակի մի մծ մասը մնումէ ջրիցը աղատ, մինչև որ օդը չէ փախել բաժակիցը։

4. Մ-բաների հ-ի-որին-նիւնը։

Վանայն մարմին բարկացած է մասներից. և որովհետև այս մասները ոչ ամենայն տեղ հաւասարապէս խիտ կապակից են միմեանց հետ, այս պատճառով յառաջանումնն նոցանում միջոցներ որ ասումն չ-է-դի՛+, և այս յատկութիւնը մարմինների ասվումէ նոցա հ-ի-որին-նիւնը։ Ոչ ամենայն մարմինների մէջ հաւասար շափով գտան վումքը այս յատկութիւնը, Սպունդի, հացի, փայտի, մարդու մորթի մէջ կարելի է տեսաննել նորանց լոկ աչքով. բայց ուրիշ մարմինների մէջ, զոր օրինակ մետալների մէջ կարելի էր նկատել նորանց խոշորացուցով միայն։ Այս յատկութիւնով ջուրը թափանցումէ թըղթի, ջերմանիթը հնոցի տախտակների, կրակը, հալելու ժամանակին, մետալների միջից. բայց այս յատկութիւնը մարմիններին մծ մնան է բերում նշանպէս, որովհետև զա էր պատճառը, որ խամրանումնն քարերը և որմերը, որ ապականվումէ և փառումէ փայտը, որ մետալները ժանգոտվումնն

5. Թ-նիբ-նիւն։

Այս մծակշիռ յատկութիւնը հանգիստումէ մարմինների մէջ շատ զանազան շափով. պատճառ, մի քանի մարմինների մէջ մասները առասր կապակից են միմեանց հետ. նորա ծակալից և թեթևե են. միւս մարմինների մէջ, այդ մասունքը աւելի խիտ զուգակից էին միմեանց

հետ, նորա երևումնն աչքին գրեթէ անթափանցելի. նորա բանքէ էին: թանձրութեան յատկութիւնը առաւելապէս տեսանվումէ մատաւ-ների և քարերի մէջ. նա տալիս է նոցա առաւել տեղականութիւն, որովհետեւ նորա այդ յատկութենովը էին սակաւ թափանցելի, ուրեմն և ոչ այնքան եղծանելի:

6. ՌԱՐԻՆԱ-ՌԻՆ:

Վ.յու, ամենայն մարմինք ունին մի սեփական կշիռ և ծանրութիւն, բայց բնախօսութեան մէջ խօսքովը ժանր-ին-բի-ն չէ հասկացվում այդ բանը, այլ մանաւանդ այն յատկութիւնը երկրի, որանով նա դէպ ի ինքն է քարշում բոլոր, նորա վերայ գտանված մարմինքը: Մի գունդ հանդարտ դրած է քո ձեռքի վերայ, և զուզգումն միայն այն ճնշողութիւնը, որ նա պատճառումէ ուժելով և աշխատելով հասանել երկրի կենդրանին: Եթէ ձեռիցդ բաց թաղուս այն գունդը, նա վայր է ընկնում, ըստ որում քարշումէ երկրի կողմիցը, և նա գլորժելով պիտոյ է վայր իջանէր մինչև երկրի կենդրանը, եթէ այն տեղ, ինչ տեղ շշափումէ երկիրը, լինէր մի բացուած: Աւրեան խօսքովս ժանր-ին-բի-ն հասկանումննը այն նկատողութիւնը, թէ երկրի բոլոր մարմինների մէջ կայ մի ծածուկ զօրութիւն, որանով նորա ձգտվումն դէպ ի երկրի միջնավայրը. և այս հիման վերայ բառս „մորիննէր ժանր-ին-բի-ն“ գործ է ածվում որպէս հաւասարանշան բառիս, երբէ ուշաւուն զան-բի-ն: — Ա.յապէս, եթէ կամնումնը մի մարմին դէպ ի վեր բարձրացնել, ապա հարկաւոր էր մի այնպիսի ոյժ գործ դնել, որ գերազանց էր քան թէ երկրի քարշողական զօրութիւնը, զոր օրինակ լծակը, բառնաւիքը: Բայց երբ որ այն ոյժը թու լցած էր, այնուհետեւ սկսանումէ գարձեալ ներգործել երկրի քարշողական զօրութիւնը: Մի քանի մարմինք, որպէս ծուխը, շոգին, նուրբ ջրեղեն գոլորշիք, մառափուղը, այն և աղուամաղը դէպ ի վեր են ելանում ազատ օդի մէջ, բայց սորա պատճառը այն էր, որ նորա աւելի թեթև էին քան թէ օդը և զորա համար սղիցը դէպ ի վեր էին տարվում և ապա կարող էին նցինպէս լող տալ նորա մէջ, ինչպէս փայտը և այլ թեթև մարմիններ լող էին տալիս աւելի ծանր ջրի վերայ: Ա.յլւ այս մարմինքը բարձրանումն միայն մինչև այն տեղ, ինչ տեղ օդը հաւասարակիու էր նոցա հետ: Երբ որ դէպ ի վեր ելած շոգիքը միանումն օդի մէջ, այնուհետեւ կերպաւորումն ամպեր, աւելի ծանրանումն քան թէ օդը և դարձեալ ցած ևն իջանում որպէս անձրւ, ձիւն և այլն:

Որովհետև ծանրականութիւնը ներգործումէ անդադար, այս պատճառով ամենայն րոպէ բազմապատկվումէ նա և ներգործումէ այնքան ևս սասարիկ, ինչքան ևս մօտենումը երկրին: Նիստած են, որ մի ցած իջանող մարմին առաջին սեկունդի մէջ վայր է ընկնում 15 ոտնաշափ տարածութիւն, երկրորդ սեկունդի մէջ չորս անգամ 15, չինգերորդ սեկունդումը 25 անգամ 15 ոտնաշափ, և այլն: Արևմե, եթէ կամենումէինք հաշուել այն ճանապարհամիջոցը, որ անցել է մի մարմին դէպ ի վայր ընկնելով, հարկաւոր էր միայն սեկունդների թիւը բազմապատկել իւր հետ և յարաջածութիւնը բազմապատկել 15 ով: Մարմինների վայրանկութեան օրէնքը սահմանվումէ այսպիսի ձևով: Վայրանկութեան ճանապարհամիջոցը առաւելանումն նոյն շափով, ինչ շափով մեծանումէ դէպ ի վայր ընկնելու ժամանակների քառարուսի թիւը կամ կիադրատը: Օրինակ. մի քար ցած թողեցինք մի ջրհորի մէջ, և չորս սեկունդ անցած, լսեցինք որ նա ցածումը հասած է ջրին, ուրեմն ջրհորի խորութիւնը է $4 \times 4 \times 15 = 240$ ոտնաշափի: Այս նկատողութենից բացցայտ է նոյնպէս թէ ինչ պատճառով անձրեային ամպերը, շատ բարձանալով, պատճառումէին ջաղը, և թէ ինչ պատճառով կարկուտը ունէր այնքան աւերիչ զօրութիւն: Կը սիկ պատճառով, ջրի կաթիները ցած թափմելով տանիքներից առ փոքր փոքր գոգաւորումն այն քարերը, որոնց վերայ հանդիպումէին: Բայց այն վերայիշեալ կանոնը, արագութեան առաւելանալու մասին, պիտոյ է սահմանել այն յարաբերութենով մանաւանդ, ինչ յարաբերութիւն ունէին վայր ընկնող մարմինքը օդի հետ: Զոր օրինակ, եթէ մի գունդ խցանափայտից պատրաստած, որ փուխը մարմին էր, մի կապարեայ գնդի հետ մի և նոյն միջոցում վայր ձգէիր հաւասար բարձրութենից, խցանափայտեայ գունդը պիտոյ է աւելի յետոյ հասանէր երկրին, քան թէ կապարեայ գունդը: Որովհետեւ նա չունէր այնքան զօրութիւն որ իւր արագութենով յաղթէր օդի ընդդիմութեանը:

Որովհետեւ մարմինները, եթէ կարող էին ազատապէս վայր ընկնել, միշտ ուղղահայեաց գծով դէպ ի վայր են քարշվում, այս պատճառով օգուտ են քաղամ այս յասկութենից, երբ որ պիտոյ էր քննել և գտանել ուղղահայեաց դէպ ի վայր իջանող գիծը, գործ դնելով կապարագունդը, որ մի լսր է, ծայրի վերայ ամրացուցած մի ծանրաբենիչ գունդ: Այս յատկութեան վերայ հիմնաւորվումէ և ճօճանակի, լծակի և կըսի վերայ բանախօսութիւնը: Ժամադրութը պէտք է ածում մի ծանրութիւն, ամրացնելով սորան մի ձողի վերայ, որ վերակցը շարժուն էր և այսպէս ստանումէ այն ճօճա-

նակը, որ կտռավարում եր և սահմանում եր ժամացոցի դնացքը, ինչ-քան որ կարճ էր այս ճամանակը, այնքան ևս արագ էր նորա շարժողութիւնը և այնքան ևս արագ ընթաց էր ժամացոցը. բայց ինչ-քան երկար էր ճամանակը, այնքան ևս ծանր էր նորա տարութերութիւնը, ուրեմն և ժամացոցի ընթացքը: Լծակը գործ դնելու համար, պիտոյ է ունենալ մի հաստատութեան տեղի. ինչքան որ երկար է լծակի բազուկը, հաշվելով հաստատութեան տեղիցը, այնքան ևս աւելի մեծ բեռներ կարելի է բարձրացնել նորանով:

7. Ը-ը-է-է-հ-հ-ի-ն-:

Վարսինների ծանրականութենով պայմանաւորվումէ միասին մի այլ յատկութիւն մարմինների, այսինքն շարժականութիւն կամ շարժելութիւն: Որովհետեւ ամենոյն մարմինների մէջ կայ այն ճգնազողութիւնը հասանելու դեպ ի երկրի միջնավոյրը, ուրեմն պիտոյ է լինելին նորա և շարժական: Թէպէտ երկումէ, որպէս թէ այս բանի հակառակը, այսինքն հանդիսարը, սեփական էր նոցա, կամ թէ, ինչպէս ասվումէ բնախօսութեան մէջ Դանուպիստունին: պատճառ, երբ որ մի մարմին որ աշխատումէր հասանել երկրի միջնավայրին, հասած էր երկրի մակերեսութիւն, ապա գագարումէ այն տեղ և հանգստանումէ. բայց այս հանգստանալը ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ խափանված շարժողութիւնը: Խթէ երկրի քարշողական զօրութեանը դէմ դնէինք մի աւելի սասարիկ զօրութիւն, այնուհետեւ պիտոյ է շարժողութիւնը տեսէր անվերջանալի, եթէ մարմինը որ և իցէ արգելարիմներով չը խափանվէր իւր շարժողութեան մէջ և յետոյ չը գագարէր ամեննեին: Այդպիսի արգելասիթք էին զոր օրինակ մարմինների հետ: Այս պատճառով աչա, այն մարմինները որ ազատ էին այսպիսի խափաններից, պտշյավումն անդագար, ինչպէս մոլորակքը իւրեանց անշարժ աստեղների չորս կողմով: Ապա ուրեմն շարժականութիւնը, մարմինների աւելի կարեսը յատկութեններից մին է. պատճառ, առանց գորան բոլոր բնութիւնը կը լինէր մռած: Շարժողութիւնը, երբ որ մարդկային կարողութիւնը բաւական չէր, յառաջանումէ անասունների, զանազան մէքենաների, հողմի, ջրի, շոգինների և այլ օդնական հնարների միջնորդութենով:

Շարժողութիւնը, մի քանի մարմինների մէջ, լինումէ անհաւատալի արագութենով, զոր օրինակ լցուը մի սեկունդի մէջ անցանումէ 40,000 մղոնի ճանապարհ, և երկիրը իւր գնացքի վերայ արեգակի չորս կողմով, չորս մղոն: Հառաչիւնը նոյն ժամանակի մէջ ան-

ցանում՝ 1040 սանաշափի տարածութիւն, Այս պատճառով կարելի է այն միջոցից, որ եղած էր կոյժակի տեսանելու և որոտի մէջ, Եղագակել փոթորկի հեռաւորութիւնը:

Մարմինների արագութիւնը է կամ հաստիւթեաւ կամ քանի մարմինք մի և նոյն միջոցում անցանումն միշտ մի չաւասար տարածութիւն. ուրեմն նոցա արագութիւնը է չաւասարաշափ. միւս մարմինների մէջ, շարժողութիւնը երբեմն սաստկանումէ, ինչպէս վայր ընկնող մարմինների մէջ, և երբեմն պակասումէ, ուրեմն փոփոխական է: Այս պատճառով կարող է շարժողութիւնը երբեմն շուտացուցիլ և երբեմն խափանվիլ:

Տ. Բ-Ք-Հ-Ն-Ի-Շ-Խ-:

Որպէսնու, ինչպէս ասվեցաւ վերևումը, ամենոյն մարմինք բաղադրված են մասներից, ապա պիտօյ է կարելի լիներ նոյնպէս լուծանել նորանց և բաժին բաժին առնել: Այս յատկութիւնը ասվում մարմինների բաժանումներին: Դորա ներհակը է համարական պրոցես կամ թէ մարմինների այն յատկութիւնը, որանով նոքա, իւրեանց նիւթի պատճառով պինդ և ամուռ կապակից էին միմանց հետ: Ամանք մարմինք էին չեշտ բաժաննելի, միւսերը մնձապէս ընդդիմանումէին, և թէ կամնայիր բաժաննել նորանց: Բաժանականութիւնը չեշտացնելում ջրի, օղի, կրակի զօրութենով, որ ներս մոանելով մասների—ծակտիքի մէջ—վերացնումն մասների կապակցութիւնը: Կայ իսկ նպատակին աշխատումէ հասանել մարդս արուեստով, և թէ նա մարմինների մասները բաժաննումէր միմանցից քերելով, խարտելով, ծակելով, կռանելով, զարկելով, սղոցելով, ջարգելով, քանդակելով, սեղմելով, ձգելով և պարզելով, կտրելով, տրորելով, մանրելով, աղալով և այլն: Ամենոյն մարմին մասնագում իւր սեփական կերպովը. բուսականները և կարծրացած մարմինները ունին, ինչպէս ասվումէ, ձեղբողական երեսներ, որոնց հետեւ կարելի է աւելի չեշտ մասնատել նորանց քան թէ այլ կողմերից: Մարմինների բաժանականութիւնը մի անվերջանալի քան էր. զոր օրինակ թու մարինի հոտը ծաւալվումէ մինչև 30 մղոն ծավի վերայով. մի փունտ բամբակից կարելի է մասնել քառասուն գերմանական մղնի չափ թել. մի լոտ սոկուց կարելի է պատրաստել հարիւր քառասուն մղնի երկայնութենով լար, և թթուանիթը ըներս ծծեցուցանելով կարող է մի պլատինեան լար ձեւանալ $\frac{1}{50000}$ ձկութիւ բարակութենով: Բայց բնութիւնը այս բանի մէջ աւելի զերաբազանց է քան թէ մարդկային ճարտարութիւնը: Մի տեսակ թըր-

Թրուկի թևերի վերայ կարելի էր որոշել 60,000 աչքեր, և սարդի շինած միթելի մէջ 7000 աւելի բարակ թելեր: Ինչ որ ասացինք, դորանից բացայստ է աչա թել մարմնների բաժանականութիւնը ինչ օգուտ ուներ մարդուս համար. առանց դորան կարող չէինք պատրաստել մեզ ոչ կերակուր, ոչ բնակարան և ոչ զգեստ:

9. Համարակալ պատճեն:

Այս յատկութիւնը նշյնչափ ևս խորհրդաւոր էր, որչափ մարմնների բաժանականութիւնը. սա մարմնների այն յատկութիւնն է, որանով նոցա մասները փոխադարձաբար քարշումն միմանց և ամուր կապած էին միւսի հետ: Այս համակցութիւնը այնքան ևս աւելի պիտի է ինչքան աւելի բազմաթիւ են հաղորդակցական կէտքը որ կային մասների մէջ: Այսպէս, երկու հարթ կոկած մարմարոնեայ տախտակներ, եթէ տաքացնեիր նորանց և պատէիր ճարպով, բաւական ամուր կը մածնուին միմանց հետ: Այս յատկութիւնը սասակացնելու համար, գործ են զնուում զանազան մածուցանող հնարներ, որպէս սօսինձ, շաղախ և այլն, կապակցելի մարմնների խորութիւնը հաւասարելու համար: Սորա հակառակ միւս մարմնների մէջ պիտոյ է աշխատել զանազան կերպով փոքրացնել մասների համակցութիւնը, որ նորա պիտանի դառնային պատրաստութեան համար:

* Այսելով այն բանին թէ զօրաւոր կամ թշվ էր համակցութիւնը, մարմննը բաժանվումն առաջ կամ հեշտութ ձեղանուաբը էին կամ հետու հետու, երբ որ նոցա աւեստելի մասները լուծանվումն կաթիւների պէս և ընդունումն ամենայն ամանի ձեւ, որի մէջ պարունակվումն, զոր օրինակ ջուրը, զինին, գարեհիւթը, քացախը, իւղը և այլն. առաջու հետու, երբ որ նորա աշխատումն ընդարձակվել, ինչքան կարելի էր, աւելի մ.ծ տարածութեան մէջ, որպէս օդը, կրակը, ծուխը, շոգին և այլն: Ամուր մարմննը ասվումն իւշտ, եթէ նոցա մասունքը կարելի էր միայն բռնութեամբ խախտել սեղիցը, և աւելի հեշտ բոլորպին բաժանել միմեանցից, քան թէ շեղել իւր զրութենից, զոր օրինակ քարերը, փայտը և այլն. նորա ասվումն իւշտ, եթէ նոցա մասունքը կարելի էր հեշտութեամբ դուրս սեղել իւրեանց կապիցը, զոր օրինակ սոկին, կապարը, իւղը. նորա ասվումն չէին, եթէ նոցա մասունքը կարող էին ձգվել կամ թէ շեղել առանց կորուսանելու իւրեանց համակցութիւնը, ինչպէս, մեղրամուրը, մետալեղըն լարերը, կաշին. նորա ասվումն իւշտ, եթէ նոցա մասունքը կարող չէին ամենեին ծռու.

վիլ կամ թէ խախովիլ իւրեանց տեղից առանց վեասելու և այն մասներին որոնց վերայ չէ եղած ազդեցութիւն, զոր օրինակ պահին, չոր փայտը, պողովատը, քարերը, վերջապէս նորա ասլումն չէ-ի՞ն, երբ որ նոցա մասունքը թէպէտ և շնդգումին և ծռվումեն, բայց դարձեալ ստանումին իւրեանց դրութիւնը, երբ որ թռւլանումք քարշողութիւնը կամ թէ ճնշողութիւնը, զօր օրինակ պաղովատեայ ձգարանքը, ձկան ոսկը, ձգական խէժը, օդը, թռչուների փետուրները:

Համակցական զօրութեան վերայ հիմնաւորվումէ խակական հաստատութիւնը մարմինների, պատճառ, առանց նորան, մարմինների մասունքը պիտոյ ցանուցիր լինելով թափառէին արձակ տարածութեան մէջ. այլին այս յատկութենից յառաջանումն շատ և շատ տեսիլներ բնութեան մէջ:

Ո՞ւր մատը թաց է լինում, եթէ մուեինք նորան ջրի մէջ. պատճառ, ջրեղէն մասունքը մածնումն մատի վերայ, ըստ որում առ դեպ ի ինքն է քարշում նորանց: Բայց եթէ ջրի երևսի վերայ ցանեինք մի տեսակ ալիւր, որ ասլումէ կախարդական ալիւր, ապա կարելի էր ներս կոխել մատը, առանց թաց առնելու նորան: Վարմինների քարշողական զօրութիւնը այնքան առաւել սաստիկ է, ինչքան առաւել նիւթ կայ նոցա մէջ, և ինչքան առաւել նորա մասենումն միմանց: Այս քարշողական զօրութիւնը և շարժականութեան յատկութիւնը էին տիեզերքի մէջ տեղական կարգի պատճառքը:

10. ՕՐԸ:

Դուրսը երկրային մարմինը ամենայն տեղ պատած է մի նուրբ, թափանցիկ հեղանիւթավ, որ շատ բարձր դեպ ի վեր է գնում: Այս հեղանիւթի մէջ աճումնն ըստականքը, ապրումն մարդ և անսառն, այն և թռչունքը իւրեանց կամքի պէս թափառումն օդի մէջ վեր ի վայր շարժվելով, պյոնգէս ինչպէս ձկունքը լող են տալիս ջրի մէջ: Այս հեղանիւթին ասումնք ՕՇ: Կորա բոլոր տարածութիւնը մինչեւ իւր ամենահեռաւոր սահմանը հաշուելով երկրից, ասլումէ Օդաշրջանակ, կամ թէ մի յունական բառով, Շամօսֆերա, որ և, նայելով նորա մէջ պարունակված գոլորշիններին, ասլումէ գոլորշապատ: Օդը անշափի թանիքանցիկ է, և այդ պատճառով, եթէ պարզ էր, անտեսանելի է: Բայց նա այդու ամենայնիւ մարմին է, որ մէք կարող ենք լսել և դդալ: Երբ որ օդը սկսանումէ շարժիլ սաստկապէս, ապա շատ զգալի կերպով իմացվումք նորա մարմին լինելը, որովհետեւ փոթորիկը կարող է ծառեր արմատախիլ առնել:

և տուներ կործանել։ Օդը, երկրի վերայ ապրող արարածների պահպանութեան համար անչափ հարկաւոր է։ առանց նորան ոչինչ ըստ սական կարող չէ աճել, ոչինչ կենդանի շոնչ առնուլ և ապրել։ պատճառ, նա թռքերի կամ թէ այլ ծծողական գործարանների միջ նորդութենով ներս է մտանում արինի մէջ և հովացնում նորան։ առանց օդի կարող չենք լսել, և առանց նորան չէր կարող վառվել ոչինչ կրակ։

(Օդի և այլ յատկութիւնքը տալիս են մեզ մի անտարակցյա ապացոյց, որ նա մարմին էր։ Օդը՝ անոնքնաշելք է, պատճառ, այն տեղ, ինչ տեղ օդ կայ, չէ կարող նոյն միջոցումը լինել և մարմին, այլ նա կամ մտանում օդի ծակամքը ըլքը, կամ թէ խթում նորան գեղի մի կողմը, երկրորդ, օդը չ-է-ու-ի-ն է, պատճառ, նորա համակցութիւնը շատ անօսր է, ինչ պատճառով կարող են օտար մարմիններ միջամտեն լինել նորա մէջ և շատ հեշտութեամբ շարժվիլ նորա մէջ։ Զոր որինակ երկրից ու ջրից բարձրանումն անհամար շողիք գեղի ի օդը և կերպաւորումն այն տեղ ամպեր։ Օդը որոշակա է նոյնպէս, որովհետեւ նա ամենայն տեղ, 8 մինչև 10 մղոն բարձրութեամբ, շրջապատումէ երկրային մարմինը, ներս է մտանում ամուր մարմինների ամենանորը ծակերի մէջ և լցուցանումէ նոցա ամենափոքր միջոցները։ Ինչքան առաւել մտ է նա երկրին, այնքան առաւել թանձր է, և ինչքան առաւել հեռի է նորանից, այնքան առաւել անօսր է նա։ Այս բանը նկատած են մանաւանդ, վեր ելանելով բարձր սարերի վերայ։ Մի այնպիսի բարձրութեան մէջ, որ առելի էր քան թէ մի մղոն գերմանական, օդը անպիտան է ընչափութեան համար։ և այն թուշունքը, որ օդաչու նաւալվարքը վեր էին առած իւրեանց հետ մինչև այնպիսի բարձրութիւն, վայր են ընկած կիսամու մինչև հասանէին այն օդի սահմանին, որ յարմար էր նոցա թուշութեան համար։ Բաց ի սորանից, օդը անչափ թափանցիկ է, որովհետեւ նորա միջից կարելի է տեսանել և նկատել ամենաչեռաւոր մարմիններ, թէպէտեւ մի անչափելի օդի քանակութիւն գտանվումը մեր և նոցա մէջ տեղումը։ Բաց ի այս ընդհանուր յատկութեններիցը օդի, յիշատակումնը մի քանի այլ առանձին և աւելի կարեսր յատկութիւններ։

11. Օդի համարականութեանը։

(Օդը հեղանուտ է, այսինքն անդադար աշխատումէ նա հաւասարակշիռ մասը, և կամենումէ միւսանգամ նորոգել այդ հաւասարակշառութիւնը, եթէ խափանված է նա։ Այս հեղանուտութիւնը հիմ

նած է այն բանի վերայ, որ օդի մասները շատ թշլ կապակից էին միմանց հետ, ուրեմն և կարող են մի փոքր զորութենով բաժանվիլ միմանցից: Այլ հոսական մարմիններ, բնչպէս ջուրը, ժիգակը կորուսանումն այս յատկութիւնը ցրտի մէջ և քարանումն: բայց ոչինչ հնարք մինչև այժմ ծանօթ չէր մեղ, որանով կարելի էր կողոպտել օդիցը իւր հեղանուա բնութիւնը. բայց այս յատկութիւնը զօրանում կրակով. այս պատճառով կարող են ջերմանալ մեր սենեակքը վառելով հնոցները: Այսինքն ջերմութիւնը անօրացնումէ այն օդը որի վերայ կարող էր ներգործել. դորանով խախտվումէ հաւասարակշխորը, բայց մատ հոսելով ցուրտ օդ, դարձեալ նորոգվումէ հաւասարակշխորը. այս ցուրտ օդը ջերմանումէ նոյնաբես, և այս ընթացքը շարունակվումէ, մինչև բոլոր օդը սենեկի մէջ հաւասարապէս տաքանումէր:

Եշր որ օդի հաւասարակշուութիւնը որ և իցէ կերպով խախտված է, զոր օրինակ ջերմութենով կամ ցրտով, անձրեով, լուսով, խաւարով և այլն, այնուհետեւ յառաջանումէ մի տարուրերական հոսանք նորա մէջ, որ ասլումէ հոռմ, որ և, նայելով նորա տեսակ տեսակ սաստիութեանը, ստանումէ և տեսակ տեսակ անուններ:

12. ՕԴԻ ՀԵ-ԴՆ-ՌԵ-ՆԸ:

(Օդը ձգական է, այսինքն նա կարող է մի աւելի փոքր տարածութեան մէջ կծկվիլ, բայց կարող է նոյնաբես պարզվիլ խկցյն, երբ որ թուլացել է ճնշողութիւնը, և այնուհետեւ լցուցանումէ աւելի լցոյն տարածութիւն քան թէ լցուցանումէր ճնշողութեան ժամանակին: Երբ որ մի ըմպանակի վեր ի վայր շրջած ճնշես ջրի մէջ, ապա ըմպանակի մէջ պարունակված օդը կծկվումէ աւելի թանձր ջրի ներս մուանելովը, բայց երբ որ թուլացաւ ճնշողութիւնը, միւսանգամ պարզվումէ օդը, հալածումէ ջուրը ըմպանակից և սա դէպ ի վեր է թռչում:

(Օդի այս յատկութեան վերայ հիմնած են շատ հարկաւոր գիւտեր: Օդեղն հրացանովը, որ գուրախց կաղմած էր սովորական հրացանի պէս, կարելի է սպանել մարդ և անսառուն: Այս օդեղն հրացանի վերայ դտանվումէ մի պղնձի գունդ կամ սրուակ, լցուցած թանձր օդով: Այս թանձրագործութիւնը լինումէ, շատ օդ ներս մուծանելով գունդի մէջ և այսպէս սաստիկ թանձրացնելով օդը, բայց այս լցուցանելը գունդի պահանջումէ ամենամեծ զգուշութիւն. պատճառ, երբ որ գունդը չափից դուրս լցուած է, ճարճառուումէ նա սրպէս ապակի և սպանումէ այն մարդիկը որ զբաղած էին ներս մու-

ծանելով օդը։ Եթէ մի այդպիսի գունդ լցուցանէիր ցրտումը և բերէիր նորան ջերմանեմեան մէջ, նա ճարձատվումէ նշյնպէս, ինչպէս պատառվումէ մի, ցրտումը օդալից արած, փամիտշտ, եթէ ջերմացնէիր սորան, որովհեամ օդը, ինչպէս ամենայն մարմին, տաքութենով ջերմանումէ և պարզվումէ։ Օդի ձգականութեան վերայ հիմած է նշյնպէս հրացանական վառանիթի ներգործութիւնը։ Այս վառանիթը բաղկանումէ ածուխի, ծծումրի և բորակի խառնուրդից։ բարակը պարունակումէ իւր մէջ համաձնշած ոդ որ, երբ բորակը ածուխի և ծծումրի զօրութենով վառվումէ, աշխատումէ սաստկապէս պարզվիլ և այս պատճառով գունդը հրացանի փողովակի միջից դուրս է հալածում։

13. Ը-Ն-Դ-Ի-Ն-Ը:

(Օդի ձգականութիւնը պատճառ է նշյնպէս Ը-Ն-Դ-Ի-Ն-Ը յառաջանալուն։ Ոչինչ մարմին ինքն ըստ ինքեան այն չէ հանում, առանց արտաքին շօշափութեան, այլ յառաջուց պիտոյ էր նորան որպէս թէ հարկադրել, որ հնչէ նա։ Բայց երբ որ մարմինը սկսել է հնչել, նա մի տեսակ շարժողութիւնք է առնում, որ կառարիվումն նորա ներսումը և շատ կամ սակաւ սաստիկ, առանել կամ նուազ ընդարձակ են։ Այս շարժողութիւնքը ասումնք նրանուն, դողդողութիւնք, թէպէտ ձգականութիւնը շառաչիւնի արմատական պայմանն է, բայց ոչ ամենայն ձգական մարմինք կարող են շառաչիւն գոյացնել կամ թէ բաւական ուժով տարածել նորան։ Եյլէ, որպէս ամուր, նոյնպէս և հեղանուտ մարմինք հնարաւոր են այս մասին, պիտոյ էր միայն, որ նոյս մասները գտանզիւնն մի տեսակ լարման մէջ, եթէ արձակելու էին շառաչիւն։ Այսպէս շառաչումն ապակին, կոշտ մետաղներ, զանգակները, ձգած լարեր, պողովատեայ ձգարաններ, այն և փայտը, և այլն։ Բոյց գարձեալ, միւս ձգական մարմիններ չեն շառաչում, զոր օրինակ բուրդ, փետուրք, ձգական խէժը, ժիսպակ և այլն, չեն արձակում ոչինչ շառաչիւն։ Հեղանուտ մարմինքը շառաչումն այն ժամանակը միայն, երբ որ նոքա միւս ամուր կամ թէ լարած մարմինների մատից մի առանձին արագութենով քերումն և անցանումն, ինչպէս օդը շինուածների, ծառերի, հողեան քնարի լարերի մօտից։ Կոյնպէս շառաչումն օդը, արագապէս արձակիլով ամուր մարմինների միջից, ինչպէս վառանիթ շենած բորակի միջից։

Ուրեմն Ք-Ա-Ր-Ա-Ր-Ե շառաչիւնը, երբ որ մարմինքը սկսումն շարժվիլ դողդողալով։ Մարմինը զորանով ոչինչ չէ կորուսանում իւր

Նիթիցը. ապա թէ ոչ, բնչպէս կարող էին ժամացոյցների զանգակ-ները դարձուր ժամանակներով տեսել. այլև նա ոչինչ բան դուրս չէ հոսում, այլ միայն իւր առաւել մօսակայ օդին տալիս է այն դող-դողուն շարժողութիւնը կամ թրթուումը, և սորան տարածումքը օդը շառաւիղաձև յառաջ խաղացնելով; Աթէ շատ հեռակայ էինք այն տեղից, ուր յառաջացած է շառաչիւնը, ապա նա չէր այնքան սաս-տիկ կամ թէ պայծառ մեր ականջի համար, բայ որում բազմաթիւ շառաչիւնի շառաւիղը ցան և ցիր էին լինում, առանց շջափելու մեր լսելիքը: Այսպէս, առելի գժուար էր մեզ հասկանալ այն բանը, որ մի մարդ փոքր մի հեռուից խօսումէ, քան թէ լինելով նորտ մօսակայքը քումը, ուր շառաչիւնի շառաւիղը զեռ ևս շատ խիստ միա-սին էին, թէ այս տեղ արդարեւ ոչինչ արտահոսութիւն չէր լի-նում, այդ բանը կարելի է աշա եղբայրեկն նորանից, որ բայց այն ճրագի, որ զրած էր մի նուագարանի վերայ, մնումէ հանդարա. ա-պա թէ ոչ, պիսոյ է կայծակունք արձակէր, բնչքան որ ածումին նուագարանը: Բայց շառաչիւնի նույնութեան քանի որ նա չէ հանդի-պում խափանների, կատարվում միշու ուղղագիծ կերպով: Ըստ բա-ցայսյու կարելի է իւրեան պատկերացնել այս բանը ջրի օրինակով: Այսինքն, երբ որ ճգէինք մի քար մի հանդարտակաց ջրի մէջ, այն տեղ, ուր քարը պատառումքը ջրի երեսը, գոյանումն փոքրիկ տեր, որ այնքան ևս մեծանումն և ընդարձակվումն, բնչքան որ առելի հեռացած էին այն տեղից: Այս օգերը գոյանումն ոչ թէ ջրի յա-ռաջհոսութենովը, այլ աշա թէ բնչ կերպով: Երբ որ քարը շո-շափում ջրի մակերեսոյթը, ճնշում շափած տեղի վերայ գտան-ված ջրեղեն մասները, և երբ որ սոքա միւսանգամ սղարդվումն, ճնշողագիս ազդումն իւրեանց մօսակայ մասնիկների վերայ, որ այ-նուչետե ձեւացնումն տեղի և աւելի լոյն օդեր, և այսպէս շարու-նակվում գործը մինչև գագարում շարժողութիւնը: Աթէ շառաչիւ-նի ծաւալումը լիներ ստուգակէ յառաջհոսութիւնն, ապա և շառա-չիւնի շառաւիղը խաչաձև կորասումն միւսանց առանց մինը միւսին խափան լինելու, այնպէս, որ մեք նոյնակիսի կարգով, հետզէնտէ գո-խանորդութենով և արագութենով լուսներ նորանց, բնչպէս նորա յառաջանումին: Այս եռեռումը բերած ջրի օրինակը արդարեւ պատշա-ճաւոր էր միայն շառաչիւնի ծաւալբան մասին, որտիչետե թրթը ու-մունքը հասարակ օդի մէջ աւելի արագ էին,—1050 սանաչափ մի սեկունդի մէջ, բայց այդու ամենայնիւ, նշնպէս կանոնառ,

Եշ այլ մարմինների վերայ փոխարերվումն այս թրթումները ողի միջից, և այս պատճառով՝ յատկապէս գիշերը՝ ականջը զնելով գետնի վերայ, շատ հետք կարելի է լսել հեռաւոր ձիաների ոտնաձայնը, և թնդանօթների որոտը այսպիսի կերպով լսելի էր շատ մղոն հեռուից: Պատմութիւնն է լինում, թէ երբ որ Գրանսիացիք, Կապուէոն Բանապարտի ժամանակումը, պաշարումէին Անձվերոն քաղաքի ամրոցը, թնդանօթների որոտը լսելի էր մինչև Սաքսոնիայի հանքային սարերի մէջ, յատկապէս մետալահանգների մէջ: Միտ դնելով այս նկատողութեններին, ողիոց է իմաստափել, թէ այն թրթումունքը նախ և յատած փոխարերվումն ողից հողի վերայ, կամ թէ այլ ամուր մարմինների վերայ, և սոցանից դարձեալ ողի վերայ, որանով ապա զգալի էին մեր ականջի համար այս և հեռուից, Այլը, ինչքան շատ թրթումունք ողի մէջ պատճառումը մի մարմին, այնքան ևս նուրբ և բարձր էր շառաչիւնը. այսպէս, ամենախոր լսելի ձայնը այն էր որ մի սեկունդի մէջ առնումէ մաս երեսուն թրթումունք:

Վ. Յս նկատողութեան վերայ հիմնած է նշյապէս երաժշտական ձայնների խորաթիւնը և բարձրութիւնը: Նրկար ու հաստ լարերը թրթումումն միայն թուրապէս և այդ պատճառով տալիս են մի խոր ձայն: սորա հակառակ, կարճ ու նուրբ լարերը պատճառումն բարձր ձայն: Այսպէս էր և շնչառոր նուրագարանների մէջ. այս տեղ յառաջանումէ ձայն, դուրս բաղկանելով ոդը այս անօթների ներսից, Ինչքան լսյն ու երկայն է մի փող, այնքան ևս խոր է նորա ձայնը, ուրիմ բաւական էր միայն ծակեր և բացուածներ շինել մի փողի վերայ, և թէ կամենումէնք բարձրացուցանել այն ձայնները որ պիտոյ է դուրս բերենք նորանից:

Ը առաջինի սաստկութիւնը զուգակիր է շառաչող մարմինի նիւթին: այս պատճառով մի հարցանի ձայնումը թանձր ողի մէջ և խոր տափարակի վերայ, կամ թէ զիշերով և ցրտի մէջ, լսելի է աւելի հեռոի և ուժգին, քան թէ աւելի անօսր ողի մէջ բարձր սարերի վերայ, և այնպիսի ողի մէջ, որ արեգակի ճառագոյթներով չերմացած ու անօսրացած է: Կակուղ մարմինները խափանումն թրթումունքը. այս պատճառով մի նուրագածութիւն, պատառկալներով զարդարած դաշլիճի մէջ, չէ այնքան ախորժելի, ինչպէս այն դաշլիճի մէջ որի պատերը քարաշների մի մասը և այդպէս թուլցնումէ ձայնների ուժգնութիւնը, մանաւանդ և թէ շատ ու շատ ձիւն փուխը զիզած էր ի մասին:

Վ. Են թրթռմունքը որ պատճառումէ շառաչիւնը օդի մէջ, սուրանից, ինչպէս ասվեցաւ վերևումը, փոխարերվումն այլ մարմինների վերայ: Զոր օրինակ դղրդվումն պատուչանքը, որոնց մատակայքում զարկումէին մի թմբուկ: Եթէ մի մեծ և մի փոքր զանգակէ կախած էին միմանց մօտ, ապա փոքրիկ զանգակը հնչումէր մեղմապէս, եթէ հնչեցուցանէիր մեծ զանգակը: Այս, կարելի է շառաչիւնով փշել և ապահնդէն անօմներ, առանց շօշափելու նորանց:

Ծառաշիւնի, վերևումը նշանակած, արագութեանը հետեւլով, կարելի է շատ հեշտ սահմանել թէ ինչքան հեռի էր մեզանից մի աշա բարձրացած փոթորիկ: Լցար այնպէս արագաշարժ է, որ կայծակի փայլատակութիւնը տեսանփումէ գրեթէ նոյն բռպէին, երբ որ նա դուրս էր թռչում ամպերի միջից: Եւ որովհետեւ շառաչիւնը մի սեկունդի մէջ անցանումէ 1040 սանաւափ տարածութիւն, և մի գերմ. մղն ունի 24,000 սոնաւափ երկայնութիւն, ուրեմն մի փոթորիկ, որի թնդիւնը կամ որոտը լուսմնք 23 սեկունդից յետոյ, քան թէ տեսած էինք կայծակը, պիտոյ է հեռի լինէր մեզանից մի այդպիսի մղնուվ, կամ թէ երկու ժամի ճանապարհով: բայց եթէ մի և նոյն ժամանակն նկատումնք և կայծակը և որոտը, ապա կարող ենք բաւական հաւատի եղապիակել, որ կայծակը զարկել է մի մօտակայ տեղում, որ փոթորիկը ամեննեին մօտ էր մեզ և վասնդ կար:

Ծառաշիւնի ալիքանման շարժողութեան մի այլ հետեանք էր Արքայի կամ ձայնի անդրադարձութիւնը: Այսինքն, երբ որ շառաչիւնի շառաւիդքը զարկվումն կոշտ, ձգական մարմինների վերայ, զոր օրինակ, պատօրի, սարերի, ծառերի վերայ, ապա միւսանգամ գէպ ի յետ ևն սատում և զոյցացնումն արձագանգ: Այս արձագանգը շատ տեսակ տեսակ է լինում: պատճառ, սա երբեմն կրկնում է շատ և ամրող բառեր, և երբեմն, ասած խօսքի վերջին վանկը միայն: Եթէ պիտոյ է որ արձագանգը ստուգապէս լսելի լինէր, ապա հարկաւոր էր գոնիայ վաճառուն սոնաւափ հեռաւորութիւն այն մարմից որ յետ էր զարձուցանում ձայնը: Եթէ մարմինը առաքել հեռակայ է, ապա լինումէ արձագանգը բազմավանկ: շատ անգամ, արձագանգը զարձեալ գէպ ի յետ է ուղարկվում և դորանից յառաջանումէ մի բազմապատիկ արձագանգ:

Ծառաշիւնի մի առանձին յատկութիւնը նկատած ևն երկայնանե կամարաշն դաշլիճների մէջ: Այսինքն, երբ որ մի կամարի պատի մօտ խօսումէին ամեննեին մեղմապէս, խօսած բանը կարող էր

բաւական բացայաց լսել և հասկանալ մի այլ մարդ որ կանգնած էր հանդիպակաց պատի մօտ. բայց նոքա որ կանգնած էին երկուսի մջ տեղումը, ամենունին ոչինչ չեին լսում: Այլև, այդպիսի կամարակապ շինուածների մէջ աւելի սաստիկ է ձայնի հնչողութիւնը քան թէ ուրիշ տեղում, որովհետեւ նոցա մէջ շառաչիւնի շառաւիզը ամենայն կողմից յետ են գառնում և գորանով առաւել սաստիկանումն: Հառաչիւնի ալիքաձեւ շարժողութեան վերայ հիմնած է նշյնաբէս իշտիւնի կողմէն: սա մի փողաձեւ շինած գործի է, որ գրեթէ սրածոյր սկսանելով, գնալով գնալով աւելի լայնանումէ և վերջանումէ միւս ծայրումը: Եթէ խօսէիր մի բան նեղ բացուածի մէջ, ապա խօսած բանը լսելի էր շաս հեռի միւս ծայրի մօտ, որովհետեւ մայնի շառաչիւնը փողովակի ներսումը նորա ձգական պատուիր միջնորդութենով պահչվումէ միասին և ժողով, և կրկնապատիկ յետ է գարձուցանվում: Այսպիսի փողովակով կարելի է բան հասկացնել 3000 ոտնաչափ հեռաւորութենով: սա գործ է ածվում մասնանդ նաևերի վերայ:

Խօսակցութեան փողովակի հակառակը է շտաբիւնի կողմէն, որի պաշտօնը այն է, որ ըմբռնէ շառաչիւնը և լսոն ծայրի բացուածովը աւելի սաստիպուցած առաջնորդէ դեպ ի ականջը: Ծանր լսող մարդիկը այս փողովակի բարակ ծայրը պահչելով ականջի մէջ, լսումն աւելի հեշտութեամբ:

14. ՕՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒՅ:

Որովհետեւ օդը մարմին է և անդադար քարշվումէ երկրի կողմից, այս պատճառով ունի և ծանրապետան յատկութիւնը Զգականութիւնը և ծանրութիւնը, կապակցվելով միասին, պատճառումն օդի ձնչութեամբ: Ցած օդակցութը վերին օդակցյաներից ձնշվումն, առա ուրեմն ցածերը են նշյնաբէս աւելի թանձր և աւելի ծանր քան թէ վերինքը: Բայց որովհետեւ օդը ամենայն կողմից ձնշումն մէր վերայ, որովհետեւ մէք ամենայն տեղ շրջապատած նորանով և մէր մէջ դտանված օդը դուրսի օդին հաւասարակիու է, այս պատճառով ոչինչ մնեք զուռմ այս ձնշվութենից: Օդի ծանրութիւնը կարելի է սառցել, կը լով մի դատարկ սրուակ, ապա ջերմութեամբ հալածելով նորա միջի օդը, ամուր փակելով սրուակը և կրկն կշռելով նորան, երբ դատարկ էր օդիցը: Սորանից կը բացայսավի խսկյն որ սրուակը մի փոքր թեթեացած է: Փորձերով տեսած են, որ օդը 800 անգամ թեթեւ է քան թէ ջուրը: Օդի ձնշողութիւնը կարելի է հաւասարի կացուցանել, և մէտ մի նեղ փողովակ ուշ-

շակի կոխեիր ջրի մէջ, և վերին ծայրը փակեիր մատով և ապա ուղղահայեաց դէպ ի վեր բարձրացնեիր ջրիցը: Այս փորձի մէջ ջուրը կախած կը մնար փողովակի մէջ, որովհետեւ օդը յիշ էր ճշն- շում նորան: Բայց եթէ մատոք բաց թողուս փողովակի վերին ծայ- րիցը, խկցն վերևի օդը կը ճնշէր ջրի վերայ և սա չետեւելով իւր ծանրութեանը վայր կը թափվէր: Բայց եթէ փողովակի սոտ- րին բացուածը շատ լայն է, ապա ջրեղէն տափարակը չի մնայ հան- գարտ, և ջուրը ցած կը թափվի: Այս բանը կարելի է խափանել, մի մերթ թուղթ դնելով տակիցը բացուածի վերայ: Օդը կը սեղ- մէ յետոյ այս թղթի վերայ և ջուրը կը մնայ ամանի մէջ:

* Ես կերպով ներգործում օդը ուրիշ հեղանուտ մարմնների վերայ, զոր օրինակ ժիպակի վերայ. և սոյն այս ներգործութեանը օդի առաջնորդել է մարդկային իմացականութեանը դէպ ի դիւռը Շանրաշափի կամ բարօմետրի: Այս գիւտի պատմութիւնը լինումէ այսպէս: Վաղուց արդէն յայսնի լինելով ջրահան դործին, որի օդ- ութեանով ջուրը էին բարձրացնում ջրհորներից, 1643 թուա- կանին Ֆլորենտեան գուքսի այգելպանքը կամցան մի ջրհորից ջուրը աւելի բարձր դէպ ի վեր քարշել քան թէ սոլյորական շափն էր, այսինքն, 32 ոտնաշափ բարձր. Բայց ջրհան դործին անհնարաւոր գտանվեցաւ: Այս բանիս մտառու լինելով խոալցցի բնաքննիչ Տօր- րիչելին (որ ապրել է 1608ից մինչեւ 1647), և կամնալով ճըշ- գագես վերահասու լինել բոլոր հանգամանքներին, առաւ մի աղա- կեղէն փողովակ, լցրեց նորան ժիպակով, ամուր փակեց մի ծայրը, և մատը զրեց միւս ծայրի վերայ և այսպէս բներեց նորան մի ժի- պակալից ամանի մէջ, բաց թողլով մատը, Տօրրիչելին տեսաւ որ ժիպակը սիւնաձև կանգնած մնաց փողովակի մէջ 28 ճկոյթ բարձրու- թեանով: Եւ որովհետեւ ժիպակը տասն և չորս անգամ աւելի ծանր է քան թէ ջուրը, ուրեմն բարձրութիւնը ուղիղ համեմատութե- նով հաւասար էին մարմնների ծանրութեանը կամ թէ ծանձրու- թեանը: Ուրեմն մի ժիպակասիւն 28 ճկոյթ բարձրութեանով կամ թէ ջրեղէն սիւն 32 ոտնաշափ բարձրութեանով հաւասարակշիռ է այն բոլոր օդեղն սիւնին, որ ատմանվերայի յատակից հասա- նումէ մինչեւ բոլոր օդածովի վերջը: Այսպէս ահա վերահասու եղան օդի ծանրութիւնը չափելու արուեստին, և մի նոյն ժամանակումը հնար գտան սարերի ուղղահայեաց բարձրութիւնը չափելու: Ճու- տով նկատեցին նոյնպէս, որ ժիպակային սիւնը չէր հաւասար միշտ, և թէ այս փոփոխականութիւնը ըստ մեծի մասին ընկերակից է եղա- նակի փոփոխութեան չետ, և այս պատմառով սկսեցին դործ դնել

այս անօթը որպէս հնար նկատելու և յառաջուց իմանալու գալոց եղանակը: Այսինքն, ապակեղէն անօթի մէջ կայ մի, ոդից շատարկ, տարածութիւն, որ ժիպակը կարողանայ ազատապէս դէպ ի վեր ելանել: Եթէ ժիպակը փողովակի մէջ կամաց կամաց դէպ ի վեր է ելանում, սովորապէս համարումն, թէ լինելու է աւողապէս չոր եղանակ, բայց եթէ նա ցած է ընկնում, սովորապէս հետևումէ խոնա եղանակ: Բայց այդ գուշակութիւնքը չեն միշտ հաւատոի, որովհետեւ նոքա հիմնաւորվումն միայն օդի ծանրութեան վերայ որ կարող էր երբեմն այսպէս և երբեմն այնպէս սահմանվիլ: Ինչքան պարզ է օդը, այնքան ևս բարձրանումէ ժիպակը, և անդրադարձ կերպով:

Վ. Այլ նկատած են, որ ժիպակը փողովակի մէջ ցած է իջանում, երբ որ բարօնութրը տանումն մի բարձր սարի վերայ, որովհետեւ այն տեղ օդը աւելի նուրբ է, և օդեղէն սիւնը մէծ օդանովի մէջ աւելի փոքր է: Զոր օրինակ տեսած են, որ ժիպակը, երբ որ ուղղահայեաց բարձրացած էին մինչև 80 ոտնաչափ, մի դիմ ցած է իջանում, և այս նկատողութեան հիման վերայ, գործ են ածում բարսելով, աշարակների, սարերի և այլ բաների բարձրութիւնը չափելու համար:

Հետեւ լույլ այս նկատողութեաներին, կարելի է հեշտութեամբ հաշուել, թէ ինչքան սաստիկ ճնշումը օդը որ և իցէ որոշեալ մարմնի վերայ: Դիցուք զոր օրինակ, թէ մի չափահաս մարդու մարմի մակերեսովը բազկացնումը մատ 1378 քառակուսի ճկոյթ, առաջ այդպիսի մարմնի վերայ պիտոյ է ճնշէր մի ահազին ծանրութիւն 20,000 Փունտի: Վ. Այլ ծանրութիւնը զգալի չէր մարդուն, որովհետեւ ամենայն կողմից ներգործելով պահվումէր հաւասարակը շուռութեան մէջ և այդպէս չքանումէր: Օդի ճնշողութեան վերայ հեմած է նցյալէս ծծելու, շնչառութեան գործողութիւնը և միւս շատ ու շատ տեսիլներ: Եթէ կամենումնք շառաւ ռուսական թոքերը և կուրծքը, և դորանով անօրացնումնք նոցա մէջ եղած օդը, սորան թանձրացնելու համար, ներս է հոսում գուրսի աւելի թանձր օդը: Կայ այսպէս, ծծողութիւնը ուրիշ մի բան չէ, եթէ ոչ, անօրացնել օդը, որ ներգործումնք բերանով: Կայ բանի վերայ հիմնած է արինսահնութեան անօթների գործադրութիւնը: այս տեղ օդը չերմութենով դուրս է վարվում անօթի բերանից, և դուրսի թանձր օդի ճնշողութենով անօթի լոյնաշութն բացուածը ամրացնվումէ փափուկ մորթի վերայ: Մարմնի մէջ եղած օդը, մորթի մէջ արած հատուածներովը, ներս է մտանում անօթների մէջ և ի միասին գուրս է ճնշում արիւնը:

Օդի ձնշողութենից կարելի է նոյնպէս բացայայտել Աւրում
ւ փողովակի ներգործութիւնը, այս տեղ դուրս ծծելով օդը փո-
ղովակի միջից, որ կոխած էր մի հեղանիւթի մէջ, հեղանիւթը դուր-
սի օդի ձնշողութենով սեղմաւմէ գեղ ի վեր:

Օդի ձնշողութիւնը առաւել յայտնապէս հաւաստի է կացու-
ցանում այն Օդահանը, որ հեարել է Օտոտ Փօն Գերիք անունով
քաղաքապետը Մազդերուրդի: Առ մի մէքնայ է, որի միջնորդութե-
նով օդը մի փակած անօթից կարող է դուրս բերվիլ Օտոտ Փօն
Գերիք մարդը պատրաստել տուեց երկու պղնձի կիսագունդ 18
ճկոյթ տրամաչափով, ճրագուտվ օծեց նոցա եզերքը և ճշղապէս,
ոդախից, սեղմեց միմանց վերայ, յետոյ դուրս հանեց նոցա միջի ե-
ղած օդը այնուհետև գիսագունդքը, որ յառաջուց ինքն ըստ ին-
քեան բաժանվումէն միմեանցից, այնպէս ամուր միաւորված էին մի-
մեանց հետ, որ երկու կողմից ութ ձի լծած, ձգելով և քարշելով,
հազիւ թէ կարողացան պատառել այն կիսագունդքը միմեանցից, որ
եղաւ մի սաստիկ ճոյթիւնով: Այս գեղեցիկ փորձը կառարվեցաւ
1650 թուականին թագաւորական ժողովի մէջ բեգենսրուրդումը,
կայսր Գերգինանդ երրորդի և շատ միւս իշխանաւորների առաջն,
զարմացք բերելով բոլոր հասարակութեան վերայ: Հարցանենք
այժմ, ինչ էր պատճառը, որ այն երկու կիսագունդքը այնքան ա-
մուր կապվել էին միմեանց հետ. ահա դորա խորհուրդը. որովհետև
դուրսի օդը իւր բոլոր ծանրութենով սեղմաւմք նոցա վերայ և աշ-
խատումք ներս թափանցից օդից դատարկ տարածութեան մէջ: Բայց
թէ օդի ձնշողութիւնը այդպիսի գունդի վերայ ինշպէս աշագին
պիտոյ լիներ, կարելի է հետո իմաստասիրել նորանից, ինչ որ մին-
չև այժմ ասմեցաւ, Այսինքն. Ժիապիկեղն սիւնի բարձրութիւնը,
որ շափումէ օդի ձնշողութիւնը, բաղկացնումէ 28 ճկոյթ, որի ծան-
րութիւնը, թէ սիւնը ունէր մի քառակուսի ճկոյթ հաստութիւն,
կշռումէ $14\frac{1}{2}$ ֆունտ: Բայց այն երկու կիսագունդքը ունէին միասին
համարեա թէ 10 քառակուսի սանաչափ կամ թէ 1000 քառակուսի
ճկութաչափ մակերեսոյթ:

Օդահանի միջնորդութենով արած Են շատ արժանի յիշատա-
կի նկատողութիւնք և փորձք. զոր օրինակ վերքարշող փողովակի
մէջ եղած հեղանիւթը չէ թափվում անսարացրած օդի մէջ, թէև
ամնայն ուղղութենով կարդադրէիր փորձք: Բարօմետրը ցած է ի-
ջանում այնքան առաւել, ինչքան առաւել նրբանումէ օդը: Կմենե-
ւին զանազան մարմիններ — մի աղուամազ և մի կոտոր ոսկի — հա-
ւասար արագութենով վայր են լնկնում օդից դատարկած Օդահա-

նի զանգակի մէջ։ Չուր և սյլ հռանուտ մարմինք սկսանումն փըր-
փրալ, և դուրս են ձգում խրեանց մէջ պարունակված օդը։ Մի
բարակ, օդալից և փակած ապակեղջն անօթ փշրվումէ Օդահանի
տակ։ Առանիւթը չէ վառվում։ միջարբը և փոքրիկ թռչունքը կա-
րող չեն թռչել և մռանումն շուտով։

15. Օրէ վրը-նիւն լուս-նիւն։

Ա երեսում ասվեցաւ աշա, որ մարմինքը ենթարկված են լու-
ծականութեան, որի ներգործող պատճառքը էին կէս մի ջուրը, կէս
մի կրակը և կէս մի օդը։ Ամենից առաւել սաստիկ ներգործումէ օ-
դի զօրութիւնը, որովհետեւ օդի մէջ վերլուծանվումն նյոյն իսկ ջուրը
և վառուն նիւթը, և դորանից լովումէր նա օտարազգի շղթիներով,
կամ թէ, ինչպէս ասումն ընախօսքը, յանո-եց։ Այս պատճառով
ասումն նորան Ծոգեպատ։ Այսինքն, թէ օդը անցանումէ ջրաւետ
մօրուտ սահմանների վերսից, ապա վերլուծանումէ նա ջրեղջն մաս-
նիկները և սորա ներ են մտանում նորա ծախտիքի մէջ, և օդը գի-
ճանումէ։ Սորա հակառակ, չըրմ ու ցամաք աշխարհներումը, օդը
ընդունումէ իւր մէջ շատ վառուն նիւթեր։ Նա չորանումէ և ժողովե-
լով հետ զհետէ պատրաստումէ նիւթ, կործանական օդային երեսյթ-
ների համար։ Ինչքան աւելի այսպիսի վերլուծութիւնք, կամ շո-
գիք-թէ ջրայինք և թէ վառունք-պարունակված էին օդի մէջ,
այնքան ևս փոքր յարմար էր նա շնչառութեան համար։ այս սցո-
պիսի օդը լինումէ շատ անգամ մահացուցիչ, կամ թէ գռնեայ ա-
ռողջութեան վնասակար, մանաւանդ երբ որ մնումէր փակած։ Ըլ-
շառութեան համար ձեռնոտու էր այն օդը, որի մէջ մի վառ ճրագ
կամ թէ մի բորբոքեալ ածուխ չէ հանդշում։

16. Առա-եւ որ-նիւն քիոս-նիւն դե-իւ օդի։

Վտօնսփերեան օդը, որի գլխաւոր բաղկացական մասները են
բնա-նիւն և իւղա-նիւն տրեւ, ոչինչ ժամանակ բոլորովին ազատ
չէ օտար խառնուածներից, ըստ որւմ կար նորա մէջ մի սաստիկ
վերլուծիչ զօրութիւն։ Այս օտարազգի խառնուածներով յառաջա-
նումն զանազան տեսակ օդեր կամ գաղեր։ Մեք յիշատակումնք
այս տեղ առաւել ծանրակշիռքը, որոնց տեղեկութիւնը հարկաւոր
էր բնարանութեան մէջ, և որոնցով բացայատվումէին քանի մի տե-
սիլներ։

17. Կիւն-իւ օդ, իւ բնա-նիւն ք-ն։

Հաստրակ կամ ատօնսփերեան օդի մի հարկաւոր բաղկացական
մասը է իւր վառուն ընութենից ազատված օդը կամ թէ բնա-իւն

է՛ւ: Այն է . ամենայն մարմինք կարող են ջերմանալ , բայց ոչ ամենայն մարմինք վառուն են : Այն մարմինքը որ վառվումէին , զոր օրինակ փայտ , ծծումբ , բորակ , ասվումն բոբուհին , բայց նորապրոցից հանած էին այս բորբոքական կամ վառուն նիւթը , ասվումն աբոբուհին : Եւ որովհետև հասարակ օդը աղատվելով իւր վառուն նիւթից , աւելի զտվումէ և յատակվումէ , այս պատճառով աւելի մաքուր , աւելի յարմար է շնչառութեան համար և աւելի առողջ է . այս օդի ներս շնչելութիւնը ձեռնտու է շնչական կիանքին . նա էր նոյնպէս , որ շուտացնումէ մարմինների այրմիլը : Կորա պիտանութիւնը առողջութեան մասին յիշառակեցինք ահա . այս բանը ապացուցանվումէ մանաւանդ կրծացաւութեան և թոքախտութեան մէջ : Դառվող մարմինքը աւելի պայծառութեամբ և ջերմացուցիչ զրութենով ճառագոյթումն թթուանիթ գաղի մէջ : Այս պիսի յատկութենների պատճառով այս տեսակ օդին ասումն և էրէտ կամ բնաւին ո՞ւ , որ այժմ ասվումէ սովորաբար թթուանիթ գաղ :

Այս տեսակ օդը թէպէտ ոչինչ տեղ բնածին կերպով հաւաքված չէր առատապէս , բայց բուսականների տերենքը անդադար դուրս են փշում նորան , ինչքան որ արեգակի փայլումէր նոցա մերոյ , բայց բուսականների ծաղիկները արտաշնչումն ըստ մէծի մասին խեղդողական օդ : Այս պատճառով , թէ կամենութիւր մի սենեկի մէջ ծնուցանել առողջարար կամ կենսական օդ , առա դիր տերեւաշատ բուսականներ արեգակի փայլողութեան տակ , բայց հեռացրու , երբ որ չքացել է արեգակը , որովհետև յետոյ արձակվումէր նոցանից վլասակար օդ : Սորանից բացայստ է , թէ ինչ պատճառով զուարթ էր մըր սիրտը , երբ որ արեգակի փայլողութեան միջոցում ման է-նիք գալիք մի անտառի մէջ , և թէ ինչ պատճառով գաշտի օդը աւելի առողջ է . քան թէ օդը մարդաշատ քաղաքների մէջ , այլև թէ ինչն համար երեկոյեան օդը չէ այնքան օդտակար մըր առողջութեանը : Նոյնպէս շատ վեստակար է չոտաւէտ ծաղիկներ և պատշներ սենեակների , մանաւանդ թէ ննջարանների մէջ պահէլ . այս բանը շատ անգամ արագահաս մահ է բերել թուլաջիղ մարգերի : Այս կրականիւթից աղատած , օդը ստացվում նոյնպէս հրաշեկ մանգանէղից , հալած բորակից , ջերմացրած մետալեան բուռից , մանաւանդ թէ ժիպակային բուռից :

18. Խեղութեան օդ , ոդ առաւել և հրանիւն օդ , իւղունիւն իւն :

Այն օդին , որ ծանրաբեռնած է վառուն նիւթով , ասումն էրունիւթեան կամ իւղութեան օդ : Կա ունի մի ներդարծութիւն որ ա-

մննեին հակառակէ է կենսական օդին. մարդ և անասուն մեռանումն նորա մէջ, նա ձեռնտու է բուսականների աճողութեանը, բայց կրակը և ճրագները հանդչումն նորա մէջ։ Այս տեսակ օդ կարելի է ծնուցանել, եթէ մի վառ ճրագ դնէիր մի օդախից փակած զանգակի տակ. այս տեղ վաշումեր ճրագը այնքան, ինչքան որ փակած օդի մէջ կար զեռ ևս թթուանիւթը. երբ որ հանգաւ ճրագը, մնումէր օդի մէջ խեղդողական նիւթ միայն, որովհետեւ թթուանիւթը կերած էր բոցովը։ Եւ մարդու և անասունի շնչառութենով վերլուծանվումէ օդը գեղ ի իւր բաղադրական մասունքը. այսինքն թթուանիւթը յետ է մնում թոքերի մէջ, և արիւնի միջնորդութենով հասանումէ մարմինի միւս մասներին, բայց խեղդողական նիւթը արտաշնչվումէ յետոյ։ Այս պատճառով, մի կենդանի արարած չէ կարող երկար միջոց ապրել մի նեղ տարածութեան մէջ, ուր չէր կարող թափանցել այլ օդ, որ լցուցանէր կերած ու սպառած թթուանիւթը։ Այն խեղդում խեղդվումն և անասունը և մարդը կրակի մէջ, կամ թէ այնպիսի պահարաններում, ուր վառվառմին շատ ճրագներ, որ և օդախից փակած էին։ Այս բանը լինումէ ոչ թէ օդի ամենին պակասութենից, այլ միայն թթուանիւթի պակասութենից։ Այդպիսի տեղերում և ճրագների պայծառութիւնը աղօտանումէ հետ զհետէ։ Այս բանից ամբոխը զանազան տեսակ նիւթ է քաղել մնապաշտական կարծիքների համար, ըստ որում տեղեակ չէր բնական զօրութենների պատճառներին և ներգործութեններին. զօր օրինակ կարծումն, թէ պիտոյ է մեռանէր հիւանդը, որի սեննեկումը հանդչումն ճրագները. բայց սա էր միայն ներգործութենը օդի, որ զբակած է իւր թթուանիւթից։

Խեղդողական նիւթը գյանումէ փտեալ մարմինների շոգիներից, գոլորշի արձակող ածուխից, ծաղիկներից և պտուղներից, այլ և պէսպէս մետալներից, երբ որ նոքա փակած էին նեղ պահարաններում. այս պատճառով զգուշալի է երկար ժամանակ փակ մնացած օթեանների մէջ մտանել, որովհետեւ այդ տեղ ըստ մէծի մասին ապականված էր օդը։ Եւ ձկների փամփուշը լցուած է այդպիսի օդով, ըստ որում խեղդողական օդը աւելի թէ մէծէ է քան թէ հասարակ օդը և այդ պատճառով առաւելապէս ձեռնտու է լողացողութեանը։

Այն օդը, որ պարունակումէ իւր մէջ շատ խեղդողական օդ, բարեգացնելու համար առաջարկած են զանազան հնարներ, զոր օրինակ շոգիացնեցանել օդի մէջ խլօրեան կրանիւթ. բայց աւելի պատշաճաւորը է ատմօնֆերան օդի ներսահոսութիւնը, որովհետեւ զորա-

Նովլ վերատին նորոգվումէ հաւասարակշռութիւնը օդի զանազան մասների մէջ:

Խնչքան և խեղդողական օդը ինքն ըստ ինքեան վնասակար էր, այնու ամենայնիւ հարկաւոր է նա շնչական կեանքի համար. պատճառ, մաքուր կենսական օդի կամ թէ թթուանիթ գաղի մէջ պիտի այս է արագավաղ լինէր կեանքի ընթացքը և գորանով կարճանար յայտնապէս:

19. Ա-ռ-ռ-ռ- օդ, Զ-ը-ն-է-ն դ-ը-

Վելի թեթև, քան թէ մինչև այժմ յիշածները, էր Ա-ռ-ռ-ռ- օդը, որ և, ըստ որում այրվելով յետ է թողւմ ջուր, ուրեմն և կերպաւորումէ օդի բաղկացական մի մասը, ասլումէ նոյնպէս Զ-ը-ն-է-ն դ-ը-ը: Նա վառվումէ շատ հեշտ, և թէ ստացաւ թէև ամենափոքր մատառութիւն ատմօնֆերեան օդի հետ, և ամենին անյարմար է կրակի պահպանութեան համար: Պատճառ, երբ որ նա հանդիպումէ իւր վառուն նիւթից ազատված օդին, կամ եթէ մատեցնէիր նորան մի վառ ճրագ, իսկոյն բորբոքվումէ նա մի սաստիկ ճայթիւնով և ուժգին թնդիւնով: Այսպիսի օդ կարելի է արուեստով դոյցուցանել, երկաթի խարտածքը կցորդելով անօրացրած արջասպեղէն իւդի հետ: Բայց շատ անգամ լինում և բնածին, յառաջանալով փոսած մարմիններից և անասունների և մարդերի մարտզական գործարանների մէջ: Այդ պատճառով, գտանիլումէ նա յաճախ քակիրատեղերի մօտակայքումը, գերեզմանատներում, հին գետնափորերի մէջ, մետալահանքերի մէջ և այլն, ուր շատ անգամ պատճառումէ նա վտանդաւոր բուժիւններ: Այլի հանդիպումներ այդպիսի օդի տղմուտ ճախնագետնի մէջ, ինչ տեղից բարձրանումէ նա փամիուշների պէս, և եթէ մատեցնէիր նորան մի ճրագ, իսկոյն վառվումէր նա մի կապատգյուն բոցով և այրվումէր որպէս զինու օդի: Այդ օդը մահաբեր է մարդու և անասունի, բայց բուսականքը աճումն նորա մէջ, թէև չը լինէր նա խառնած ատմօնֆերեան օդի հետ:

Այս տեսակ օդը առիթ է առել մի անապաշտական պատմութեան, թէ թաղած գանձերը այրվումնին, ըստ որում այն ամանների մէջ, որոնց մէջ ամիսփած էին այդպիսի գանձեր, դոյանումն վառուն օդ և փայլումէ խաւարի մէջ ինչպէս շրջմոլի կրակներ, որ դշանումն նոյնուէս այս տեսակ օդից:

Որովհետեւ վառուն օդը 12 անգամ աւելի թեթև է քան թէ ատմօնֆերեան օդը, այս պատճառով գործ են ածումն նորան օդապարիկ գունդերի և օդագնաց ձնանապարհորդութեան համար: Այսինքն, պատրաստումն մծամեծ գունդեր, խէժապատ կտաւից կամ

մատաքսեղէնից, լցուցանումն սորանց վառուն օդով և դէպի ի ցած ամբացնումն գունդի վերայից մի նաւատեսակ հիւսուածոյ, որի մէջ նասումն յանձնառութը այդպիսի համարձակ ճանապարհորդութեան, Առաջին օդապարիկ գունդը լցուց վառուն օդով, 1783 թուականին, մի Քրանսիացի, Հարլ անունով. սորանից մի երկու ամիս յառաջ, Մանդոլֆիկ Քրանսիացին արձակեց մի գունդ, լցուցած այնպիսի օդով որ չերմութեամբ անօսրացրած, ուրեմն և աւելի թեթևացրած էր: Աւելի ժամանակներումը որպէս օդագնաց ճանապարհորդը գերազանց անուն են ստացել մանաւանդ Քլանշարը և, նորերումն, ուսումնապետ Բէյինհարդու գերմանացին:

* Ա, երկայ ժամանակում, այս օդը, շատ աշխարհներում, ստացել է մի բաղմադիտանի գործադրութիւն, այսինքն լուսաւորութեան համար, որ ասպումէ Գունդին լուսաւորութիւն: Այս բանի համար արուեստով զցացուցած, վառուն օդը փողովակների միջով տանումն ուր և կամեին. այս փողովակները ունին փականք, որ բացվումն, և վառուն օդը բորբոքվումէ իսկցյն և տալիս է շատ պայծառ լցու: Այս օդը կարելի է այդպիսի փողովակների մէջ շատ մղոն հեռաւորութենով տանել, և նա վառվումէ այն տեղ միայն, ուր, փականքը բացվելով, հաղորդվումէ արտաքին օդի հետ, բայց փողովակների ներսումը չէ վառվում:

Վ մն մարմիններ, որ վառվումն, ունին այդպիսի օդ իւրեանց մէջ: Շատ անգամ նկատումնեք նշյնպէս, որ այրմելուց յետոյ երեւումէ ջուր: Այս աեսիլքի պատճառը է վառուն օդը, որի մի հարկաւոր բաղկացական մասը է ջուրը: Կա յառաջանումէ ջրից, և անդրադարձ կերպով ջուրը գոյանումէ կենսական օդի և վառուն օդի պատշաճաւոր կշռաչափով արած բաղադրութենից, որ բորբոքված էր ելեքտրական կայծով:

Ո առուն օդը է նշյնպէս մարմինների ինքն ըստ ինքեան վառվելու պատճառը: Խոնաւ խոտը վառվումէ, և եթէ մօտենումք դորան դուրսի օդը, ապա շատ անգամ, արագութենով և սաստիկ ճայթիւնով գուրս էր վաղում բոցը: Եթէ երկաթի խարսածքը խառնէիր ծծումը հետ և թրչէիր ջրով, և այս բաղադրութիւնը մի քանի սոնալափ խոր թաղէիր հողի տակին, ապա վառվումէ դա, պատառումէ հողը և ունէր մի փոքրիկ նմանութիւն հրաբուղիս սարի հետ:

20. Տեսւին օդը, Ճ-հ-դ-հ-ու օդը, օդեղին նիւ-ն-իւ-ն, -ն-ի-ն-ի-ն- է-է-է-

Ի-ո-լո-ր տեսակ օդիրի մէջ առաւել վաղուց ծանօթացած էին տեղական օդին, որ ստացել է իւր անունը նորանից, լստ որում կար-

ծումեին սկզբումը, թէ զա մի հատ տեղական, մարմիններից դուրս ձգած, օդն է, դա առաւել ծանր օդն է իւր բոլոր տեսակների մէջ, պիտանի չէր ոչ վառողութեան և ոչ շնչառութեան համար և բաղկացնումէ ջրանիւթ գաղի մի էական մասը, որ հանքերի մշակները սառումն չը եւնահի: Դա շատ յօժարութենով կապակցվումէ ջրի հետ և տալիս է նորան թթուային համ, որանով յառաջանումն հանքական թթու ջրերը: Շատ անդամ գտանումն նորան բնածին, և առաւել ազդու այն Ծնական քարանձաւի մէջ որ կայ Նեազոլի մատ, ինչ տեղ այդ օդը անդադար դուրս է արձակվում: Այն տեղ շատ շուտով հանգչումն լապտերը և շնչառորդը կորուսանումն խկզն իւրեանց զգայութիւնը: Արուեստական կերպով ճնուցանումն նորան գինու, գարեջրի և քացախի խմորվելովը, մանաւանդ երր որ այս հեղանուուքը կերպարանափոխ էին լինում: Նշյնպէս վասնգառ և որ էր ներս մոտանել գետնափորի մէջ, երբ որ կատարվումէր այս խմորվիլը: Գարեջրի տակառների մէջ օդեղէն թթուութիւնը նըստումէ շատ անդամ մի ոտնաշափ բարձրութենով գարեջրի վերայ: Եթէ մի շիշ լցուցանէիր այդպիսի օդով (որ շատ հեշտ բան էր, ըստ որում հարկաւոր էր միայն մի բաց գատարկ շիշ ներս դնել այդպահի օդակցյալի մէջ, և զա իւր ծանրութենով կը լցվէր նորա մէջ, վարելով աւելի թեթև ատմօնվերեան օդը գեղի փեր) և առա դնէիր մի վաս ճրագ և մի փոքրիկ կենդանի շնչառը ապակեցէն բաժակի մէջ և գորա վերայ ըջէիր այն շիշը, առա կը շիշանէիր ներս իսկոյն ճրագը և կը մեռանէր այն կենդանին, թէև, ըստ երեւթին, ոչինչ ներս չէր մտած բաժակի մէջ:

Վ. յապիսի օդ բաւական առաս պարունակված էր և կրաքարի մէջ, սորանից արձակվումէ նա, այրելով կրաքարը. պատճառ, ջերմութեան մէջ, այս պակած տեղողական օդը միւս անդամ ստանումէ իւր սկզբնական ձգականութիւնը, և այդ օդից՝ ազատված կրաքարը ասվումէ այնուհետեւ վեճռանէ իւր:

Վ. մէլի արժանի էր յիշատակութեան այսպիսի օդի ազդակցութիւնը Ածուխի հետ, և այս պատճառով ասվումէ նա նշյնպէս Անդինութիւն էր կամ Անդայի Բնութագիւն: Այսինքն, երբ որ ածուխներ այրած էին կենական օդի մէջ, առա գոյանումէ այս ածխային թթուութիւնը կամ տեղական օդը, և յառաջացնումէ նշյնպէս աղի տեսակներ. նշն իսկ ազնիւ դիմանուը այրվելով, վերլուծանվումէ այսպիսի օդ. ածխային թթուութիւնը ըստ մասին դուրս են փչում և մարդը, անառունը և բուսականը. նա բաղկացնումէ որպէս թէ քսաներորդ մասը, շատ անդամ, յիսուներորդ մասը ատմօնվերեան օդի:

Ա երեսումը յիշվեցաւ աշա, թէ այս տեսակ օդը շատ յօժարու-
թեամբ զուգաւորվումէ ջրի հետ. այս յատկութիւնը ջրի կարելի է
գործ ածել, ոյդ օդը գինու գետանաների մէջ անվեսա կացուցանելու
համար. Այսինքն տակառի փորաձակի վերայ, երբ որ գեռ ևս մնու-
մէր նորա մէջ չխմբրված գինի, դնումն մի թեքած, մետալաթեր-
թեայ փողովակ, որի ծայրը տարիվում մի ջրալից ամանի մէջ ջուրը
ընդունումէ իւր մէջ զցացած ածխացին թթուութիւնը, այնպէս որ
նա չէ կարող փոխադրվիլ օդի մէջ և ապականել նորան, թէպէտ
անգագար պղպջակներ բարձրանումէն ջրիցը:

Արովինեթ այս օդը պարունակումէ իւր մէջ ազդու, վերլուծա-
կան, և փոտոթեանը ընդդիմացող զօրութիւնը, այս պատճառով կա-
րող է յաջողակ և զգոյշ բժշկի ձեռքում դառնալ մի ընտիր բժշ-
կական գեղ նեխեալ տենդի, խոլիսնցգետի (կերցաւի), խոցերի և այլ
կատաղի ցաւերի մէջ, Այս օդը խառնվելով ջրի և ըմզելիների հետ,
ոչ թէ ամենեւին անվեսա էր, այլև տալիս էր մի պատռական, ա-
ռողջարար ըմզելի, ինչպէս ապացուցանումն շատ առողջարար աղ-
րիւրներ, որոնց մէջ այդ օդը բարձրացնումէր մի գլխաւոր բաղադրա-
կան մասը:

Եթէ բաց ևս առնում մի, երկար ժամանակ փակ մնացած գա-
րեջրի սրուակ, ապա բարձրանումէ նորանից մի շոգի. սա էր ած-
խացին թթուութիւն. Եթէ սա բոլորսին հեռացած էր գարեջրիցը,
ապա անհամ էր գարեջուրը և կարող էր միայն ախորժելի դառնալ,
Եթէ վերստին զուգաւորէիր նորան ածխացին թթուութեան հետ
կամ թէ նոր ի նորայ տայիր նորան խմբրվիլ,

1. ԶԱԿԱՐԻՅԱ:

Վ. յնքան ևս հարկաւոր և պիտանի է ջուրը, ինչպէս օդը. Ա-
ռանց ջրի կարող չեն բուսականքը ածել, ոչ մարդիկ և ոչ անա-
սունք իւրեանց ծարաւը հանգուցանել, ևս քանի քանի յարմարու-
թեներից պիտոյ է զուրկ լինէր մարդը առանց ջրի: Նա չէր կարող
մարդիլ իւր մարմինը, ոչ եփել իւր կերակուրը. ջուրը շարժումէ
նորա աղօրիքը, նորա միւս մէքենայքը: Ջրի քամակի վերայ լող
տալով շրջումն նորա նաւերը, հաղորդվումն միմեանց հետ հեռաւոր
աշխարհներ և փոխադարձարար տալիս են միմեանց գթառատ մօր ընու-
թեան բերբերը և տուբբերը: Այլև ջուրը է առաւել զօրաւոր թշնա-
մին և առաւել կարող հարկադիրը և սանձահարիչը կրակի, երբ որ
սա իւր կապերիցը արձակված, կործանումն սովառնալով ներս է մտա-

Նում մարդկեղէն ձեռքի շինուածների մէջ, որ ուտէ և ոչնչացնէ ամենայն սեփականութիւն։ Այս, ջուրը ևս կարող է մահ և կործանութիւն տարածել, երբ որ հեղեղների միջոցին դուրս է գալիս իւր սահմաններից և ապականելով պատումէ սերմանած դաշտերը և մարդագետինքը։ Բայց այս վնասը փոքր էր միայն, չամեմատելով այն բազմատեսակ օգուտներին որ նա հասուցանումէ մարդուն։

Ջուրը սովորաբար խառն է օտարատեսակ բաների հետ, և շատ սակաւ գտանվումէ անշատ բանուր։ Մաքուր ջուրը պիտոյ է լինի շատ պարզ, անգոյն, անհօտ և առանց համի։

Ջուրը, նայելով այն բանին թէ ինչ տեղերում գտանվումէ նա, բաժանվումէ անձրևային, աղբերային, ծովային և ճահնային ջուր։ Աւելի թեմն և մաքուր էր անշատ ջուր, մանաւանդ երբ որ ժողովումէին նորան մի քանի ժամանակ անձրեւ եկած լինելով, երբ որ օդը անձրեւ վայր թափակելովը յստակվել է նորա մէջ լողացող օտարատեսակ մասներից։ Զարմանալի է այն նկատողութիւնը, որ անձրեւ ջրի սեփական ծանրութիւնը ամենայն աշխարհներում հաւասար է։

Ջուրը շոգիներով անդադար բարձրանումէ երկրից դեպ ի երկինք, վերին օդի մէջ այս շոգիքը ատանումն ամպերի կերպարանք, և այս ամպերը հողմից այս կողմ ու այն կողմ վարժելով և բոլոր աշխարհների վերայ տարածվելով, դարձեալ ցած են թափակում երկրի վերայ որպէս ցող, անձրեւ և ձիւն։ Այսպիսի կերպով ամպերից գուրս հոսած ջուրը ներա է մտանում երկրի ծոցի մէջ, պտղաբեր է շինում նորան և առիթ է տալիս նոյնպէս աղբիւրների գոյանալուն։ Այս բնադիր կարգադրութենովը անձրեւ ջուրը թափակումէ և ամենաբարձր սարերի կատարների վերայ, թափանցումէ նոցա ձեղքերի և ծակերի մէջ, իւր բնական ծանրութենով իջանումէ դեպ ի խորքը և որպէս աղբիւրներ դուրս է բղխում երկրիցը։ Որովհետև ջուրը շատ հեշտ վերլուծանումէ հողային և այլ տեսակ մասներ, և յօժարութեամբ խանանվումէ նոցա հետ, այս պատճառով աղբիւրի ջուրը ոչինչ ժամանակ ամեննեին մաքուր չէ տար յառելուածներից։ Զոր օրինակ, կապակցվելով երկաթային մասների հետ, ստանումէ նա թթու համ, աղերի հետ, աղի համ, և ասվումէ հանուխոն ջուր։ Խթէ այդպիսի աղբիւրների ջուրը ձեռնտու է առողջութիւնը պահպանելու կամ վերաբին նորոգելու, ապա այդպիսի աղբիւրը առվումն ուղղութեան բնիքներ, և որովհետև նոցա ջուրը գործ է ածվում լուացութեան համար, ասվումն նորա բժշկութեան բանի։

Երբ որ շատ աղբիւրներ հոսելով միանումն, գորանից յառա-

ջանումէ մի Առաջ. Երբ որ շատ առուներ զուգախօառնվումն միմնաց հետ, բաղկացնումն գերեւ, որ եթէ թափլումէին ծովի կամ մի ընե մէջ, ասվումն ձեռվարդ, որ ամենայն օր կրկին հասուցանումն ծովին այն պակասորդը, որ կրած էր նա արտաշնչութենով: Ծովի ջուրը առաւել ծանր է և այդ պատճառով՝ կարող էր տանել իւր վերայ այնպիսի ահագին բեռներ, ինչպէս շատ անգամ էին այն ծանր բեռնաւորած նաևքը:

Յուրը ճանապարհորդելով երկրի ներսովը, շատ անգամ զուղաւորվումէ ջերմացած մարմնների հետ և ջերմանումէ ինքը ևս սորանից յաւաջանումն տաք և ջերմ աղբիւրներ:

2. ՁՅՈՒՆ ՃԱՆՐԱ-ՇԻԽԱՆ:

Յուրը 800 անգամ աւելի ծանր է քան թէ օդը, և գորանով կարող էր մեզ զանազան մեծամեծ օգուտներ բերել: Իւր ծանրութենով մզումէ նա աղօրիքը, որովհետեւ իւր բեռնականութենով աղօրիքի անիւր և թիակները դեպ ի վայր է ճնշում և գորանով պտոյտ է ածում անիւր: Ծանրութիւնը պատճառ էր նշյալքս այն բանին, որ մարմինքը լող էին տալիս ջրի մէջ, պյսինքն, երբ որ ջրի հետ զուգաւորվումէր մի ամուր մարմին որ անելի թեթև էր քան թէ ջուրը, ապա կարող չէր նա ջուրը ամեննին արտաքսել իւր տղից, այլ այն չափով միայն, որ այնքան ջուր նորա տակից դուր էր փախչում, ինչքան նյոն խկ մարմինը ծանր էր: Գիցուք թէ մի խորանարդ ունաշափ ջուր կշուռմէր 66 ֆունտ, ապա բացայաց էր, թէ ջուրը իւր ծանրութենով ինչքան բեռներ կարող է տանել: Բայց ծանր մարմինքը չն լողում ամեննին ազտապէս ջրի երեսի վերայ, այլ որչափ և իցեւ ներս են մտանում ջրի մէջ, և ամենայն ժամանակ այնքան միայն խոր, ինչքան որ պիտոյ է լինէր խորանարդ տարածութիւնը որ կարող էր պարունակել այնքան ջուր, ինչքան հարկանոր էր, հաւասարակշի մնալու նորա վերայ լողացող մարմինի հետ: Թէպէտ շատ մարմիններ իջանումն դեպ ի ջրի յատակը, երբ որ մի քանի միջոց կացած էին նորա երեսին, բայց սորա պատճառը այն է, որ շատ ջրեղէն մասունք ներս մտանելով մարմինի միջածակերի մէջ, ծանրացուցած էին նորան: Առաւել շատ տեսակները փայտի լող են տալիս ջրի վերայ, որովհետեւ շատ աւելի թեթև էին քան թէ սա, բայց միւսները խկոյն ցած էին իջանում իւրեանց ծանրութեան պատճառով, բայց և այնպիսի մարմինք, որ առաւել ծանր են քան թէ ջուրը, կարելի է լողացական կացուցանել, եթէ տայինք նոցա այնպիսի կերպարանք, որ նոքա բըս-

նէին աւելի ընդարձակ տեղ, Երկաթը աւելի ծանր է քան թէ ջուրը և չէ լողում նորա մէջ, ուրեմն մի երկաթանիւթ քսան փունտի ծանրութենով իշանումէ դէպ ի յատակը. բայց եթէ այդ նիւթը տափակացնէիր և տայիր գորան մի մակուկի ձև վեց խորանարդ ոտնաշափ ներբին տարածութենով, ապա այդ երկաթանիւթը ոչ թէ միայն լող կը տար, այլ կարելի է նորան բեռնաւորել 376 ֆունտ ծանրութենով, եթէ մի խորանարդ ոտնաշափ ջրի ծանրութիւն ընդունվումէ 66 ֆունտ: Պատճառ, որովհետեւ մակոյիկը պարունակումէ 6 խորանարդ ոտնաշափ, և մի խորանարդ ոտնաշափ ջուրը = 66 ֆունտի, ապա կարող է մակոյիկը, յառաջ քան թէ ցած կ'իջանէր, մի ջրանիւթ 6 անգամ 66 ֆունտի չափ իւր տակից գուրս ՃՆՀԵԼ. 6 × 66 = 396 ֆունտի: Սորանից դուրս հանած երկաթի յատուկ ծանրութիւնը 20 ֆունտ, = 376 ֆունտի: Եթէ մարմինը ինքն ըստ ինքեան աւելի թեթև էին քան թէ ջուրը, զոր օրինակ փայտը, ապա կարելի է նոցա տանելութիւնը աւելի ևս շատացնել, գոգաւորելով նորանց, որովհետեւ այդպէս աւելի ևս թեթևանումն նոքա քան թէ մի ջրակցոյ, որ ունէր նոցա հետ հաւասարապէս մեծ տարածութիւն. և այս պատճառով մի գոգաւորեալ մակոյիկ կարող է տանել մեծամեծ բեռներ: Այս մի նաև շատ անգամ կրում մի աշազին ծանրութիւն առանց ընկղզիվելու. զոր օրինակ, պատերազմական նաևրը: Խեղզված մարդիկը և այլ մեռած շնչաւորների մարմիններ ջրի մէջ ցած են իջանում դէպ ի յատակը, և մնապաշտութիւնը, հիմնաւորվելով մի վայր ի վերց արած նկատողութեան վերայ, հաստատում որպէս թէ ջուրը իններորդ օրումը գուրս է ձըգում նորանց: Այս բանը լինումէ ճշգաղէս սահմանեալ բնական օրէնքներով և ոչ թէ մի օրովեալ ժամանակից յետոյ: Այսինքն, երբ որ մարմին հոսանուտ մասները, արիւնը, փորոտիքը, միւր ըսկած էին խմորիլ, ապա ուղղումն մարմինը և նորա մէջ դցացած օդը տալիս է մարմին աւելի թեթևութիւն քան թէ ունի ջուրը և այսպէս բարձրանում մարմինը և լող է տալիս ջրի երեսին, եթէ այլ խափաններով չէր պահպատմ ջրի մակերեւութիւն ներբց: Այն իսկ պատճառով կարելի է շատ հեշտ մեկնել, թէ ինչու համար ճարպալիր և սպնդային մարդիկ չեն ցած իջանում ջրի մէջ, թէպէտ նոքա երրեք ուսած չէին լողալ: Այդ բանի պատճառը այն էր որ նոքա չէին այնքան ծանր, ինչքան նոցա մարմինի հետ հաւասար ջրաշափի: Այս արած են զարմանալի փորձնը շատ ճարպալից մարդերի հետ: Մի քանիքը սոցանից, երբ որ բռնութեամբ քարշած էին նորանց ջրի տակը, խեցյն բարձրանումէին դէպ ի ջրի երեսը,

երբ որ դադարումէր այն զօրութիւնը որ պահումէր նորանց ջրի տակին։ Թէսկէտ երեսում, որպէս թէ մարդը ի բնէ ընդունակ չէր լողալու, և թէ նա պիտոյ է արուեստական կերպով ուսանէր սորան, բայց այդ բանը այն անսովոր զրութեան հետեանքն էր, որ նա լողալու ժամանակին պիտոյ է տայ իւր մարմինն, և այն երկիւղի հետեանքը, որ սկզբումը գալիս էր նորա վերայ այդ գործողութեան մէջ։ Որովհետեւ կատարած փորձներ ցցց են տուած, որ հասարակ մարդիկ, մասլով հանդարս, շեն ընկղմիում այնքան խոր ջրի մէջ, որ առ անցանէր նոցա գլխի վերայից։ Կայ իսկ նիշար սկրային մարդիկը չէին ընկղմիում ամենեին։ Աւելմն մարդու մի փոքր թեթե է քան թէ ջուրը, այդ աւելի թեթեւութեան պատճառը կարելի է բացայատել այս նկատողութենով ահա, որ արած է հազարաւոր տարիներ յառաջ։ Ծանր մարմինները երեսումն ջրի մէջ այնքան աւելի թեթե, ինչքան որ բաղկացնուումք այն ջուրը, որ նորա իւր տեղից արտաքած էին։ Այս պատճառով և մարդուս մարմինը ջրի մէջ լինում փոքր ինչ աւելի թեթե և աւելի ընդունակ լողալու։ Այս նկատողութիւնը առաջնորդել է դէպ ի մի ծանրակշիռ յայտնագործութիւն։ Որովհետեւ ծանր մարմիններ ջրի մէջ, համեմատաբար իւրեանց կիւրեան բովանդակութեանը, կորուսանումն իւրեանց ծանրութիւնը, ուրեմն մի ֆունտ սովոր ջրի մէջ պիտոյ է աւելի ծանր լինէր, քան թէ մի ֆունտ արծաթ կամ պղինձ, որովհետեւ սովոր լցուցանումքը մի աւելի փոքրիկ կիւրեան տարածութիւն, ուրեմն և աւելի փոքր ջուր արտաքսումքը իւր տեղից քան թէ միւս մետալ ները, որովհետեւ նա աւելի թանձր էր քան թէ սօքա։ Աւելմն մտալների խարդախութիւնը կարելի է շատ հեշտ յայտնել, կըսելով նորանց ջրի մէջ, Պատճառ, ինչքան աւելի աղնի։ Էր մի մտալ, ինչ քան աւելի մաքուր և անխօսոն էր նա, այնքան աւելի փոքր տարածութիւն լցուցանումքը նա իւր առաւել խոսութեան պատճառով, թէ ծանր մարմինները արդարե ջրի մէջ աւելի թեթե են երեսում, այդ բանը կարելի է անտարակցոյ կացուցանել, մի սափոր ցած թողլով ջրհորի մէջ։ այս տեղ, ջրով լցուցած սափորը, աւելի ծանր էր եթէ բարձրանումքը ջրի երեսի վերայ, քան թէ երբ որ ջրի տակին էր։

3. Զէտ Հետիուններ։

Թէ ինչ քան է ձգականութիւնը, ասացինք վերեսումը, խօսելով օդի վերայ։ Եւ ջուրը ձգական է, պատճառ, շառաչիւնը, որի հնարաւորութիւնը և աղբիւրը է ձգականութիւնը, տարածվում ջրի մէջ բաւական սաստիկ։ Զանազան տեսակ փորձեր արած էին,

ջրի ձգականութիւնը քննելու համար, բայց միշտ ի զուր, զոր օրինակ, մետալեայ խիտ փակելի անօթներ լցրած են ջրով և աշխատած են, ճնշելով սեղմարանի տակ, տալ նոցա մի այլ կերպարանք, բայց ջրալից անօթները սաստիկ ընդդիմացած են, և հաղիւ թէ նկատած էին մի քանի խորութիւնք, և աշա այնքան ջուր անօթների միջածակերից դուրս էր փախել, ինչքան որ բաղկացնումէին այն խորութիւնքը: Այդու ամենայնիւ, ջուրը, թէ նուազ շափով, ձգականէ, ինչպէս յետոյ յայտնագործած են և ինչպէս ուսուցանումէ երեխաների մի խաղը: Վ. յսինքն, Եթէ տափարակ փոքրիկ քարեր չեղ ուղղութենով նետէիր դէպ ի մակերևոյթը ջրի, այդ քարերը չենց ցած գնում խիզըն, այլ ջրի ձգականութիւնը բացարձակումէր նորանց, և նորա կարճ միջոցներով թութուռմէին ջրի վերայ, մինչև նետողական զօրութեան ոյժը թուլանումէր այնքան, որ չեր կարող աւելի ընդդիմանալ ջրի զօրութեանը: Մի և նշյն բանը նկատած են հրացաններից արձակած գնդակների մասին: Եթէ տափարակ ձեռքով զարկէիր դու ջրի երեսին, ապա ձեռքդ դէպ ի յետ կը զարկէր և դու կը զբայիր գրեթէ այնպէս սաստիկ ցաւ, որպէս թէ զարկել էիր նորան մի տախտակի կամ քարի:

Հատ բացայայտ երեւումէ ջրի ձգականութիւնը ճայթողական ասած ապակիների կամ թէ ապակեղէն կաթիլների մէջ: Վ. յսինքն, եթէ մի այդպիսի ճայթողական ապակի բռնէիր մի ջրալից ապակեղէն անօթի մէջ և բեկանէիր ճայթողական ապակու վերին սրածոյրը, ապա փշրլումէ ապակին դառնալով նուրբ փոշի, բայց մի և նշյն միջոցն ճարճատվումէր և ապակեղէն անօթը: Սորա պատճառը այն է, որ ջրեղէն մասնիկները, ապակու փշրվելու ժամանակին կամենումէին փախչել, բայց ապակեղէն անօթի պատերից դէպ ի յետ ճնշմինը, պիտոյ է սորանց ճայթեցուցանէին: Եւ պարզականութիւնը ջրի, երբ որ տաքացած էր սա, աինարկութիւն է առնում դէպ ի նորա ձգականութիւնը:

4. Զէք բարեգիւնիւն:

Ուէ ջուրը ստուգապէս թափանցիկ էր, այդ մասին վկայութիւն է տալիս մեղ ամենօրեայ փորձը, երբ որ նկատումէինք պայծառ ջուր: Թողլ այն փորձը, որ մէք մի ջրալից բաժակի ներսը կարող ենք տեսանել, նշյն խսկ ծովի մէջ կարող ենք ներս նայել մինչև մի բաւական մեծ խորութիւն դէպ ի յատակը և նկատել այն տեղ եղած առարկայքը, երբ որ ջուրը պայծառ, և ծովը հանդարտ էր: Վ. յս տեսիլքի պատճառը էին այն բազմաթիւ միջածակերը որ գտանվումէին ջրի անհամար շատ մասնիկների մէջ և թողումէին որ լուսի ճառա-

դայթքը թափանցեն նոցա միջովը: Բայց արդարեւ այս անշափելի բաղմաթիւ ջրեղէն մասնիկները խրեանց միջածակերով պատճառ է-ին նշյապէս, որ լուսի ճառագայթքը մասնումէին ջրի մէջ ոչ այն-պիսի ռւղիղ գծով, ինչպէս նորա օդիցը հասանումէին ջրի մակերե-ւութիւն: Այս պատճառով, այն գաւաղանը որ դէպ ի շեղ դրած է-իր ջրի մէջ, երևումէր կոտրած այն տեղումը, ինչ տեղ շօշափումէր ջրի երեսը. նոյն կերպով և նոյն պատճառով, լուսի ճառագայթները ընդունումն մի այլ ուղղութիւն, երբ որ նորա անցանումն ջրալից անօժի միջովը: Այդ բանի պատճառը ոչ թէ միայն անօժի խոռո-թեան մէջ էր, այլ մասնաւոր թէ այն փոփոխված ուղղութեան մէջ որ ջրի մասնիկների միջածակերը տալիս էին լուսի շառաւիզներին:

5. Զբարձրակիներէ նրբութիւնը:

թէ պէտք ջուրը ութ հարիւր անգամ աւելի ծանր է քան թէ օդը, այնու ամենայնիւ նա բարկանումէ անսովոր նուրբ մասնիկնե-րից. պատճառ, նա թափանցումէ միւս մարմինների ամենանուրբ մի-ջածակերի մէջ, որ շաս անգամ անթափանցելի էին օդի համար: Այս յատկութիւնն էր ահա, որ տալիս էր ջրին այն զրութիւնը որանով նա վերլուծանումէ այլ մարմինները դատճառ, ջուրը ներս մտանելով մարմինների մասների մէջ, քանզումէ նոցա կազակցու-թիւնը, վերլուծանումէ նորանց և այդպէս ներգործումէ նոցա պա-կանութիւնը:

Յուրը իւր նրբութենով ունի նմանապէս այն զարմանալի յատ-կութիւնը, որանով կարճացնումէ մարմինների երկայնութիւնը և պարզումէ նորանց դէպ ի հաստութիւնը կամ ստուարութիւնը: Չոր օրինակ մի շուան, եթէ թաց առնէիր նորան, թէպէտ կարճանու-մէր, բայց և լինումէր աւելի հասա և գորանով կարող է աւելի ես րեսներ տանել, քան թէ չոր զրութեան մէջ: Այս յատկութենից զանազան օգուտններ և քարում մարդը, իւր աշխատութիւնը թե-թեացնելու համար: Չոր փայտը ուռչումէ, երբ որ թաց էր լինում. այս պատճառով, եթէ կամենումէինք պատառել քարերը, ապա մզու-մէինք դոցա ճեղքերի մէջ մի սեպ չոր փայտից, և թաց առնելով սո-րան ջրով հասուցանումէինք դործը այն տեղ, որ քարերը պատճ-վումէին: Այս և հրացանների և թնդանոթների փողովակները կա-րելի է ջրի զրութենով ճեղքել և պատառել:

6. Զբէ հարձակութիւնը:

թէպէտ հետեւեալ յօդուածումը խօսելու ենք մարմինների այն յատկութեան վերաց, որ ասլումէ թէրժանիւն որ և մարմինների հա-

սականութեան պատճառն էր. բայց որովհետեւ հսականութիւնը ջրի գլխաւոր յատկութենարի մին է, այս պատճառով կամնուումնք նորան նկատել այս տեղ առանձնապես, ինչպէս արած Ենք, օդի վերայ խօսելու ժամանակին: Թէ արդարեւ ջրի մէջ կար չերմութիւն, կարելի է եղբայրակել նորանից, որ անդադար փոքրիկ պղպջակներ գէպ ի մեր են բարձրանում: Ձերմութիւնը ընդարձակումէ մարմինքը և այս ընդարձակութենովը զառնումն նոքա հսական, ինչպէս կարելի է նկատել մտալների հալողութեան ժամանակը: Թողով ըստրը շատ նուրը մարմին էր, նա լինելով նոյնպէս հսական, կարող է ներս մտանել այլ մարմինների ամենափոքր և ամենածածուկ միջածակների մէջ: Բայց եթէ ելքիր նորանից իւր ջերմութիւնը, առ փոքր փոքր փոխարերվումէր նա գէպ ի ամուր գրութիւն: Այսուշետեւ, ջերմութեամբ բաժան բաժան եղած մասները մտանումն միմեանց և հետ զչետէ կերպաւորումն մի համակից նիւթ: Այս, ցուրտը կծկումէ խակապէս մարմինքը, որ պարզած էր ջերմութիւնը, բայց, երբ որ ցուրտը այնքան սասակացած էր, որ ջուրը մկումէ առաջիլ, ապա յանկարծ դարձնաւ ընդարձակումէ նորան և, եթէ յաւելանումը ցուրտը, այնպիսի ուժով, մինչև պատառվումն անոթները որոնց մէջ պազած էր ջուրը: Այսպէս, կարող է ցուրտը պատառել շատ պինդ ծառեր, եթէ նոցա մէջ եղած հիւթքը պաղումն: Եւ որովհետեւ ջուրը սառ լով, ուրեմն և ընդարձակվելով, սահնումէ աւելի տարածութիւն, քան թէ հեղեղուկ ջուրը, այս պատճառով լինումէ նա աւելի թեթև քան թէ ջուրը և լով է տալիս նորա վերայ: Կնչքան սասարիկ էր ցրտի ներդործութիւնը ջրի վերայ, այնքան ևս կարծր էր սառոցը. այս պատճառով 1740 թուականի սասարիկ ձմեռումը կարող էին գետերը ուրիշ մէջ մի ապարանք կառուցանել որ իւր ամենայն սարք ու կարգով, պատերից մինչև հնոցները, փականքը, բանալիքը և թեւոները, բաղկանումէր սառուցից: Այս կարող էին սառուցից թնդանօթներ պատրաստել և արձակել նորանց: Այս սառոցը կարող է տանել ահագին բեռներ. բայց շատ ուժգին ցրտից պատառվումէ նոյն ինքն սառոցը, որ լինումէր սովորաբար սասարիկ ճայթիւնով: Թէ ինչպէս ամուր և կարծր էր սառոցը, կարելի է եղբայրակել նորանից, որ նա շատ անդամ ջարդուիշուր է արել այն և պինդ շնչած կամուրջներ, թէպէտ այն մեծամեծ սառցատախտակքը, որ պատճառ էին այդ աւերածին, փշրված չեին ինքնանք:

1. ԿՐԵԿԲ:

Ի՞նչ է կրակի խորհուրդը: Ինչքան որ ջուրը, նյոնքան և կրակը ծանրակշիռ բան է, հարկաւոր և անհրաժարելի մարմնեղէն աշխարհի գյութեան համար: Թեպէս գիտենք մեք նորա յատկութիւնքը, ներգործութիւնքը և գործածութեան կերպը — մեք տեսանումնք նորա կայծակնացայտութիւնքը, նորա լուսափայլ բոցերը, գգումնք նորա ջերմացուցիչ ճառագայթը — բայց սրբա էին միայն կրակի ներգործութիւնքը: Նորա յատուկ էութեան մասին մեք կարող ենք ասել միայն, թէ նա է մի շատ թեթև, հսանուտ, ձգական մարմին, որ նկատելի էր մեք զգայարանների համար որպէս ջերմացուն կամ որպէս Այս, կամ թէ երկուքը ևս ի միասին: Այս պատճառով շատերը ունեցած էին յօժարութիւն ընդունելու կրակը որպէս սկրդրնական աղբիւր լուսի և ջերմութեան: բայց բազմատեսակ նկատողութեններով ցցց է տուած, որ և սառն մարմինք, զոր օրինակ կաթնակեր անասունքը, գուրա են արձակում ջերմութիւն, առանց լուսաւորելու: Այս հիմքի վերայ, լցու և ջերմութիւնը որոշվումն բնախսութեան մէջ որպէս երկու զանազան իբր:

Ինչքան ևս փոքր կարողացած են վերահասու լինել կրակի խական էութեանը, այնու ամենայնիւ գիտենք հաստատապէս: որ նուրբ իւնիւնը բաժանած է երկրի վերայ եղած բոլոր մարմինների մէջ: Այս կրականիթը սովորաբար գտանվում մի հանգիստ զրութեան մէջ. բայց երբ որ նա սկսանումէ շարժվիլ և գորանով որպէս թէ գրգռվումէր, ապա յայտնումէր իւր գյութիւնը ջերմութենով, լուսով և բոցով, և սովորաբար լուծանումէ այն մարմինքը որոնց մէջ գրգռված էր: Այս լուծողութիւնը սովորաբար փոխվումէ ամենին ոչնչացուցումն կամ կործանութիւնն ։ Հայրեացք: Բայց կրականիթը չէ հաւասարապէս անկակից ամենայն մարմինների: զոր օրինակ փայտը, խէժը, խղային և ճարպային մարմինքը և ծծումը պարունակումն իւրեանց մէջ աւելի առատ կրականիթ, քան թէ քարը և մետալքը:

Ոչ ով կարող չէ սոսուգապէս ապացուցանել թէ ով էր ոյս երկնային պարգևի յայտնագործողը: Յշնքը վարագուրել են կրականիթի յայտնագործութիւնը Պրոմեթէոսի խորհրդաւոր առակով. պատմումն որպէս թէ սա կրակը գողացած էր երկնքից և, որպէս պատիժ, Դիոսոսի ձեռքով զղմայվեցաւ Կովկաս սարի վերայ: Բայց շատ հին ժամանակներում աչա կրակարանը համարվումէր տան ա-

մնասուրը տեղին. վայրենաբարզ, այս և շատ կրթեալ ազգերի մէջ սուրբ, օրհնութիւն և խաղաղութիւն բերող կրակի բոցը արձակ և ազատ վավումէ բաց կրակարանի մէջ, այլ ազգեր փակումն նորան նեղ հնոցների մէջ, նորա զօրութենից աւելի սգուտ քաղելու համար։ Թա՞ղ քննենք այժմ, թէ ինչպէս է գոյանում կրակը և ինչ յատկութիւնք ունի նա։

2. Արքի գոյաւորութիւնը Արեգակի ճառագայթներով։

Կրակը գոյանումէ երեք կերպով, կամ Արեգուի ճառագայթներով, կամ Տբութել կամ թէ դ ունկ անհաջող ավելու ըստ կառաջնորդութիւնը։

Ա. Կրակի գոյաւորութիւնը Արեգակի ճառագայթներով։

Թէպէտ մինչև այժմ ոչ ով չէ կարողացել վերահասու լինել, թէ ինչ պատճառով արեգակի ճառագայթները յառաջացնումն չերմութիւն և կրակ. փորձով միայն ստուգած ենք այդ բանը, բայց այնու ամենայնիւ զիտենիք մէք, որ այս ճառագայթները ունին մի սաստիկ զօրութիւն յառաջացնելու կրականիթ։ Եթէ նորանց ըմբռնումն մի վառողական ապակո կամ վառողական հայելու միջնորդութենով և միաւորումն նորանց մի տեղ, ապա ստանումն նոքա այնպիսի ուժգին զօրութիւն, որ նշյն ինքն կարծր անգամները պատագայթի երեսից լուծանվումէ ծուխ և շատ ամուր մետաները փոխվումն կիր կամ ապակի։ Սյն այս միաւորութեան կամ թանձրացման կարողութենովը զանազանվումէ արեգակնային կրակը հասարակ կրակից, Պատճառ, թէպէտ սորա ճառագայթքը լուսաւորելով իսկոյն, թափանցումն մի ապակեղեն տախտակի միջով, բայց մի քանի ժամանակից յետոյ միայն ներգործումն ջեռուցողապէս։ սորա հակառակ, արեգակի ճառագայթքը իսկոյն ջեռուցանելով և լուսաւորելով և, եթէ թանձրացած էին պատշաճապէս, այս և բորբոքելով յարձակվումն հանդիպակաց մարմինների վերայ։

Բ. Կրակի գոյաւորութիւնը Տրորելով։

Եթէ երկու մարմինք մի փոքր արագութեամբ տրորումներ մեանց վերայ, նորա ջերմանումն դորանով։ Զոր օրինակ ցրախց թմրած ձեռքերը տրորումներ, որ միւսանգամ տաքացնենք նորանց, եթէ վառուն մարմինք մի փոքր երկար ու արագ տրորենք միմանց վերայ, տաքութիւնը առ փոքր փոքր փոխվումէր ջերմութիւն, մարմինքը վառվումէին և սկսումին այլպիլ. մի սայլի անխներ և լիսեաներ, աղօրեքի դլանակի ծայրը և նորա հանգստարանը սաստիկ սպոցաքից վառվումն նշյնպէս։ Այս, երկաթը կուանելով միայն, կարմրումէ։ Ապյրենարնակ ազդերը կամնալով կրակ վառել, երկու

մարմին, զոր օրինակ երկու կտոր փոյտ, շատ սաստիկ արագութենով տրորումն միմեանց վերայ և այդպիսի կերպով վառեցնումն նորանց վեր կրակահանութիւնը ոչինչ բան չէր, եթէ ոչ մի շուտափոյթ տրորումն. պատճառ, երբ որ պողովատը արագապէս տրորվումքը գայլախազի վերայ, բաց քերթած պողովատեայ փոշին հալվումէ և ըմբանվումէ լուցկիով որ ազա սկսումէ կրակիլի և վառումէ մատ բռնած ձեռմիւր։ Արժանի է ծանօթութեան այն տեսիլը, որ թնդանութների դանակիը ծակելու միջոցին, այնպէս սաստիկ ջերմանումն նոքա, որ կարելի էր նոցա վերայ ջուր եռացնել։ Այն փորձը, թէ շցատ տրորելուց գոյանումէ կրակ, թէսպէտ, բնշպէս ասլիցաւ վերեւումը, շատ անգամ արած են աչա, բայց ոչ ում գեռ ևս յաջողած չէ պատշաճապէս բացայայտել այս երեսութի պատճառը։ Ճառ հաւանական էր այն կարծիքը, թէ մարմինների մեջ եղած հրեղեն մասնիկները շարժվումն տրորելով, և այդպէս առ փոքր փոքր բորբոքվումն։

Գ. Արակի գոյաւորութիւնը քանի մի անհաւասար մարմիններ զուգահատունելով միմեանց հետ։

Ա երեսումը յիշատակեցինք աչա, թէ զանազան մարմիններ, զոր օրինակ թաց խոտը, հեշտ ինքն բատ ինքնան կարող են կրակվիլ և լուսափայլ բոց արձակիլ, եթէ մատենումք ատմօնթերեան ողը։ Այլ մարմիններ կրակվումն և յաճախ պատճառումն հրայրեացք, եթէ խառնվումին միւս ստար մարմինների հետ։ Կոքա ըսկումին խմբրվիլ, խմբումը գոյացնումք ջերմութիւն, և ջերմութիւնը, հրդեհ։ Զոր օրինակ կրակվումքը այրած կամ կենդանի կիրը, երբ որ մատենումքը նորան ջուր, և շատ յաճախ պատճառած է նա ապականիւ հրահայրեացքներ։ Այլև յարդը, ցորեանը, ընդեղնքը, ընկոյզը, տաք տեղում պահած հրացանական փոշին, ածխաբարը, կտաւը և փայտի սղոցածքը շատ անգամ կրակված են ինքն բատ ինքնան։

Եւ երկրի ներսումը շատ յաճախ յառաջանումն այդպիսի երեսութական ինքնավառութիւնք, որոնց պատճառը պիտոյ է որոնենք անհաւասար մարմինների զուգախառնութեան մեջ։ Կոքա յառաջացնումն հրաբուզի ստրեր և գետնաշարժութիւն։ Այցա պատճառի մասն ակնարկութիւն է եղած յառաջընթաց յօդուածի մեջ, Հ. 10։ Այնքն հրաբուզի ստրերի մեջ շատ անգամ կապակցվումն միմեանց հետ նիւթեր, որ շատ հեշտ կարող էին կրակիլ, եթէ մատենար նոցա ող։ Եւ երկրի մեջ կոյին շատ փոսեր, գնացքներ և կոկորդաշակեր, որ յաճախ լցված էին այդպիսի վառուն մարմիններով կամ օդով։

Նթէ այսպիսի տեղերում ներս էր մտանում՝ ջուր, ապա անհրաժեշտ բերի էր բորբոքումը, և այս բանը լինում սովորաբար ահարկու բանութենով և զարչութելի ճայթինով, ըստ որում բոլոր ջերմացեալ մարմները ընդարձակվումն:

Արեմն այդ նկատողութենից, թէ շատ մարմններ, խառնվել լով նոցա հետ այդպիսի օստար նիւթեր, սկսումեին կրակվել, կարելի է հետ եղափակել, թէ շատ հրայրեացքներ, որոնց պատճառներին կարող չէինք վերահսու լինել, ոչինչ միւս պատճառ չունին, եթէ ոչ անհպատառութիւն, այսինքն անդդյուշ համակարգութիւնը այնպիսի նիւթենի, որ խառնվելով մմեանց հետ հետ ջերմանումն և կրակվումն: Այս պատճառով ահա շատ և շատ հարկաւոր է մեզ վաղուց ծանօթանալ այնպիսի բաների հետ, որոնց զուգախառնութիւնը կարող էր վանդ ըերեւ:

Կրակի մի այլ պատճառը է շատ յաճախ և կոյժակը. Եթէ սա զարկումը շնուռածների, շատ անգամ կրակումը նորանց, որ լինումէ կէս մի երեքտարական կայծով, կէս մի նորանով, որ կոյժակը անսովոր արագութենով վասուն մարմինների, զոր օրինակ հին փոյտի մատից, աեցանումէ և բորբոքում նորանց արագ տրորելով: Այս բանի վերայ կը խօսինք յետոյ աւելի մանրամասնաբար, երբ որ ձառ կը լինէր Փոթորկի վերայ:

Ինչ որ մինչև այժմ ասմեցաւ Կրակի մասին, դորանից բացայս է, թէ բնշպէս հետ կարելի էր անդգուշութեամբ, թէ և համայ, պատճառել մի հրայրեացք և դորանով գուցէ թէ շատ գերգաստաններ անպատճելի թշուառութեան մէջ ձգել: Արեմն թողծանուցումն առնենք այս տեղ ոյն բոլոր դիսուածների մասին, որ կարող էին յառաջացնել մի այդպիսի ձախորդութիւն:

Ուստի ոչինչ ժամանակ մի վառ ճրագի մաս չը բերեն այնպիսի մարմինք որ գողանումէին կրակ. Ընդո՞ւ չը գնան ճրագով պյուղի տեղեր, ուր պահած են այդպիսի մարմինք: Հարկաւոր էր զդաստութեամբ պահպաններ վառ դիշերացին ճրագները, որ մի գուցէ մկները կամ ոյլ կնդանիք առնուին և առնեին նորանց այնպիսի տեղեր, ուր կիսաշեց պատրոցգը վերասին կը բորբոքվէր. այլը պիտի չը շատ շառ ալիւրին կամ թէ հրացանի վառանիթին մասեալ բաց ճրագով, որովհետեւ երկուքը ևս կրակվելու էին շուտով: Առաված խղը կամ ճարպը չէ պիտոյ աշխատել հանգցնել ջրով, ըստ որում այդպէս առաւել մեծանումէր վանդը. Հայած մատաշներին շատ մի մասենար ջրով, պատճառ, եթէ մի կամիւլ ջուր ընկաւ այդպիսի մասալի մէջ, ապա կը ծնանէր մի այնպիսի սաստիկ

ճայթիւն, որ գերազանց էր կայծակի մնդիւնից Եթէ կամենումըին կրակ վառել մի հնոցի մջ, ապա սկզբումը մժաղ չը դնեն նորա մէջ չը փայտ աւելորդ շատ պատճառ, Եթէ մի կրակ բորբաքվումէ խեկցն, ապա հնոցի մջ պարունակված սառն օդը ընդարձակվումէ շատ շուրջ, և զորանով շատ անդամ պատառված են հնոցներ և պատճառված են հրկիզութիւնք: Դորանից շատ անդամ յառաջա նում մի ոյլ վտանգաւոր տեսիլ, որ ասումն ՀՅԵՊՀ էոյլ սա մի հրեղեն շառափող էր, որ յանկարծ գուրս է մուշում հնոցից և կրա կում ամենայն վառելի բան, որին և հանդիպումէր: Այդ հրեղեն գոյլը գոյանում շատ անդամ հայթուենների հնոցներումը, երբ որ սոքա անզգուշութենով սաստիկ ջերմացնվումէին ։ Պատահումէ եր բեմն, որ, հնոցը բացված, մի ամրող գունդ կրակ զարհուրելի ճայթինով գուրս է վազում հնոցից, երերումէ պատերը և շնու ռածքը, ջարդումէ փշրումէ ամենայն բան որին հան դիպումէր, կայծակի պէս, անհերթակայելի արագութիւնով այս կողմ և այն կողմ դիմելով, մինչև բարձրանումէր գեղ ի ամսերը և պա տառվումէր այն տեղ, անհամար կայծեր արձակելով: Հաւանական է, թէ այս տեսիլը յառաջանումէ վառուն օդից, որ ածինից գոյացած էր հնոցումը և հաւաքվել էր այն տեղ:

* Եմանապէս, անզգուշ թարաքածխութիւնը հեշտութեամբ կրակ գողացող նիւթերի մատակայքում, այլև անկողին ջերմացնող գոր ծիքներ և անհոգապէս պահած մոխիր շատ անդամ աշա պատճառ աւել են հրայրեացքներ, որոնց պատճառը ոչ ով կարող չէր ասել հաստատապէս, որ և, Եթէ կարելի էր, շարամիտ մարդերի վերայ են կապած:

Յ. ԿՐԵՌԻ յուրականութեամբ:

Կրակի գլխաւոր յատկութիւնքը էին ՀԱՅ-ԻՆ-ՇԻՆ-Ն, ԿՐԵՌ-Շ Ն-ՇԻՆ, և ԹԵՌ-Ն-ՇԻՆ: Թէ կրակը արդարև մի հոսանուտ նիւթ էր և այս յատկութիւնը ուներ արձակ չափով, բացայս է նորանից, որ նա շուտով թափանցումէ ամենաթանձր մարմինների մջ, որոնց վերայ և խոշորացուցի օգնութիւնով չէ կարելի ոչինչ միջածակիր որոշել, եւ նա ներս է մտանում այս մարմինների մջ այնպիսի բռնութենով, որ ապա կարող էր ներդործել և այլ մարմինների վերայ: Աւրեմն կրակը աւելի հոսանուտ էր, քան թէ օդը և ջուրը:

Կրակի թեթևութիւնը ակնյանդիման երեսում այն բանից, որ մի կարմրացած երկաթի կոտոր, կամ թէ մի ոյլ հրաշեկ մտալ և ոչ մի փոքր ևս աւելի ծանր չէր քան թէ կարմրանալուց յառաջ: Այսու ամենայնիւ չը կայ համարձակութիւն ընդունելու, որպէս

թէ կրակի առանց որ և իցէ ծանրութեան էր: Պատճառ, եթէ պյդպէս լինէր, ապա նա վաղուց ահա չքացած կը լինէր երկրիցը:

Կրակի գլխաւոր ներգործութիւնը այն է, որ նա ջերմացնում և ընդարձակումէ մարմինքը, հսանուատ է շինում ամուրները. սորա հակառակ, հսանուատը ջերմացնում և առ փոքր փոքր լուծանումէ շոգի: Այս ընդարձակութիւնը անտարակոյս յառաջանումէ նորանով, որ կրակի մասնիկները ներս են մտանում մարմինների միջածակերի մէջ:

1. ՖԱՐՄՈՒԹԻՒԹԵՐ:

Վեչ ասել է ջերմութիւն: Կրակի մի գլխաւոր ներգործութիւնը է ջերմութիւն: բայց զա գոյանումէ ոչ թէ միայն կրակից, ինչպէս ասվեցաւ վերևումը, այլ նորա խիսկան պատճառը է մի նուրբ, անտեսանելի, հսանուատ էակ, որ բոլոր բնութեան մէջ ծաւարլած է, և ամենայն մարմինների մէջ կոյ շատ կամ փոքր: Այս էակը ասումն ջերմութիւն: Այս ջերմանիւթը իմանալի է միայն զգայութեանը և, ինչպէս երևումէ, չունի ծանրութիւն: Պատճառ, մի ջերմացրած երկաթի կոտոր չէր աւելի ծանր, քան թէ նա էր ջերմանալուց յառաջ: Ջերմութեան հակառակը է Սառնութիւնը: Ջերմութեան կամ սառնութեան առաւելութիւնը կամ նուազութիւնը որ մէք նկատումնք մարմինների մէջ, ասլումն նոցա եւնենից: Մի շատ սաստիկ ջերմութիւն ասլումէ Տ-Շ. երբ որ մարմինները այնքան ջերմացած են մինչև լրսափայլումէին, ապա ասլումն հ-Շ-է: կամ է-Շ-Շ-Շ: Այս կարմրանալովը կարող էին շատ մարմիններ եղծանվիլ կամ թէ մասն մասն բաժանվիլ, այսինքն Ա-Շ-է: Այդ պատահման մէջ բարձրանումէ մի հրավառ, լուսափայլ շոգի, որ ասլումէ Բ-Շ: Մի այլ տեսանելի շոգի: որ մարմինների այրլողութեան ժամանակը բարձրանումէ նոցանից, ասլումէ Ծ-Շ-է: Այն փոշին, որ մնումէ այրված մարմիններից յետոյ, ասլումէ Ա-Շ-է:

Ուշ արդարեւ ամենայն մարմինների մէջ կոյ ջերմանիւթ, բայցայս է նորանից, որ ամենայն մարմինների մէջ կարելի է գըրգուել ջերմութիւն և զգալի կացուցանել նորան: Ջերմանիւթը գըրգուումէ, երբ որ երկու մարմին տրորումնք միմանց վերաց, կամ թէ զանազան անհաւասար նիւթեր կապակցումնք միմանց հետ, կամ թէ արեգակի ճառագայթներով և կամ թէ կոյծակոյ: Այսին ջերմութիւնը ունի հաւասարակոյ պատճառներ կրակի հետ:

2. ԶԵՐՄԱՆԹԻՒՆ ԳՐՔՆԱՇԽԱՌԵԿ:

Զերմութիւնը կարելի է մի մարմնից ղեզ ի միւս մարմնն փռ-
խարերել, եթէ զ՞որ օրինակ մի սառն մարմնն հաղբրելինք մի ջեր-
մացրած մարմնի: Բայց, դորանով, չերմացրած մարմննը նուազումէր
չերմութիւնից: Ոմանք մարմինք չերմութիւնը շատ շցտ և հեշտ առ-
նումն և տանումն յառաջ, զոր օրինակ մետաղները, բայց միւս մար-
միններ, զոր օրինակ փայտը, չեն պյնքան արագ և հեշտ փոխադրող:
Այս պատճառով, մի կոտոր փայտ, որի մի ծայրը գրած էր կրակի
մջջ, աւելի երկար կարելի է բռնել ձեռքով, քան թէ մի կոտոր եր-
կամ, որ նոյնպէս հաղորդութիւն ունէր կրակի հետ: Այս պատճ-
ռով մետաղներն անօթներին տալիս են փայտեայ երախականներ (կո-
թեր), որ հեշտաւ կարելի լինէր բռնել նորանց, եթէ չերմացած
էին: Այս բոլոր մարմինները, որ չերմութիւնը շուտով յառաջ են
տանում, պահչումն նորան և կարճ միջոց միայն: այդ պատճառով,
մի երկամի հնոց թէպէտ աւելի շուտով չերմանումէ, քան թէ մի
կաւեղին հնոց, բայց նա նշնպէս հովանումէ աւելի շուտով: Այն
բոլոր մարմինքը որ չերմութիւնը գժուարութենով յառաջ են տա-
նում, լաւ Զերմապահ էին, զոր օրինակ փայտը, թուղթը, բուրդը,
փետուրքը, մոխիրը, մամուռը, ձիւնը: Այս պատճառով զործ ենք
ածում հանդերձ, որովհետեւ սա թոյլ չէ տալիս որ մեր մարմնի մջջ
եղած չերմութիւնը հեշտութեամբ յառաջ գնոյ, կամ թէ մանա-
ւանդ չէ թողում, որ նա պյնպէս արագ դուրս հոսէ, ինչպէս պա-
տահելու էր, եթէ մեք լինէինք անզգեստ: Տեղեկութիւնը այն մար-
մինների մասին, որ շատ կամ սակաւ չերմութիւն պահող էին, շատ
հարկաւոր էր զանազան արհեստաւորների ե ընկերական կեցութեան
մջջ: Ցարդով ծածկած տունները չերմ են ինում: պատճառ, յարդը
չէ թողում որ տաքութիւնը գուրս գնոյ, որպէս և ամառնային ժա-
մանակը թոյլ չէ տալիս չերմութեանը ներս մտանել: Չիւնը ձմե-
ռան միջոցին պաշտպանումէ սերմանած դաշները ցրտահարութեան
երևից: ցրտից թմրած մարդիկը վերստին չերմանումն, եթէ ծած-
կեիր նորանց ձիւնով, այսն իսկ օդը, եթէ մաքուր, հանդարս և շոր
էր, պահչումէ չերմութիւնը միասին: Այս պատճառով, արձակ հան-
գերձնները պահչումն աւելի տաք, քան թէ նեղերը: Նոյնպէս ևս
գէջ ցրտութիւնը աւելի զգալի է մեզ քան թէ ցամաքը: պատճառ,
գէջ օդը և վաս Զերմապահ: Եթէ ցանէիր մոխիր ձեռքիդ վերայ,
ապա կարող էիր կարմրացած ածուններ գնել նորա վերայ առանց
այլի լու:

Վասդ գունով մարմինքը աւելի հեշտ անցուցանումն իւրեանց

միջից չերմութիւնը քան թէ բաց գունով մարմինքը, այս պատճառով ազիտակ հանդերձքը ամառնային ժամանակին աւելի հով են և ձեռնային միջոցումը աւելի չերմ, քան թէ մոյզ գունով հաղուստները:

3. ՅԵՐԱ-ԲԵՆ ԸՆ-Շ-Ի-Ն ՎԵ-Շ-Ի-Ն:

Յերմութիւնը ընդարձակումէ այն մարմինքը, որոնց մէջ գըրգովումէ նա, այս պատճառով մի մետաղեղն գնդակ, եթէ չերմացած էր, չէ կարող անցանել այն օդի միջից, որի միջով կարելի էր նորան անցուցանել, երբ որ նա սառն էր: Հսոսական մարմինները առաւել չեշտ ընդարձակվումն չերմութենից: այս պատճառով, մի սրուակ որի մէջ պարունակվումը մի հսանուստ մարմին, եթէ նորան ամուռ խցանէիր և դնէիր չերմութեան մէջ, պատառվումէ չեշտ և մի սաստիկ ճայթիւնով: Տաքացած օդը, աւելի պաղ օդի մէջ, բարձրանումէ դէպ ի վեր, որովհետեւ ընդարձակվելով, աւելի թեթևացած է նա: Խոսացող ջրի փակած շողին աշխատումէ ընդարձակվել դէպ ի վեր մի աւելի լցոն տարածութիւն և շատ անգամ պատառումէ այն ամանը որի մէջ ճնշած էր:

Յիրութեան և չերմութեան զանազան աստիճանքը ճշդապես շարիերու համար, կայ մի անօթ, որ յունական բառով ասումն թէր-ժեմոր, որ թարգմանվումէ ՔԵՐ-ՄԵՒ, որ և 17 դարու մէջ չնարել է մի հոլլանդացի շինական Կոռնելիսու Գրերըէլ: Այս անօթը բաղկանումէ մի գատարկ ապակենդէն գնդակից որ երկարանումէ մի նուրբ ապակենդէն փողովակով: Սորան լցուցանումն ժիպակով կամ թէ ներկած գինեղն օդիով (Խմորված խաղողից շատ նուրբ քամած օդիով): Եթէ օդը չերմ է, ապա դէպ ի վեր է բարձրանում ժիպակը կամ թէ գինեղն օդին: բայց օդը ցուրտ ելած ժամանակին, ներքեւ է իջանում, որովհետեւ ցուրտը կծկեցնումէ նորան, այնպէս որ նա ստանումէ աւելի փոքր տարածութիւն:

1. ԼԱՑԱՐ:

Կրակի մի այլ գլխաւոր ներգործութիւնը է ԼԱՅ, թէպէտ կրակը չէ միշտ նորա միայնակ պատճառը, որովհետեւ շատ մարմիններ լուսաւորումն առանց այրիլու, և շատերը ևս առանց խիստական չերմութեան, զոր օրինակ մոլի ճրագները: Լուսի միջնորդելովը միայն տեսանելի են լինում մեղ աշխարհի մէջ եղած բաները. այս, զա էր որպէս թէ շիմնական պայմանը ամենայն կենդանութեան, պատճառ, առանց լուսի կարող չեն ապրել ոչ մարդիկ և ոչ անա-

սուններ, և ոչ բռւսականքը կարող Են աճել և զօրանալ։ Առաջի
գլխաւոր ազրիւրը երկրի բնակիչների համար է Արեգակը։ Թէպէտ
լուսատու Են և միւս անշարժ աստղները, բայց Նոքա այնչափ հե-
ռի էին մեզանից, որ նոցա լցուը չէր կարող շատ օգտարեր լինել
մեղ։ Եւ լուսնի փայլողութիւնը էր միայն արեգակից ստացած ձա-
ռագայթների բացարձակութիւնը։ Այլ շուրջնական հարաբեկութիւններ էին հիւ-
սիսային լցուը, հրեղեն գունդեր, թռուցիկ աստղներ, կայծակը, մա-
լի ճրագներ, կարմրացած երկաթ, փուտ փայտ, մի քանի միջաներ,
մի քանի ճճիք և փոփորոնը։ Միւս մարմինները փայլումն միայն
փոխ առած լուսով, այսինքն, երբ որ նոքա լուսաւորվումն արե-
գակից կամ թէ մի այլ լուսեղեն մարմինից։ Սոցա ասումն իսպա-
հարաբեկութիւններ։ Այս պատճառով, մեք չենք կարող ոչինչ բան տեսանել,
որ չէր լուսաւորվում կամ արեգակից կամ թէ մի այլ լուսասու-
մարմինից։ Ամանք մարմինը ունին այնպիսի յատկութիւն, որ, եթէ
մի քանի ժամանակ լուսաւորված էին մի լուսեղեն նիւթից և նորա
ձառագայթները որպէս թէ ներս էին ծծել իւրեանց մէջ, ապա մի
քանի ժամանակ լցու Են տալիս խաւարի մէջ։ Այսպիսինների կար-
գումն էր անդամանդը և 1630 թռւականից ծանօթ բռնոնեան քարը,
որ, եթէ զգուշութեամբ պահպանվէր, կարող էր շատ անգամ ա-
միսներով պահէլ իւր մէջ լուսի ճառագայթները։ Արոյշետե արե-
գակը ունի առաւել աղջու լուսատու զօրութիւն, այս պատճառով
նորա ճառագայթները նեսմացնումն միւս լուսատու մարմինքը։ և այս
պատճառով աստեղքը ցերեկով տեսանելի չեն։

2. Լուսեղեն նիւթը։

Լուսեղեն նիւթը բոլոր աշխարհի մէջ հաւասարապէս ծաւալ-
ված, մի շատ նուրբ հօսանուտ, ձգական բան է։ Կորա նրբութեան
պատճառով, չէ նկատվում նոյնպէս, թէ նուազվումքը այն մար-
մինը, որպանից բղխում նա։ թէ ինչքան զարմանալի էր այս նրբ-
րութիւնը, կարելի է անտարակոյս կացուցանել, եթէ մի թղթի մէջ
մի ծակ շինէիր և նայէիր նորա միջովը։ սորանով կը տեսանէիր դու
բոլոր առարկայքը այնպէս լաւ, ինչպէս աղատ աչքով։ այդու ամե-
նայնիւ, բոլոր տեսանելի առարկաների ամեն մինը պիտոյ է գոնեաց
մի լուսի ճառագայթ այն նուրբ ծակով արձակէր դէպ ի քո աչքը։

3. Լուսեղեն նիւթը։

Ամենայն մարմիններին բաների մէջ լցուը առաւել արագաշրջ
է. պատճառ, մի սեկոնդի մէջ անցանումն նա 42,000 մղոն։ Արեմն
այն 20 միլիոն մղոն հեռաւորութիւնը, որ կայ արեգակի և երկրի

մէջ, անցանումէ նա 8 մինուտի և 13 սեկունդի մէջ։ Շատ անշարժ աստղներ այնքան հետի էին մեղանից, որ հարկաւոր էին հաղպատաւոր տարիներ, մինչև նոյս լոյսը հասանէր մեզ։ Բայց որովհետեւ այս աստղները հաղպատաւոր տարիներ ահա փայլումն, և նոյս լուսեղեն ճառագայթները միշտ, անընդհատ կարգով յառաջ են վաղում, ապա իւրեանց ճանապարհը վաղուց աւարտած են, և այս պատճառով, այս աստղների ամեն մինը իսկոյն տեսանելի է լինում մեզ, երբ որ մասնումէ մեր հորիզոնի մէջ։

4. Լուսի ճառագայթնեղեն։

Լուսի ազգուութիւնը կարելի է սահմանել միայն նորա շառաւիղների բազմութենից, որ ընկնումէն մի տափարակի վերայ։ Ինչքան մեծ էր այդ շառաւիղների բազմութիւնը, այնքան ևս տառեւ չերմացնումէին և այրումէին։ Եթէ արթուրակի ճառագայթները թանձրացնումէինք մի վառողական ապակիով, ապա աւելի սաստիկ այրողական էին նորա, քան թէ կրակը։ Ինչքան շեղահայեաց ընկնումէին արեգակի ճառակ այթները մի տափարակի վերայ, այնքան աւելի նուազ էր նոյս խոռութիւնը, և ոյնչափ ևս պակաս էր նոցա ջերմացուցիչ զօրութիւնը։ Այս պատճառով, արեգակի ճառագայթները ձմռան ժամանակին աւելի թշվէ են ներգործում, թէտք մեք աւելի մօտ էինք նորան քան թէ ամառան ժամանակին։

Լուսի շառաւիղները լուսատու մարմնից արձակվումն զեպ ի ամենայն կողմ ուղիղ խաղողվ։ Երբ որ հանգիպումն մի խաւար և անթափանցիկ մարմի մակերեւութի, ապա բացարձակվումն նորանից։ Այս պատճառով տեսութիւնը կատարվումէ երեք տեսանկ։ այսինքն, կամ ուղղակի ներս մտանող, կամ բացարձակված և կամ թէ կոտրասած շառաւիղներով։

5. Լուսի ճառագայթնեղեն բայցը ճառագայթնեղեն։

Լուսի շառաւիղները բացարձակվելով մարմինների խաւար մակերեւութերից, հասուցանումն մեզ շատ և շատ օգուաներ եթէ լոյսը չունենար այս յատկութիւնը, մեք կարող էինք տեսանել լուսաւոր մարմինքը միայն, բայց խաւարները ոչ։ Բայց դորանով խաւար մարմինքը ուղարկումն է զեպ ի մեր աչքերը լուսի ճառագայթներ և այդպէս լինումն ինչ եանք տեսանելի։ Եթէ կոկած էր մի այդպիսի խաւար մակերեւով որ, և իցէ մարմի, ապա նա բացարձակումէ շառաւիղքը նոյն ուղղութենով, ինչ ուղղութենով նորա ընկած էին նորա վերայ։ Այս պատճառով մի պատշաճաւոր հայելի պատկերացնումէ առարկալը այնպէս, ինչպէս մեք լոկ աչքով տեսանումն նորանց։ միայն թէ երեսումէր այս տեղ զեպ ի ձախ այն բանը

որ գեղի ի աջ էր, և անդրադարձ կերպով՝ զեղուի աջ, ինչ որ ձախոցը մասնաւում էր:

6. לְמַנְתָּרָה בְּלִבְנֵי יִשְׂרָאֵל

Сама мавріїннекр թափանցիկ են, ոյսինքն, թշլ են տալիս
որ նոցա վերայ ընկած լուսի շառաւիղբը անցանեն նոցա միջածա-
կերով։ Եթէ թափանցիկ մարմինը ունէր հաւասարատեսակ խոռո-
թիւն, ապա լուսի շառաւիղբը անփոխանիի և ուղղագիծ յառաջ
էին գնում։ բայց եթէ նոքա մի աւելի նորը նիւթի միջից անցա-
նումին դեպ ի մի աւելի խիստ մարմին, զոր օրինակ, օդիքը չըի
մէջ, և անդրադարձ կերպով մի աւելի խիստ մարմից դեպ ի մի ա-
ւելի նորը, ապա խոտորվումն նոքա ուղղիղ ընթացքիցը և դո-
րանով պատճառումն վահանակ է ի դրա դիւճ։ Բայց այս բանը լի-
նումէ միան, երբ շառաւիղբը դեպ ի շեղ ուղղութենով թափան-
ցումն նիւթերի մէջ։ այս պատճառով, Եթէ մի գաւազան շեղ ուղ-
ղութեամբ դնէիր չըի մէջ, ապա երեսումէր նա այն տեղումը կոտ-
րած, ինչ տեղ ջջափառէր նա չըի երևսը։

7. የተቻቃና ማጠቃለ-በታች.

1. πειρή σωταιριθηνέρρε կոտրատվելով յառաջացնումն զարմանալի տեսիլներ շատ, որոնց մէջ արժանի է առանձին յիշատակութեան ռդեքն օլոզո-բիւ կամ Ն-Հ-Բ- ռդեքն ասած բանը, որանով շատ բացակայ սահմաններ տեսանվումն օդի մէջ որպէս թէ կախընկած: Այս տեսիլը առաւել յաճախ նկատած են Սիկիլիայի և Խոտիայի մէջ եղած ծովանեղուցի եզերներումը: Գարնանային ժամանակը, երբ որ պայծառ և հանդարտ եղանակ էր, արեգակի ծագելուց յառաջ կամ թէ արեգակի մտանելուց յետոյ, երեւումն ամպերի մէջ հանդիպակաց եղրի վերայ բազմաթիւ սիւներ, աշխարակներ, բերդեր, քաղաքներ և այլ առարկայիք շատ հաղուագիւտ կերպարանքներով, որ փոփոխութեն իւրեանց ձևակերպութիւնը և պատքանութեան: Անապաշ մարդիկ այդ բանի վերայ աչ ու դոզի մէջ են ընկնում, կարծելով թէ դոքա էին Մօրգանա կախարդուհու (Gata morgana) բերդերը և բնակարանները: Բայց այս օդեղն ցոլացութիւնը էին միայն լուսի շառաւի իդների կոտրատվելու հետեանքը, և գորանով, երկրի վերայ գտանված առարկայիքը պատկերանումն օդի մէջ ինչպէս մի հայելու մէջ:

*Ամսնապէս լուսի շառաւելիների կոտրատվիլը պատճառ էր, որ ոմանք մարդիկ տեսանումէին իւրեանց յասուկ պատկերը: Այս պատահման ժամանակը լուսի շառաւելինը չեղ ուղղութենայ բնիկու-

մեն մի խաւար մակերքութիւն վերայ, պյառէս որ սորանից բացարձակ-
վումէին և գորանով Ներկայացնութեն մի պյլ Հանդիպակաց տուար-
կայի պատկեր: Անապաշտութիւնը պյառի տեսիլներից հնարել է պյն
առասպելը իշխաներից մարդերի մասին և հաստատում, որպէս թէ
պյնափիսի մարդիկ, որ տեսանումնեն իւրեանց յատուկ կերպարանքը,
մատ էին մի խորհրդաւոր պատահարի, զոր օրինակ, մահու: Բայց
պյն մարդը միայն, որ չը գիտէր, թէ ինչպէս պատճառ ու Ներգործու-
թիւն կապակից էին միմեանց հետ բնութեան տեսիլների մէջ, կա-
րող է հաւաս լնծայել պյտպիսի մօլար և սուտ կարծիքի:

8. **לְמִנְגָּדֶל**, **לְמִנְגָּדֶל** - **לְמִנְגָּדֶל**, **לְמִנְגָּדֶל** - **לְמִנְגָּדֶל**

ՎՃՔԸ ՀՆԱՐԱԿԱՌՈՒՄԸ ԹԵՍՈԱԹԲԻՆԸ ՆՈՐԱՆՈՂ, որ մի ԼՌԱՍԱԽՈՅԼ
առարկայի պատկեր կատարելապէս, թէպէտ փոքրանե, չոյշառու նո-
րա բբի յետակղմումը, որի վերայ ցանցատեսակ պարզած է առ-
սողական ջիղը: Աւ բայն անսութիւնը լինումէ պատկերներով: Այս
պատկերը տեսաննելի առարկան իւր ամենայն կետերից ուղղագիծ շա-
ռաւախղներով ուղարկումէ բբի մթօվը զէպ ի աչքը: աչքի ներառւմը
գտանվում այլ ևս մի թափանցիկ, զարմանաչն մարմին որ ասվու-
մէ բէ-ըւայն ոսպի, ըստ որում ունի սապի կերպարանք: Սա լող է
տալիս մի գէջ նիւթի մէջ և հնարաւորումէ պատկերը այն յետա-
կողմի վերայ, որ ցանցատեսակ թաղանթից տարածվում զէպ ի տե-
սողական ջիղը: Ինչքան շատ հետի էր մեզանից լուսախոյլ մարմինը,
այնչափ և ազօտ էր լինելու այն պատկերը, որ նորանից գոյանու-
մեր մեր աչքի մէջ: Այլը, մի պյդախիսի պատկեր կարող էր մեր աչ-
քին երևել շատ կամ փոքր պայծառ, նայելով մեր աչքի առողջ
կամ հիւանդ և տկարացած որպիսութեանը: Այս անշարժմանը պարման
գարման տանելու համար, գտել է մարդդ զանազան խելացի հնար-
ներ: գողանից առաւել պարզը են լինողները ոսպիներ:

Ապա պատրաստած էին աշքի որպիսով թե ան համեմատ պատճառ, կային հ-բ-դ-ր-է- և եր-բ-դ-ր-է- մարդիկ։ Կարճատես աշքերով մարդիկը թէպէտ լաւ ևն տեսանում մօտից, բայց հեռուից վաս, և երկարատես աշքերով մարդիկը տեսանումն հեռուից լաւ, բայց մօտից վաս։ Նայելով այս զանազան որպիսով թե անը աշքի, նյոյնպէս զանազան տեսակ պատրաստած էին Ակնոցների ապահովքը։ Մի քանիքը շինած էին այնպէս, որ մի տեղ էին հաւաքում այն լուսեղին շառաւիղքը որ պիտոյ է թափանցէին աշքի մէջ։ Սորա հակառակ, միւսը ըստ պատրաստած էին այնպէս, որ ցրվումէին նորանց։ Այս պատրաստով թենով թէմեւանում տեսութիւնը այն աշքի համար, որի

Համար շինած է ակնօցի աղակին, պատմառ, ոյն մարմի պատկերը որ պիտոյ է տեսաներ աչքը, աւելի պարզ ներկայանումէ նորա առաջև, թէ ով է եղած առաջին հնարողը ակնօցների և երր է պատահել այդ գիւտը, յայտնի չէ, Աւելի ստուգապէս յայտնի է պատահական գիւտը հեռացաւ ողբերքէ: Մի ակնօցագործ Հոլանդիայի մէջ, 17րդ դարու սկզբումը ակնօցի աղակիներ շատ զրած էր փողակների մէջ. նորա երեխայքը խաղումներին նոցա հետ և գասակարգումին նորանց, նայելով նոցա զանազան մեծութեանը, Երբ որ նոքա նայեցին այս աղակիների միջովը, նկատեցին, որ մի բացակայաշտարակ ցուցանումը մի առանձին մեծութիւն, քան թէ յառաջուց: Այսպէս աչա շուտով յայտնագործվեցաւ յետք հեռացցյ փողակը: Այս անօթը բարդանումէ զանազան աղակիններից, որ սահմանեալ հեռաւորութենով այնպէս կապակից են միմանց հետ, որ հեռաւոր առարկայքը՝ պատկերացնումն առաւել պարզ, քան թէ նորանց կարելի էր տեսանել լոկ աչքով: Այս պատմառով հեռացցյ փողակները շատ հարկաւոր էին ծովի վերայ և պատերազմի մէջ նկատողութենների համար, բայց նոցա առաւել պիտանութիւնը յայտնվել է այն նկատողութենների մէջ որ արած են նոցանով լայն ու արձակ երինակայքումը: Քանի և քանի ասաղներ յայտնագործված են այն ժամանակից յետոյ, երբ որ Գալիլէի խորացի աստեղաբաշխը 1610 թուականի Յունվարի 7 ումը զիշերով, առաջին անդամը ուղեցրց իւր հեռացցյ փողակը գետի ի Խովիտիքը ըստ Կ նորա մատակայքումը յայտնագործեց շորս փոքրիկ աստղներ, լուսինները Կոպիտերի: Հեռացցյ փողակովը, թէ նա պատրաստած էր բարոք, կարող ենք տեսանել 6000 անգամ աւելի հեռի, ուրեմն այդքան անգամ ևս պայծառ, քան թէ ամենասուր աչքը կարող էր նկատել:

I. ուսեղէն ճառագայթների կոտրասվելու և բացարձակվելու վերայ հիմնած է նոյնպէս Խոշորացցյ աղակին կամ թէ Մանրատեսիկը: Այս տեղ աղակիքը ձևացրած են այնպէս և ունին յանձնի այնպիսի կապակցութիւն միմեանց հետ, որ մի առարկայ շատ աւելի մէծ են ցուցանում, քան թէ նա երեւումը լոկ աչքին: Զար օրէնակ մի լու, եթէ նայէիր նորա վերայ մի լու խոշորացցյ աղակիով, համարեած թէ այնպէս մէծ էր երեւում ինչքան մի մէծ եղ: Խոշորացցյ աղակիքը լինական գիտութենների մէջ անչափ հարկաւոր անօթներ էին: Պատմառ, առանց նոցա շատ բաներ բնութեան մէջ չէինք կարող ամեննեին նկատել:

I. ուսի նոյն յատկութեան վերայ հիմնաւորվումէ նոյնպէս Ա-

ուղական հայելին կամ վառողական ապակին։ Այրողական ապակի-
սիր ըմբռնվումն արեգակի շառաւիդքը և այնպէս խիստ հաւաքվու-
մեն մի տեղ, որ գորանով ստանումն սաստիկ զրութիւն և վառու-
մեն ապա։ Այն տեղը, որը շառաւիդների խոռութիւնը առաւել սաս-
տիկ էր, ասվումէ Ա-ռա-զ-ն-է-ն կեդ։ Պարոն Զիրնհառողն մի սաքսոնա-
ցի ազնուական, շատ ուղագործեց վառողական հայելին։ Նա ուներ
մի այնպիսի հայելի, շնած մի որդնձեսյ տախտակից, որանով դրժ-
ուարահալելի մետալներ կարճ միջոցում կարողանումէր հալել, այս
և ապակի դարձուցանել։ Անդամանդը նորա վառողական կէտի տակ
ծուխ գարձառ և ցնդվեցաւ։ Վառողական հայելիքը առաւել լապէս
հարկան օր էին բնայութութեան համար։

9. የ—ኋይኑ ተያያዥ—በትና

Այս հատուածի 5 և 6 յօդուածների մէջ աւելի մանրամասնաւրար պատմած կոտրատվիլը լուսի շառաւիզների է նոյնպէս գուների բայց առաջնական պատճառը՝ թէպէտ գիտենք մեք, թէ ինչպէս են յառաջնում գոյները, բայց թէ ինչ բան էին նոքա, չէ կարող ասել ոչինչ մաշկանացու։ Ամեն մի լուսաշառաւիլը բազկանումէ եօմն գունից, որ կոտրատելով կարելի է որոշել միմեանցից։ Առանով ամեն մինը երեսումէ իւր յատուկ գունվլը։ Այս բանը կարելի է շատ բացայայտ և անտարակցոյս կացուցանել մի ապակեղեն Պրիմայով, այսինքն մի երեքկողմանի յարինած սպիտակ ապակիով։ Այն լուսաշառաւիղը որ հարկադրվումէ անցանել նորա միջովը, կոտրատվումէ նորա մէջ և բաժանվումէ եօն գունաւոր շառաւիզներ։ Այս շառաւիզների ամենից ստորինը, որ առաւել փոքր կոտրվումէր, կարմիր է, երկրորդը՝ նարնջագոյն գեղին, երրորդը՝ ծծմբանման գեղին, չորրորդը՝ կանաչ, հինգերորդը՝ երկնագոյն կապշտ, վեցերորդը՝ լեզակի պէս կապշտ, եօմներորդը՝ մանուշակագոյն։ Կայսեր իսկ կարգով երեսումն և ծրիածանի կամ Ազեղի գոյները։ Այս գոյները էին ուրիշներ, կամ էլեւուր գոյները և սոցա զուգախանուութենից յառաջնառումն էրիւր գոյները։ Կանաչ գոյնը, որպէս առաւել միջակը, ունի առաւել հաւասար շառաւիզարեկութիւն, և այդ պատճառով առաւել առողջարար էր նորա ներդործութիւնը աչքի վերս։ Ուրիշն գոյները գոյանումն ճառագայթների զանազան տեսակ կոտրատվելուց

Առաջին մարմինը որ բացարձակում բոլոր լրասա-
շառական պատճենները այս պատճենով աղիտակութիւնը շլաքոցին էր աշքի
համար: Այնպիսի մարմինք, որ ոչինչ լուսաշառական իդք չեն բացար-
ձակում, եթե ունեն առաջին պատճենով և սեաւ մարմինքը առաջին

Հետ կրակվումն վառողական հայելու տակին, ըստ որում կարօտով ներս են ծծում լուսաշառակիզը, Եօթն արմատական գոյները կարելի է ճանաչել և նորանով, Եթէ մի ապակեղեն ջրալից բաժակ ոյնպէս զնէիր, որ արեգակի ճառագայթները շեղագիծ անցանէին նորա միջովը, Կյանպէս առաւտեան ցողի և շատրուանների ջրացայտութեան մէջ երկումն այս գուները, Եթէ արեգակի շառաւիզը կողմակի ընկնումն նոցա վերայ:

1. ԵԼԵՔՏՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ:

Ի՞նչ ասել է Ելեքտրականութիւն: Ծառ վաղ ժամանակներով նկատած էին, որ սաթը (քահրիբարը), Եթէ տրորէիր նորան, դէպ ի իւր կողմն էր քարշում թեթև բաներ, որպիսի են թելեր, ցամաք ծառատերեներ, թղթի կոտորներ և այլն: Կյան իսկ յատկութիւնը նկատեցին յետոյ և ծծումրի, կուբամոմի, խէժի և ապակով վերայ. Եթէ այս մարմինքը յառաջուց սաստիկ տրորվումէին, ապա ձգումն դէպ ի իւրեանց կողմը միւս աւելի թեթև մարմիններ: Թէպէտ դոքա մի քանի ժամանակից յետոյ բաց են թողում մօտ քարշած առարկայքը, բայց մի կարճ միջոցից յետոյ կրկին քարշումն նորանց և այդ խաղարկութիւնը շարունակվումէ այդպէս: Այս զօրութիւնը մօտ քարշելու և բաց խթելու մի մարմին, ասումն Ելեքտրոնիւն յունական բառից Ելեքտրօն (որ է սաթ), ըստ որում Ելեքտրոնի վերայ առաջին անգամը նկատած էին այս յատկութիւնը, Այն մարմինքը որ ունին այս յատկութիւնը իւրեանց վերայ, ասվումն Ելեքտրոնի մարմիններ: Եթէ այս մարմինքը սաստիկ տրորէիր և ապա շօպիէիր նորանց մասով, ապա կը տեսանէիր մի պայծառ ճայթուն կոյժ, որ ներս էր յարձակվում մասի մէջ և պատճառում մըր մի փաթը ցաւ:

Եթէ Ելեքտրական մարմինքը տրորէիր մութ տեղում, ապա կը տային նորա մի լուսապայծառ փայլ: Այն և մի քանի անասունների մէջ, զոր օրինակ կատունների և ձիանների վերայ նկատել են այս յատկութիւնը: Թէպէտ գիտենք մէք Ելեքտրականութեան ներգործութիւնքը, և կարող ենք հաստատապէս ասել յառաջուց թէ ինչ պիտի հետեւը, բայց նորա ներքին էութիւնը անկարող ենք բացայսել:

Կյանպիսի մարմիններ, որոնց վերայ նկատած էին, որ նորա տրորվելով աստանումն այնպիսի որպիսութիւն, որ կարող էին յայտնել Ելեքտրականութիւն, ասվումն Ելեքտրոնիւն Ելեքտրոնի մարմինքը կամ

թէ նոյնպէս ԶԵՒՏԵՐԵՒՅ, որովհետեւ շօշափելով միայն ԵԼՔԹՐԱԿԱՆ մարմիններից, չեն ընդունում ԵԼՔԹՐԵՒՄՆԵՐՆ և ու Լո ՀԵՒՏԵՐԵՐԵՐՆ ՆԵՐՆ: Այդպիսի չփոխազրիչք էին ապակին, խէժը, ծծումբը, ածխաքարը, քարերը, չոր փայտ, մետաքս, բուրդ, փետուրներ, մռուղմ, մռիմիր և պյլ մարմիններ: Սորա հակառակ, հեռանելը տրորվելով չեն գտնում ԵԼՔԹՐԱԿԱՆ, բայց մասնաւորումն ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ կամ թէ փոխազրումն նորան. ոյն յատկութիւնը ունի ջուրը. այսպիսի մարմիններ ասվածմն ԵԼՔԹՐԵՒՄՆ ՓԵՒՏԵՀՅ: Արով հետեւ տրորելը կապակից էր զանազան անյարմարութիւնների հետ, ապա մտածեցին հնարք գտնանել այս անյարմարութիւնքը հեռացնելու համար, և պյակէս Գրայ անգլիացին հնարքը մի տրորական անօթ, որին անուն են տուել ԵԼՔԹՐԵՐԵՐՆԵՐՆ ԳԵՂԵՇ: Այս մեքենայովը սկզբնապէս ԵԼՔԹՐԱԿԱՆ մարմինքը տրորվելով առանումն ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, և անել ԵԼՔԹՐԱԿԱՆ մարմիններին կամ փոխազրիչներին հասանումէ ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ որ և նոքա կարող են փոխադրել զեպ ի պյլ մարմիններ:

Ո՞ի մարմին որ ներ է բերած ԵԼՔԹՐԱԿԱՆ որպիսութեան մէջ, ասված ԵԼՔԹՐԵՐԵՐԵՐՆ: Ելեքտրականութիւն հազորդակցութիւնը կատարվում ոչ թէ միայն անմիջապէս շօշափելով միմանց Փոխազրիչը և Զփոխազրիչը, այլ այն և մի փոքր հեռուից, և այն ժամանակը ԵԼՔԹՐԱԿԱՆ նիւթը երևումքը որպէս մի կայծ:

Եմէ մի ԵԼՔԹՐԱԳՈՒՅԱԾ մարմին պիտոյ է պահպանէր նորան հասած ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ապա հարկաւոր էր ռռռնյուշնեւ նորան, այսինքն պիտոյ էր ամենայն կողմից ըլջապատել նորան անփակացրէս, մարմիններով, զոր որինակ մտաքսով:

Ակդրնարար ԵԼՔԹՐԱԿԱՆ մարմինքը ցուցանումն այն տեղերումը միայն ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, ուր նոքա տրորվումէին, և կորսանումն նորան այն տեղերումը միայն, բնչ տեղ շօշափումն նորանց Փոխազրիչովը. բայց միւս տեղերումը ոչ, բայց Փոխազրիչը շօշափելով մի ԵԼՔԹՐԱԿԱՆ Զփոխազրողից, ԵԼՔԹՐԱՆՈՒՄՆ բոլորովին, բայց դարձեալ կորուսանումն բոլոր, նոցա հասած ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, եմէ շօշափէիր նորանց:

Վմենայն մարմին որ պատշաճաւոր չափով ունէր իւր մէջ ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, չէ ցուցանում ԵԼՔԹՐԱԿԱՆ նիւթործութիւնք: Բայց եմէ մի մարմին ունէր շատ կամ փոքր ԵԼՔԹՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, քան թէ իւր բնական դրութեան մէջ պիտոյ է ունենար, ապա ԵԼՔԹՐԱԿԱՆ էր նա:

Ո՞ի մարմին որ ունէր ԵԼՔԹՐԱԿԱՆ նիւթի առասութիւն, աս-

վումէ որունութեան ելք+որունուն կամ ելքտրական նիւթով ծանրաբեռնած, և նա որ պակասաւոր էր այդ մասին, և բայսապէս ելք+որունուն, կամ թէ ելքտրական նիւթով շատ փոքր բեռնաւորած:

Ելքտրականութեան էութիւնը բաղկանումէ երկու առանձին, մի որոշեալ ազգակցութենով միմեանց հետ կաղակցած, նիւթերից, պատճառ, եթէ երկու փոքրիկ խցանափայտեայ գուշեր կամ տայիր մետաքսեայ թելքրով և երկուսը ևս ելքտրացոցանէիր կամ ապակիով, կամ թէ խէժով, ապա նորա կը փախչէին միմեանցից: Բայց եթէ նոցանից ձնը ելքտրացոցանէիր ապակիով և միւր խէժով, ապա մօտ կը քարշէին միմեանց: Այս պատճառով երբեմն յիշատակութիւն է լինում ուստիշն ելք+որունուն-ընէն, (որ յառաջացած էր ապակիուց) և խէժն ելք+որունուն-ընէն մասին (որ յառաջացած էր խէժից): Նոցանից առաջնը առումն ուստիշն ելքտրականութիւն, միւր բայսապէս: Եթէ մի մարմին որ կարող էր ընդունել ելքտրականութիւն, հաղորդակցէիր և տրորած ապակիու հետ, և տրորած խօսքին մարմին հետ, նա ամննեին չի ելքտրանայ, որովհետեւ այդ երկու տեսակ ելքտրականութիւնքը ոչչացնումն միմեանց, և այդ պատճառով անհին բան չէր, եթէ ասած են նորանց ներհանք ելք+որունուն-ընէն:

Ելք+որունուն նկատելի է շատ անասունների մէջ, մանաւանդ կատունների վերայ: պատճառ, եթէ մի կատու մութ տեղումը շիքիր դէպ ի վեր, ապա ցայտվումէին ոչ թէ լուսափայլ կայծեր նորա մաղերից, այլև լսելի էր մի ճայթիւն: Ելքտրական նիւթը առաւելապէս բացայացս անսանվումէ շատ ձնների մէջ, զոր օրինակ դողդողուն օձակի, դողդողուն կատուածկի, և Սիլուրոս Ելքտրիկոսի վերայ:

Կամանապէս մի կիսով շափի թափանցիկ աղնիւ քար Տուրմալին անունով ցուցանումէ սաստիկ ելքտրականութիւն: Կա գտանվումէ Ցէյլնումը, Գրեօնլանդիայումը, Աէհաստանի և Սաքսոնիայի մէջ և ունի մշտ թնագցն կամ մեաւ կերպարանք: Եթէ այս քարը դնէիր ջերմ մոխրի մէջ, այնպէս որ նա մնէնչ մի սահմանեալ աստիճան ջերմացած էր, ապա սկսանումէր նա խաղալ մոխրի հետ, մի ծայրից մոխրը մօտ քարշէլով նորան, և միւր ծայրից բաց խօսքով իւրեանից:

Ելքտրականութիւնը շատ անգամ օգտարեր կերպով դործ է դրված զանազան հիւանդութենների մէջ. մանաւանդ այնպիսների մէջ որոնց պատճառքը էին անօթների իցանվիլը և ջղային ախուրը Արսինքն, ելքտրականութիւնը ոյդպիսի ցաւերի մէջ ձեռնուու է արտաշնչութեանը և արիւնի շրջաբերութեանը, այլև շատացնումէ արտաթորութիւնքը մասնների մէջ.

2. Գալլական:

Այսպէս ասումն մի յայտնագործութիւն, որ 18 դարու վերջումը արած է Ալյոհ Գալվանի հաշակառոր բժիշկը և ուսումնապետը Բոլոնիա քաղաքին՝ Նա փորձով յայտնի կացուց, որ մի գորտ, որի կաշին հանել էր վերայից, որ և ոչինչ կենդանութեան նշան ցայց չէր տալիս, սկսեց սասակապէց ցնցիլ, երբ որ նա գորտի մերկացուցած բարձերի մինամիսքը և ջիղերը շօշափեց երկու զանազան մետաղներով, զոր օրինակ մինամիսը ցինքով և ջիղը պդնձալով, բայց երկու մետաղները ևս պիտոյ և նշանակէն շօշափէին միմանց, եթէ անսասունի ցնցիւնը յառաջանալու էր:

Աւրեմն Գալվանիսուր է մի ելեքտրականութիւն որ գրգռվումէ երկու այլեայլ մետաղների հպաւորութենով: Նա շատ անգամ գործ է ածվաւմ ընդդեմ այնպիսի հիւանդութենների, որոնց ընդդեմ յառաջուց գործ էին ածում ելեքտրականութիւնը:

Գալվանին կարծումը թէ այն տեսիլքը է շնչաւորական ելեքտրականութեան ներգործութիւն: Բայց շուտով տեղեկացան, որ զա էր միայն ներգործութիւնը երկու այլեայլ մետաղների որ շօշափումէին միմեանց. պայ պատճառով անուանեցին նորան Գրուլան Քրիստոն կամ թէ յայտնագործողի անունով, Գալվանիսուր: Այս յայտնագործութիւնը ասիթ է տուել միւս այլ խորհրդաւոր շատ նկատողութենների:

Եթէ մի փոքրիկ կոսոր ցինք գնէիր բներանից դուրս պարզած լեզուի տակ և մի փոքրիկ կոսոր պղինձ կամ արծաթ լեզուի վերայ, ապա նոյն բռակէին, երբ որ այս երկու մետաղները շօշափումէին միմեանց, կը զգայիր մի թթուալյին կծու համ, որ տեսումէ այնքան, ինչքան որ մետալքը կապակից էին միմեանց հետ: Եթէ մի արծաթի դրգալ մոտեցնէիր ձախակղմեան ստորին լնտերքին (ատամնամսին) և մի կոսոր ցինք մօտեցնէիր աջակղմեան վերին լնտերքին և ապա առաջնէից հպաւորէիր միմեանց մետաղները, իսկոյն կը տեսանէիր մի կայծակ աչքիդ առաջն: Բայց այս կայծակը տեսանելի է այն մարդուն միայն որ կառարումէր այս փորձը. այլն հարկաւոր էր միշտ, որ երկու զանազան մետալքը շօշափէին միմեանց: Ոչ ամենոյն մետալք ներգործութեն միակերպ սաստիկ. աւելի ազդու տեսանվումէին այդ բանի մէջ ցինքը և արծաթը: Կերգործութիւնը սաստկացնելու համար, սովորաբար թափումն բաղմաթիւ թերթեր ցինքի և արծաթի, նորանց պատշաճապէս ողորկումն և միջադիր սասւեղէն կամ թղթեղէն բոլորակներով, որ աղաջրով գիջացուցած էին, շինումն մի սիւն:

Այս պյղպիսի պատրաստութիւն ասումն գալլական շնորհ կամ

բարեկի, և որովհետեւ մի խտալսցի բնաղնին, վալուա անուն, զանագան կերպով կատարելագործել է այդ անօմը, այդ պատճառով տավամել նա և Վալուայի ունակութեան միանի կազմութեանը, ինչքան որ կարելի էր այդ, առանց պատճերի, Դա հաստատած է մի զետեղաբանի մէջ, որի ստորին և վերին մասը բաղկանում փայտից սորա երկուքը կապակից են միմանց հետ երեք ապակեղէն գաւաղաններով: Տակումը զնուամն մի պղնձի թերթ և սորա վերաց մի թերթ ցինք: Սովորաբար մածուցանումն պղնձի թերթը իւր բոլոր մակերեսութեալ մի ցինքեղէն թերթի վերաց, և սորանոու շատ հեշտանուամեր սիւնի կառուցանելու գործը, Ցինքից յետոյ դաշին է մի թերթ թղթանիթ, բրդանիթ կամ թէ թաղիք, որ յառաջնոց կակաղացուցած էր ջրի մէջ և յետոյ սեղմած: Ամենանի նոյն դասակարգութեամբ շարունակվում սիւնի ցինութիւնը, ոյնպէս որ կարելի է զիցել միմանց վերաց 20 մինչև 40 զյութ թերթիք: և բոլոր շինուածը վերջանում մի ցինքեղէն թերթով:

Ոիսնի շնուրպն չերչը ասվումէ Գրուն բլեւ, ունի չերչն նոյրը առվամել Բաշուական բլեւ: Այս ծայրերի վերաց դասանումն հաւաքաված ներհակ ելեքտրականութիւնքը որ գրգռված էին զուգամերթերթերի շօշափելովը միմանց: Եթէ այս Վալուայի սիւնի վերջին թերթերի վերաց մածուցանէիր մտալեղէն լարեր, ապա սոցա ծայրերը բաղկացնումին սիւնի բնենուրը: Երբ որ այս երկու լարերը որ բաղկացնումն սիւնի բնենուրը, շօշափումին միմանց, այդ բանը ասվումէ: սիւնը կամ շղթան հաւաքան է: այդ ժամանակը չէր տեսանգում ոչինչ արտաքին նշան ելեքտրական գրգռութեան, այդու ամենայնիւ կատարվումը այդ գործողութիւնը շղթայի ներսումը: Քեւ ւեռների վերաց առաեւլապէս հաւաքված ներհակ ելեքտրականութիւնքը հանդիպելով միմանց ոչնչացնումն միմանց, և պիտոյ էր, ինչպէս պատահումէ արձակված էլէրդնեան սրուակի մէջ, չքանար ամենայն նշան ելեքտրականութեան, եթէ սա նոր ի նորոյ չը գշանար անդադար ամենայն զուգամերթի մէջ: Այս պատճառով, փակած շղթայի մէջ պացամբումն անդադար երկու ելեքտրական հոսանքներ հակառակ ուղղութենով: և հաւաքան լուն ամեն մի էլետումը պատճի մասնաւոր միաւորութիւն երկուների մէջ: Եւ արդարեւ, եթէ ընդհատէիր լարը որ և իցէ տեղում, ապա կը տեսանէիր մի տեղական կայծ երկու լարերի մէջ տեղումը: Մի և նոյն բանը նկատելի էր, եթէ լորը ընդհատած էր շատ տեղերում: Միայն թէ պիտոյ էր, որ լարերի մէջ եղած միջյալը մինեն փոքր և նուազ:

Ը զմայի մէջ շրջանառու հօսանքի ներգործութիւնքը մէծապէս արժանի են մէր ուշադրութեանը. նորա յայտնի էին գլխաւորապէս երեք տեսակ իրազութեաներով. այսինքն, որպէս ջերմանթեան և լուսի յայտնութիւնք, երկրորդ, որպէս ջիղերի և մուսկուլների գրգռութիւնք, և երրորդ, որպէս քիմիական վերլուծութիւնք:

Եթէ երկու փակողական լարերի մէջ բերէիր մի նոր լար որ և իցէ մետալից, այնպէս որ հօսանքը հարկադրված էր իւր ճանապարհը կատարել նորա միջով, ապա լարը ջերմանումէ, բորբոքվելով կարմրանումէ, այն և հրացէկ է դառնում: Այդպիսի դիմուածում երկաթի լարը այրվումէ խօսպէս, բայց մի լար շատ գծուարհալելի պլատինայից, հալվելով ձևանումէ որպէս փոքրիկ գլնդակներ: Այս յայտնութեանների սաստկութիւնը կախ էր շղթայի զարաւորութենից: Կային օրինակներ, որ մի 20 ձկչթաշափ պլատինան լար ելեքտրական հօսանքի զօրութեանով պահված էր վառ գրութեան մէջ. եթէ ամրացնէիր երկու սրածայր ածխակոտորք փակողական լարերի մօտ և նոցա վերջերը մօտեցնէիր միմանց, թողլով մոչոցումը մի փոքր հեռաւորութիւն միայն, ապա ելեքտրականութեան փոխանցութիւնը կից էր մի շատ սպիտակափայլ և արևալուսի նման նշանի:

Դիցուք մէկ շղթան փակված էր շշափութենով. ապա վեր եմ կանում ես ամեն մի ձեռովք այն լարի մինը և այդպէս խափանումը նոցա շշափութիւնը. նոյն բոպէին զգումն ես մի առանձին ցնցիւն իմ ձեռքի և բազուկների յօդուածների մէջ, որ կարող էր մի փոքրիկ քարշողութենից սաստկանալ մինչև մի ցաւալից խրմողութիւն: Մի և նոյն բանը հանդիպումէ, երբ որ ես բաժանած լարերը կրկնի միաւորումէի: Արեւմն ջղերի ցնցողութիւնը պատահումէ, ելեքտրական հօսանքը ներս ու գուրս մտանելով մարմնի մէջ և մարմնի միջոց. պատճառ, բացայս էր, որ նա իւր ճանապարհը ընտրումէ այս մարմնի միջովը, երբ որ մարմնը սիւնի թեթևների մէջ ներս է բերվում: Մի ջղէ տեսակ պատրաստութենով կարելի է ըլլթ թայի փակողութիւնը անդադար այնպէս խափանել և վերստին նորոգել, որ ելեքտրական հօսանքը փոխ առ փոխ գնար մարմնի և լարի միջովը, և սորանով մարմնը ստանումէր հետ զհկու շարունակ ցնցողութիւնք, որ բժշկականութեան մէջ համարվումին խորհրդաւոր և գործադրվումէին այն ցաւերի բժիշութեան համար, որոնց պատճառը էր ջղերի գործականութեան խափանումը, որ կարող էր պատահէլ գոսութեան, խլութեան և այլ պատահարների մէջ: Բայց որպա արդիւնաւորութիւնը, խօսելով ընդհանրապէս, չէր այնքան,

ինչքան սկզբումը ակնկալութիւն էին ունեցած այս կերպով բժշւ կութենից:

Վիմիական ներգործութիւնը, որ յառաջացնումէ ելեքտրական հոսանքը, կարող էին միայն քննութեան տակ լնկնել քիմիական տեսիլների հանդիսումը. այս տեղ թա՞լ մեք հերիքանանք այս ափնարկութենովը, թէ ելեքտրական հոսանքը աշխատումէ ամենովն քիմիական բաղադրութիւն, որի միջով գուռմէր նա, լուծանել դէպի ի իւր բաղկացական մասունքը: Գալվանոլաստիկ (գալվանական քանդակագործութիւն) ասած բանը էր ելեքտրական հոսանքի այս յատկութեան գործադրութիւնը:

Ո՞եք վերևումը վօլտոյեան սիւնը նկարագրեցինք նորա պարզ կազմութեան մէջ. բայց նա հետ զիստէ տեսակ կազմութիւն է տացել թէ նիւթերի մասին, որոնցից պատրաստումն նորան, թէ պատրաստելու եղանակի մասին: Էապէս սաստկանումէ սիւնի ներգործութիւնը, եթէ դնումէին զուգամերթերի մէջ ոչ թէ միայն ջրով տողորած թաղիք, այլև եթէ թաղիքը կաղզացրած էր հալած աղի կամ թէ թշլ բարակեղէն թթվութեան մէջ, կամ թէ երր որ զուգամերթքը դրած էին պատեանների մէջ որ պարունակումէն ոյզիսի հեղանիթք, և երբ որ պատշաճապէս կապակցած էին լարերով: Այսպիսի դիպուածներում անշափ սաստկանումէր ելեքտրականութիւնը քիմիական վերլուծութենների ազդեցութեան տակ: Առ հասարակ, այնքան ևս զօրաւոր էր սիւնի ներգործութիւնը, ինչքան աւելի մէծ և բազմաթիւ էին նորա զուգամերթերը, ինչպէս որ Աէյդնեան սրուակի մէջ, նշյապէս ևս այս տեղ կարելի էր միաւորել շատ սիւններ միահաղոյն ներգործութեան համար:

Գալվանիսմը գործ են ածում նոյն ցաւերի ընդէմ, որոնց ընդդէմ գործ էին զնում ելեքտրականութիւնը: Այլև գորանով փորձած են դարձեալ կինդանացնել երևութարար մուածները, զրի մէջ խեղզվածները, շնչառական եղանակներ և կոյծակից զարկվածները. և ոյդ փորձերի մէջ տեսած են որ մարդուս մարմնը Գալվանիսի զօրութենով սկսումէ ցնցվիլ, եթէ դեռ ևս չէր շիշած բռլոր կինսական զօրութիւնը:

1. ՄԵԳՆԵՏԻՍՄՈՒՄ:

Ո՞ի սեագոյն կամ մոխրագոյն քար, որ իւր անունը բանէն ստացել է փոքր Ասիսի Մագնեզիա քաղաքից, որի շրջակալքումը գտած են նորան առաջին անդամը, բայց այժմ գտանումն նորան

Համարեան թէ երկրի ամենայն աշխարհներում և մանաւանդ թէ զվեցիսի մէջ. այդ քարը երկու խորհրդաւոր յատկութեններով նշանաւոր էր միւս բոլոր քարերի մէջ: Կա մօտ է քարշում երկաթը և երկաթունակ մարմինքը, երբ որ նորան բաւական մօտենումին. և եթէ նա կարող էր ազատապէս շարժել իւրեան, զոր օրինակ մի թելից կախ ընկնելով, ապա միշտ գարձուցանումէ իւր մի ծայրը դէպի հիւսիս և միւսը դէպի հիւսաւ: Այս երկու ծայրակէտքը ասումն մագնիսի բներւ: այս ծայրակէտքի վերայ տեսանվումէ նորա քարշողական զօրութիւնը և առաւել ազդու կերպով: Այս երկու խորհրդաւոր յատկութիւնքը մանաւորումէ նա և երկաթին, եթէ սորան օծանէիր մագնիսեան քարով: Այս յատկութիւնքը այնքան զօրաւոր էն, որ ներգործումն և այլ առարկաների միջով, որ չէին երկաթունակ: Այս և օդից դատարկ տարածութիւնը, որ ցուցանումէ մարմինների համարեան թէ բոլոր յատկութենների վերայ կամ խափանարար և կամ թէ յաջողեցուցիչ ազդեցութիւն, ամենենի անգործ էր մագնիսի այս յատկութենների մէջ: Մագնիսը իւր քարշողական զօրութիւնը յայտնումէ նոյնպէս մի այլ մագնիսի վերայ, բայց միայն ներգործելով նորա ներհակ բնեռու վերայ. ուրիմն մի մագնիսի հիւսիսային բնեռը քարշումէ միայն միւսի հարաւային բնեռը, և անդրագարձ կերպով: Ճետել լով այս նկատողութեանը, անհաւասար անունով բնեռները ասիւմն նոյնպէս բուրեանից կամ դուռը բնեռներ. սորա հակառակ, հաւասար անունով բնեռքը բռնակունի կամ հույսուն բնեռներ:

Մագնիսի քարշողական զօրութիւնը կարելի է մէծապէս առաւելցնել, եթէ երկաթապատ առնէիր նորան (որ ասլումէ զրահաւորել), նորա բնեռները ողորկելով և ամրացնելով նորա վերայ երկաթի հարթ տախտակներ, որ ունէին մի ըմբռնելի որի վերայ կախումին երկաթի բնեռներ: Այս ծանրութիւնքը ժամանակ առ ժամանակ կարելի է բաղմապատկել, և այսպէս կային զրահաւորած մագնիսներ որ ձգումէին 300 անգամ աւելի ծանրութիւն, քան թէ ինքեանք ունէին: բայց և այս քարշողական զօրութիւնը ունի իւր չափը և սահմանը: Այդ զօրութիւնը թուլանումէ, անգործ մնալուց, սաստիկ ցնցողութենից, ժանգոտվելով և կայծակի ճաւագայթից:

Եթէ կամենումիր մագնիսացնել երկաթը, ապա հարկաւոր էր մի քանի ժամանակ օծանել նորան մի և նոյն ուղղութենով: Այս ճանապարհով կարելի է ստանալ որուն մագնիսներ որ շատ անգամ բնականիցը գերազանց էին իւրեանց զօրութենով: Եթէ երկաթի գաւազաններ, զոր օրինակ խա-

շեր աշտարակների վերայ մի քանի ժամանակ կացած էին ուղղահայ-
եաց զրութենով, երբեմ դառնումն նշնողէս մագնիսեան:

2. Մ-Ք-Դ-Ե-Ն- Ա-Է-Ա-Ը.

Մագնիսի պյն յատկութիւնը, որ նա, և մեւ կարող էր աղա-
տապէս շարժել իւրեան, մի բնելով նայումէ միշտ գեպ ի հիւսիս,
և միւսով գեպ ի հարաւ, ջննել է նորան մի շատ պիտանի անօթ,
որին տուած են անունս Մ-Ք-Դ-Ե-Ն- Ա-Է-Ա-Ը: Մագնիսեան ասեղը բաղկա-
նումէ մի նուրբ, թեթև, պողովատեայ ասեղից, որ արուեստական կեր-
պով մագնիսացրած է, և մէջ տեղումը գեղնապղնձի փոքրիկ գդա-
կով մի ուղղահայեաց պողովատեայ ծայրի վերայ հանգտացրած շարժ-
վումէ աղատապէս: Այս ասեղը ամրացնումն մի բոլորակ թղթանիւթ
տախտակի վերայ, ուր ձեւացրած է մի աստղ, որ հետեւ լով աշխար-
հի կողմերին բաժանած է 32 ծայր. սորան ասումն Հովհանն Ք-Ռ-Ռ
(Windrose): Ապահովութեան համար, սյս անօթը գնումն պատենի
մէջ որ վերևից փակած է ապակիով, և սորան ասումն Կ-Բ-Բ- կամ
Կ-Բ-Բ- Ա-Յ- Անօթի զիւտը պատահէլ է 14 երորդ դարու սկզբ-
րումը և համարվումէ Ֆլավիօ Զիոյս խոսացու դործ: Մագնի-
սեան ասեղը իւր ուղղութենով գեպ ի հիւսիս և հարաւ, լինումէ
շատ պիտանի, աշխարհի կողմերը դաշնելու համար ծովային և ցա-
մաքային ճանապարհորդութեան մէջ: Բայց սյս ուղղութիւնը մագ-
նիսեան ասեղի ամեննեին ճիշդ էր մի քանի երկրասահմաններում մի-
պյն: աւելի շատ տեղերում տարութերվումէր այս կողմ և պյն կողմ, և
ասեղի հիւսիսոյին ծայրը խօսորվումէր երբեմն գեպ ի արևելքը, և
երբեմն գեպ ի արևմուտք: Այս զարտուղութիւնը ասումն մագնի-
սեան ասեղի Խ-Ռ-Ռ- կամ Լատինական բառով Գ-Բ-Բ- կամ:
Այս պատճառը չեն կարողացել մինչև սյժմ մեկնել:

Ո՞ի այլ խորհրդաւոր տեսիլ պյն է, որ մագնիսեան ասեղը եկ-
վատօրի կամ Հասարակածի հիւսիսակողմումը իւր հիւսիսոյին ծայ-
րով ցուցանումէ գեպ ի ցած, և Կ-Բ-Վ- հարաւակողմումը իւր հա-
րաւոյին ծայրով գեպ ի խօնարհ, և պյնքան աւելի, ինչքան մո-
տենումէր երկրի բնեղուներին: Այս ցածանալը ասումն մագնիսեան
ասեղի Հ-Բ-Բ- կամ Խ-Բ-Բ- կամ:

3. Կ-Բ-Բ- Ա-Յ- Մ-Ք-Դ-Ե-Ն-:

Ծատ տեսակ փորձնըով յայտնի է կացուցած, որ ոչ թէ միայն
հանգական թագաւորութիւնը, այլև բուսական և շնչական թագա-
ւորութիւնքը պարունակումն իւրեանց մէջ երկաթեղէն նիւթ: Զոր
որինակ, մարդկային մարմինի արիւնը տեսած են շատ առատապէս տո-

գորված այդպիսի նիւթով։ Արովչետև մազնիսեան զօրութիւնը ներգործումէ ամենայն երկաթունակ մարմնի վերայ, այս պատճառով փորձեցին մազնիսի ներգործութիւնը մարդկային մարմնի վերայ, որ ատուգեն, արդեօք կարող էին սորանով բժշկական հնարներ գտանել զանազան հիւանդութենների համար ։ Փորձը ուսուցել էր, որ պէս պէս ցաւեր կարող են թէեւ ոչ ամենենին փարատվիլ, գոնեայ բաւական թէեւանալ, կրելով իւր մօտ արուեստական մազնիսներ ։ Բայց որովհետև երկաթունակ մարմիններ նոյնպէս հեշտ ընդունումն մազնիսեան զօրութիւն, և ապա յայտնումն մազնիսեան ներգործութիւնք ։ Սորանից եղբարակեցին, որ այս բանը պիտոյ է պատահի և մարդու մէջ։ Այս բժշկութիւնը աշխատեցին հնարաւորել զանազան ջջափութեններով և ձեռամբացի շինելով հիւանդի մարմինը կամ թէ մարմնի ախտացած անդամները։ Այս մազնեամսուի զօրութիւնը առաւելապէս ազդու երկեցաւ կնամարդերի վերայ որ ցաւագրաված էին ջղոյին ախտերով։ Այս տեսակ բժշկութիւնը երբեմն որպէս մի զարմանալի բան գոյավանիւթով, ծաղրաբանութեան աեղիք տուեց այն մարդերին, որ չունեին պարապ, փորձով վերահասու լինել այդ բանին, կամ թէ միանգամ իւրեանց մէջ այլ կարծիք տնկած լինելով, չը կամեցան և փորձեր կատարել այդ մասին։

Մի շատ զարմանալի բան է անդրադարձ ներգործութիւնը ելեքտրականութեան և մազնեամսուի մէջ։ Նմէ մի գլանաձև կոտոր երկաթ շատ անգամ պատառէիր պղնձի լարով և սորա միջից անցուցանէիր մի ելեքտրական հոսանք, ապա երկաթը ցուցանումէր շատ ազդու մազնիսեան յատկութիւնք, որ զադարումն իսկըն, երբ որ ընդհատումէիր ելեքտրական հոսանքը։ Նմէ այս փորձը կատարէիր պղողվատեայ առևղներով, սոքա մնումէին տեղապէս մազնիսական։ Այսպիսի փորձի մէջ գործածական փոխադրիչ մետալզէն լարբը փաթեթած էին մետաքսեաց թելերով, նորա համար, որ նորա չը շշափէին այլ մետալ, այսինքն առանձին մնային և ելեքտրական հօսանքը իւրեանց ներսով միայն, տարածեին միատեսակ ուղղութեանով։ Օրինակ, պատկերացնելք մեղ մի պայտանման կորացրած երկաթ, որ չէր ելեքտրական, և պատառատենք այս երկաթի վերջերը մետաքսափաթեթ պղնձի լարերով։ Այս պայտանման երկաթի անունը դնենք գ։ ապա դորա տակից դնենք մի մազնիս, սորա թէերը նշանակելով՝ և բ, և լեռնաները ժ և ։ Նմէ այս մազնիսը սաստկապէս պատուէինք իւր ուղղահայեաց լիսեռի շրջանակովը այնպէս, որ ժ և բ բնենոքը փոխ առ փոխ մօտենային երկաթի ծայրերին, ապա դշանումէր պղնձի լարի մէջ մի ելեքտրական հոսանք, որի զօրու-

թենով կարելի է յառաջացնել այն բոլոր ելեքտրական յայտնութիւնքը որ նկարագրեցինք վերևումը:

Եթէ մի, պտուտակի պէս ոլրած, լարի միջով, որ այնպէս էր կախ տուած, որ կարող էր պտոյտվիլ իւր ուղղահայեաց լիսենի շրջանակովը, անցուցանէինք մի ելեքտրական հոսանք, ապա այն լարը ստանումէ այնպիսի կացութիւն ինչպէս մադնիսեան ասեղը և ցուցանումէ նորա բոլոր յատկանշանները: Սորանից հետեւումքը ապա մի ներքին փոխադարձ յարակցութիւն երկու հոսանքների մէջ, և այս փոխադարձ յարակցութիւնը նշանակումն բառովս ելէրու- թիւնու որ ընծայումն այն յայտնութենների հասարակաց պատճառին:

Վոյն իրողութիւնը, որ մի կոտոր երկաթ կարող է ստանալ սաստիկ մագնիսեան զօրութիւն, մինչև մի ելեքտրական հոսանք անց էր կենում նորա վերայ փաթեթած լարի միջովը, պատճառ է տուել փորձերի այդ ելեքտրական հոսանքը որպէս շրջելու ոգտակար կացուցանելու: Բայց մինչև այժմ չէ պատճեն այդ զօրու- թիւնը գործական հանդէսի մէջ:

Ոորա հակառակ, անչափ մեծակշիռ բան էր Շօշափական ելեք- տրականութեան գործածութիւնը ելէրութիւնն Տելէրութիւնն համար: Առաջ գլխաւոր կազմածը այսպէս է. Եթէ մի պայտաձև կոտոր եր- կաթի վերայ փաթեթած պղնձալարի երկու ծայրերը ունեին բաւա- կան մեծ երկայնութիւն, զոր օրինակ, եթէ նորա մղնաւոր երկայ- նութենով ձգվումէին դէպ ի մի տեղ, ուր կարգած էր մի գալվա- նական շղթայ, ապա կարելի է, լարերի ծայրերովը գալվանական շղթան փակելով ու բանալով, այն հեռաւոր երկաթը փոխ առ փոխ մագնիսացնել, և կրկին խլել նորանից իւր մագնիսականութիւնը: Սորանով, կարելի է աչա այնպէս ներգործել, որ այն ելեքտրամագ- նիսը մի մօտակայ կոտոր երկաթ դէպ ի ինքը քարշը և կրկին բաց թողուր, և այսպէս յառաջանար այն տեղ մի շարժողութիւն, որ կարելի է պատշաճաւոր մեքնական պատրաստութենով փոխադրել մի նշանացուցի վերայ, որ պտոյտումքը մի բոլորակի վերայ, որի վե- րայ կարգած էին այրուենքի տառերը: Նշանացուցին տալիս են մի սահմանեալ կացութիւն, այնպէս զօր օրինակ, որ նա, շղթայի առաջին անգամը փակվելու միջոցին, թռչումէ և տառի վերայ, գո- րանից յես փակվելով շղթան, բ վերայ, միւսանգամ փակվելով ու բացվելով շղթան, նշանացուցը բերվումէ այն տառի վերայ, ինչ տառի վերայ կամնումէիր, և այսպէս կարելի էր բառեր և խօսեր մի տեղից դէպ ի միւս տեղ փոխադրել: Ելեքտրական Տելեգրաֆները

շինումն երկաթի ճանապարհների մօտից և ունեին առաւել ապահովութիւն և արագութիւն, քան թէ առաջին ժամանակների տեղիդրավական կարգը, որի հետ համեմատելով, ունին սոքա և այն նախապատվութիւնը, որ թեթևագին էին, և ոչինչ ազդեցութիւն չունին նոցա գործակատարութեան վերայ ոչ գիշերը և ոչ մառախուղը:

Խնագէս որ չերմութիւնը և լցութ մի զարմանալի կերպով զուգաւորվումն միմանց հետ և լրանումն մինը միւսով, այնպէս որ սակա միայն երեսումն ամենեին առանձին, և ամենայն սաստկացրած ջերմութեան հետեանքը էր լցութ նմանապէս ելեքտրականութիւնը և մագնիսականութիւնը, կարելի է, թէ աւելի յաճախ ներգործումնին միմանց վերայ, քան թէ մինչև այժմ փորձերով ապացուցած է:

1. ՕԴԵՎԱՆ ԵՐԵՒԱՅՑՅԱՔ ԿԵՇՄ ՄԵՏԱՅՄԵՅՅԻ:

Այն անշափելի օգեղեն ծովը, որանով ամենայն կողմից շրջապատած է երկիրը, բաղկանումէ ոչ թէ միայն վերցիւեալ օգերի կամ գաղերի տեսակներից, այլև նորա հետ խառնած են բազմաթիւ այլ նիւթեր, զոր օրինակ ելեքտրականութիւն, մագնիսեան զրութիւն, կրականիւթ, շոգիներ և այլն: Երբ որ այս նիւթերից մինը որ և իցէ պատճառով չափազանց հաւաքվել է մի օդաչնոցի մէջ, ապա ստանումէ գերակշուութիւն մօտակայ նիւթերի վերայ. նա հալածումէ նորանց կամ թէ լուծանումէ: Աս: Այս լուծողութեամբ կամ թէ հայծաներով պատճառովումն զանազան խորհրդաւոր տեսիլներ օդի մէջ, զոր օրինակ օդափոխութիւն, հողմ, անձրե, փոթորիկ, հրեղեն գունդեր, վայրալիւթ աստղներ և այլն: Եւ որովհետեւ այս տեսիլքը պատահումն օդի մէջ, այս պատճառով ասումն նորանց Օդեվան եւ լույնիւն և բաժանումն ըդոյնիւն, ջըդոյնիւն, գոյշնիւն և հըդոյնիւն: Մեք նախ և յառաջ քննումննք այս տեղ օդոյնիքը, և այնպիսիքը որոնց գլխաւոր պատճառը է օդի ելեքտրականութիւնը:

2. ՀԵՎԵՐԸ:

Որովհետեւ օդը մի հոսական նիւթ է, այս պատճառով աշխատումէ միշտ պահել իւր անձը հաւասարակշռութեան մէջ. բայց այս հաւասարակշռութիւնը զանազան պատճառներով խանգարվումէ միշտ: Օդը աշխատումէ գարձեալ նորոգել նորան, և գորանից յառաջանումէ ՀԵՎԸ: Այնպիսի պատճառներ, որ խախտումին օդի հաւասարակշռութիւնը, են ջերմութիւն կամ ցրտութիւն, անձրե կամ արեւափայլութիւն, լցու կամ խաւար, ելեքտրականութիւն, կրակ և միւս դոցա պէս առարկայք որ կարող էին ներգործել օդի վերայ: Զեր-

մոթիւնը ընդարձակումէ սղը։ Եթէ մի պակայցա շուտով ջերմանումէ արեգակի ճառագայթներից, դորանով խափանվումէ օդի հաւասարակշութիւնը։ Աւելի թանձր ցուրտ օդը ներս է յարձակվում՝ այն տեղ, ինչ տեղից հրաժարվել է ջերմացած օդը, և դորանից գցանումէ հողմը։ Կրակը և կայծակը յառաջացնումն դատարկ տարածութիւնք։ այդ պատճառով փոթորկի և հրայրեացքի ժամանակը գցանումն սաստիկ հողմազարկութիւնք։ որովհետեւ օդը աշխատումէ, ինչքան կարելի է արագ, գարճեալ լցուցանել այն տարածութիւնքը։ Այսպէս յառաջացած հողմերը սովորապէս չեն երկարատեւ, այլև տարածվումն շատ շատ, մի քանի մը ողն հեռաւորութենով։ Սորա հակառակ, կան մի քանի տեսակ հողմեր, որ յարմարվումն տարու եղանակների փոփոխութեանը։ սոքա յաճախ փչումն աւելի երկար և աւելի հեռաւոր վայրերի վերայ և միշտ նոյն ուղղութենով։ Այս նկատողութեան հիման վերայ բաժանումն հողմերը կամ թէ իշխան+ և ժոհեւան+ կամ թէ անշահան+ կանոնաւոր հողմերը սովորաբար ամենայն տարի սկսանումն փել մի սահմանաել ժամանակում և մի և նոյն ուղղութենով, և այս պատճառով ասվումն պարբերական կամ պերիօդական։ Արևադարձների մէջ, հողմը ծովի վերայ փչումէ վեց ամիս դէպ ի արևելք և վեց ամիս դէպ ի արևմուտք։ Այս հողմերը ասվումն

Փ-----Ե---- հոչել ի-մ Մ-----ն+:

Այս պատճառը այս և աշա. Արևադարձների մէջ, արեգակի ճառագայթքը աւելի ուղղահայեաց ընկնումն երկրի վերայ. սորանով օդը այն տեղ աւելի է ջերմանում քան թէ այլ սահմանաբում։ Այնուհետեւ աւելի ցուրտ օդը հոսումէ աւելի ջերմի քամակից և պատճառումէ մի այդպիսի կայուն օդահօսութիւն, որ գիշերահաւասարի միջոցին փոխումէ իւր ընթացքը, այսինքն փչումէ հակառակ աշխարհակողմից։ Այս յեղափոխութեան ժամանակին պատահումէ մի քանի օր հողմազարութիւն, կամ թէ բարձրանումն կատաղի մրրիկներ, կանոնաւոր հողմերի կարգումն են նշնակես, ըստ մէջի մասին ջերմ գոտու մէջ, ծովի մօտակայքումը պատահող

Յ----- ի-մ ի-մ հոչել հոչել:

Այս գցանումն նշնակես ցրտութեան և ջերմութեան այլացնութենից, ցերեկով, ցամաքահողի օդը արեգակի ճառագայթներից աւելի է ջերմանում և անսրանում քան թէ ծովային օդը. այս պատճառով սա առաւտու 10 ժամից փչումէ դէպ ի ցամաքի կողմը և պատճառումէ հողմ։ Սորա հակառակ, ցամաքի օդը երեկոյին հովա-

Նումէ աւելի շուտով քան թէ ծովային օդը և այս պատճառով աւելի թանձրանումէ, և հոսելով դէպ ի ծովը, պատճառումէ նցյնպէս հողմ, որ արելի մոտանելուց յետոյ փչումէ դէպ ի ծովի կողմբ։

Փոխոխական հողմերը փչումն երեխն երկար ժամանակ, և երեխն կարճ։ բայց որովհետեւ օդը անդադար լցված է շոգիներով, որ երկրից վերանումն զէպ ի օդը, այն պատճառով այս հողմերը այն աշխարհների մէջ, ուր նորա փչումէին, ունին մեծ ազդեցութիւն եղանակի վերայ։ պատճառ, դոցանից յառաջանումն գիծային կամ ցամաք, տաք կամ ցուրտ հողմեր Հիւսիսային հողմը գալիս է ցամաք, ցուրտ սահմաններից և սորտ համար ցուրտ և սովորաբար չոր է։ Արեւելեան հողմը գալիս է նցյնպէս չոր կողմերից և այդ պատճառով ունի շորացոցիչ զօրութիւն։ Հարաւային հողմը փչումէ տաք սահմաններից, բայց և միջերկրական ծովի վերայով, և այդ պատճառով թէպէտ տաք էր, բայց բերում և սովորաբար անձրև։ Արեմուեան հողմը գալիս է Ատլանտեան սվիթանոսի վերայով և հիւսիսային ծովի վերայից և սորտ համար խոնա է։ Խնչքան աւելի լլցված էր օդը շոգիներով, այնքան ևս սաստիկ փչումէին հողմերը։ Այս պատճառով գարնան և աշնան ժամանակին, երբ օդը առաւելացէս տոգորված էր շոգիներով, այնքան յաճախ էին հողմերը։

Խնչ որ ասացինք մինչեւ այժմ, գորանից բացայայս է, որ հողմերը անշափ օգտակար էին մեզ։ որովհետեւ նորա ոչ թէ միայն մաքրումն օդը վնասակար գոլորշիներից, ցրուելով նորանց, այլև հասուցանումն մեզ իւրեանց անձրևաբերութեամբ պաղարաբ ամփերը Առանց հողմերի պիտոյ է բազմանային շոգիքը, ապականէին օդը և ծնուցանէին ծանր ծանր ախտեր։ Առանց անձրևի պիտոյ է ցամաքէին բոլոր բուսականքը և մեռանէին ծարաւից ու սովից անասուն և մարդ։ Այլև հողմերը վարումն աղօրիները և տանումն նաւերը ծովի վերայ։ Այս շատ և շատ մեծ էր հողմերի օգտակարութիւնը, բայց և քանի մի բաներով վնասաբեր էին նորա, մանաւանդ, երբ որ շատ սաստիկապէս փչումէին։ Այսպիսիքը ասվումն

Մըրէիլ¹⁺

Որբա յառաջանումն այն միջոցին, երբ օդը սկսումէ շարժմիլ շատ սաստիկ և արագապէս։ Նորա շատ անգամ այնպէս արագաշարժ են որ, եթէ սովորական հողմը մի ժամի մէջ հաղիւ թէ կատարումը մի մղոնի ճանապարհ, նորա մի և նցյն ժամանակումը կատարումըն այն 10 մղոնի ճանապարհ։ Այսպիսի արագութեամբ անցանելով, շատ անգամ պատճառումն նորա և մեծամեծ վնասներ։ Նորա արմատախիլ են առնում ծառեր, այդպէս աւերումն գեղեցիկ մըր-

դարեր տունիեր և ամբողջ անտառներ և լինումն աւելի կործանական, ըստ որում շատ անդամ տարածվումէին ողջոյն աշխարհների վերայ: Այդպիսի մրիգիներ շատ անդամ կործանումէին շինութիւնք և սպանումէին մարդ և անասուն: Այս բանութիւնը ստանումն հողմերը ողի սեփական ծանրութենից, որ այնքան աւելի սաստկանումէ, ինչքան խախոված էր նորա հաւասարակշռութիւնը:

Վուակէ սաստիկ մրրիկները պատահումն յաճախ մեքսիկան ծովածոցի մէջ եղած կղզիներումը, ուր նորա շատ անդամ աւերումն ամբողջ սահմաններ իւրեանց շինուածներովը և անկարկութեններովը և նաւերը կայարանների մէջ ջարդումն ու փշրումն, կամ թէ նետումն նորանց դէպ ի ցամաք: Եւ արձակ ծովի վերայ ներգործումն նորա շատ սաստիկ: Այնպէս կոծումն նորա ծովի ալիքները, որ սորա տունիերի չափ վեր դիզգելով կամենումէին կլանել նաւերը: Եւ հարաւային Աֆրիկայի ծովեզերնայքումը, ամենայն անդամ, երբ որ սկսանումէ թարու անձրեացին եղանակը, կատաղապէս շնչումէ մի աշարկու մրրիկ, որին տուած են անունս Տօրնադօ (Եզի աչք): Սորա հետ ընկերակից են սաստիկ անձրեփ հեղեղքը, կայծակն և որոտ: Թէսպէս սա սովորաբար չէր տեսում մի կէս ժամից աւելի, բայց այս միջոցին ներգործումէ անհաւատալի ուժգնութենով և խորտակումէ պիրեկ կոկոսի ծառերը օրպէս թշլ եղեղնահակեր: Կայնպէս աշարկու էին Տիֆոնքը, որ թագաւորումն արևելեան Ասիայի ծովերի մէջ ամառնային ամիսներումը: Նորա ըերումն իւրեանց հետ մի անկարծելի թնգին և ճայթիւն, որպէս աշարկու կայծակնազարկութիւնք և անձրեփ հեղեղներ, և ծովի ալիքները, սոցա հետ միասին և նաւերը թռուցանումն գրեթէ մինչև ամովերը:

Վատ անդամ, երկու սաստիկ հողմեր փշումն միմեանց հակառակ և այն տեղ, ուր դորա հանդիպումէին միմեանց, յառաջանումէ

ՊՐԵԿԱ-ՀԱՅՐԵՆ:

որ ասվումէ այդպէս, այն պատճառով, որ փոշին և գոլորշիքը որ կախված էին ողի մէջ, այլև առհասարակ ամենայն շարժական բան, որին հանդիպումէր նա, պատյառումէր շրջանակարար: Կայաճախ պատճառումէ մեծ աւերանք և սովորաբար ընկերակից էր նորան մի սաստիկ փոթորիկ: Այդպիսի պատյառահողմեր արմատախիլ են առնում շատ պինդ ծառեր և բարձրացնումն դէպ ի օդը: Այն մարդ և անասուն, եթէ սորա այդ միջոցին դաշտումն էին, իւրեանց հետ յառաջ էին քարշում, կործանումէին շինուածք և շատ անդամ աշա, կարմ միջոցում աւերած են ողջոյն գիւղորապէ: Նորա պատօւտակի ոգէս ամենայն բան դէպ ի վեր են ոլորում: Այսպիսի հողմեր պատահու-

մեն մանաւանդ լեռնային սահմաններում: Որովհէտեւ ամենայն ժամանակ, մի ելեքտրական ամպ կախված էր այն սահմանի վերայ, ուր բարձրացած է մի պատշաճողմ, այս պատճառով շատ անգամ յափշտակում նա ամենայն տեսակ բաներ: Յիմար սնապաշտութիւնը, որ չէ կարող մեկնել այս բանի բնական պատճառքը, կարծում է որ պէս թէ այս տեղ Ներգործումքը մի շար ոգի, և թէ պատշաճողմը մի վիշտ էր, որ տանումքը այս բաները հասուցանելու այն մարդերին, որ դաշնաւոր էին նորա հետ: Եթէ պատշաճողմը պատշաճում ծովի վերայ, ասիումէ

Водоходы (все виды водопроводных труб Wasserhosen, водопроводные трубы).

Վայս ժամանուը պատահչումէ, երբ որ մի փոթորկային ամազ աւելի խոր ցած է իջանում ծովի մակերևութիւն վերայ և իւր ելքատրական զօրութենով մի մեծ բազմութիւն ջրի ահագին սիւնի պէս դէպ ի վեր է քարշում, ջրի երկուումը մի եռացողական շարժողութիւն յատաշցնելով։ Մի այդպիսի սիւն ունի աւալիդէն ժամացուցի կերպարանք, ըստ որում վերելից ու ցածից հաստ է և միջից բարի։ Ապա բարձրանումէ մի ահարկու փոթորկային մրրիկ, ծովը գոռումէ, և, Աստուած մի արասցէ, իթէ մի նաև ըմբռնվէր այդպիսի թամառից, առանց փրկութենան կորած էր նա։ Վայս ժամանաները երբեմն մի փոքր ձննապարհ ձգվումն զէպ ի ցամաքահողը և աւելումն և հեղեղումն ինչ որ հանդիպումէ նորանց։ Թամանների նման պուշտներ գոյանումն երբեմն և ցամաք հողի վերայ, և աս վումն

8-*s-s-t* 7-*t-t-t-t* (*z-t-z-s-n-t-z-k-n Landhosen, y-s-s-t* 4-*t-t-w-t-*):

Աղքա աւելի կատաղի են քան թէ պտղստաշողմբ. պատճառ,
մի այդպիսի ցամաքային թաթառ շատ անգամ յափամ յափակել է մի
ողջըն զանդակառուն, մի քանի միջոց յառաջ է տարել իւր հետ և
ապա ջարդելով վայր է ձգել մի ոյլ տեղ. Կորա պատահումն նցն-
պէս, երբ որ մի փոթորկային ամից շատ մօտեցած էր երկրին և իւր
ելքտրականութեան զօրութենով վեր է ոլորում զէպ ի ննքը ա-
ւազ ու քարեր. Առջրաբար ընկերակից է դոցա մի փոթորիկ որ
արձակումէր իւրեանից աշագին կայծակներ. այդ տեսաբանը սովո-
րապէս վերջանումէր մի ապականիչ փոշեղն ամպով, որանից ապա
ցած էին գլրովում այն առարկայթը որ յառաջոց ելքտրական փո-
թորկարեր ամպը վեր էր քարշել զէպ ի ննքը. Բայց ինչ որ խնայ-
ել էր մի այդպիսի ցամաքային թաթառ, առերումէր ապա միշտ նո-
րա բամակից հասանող կարկուտը. Մի քանի նմանութիւն ցամա-

քային թամասի հետ ունի մի այլ տեսարան որ աւելի յաճախ պատահումէ Ավրիկայի Ասհարա անունով աւազադաշի մէջ, որ և առումն

Ա-Հ-Յ-Պ-Պ-Ե-Ր-Ի-Ւ-Մ-Ա-Հ-:

Վ. յն անտպատի մէջ ճանապարհորդքը շատ անգամ տեսանումն աչագին բարձրութենով սիւներ, որ շատ անգամ հասանումն ամպերին, երբեմն ծանր, և երբեմն արագ շարժվելով, որ և յաճախակի երկիւղ կար, թէ վայր էին թափվելու կարաւանների վերայ, որ այնուհետեւ առանց փրկութեան կրած էին: Այս սիւները զյանումն նոյնպէս պայշտահողմից, որ այն սահմաններումը շատ յաճախ պատահումէ: Եցրեմն շատ պյտպիսի սիւներ բարձրանումն միմեանց մատիկ, որ արեւարացի ժամանակը նմանն լով հրեղէն սիւների, պատկերացնումէին մի զարհութելի կամ փառաւոր տեսարան:

Իսց ի մինչև այժմ յիշած կատաղի օդերևոյթներից, կան չերմ աշխարհներում, մանաւանդ Ասիսյի և Ավրիկայի աւազադաշտերումը քանի մի այլ երևացներ, որ անիրաւացի չէր, և թէ նշանաւորած են անունով:

Ա-Հ-Յ-Պ-Պ-Ե-Ր-Ի-Ւ-Մ-Ա-Հ-:

Դոցա առաւել գլխաւորքը յիշասակինք այս տեղ. նոցա մէջ երեւելի է Հարժութառուն:

Այս փշումէ Ավրիկայի մէջ Ապրիլ ամսին սովորաբար երեք մինչև հինգ օր, արևելքի կողմից: Որովհետեւ նա գալիս է բոլոր անշափելի աւազադաշտի վերայից, այս պատճառով անտանելի չերմ է և կարճ միջոցում ցամաքեցնումէ բոլոր բուսականները որոնց վերայ շնչումէ: Ամենայն փայտաշէն բաներ դորանից ստանումն ճշղքեր: Մարդու աչքերը իսկզյն չորանումն ամեննեն և բորբոքվումն: Քթից ու բերանից հանվումէ մորթը. օգը կորուսանումէ իւր թափանցիկութիւնը, որովհետեւ հողմը բերումէ իւր հետ մի թանձր մատախուղ և կաղտագոյն փոշի, որ բաւական խոռոչեամբ ցած է իջանում: Բայց որովհետեւ տարու մէջ մի որոշեալ ժամանակում ահագին անձրեփ չեղեղներ պատասմն ջրով այն սահմանները, այս պատճառով այդ հողմը լինումէ նոցա բնակիչներին շատ օգտակար, կարճ միջոցում ցամաքեցնելով բոլոր մօրուաքը և մախինքը և փարասելով լիւսակար հետևանքը օդի որ լցված էր գէջ շողիներով:

Խարժին:

Այս փշումէ գարնանային զիշերահաւասարի ժամանակը, մօտ երեք օր, հարաւի և հարաւահայեաց արեւատքի կողմից, ցամաք աւա-

զաղաշոերի վերայով գեղի ի Խղիստոս, ուր նա, Կիլս գետի հեղեղց յիշայ, հասուցանումէ նոյն օգուտը, որպիսի Հարմատանը: Նա շատ ջերմ է. նորա այրողական զօրութիւնը առաւելանումէ այն նուրբ փոշուցը որ նա բերումէ իւր հետ, որ և մընացնումէր օդը: Քոլոր սահմանները համարեած թէ բորբոքվումէին տօմից, եթէ այդ հողմը շնչած էր մի քանի ժամանակ: Փոշին ծածկումէ այն մարդու բոլոր անդամները, որ հանդիպած էր այդ հողմին: Մորթը ճեղքվումէ, արիւնը այնպիսի սաստկութենով յարձակվումէ գեղի ի գլուխը, որ շատ անդամ անհրաժարելի էր մահը: Ամենեքեան փախշումն ստորերկեայ փասերի մէջ, երբ որ մօսնանումէր այդ վտանգաւոր հողմը:

Ս-Հ-Յ-Շ- Հ-Ե-Շ- Ա-Բ-Ե-Շ:

Աս փշումէ Արարիսյի, Պարտկաստանի և Ասորեստանի մէջ և լուցանումէ օդը մի թանձր կարմրութենով, որ, ասես թէ, պատումէր բոլոր երկնակամարը: Նա խեղողապէս տօմիցին է և իսկոյն սպանումէ այն ծմբացին հոտովը, որ կրումէ իւր հետ: Ավ որ հանդիպումէ այս հողմին, նա պիտոյ է երեսի վերայ վայր ընկնէր, փըրկութիւն գտանելու համար: Մարմինքը այն մարզերի որ սպանված էն Ասմումից, շուտով սեւանումն և անդամները քայլայլումն միմեանցից:

Ա-Բ-Ե-Շ- Հ-Ե-Շ-:

Վ. Եղպէս ասվումէ դա Աիկիլիսյի և ստորին Խտալիսյի մէջ, բայց Սպանիսյումը ասվումէ նա Սօլանս, որ նոյնպէս շատ ջերմ հողմ է: Նա ունի համարեած թէ հաւասար յատկութիւնը խամսինի հետ, բայց փշելով միջներկարկան ծովի վերայից, մի փոքր թուլանումէ նորա զօրութիւնը: Երբ որ շնչումէ նա, որ սովորաբար պատահումէր ամառնային ժամանակին, օդը պատվումէ այնպիսի մառախոզով, որ չէ կարելի այլ ևս տեսանել արեգակը, թէպէտ սա չէր ծածկած ամպերով: Ամենայն բան թուլանումէր նորա շնչիցը: Այս պատճառով, ով որ կարող է, փախչումէ տների մէջ, ուր այնու ամենայնիւ տանջվումէր մի սպառեցոցիչ քրտինքով: Եթէ այս հողմը տարածվումէ մինչև Հերմեգիա, ապա ստանումէ անունս Ֆէն: Եւ այս տեղ ժողովուրդը շատ երկիւղ ունի դորանից:

Զ. Յ-Շ- Օ-Դ-Ե-Շ-Ի-Ռ-Բ-Ք:

3. Ց-Շ-:

Վրեի մտանելուց մի փոքր յետոյ և գեղի արևաբացը տեսանվում խոտի և տերենների վերայ մի խնաւութիւն, որ նուրբ նուր շիթերով նստած էր նոցա վերայ, որ և երեսումէր մանաւանդ թէ հան-

դարտ եղանակի միջոցին։ Այս իոնաւութիւնը ասումնք ՅօՆ Կանտարակոյս գշանումն երկրի և բուսականների արտաշնչութենաներից։ Այսպիսի արտաշնչութիւնը թէպէտ լուղոր որը բարձրանումեն գէպ ի օդը, բայց մեք չենք կարող նկատել նորանց այն տեղ, որովհետև նորա արեգակի ճառագայթներից առաւել ջերմացած լինելով, ուրեմն անօրացած ու թեթևացած էին և այդ պատճառով աւելի շուտով գէպ ի վեր էին գնում։ Երեկոյին հովանումէ օդը. այն շոգիքը դորանով մի փոքր սառչումն և թանձրանումն և այդ պատճառով չեն կարող այնքան վեր բարձրանալ, ինչպէս ցերեկով, ոյլ իսկցին ներքե են իջանում ցած բուսականների վերայ, թանձրանումն և հաւաքվելով գշացնումն փոքրիկ շիմեր։ Եթէ այս բանը պատահումէ երեկոյին, ապա այդ շիմերը ասվումն երեկոյեն ցած։

Համարեան թէ նոյն կերպով գշանումէ ։ Այս սինքն, վերին օդը արեածագի ճառագայթներից աւելի շուտով է տաքանում, քան թէ ստորինը. բայց ջրային շոգիքը, որ լող են տալիս վերին օդի մէջ, չեն կարող այնպիսի արագութեամբ տաքանալ, ինչպէս նոյն իսկ օդը, այս պատճառով լինումէին աւելի ծանր, քան թէ այս օդը, ցած էին իջանում և նստումէին բուսականների վերայ պայծառ շիմերի պէս։ Այս շիմերը, լուսի շառաւիղները զանազան տեսակ կոտրատելով, ցուցանումէին հրաշուլի գշներ։ Եթէ առաւօտուն իջած էր շատ ցող, ապա յշս ունեինք, թէ լինելու է մի գեղեցիկ օր, որովհետև օդը ազատված էր բազմաթիւ ջրային շոգիներից։

Չօդը մի պատուական տնտեսութիւն ու բարերարութիւն էր Արարաք կողմից. պատճառ, այն բուսականքը որ անձրեի պակասութենից պիտօյ է անսնունդ և թառամած մնային, ստանումն ցողիցը և սնունդ և զուարթութիւն։

Վաւ-բայն և Առ-բայն ցած է մի մածուցիկ հիւթ, որ դուրս է քրանում ծառերի տերմներից և բուսականներից, կամ թէ յառաջանումք զանազան միջատներից։ Կա թանձրանումէ և դառնումէ մի ալիրային և մածուցիկ նիւթ որ տերմների վերայ գշացնումէր մի հիւանդոտ որպիսութիւն որ երեսումէր որպէս մի կարմիր բիծ և անուանվումէր ։

Վաւ-բայն ցած ունի սպիտակային գշն և վնասակար է մանաւանդ թէ ցորենին. պատճառ, ոյն անասունքը որ ուտումէին այդպիսի ցորենից, որի վերայ ընկած էր ալիրային ցող, հիւանդանումն հեշտ։ Ալիրային և մեղրային ցողի վնասակարութիւնը, անաբակոյս յառաջանումէ այն պատճառից, որ այս մածուցիկ գիջու-

թիւնը փակումէ բուսականների միջածակբը և խախանումէ նոցա արտաշումիւնքը:

Այս հանձոյ ասած բանը որ, ինչպէս պատմութիւն է լինում Աստուածանչի մէջ, ժողովումին Խրայշէլացիք Արարիսյի անապատումը, մի քաղցր հիւթ է, որ ստացվումէ Տամարիսկ կամ Թարիա անունով ծարից որ աճումէ Անայի սարի վերայ: Առա փշերից, Յունիս ամսի մէջ, ցած է կաթում վայր ընկած տերեւների և ճիւղերի վերայ մի քաղցր նիւթ, որ և ժողովումն արեգակի ծագելոց յառաջ: Արարացիք մաքրումն սորան, եփումն և քամումն մի խաշոր կտաւով և լցուցանումն կաշեղէն տէկների մէջ:

4. Եպահն:

Այն նուրբ շոգիբը, որոնց ծանօթացանք մեք ցողի անունով, սառչումն տարու աւելի ցուրտ եղանակներումը: Կորա բուսականների և այլ առարկաների վերայ կերպաւորումն մի ծածկոց որ ասվումէ Եպահն: Ուրիշն եղեամի ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ սառած ցոշ:

Ո՞ի և նոյն կերպով, ինչպէս Եղեամիը, գյանումէ սառչոյցը լուսամուտների ապակիների վերայ. պատճառ, տաք շոգիբը սենեկի մէջ սառչումն լուսամուտի սառն ապակու վերայ: Երբ որ գարնան ժամանեակին սկսումէ ձիւնը հարլիլ, յատաջանումն շատ դոլորշիք. սոքա մաճնումն շինուածների պատերի վերայ. բայց որովհեամ պատերը այնքան շուտով չեն տաքանում, որպէս այն դոլորշիքը, այս պատճառով պաղումն այն մածված դոլորշիքը և կերպաւորումն պատերի վերայ նոյնպէս մի ծածկոց, որ ասվումէ պատերի բորբոսանք:

Լարծուն սառչոյցը գյանումէ ամենեին նման կերպով, միայն թէ դորա պատճառքը չեին միայն շոգիներ, այլև այն նուրբ անձրեի կաթիւները, որ ընկնումին սառն յատակի վերայ, ինչ տեղիսկոյն սառչումին:

5. Ամպերը և Մահեկուզը

Այս երկու օգերեւոյթքը ունին մի և նոյն բաղադրական մասունք, և գյանումն ամենեին մօտ ազգակից կերպով: Պատճառ, Մահեկուզ ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ թանձր դոլորշիք որ աւելի պազ վերին օդիցը դէպ ի ցած ճնշվելով և ասես թէ հարկադրվելով թանձրանալ, ստանումն աւելի ծանրութիւն և պիտոյ է մօտ մնոյին երկրի մակերեւութիւն: Երբ որ այս շոգիքը տաքանումն արեգակի ծառագայթներից, ուրիշն ընդարձակվումն և աւելի թեթեւանումն, ապա բարձրանումն դէպ ի վեր, և սորանից յետոյ կարելի էր եղրակացուցանել ստուգապէս, թէ շուտով գալու

է անձրեւ: Արովչեաւ վնը բին օդը այն միջոցին լցված էր շատ ջրային շղթիներով: Բայց եթէ մառախուզը վայր էր իջևանում, դեպ ից ցած ճնշվելով ցրտից, ապա յոյս ունեինք, թէ լինելու է մի պայծառ օր, որովհեաւ ոչինչ խօսնաւ շղթէք չէին ծանրաբեռնում վերին օդը: Մառախուզների մեծ մասը գոյանումէ գտրնան և աշնան մէջ ջրաւէս սահմաններում: Կոքա երրեմն թանձրացնումն օդը այնպէս, որ չկարելի ճանաչել ամենեին մատակայ առարկայք: Բայց նոքա օգտակար էին, որովհեաւ գործակից են աշխարհի պարաւետութեանք:

Ամպերը շատ մոքով ոչինչ ոյլ բան չէին, եթէ ոչ մի աւելի բարձր, օգի մէջ լողացող, մասախուզ պատճառ, եթէ դանչումներ բարձր սարերի վերաց, երբեմն աւելի վեր էր քո կացըը քան թէ ամպերը. Եթէ յետոյ ցած էիր իջանում, պիտոյ էր քեզ, մի սահմանեալ բարձրութեան մէջ, շատ անդամ անցանել մի թանձր մառախուզի միջով, որ, խօսելով խեկապէս, մի ամպ էր պատճառ, զեզ ի վեր բարձրացած շոդէքը կապահցվումն վերեփ օդումը, լողալով շրջումնեն նորա մէջ և ապա ասլումն ամպեր: Նթէ այս ամպերը մի քանի տեղերում պատճառումն հողմիցը, ապա յառաջանումն լուսափայլ տարածութիւնք, որոնց միջով թափանցումէ արեգակը. այս բանը պատահած, մէք տեսանումնք երկրից զեզ ի վեր ելանող շոդէքը ձևաւորված որպէս լուսափայլ շերտեր: Այս երեւոյժի մասին ասումն հասարակ կեցութեան մէջ, թէ արեգակը ջուրը է քարշում: Կա ցուցանում, թէ օգը լցված է շոգիններով, և թէ շուտով կարող էր անձրև գալ: Երբ որ հողմը բաժանումէ մի ամպ շատ փոքրիկ կոսորներ, և սորանց տարածումէ մի լայն երկնասահմանի վերաց, սոքա ասվումն Փեռութիւն - բայց:

6. $\{x\}_{pL}$, $\{x-x\}_{pL}$, $\{x-x\}_{pL}$, $\{x-x\}_{pL}$, $\{x-x\}_{pL}$, $\{x-x\}_{pL}$,

Հողմի զօրութենով և չերմութենան և ցրտի փոփոխութենից ևս առելի թանձրանումն օդի մէջ որպէս ամսեր շրջղական շոգիքը և միանալով զառնումն կաթիլ կաթիլ. այսպիսի գրութեան մէջ աւելի ծանրանալով՝ քան թէ օդը, ցած են իջանում և կերպաւորումն անձրւ, որ իւր զանազան տեւկանութենան, սասակութենան և տարածութեան պատճառով սահնումէ նշյալքս զանազան անուն։ Բ-բ-է ն-ի-լ-ը հոյանակ, երբ որ ցուրտ և պղտոր եղանակի միջոցին շոգիքը չեն կարող վերանալ շատ բարձր, այլ մի աննշան բարձրութենից գործնալ վայր են թափառում. Խւ որովհետեւ այն տեղ չէին կարող դեռ ևս հաւաքվիլ շատ շոգիներ, ուրիմն կարող եին միայն կերպարանվիլ և փոքրիկ շիմեր, որ փոշիանման ցած են իջանում

և ասլումն է պահպան անդր կամ բարու անդր, Պայծառ, ջերմ եղանակի միջոցում շղիքը վերանումն շատ բարձր, կերպաւորվումն որպէս անձրեփ կաթիլներ, և շատ իջանելու ժամանակին, Խլւամն և տանումն իրենաց հետ ցած օգակցութերի մէջ լողացող շղիները, և այդպէս աւելի խոչըրանումնն Քայլ որովհետեւ նոքա բաւական մէծ բարձրութենից վայր են թափալում, ուրեմն հնակելով Ընկողութեան կանոնին, ցած են իջանում աւելի և աւելի արագութենով և սորա համար ևս աւելի մէծ սասակութենով: Այսօրին անձրեքը, որ պատահումն ամանային միջոցին և փոթորիկների ժամանակը, ասվումն Ք-ուի: Ճառ անգամ, մի թեթև ամպ անց է կենում երկրի վերայից, հողը յառաջ է վարում նորան, որ միջոցին միս ամփերը մնումն համարեա թէ ամենաին հանդարտ: Եթէ այն թեթև անցողական ամպը արձակվումէ, ապա յառաջնումքը մի ժամանու կամ ուշական անդր, որ սովորաբար տարածվումքը միայն մի փոքր սահմանի վերայ: Ըստ անդր անդր թափումք ողջըն աշխարհների վերայ և շատ անգամ տեսումէ հարուստ ժամանակ: Երլոր երկինքը պատած էր ամպերով, որ շատ ծանր շարժվումէին: Այս գյանումներն նոր և նոր ամպեր, որ փոքր միջոցից յետոյ նշյնպէս ջուր զարձած վայր էին հասում: Նեմէ մի այդպիսի անձրեւ աւումքը երկար, ապա պատճառառմքը անպողութիւն, զորանով և թանգութիւն: Զրայից հողի ներսումը դոյանումին նոր ազդիւրներ, որ հասարակ մարդկեր ասումնն Ա-իւ ռ-իւ ը-իւ, պատճառ, դոքա գուրս էին ԲՌՌ խում անպատճեան ժամանակին:

ԱՆԴՐԻՔԻ ՌԵՎՈՐՏԱԿԱՆ ՀԱՅ:

Եցրեմն մի ամպ երկու, միևնանց հակառակ շնչող, հոգմբի
Ճնշվում: Այլ տեղումը, կամ թէ լըսնացին սահմաններում նետ-
վում դեպ ի մի սարի պատ: Դորանով բռնութեամբ քակվում: Նա,
նորա կաթիլը թափվումն, յանկարծ դուրս արձակված ջրի բազ-
մութիւնը հեղեղում: ամբողջ սահմաններ և պատմառումէ աշաւոր ա-
պահանութիւնը: Այս պատահարը ասումն Ամուղիք պատմութիւն:

Վնձրեի ջուրը թէպէտ սովորաբար մաքուր է . բայց որդիչնեաւ հողմից և միւս պատճառներից շատ անգամ և այլ առարկացք բացի ջրային շողիներից բարձրանաւմն դէպ ի ողը , որ և այն տեղ միաւորվումն անձրեսի կամիլների հետ , այս պատճառով անձրեսի ջուրը երբեմն ընդունում է սորանից մի այլ գոյն և որպիսումիւն : Այդպիսի անձրեները ասվումն հասարակ կեցումնեան մէջ հրաշւէ անչեւ : Դոզա կարգումն են սորա .

‘Օ՞՛ՌԵՌԵՆ ԱՆՔԼ, Գարնանային և ամառնային ժամանակը անձրեսից յառաջացած ջրափութիւն վերայ շատ անդամ տեսանվումէ մի գեղին նիւթ, որ ունի շատ նմանութիւն ծծումքի հետ, որ և շատ անդամ համարված է ծծումք և դորանով պատճառ է տուել կարծելու, որպէս թէ ՀՀԱՐԵ է ԱՆՔԼԱՅ: Բայց այս գեղին նիւթը ոչինչ այլ բան չէ, եթէ ոչ ծաղիկներից յափշտակած պտղագործական փոշին, պատճառ, նա չունի ծծումքի հօտ և վառվումէ շատ սակաւ: Այն նիւթը դժունվումէ մանաւանդ սևախայտ անտառների մատակալուում:

[Ղայց ՌԵՆՔՆ ԱՆՔԼ արդարեւ բաղկանումէ արիւնի կաթիլներից, որ յառաջանումն մի քանի թրթուրի տեսակներից, որ թըռչունի պէս կերպաւորվելուց յևտայ դուրս են թողում իւրեանցից մի կաթիլ արիւն: Եթէ կոյցին մի տեղ շատ այդպիսի թրթուրներ, ապա համարեան թէ ամենայն տերեւների վերայ զտանումն այդպիսի արիւնեղէն կաթիլք: Կանգնած ջրերը երբեմն ունէին արիւնանման կարմրութիւն իւրեանց մակերեւութի վերայ: Այս գունի պատճառը էին մի տեսակ կարմիր ջրային լուեր, որ ջրի երեսին մեծ բազումենով լող էին տալիս:

ԳԱՐԴԱՅՆ ԱՆՔԼ յառաջանումէ հաւասոի նորանցից, որ մի ցած գնացող, ելեքտրական ամպ գորտերի սաղմը կանգնած ջրերից դէպի ի ինքն էր քարչում և տանումքը իւր հետ: Այս սաղմը ամպի մջ եղած առատ ելեքտրականութիւնց շուտով կերպարանք է տտանում, և գորտերը, որ այնուհետև աւելի ծանր էին, քան թէ սաղմը, վայր են իջանում: Կայ պատճառով, ամբողջ սահմաններ, որ ծովից բաւական հեռի էին, տեսած են ծովային ձկների սաղմով ծածկած:

ՀԵՐԵՎԵՆ կամ ՇՐԵԲԵՐԻ ԱՆՔԼ պատճառվումէ նորանով, որ հողմը այնպիսի գաշտերից, ուր կար չափազանց հասունացած ցորեան, առնումէ և տանումէ իւր հետ այն թուլացած սերմնահատիկները և գարձեալ ցանումէ նորանց միւս, բաւական հեռաւոր կողմերում:

ՔՐԵՔՆ ԱՆՔԼ: Այսպէս ասվումէ այն տեսիլը, երբ շատ, կամ թէ մի մի քարեր ցած են իջանում օդից երկրի վերայ: Այս բանը սովորաբար պատահումէ մի որոտանման թնդիւնով. այլ յառաջուց տեսանումն մի հրեղէն գունդ: Այդպիսի քարերի դիխաւոր բաղկացական մասունքը էին երկաթ: Որովհետև յառաջ կարծումէին, թէ այս քարերը իջանումն լուսնի կամ թէ այլ մոլորակների միջից, այդ պատճառով ասած են նորանց լուսնի կամ հուշբների ուրեմն: Այժմ ասումն նորանց, լուս որում վերաբերվումէին դէպի ողերեսովների կամ Մետերայի կարգը, ԳՐԵՎԵՆ-ՀԱ-Ի-ՎԵՐԵ: Դոցա

գոյացութիւնը դեռ ևս անցայտ է . բոյց խելքի մօտ բան էր, որ քարերը և մետաղները լուծանվումէին այնպէս ինչպէս միւս մարմինքը, և կարող էին լուծանվիլ անվերջանալի փոքրիկ մասնիկներ, և թէ այս մասնիկները բարձրանումն դէպ ի օդը, դարձնալ միանալով այն տեղ, զառնումն մի ամրող մարմին և ապա վայր են ընկնում:

թէ ինչքան խորհրդաւոր և օգտակար բան էր անձրեւ, այդ բանի մասին հարկաւոր չէ երկար ճառ խօսել: Անձրւի ջուրը աւելի ձեռնուու է բնութեան պաղաքերութեանը քան թէ աղրիւրի և գետի ջուրը: Այս լուսնալու և եփելու համար, աւելի պատշաճաւոր էր նա, քան թէ սոցա ջուրը: Թէ մօտակայ էր մի անձրեւ, այդ բանը կարելի է նկատել որպէս քանի մի անսառւների վերայ, նոյնպէս և բուսական և հանքական թագաւորութեան բերքերի վերայ: Ծիծեռնակները սյդ միջոցին թառչումն շատ ցած, սարդերը կծկվումն իւրեանց ծակամուտերի մէջ, կանաչ գորտերը կարկաչումն, շատ ձկնատեսակներ, զոր օրինակ Տղմախածքը, անհանգստանումն, զանազան բուսականներ սեղմումն իւրեանց տերեւները, միւս սերը սկսումն քրանել և գյացնումն խօսու կաթիլներ. մի քանի քարեր դիջանումն և լարած շւանաները կարմանումն: Այս բոլոր տեսիլները յառաջանումէին նորանից, որ, եթէ մօտ էր անձրեւ, օդը լցվումէ շատ գէջ շոգիներով:

7. ԶԷՆԵՆ:

Չմոնային ժամանակը ցածի օդակշյոքը աւելի սառն են քան թէ վերևի օդակշյոքը. սորանից ներքեւ իշանող ջրային շոգիքը սառչումն վայր իշանելու ժամանակն և այդպէս կերպաւորումն չէնչ: Մի անձրւակաթիլ որ բարձրից գէպ ի ցած է գալիս, պաղումէ ցածի սառն օդի մէջ և կերպարանումէ մի փոքրիկ, ամուր հատիկ. սորա վերայ մածնումն յետոյ գէպ ի վեր գնացող շոգիքը և այդպէս շինումն մի փոքր աստղ: Այս աստղիկները ասվումն ԶԷՆԵՆ ՆԵՐԵ: Ինչքան աւելի ցուրտ է, այնքան աւելի փոքրիկ են այս տարափները և այնքան ևս նուրբ են նոցա մասները:

Կուրացուցիչ սպիտակ գոյնը ձիւնի, շատ սաստկութենով բացարձակումէ լուսի ճառագայթները: Այս է այն բանի պատճառը, որ, եթէ երկար ժամանակ շրջած է մի մարդ ձիւնապատ տեղերում, վերջումը թուլանումէ նորա տեսութիւնը: Այս, դորանից երբեմն յառաջացած է աչքերի բորբոքում և ամեննին կուրացութիւն: Ձիւնի այս յատկութիւնը շատ խորհրդաւոր է այն աշխարհների հա-

մար, որ շատ ամիսներով գիշեր է, և ձիւնը ձեռնուու էր այս երկարատև գիշերները լուսաւորելու համար: Որովհետեւ ձիւնը կրում իւր հետ աղային մասունք շատ, այս պատճառով մի պատուական պարարտացուցիչ հնար է հողի համար: Շատ օդտակար լինում նա և այն պատճառով, որ լինելով վատ փոխադրիչ չերմութեան, չէ թողում որ երկրի չերմութիւնը դուրս գայ, և այսպէս պահպանում սերմանած դաշտերը ցրտազարկութեան երեսից: Այն իսկ պատճառով էր նա մի պատուական դեղ ցրտից տարած անդամների համար. այն, ցրտից տարած մարդերի ևս դարձուցած էին կենդանութիւն, ծածկելով նորանց ձիւնով:

Կարմիր ներկվում է ձիւնը շատ անգամ այն ծծմբային շոգիներով, որ գտանվումն հրաբուղիս սարերի և աղակեգործութեան տների մօտակայքում: Երբեմն պատահում այս բանը և մի տեսակ փոքրիկ գունդերից որ խոշորացուցի տակ երեսումն որպէս փոքրիկ սունկեր:

ՄՆՀՅԱՆԴԻ և ԽՆԱՐ ՀԵՐԵՎԱՆ:

Խնչքան աւելի հեռաւոր է երկրից օդը, այնքան ևս ստուն է նա, որովհետեւ հեռաւորութեան պատճառով, չէ կարող այնքան չերմանալ արեգակի բացարձակիած ճառագայթներովը: Երբեմն մի ամսով մի աւելի ջերմ օդակուտից հողմի ջրութեամբ շատ շուտով գեպ ի վեր է բարձրանում: Նա չէ իսկայն կորուսանում իւր ունեցած տաքութիւնը, բայց նորա մասունքը միանալով դառնումն կաթիւներ և ներբեւ են իջանում որպէս անձրեւ: Եթէ սոքա անցանումն մի աւելի սառն օդակայտի միջով, շատ շոյտ սառչումն և գառնումն կարիւտ: Աորա միանալով ուրիշ սառցակոտների հետ, գցացնումն յաճախ խոժոռ գունդեր, որ ասվումն խոչը ՀԵՐԵՎԱՆ, որ և այն բարձրութեան պատճառով, որից վայր են ընկնում և այն ծանրութեան պատճառով որ ստանումն իւրեանց մեծութիւնից, իսատ սաստիկ ցած են յարձակվում և շատ անգամ ջարդումն ու վըշրումն ամենայն բան, որին հանդիպումէին: Այս տեսիլը պատահում է սովորաբար փոթորկի ժամանակին: Որովհետեւ կայծակների ջորութենով ցածի օդը հովանում շուտով, բայց վերեւի օդը գեռ ևս մի քանի ժամանակ պահում իւր տուաջին չերմութիւնը: Կարկտարեր ամպերը սովորաբար որոշվումն իւրեանց աւելի մութ գունով:

Գարնան և աշնան միջոցին, սառած անձրեակաթիւքը թափվումն աւելի փոքր կերպարանքով. այն ժամանակը ասվումն նորա ՀԵՐԵՎԱՆԴԻ ՀԵՐԵՎԱՆ:

ՓԱՅՏԱՐԵՒՆ ՕԴԻԵԲԻՆԵՐՅԱՔ:

9. Առաջնորդութեան և Երեխյան պըլազա:

Որովհետեւ օդը, իւր սեփական ծանրութեան պատճառով, իւր ցած կոյսերի մէջ աւելի թանձը է քան թէ վերինների մէջ, ապա և արեգակի ճառագայթները աւելի սաստիկ կոտրատվումն առաջնների, քան թէ վերջնների մէջ. և երբ որ մէք դեռ ևս ամեննիմին խաւարի մէջ էինք, աւելի բարձր օդակայքը բաշ լուսաւոր ված էին արեգակի ճառագայթներից: Այս ճառագայթների փայլողութիւնը կոտրատվումէ և ցած, աւելի թանձը օդակայտների մէջ. սորա լուսաւորվումն և երկնակամարը երեւումէ պատած մի փառաւոր ծանրատեսիլ կարմրութենով: Այս իմաստուն կարգադրութենովը Արարչի միջնարգումն մանաւանդ թէ բենույին սահմանների բնակիչքը: Այս սահմաններումը, ըստ որում գիշերները երկար էին, առաւտեան և երեկոյեան արշալցուը, կամ թէ մանաւանդ երեկոյեան և առաւտեան արշալցուը զուգախառնվումն միասին և այդպէս կերպաւորումն խաւարից մի երկարատե լուսարաց: Եթէ այս շառաւիդարեկութիւնը պատահչումէ երեկոյին, սորան առումն Երեխյան պըլազա: և յսո ունէին թէ գալց օրը պիտոյ է լիներ գեղեցիկ: Առաւտուուն ասումն նորան Առաջնորդութեան պըլազա: Բայց սորա քամակից շատ սակաւ պատահչումք մի պայծառ օր: Ամառնային օրեւորի մէջ աւելի երկարատե է արեարացի ժամանակը, ուրինմ և նորա արշալցուը, քան թէ ձմռուան օրերի մէջ:

10. Առաջնորդութեանը:

Եթէ մի անձրեային ամոց կանգնած էր արեգակին հանդեպ, և սորա դրութիւնը մի փոքր ցած էր, ապա կոտրատվումն արեգակի ճառագայթները ամպի մէջ, և յետոյ կոտրատված ընկուումն մը բ աշքի մէջ: Բայց որովհետեւ սովորաբար մի և նոյն ժամանակին անձրեւ էր գալիս, այս պատճառով, արեգակի աշա կոտրած շառաւիդները դարձեալ շատ անգամ կոտրատվումն վայր թափաղ անձրեսի կաթիւների մէջ և այդպէս յառաջացնումն այն գուների խաղարկութիւնը, որ սովորաբար պատահչելով անձրեսի միջոցին և կիսարուրակ ձեռով, ասվումէ Անյէլէ Շէն, կամ պարզապէս Անյէն, Շէն: Մի այդպիսի աղեղնակամար կարող էր պատահչել ճաշից յառաջ կամ յետոյ միայն, և դորա պատճառը, ինչպէս ասվեցաւ վնրեւումը, և արեգակի հարկաւորապէս աւելի ցած կացութիւնը:

Հատ անգամ պատահչումք, որ մի քանի աղեղներ տեսանումինք մի և նոյն միջոցին և բաւական հաւասար ուղղութեանով: սո-

յա մէջ աւելի ցածը է ճշմարիս կամ Քլենուր - պէտք, բայց միւսերը, երբերութեան պէտքեր: Այս վերջինները զշանումն շառաւիդների կրկնապատիկ կոտրաստվելոց: Թէ զէտ աղեղը երևումէ մեղ երկրի մի սահմանեալ տեղում կամարակապ նստած, բայց ամենայն նկատող տեսանումէ մի այլ աղեղն, և եթէ կամենայիր գնալ այն տեղ, ուր երևումը նա հաստատված, ապա կը նկատէիր, որ աղեղը այնքան աւելի հեռանումէր քեզանից, ինչքան աւելի կարծումէիր դու մօտենալ նորան: Պատճառ, այն ժամանակը մեք տեսանումն ոք ամեն մի նոր կացութեան մէջ մի նոր աղեղն: Դորանից բացայսայտ էր աչաթէ ինչպէս ծիծաղելի է այն առասպելը, որ ինչ տեղ երկրի վերայ հանդիպումէր աղեղը, այն տեղ ևս դրած կար մի սոկեղէն առօթ կամ սոկեղէն կճշյա:

Վ. մէնայն աղեղն խաղումէ այն եօթն գլխաւոր գուների մէջ, որ այսպիսի կարգով հետեւումն միմեանց: Վերինը կամ թէ արտաքին եղբի վերայ եղծը է կարմիր, երկրորդը մութ գեղին, երրորդը բաց գեղին, չորրորդը կանաչ, հինգերորդը բաց կտուցած, վեցերորդը մութ կապոյտ, եսթներորդը մանուշակագշան:

Երբ որ արեգակից լուսաւորված անձրեւը բռնումէ միայն մի փոքր մասը հորիզոնից, ապա երևումէ միայն մի փոքրիկ մասն աղեղի: սորան ասումն աղեղն:

Պայծառ լուսնակ գիշերով, երբեմն տեսանումն ոք մի աղեղն: սորան ասումն ըստն աղեղն: բայց սա, լուսնի աւելի նուազ փայլողութեան պատճառով, չունի այն զուարթ գունախաղութիւնը, ինչպէս որ յառաջացնումէր արեգակը:

11. Աւելուկ իւր իւր ըստն բարեւ:

Երբեմն նկատումն ոք մի կամ թէ շատ, մէծամեծ օղեր արեգակի կամ լուսնի չըրա կողմովը. սոքա երևումէին պայծառ և սպիտակ, կամ թէ թուլապէս զարկումէին դեպ ի աղեղի գյոները: Բայց այս օղերը ստուդապէս չը կային այն երկնային մարմինների չըրս կողմումը, ոյլ գտանվումէին մեր օդեղէն շրջապատի մէջ: Այդպիսի մի օդ ասումն Բա: Այդպիսի բակեր գոյսանումն, երբ օդը լցված է բազմաթիւ թանձը, ջրային շոգիներով: Այս շոգիների մէջ կոտրաստվումն ապա, ինչպէս աղեղի երևելու ժամանակը, լուսեղէն ճառագայթներ որ արձակվումէին այն երկնային մարմիններից: Որովհետեւ օդը, այդպիսի բակեր երևելու միջոցին, պարունակումէ իւր մէջ ջրային շոգիք շատ, այս պատճառով դոցա քամակից գալիս է սովորաբ անձրեւ:

12. Արքայության ուժի մեջ և կառավագական լուսական ըստ հայոց:

Ճամանակ առ ժամանակ տեսանումներ աւելի քան թէ մի արդակ, նշնպէս և շատ լուսններ, որ շատ անգամ փայրիայլումնեն աղեղի բոլոր գուներով: Բայց նոքա չէին սասցդ արեգակներ կամ լուսիններ, այլ միայն պատկերներ կամ ցոլացութիւններ այն երկնային մարմինների, որ նկարագրվումն գոլորշինների մէջ որպէս մի հայելու թէ: Սովորաբար այս տեսիլներից յետոյ գալիս է ձիւն կամ մանրահատիկ կարկուտ, և այս պատճառով կարծումն, թէ նոքա յառաջանումէին նորանով, որ օդի մէջ լողացող շողիքը ըսկանումն սառչիլ, և այս նորոր սառցոյին հիւլէքը ստանումն այնպիսի յատակ մակերեսցիմ, որ կարող էին այն երկնային մարմինները բազմազան կերպով ցոլացուցանել իւրեանց մէջ: Այն մարդիկը որ տեղեակ չէին այս բնական անցքերի պատճառներին, համարումն այս տեսիլները ձախորդութիւնն գուշակութիւնք:

ՀԲԵՊԵԿՆ ՕԹԵՒԵԽՈՅՑՔ:

Երկրի վերայ գտանված առարկաներից անդադար վեր են բարձրանում դէպ ի օդը բազմաթիւ զանազան շողիններ, և այս շողինների մէջ կան նշնպէս ծծմբային, իւղային, աղային և միւս շողիք, որ հեշտ վառվումն, կամ թէ արձակումն իւրեանցից մի հրեղէն փայլողութիւն: Կաքա ըստ մէծի մասին գոյանումէին այրեցողութիւնից, ծիսի հետ վերանումէին դէպ ի օդը և այն տեղ միաւորվումին ջրային շողինների հետ: Դորանով յառաջանումն մէր օդեղէն շըրջապատի մէջ զանազան հրեղէն օդերեսյթը, նոցա դասակարգից զնենք այս տեղ սորանց.

13. ՓԵՐԵՐԵՇ և ԿԱՐՃԱՇ:

Եթէ մի ելքարական և մի անելքարական ամպ հանդիպումն միմևանց, վերջինը դուրս է քարշում առաջինից մի ելքարական ցոյտ, որ երևում որպէս մի հրեղէն նւտ, զարհուրելի արագութիւնով օձակերպ յարձակվում օդի մէջ և բռնութիւնով պառառում օդը, որ յետոյ միւսանցամ միաւորվում: Այն ելքարական ցոյտը է ԿԱՐՃԱՇ, և օդի պատառվելովը և կրկին միանալովը յառաջանումէ այն աշարկութիւնը, որ մէք ասումներ Աբով: Սա մօտից հնչումէ որպէս ճայթիւն, բայց հեռուից լավումէ որպէս գլորուն շառաչիւն: Ուրեմն եթէ հարցումն կար, թէ ինչ բան է Փոթորիկը. դորա ամենալաւ պատասխանը այս էք. օդի մէջ պատահող մի սաստիկ արձակումն ելքարական նիւթի, որ կամնումը գորանով նորոգել իւր հաւասարակշութիւնը: Որովհետեւ կայծակը, հետևելով ելքը.

տրականութեան օրէնքին, զնումէ միշտ ամենալաւ Փոխադրողների քամակից, այսինքն այնպիսի մարմինների քամակից որ ունէին շատ փոքր սկզբնական ելքտրականութիւն, զոր օրինակ բարձր ծառեր, աշուրակներ, մետաղներ, գէջ օդ և շողէք, և շուտով բաց և թոշում այն բաների վերսցից որ չէին փոխադրող, ապա հեշտ մեկնելի բան էր, թէ ինչ պատճառով կայծակը այն շինուածների մէջ, որնց վերսց դարձել էր, ման է դալիս այնքան զարմանալի գնացքներով:

Եւ երկրի վերայ եղած առարկաներին տալիս են ելքտրական ամպերը իւրեանց ելքտրականութեան առատութիւնը: Այս պատճառով տեսանումնք, որ կայծակը երրեմն յարձակվումէ մի այլ ամպի քամակից, երրեմն նոյնպէս երկրի վերայ, և այս միջոցին շատ անդամ զարկումէ մի տեղ: Կայծակը խորտակումէ ապա ինչ բանի և հանդիպումէ, կամ թէ կրակումէ նորան: Շատ անդամ պատաշումէ, որ մի կայծակի շառաւիզ կրակումէ, և մի այլ կայծակ դարձեալ հանգցնումէ կրակված առարկայք: Այս բանի պատճառը այն է, որ երկրորդ կայծակնազարկութիւնը ընդարձակումէ սղը, և այդպէս շիջուցանումէ կրակը: Այդպիսի մի տեսիլ ասումն սխալապէս սառն նուժ-ն-ը-ը-ն-ը-ն-ը-ն-ը: Ամենայն կայծակն մի ելքտրական նիւթ է, և դորս համար կարող է վառել, և, ինչպէս ասացինք, վառած մարմինքը շիջուցանել դարձեալ: Երբ որ կայծակը զարկումէ մի տեղ, յայտնումէ իւր կործանական զօրութիւնը այն տեղ միայն, ուր փոխադրող մարմինքը վերջանումէին: Այս բանը պատահումէ մանաւանդ այն ժամանակը, երբ մետաղներ էին եղած նորա փոխադրողքը:

Հառաջ են բերած շատ զգուշացուցիչ հնարներ, իւր անձը պահպանելու համար կայծակի երեսից: Մեք յիշատակումնք այս տեղ աւելի զլիսաւորները: Կայծակը, բաց ի մետաղների քամակից, առաւելապէս երթումէ մարդու և անասունի մարմինների քամակից: “Նորա վտանգաւոր մօտակայութենից փախչելու համար, ոլիսց է գնալ իւր տան առաւել բարձրանիստ և աւելի ընդարձակ սենեակը, նստել մի աթոռի վերայ որ շինած էր չոր փայտից: Նշնակէս պիտոյ էր հագնել չոր մետաքսեղն, բրդեղն և դոցա պէս զգեստներ: Զէր հարկաւոր մօտենալ ծխարանին, մանաւանդ երբ որ կրակ էր վառվում կրակարանումը: Կայծակը ոչինչ ժամանակ ներս չէ մօտենում բաց դռներից և պատուհաններից, այլ միշտ քերումէ պատերի և գերանների մօտից: Այս պատճառով կարելի է համարձակապէս դռները և պատուհանքը բանալ, և չը կար տեղիք վախելու անցողական օդից: Պիտոյ է հետի մնալ այնպիսի սենեակներից, ուր շատ մարդիկ միասին էին, ուր և ողը շնչառութենով պալականված է: բայց ամենից ա-

ռաւել հարկաւոր բանը էր հանդարտ պահել իւր սիրով, որովհետեւ աչ ու դողը յաւելացնումէ արտաշնութիւնը և առաւել վուանգ կար թէ կայծակը զարկելու է մեջ:

բերելուց յետոյ, ժամանակը մեղմ և քաղցր ձեռքով միւսանդամ կը սրբէ մեր արտասուբը և կը տայ մեր սրտին կարողութիւն ընդունակ լինելու ուրախութեան: Բանական մարդը, որ տեղեակ էր սյս բանիս, չէ պիտօյ անօգուտ տեղեակ լինի գորան. այդ փորձը պիտօյ է աւելի իմաստնացնէ նորան, իւր բաղդաւորութիւնը և իւր պարտականութիւնը ճանաչելու համար: Ինչո՞ւ պիտօյ էր մեղ լինել միայն կրաւորական (ծառայակէս տանող), ամենայն բան թող տալով ժամանակի ներգործութեանը, մեք, որ այնքան զգցշ էինք, մինչև ամսուան ժամանակումը հոգասար ենք լինում ճենուան պիտօյքներին, մեք պարտական ենք նշանակէս բաղդի պայծառ օրերումը իմաստութիւնը ժառանգուվել, որ կարող էինք գործ գնել երբ որպար: Հապա, թող բաղդաւորութիւնն մեջ չը լինինք ամրարտաւան, բայց և անբաղդութեան մեջ չը յուսահատովինք, ըստ որում բնակումնք մի աշխարհի մէջ, ուր բաղդաւորութիւն և անբաղդութիւն փոփոխական են, մինչև կը լուսականի մեղ գերեզմանի հանդարտ և անխոռով հանգիստը:

47. Կաւ բան էր, որ գուք ընկերասէր էիք, և ուրախութեան բաժակը միասին ըմզելով, աւելի համեղ էր ձեղ, քան թէ, երբ որ միայն էիք զատարկում նորան: Բայց մի մոռանաք, որ փոքրիկ բաժակներով կարելի է մեծ մեծ տուներ կուլ տալ. որ նա, որ մէշտ ընկերաժողովի մեջ է ապրում, զառնումէ մի ասար մարդ իւր յատուկ տան մեջ, և գուցէ թէ շուտով ոչինչ տեղ ընտանի չէր: Աեց որ տօնել մի տօնի օր գնելու համար, կարծեմ որ շատ թանգ էր տաշացածը: Այլև յայտնի է ձեղ, որ չէ կարելի ոյնպէս լաւ աշխատել տօնի օրերումը, և առանց աշխատելու չէ կարելի յուսալ շատ օրշնութիւն:

48. Այս բաւական ծանր էին մեր տալի հարկերը. բայց եթէ սոքա, որ զրել է մեր վերայ տէրութիւնը, միայն լինեին, որ պարտական էինք հատուցանել, այդու ամենայնիւ հեշտ կը լիներ մեղ ուրախ մնալ: Բայց մեք պարտական ենք միւս շատ հարկեր վճարել, որ մեղանից քանի միներին և աւելի մեծ մասին առաւել ծանր են: Մի կրկնապատիկ հարկ զնումէ մեր վերայ մեր հոռոշ-բնիւն, մի երեքպատիկ հարկ մեր հոռոշ-բնիւն, մի չորեքպատիկ մեր յոհոր-բնիւն, և այս ծանր հարկապահան չներից մի փոքր բան ևս յուսալի չէր յետ պահել: Եյս պատճառով թող միտ առնունք բարի խորհուրդը, ըստ որում այսպէս միայն կարող ենք օգնել մեղ:

49. Բաղդը օգնումէ նոցա, որ ինքեանք օգնումն իւրեանց: Ըստ բանաւոր տէրութիւն կը համարէինք այն տէրութիւնը որ կա-

մնար հարկագրել ժաղավուրդը իւր ժամանակի տասներրդ մասը ընծոյել նորա պաշտօնին. բայց ծուլութիւնը դորանից աւելի ժամանակ յափշտակում շատերիցը մեղանից: Ծուլութիւնը բերումէ հիւանդութիւն և կարճացնումէ կեանքը. ծուլութիւնը նման է ժանգին. սա ուսումնէ և ապահանումէ աւելի քան թէ աշխատութիւնը, բայց գործ դրած բանալին աւելի փայլուն է:

50. Եթէ դու սիրումն քո կեանքը, ապա մի՛ վատնիր քո ժամանակը. պատճառ, ժամանակից է բաղկանում քո կեանքը: Ինչքան ժամանակ աւելի քան թէ հարկաւոր եր, կորուսանումնք քնի մէջ, և մոռանումնք միշտ, թէ քնած աղուեսը հաւ չէ բռնում, և թէ գերեզմանումը ունեինք բաւական ժամանակ քնելու: Եթէ ժամանակը ամենայն բանից պատուականն է, ուրիմն ժամանակի վատնութիւնը է ամենափայտառակ վատնուղութիւն. պատճառ, կորուսած ժամանակը վերատին գտանել անհնարին է. և ինչ որ մէք ասումնք „բաւական ժամանակ” եթէ ողիղ թարգմանէիր, կը նշանակէր ափոքը ժամանակ: Ապա թող՝ շուտով վեր կենանք առաւտուն և աշխատենք և այն գործի վերայ աշխատենք, որ ունեինք գործելու, և աւելի գործ կը կատարէինք և ամենը աւելի բարոր կը կատարէինք:

51. Դառլութիւնը ամենայն բան դժուարացնումէ, և ժրութիւնը ամենայն բան հետացնումէ: Կա որ յետոյ եր վեր կենում առաւտուն, պիտոյ և բոլոր օրը վաղ տայ և երկշոյն զեռ ևս չէր հասած իւր նպատակին: Ծուլութիւնը ծանր քայլով յառաջ է գնում և աղքատութիւնը շասպով հասանումէ նորա քամակից: Դու վարէր քո գործը և թշլ մի՛ տուր որ քո գործը վարէ քեզ: Առակը ասումէ.

Առակ հանգատացիր և վաղ դու վեր կաց:

Առ ասանացիր խելք, առազգ կեանք, և հաց: //

52. Մշտապէս ցանկանալ և յուսալ թէ ժամանակները կը լաւանային, ցուցանումէ մեր ծուլութիւնը: Մեք ինքներս կարող ենք լաւացնել ժամանակները, եթէ աւելի լաւ շարժվէինք: Աշխատասիրութիւնը չէ նստում պարապ և չէ ցանկանում միայն. նա որ պարում յշխից, կը մեռանի պահք պահէլով. ոչինչ ստացուած, առանց աշխատութեան. ոչինչ աշխարհաշինութիւն, առանց քաջ գործակասարութեան: Գեղեցիկ է ասում մեր երանելի Հայր Մովսէս խորենացին իւր Հայոց պատմութեան մէջ. „Սահման քաջաց զէնք իւրեանց, որչափ հատանէ, այնքան ունի:” Երանի թէ ոյդ ոսկեզէն ճշմարտութիւնը հակացած լինէր այն ազգը, որի համար ա-

սած է զաւ Աւելի ասեմ ձեզ. Կոտերիայի տոմսակները հիւանդանոց մտանելու տոմսակներ են. ովք որ հող ունի, պիտոյ է և ձեռք ունենայ, ովք որ արուեստ ունի, ունի և մի ագարակ, և ովք որ մի կոչումն ունի, ունի և մի պաշտօն որ հասուցանումէ նորան և արծաթ և պատիւ: Բայց հողը պիտոյ է հոգացողութեամբ մշակել և պիտոյ է լուսցանել իւր կոչման գործը. ապա թէ ոչ. ոչ հողը, ոչ արուեստը և ոչ կոչումը չէ տալու մեզ կարողութիւն մեր հարեւը վճարելու:

53. Մի աշխատասէր մարդ ոչինչ ժամանակ չէ մեռանելու սպից. պատճառ որ սովոր կարող է միայն նայել աշխատասէր մարդու պատռահնից, բայց ոչ նորա գոնիցը: Աշխատասիրութիւնը բաղդաւորութեան հայրն է, և Աստուած ամենայն բան տալիս է աշխատասէր մարդուն: Երբ որ գատարկակեացը քնած էր, աշխատասէրը խոր ակօններ ձգեց, և ուներ ցորեան, երբ գնողը հարց ու խնդիր էր առնում: Ուրեմն թող աշխատենք պյուր, պատճառ որ չը դիմենք թէ ինչ բան էզուց կարող էր մեզ խափանարար լինել պյուր մասին: Մի պյուր աւելի լաւ է քան թէ երիշ երաշ. պյուր պատճառով մի արա պյուր բանը էզուց, որ կարող էիր պյուր առնել:

54. Եթէ դուք ծառուք լինեիք, չէիք ամաչելու, եթէ ձեր ըստ պարունը թոյլ տար ձեզ զատարկաշրջիկ լինել. բայց դուք ձեր յատուկ պարօններն էք. ամաչեցէք, եթէ կամք ունեիք ինքներդ գատարկակեաց լինել, ըստ որում պյուրան գործ կար կատարելու ձեր համար, ձեր ընտանիքի, ձեր հայրենիքի, ձեր աղջի և եկեղեցու համար:

55. Ձեր աշխատութեան գործիքը մի՛ ըմբոնեցէք մատերի ծայրերով, և մատծեցէք, որ պյուր կատուն որ թաթօպան ուներ, մկներ չէ բանում: Թէեւ դուք գործ շատ ունեիք և փափուկ ձեռքեր, պյուր ամենայնիւ պիտոյ էր միայն յաճախ յաճախ և քաջ սրտով ձեռք տալ գործին և գործ կը տեսանեիք, որ յառաջ է զնում գործը, ջրի կամիլիները վերջապէս փոսացնումն և ամենակարծր քարը. աշխատասիրութենով և համբերութենով կարող է մուկը կրծել և մաշել նաև չուանը, և փոքր զարկուածներով վայր է գլորվում մեծահասակ կաղնին:

56. Կարծումն թէ մի քանիքը ձեզանից կ'ասէին ինձ. մի՛ թէ չէ պիտոյ մարդուն ունենալ մի քանի ժամ հանգստանալու: Դորա պատռասիսնը պյուր է ժամանակը բարւոք գործ դիր, և ապա կ'ունենա դու պարապ ժամանակ, և որովհետեւ դու ոչ մի բռպէի վերայ իշխան չես, ապա մի՛ լինիր պյուրէս յիմար, որ մի ամբողջ ժամ

դուրս ձգէիր։ Հանգստի ժամերը էին մի օգտակար դործ կատարելու ժամանակ։ Այս հանգստի ժամերը կը սուանոյ աշխատասէր տղամարդը, բայց ծյլը, երկը ու Մի կեանք լի պարապով, և մի կեանք լի ծուլութենով, երկու շատ զանազան բաներ էին։ Ոմանք կամենումն առանց աշխատան լու ապրել իւրեանց խաղարկու հանձարով, բայց աղքատանումն, որովհետեւ պահան է նոցա արծաթի գլուխը, բայց դորա հակառակ, ճշմարիտ աշխատափութիւնը տալիս է սիրտ, հարստութիւն և պատիւ։

57. Փախոիր վայելչութեններից։ Նորա կը վաղեն քո քամակից, եթէ դու փախչումն նոցանից, և կը փախչեն քեզանից, եթէ դու վաղումն նոցա քամակից։ Մի աշխատասէր մանող ունի երկար շապիկ, բայց որովհետեւ ևս մի ոչխար և մի կող ունիմ, ամեն մարդ բարի լցու է ասում ինձ։

58. Մէր աշխատափութենան մէջ թող լինենք նոյնպէս ծանր, չաստատուն և աչքաբաց։ Աեր գործը մէր յասուկ աչքերով տեսասանենք և չը հաւատանք ուրիշներին։ Մի քար որ շատ անգամ այս տեղ և ոյն տեղ է գլորված, չէ կարող կանաչապատիվ։ Եւ երեք անգամ տեղափոխել իւր բնակութիւնը, ոյնպէս է որպէս թէ վասսահարվիլ հրայրեացքից։ Վասն այս պատճառի, պահիր քո խանութը և քո խանութը կը պահպանէ քեզ, և եթէ կամենումն քո դործը գլուխ տանել, ապա կատարիր նորան դու ինքնդ, եթէ ոչ ուղարկիր մի ուրիշը։ Ավ որ վարուցանքի մէջ կամենումն հարուստ մալ, պարտական է ինքը վարել իւր եղը։

59. Տանուտիրոջ աչքը աւելի պիտանի էր քան թէ նորա երկու ձեռքը, Անհոգութիւնը աւելի վասանդաւոր է քան թէ տգիտութիւնը։ Այս աշխարհի բաների մէջ մարզս երանութիւնն է զտանում ոչ թէ հաւատալով, ոյլ չը հաւատալով։ Մի փոքր անփյութութիւն բերումէ շատ անգամ մեծ վաստարաղդութիւն։ Որովհետեւ ձիռ պայտի մի բնեւը պահան էր, կորաւ պայտը, պայտը կորչելով, կորաւ և ձին, և ձիռ կորչելովը, կորաւ և ձիռուրը, սա վայրենի մարդերի ձեռք ընկաւ և սպանվեցաւ, պատճառ որ պայտի մի բնեւի համար հոգ տարած չէր։

60. Բաց ի աչքաբաց լինելոց մէր գործերի մէջ, պիտոյ էր նոյնպէս անտես լինել, եթէ կամենումնը որ մէր վաստակափութիւնը շատ պաղաբեր լինի։ Զիմանալով տնտեսութեան արուեստը, կարելի է օր ու գիշեր աշխատել և այդու ամենայնիւ մռանել որպէս մուրացկան։ Պարաբատ սեղանը նիշարացնումէ քսակը, ըստ որում կանայք մոռացել էին իւրեանց մանելը և խմոր տրորելը, և տղա-

մարդերը գինու վերսց և քաղաքական բաների վերսց վիճումնն,
շատ բր զրկվեցան իւրեանց տուն ու տեղից:

61. Եթէ կամնումէք հարուստ դանալ, ապա մասածեցէք այն-
քան ևս չափաւորութեան վերսց, ինչքան որ մասածումէք ձեռք բե-
րելու վերսց: Քոլոր արեմտեան Հնդկաստանի դանձերովը չէ հարը-
տացնէլ Ազանիան, ըստ որում աւելի դուրս էր տալիս, քան թէ
ստանումէք: Ապա թող հրաժարվինք մեր արծաթակեր Ժիմարութեա-
ներից այնուչեան չենք ունենալու պատճառ դանգատելու վատ ժա-
մանակների վերսց, ծանր հարկերի վերսց և բազմութիւն զերգաստա-
նի վերսց: պատճառ, մի հատ յիմարութիւն պահպաննել աւելի ար-
ժէ, քան թէ երկու երեխայ: Դուք դուզէ թէ կարծումք, որ մի
փոքր թէյ ու զահվէ, մի փոքր զինի, մի փոքր աւելի լաւ կերպակուր,
մի փոքր աւելի փառաւոր զգեստներ, մի փոքրիկ հացկերութիւն ժա-
մանակ առ ժամանակ, չեն ունենալու մի մեծ չետեանք. բայց փոք-
րիկ փոքրիկ հատիկներից զանումէ մի սար. մի փոքրիկ ծակ ընկըզ-
մումէ մի մեծ նաւ, և ով որ անցյ կերպակուրները սիրումէ չափա-
զանց, կարող էր ժամանակով կարօտ մալ և ցամոք հացին: Տըխ-
մարները տալիս են խնդշվեներ, որ ապա վայելումնն խելօքները:

62. Գնիր այն բանը, որ քեզ հարկաւոր չէր, և ապա շու-
տով կը ծախս այն բանը, որ հարկաւոր էր քեզ: Այս պատճա-
ռով մասածիր մի փոքր, յառաջ քան թէ դուրս կը տայիր քո ար-
ծաթը: Շատերը աղքատացած են նորանով միայն, որ շատ բան զնած
էին թեմեւ արծաթով:

63. Յիմարութիւն էր արծաթով ապաշաւութիւն գնել. բայց
այդ բանը ամեն օր պատահչումէ: Ամանք կրումնն ուկի իւրեանց զիւս-
տի վերսց, բայց ոչինչ չունին իւրեանց քսակի մեջ և գնումն պա-
ճանանք (զսրդարանք) փոխանակ շապիկ գնելու իւրեանց համար.
Մատիշը և մատաքսը կարող են հանգցնել կրակը կերպականցի մէջ.
սոքա չեն կեանքի պիտայքը և գժուար թէ նորա յարմարութիւնքը.
բայս որում նոքա գեղեցիկ եին աչքի համար, այդ պատճառով ցան-
կանումէք դուք ունենալ նորանց: Այսպիսի և այլ տեսակ յիմարու-
թեներով մեծատունքը հասկանումն մուրացկանութեան գաւաղանը
և հարկադրվումն փոխ առնուլ նոցանից որ յաւաջուց արհամար-
հումին ինքեանք, որ և իւրեանց աշխատախրութենով և անտեսու-
թենով ոռքի վերսց էին պահել իւրեանց անձը. այսպիսի դիպուած-
ների մէջ ուղիղ էր այն մասածութիւնը, թէ դութան ձգողը իւր ոռ-
քի վերսց, աւելի բարձր է քան թէ աղնուականը իւր ծնկերի վերսց:

64. Ուեմեամիտքը կարծումն, աչա օր է, և երբէք զիշեր չե-

դառնայ, „միշտ մի փոքր վեր կալնելով նորանից, մեծ բան չէր, բայց միշտ զուրս հանելով և ոչ երեք ներս դնելով, կը հասանէք տակին շուտով՝ Նրբ որ աղբիւրը ցամաքած է, այն ժամանակը կ'իմանաք ջրի յարգը։ Այս բաները կարող էիք գիտենալ յառաջուցքէ չը կայ մի լաւ ճանապարհ ճանաչելու արծաթի արժանաւորութիւնը, քան թէ հարկադրված լինել փոխ առնուլ. փոխ առնուլ պատճառում չուզ, թէ փոխառուի համար և թէ փոխառուի համար։

65. Փառաւոր զգեստներ սիրելը մի անէծքի պէս բան է մարդուս վերայ. մինչև դու կը հարցանէիր սրտիդ յօժարութիւնը, պիտի այս էր հարց ու փորձ առնել քո քսակից. պարծնաւլ զգեստով մի ամենեին անամութ մուրացկանութիւն է; Եթէ զուք գնել էր մի փառաւոր զգեստ և հագնումէր նորան, ապա պիտոյ էր ձեզ միւս տասն այնպիսի զգեստ գնել և կրել, որ մինը չը զանազանվէր միւսից։

66. Վելի հեշտ էր առաջին ցանկութեանը յաղթել, քան թէ բոլոր հետեածներին կատարումն տալ. Կայ նքան մեծ յիմարութիւն էր աղքատի կողմից, կազիկի պէս նմանել հարստականներին, ինչպէս այն գորտի կողմից, որ, ինչպէս ասումէ առակը, կամնուումը այնպէս մեծանալ, ինչպէս եղը: Խոշոր նաև բը կարող են ծովի մջան դալ, բայց փարբիկ նաւակները պիտոյ է մասն ծովեղերն այցումը, Այս բոլոր յիմարութիւննը շուտով կը պատճին: Հապարտութիւնը ճաշ է ուսում, ընկերացած փառահնդութեան հետ, բայց երեկոյան համար հացը ուսումէ, ընկերացած արհամարհութեան հետ։

67. Վ. Յն մարզերի մեծ պահքը կուրճատե էին, որ զատկին պիտոյ է պարտք հասուցանէին: Չեղանից մի քանիքը գուցէ թէ կարծումն, որ յաշող վիճակի մէջ էին, և մի փոքր ղեղանութիւն կարող չէր վնասել նոցա: Բայց պէտք է պահպանել ծերտութեան և պակասութեան օրերի համար, ըստ որում առաւատեան արեգակը ղըժուար թէ միակերպ լուսափայլէր բոլոր օրը: Եկամուտը անհաստատ և տարակուսական են, բայց ծախքը, հաստատ և անտարակշատ: Աւելի հեշտ էր երկու հոնց պատրաստել, քան թէ մինը վառել. ուրեմն աւելի լաւ էր առանց երեկոյան հացի գնալ քնել, քան թէ պարտքի մջան վեր կենալ քնից։

68. Ա աստակ արեցէք, ինչքան որ կարող էք, բայց ձեր վասակը պահպանեցք նշնպէս. այս է իմաստունների հրաշագործ քարը, որ ձեր բոլոր արձիճը կը փոխարկէ ուկի: Եթէ զուք կը գտանէք այս քարը, որ նշնպէս ձեր բոլոր յիմարութենների անհնակերպ բժիշկան դեղն էր, ապա չէիք զանգատելու, ոչ վաստ ժամանակ ների և ոչ ծանր հարկերի վերայ: Այս խրատը է բանականութիւնը

և իմաստութիւնը, և մեր բարի պատերը առակների ձևով ուսուցանումն մեղ, որ ամենայն մարդ կարողանայ հասկանալ և պահել նորան: Այդու ամենոյնիւ մի՛ կարծէք դուք, որ բանը վերջացաւ ձեր աշխատսիրութենով, ձեր տնտեսութենով և խոչեմութենով. սոքա արդարեւ պատուական բաներ են, բայց ոչ առանց աստուածացին օրհնութենանը: Այս պատճառով պարտական էք դուք չերմ լինել ազգմբի մեջ, ողորմասիրտ և բարեգործ լինել գեղ ի վաստարազդ ըբաւորները: Միտք բերեցէք Յովլը. և նաև աղքատացաւ, բայց շատ հարասացաւ յետայ: Ամենք վերջապէս, Փորձութիւնը ունի մի թանգարին ուսումնարան, բայց յիմարները կամք չունին ուսանել մի ոչը ուսումնարանում, և հաղիւ թէ ուսանումին գորա մեջ ևս: Կարելի է բարի խորհուրդ տալ, բայց նորա գործադրութիւնը չէ կարելի տալ:

69. Փոքրիկ ուրախութիւնները զուարթացնումն մեր սիրու, ինչպէս տանու հացը, միշտ առանց զզուանքի: Թեծերը, ինչպէս շաքարի հացը, շուտով յառաջանումն զզուանք:

70. Վմենայն մեղբի մեջ դրած կայ մի պատերազմ, ինչպէս ամենայն կայծի մեջ մի հրայրեացը: պատերազմ է միայն խօսելու փողովակը և խօսելու կամարը, որոնցով մեր սրտի հառաշանքը մին դուրս էինք զարգում:

71. Ո՞վ, թէ ինչպէս թեմեագին էր կեանքը, միայն թէ կամենայնք ուրախ լինել և ոչ թէ երեւլ: Օտարի կարծէքը ինչքան աւելի արծաթ ու մեղբ արժէ մեղ ամենայն օր, քան թէ մեր յատուկ կարծէքը:

72. Հարկաւորութիւնը աւելի ամրապէս կապումէ մարդ մարդու հետ, քան թէ հեշտասիրութիւնը, ըստ որում աւելի խնդիր էր հեռի պահել վիրաւորութիւնը, քան թէ որսալ ախորժականը:

73. Հատ երկարամիջոց խաղաղութեան ժամանակին չէ խօսում մարդը այնքան յիմարական և սուս բաներ, ինչպէս ամենակարճ պատերազմի ժամանակին. ըստ որում սորա մեջ համարեա թէ ոչինչ ներկայ բան չը կայ, այլ միայն աչ ու զող, փափագ և յայս որ էին ապագայի քաղաքացիքը և մարդարէքը, բայց խաղաղութեան ժամանակին կայ ներկայութիւն: Այս պատճառով մի բնական բան էր, որ մեք ոչինչ բան այնպէս վատ չէինք տեսանում և չէինք պատկերացնում մեղ, ինչպէս այն բանը, որ դեռ ևս չը կար:

74. Վմեն մարդ հաւատումէ և տառմէ, թէ աշխարհի մեջ անցած գործերը, այսինքն անցած գործերի պատճութիւնը տայիս էր խրատ պազարայի համար: Բայց մի թէ մարդու համար պակաս էր որ և իցէ անցած զնացած բան, իւր յատուկ զլիսի, կամ թէ ու-

րիշի գլուխ անցքերը։ Մի թէ ամններիս դալուստը այս տեղ երեսից էր, կամ թէ միւս օրից, ամեն մարդ ուներ այնքան անցքեր իւր զլմի վերայ, որ կարող էր պարզապէս ձևակերպել իւր դալուր։ բայց ամենայն ժամանակ, թռն լիներ որը և իցէ երեքի միջից (թէ անցեալը, թէ ներկան և թէ դալուցը), հասկանալի է միայն հնարաստեղծ մորին, և սորա համար մի և նոյն էր, ներկայից ուսանել, թէ անցածից և կամ թէ ապագայից։

75. Պատերազմը մի ամրապնդիչ երկամանիւթ դեղ է մարդկութեան համար, և մանաւանդ այն մարդերի համար որ պատերազմի տակ էին, քան թէ նորա համար, որ հրամայումէր պատերազմը։ Մի պատերազմական ընդդիմաշարութիւն (զարկվելը միմեանց) զարթուցանումէ այն զօրութիւնքը, որ մաշումէր և ուտումէր առօրեայ հոգսերի կրծող առամք, Խաղաղութեան ժամանակումը քաղաքացին փափկաէր թուլութենով սողումէ և անցանումէ դժուարութեների միջից, և իւր անձը պահպանումէ վտանգի երեսից և թնդանօթների երեսից, դուրս փորելով քարաշէն յատակը, ցածացնելով տանիքի բարձրութիւնը և տիւնելով փափուկ թրիք և քակոր, Բայց պատերազմը զուրս է գանցում անզէն քաղաքացին, միագլուխ կոր տալու աւելի կարող զորութեան և անիրաւութեան հետ, և ամենայն բռպէտ պահանջումէ մի պյրական սիրո և մի պյրական աչք, և ամենամեծ վտանգներով զրաշաւորումէ ընդդէմ աւելի փորր վտանգներին։ Քայց օրովհետեւ աւելի ամուր քաջութիւնը յայսնվումէ ոչ թէ ներս վաղելու և վերայ զարկելու մէջ, այլ ամուր պահպանելու մէջ, այս պատճառով այդպիսի քաջութեան կարօտ էր և հասանումէր այն պատերազմի մէջ անզէն քաղաքացին աւելի, քան թէ զինաւորվածը։ Թողունք այն բանը, որ նա աւելի գանձեր և մօտաւոր մարդիկ ունէր կորուսանելու և պաշտպանելու քան թէ սա, և թէ ուղիղ է մեր ասածը, ապա պիտոյ է, որ պատերազմը գալոց ժամանակների համար աւելի ճշմարիտ տղամարդեր կրթէր և յետ թողուր, և նմանէր այն Ահլույլ հրաբուզն սարին, որի մոխրախիսութեններից յետոց (և պատերազմը, ինչպէս գիտենք գուրս է փսխում բաւական մօխիք, տուն և մարդ ջարդուիշուր առնելով) առատապէս աճումն և կանաչումն այն բուսականքը, որ յառաջուց խնդիված էին, և ինչ բան աւելի ցանկալի էր մեզ ապագայի համար քան թէ քաջ և կորիչ տղամարդեր։

76. Մի միտթարական տեսիլք էր, որ բնութիւնը բոլոր մծ քաջադործ մարդերին սկսեալ Ալքսանդրից և Կեսարից մինչև Կառլոս մէծը և Գրիգորիոս երկրորդը՝ որպէս մի վիրաբուժական սպե-

դանի աղքերի արիւնաշաղախ սրտերի համար ընկերակից էր տուած գիտութեան սէրը և եռանդը նոցա քանդող ու կործանող ձանապարհի վերայ: Գիտութիւնքը, երբ որ նոցա լցուը ընկնումէ մանաւանդ թէ ընդարձակ աշխարհների վերայ, պահպանումն ազնիւ գորութիւնք, որ ոչ մի ժամանակ չեն թողում, որ կորչէր ճշմարիտ ազատութիւնը: Մի մէծ լցու վերջապէս թանձրանումէ և դառնումէ չնրմութիւն, որ մարդկութիւնը յշացուցանումէ կենդանութենով և պարզեւումէ նորան վերանորոգութիւն:

77. Խնչքան բարբարս վարը ու բարը, Բնչքան պիշտ մոլորութիւններ մարդկութեան մէջ չեն հալածվել վերջապէս գիտութեան լուսովը, սկսեալ քրմական մարդաղոհութենից մինչև վաճառականների մարդաղոհութիւնը: Այս գիտութեան լցոն էր, որ նշյն իսկ Անդիբացոց մէջ լուսաւոր մարդը վշրութեց վաճառական մարդու բոնաւորութիւնը և պյդակը վերացրեց այն խայտառակ առուտութը ծառայացրած մարդերի կեանքով:

78. Վրդարագնաց մարդը, որի հանգստարանի վերայ ատելութիւնը, նախանձը և բամբասանքը կարող էին այս փշեր ցանել, զեւ ևս հետի էր իւր նպատակից, որովհետեւ գեռ ևս մարդու իշխանութեան տակ էր: Ոլ որ մասնցած էր իւր նպատակին, նա լուսում էր պատասխանատուութիւնը նոցա աղաղակի մէջ: բայց ոլ որ հասած էր նորան, չէ լուսում աւելի այդ աղաղակի ձայնը:

79. Խնչքէն նա միայն զգում, հանգստութեան յարդը, որ իւր օրական գործը իւր երեսի քրտինքով և իւր հոգու զօրութիւնքը լարելով աւարտել է, նշյնպէս, իւր կենդանութեան երեկոյին զգումն այն վերին երանութիւնը, որ պարզեւումէ առաքինութիւնը, նա միայն, որ դորա համար կոխի ու պատերազմ է տուել:

80. Խնարատ բարեպաշտութիւնը աշխարհագէտ մարդու մէջ (որ սակաւ կը պատահի միասին) մի այնպիսի զօրաւոր զէնք է ընդդէմ խորամանկութեան և խաբէութեան, որ համարեա թէ կամէի ասել, թէ գեռ ևս չէ նա բոլորովին անարատ, եթէ յաղթվումէ խորամանկութենից, եթէ խարվումն նա և ունայն խոստմունքով գրավւումէ դէպ ի երկմիտ բաներ: Նա մտածումմ, թէ նա մի այնպիսի լուսափայլ հոյելի ներկայացնումէ մեր սրտի մէջ, որ անարատ բարեպաշտը, խորամանկ մնալորեցուցի թունաւոր շունչը այս հայելու երեսի վերայ զգումնէ իսկցյն, երբ որ մոլորեցուցիչը չնշումէ հայելու վերայ, այսինքն իւր առաջարկութիւնը հնարագիտութենով յայտնումէ, որ հասանէ իւր թագուն և ծածուկ նպատակին:

81. Երբ որ ևս առաջին անգամը տեսայ, որ մի օդագնաց բար-

ձրանալով կախվեցաւ վերին դատարկ օդերի մէջ, և ապա իմ հռ-
դու թեւերովը հետևումէի նորան, յանկարծ մտածեցի ես այն խո-
րին հանդարտութիւնը, որ ընդունումէր իւր մէջ այն անհանդիստ,
աղմկարար, բայց այժմ Երկրից բաժանված և այս աշագին դատար-
կատեսիլ օդածովի մէջ մնակ ու մոլորված լողացող հողածին մարդը:
Այս, խաղաղ լութիւնը պիտոյ է լինէր այնպէս զարհութեցուցիչ,
երկիւղալից և յետոյ ուրախ վսեմական, որ մի այդպիսի մարդ, եթէ
չէր ամենեին զգայագուրկ, մարմնից բաժանվելու նախաճաշակը յի-
րափ զգալու էր մի այնպիսի բոլորամասն վսեմականութեամբ, որ
մը, հոգիանալով երանաւէտ ապագայի յուսովը, գուշակումնք մատ-
ուրաբար:

82. Ը ատերը գանգատումն մարդկային ընկերութեան վերայ
և մեռանումն այդ գանգատներովը, առանց մտածելու կամ թէ քըն-
նած լինելու, թէ այս մարդկային ընկերութիւնը մի օրի մէջ աւե-
լի լաւութիւն է արած նոցա, քան թէ սորբա իւրեանց բոլոր կեան-
քումը: Բարձր և սաստիկ գանգատողքը նոքա են, որ նորա շնորհովը
ապրել են. բայց ամենից բարձրածայն և ամենից սաստիկ գանգա-
տողքը նոքա են, որ նորան վնասած են:

83. Վ առաւել զօրաւոր, առաւել ազդու և առաւել անյաղմելիի
է պարտաւորութեան (մեղապարտութեան) զարկուածը սրտի վերայ.
այս բարձումը թուլանումէ, կապվումէ ամենից համարձակների, ամե-
նից առողջների կարգութիւնը, և նա, որին հանդիպել է այդ զարկ-
ուածը, վայր է կործանվում այն անկաշուելի դատաւորի առաջն,
որովհետեւ այս դատաւորը ինքն է իւր համար: Կայծակներ էին, որ
գալիս են մի մութ անսեսանելի աշխարհից, որոնց երեսից չեն կա-
րող պաշտպանել ոչինչ շանթապահ գործիք: Եւ եթէ որոտը որ
լսումնք, կայծակները որ տեսանումնք, մաքրումն նիւթական աշ-
խարհը, ապա մի թէ բարյային աշխարհը, առանց այս փոթորիկ-
ներին որ անտեսանելի ին մեզ, որ և զդումէ նա միայն, որի մէջ բար-
ձրացած էին նոքա, չէր վաղուց ամենեին ապականված և ոչնչացած:

84. Ո չնդունակ լինել ուրախութեան և ցաւի, այդ բանը տըն-
կած է մեր բնութեան մէջ, և ինչպէս ճշմարտութիւնը և առարի-
նութիւնը պիտոյ է լինին մեր նոպատակը, նմանապէս պիտոյ է լինի
և երանութիւնը: Կրօնը ամենեին չը դատապարտելով մեր կարսուու-
թիւնը դէպ ի այդ, ցուցանումէ միայն ուղիղ ճանապարհը, որանով
պիտոյ էր լցուցանել այդ կարօտութիւնը, և խոստանումէ նոցա, որ
չեն մոլորվում ուղիղ ճանապարհից, թէ այն աշխարհի երանու-
թիւնը պիտոյ է նոցա համար յառաջուց սկսանի երկրի վերայ: Թաղ-

խնդան և ուրախ լինին արգարքը, թաղ ճաշակեն և տեսանեն երկուղածքը թէ ինչպէս քաղցր է Տէրը, թէ ինչպէս գթած է նոցա վերայ, որ յշտ ունին զեպ ի նա:

85. Չը տեսանել, բայց հաւատալ, թող այս բանը գայթակղութիւն և յիմարտութիւն երեխ մարդկային մեծամոռութեանը. այդու ամենայնիւ հաւատալը առանց տեսութեան, եր իսկական ապացոյց այն երեխայական երկիւղած սրտին, որ կարող է արգարե հաստատուն մնալ և իմացականութեան ամենավերին կատարելութեան հետ միասին: Պատճառ, իւր դիտութեան չափ ու սահմանը ճանաչել, իմաստութիւն է, և իւր անձը չեռի պահնել այն յիմար մեծամոռութենից, որպէս թէ կարելի էր Աստուածութեան խորքը քննել և ճանչել, այդ բանը իմացականութիւն է:

86. Իւրեկամութիւնը աւելի պատռական է, քան թէ կանանց սէրը: Մէրը առաւտուեան ստուերն է, որ ամենայն բոպէ աւելի փոքրանումէ. բայց բարեկամութիւնը է այն երեկոյեան ստուերը. սա միշտ աճումն մինչև կենդանութեան արելը կը մտանէ:

87. Խմաստունը լրումէ, ինչ տեղ խօսելը օգտակար չէր և ոչ հարկաւոր, և անյայտութիւնը պաշտպանումէ նորան: Անյայնասէրը միայն կատաղութեամբ դուրս է պատառում ճշմարտութիւնը. նա կամենումէ պանծալ նորանով, բայց ոչ, օգուտ բերել: Արշալոյը նշյապէս լցոյ է, ինչպէս արել կէտօրին: Մի թէ կամենումն դու նորան, որ սատցել էր իւր տեսութիւնը, խկոյն տանել և կանգնեցնել միջօրեական արեխ հանդեպ. դա կը կուրացնէր նորան: Արշալոյը օգտակար է նորան. ամենայն գար դուրս է հանում իւր մեծամծ տղամարդերը, և սորա այն պատճառով մեծ տղամարդեր էին, ըստ որում տալիս էին այն լցոյը, որ պատշաճ էր նոցա ժամանակին:

88. Որտի բարութիւնքը ստանալի են ամենայն մահկանացուի համար. ամենայն մարդ կարող է ճարել իւր համար հոգեղէն բարութիւնքը, որ է գործադրութիւն օրէնքի, բանականութեան և խղճմանքի: Կա կարող էր իւր խաղաղութեան մէջ թագաւոր լինել և իմաստութեամբ կառավարել իւր սրտի յօժարութիւնքը:

89. Ինական ձգտողութիւնը խղճմանքի և ներքին ամօթը շարքանից, լաւի պահապան հրեշտակներն են: Առանց խոնարհամտութեան մարդս մի մշտասուտ բան է:

90. Ճեպէտ շատ փոքր են արդարագնաց մարդիկը, այնու ամենայնիւ մի արդարագնաց մարդու կարծիք, բանականութեան կը միջ, աւելի ծանը է քան թէ միլիոնաւոր յիմարների և արատաւոր ների հաւանութիւնը: Մի հատ արժանաւոր տղամարդի հաւանու-

թիւն ոչ թէ միայն հաստատութիւն, միսիթարութիւն և վարձատրութիւն էր իմ սրտիս համար, այլև այս մի քաղցր ակնկալութիւն, թէ պատուելի կը լինէի ամենների աշքումը, որ հաւասար էին նորան: Բոլոր արդարագան մարդիկը ունին միակերպ սիրա և միապէս զգացողութիւն աղնիւ բանի համար, ինչպէս որ բոլորիքնեան մի և նոյն կանոնով կշռումն լաւը բանագէտ մարդու հաւասութիւնը է որպէս թէ խօսողական փողովակի սաստկացրած ձայնը, որ առելի չեռի է հասանում, քան թէ յիմար բաղմութեան բարձր աղաղակը:

91. Խունարհամտութեամբ և սիրով սրատեսութիւն ստացած, ուշադիր քննութեամբ կարող էինք մեր եղբայրակիցների մէջ շատ տեսակ զգացողութիւններ նկատել, որ յառաջուց թվումք մեզ թէ պակաս էին նոցա:

92. Արդուս տհաճութեան որպէս և հաճութեան մի մէջ մասը ունի իւր արժատը այն կշռադատութենների մէջ, որ ամեն՝ մինը գործումէ միւսի մտածմունքի վերայ. մեք ամենելքեանքս ուրախանումնեք այն գովասանութեան վերայ, որ չենք լսում ինքններա, և վիրաւորվումնք այն արհամարհութենից որ մեք չենք տեսանում:

93. Այն յաջողութենովը, որ տալիս է անարգելք համարձակութիւնը իւր չիմսական կանոնների մէջ, աշխարհս կը կործանվէր ամբարիշտ մարդերի միարանութենից, եթէ նոքա, որ երկար ժամանակ հէմանց հէտ իւրիշ էին դաւաճան գործերի մէջ, վերջումը չը սկսանէին նոյնպէս անհաւատարիմ լինէլ հուշ հուշ:

94. Վմուսութիւնը ամենայն բարեշինութեան սկիզբն ու ծայրն է, ուս մեղմացնումէ կոսկարարցութիւնը, նորանով առաւել կը թթած մարդը ստանումէ աւելի պատշաճաւոր հանդէս իւր մեղմութիւնը, ըստ որում այնքան բարեմասնութիւնք է պարզեւում նտ, որ միւս հատուկուոր անբաղդութիւնքը ոչինչ էին, համեմատելով նոցա: Եւ ինչ տեղիք կար խօսելու վատարաղդութեան վերայ: Անհամբերութիւն էր այն, որ ժամանակ առ ժամանակ գալիս է մարդու վերայ և տալիս է նորան մտածել, որպէս թէ անբաղդ էր նտ: Թողարակ անց կենայ այդ բոպէն, ապա երանի կը տայիր քեզ, որ մի երկարառու կապակցութիւն հաստատապէս կայ զեռ ևս: Բաժանվիլ իւր ամուսնուցը չը կայ ոչինչ բաւական պատճառ. մարդկային վիճակը ոյնքան հարուստ է դառն ու քաղցր օրերով, որ չէ կարելի չափել ու կշռել թէ երկու ամուսինք ինչքան պարտական ութիւն էր, որ կարելի է հատուցանել յաւթենականութենով միայն:

95. Պէտք է ծանօթ լինել պյու աշխարհի տեսակ տեսակ տառապանքներին, որ կարողանայիր կարեկից լինել քո անբաղդ ընկերից ցաւերին; ինչ տեղ համեստ աղքատը յորոց է հանում ծածկապէս, չե համարձակվում դուրս երևել և օգնութիւն ինզրել. ինչ տեղ ձախորդութիւնքը գետնին Են զարկում աշխատասէր տղամարդը, այն տղամարդը, որ մի ժամանակ տեսած էր առաւել քաղցր օրեր. ինչ տեղ մի բազմաթիւ պատուելի գերդաստան իւր բոլոր աշխատափութենովը, իւր ձեռքերի վաստակովը չեր կարող այնքան ստանալ, որ պահպանէր իւր անձը սովի, մերկութեան և հիւանդութեան երեսից. ինչ տեղ կոշտ մահճի մէջ, դիշերը անքուն և հեծեծելով ամօթիած արտասուքներ գլորվամեին հցած ձեռքերի վերայ. այն տեղ գնա դու, մարգասէր բարեգործ, այն տեղ թող միջամուխ լինի քո հայեցուածը, այն տեղ կարող ես դու գործ գնել քո արծաթը և աւելորդը այն պարգևների, որ յանձնել է քեզ Արարիչը, և դռանով կարող ես դու այնպիսի մէծ տոկոսիք ստանալ, որ ոչինչ սեղանաւոր (սարրաֆ) երկրի վերայ չե կարող խօստանալ քեզ.

96. Վարդերի առաւել մէծ մասը կարեկից են միայն լուս ցաւին, բայց զզվումն բարձրածայն գանգանաներից, գուցէ այն պատճառով, որ սոքա իրեւ թէ կամենումեին հարկադրանքով մասնակից կացուցանել ուրիշը իւրեանց ցաւերին:

97. Վնիր որերումը, ցաւելի է ասել, թէ մի սակաւագիւտ բան չեր, տեսանել այնպիսի զաւակներ, որ անչոզ էին իւրեանց ծնողների մասին, կամ թէ անազնիւ կերպով վարվումեին նոցա հետ պատանիքը տեսանումն իւրեանց հարբը ոչ ըստ բաւականին իսաստուն, խօսքի տեղեակ, լուսաւոր. աղջիկը ձանձրանումէ իւր պատամօր ընկերակցութենից, և մոռանումէ, թէ քանի տաղտկալի ժամեր այս մայրը ունեցած է թէ նորա օրորոցի մօտ, թէ ինսամ տանելով նորան վասնգաւոր հիւանդութենների մէջ, կամ թէ այն շնչին աղտեղի գործակատարութենների մէջ. նա մոռանումէ, թէ այդ մայրը իւր կեանքի ամենագեղեցիկ տարբնների մէջ քանի քանի ուրախութենից հրաժարված է, որ հոգարածու լինի այն փոքրիկ զզուելի մանուկի համար, որ գուցէ թէ առանց այդ հոգարածութեանը չըր լինելու կենդանի Երեխայքը շուտով մոռանումն, թէ քանի պատռական ժամեր իւրեանց Խլացուցիւ աղաղակովը աւերել էին իւրեանց ծնողների համար, քանի անքուն զիշերներ պատրաստել էին այն խնամատար հօրը, որ իւր ամեն զօրութիւնքը գործ էր դնում, իւրայինների պիտոյքը ձեռք բերելու համար Եթէ Երեխայքը, պատճառ ևս ունէին ամառչելու իւրեանց ծնողների տկարութեններից, այս

և արատներից, այդու ամենայնիւ չեր պիտոյ նոցա, արտօքին կենցու զավարութեան մէջ անտես առնել այն պատիւ ու պատկառանքը, որ զանազան պատճառներով պարտական էին ցուցանել նոցա:

98. Արարդս, մանկութենից սկսեալ, ամենեին անմասն լինելով այն ամենայն բանից, որ պատկանումէ փառաշեղութեանը և բարեկեցութեանը, բայց յետոյ առաջին անգամը տեսանելով, թէ ունի այդ բանը և կարող էր ցցց տալ ուրիշներին, սյդ կը պատճառէր նորան մեծ ուրախութիւն. բայց հարիւրերորդ անգամը տեսանել ու վայելը այդ ուրախութիւնը, այնքան մի չչին և սովորական բան է, որ կարելի է շատ անբաղդ լինել դորանով ևս: Այս պատճառով, այդ բարութենների ձեռք բերելը, յաջողութիւնը այն առաջարկութենների, որ արած էին այն բարութիւնքը բազմազատկելու համար, էր մի ճշմարիս և մեծ բազմաւորութիւն, բայց ունենալ ու վայելը նորանց մի շատ փոքր բազմաւորութիւն էր: Այդ բոլոր ուրախութիւնքը փոքր ի շատէ այնպէս են, որպէս ուտելու և ըմպելու վայելը լութիւնքը: Եթէ կարելի աւելի ուտել, քան թէ հարկաւոր էր յագենալու համար. և ուտելու քաջցրութիւնը, թէպէտ և շատ լաւ էր ախորժակը, չէ շատ երկարատև: Բայց երբ որ յագեցար, պիտոյ էր քեզ ուրիշ վայելը լութիւնք որոնել, և եթէ սոքա չեին գտանելի իմացական բաների մէջ, ապա ո՞ր միւս տեղերում պիտոյ էր գտանել նորանց:

99. Արարդկային աղջի կատարելութեան համար առհասարակ օգտակար էր, որ գոնեայ ամենայն առաքինութեան համար մի ջոկ և առանձին հանդէս, մի յատուկ վարժարան կարգած լինէր, որի մէջ, թէկ շատ անգամ առանց սահմանի ու նպատակի, կարող էր կըրթիլ առաքինութիւնը: Բայց սյդ բանը թշուլ տալու չեր, որ մի առաքինութիւն անհետանար ամենեին. դորանով կարող էին ժամանակ առ ժամանակ գերազանց մարդիկ պատրաստիլ, որ իւրեանց վիճակի առաքինութիւնը կապակցելով ընդհանրականի հետ, էր պատկերացնեն մարդկեղն պատուականութեան ամենավերին դաղափարքը: Մասնաւոր կեանքը է դպրոց առաքինութեան, քաղաքական կառավարութիւնը է դպրոց խոչեմութեան, լուռթեան և մնարդաճանաչութեան. պատերազմը է դպրոց քաջասրտութեան, վաճառականութիւնը ուսումնարան կարգի և ճիշդ գործակառարութեան: Ամենայն պաշտան, ամենայն արուեստ, ամենայն գրութիւն մարդկային կեանքի մէջ ունի անտարակցու խոր յատուկ առաքինութիւնը, և առանց սոցա չեր կարող կեանքը ոչ հաստատ մնալ և ոչ իւր նպատակին հասանել, ուրեմն և սոքա առաւելապէս պատուելի, պահանջելի և գործա-

դրելի էին։ Այսպէս, բոլոր առաքինութիւնքը անկորուստ կը մնային և բրկի վերայ, նորա ոչինչ տեղ միաւորված չեն մի հատ մարդու մէջ, բայց ցանուցիր ներկայ են, և մէք կարող ենք փոքր ի շատե յուսաւ, թէ միանգամ գալց է այն բաղդաւոր ժամանակը, երբ կը միաւորվէին դոքա։

100. Այս առաջին մարդը որ տնկեց կամ սերմանեց մի բանցար, արձակ քայլափոխով մօտեցաւ հողի կալուածին։ Կա մի և նոյն ժամանակին իւր եղբարների իմացականութեան համար բացեց մի անշափելի ասպարէզ աշխատափրութեան և մի բաղդաւոր հիմք դրեց, որի վերայ կարող էր լուսաւորութիւնը և բարքերի մեղմագործութիւնը աւելի յառաջադէմ լինել։ Ինչպէս երեսումէ, յիրաւի, շատ պատուական աշխարհների մէջ ես, երկար միջոց տեսած է, մինչև մարդու հասաւ այս բարեշնութեանը Սերմաննը ու տնիկելու գիւտը պահանջումէ աշա բաւական շատ հնարացիսութիւն։ Հարկաւոր էր բուսականների աճելու և բազմանալու մասին տեսակ տեսակ նկատողութիւնք ժողովներ և ուսած լինել արդէն, համրերութեամբ սպասել ապագային և միաւորել տեսակ տեսակ հնարներ մի ընդհանուր վախճանական նպատակի համար։ Այս բոլոր յառաջադիմութիւնքը անպատճառ պիտոյ է կամաց կամաց լինելին։ Երբ որ երկրագործութիւնը փոքր ի շատե յառաջացած էր, մարդկացին ընկերութիւնը և նոյն իսկ երկերը պիտոյ է հետ դշետէ ամենեին այլ կերպարանք ստանոյին։ Այնուշետև սկսեց մարդը իւր վարուցանքը համարել իւր բարեկեցութեան հիմք, Առանց բոլորովին հրաժարվելու թափառական կեանքից, չէր կարող մարդը վայելել այն ուրախութիւնքը, որ խոստանումէր նորան մի առաւել մեծաջան աշխատափրութիւն։ Սեպհականութիւնը որ ըստ օրէ աւելի հաստափվեցաւ և փոխադարձ օգնութեան շահաւետութիւնքը օրէ օր զգալի գարձան։ Մինի զօրութիւնը պիտօնի էր միւսի տկարութեանը, մինի աջողակութիւնը փոխարինումէր առատափէս միւսի անփորձութիւնը, կեանքի պիտոյքները բաղմանալով, հետ դշետէ աւելի մեղմացան կոպիտ ձգտողութիւնքը և զանազան հանդէսներ բացվեցան հոգեղէն գործականութեան համար։ Բացվեցան մարդու աչքերը, և սորա զգացին բռնակալութեան և հարստահարութեան հետեանքը, և մի օգտակար կախողութեամբ մինը միւսից, աւելի մօտեցան միմեանց մարդիկ, ազգեր և ցեղեր, ինչքան որ հնարագիւտ հոգին, աշխատափրութիւնը և վաստակասիրութիւնը ծաւալվեցան և զօրացան։

101. Բարի չէ, որ մարդս միայն լինի, ձպյն է տալիս բնութիւնը և աստուածաշունչ զիրքը։ Աղամը ընդունակ է ամենայն կա-

տարելութեների, բայց դուռառվլ զեռ ևս հասած չէր իւր ստեղծագործութեան նպատակին. նորան պակաս է զեռ ևս այն օդնականը, որի չետ շատ մնաց զուգաւորվլով պիտոյ է հասանէ նա այն վախճանին որի համար սահմանած է նա: Բոլոր բնութեան մէջ, որ կողմէ ևս նայում նա, ի զուր է որոնում իւր սրտի ցանկացածը: Նորա սիրտը լի է զդացողութեններով, ամենայն բան նորա շրջակայքումը զարմեցնումէ նորա ուշադրութիւնը, ամենայն նոր հայեցուածք նոր ի նորոյ զմայցեցնումէ նորա հոգին, մի ծածուկ ձգտողութիւն ստիպումէ նորան իւր զդացողութիւնքը յայտնել միւսին, բայց ամենայն ինչ անլուր ու անխօս է նորա համար: Ադամը իւր սրտի մէջ զդումէ մի քաղցր ձյտողութիւն զեպ ի սէր և բարեկամութիւն, բայց ոչինչ տեղից պատասխան չը կայ. Նա զդումէ իւր բնութեան արժանաւորութիւնը, բայց նորա շրջապատի բոլոր բաները շատ ցած էին. Նա ոչինչ տեղ չէ գտանում այն էակը, որին կարող էր հակացնել իւր սրտի զդացողութիւնքը: Նորա Արարիչը յանձնել է նորան բոլոր բնութիւնը. այնու ամենայնին տիսուր ու անմիտիթար է նա: Արգարե Արարիչը շատ զեղեցիկ զարդարել է զրախարը, բայց ինչ օգուտ Վդամին, եմէ նա չունի մի ընկեր, որին կարող էր յայտնել իւր սրտի զդացողութիւնքը: Ադամը աչքը զեպ ի վեր և բարձրացնում, և աչա մի հրաշալի հայեցուած. Նա տեսանումէ իւր պատկերը. ով անպատճէ, նորահրաշ զեղեցկութիւն. այն իւր ցանկալին է սա, նորա սիրտը վկայութիւն է տալիս այս մասին, և այսի քննուշ հայեցքը հաւատացնումէ նորան, թէ իւր փափակը կատարվելու է, և զրկախառնումէ նորան: Այնուհետեւ Ադամը դառնումէ մարդ, զդումէ իւր անձը որպէս կատարելապէս երջանիկ արարած, որին Արարչի գութը պարզել է այդքան զերազանցութիւն: Եւ մի և նոյն ժամանակին կատարվեցաւ աչա ստեղծագործութեան բոլոր խորհուրդը: Ամենայն ինչ բարի է, այժմ ստացաւ բնութիւնը իւր զուգապատշաճ կարդը և ամենայն բան պատրաստ է նորա տեսղական կատարելութեան համար. պատմառ, բանական ընկերութեան ընդունակութիւնը կայ, և այս հիմքի վերայ հաստատած է մարդու կատարելութիւնը, և այն կոսուր, որ պիտոյ է պահպանէ նորան, նոյն ինքն Արարչի ձեռքով կցած է, այնպէս կցած, որ մարդկութեան յառաջադիմութեան չետ միասին օր քան զօր ամրանումէ, պնդանումէ և հասարակլում:

102. Ճշմարիխ այրական զօրութեան անտարակայս նշանը և այն իշխանութիւնը, որ մեք ունինք յատկապէս մէր վերայ: Տշմարդը չէ պիտոյ լինի և ոչ իւր սեփական ստրուկը, չէ պիտոյ ծա-

ապյանաց իւր յատուկ սովորութեններին և իւր ախտերին։ Եյն իշխանութիւնը, որ մէք ունինք միւս բաների վերաց, ունինք միայն նորանով, որ իշխան ենք յատկապէս մեր վերաց, որ մէք այն ապաւորութիւնքը, որ այն բաները ներգործումն մեր վերաց, ինքներս կարող ենք սահմանաւորել շափի տակ դնել և կերպաւորել, որ մէք կարող ենք աղասի կառավարել այն պատկերացցքը որ նորա տալիս են մէջ, այն զգացողութիւնքը և ցանկութիւնքը որ նորա զարդուցանումն մեր մէջ։ Այլ որ իշխան չէ իւր անձի վերաց, նաև սորորագրած է օտարի իշխանութեանը, բուն հայերէն ասեմ, որ չէ կարող կառավարել իւր դլուխը, նաև պիտոյ է լինի ուրիշի ծառաց։ Հասկացիք այս բանը, ինչպէս մի մարդու, նշյալքս և մի բոլոր ազգի համար։ Վզգիսի մարդը, կամ ազդը կարող էր փոքր բան, թէսկէս և կրկնապատճիկ լինէր նորա զօրութիւնը, պատահական և արտաքին բաները կը հրամացին նորան, ինչպէս համոյ էր նոցա։ Այս է մարդուս ճշմարիտ զօրութիւնը, որ նա օրէնսդիր լինի իւր վերաց յատկապէս, որ նա ըլ լինի այնպէս, որովէս կամք չտնէր լինելու, այլ լինի այնպէս, ինչպէս նա պարա ու պատշաճ էր ճանաչում։ Կատարեալ մարդը ոչինչ բանից կախ չէ, եթէ ոչ, իւր սրտի վկայութենից, նա չէ կրում իւր մէջ ոչինչ բան, և ոչինչ բանի անձնատուր չէ, եթէ ոչ այն բանին, որ համաձայն էր իւր սրտի վկայութեանը։ Նա թշլ չի տայ, որ քարչէ և տանի նորան մի բան, որի վերաց չէր մտածել և չէր տուել իւր հաւանութիւնը։ Ոչինչ մարմնաւոր տշամութիւն չէ խանգարում նորա միբուը, ոչինչ սրտնեղութիւն չէ պղտորում նորա համար այն լոյսը, որի տակ քննելով ճանաչում նա բաների որպիսութիւնը։ Ոչինչ արմատացած սիստ նախակարծէք չէ սահմանում նորա դատողութիւնը։ Նա կարող է հրաժարվիլ ամնանցն գործից և ուրախութենից, նա կարող է աղատակամ ընտրել այն գործը, որ ծանր էր, կամ թէ ցաւալից ևս էր։ Նա ոչ մէ միայն կամք ունի, նորա կարքը ամենայն տեղ՝ յաղթաղ է և ամենայն բան կը սորորագրէ իւրեան։

103. Ո՞ի արբայսական տղամարդ էր նա, որ ոչինչ բանի տառ չէր խոնարհվում, եթէ ոչ, գեղեցիկ և աստուածեղէն բանի առաջնութեանը անաստուած մարդու ապարանքումը պատկերացնումն դժուացին անսիլներ, բայց երկիրագած մարդու խրձիթի մէջ, ուրախագէմ երկնային հրեշտակներ։

104. Ո՞ի վախեցիր միայնութենից, նա մի անվեսա բան է, ինչպէս լուսնի յատակ փայլողութիւնը, որի արծաթագոյն ճառագայթները անաստուած մարդու ապարանքումը պատկերացնումն դժուացին անսիլներ, բայց երկիրագած մարդու խրձիթի մէջ, ուրախագէմ երկնային հրեշտակներ։

105. Ի՞նչ կարող չէ մարդս. նա, որի համար երկիրը պիտոյ է բանայ իւր խոր երակները, որ նաւարկելով անցանումէ օդի տարածութիւնքը, որ աշխարհահայտն ժողի ջաղջախող ալիքների ընդդեմ՝ ամրաբռակներ (զէմ կենող խափաններ) է կառուցանում, որ այս և կրակի ուսող մաշղղ թշնուր սանձահարել է, և փշելով նորան խաղաղական մոմի վերայ շինել է նորան իւր գիշերների հանդարտ ընկերակիցը: Բայց դռւ, ով իմ սիրելի, մի պայծառ գիշերի մէջ նայիր միանդամ արարշագործութեան անդնդքի ներսը, և յետոյ պատասխան տուր ինձ, արդեօք մնումէ մարդը պյանգէս մէծ, ինչպէս յառաջուց երեւումէր:

106. Վմենայն վոտանգ խոստովանումէ իւր վերայ մի արբայական հրամայող. նորա անունը Քաջարաբութիւն է:

107. Վ, յն ինչ բան է որ երբեմն տալիս է սրտին այնքան քաջութիւն. այն ինչ բան է որ տալիս է նորան այնպիսի մի երկնային խաղաղութիւն, երբ որ մօտ էր մի անհանգատութիւն, որ երկիւղ էր բերում ուրիշների վերայ. այդ ինչ բան է որ այնպէս մշտրնցինաւոր հանդարտութիւն է հրաշագործում նորա չորս կողմը, երբ որ պիտոյ է վերայ վաղէին կեանքի փոթորիկքը. այն հանդարտութիւնը որ միայն սակաւաթիւ մարդերի սեփականութիւնն էր, արդեօք ինչ է, որ մարդուս սիրտը աղատումէ ցաւից և տալիս է նորան այնպիսի զուարթ զէմք, ինչպէս մի ուրախ կանաչադաշտ, գարնան ժամանակին: Այդ բանը Անմեղութիւնն է:

108. Վ, եւլի մօտ և աւելի խոր տեսանումնք առանձնութեան մէջ այն աշքը, որ տեսանումէ մեզ ամեններս: Վմենայն տեղ ներկայ, ինչ տեղ շրջակայքը լուռ էին ամեննեին, ներգործումէ այս բարձր մօտածութիւնը, այս քաղցր, մաքուր և երանելի զգացողութիւնը, թէ Աստուած տեսանումէ և շրջապատումէ մեզ, թագաւորումէ մեր վերայ և մեր բոլոր շրջակայքը կառավարումէ իւր կարողութենով և գլութենով: Վմենայն տեղ տեսանումնք Աստուած մեր առանձնութեան մէջ: Այդպիսի սուրբ հանդարտութեան մէջ չքանումն բոլոր անազնիւ մօտածութիւնքը, բոլոր ցած զբաղմունքը և հոգսերը:

109. Եւ հոգու համար մի առողջարար բալասան է քունը. նա ձգումէ մի վարագոյր մեր ցաւերի պատկերի վերայ, և մի ժամ աւելի երկար մոռանալ իւր վատարաղդութիւնը, փոքր օգուտ չէ:

110. Վստուածահամայ զնացք ունենալ, ահա ճշմարիս աստուածաշտութիւնը: Այս պատմառով մի անարժան բան է, եթէ մարդիկ եկեղեցի զնալով և գոռալով կարծումն, թէ կարող էին արքայութիւն գնալ, բայց չն յատակում և չն ուղղում իւրեանց

սիրուը, այլ չարութիւն ևն գործում իւրեանց տների մէջ։ Մէր տաճարը շնն քար ու փայտ, այլ մէք ինքներս ևն Աստուծոյ տաճարը։ Ամբ սիրտն է այն բանը, որ պիտոյ է աղօթէ, և նորա մէջ պիտոյ է պաշտենք Աստուած։ Այդու ամենայնիւ, գեղեցիկ և քաղցր բան էր, ջերմեանդ և երկիւղած սրտերի հետ միասին լինել այն տեղ, ուր օրհնումնք և փառարանումնք Աստուած։ այս պատճառով, դու պիտոյ է լինի մի շատ անզգամ մարդ, եթէ պյդպիսի պաշտօն շես մատուցանում Աստուածուն։ Աիսյն թէ չէ պիտոյ քեզ մտածել, թէ բաւական էր եկեղեցի գնալ. բայց մէք այնպէս ենք մտածում, թէ օգտակար ու փրկաւէտ էր յաճախ գնալ եկեղեցի. պատճառ, այն տեղ քարոզվումք աստուածային բանը և ինքը Քրիստոս ասել է. Ուր երկու կամ երեք կը ժողովիէին իմ անունով, անդ եմ և ես նոցա մէջ։ Սորա համար պարտական ենք միշտ զգուշանալ, որ չը ծուլանայինք, չը թուլանայինք եկեղեցի գնալու մէջ, ինչպէս այն անպիտան կերած ու կշտացած հոգիքը որ համարձակվումն մտածել, թէ նորա շատ լաւ և աւելի լաւ տեղեակ էին Աստուծոյ բանին, քան թէ կարելի էր նոցա քարոզել; Գիցո՞ք, թէ ճշմարիս էր, որ դու քաշ տեղեակ էիր պյդ բանին, և այնպէս քաջ, ինչպէս ինքը Քրիստոս, այնու ամենայնիւ գիտես դու, որ և նա զծումեր տաճար աղօթելու և իւր աշակերտների հետ պաշտելու Աստուծոյ բանը։ Ուրիմն պիտոյ է քեզ երբեք չը ձանձրանալ պյդ գործի մէջ, ըստ որում դա հարկաւոր է քեզ ընդդէմ սասանայի և նորա փորձութեններին։

111. Կամննումն իմանալ, թէ քո կերած հացը որպիսի պարգև է ամենաբարձրեալ Տիրոջից, ապա մտածիր թէ քանի քանի մարդիկ և անասունք, ինչքան արևի փայլողութիւն, ինչքան փոթորիկ և մրրիկ հարկաւոր էին, մինչև քո կերակուրը հասկ կապեց, հասունացաւ, հնձնեցաւ և մանրվեցաւ։ Եթէ միայն մարդու ձեռքով յառաջանային պյդ բոլոր պատրաստութիւնքը, ապա սոված կը մայիսի դու։ Ամենայն ցողի շիթ որ գոհարի պէս փայլումէր դուրս ծլած սերմի փոքրիկ բողբոջի վերայ, այնքան ճիշդ չափով, ինչպէս արեգակի փայլողութիւնը, գործակից էր քո հացի բուսանելուն և ածելուն։ Կարող ես դու շնորհակալ լինել, ինչպէս արժան է։

112. Վանկութեան տարիներումը բոլոր կերակուրքը համեղ ևն, բոլոր անդամքը կակուղ ու հնազանդ. ամենայն մարդ երևումէր մեզ արդարասիրտ, ամենայն քուն քաղցր էր և ամենայն ուրախութիւն թեթեագին։ Երեխայական հասակը շինումէ փշենուցը մի հովանի և ամենայն մարգուց բարեկամներ։ Բայց ծերութեան տարիներումը, շատ անդամ, ամենագեղեցիկ ուղղահասակ ծառը չէր ուղեղ

և հովանաւոր ըստ բաւականին։ Համարեալ թէ մի բան կար, որի մէջ հաւասար էր մնում ախորժակը. վեցերորդ և վահառուներորդ տարումը ոչինչ բան այնքան առելի չէր, ինչպէս դադաղը, բայց, առան գեղեցիկ տեսանելու համար, առելի բան հարկաւոր էր, քան թէ ծաղկափթիթ կամ մաշած ու հնացած մարմին։

113. Խըռաւ հարստականը, որ միայն արծաթ ունի և այնու ամենայնին պարտապանների մուրհակներով չէ կարող ձարել իւր համար, ոչ ճշմարիտ բարեկամ, ոչ քաջածութիւն, ոչ բուն, ոչ հանդիս և ոչ յօյս. այդպիսին մուրացկանից վասէր: Թողէ միայն լիներ նա յիսուն տարօք—և այդ հասակին շուտով կարելի է հասանել—այն ժամանակը նորա հարստութիւնը ամենայն բողէ կը նախատէր նորան։

114. Պատկառանքով ձևոք վեր առ աստուածաշունչ զիրքը. պատճառ, նա պարունակում իւր մէջ Աստուծոյ բանը՝ Խմացիք, նոքա որ չունին առաջնորդ իւրեանց կեանքի վոսնգաւոր ձանապարհի վերայ, նոքա որ չունին մսիթարութիւն իւրեանց ցաւի մէջ և ոչինչ օգնականութիւն իւրեանց վերջին ժամումը, նոցա համար աստուածաշունչ զիրքը է առաջնորդ, մսիթարիչ և օգնական։ Տես. աստուածաշունչ զիրքը մայր է, որ սնուցանում և պահպանում իւր բոլոր հաւասարցեալ զաւակները, մինչեւ սորա աձէին, զօրանային, մի առելի վերին աշխարհի քաղաքացիք դառնալու համար։

115. Ուները է եկեղեցին, տեղի ջլրմուանդութեան, ոչ թէ աշխարհական պաշտօնի համար շինած, և ոչ մարզերի բնակարան, այլ Աստուծոյ և նորա պաշտօնին նուիրած։ Կա է աներեցը եկեղեցու կամ Աստուծոյ արբոյութեան պատկերը. մի գարոց ժամանակի և մշտնջնաւորութեան համար, Հոգւցն սրբոց գործառուն, նեղացած հոգիների պատուարան, Երկնիքի նախագաւիթ։

116. Ուները ևն մեր համար գերեզմանները, այս քաղցր մսիթարիչքը կեանքի արտասուբների և ծանրութեան մէջ. գոքա քարոզումն մէջ, թէ ուրախութեամբ պիտօյ է հնձեն նորա, որ սերմանել ևն արտասուքով. այդ ձանը զգուշացուցիչքը աշխարհի վայելութենների մէջ, այդ վարիչքը զեպի ի աշխատութիւն և շոսապութիւն, որ ձայն ևն տալիս, կարգի զիր քո տունը, ըստ որում պիտօյ է մոռանիս, և ներդործիր, քանի որ ցերեկ է. դոքա պահանջումն մեր արտասուքը, բայց և սրբումն նորանց, մեզ յիշեցնելով այն երկնույն մսիթարութիւնը. Ինչո՞ւ էք որոնում կենդանիքը մոռածների մէջ. և մատնացոյց առնելով մեզ նորան, որ մահոց իւլել է նորա իշխանութիւնը։

117. Եղիշերի Հանութը: Աստուծոյ որդիքը ծնանումն երեք
անգամ. Բայան Հանութին մասնումն այս երկրաւոր կեանքի մէջ.
Առողջութեան մասնումն Հոգեորի և Ճշմարտութեան արբայու-
թիւնը, և Հանութ հասանումն յախտեական կեանքի:

118. Վահանի Հանութը: Մի իմաստուն մայր գեղ ի իւր աղ-
ջիկը խօսումեր այսպէս.

Ամիս, իմ զաւակ, ահա խորհուրդ իմ տալիս քեղ ընտրել
մի զգեստ, որանով կարող էիր դու հաւանելի լինել ամենայն մար-
դու: Քո գլուխ զարդը թաղ լինի պարկեշտութիւն, քո հանգերձը
անմեղութիւն, քո քողը ամօմիխածութիւն, քո մարգարիտը մար-
դասիրութեան արտասուք, քո թանգադին քարը թաղ լինի խօնար-
համառութիւն, քո հայելին խղմանքը, և քո հազուազիւս զարդերը
բարի մոնածութիւնք, խօսքեր և գործեր::

119. Ճշմարտապէս լաւ բանը կարելի է ճա-
նաչել ինչպէս ասոյդ բալասանը: Բալասանը փորձումն, կամիշի կա-
թիւ ցած թողլով նորան ջրի մէջ. Նմէ նա վոյր էր իջանում և
ցած էր նստում, ապա համարվում շատ նուրբ և շատ պատուական
բալասան: Մի և նցյն կերպով կարելի է ճանաչել, Նմէ մի մարդ
ճշմարտապէս իմաստուն, դիտուն և ազնիւ էր. Հարկաւոր է միայն
ուշադիր լինել, արգելք նորա լաւ յատկութիւնները ցած են իջա-
նում խօնարհամառութեան և պարկեշտութեան մէջ: Նմէ նորա լող
են տալիս մակերեսութի վերայ և կամնումն ցայ տալ իւրեանց,
ապա նցյնքան ևս պակասաւոր է նոցա հարազառութիւնը, ինչքան
որ աշխատումն նորա փայլել դուրսից: Եյն մարգարիտը որ փո-
թորդի կամ թէ որոտի թնդիւնի ժամանակը դոյանումն և սնուցան-
վումն, ունին միայն մարգարիտի արտաքին կեղեց, բայց ներսից
դաստարկ են և չունին ոչինչ խելութիւն: Կամնապէս մարգերի մէջ
այս բոլոր գեղեցիկ յատկութիւնքը, որ գոյացած են և սնանումն մէ-
ծամուռութիւնից, հարաբութենից և ունայնասիրութենից, ունին միայն
մի բարի արտաքին երեսյթ, բոյց առանց էռեմեան և հաստառու-
թեան, ուրեմն և չունին ոչինչ արժանաւորութիւն:



ԱՊԻԿԱՏԵՄԻ Վ. ԸՐՅԱ:

Ոսկիրոնիսկոս անունով քանդակագործի և Փայնարետա մանկա-
բարձի որդի Սոկրատէսը, որ Յունաց ազգի առաւել իմաստուն և ա-
ռաքինի մարդն էր, ծննդաւ 470 տարի Քրիստոսից յառաջ, Աթէն
քաղաքումը՝ Հայրը, մահկութեան օրերումը սովորեցրեց նորան քան-
դակագործութեան արուեստը, որի մէջ Սոկրատէսը պիտոյ է շատ յա-
ռաջադէմ գտանված լինի. պատճառ, ինչպէս ոմանք հաւատալի են
կացուցանում, նորա գործն էին այն երեք զգեստաւոր շաստուածու-
հիքը շնորհափայլ գեղեցկութեան (Ագլայիա, Թալիա, Խոփրոսինէ,
Երեք ՔՄՐ) որ կանգնեցրած էին քաղաքի պարսպի վերայ. Այնպի-
սի ժամանակներ, Երբ կայած էին Փիդիասի և Զեւքսիսի պէս ճար-
տարապետ մարդիկ, չէին կարող պյդպիսի պատուաւոր տեղ տալ մի
հասարակ աշխատասիրական գործի, Սոկրատէսը լինելով մատ երե-
սուն տարեկան հասակի, հայրը վաղուց աչա մեռած, և ինքը մեծ
ոէր չունենալով քանդակագործութեան հետ, բայց չբաւորութեան
պատճառով պարապելով այդ արուեստին, նորա հետ ծանօթացաւ
մի մծատուն Աթենացի, Կրիտոն անուն, և Նկատելով նորա վսեմա-
կան (բարձր) ընդունակութիւնքը, վկայեց թէ Սոկրատէսը իւր մոտա-
ծութենով կարող է աւելի օգտակար լինել մարդկեղէն ազգին, քան
թէ իւր արուեստագործութենով: Կա հանեց նորան արուեստանո-
ցիցը և յանձնեց այն ժամանակի իմաստուններին, որ տեսանելով
աւելի բարձր կարգի գեղեցկութիւններ, քննէ և նմանէ նոցա: Սո-
կրատէսը կենցաղալիարվելով անուանի մարդերի հետ, ուսումն առաւ
ամենայն գիտութեան և հմտութեան մէջ: Կրիտոնը հոգարաբառ լի-
նելով նորա ապրուստի պիտոյքներին, Սոկրատէսը մեծ աշխատախրու-
թենով յառաջուց պարապումէր բնագիտութեան: Բայց շուտով Նկա-
տեց նա, որ ժամանակ էր, իմաստութեան հայեցուածքը բնութեան
քննութենից գարձուցանել զէով ի մարդկութեան քննութիւնը: Սո-
կրատէսը, ինչպէս ասումէ Արկերոն հռոմայեցին առաջինը եղաւ, որ
իմաստութիւնը ցած գանցեց երկնքից, հաստատեց քաղաքներում,
ներս տարաւ մարդերի օթևանների մէջ, և հարկ գրեց նոցա վերայ,
որ սկսաննեն քննել իւրիւնց գործելը և թողուլը: Այն ժամանակի
միջոցին, ինչպէս միշտ և հանապազ եղած է խառնիճաղանջի մէջ,
Յաւնաստանումը մեծ պատիւ ունէին այնպիսի ուսումնական մարդիկ,

որ ջանադիր էին արմատացած մոլորութիւնքը և հնացած սնակաշտութիւնը հաստատ պահել ամենայն տեսակ խարերս պատճառներով և իմաստակութիւնով։ Նորա տուած էին իւրեանց, պատուաւոր անունն Ստիենտք, բայց նոյելով նոցա վարքին, այս անունը դարձել էր մի զգուելի և նախատական րան։ Սորա հոգարարձու էին մանուկների դաստիարակութեանը և ուսուցանուամբին որպես հրապարակական դարսցների, նշյանպէս մասնաւոր տների մէջ, հմտութիւնը, գիտութիւնը, բարշարանութիւն և կրօն, և ընդունելի էին ժողովրդի աշքումը, նորա գիտելին, թէ հասարակապետական կառավարութեան մէջ գեղեցկախօսութիւնը շատ պատուելի րան է, թէ մի ազատ մարդ շատ յօժարութենով ունկնդիր էր քաղաքական բաների վերայ զրոյց տուողին, և թէ դաստիարակադլուի մարդերի հարցախրութիւնը շատ չեց զովանում (հանգստանում) առասպելական բաներով։ Ասսն այս պատճառի, այս սովորական մարդիկը ամենայն ժամանակ ջանաչնար էին, իւրեանց դաստիարակութեան մէջ կեղծաւոր զեղչիկախօսութիւն, սուր քաղաքադիմութիւն, անալի առասպելք այնպիսի արուեստով մանել միւսնել միմեանց հետ, մինչև որ ժողովուրդը զարմանալով ականջ էր դնում նոցա և շատ առատաձեռն վարձատրումքը նորանց։ Քուրմերի հետ հաշտ կենալով, հետեւումէին այն խոչեմ կանոնին, թէ պիտոյ էր ապրել բնիքը և միւսներին ապրուստ տալ։ Նոցա գլխաւոր վարդապետական հիմքը այս էր. Ամենայն բան կարելի է ապացուցանել, և ամենայն բան կարելի է հերքել (ջրել), և թէ պիտոյ է իւր ընկների տիմարութենից և իւր յատուկ գերազանցութենից այնքան օգուտ քաղել, ինչքան կարելի էր։ Եւ որովհետեւ նորա այնքան խորամանկ էին, որ թագաւորեալ կրօնի կարողը կապակցել էին իւրեանց շահաւետութեան հետ, վասն այս պատճառի հարկաւոր էր ոչ թէ միայն մի պատրաստական և զորաւոր հոգի, որ խափանէր նոցա խարերսցութիւնքը, այլև մի ճըշմարիտ բարեկամ առաքինութեան, որ շրջանկատ զգուշութեամբ ախցեան (հակառակորդ) դուրս գար նոցա գէմուզէմ։ Աչա թէ որ պիտի դժուարութիւնք և արգելք գտանվումէին. Սոկրատէսի ճանապարհի վերայ, երբ որ նա կապեց ու կնքեց այն մէծ վճիռը, որ առաքինութիւն և իմաստութիւն սերմանէ իւր ընկներ մարդերի մէջ։ Մի կողմից ունէր նա յաղթելու իւր յատուկ կրթութեան մոլորութեններին, լուսափայլ կացուցանելու ուրիշների տգիտութիւնը, զրահաւորվելու ընդդէմ իմաստակութեան, համրելու անզամութեան, նախանձու, բարբասանքի և անարգաւորդի, իւր հակառակորդների կողմից, տանելու աղքատութեան, պատերազմելով յաղթելու

այն իշխանութեանը որ կարգած էր միանգամ, ոյլե, որ առաւել զժուարին գործն էր, պիտոյ է նա չիք դարձուցանէր սնապաշութեան զարհուրելի խաւարը: Աիս կողմից, պարտ էր նորան խնայել իւր քաղաքակեցների տկարութեանը, չը լինել գայթակղութեան քար, չունայնացնել այն բարի ներգործութիւնը որ և ամենայիմար կրօնապաշտութիւնը ունի միամտների բար ու վարքի վերայ: Այս բոլոր զժուարութեններին յաղմեց նա մի ճշմարիտ փիլիսոփայի իմաստութենով, մի սուրբ մարդու համբերութենով, մարդկութեան բարեկամի անշահամնդիր առաքինութենով, մի քաջ տղամարդի արիարտութենով, իւր անձը զրկիլով և բոլոր աշխարհային բարութեններից և ուրախութեններից հրաժարվելով: Առողջութիւն, զորութիւն, անձնադիրութիւն, բարի անուն և հանդիսաւ, վերջումը, իւր կեանքը ևս ամենայօժար սիրով զահ բերեց նա իւր ընկերների օդտի համար: Աչա թէ ինչպէս զօրաւոր էր նորա սէրը զէպ ի առաքնութիւն և արդարութիւն, նորա անարտա պարտավճարութիւնը զէպ ի աշխարհի արարիչը և պահպանողը, որ նա ամենապայծառ կերպով ձանաշել էր բանականութեան մաքուր լուսովը: Բայց այս աշխարհաբարձրացի մարդու բարձրահայեաց տեսութիւնքը խափան չեղան նորա հասարակ պարտավճարութեանը զէպ ի իւր հօյընիքը, Սոկրատէնը լինելով երեսուն և մեց տարրը մարդ, զօրականի պաշտօն է կատարել այն որատերազմի մէջ, որ Աթենացիք ունեին ընդդէմ Պոտիդայունաց, որ թրակիու քաղաքի բնակիչք լինելով ապրատամութիւն էին (գլուխ էն բարձրացրել) իւրեանց իշխան Աթենացիներից, որոնց հարկատու էին: Այս տեղ Սոկրատէսը դործ զրեց ամենայն միջոց, որ կարծրագնդէ իւր մարմինը ընդդէմ պատերազմի բոլոր ծանրութեններին և ընդդէմ եղանակի խոշորութեանը, և վարժէ իւր հոգին աներկիւդութեան, և վասնգի արհամարհութեան մէջ: Կա, ինչպէս նորա հանդիսակիցքը միաբերան խոստովանեցին, արժանի գտանվեցաւ առնուլ քաջութեան մրցանակը (պատուաւոր վարձը), բայց թողեց նորան իւր սիրելի Ալկիբիադէսի համար, այն մողով, որ նորան քաջալերէ այդպիսի պատիւներ իւր յատուկ քաջարծութեններով ստանալ յետոյ իւր հայրենիքից: Փոքր ինչ յառաջ Սոկրատէսը մի կուուի մէջ փրկել էր նորա կեանքը: Պոտիդայիա քաղաքը պաշարած էին մի ցուրտ ժամանակում. միւսերը պահպանով իւրեանց անձը, Սոկրատէսը մնաց իւր սովորական հանդերձով, և ոտարուկիկ ման էր գալիս սառուցի վերայ: Ժանտացաւը, սուրը ձեռքին կոսորումէր մարդիկը բանակի և Աթեն քաղաքի մէջ ևս: Սոկրատէսը, ինչպէս ասումեն, միայն էր, որ անմօտենալի մնաց

սցդ ցաւի համար: Զը կամնալով բան եղրափակել սորանից որ կարող էր լինել մի լոկ պատահումն, կարելի է ասել առհասարակ, թէ Սոկրատէսը մի ամուր և դիմացիոտ կազմուածքով մարդ է եղած, և իւր մարմինը շափառութեամբ, վարժութեամբ, և ամենայն փափկութենից հեռանալով, պյնպէս է կարողացել պահպանել, որ բաւական էր տանել կեանքի բոլոր պատահարներին և նեղութեններին: Բաց ի դորանից, լինելով նա պատերազմական բանակի մէջ, չէր զագարում երբէք ոչ թէ միայն կրթելով իւր հոգեղէն զօրութիւնքը, պյլւ չափից դուրս գործ գնելով նորանց: Երբեմն տեսանումէին նորան քսան և չորս ժամ մի և նշյն տեղում կանգնած, անդարձ աչքով, մտածութեան մէջ խորացչղ, պյնպէս, որպէս թէ հոգին հրաժարված էր մարմնից: Թէ կարելի ուրանալ թէ այս յափշակիլը մարդով ցուցանումէր նորա բնաւորութիւնը գեկ ի ցնորականութիւն. այս, նորա կեանքի մէջ գտանլումեն քանի մի նշաններ, որ նա ամենան աղաս չէր դորանից: Բայց այս ցնորականութիւնը Սոկրատէսի մէջ մի անվաս բան էր. նա չէ յառաջացած ոչ ամբարտաւանութենից և ոչ մարդատեաց բարբից, և կարելի է թէ շատ օգտակար էր նորան պյն որպիսութեան մէջ, որի մէջ գտանլումէր: Գուցէ թէ բնութեան հասարակ զօրութիւնքը բաւական ազդու չէին որ կարողանային ծնուցանել մարդուս մէջ պյդպիսի մէծամեծ մտածութիւնք և հաստատուն առաջարկութիւնք: Պատերազմական պաշտօնը աւարտած, Սոկրատէսը յետ էր գալիս իւր հայրենի աշխարհը և սկսանումէր ազդու կերպով քանդել ու կործանել սովիսատականութիւնը և սնապաշտութիւնը, և ուսուցանել իւր քաղաքացիներին առաքինութիւն և իմաստութիւն: Փողցներումը և ճանապարհներումը, զրուցարաններում, բաղանիքներում, մասնաւոր տներում և ճարտարապետական արուեստանոցներում, ուր և գտանումէր մարդիկ որ երկումէին նորան ուղղելի, պյն տեղ զագարեցնումէր նորանց, խօսք էր բացում նոցա հետ, միկնումէր նոցա թէ ինչ բան իրաւ էր, և ինչ բան, անիրաւ, բարի էր կամ չար, սուրբ կամ անսուրբ. նա խօսումէր նոցա հետ Աստուծոյ Նախախնամութեան և կառավարութեան մասին, և թէ որպիսի ճանապարհներով կարելի է հաճոյանալ նորան, պյլւ թէ ինչպէս է մարդուս երանութիւնը, քաղաքացու, զաւակների հօր և ամուսին մարդու պարտականութիւնքը: Այս բոլոր բաների մասին ուսումն էր տալիս նա ոչ թէ վարժապետարար ստիպելով, պյլ որպէս մի բարեկամ, որ իւր բարեկամի հետ միասին կամնումէր խնդրել ճշմարտութիւնը: Սոկրատէսը իմանումէր շատ միամիտ երեխայական հարցերով պյնպէս յառաջ տանել

քննութիւնը, որ նա մի հարցուածից գեղի միւս հարցուած անցաւելով, ուսանողը առանց զգալի դժուարութեան կարող էր հետեւել նորան, և առանց իմանալու հասանել իւր նպատակին, կարծելով, ոչ թէ ուստ ճշմարտութիւնը, այլ ինքն ըստ ինքեան գտաւ նորան: Այս ոճը, այսինքն ճշմարտութիւնը հարցուփորձով յայտնի կացուցանել, շատ յարմարաւոր էր, Սովիետաները հերքելու համար և թէ սոքա մանել էին մի երկարամել ճառ (բանախօսութիւն), չէր կարելի մօտենալ նոցա. ըստ որում այս տեղ դուրս գտալով ճանապարհից, այնքան առասպելը, ոյնքան խարերայ պատճաներ և այնքան ճարտարախօսական ձեւը գործ էին դուռմ, որ ունկնդիբը կուրանալով այդ բաներից, կարծումին թէ կարող են վկոյութիւն տալ նոցա ասածներին: Վահանարակ ծափ զարկելով ժողովուրդը ցուցանումէր իւր հաւանութիւնը Սովիետաներին, և ապա այս ուսուցիչը բնշպէս յաղթական երեսով ցած էին նոյում իւրեանց աշակերտների կամ թէ հակառակորդների վերոց: Այսպիսի միջոցում բնշպէս էր վարվում Սոկրատէսը. և սա ծափ էր զարկում միւսերի հետ, բայց համարձակվումէր յառաջ բերել մի քանի շատ թեթև հարցուածք որ քննելի բանիցը մի փոքր հետի էին, որ և այն մեծ ուսեալ մարդիկը յիմարական էին համարում, բայց ցաւակցարար պատասխան էին տալիս: Այսպէս, Սոկրատէսը առ փոքր փոքր մօտենումէր քննելի խնդրին, միշտ հարցուածներ մէջ բերելով և միշտ իւր հակառակորդի ճանապարհը կտրելով, որ չը շեզդի գեղի ի երկար ու ձիգ բանախօսութիւնք: Սորանով Սովիետաները հարկադրված էին աւելի պարզ բացորոշել ըմբռնմունքը, հաւանութիւն տալ աւելի ուղիղ բացատրութենների, և թշլ տալ որ իւրեանց սիսալ առաջարկութեններից հանվէին անչեթեթ (յիմարական) եղբակացութիւնք: Անքանէս այս սովիետանուն իմաստակը այնպէս նեղի մէջ բնկան, որ հասաւ նոցա համբերութիւնը: Բայց Սոկրատէսը միշտ երկայնամիտ էր, ամենամեծ համբերութենով տանումէր նոցա անհարգութեանը, շարունակումէր պարզել և մեկնել ըմբռնմունքը, միշտ այն անպատշաճութիւնքը որ հետեւումէին Սովիետաների հիմնական կանոններից, այնպէս լուսափայլումէին, որ և շատ միամիտ ունկնդիբը կարող էր ձեռքով շօշափել նորանց: Այսպիսի կերպով այդ Սովիետաները ծիծաղելի դարձան իւրեանց յատուկ աշակերտների աշքումը: Կրօնի մասին, երեսում, որ Սոկրատէսը ունեցած է իւր աշքի առաջն այս հիմնական կանոնը, ամենայն մոլար վարդապետութիւն կամ կարծիք, որ յայտնապէս առաջնորդումէ գեղի ի խառնացութիւն, ուրեմն և հակառակ է մարդկեղէն աղջի երանութեանը,

ամենեին չէր խնայելի, որ և Սոկրատէսը հրապարակագէս, կեղծաւորների, Սովետնուերի և հասարակ ժողովրդի առաջև, հերթումք, ծիծաղնի էր կացոցանում, և ցուցանումքը թէ ինչպէս անպատշաճ և գարշելի էին նոյա հետեանքը: Այս տեսակ էին առասպելանոս բանաստեղների ասածները այն արատների, անիրաւութեների, ամօթալի ցանկութեների և ախտերի մասին, որ նոքա տալիս էին իւրեանց աստուածներին: Այդպիսի կարծիքներ, այլև անուղիղ իմացութիւնք աստուածային նախանամութեան և կառավարութեան, բարի գործերի վարձատրութեան և շար գործերի պատժապարտութեան մասին, միշտ աղաստորէն յանդիմանումքը Սոկրատէսը, և ամենայն ժամ, առանց տարակուսելու, պատրիաստ էր ամենեին աներկեղ պաշտպանել ճշմարտութիւնը և, ինչպէս նորա վերջը ցցց տուեց, կնքել իւր խոստովանութիւնը իւր մահօվ: Արովչեաւ Սոկրատէսը ոչ մի ժամանակ իւր վարդապետութիւնքը չէր քարոզում մի ամենազէտ մարդու ամրարտաւանութենով. որովչեաւ նա ոչինչ բան չէր առաջարկում ինքը, այլ միշտ և հանապազ ջանազիր էր հարցուփորձով դուրս բերել ճշմարտութիւնը իւր լողների բերանից, ապա ներելի էր նորան չը գիտենալ այն բանը որ գիտենալ կարող չէր կամ թէ չուներ համարձակութիւն: Այն անափառութիւնը, ամենայն հարցի կարողանալ պատասխան տալ, յիրաւի մի քանի ականաւոր մարդիրի պատճառ է տուել այնպիսի բաներ հաստատելու, որ եթէ ուրիշների բերանից դուրս եկած լինէին, պիտոյ է նախառնի լինէին նոյա առաջնի: Այս անափառութենից շատ հեռի էր Սոկրատէսը. այն բաների մէջ, որ նորա ինացողութեան հօրիզոնից (տեսութեան սահմանից) աւելի բարձր էին, նա խոստովանումքը ամենայն պարզմութեամբ. Եյդ բանը չը գիտեմ: և երբ որ տեսանումքը թէ որոգայթ էին լարում նորան, և կամենումին մի քանի յատկացեալ խօսքեր դուրս որսալ նորա բերանից, ապա հրաժարվելով հանդէսիցը ասումքը. Ռչինչ չը գիտեմ: գելիքնեան պատգամախօսը վճաել էր թէ Սոկրատէսը բոլոր մահկանացուների մէջ առաւել իմաստունն է: Գիտէք, ասաց Սոկրատէսը, թէ ինչո՞ւ համար Ապոլոնը համարում ինձ առաւելագետ իմաստուն. բատ որում միւսերը ըստ մեծի մասին կարծումն թէ գիտեն մի բան, որ չը գիտէին. բայց ես վերահասուեմ և խոստովանումմամ, թէ իմ բոլոր գիտութիւնը սահմանվում նորանով, որ ոչինչ չը գիտեմ: Սոկրատէսի համբաւը տարածվեցաւ բոլոր Յունաստանի մէջ, և ամենայն կողմից գիմումին նորա մատերելի և ուսեալ մարդիկ որ վայելն նորա բարեկամական կինակցութիւնը և ուսանին նորանից: Ի վերաց ոյզը ամենայնի Սոկրատէսը

ապրումէր վերջին աղքատութեան և չքաւորութեան մէջ, և ոչինչ վարձ չեր պահանջում իւր ուսումնատութեան համար, թէպէտ Աթենացիք ոյնքան ուսումնատէր էին, որ կարող էին շատ ու շատ արծաթ տալ Սոկրատէսին, միայն թէ պահանջած լինէր: Սոկրատէսին շատ դժուարատանելի պիտոյ է լինէր իւր չքաւորութիւնը. պատճառ, նորա Քանախպատէ անունով ամուսինը, որ վատահամբաւած էր որպէս բարիկացկոտ կին, երկումէ թէ շատ անտես տանտիկին չէր. միւս որ Սոկրատէսը որպէս Հայր պիտոյ է խնամատար լինէր զաւակների, որ իւրեանց պիտոյքը սպասումէին նորա աշխատանքից:

Մի մարդ Սոկրատէսից հարցրեց միանգամ, թէ ինչ պատճառով այդպիսի կին ես առած, որի հետ դժուար էր կենակից լինել: Սոկրատէսը պատասխանեց իւր սովորական ոճով. Ով որ կամենումէ գործ ունենալ ձիաների հետ, նա, իւր անձը կրթելու համար, չէ լնարում մի համբերասար բեռնաբարձ գրաստ, այլ մի աշխայժերիվար, որ դժուար էր սանձահարել: Խս որ կամենումէմ վարիիլ մարդերի հետ, նոյն պատճառով ընտրել եմ ինձ մի անկենց սղավարելի տանտիկին, որ սովորեմ աւելի հեշտ համբերել մարդերի զանազան բնաւորութեներին: Ու ով այնպէս քաջ տեղեակ չէր հայրական պարտականութեներին, ինչպէս Սոկրատէսը. արգարե գիտէր նա թէ հարկ կար իւր վերայ ոյնքան ձևոք բերել և հոգալ, ինչքան որ պիտոյ էր իւր գերդաստանի պատուաւոր կեցութեան համար, և շատ անգամ, ոյս բնական պարտականութիւնը յատկապէս հասկացուցել էր իւր բարեկամներին: Բայց իւր մասին, նորա աւելի բարձր պարտականութիւնը խափանարար դառնվիցաւ նորա ընտանեկան պարուալճարութեանը: Խպականված բարբը այն ժամանակների, երբ որ ամենայն բան կատարվումէր, ցած օգտի համար, և մանաւանդ ստորաբարչ ագահութիւնը Սոփեսաների որ իւրեանց կորստական վարդապետութիւնքը վաճառումէին արծաթով, և ջանադիր էին հարստութիւնք ժողովել խարելով բազմութիւնը. այս ապականեալ բարբը տեսանելով Սոկրատէսը, հարկ դրեց իւր վերայ, որ ինքը, այդ մարդերի արարբին հակառակ, ամենեին անշահատէր լինի, և այդպէս նորա մարտուր և անարատ դիտաւորութիւնքը անկարելի լինէր դեպ ի վատ կողմը մէկնել: Կա աւելի լաւ համարեց տանել կարօտութեան և, երբ որ պակասութիւնը շատ նեղումը նորան, ապրել մուրացկանութենով, քան թէ իւր օրինակովը որբան և իցե արդարացնել սյս մոլար իմաստութեան ուսուցիչների աղոնեղի աղահութիւնը: Այս օգտակար զրազմունքը թող տալով Սոկրատէսը, միւսանգամ, որպէս աղատակամ զինուոր, պատերազմ

գնաց ընդդեմ բցյուտիացցց։ Ամենաացիք անյաջող դտանվելով՝ այս կոռուի մէջ, որ հանդիպեց Գելիում քաղաքի մօտ, յաղթվեցան առ մենաբն։ Սոկրատէսը ցցց տուեց իւր քաջութիւնը որպէս կոռուի մէջ, նցնպէս և վերադարձի ժամանակը։ Եթէ ամենայն մարդ իւր պարտականութիւնը այնպէս ճիշգ ցուցած լինէր, առումէ Լախէս զօրավարը, Պլատոնի ճառի մէջ, ապա այն օրը չէր լինէլու այնքան աղետալի մօր համար, երբ որ ամենեքեան դէպ ի փախուստ դարձան, յետ զնաց և նա, բայց առանց շատապելու և քայլ առ քայլ, և շատ անդամ յետ նայելով, որ ընդդեմ կենաց թշնամուն, Եթէ սա զալու էր իւր քամակից։ Կա հանդիպեց Քսենոփոնին որ ձիուց վայր ընկած և վիրաւոր ընկողմանած էր ճանապարհի վերայ, բարձրացրեց և դրեց նորան ուսերի վերայ և բերեց մի ապահով տեղ։ Քուրմերը, Սոյեսանները, ճարտարախօսը և միւսերը, որոնց գործը անարդ խարերայութիւնք էին, այս մարդիկը որոնց աչքումը պիտոյ է փուշ լինէր Սոկրատէսը, տեսանելով որ սա ներկայ չէր քաղաքումը, աշխատեցին զայրացնել ժողովրդի սիրտը նորա վերայ։ Երբ որ Սոկրատէսը վերադարձած էր պատերազմից, դժու մի չերձուած որ յօժար էր որ և ից վատթար ճանապարհներով վեասել նորան։ Այս մարդիկը, ինչպէս պատճառ կայ հաւատալու, կաշառ ք տուեցին Արիստոփանէս անունով կատակերգակ բանաստեղծին (Կոմեդիա շարադրողին), որ նա մի ծաղրաբանութիւն գրէ և սորա մէջ Սոկրատէսը ատելի և ծիծաղելի կացուցանէ։ այս բանի խորհուրդը այն էր, որ Սոկրատէսի հակառակորդը կէս մի շօշափեն ժողովրդի դիտաւորութիւնքը, և կէս մի պատրաստեն նորան, և, Եթէ իւրեանց նենգաւորութիւնը կը յաջողվէր, աւելի համարձակ կերպով վեասեն Սոկրատէսին։ Այս անձունի գրուածը ասվումէր յունարէն Նոքալու Աշուշ, որի մէջ Սոկրատէսը գլաւաւոր հանդիսացցցն էր, և այն մարդը որ պիտոյ է կատարէր այս պաշտօնը, զանազիր եղաւ ամենայն կերպով կենդանագրել Սոկրատէսի որպիսութիւնքը, կազիկի պէս նմանամեն լով նորա զգեստը, գնացքը, շարժողութիւնքը և ձայնը։ Սոկրատէսը սովորութիւն չօւնէր թէատրոն գնալ, բաց ի երբ որ Եւրիպիդէսի գրուածքը որոնց, ինչպէս կարծումն ոմանք, մանակից էր ինքն Սոկրատէսը, հրապարակով գործ էին դրվում։ Այն օրին, երբ որ Արիստոփանէսի ծաղրաբանական գործը պիտոյ է հանդէս բերէին, ներս մտաւ և Սոկրատէսը։ Սա լսելով թէ շատ ստարականներ որ ներկայ են, հարցուփորձ էին առում, արդեօք ովհ էր իսկ կապէս այն Սոկրատէսը, որ այդպէս նախատակոծ էր լինում (նախատվումէր) տեսարանի մէջ, նա իսկըն գուրս երևեցաւ հանդէսի

միջավայրումը, և մինչև թէատրոնական գործողութեան վերջը մնաց անշարժ կանգնած մի տեղում, ուր ամենայն մարդ կարող էր տեսնել նորան և համեմատել օրինակի հետ։ Այս դաւաճան գործը խայտառակեց նոյն ինքը հեղինակի և նորա ծաղրաբանական գըրուածը^{*)}։ Բայց այս անզգամ նմանախօսութիւնքը ոչինչ ներդործութիւն չունեցան, ըստ որում Սոկրատէսի տեսութիւնը հանդիսականների մեջ զարթեցրից պատիւ և պատկառանք, այո՛ և զարմացք նորա աներկիւղ քաջարտութեան վերսոյ Եւ բանաստեղի գրուածը շեղաւ հաւանելի, և նոյնպէս անյանջ զանգվեցաւ, երբ որ միւս անզգամ հանդէս բերվեցաւ։ Այն աշխարհաբարձրացի իմաստունի թշնամիքը հարկագրվեցան դադարեցնել իւրեանց հալծանքը և ըստպանել աւելի պատեհ ժամանակի։ Պատերազմը Բյուստիացոց հետ աւարտած, իսկոյն հարկ էր Աթենացոցը նոր զօրք ժողովել, որ փակեն Լակեդեմոնացոց զօրավարի Քրազիդասի ճանապարհը, ըստ որում սա Քրակիայումը տիրապետել էր զանազան քաղաքների, այլ և հանել էր Աթենացոց իշխանութեան տակից շատ հարկաւոր քաղաքը Եմիփասլիս։ Սոկրատէսը ըլ վախելով այն վտանգից, որ իւր վերջին բացակայութեան միջոցին պատրաստել էին նորան, միւսանգամ դուրս դնաց պաշտպանելու իւր հայրենիքը։ Այս վերջին անգամն էր, որ նա հրաժարվեցաւ իւր հայրենի քաղաքից։ Այնուհետեւ մինչև իւր վերջը դուրս չեւ կած Աթենացոց սահմանից, և երբէք չէ դադարած թէ բարեկամական կենակցութեամբ, թէ ուսուցանելով և թէ բարի օրինակով առաքինութեան սէրը ազդել մասնուիների մէջ։ Ինչպէս նա ամենայն բանում սիրումը գեղեցկութիւնը, նոյնպէս իւր բարեկամների ընտրութեան մէջ, երեսումք,

*) Կար ժամանակների հետաքննողը։ Թէպէս ոչ ամենեքեան, պաշտպանութէ Արիստոփանէսի և անձը և զրուածը, պատմառ բերելով թէ Արիստոփանէսը Սոփիստ համարելով Սոկրատէսին, ըստ որում սա լինելով բարեկամ նորապիտէսի, որ տուի էր Արիստոփանէսին, ընդդիմացած էր թէատրոնական լիրը համարձակախոսութեանը, հրապարակ դուրս բերեց նորան որպէս բալոր առւու փիլիսոփաների պարագլուի (Պինաւոր)։ Այլն, թէ Արիստոփանէսի զրուածի մէջ երեկցան Սոկրատէսը ամենենին այլ մարդ էր քան թէ Սոփիրնիսկոսի որդին, ամենենին այլ մարդ, քան թէ կարելի էր, որ Սոկրատէս իմաստունը անսարանի մէջ հանգարան հոգով վեր բարձրանար և թոյլ տար, որ համեմատեն նորան այն գեղեալ և հնարատեզեալ մեծամաք հազրարանի հետ։ Տե՛ս Geschichte der griechischen Literatur von Friedr. Schöell, թարգմանած և նորով մշակած դաշտվական բնագրէց Քրանց Եվրոպ աշխատութեամբ, Համար 33, եր. 180.

թէ ուշադիր է և մարմնաւոր գեղեցկութեանը։ Մի գեղեցիկ մարմնն, սովոր էր նա ասել, քարոզումէ և մի գեղեցիկ հոգի. բայց եթէ գեղեցիկ մարմնի հետ զուգակից չէ և հոգեղէն գեղեցկութիւն, ապա պիտոյ է նա մնացած լինի անխնամ ու անհոգ։ Այս պատճառով շատ ջանազիր էր մարդերի ներքինքը համաձայն կացուցանել նոցա գեղեցիկ արտաքին կերպարանքին. բայց ոչ ովի համար այնքան հոգարարձու չէր Սոկրատէսը, ինչքան Ալկիրիադէս երիտասարդի համար, որ մի շատ գեղեցիկ, մեծաքանքար, գոռող, թեթև ւամիս և ամենեին կրակոտ բնաւորութենով մարդ էր։ Սորա քամակից անզագար ընկած էր Սոկրատէսը, սորա հետ ամենայն դիպուածում խօսակից էր նա, որ բարեկամական խրատներով և սիրալից յանդիմանութեններով հեռացնէ նորան պատուամոլութեան և հեշտախոտութեան (անպարկեցան ցանկութեան) արասներիցը, զեպ ի որոնց կողմը ի բնէ յաժարամիս էր Ալկիրիադէսը։

Յէ մարդկեղէն ազգը ինչ ճանապարհով կարող է երանութիւն գտանել, աշա նորա մի հատիկ քննելի խնդիրը, Նթէ մի մոլորական գատողութիւն, կամ թէ մի սնապաշտական կարծիք առիթ էր տուած յայսնի լունակալութեան, մարդկային իրաւոնքը անարգելու, կամ թէ բարբերը ապականելու, ապա ոչինչ բան աշխարհի վերսց կարող չէր արդելք լինել Սոկրատէսի պէս մարդուն, աներկիւզ և անվեհէր գուրս դալ նոցա հակառակ։ Յունաց մէջ մի հին արմատացած մոլորահաւատութիւն կար, որպէս թէ չը թաղեալ մեռածների հոգիքը Սոխիքս անուն Տարտարուեան գետի ափումը հարիւր տարի անդադար պիտոյ է թափառէին, մինչև կարող էին անցանել գետի վերսցից և հասանել իւրեանց սահմանեալ օմելվանը։ Այս սխալ կարծիքը, որ կարելի է թէ մի աշխարհաշէն մարդ բարի զիտաւորութենով ազդել էր մի անկիրթ ժողովրդի մէջ, այս սխալ կարծիքը Սոկրատէսի ժամանակիներումը վատթար գործադրութենով կործանեց քանի մի քաջ հայրենասէր մարդերի կեանք։ Աթենացիք Արգինուզեան կղզիների մաս ամենեին յաղթող էին հանդիսացիք և ակեղեմոնացոց վերսց, բայց յաղթող նաւերի հրամանակալքը իւսիանվելով մրրկից, չը կարողացան թաղել իւրեանց մեռածները, Երբ որ պահ հրամանակալքը վերադարձած էին զեպ ի Աթենք, մէծ ապերախտութենով առեան գանչեցին նորանց, որպէս թէ իւրեանց պարտականութիւնը զանց էին արած։ Այն որին Սոկրատէսը Պրիւտանէն *) ծերակուտի մէջ նախաթու խորհրդական էր.

*) Պրիւտանէն առվաւմէր Աթենք քաղաքի մէջ մի հասարակաց չենուան, ուր

մի քանի, տէրութեան մէջ կարող, մարդերի չարամտութիւն, քուրմերի կեղծաւորութիւնը և կաշառակեր ճարտարախօսների և խոռվարար մարդերի վատթարութիւնը միաբանվել էին, որ ժողովողի կցը բարկութիւնը բորբոքնեն ընդդէմ հայրենիք պաշտպանող մարդերին: Ժողովուրդը կատաղելով պահանջումէր զէսպ ի մահ դատապարտել նորանց: Ճերակուտի մի մասը ևս յիմարացած էր ոյս խառնի ճաղանջի մոլորութենով, և միւս մասը չունէր այնքան համարձակութիւն, որ ընդդիմանայ հասարակաց խելագարութեանը: Վմենեքան համացանցքան, որ այս անբաղդ հայրենասէր մարդերի վերայ մահու վճիռ կապին: Սոկրատէսը միայն ցայց տուեց այն քաջարատութիւնը, որ հարկաւոր էր դոցա անմեղութիւնը պաշտպանելու համար: Կա արհամարհեց կարողների սպառնալիքը և զայրացած ամբոխի կատաղութիւնը, նաև միայն պաշտպան դուրս եկաւ հալծեալ անմեղութեանը և աւելի բարւոք համարեց համբերել ամենազան վշտի, քան թէ հաւանութիւն տալ պարզիսի զարհուրելի անիրաւութեան: Թէպէտ Սոկրատէսի ջանադրութիւնքը անօգուտ գտանմլեցան, և շատ ցաւելի էր նորան տեսանել թէ կը ըր բարկութիւնը յաղթող հանդիսացաւ, և ինքը հասարակապետութիւնը խայտակեց իւրեանց տունը: անինուց մորթելով իւրեանց փորձառու զրավարքը, անօգնական մացին այն միջոցին երբ վերայ հասաւ վասնգը: Գալոց տարումը Աթենացիք ջարդուիշուր եղան Լակեդեմոնացոց սրով, նոցա նաւերը աւերլիցան, նոցա քաղաքը քանդվեցաւ, և այնպիսի անձարութեան մէջ էր, որ հարկադրվեցաւ անձնատուր լինել յաղթողի կամքին:

Լիւզնդը զօրավարը Լակեդեմոնացոց, տիրապետելով քաղաքին, յաջողութիւն տուեց մի ապստամբութեան որ յատաջացած էր այն տէղ, հասարակապետական կառավարութիւնը փոխեց սահկաւապետական իշխանութիւն և կարգեց մի ծերակոյտ երեսուն մարդոց բաղկացած, որ յայտնի են անունով երեսուն բոնակալք: Վելի անդութ թշնամիքը կարող չէին այնքան վնասել քաղաքին, ինչոքէս այս գաղանաբարաց մարդիկը, որ պատճառելով, որպէս թէ պատժումէին ընդդէմ տէրութեան եղած յանցաւորութիւնքը և ծածուկ ա-

Պրեշտանքը, թուով 10 մարդ: Նախապատի խորհրդականը էին և կարգով նախաթռու էին նառում: Ենթակառու մէջ, որ ժողովումէին և բնակումէին, ինչքան նույն պաշտոնը տէռութէր, այլէ տէրութեան ճակարտ կը բարերւածէին:

սպտամրութիւն, կողղոպտումէին կամ թէ սպանումէին տէրութեան առաւել արդար քաղաքացիքը: Յափշտակել, գերփել, աքսորել, սորան մահացնել յայտնապէս, նորան զարանագործութեամբ, աչա թէ որպիսի ապիրատութեններով նշանաւոր արեցին դոքա իւրեանց կառավարութիւնը: Անչպէս պիտոյ է ցաւէր և մորմօքվէր Սոկրատէսի սիրոր, տեսանելով թէ Կրիտիասը, որ յառաջուց իւր աշակերտ էր եղած, այս գարշելի մարդերի առաջնորդն էր: Այս, այս Կրիտիասը, Սոկրատէսի նախնի բարեկամը և ունկնդիրը, այժմ ցոյց տուեց իւր անձը յայտնի թշնամի նորան, և որոնումէր պարագ վեասելու նորան: Այս իմաստուն տղամարդը միանգամ խիստ խօսքերով նախատած էր Կրիտիասի գաղանական և անբնական ցանկութիւնը. այս տմարդի Կրիտիասը, սկսեալ այն ժամանակից, ոս էր պահում Սոկրատէսի հետ, և այժմ միջոց էր որոնում վրեժինդիր լինելու: Նրբ որ սա և Քարիկէսը օրէնսդիրը բնտրմեցան, ապա կամենալով մի վեա գտանել Սոկրատէսի մէջ, օրէնք դրեցին, որ ոչ ով չը համարձակի Տարտարախօսութիւն ուսուցանել: Կորա լսեցին յետոյ, թէ Սոկրատէսը վատարանել է իւրեանց, և այս տեղ, այն տեղ ասած է. «Զարմանալի բան է, որ հօփի մարդիկ իւրեանց խնամարկութեան յանձնած ոչխարների թիւը փոքրացնելով, և նորանց նիշարացնելով, այնու ամենայնի կամք չունէին համբ չունէին անպիտան հօվիճեր ասվիլ, բոյց աւելի զարմանալի է, որ մի տէրութեան առաջնորդներ քաղաքացոց թիւը փոքրացնելով և նոցա բարբը վատթարացնելով. այնու ամենայնի կամք չունէին համարմիլ անպիտան առաջնորդներ»: Կորա հրամայեցին յառաջ բերել Սոկրատէսը, ցոյց տուեցին նորան օրէնքը և պատուիրեցին որ ոչինչ խօսակցութիւն չունենայ մանուկ մարդերի հետ: Կայ թշրուութիւն հարցանելու, պատասխանեց Սոկրատէսը, այս և այն բանի համար, որ այդ պատուէրի մէջ բացայսյոյ չէր ինձ: Այս, ասացին: Ապա պատրաստ եմ, ասաց Սոկրատէսը, հանգանել օրէնքին, և երկիւղ ունիմ միայն, թէ մի գուցէ անդիտութեամբ մեղանչէի զորա հակառակ. վասն այս պատճառի խնդրումմէ մի աւելի պարզ մենութեամբ. արդեօք գուք, Տարտարախօսութիւն ասելով. Հասկանումէիք ճշմարիս խօսելու արուեստ, թէ սուտ խօսելու արուեստ: Եթէ Տարտարախօսութիւնը ուսուցանում ճշմարիս խօսել, ապա պիտոյ էր ինձ ոչ մի մարդու չասել թէ ինչպէս պարտ էր նորան ճշմարիս խօսել. բոյց եթէ Տարտարախօսութիւնը սոտախօսութեան արուեստ է, ապա և ևս ոչ ովի չեմ ուսուցանելու, թէ ինչպէս պիտոյ էր սուտ խօսել: Քարիկէսը բարկացաւ և ասաց. եթէ դու չես հասկանում այս բանը, մեք աւելի հաս-

կանալի Ենք շինած այդ բանը և պարզապէս պատուէր տուեցինք քիզ, որ զու չը խօսես մանուկ մարդերի հետ։ Բայց կամնալով իմանալ թէ այդ գործի մջ ևս ինչպէս պիտոյ էր ինձ վարդիլ, Կըրենեց Սոկրատէսը, ապա խնդրեմ՝ որոշել ժամանակը թէ մինչև Երբ մանուկ էիք համարում մարդերը։ Մինչև որ նորա կարող չէին նըստել ծերակուտի մջ, պատասխանեց Քարիկլէսը. այսինքն, մինչև նորա հասունացած չէին խելքով, ուրեմն մինչև երեսուն տարեկան հասակը։ Բայց եթէ ևս կամնում էի գնել մի բան, պատասխանեց Սոկրատէսը, որ ծախումքը մի պատճի մարդ երեսուն տարուց ցած, պիտոյ է որ չը հարցանէի. քանզի ևս ծախում։ Այդ արգելած չէ քեզ, ասաց Քարիկլէսը. բայց դու երբեմն հարցանում այնպիսի բաներ, որ դու շատ լաւ գիտես. ուրեմն հրաժարվիր դու միւսանգամ այդպիսի հարցուածներից։ Եւ պատասխան տալուց ևս, շարունակեց Սոկրատէսը. զոր օրինակ, եթէ մի մանուկ մարդ հարցանէր ինձանից թէ որ տեղ է բնակում Քարիկլէսը կամ Արխտիասը, ունեի՞ համարձակութիւն պատասխան տալ։ Այն, այն, ասաց Արխտիասը, բայց զգաց կացիր դու այն մաշած և հնացած օրինակներից ու առակներից որ բերում կաշի ձևող դերձակների, ատաղձագործների (խառնադների) և գարբինների անունով։ Կարծեմ որ, պատասխանեց Սոկրատէսը, պիտոյ էր ինձ նոյնպէս հետի կենալ այն խորհուրդներից, որ ևս սովորութիւն ունիմ բացայատել այդպիսի օրինակներով. այսինքն, արդարութիւն, սրբութիւն, երկիւղածութիւն և այլն։ Ամենին այդպէս, ասաց Քարիկլէսը. բայց ևս առաւել զգուշացիր դու անհասունների հօմիւնների առակից. այս բանը լաւ պահիր մտքիդ մջ. ապա թէ ոչ. երկիւղ կար, թէ մի գուցէ և դու պատճառ տայիր փոքրացնելու ոչխարների հօտը։

Սոկրատէսը բանի տեղ չը դրեց ոչ նոցա սպառնալիքը, ոչ նոցա անձունի օրէնքը որ նորա ամնեսին ընդումէմ առողջ բանականութեան և բնական օրէնքին անիրաւութեամբ ներս էին ըերեւ. Կա անձանձիր աշխատումքը առաքինութիւն և արդարութիւն սերմանել, և այն բռնակալը չը համարձակվեցան յայտնապէս յարձակվիլ նորա վերացին յարացին որոնումէին ոլոր ոլոր ճանապարհներ և կամնումէին Սոկրատէսը մասնակից շինել իւրեանց անիրաւութեններին. այս պատճառով յանձնարարութիւն տուեցին նորան և չորս միւս քաղաքացիների, որ մի Լէսն անուն մարդ Սալամին կղզուց բերեն Ամէնք, մահու պատիժ տալու նորան։ Միւսերը յանձն առան այս գործը, բայց Սոկրատէսը յայտնեց թէ նա երբէք կարող չէ բործակից լինել մի անիրաւ բանի։ Ապա կամի՞ս դու, ասաց Քարի-

կէսը Սոկրատէսին, աղատութիւն ունենալ խօսելու ինչ որ կամ-
նումէս, բայց ամենեին ապահով լինել ։ Ամենայն կարելի վեաս, որ-
տասխաննեց նա, կամք ունէի այդ մասին յանձն առնուլ, բայց ամե-
նեին ոչ, անիրաւութիւն առնել մի մարդու։ Քարիկէսը լուս կա-
ցաւ, և միւսերը նայումէին միմանց Սոկրատէսի այսպիսի աղատա-
խօսութիւնքը պիտոյ է ոյնու ամենայնին մահ բերելին նորան, թէև
ժողովրդի համբերութիւնը չը հատանվէր այս բռնակալների անգութ
դործերովը, թէև ժողովուրդը չը յարուցանէր (վեր կացնէր) մի
խոռովութիւն, չը սպանէր նոց գլխաւոր առաջնորդքը, միւսերը հա-
լածելով քաղաքից։ Երբ որ հասարակապետական կառավարութիւնը
միւսանգամ հաստատվեցաւ, Սոկրատէսի հին թշնամիքը, սովինստները,
քուրիքը և ճարտարախօսքը գտան իւրեանց ցանկացած միջոցը աւե-
լի յաջողութեամբ հալածել նորան, և վերջապէս վերացնել նորա-
կեանքը ևս։ Անիւսոս, Մելիտոս և Լիկոն են ասում այն երեք, յա-
փունական ամսմով խայտառակիված մարդերին որ ոյս վատթար զի-
տաւորութիւնը գլուխ տանելու համար գործակատար են գտանվիլ,
Սորա ժողովրդի մէջ բարասանք ձգեցին, թէ Սոկրատէսն է ուսու-
ցել Կրիտիասին այն բռնակալութեան կանոնքը, որ նա մի փոքր յա-
ռուած գործ էր դրած այնպիսի անլսելի անգմութենով։ Ով որ զի-
տէ ժողովրդի թեմենահաւատութիւնը և անհաստատ բարբք, նա չէ
զարմանալու թէ Ամենացիք ականջ զրեցին այդպիսի յայտնի ստա-
խօսութեան, թէպէտ ամենայն մարդ զիտէր թէ ինչ է պատահէլ
Սոկրատէսի և բռնակալների մջ։ Մի քանի տարի յառաջ Ակիւի-
ադէս, մէծաքանքար, բայց վայրենի բնաւորութենով երիտասարդը,
ընկերանալով միւս լրաբարց մանուկների հետ աւերած էր Ճեր-
մս աստուածի պատկերքը, հրապարակով ծաղր էր արել Ելեւզին-
եան կրօնական գալանիքների վերայ, և այս յանդգնութեան համար
ստիպված էր հեռանալ քաղաքից։ Այս անցքը միւսանգամ սկսեցին
պատմել, և Սոկրատէսի թշնամիքը համբաւ տարածեցին, որպէս թէ
Սոկրատէսը այն երիտասարդին ուսուցել է արհամարհէլ կրօնը, Ա-
նչ ինչ բան աւելի հակառակ չէր Սոկրատէսի վարդապետութեանը և
վարքին, քան թէ այդպիսի ապօբէն գործ։ Հասարակաց աստուած-
պաշտութիւնը, թէև մինչը շատ և շատ մոլորական, միշտ պատու-
ելի էր նորա աչքումը, և խօսելով Ելեւզինեան գաղտնիքների մա-
սին, պիտոյ է ասել թէ Սոկրատէսը իւր ըոլոր բարեկամներին խոր-
հուրդ էր տալիս որ իւրեանց անձը նուիրել տան այդ գաղտնիքնե-
րի մջ, թէպէտ նա ինքը ունէր իւր յաստկ պատճառները չը լի-
նել դոցա մասնակից։ Շատ հաստատ հիմք կար մտածելու, թէ ա-

ւելի մէջ կրօնական գաղտնիքը Խլւզիս քաղաքի մէջ, ոչ մի այլ բան չէին, եթէ ոչ, ճշմարիտ ընական կրօնի վարդապետութիւնքը և առապելների առողջամիտ մէկնութիւնը: Եթէ Սոկրատէսը հեռի մնաց այդ գաղտնի միաբանութիւնից, հաւանական է, թէ նա կամք ունէր պահէլ իւր աղատութիւնը, այդ գաղտնիքը անվեսս տարածելու մասին, այն աղատութիւնը որ քուրմբը պիտօյ է խլէին նորանից, նուրիբն լով նորան այն գաղտնիքների մէջ: Երբ որ բամբասողքը կարծումին թէ շարամիտ համբաւներով բաւական պատրաստել են ժողովրդի միտքը, ապա Մոլլիսոսը մի գրաւոր ամրաստանութիւն (զանդատական թուղթ) Սոկրատէսի վերայ տուեց քաղաքի մէծաւորին, և սա ժողովրդին ծանուցումն արեց: Գատաւորները հաւաքվեցան, վիճակ ձգելով սահմանեցին այն գաղտնաքացիների սովորական թիւը, որ պիտօյ է վճիռ կապէին պարտաւորված մարդու վերայ: Աչա այսպէս էր ամրաստանութիւնը. Ասկրատէսի վարբը օրէնլողդէմ է, ըստ որում նա ա. չէ պաշտում տէրութեան աստուածքը. ի. մոլորեցնումէ մանուկները, ուսուցանելով նոցա արհամարհէլ այն ամենայն բանը որ սուրբ էր: Նա պարտական է մահու: Սոկրատէսի բարեկամբը բերեցին նորա մօտ վայելացարմար ճառեր, նորա պաշտպանութեան համար: Գորա շատ գեղեցիկ են, ասաց Սոկրատէսը, բոյց իմ պէս ծեր մարդու համար անսպատշամ էին այդպիսի հնարազործութիւնք: Կամք չունէի՞ր դու, քո անձը արդարացնելու համար, ինքդ մի բան դրել, հարցրեցին նորա: Վմենից լաւ պատճառը, որանով կարող էի ապացուցանել իմ արդարութիւնը, պատասխանեց նա, այն է, որ ևս իմ կեանքի մէջ ոչ ովի անիրաւութիւն: արած չեմ: Շատ անգամ մասնել եմ ևս մի պաշտպանութական ճառի վերայ, բայց բատուած միշտ խափանել է այդ առաջարկութիւնը. գուցէ թէ այնպէս համց էր նորան, որ ևս այս տարիներումն, յառաջ քան թէ խախուտ և հիւանդութեան պէս ծերութիւնը կը հասանէր ինձ, մեռնէի աւելի թեթեւ մահով և չը լինէի ծանրութիւն ոչ իմ բարեկամներին և ոչ ինձ: Վայ բառերից կամցած են ապացոյց քաղել, որպէս թէ Սոկրատէսը մի վատասիրո (վախկոտ) մարդ էր և աւելի վախեցած է ծերութեան ցաւերից քան թէ մահուց: Բոյց հարկաւոր է շատ համարձակութիւն, այդպիսի կարծիք անկելու համար կարգացողի մըուքումը: Վայ դատաստանի համար հրապարակապէս առհմանած օրին երեւեցան Մելիտոսը, Վնիւտոսը և Լիւկոնը, առաջինը որպէս փոխանորդ ժարատարախօների, երկրորդը որպէս փոխանորդ ժողովրդի, և երրորդը որպէս փոխանորդ հարատարախօների, սոքա մինը միւսի հետից վեր ելան ատենացանութեան բեմը, և Սոկրատէսի ընդդէմ

ճառեր ասացին, շատ թունալից և շատ բամբասական ճառեր։ Աղա-
նից յետոյ վեր ելաւ բեմը և Սոկրատէս, առանց դոզալու կամ տա-
րախուսելու, առանց կամնալու մի ողլալի կերպարանքով շարժել
եւր դատաւորների ցաւակցութիւնը, ինչպէս այն ժամանակումը սո-
վորութիւն կար դատարանների մէջ, այլ մանաւանդ թէ ծանր և
համարձակ կերպարանքով, ինչպէս վայել էր իւր իմաստութիւնար։
Նա մի ճառ ասաց, արգարե մի անարուեստ, անպատրաստ, բայց մի
այրական և շատ աղջու ճառ, որի մէջ առանց բարկութեան չեր-
քեց այն բամբասանքը և չոր համբաւները որ, նորան վլասելու
համար, տարածել էին, ամօթերես արեց իւր ամբաստանողքը (դա-
տախազքը) և ցոյց տուեց նոցա յատուկ գանգասների մէջ եղած հա-
կաւակութիւնքը և անմասութիւնքը թէպէտ իւր դատաւորներին հան-
դիպեց պարտուպատշաճ պատկառանքով, բայց խօսեց այնպէս քաջ
և իւր գերազանցութիւնը ճանաչելով, մինչեւ նորա խօսուածքը պի-
տոյ և դադարէին անհաւանների մամաւալովը։ Կա կնքեց (վերջացրեց)
իւր ճառը այս բառերով։ «Մի՛ բարկանաք, ո՛վ Աթենացիք, Եթէ
ևս, ինչպէս սովորութիւն ունին պարտաւորված մարդիկը, չեմ խօ-
սում ձեր հետ արտասուալից աչքերով, կամ թէ իմ երեխոյցք,
աղջականքս և բարեկամքս ողբալի հանգեսով չեմ բերած այս տեղ,
որ շարժեմ ձեր գութը։ Ոչ թէ ամբարտաւանութեան կամ թէ
խստասրութեան պատճառով հրաժարվեցայ այդ բանից, այլ որով-
հետեւ անարժան եմ համարում ևս աղջաւոր լինել դատաւորի ա-
ռաջեւ, և զբաւել նորա սիրաը մի այլ բանով, քան թէ իմ գործի
արդարութենովը։ Դատաւորը երդումն ուտելով, պարտականութիւն
և յանձն առել, որ օրէնքի և արդարութեան հիմքի վերայ դատաս-
տան հատուցանէ, և թոյլ չը տայ ոչ ցաւակցութեանը և ոչ բար-
կութեանը առաջնորդ լինել նորա դատաստանին։ Ուրեմն մեք պար-
տաւորվածքս օրէնքի և արդարութեան ընդդէմ գործ ենք գործում,
Եթէ մեր լալով ու արտասուելովը որոնումնք երդմնազանց շինել
ձեզ։ Նշնպէս անպատվութիւն էր ձեզ, Եթէ մեք որ պարտական ենք
յարգել ձեզ, կարծէինք թէ գուք կարող էիք երդմնասուտ գտան-
վիլ։ Ամենին կամք չունիմ ևս այնպիսի հնարներով փրկել իմ
անձը, որ ոչ սրբնաւոր, ոչ արդար և ոչ երկիւղած էին, մանա-
ւանդ որ փոքր մի յառաջ Ակլիսոսի բերանով պարտաւորվեցայ ևս
որպէս անաստուած մարդ։ Եթէ ևս իմ աղջանքովս որոնած լինէի
երդմնազանց կացուցանել ձեզ, սա պիտոյ է լինէր առաւել զօրտոր
ապացոյցը, թէ ևս չեի հաւատում ոչինչ աստուածք, և այսպէս իմ
անձնագաղտնականութիւնը պիտոյ է ապացուցանէր իմ աստուածուրա-

ցութիւնը: Բայց ոչ, ես աւելի քան թէ իմ ամբաստանողքը հաւատում և խօստովանում Աստուծոյ գյուղիւնը, և այս պահճառով ընծայում իմ անձը Աստուծոյ և ձեր կամքին, որ դուք դատէք ինձ արդարութեամբ և այնպիսի վճիռ կապէք, որպէս ձեր և իմ համար առաւել բարուզ էր»:

Դատաւորները շատ անհաւան էին Սոկրատէսի այսպիսի ծանր և անխախտելի հաստատութեանը, և կորեցին Պլատոնի խօսքը, որ Սոկրատէսից յետոյ դուրս եկաւ և սկսեց խօսել այսպէս. Թէպէտ ես, ով Աթենացիք, աւելի մանուկն եմ այն տղամարդերից որ ելանումն այս բեմի վերայ. այս բառերը ասած, իսկզյն ձայն տուեցին. ցած իջիր, ցած իջիր. և այսպէս չը թողեցին նորան շարունակել իւր ձառը: Սոկրատէսի հակառակորդքը երեսուն և երեք թուով աւելի շատ լինելով, դատապարտեցին նորան:

Վթէն քաղաքի մեջ սովորութիւն կար, որ դատապարտվածքը ինքնանք մի որոշեալ պատիժ, տուգանք, բանտարկութիւն, կամ աքսորանք դնէին իւրեանց վերայ, որպէս թէ սորանով դատաստանի արդարութիւնը պիտոյ է հաստատէին կամ թէ մանաւանդ խօսովանէին իւրեանց յանցանքը: Եւ Սոկրատէսին ասացին. ընտրիր զու ինքդ, ինչ պատճի արժանի էիր. նա չը կամեցաւ երբէք այնպէս անարդար գտանվիլ դեպ ի իւր անձը, որ պարտաւոր համարէր իւրեան, և խօսեց այսպէս. Եթէ պիտոյ էր ինձ համարձակապէս ասել ձեզ, թէ ինչ բանի արժանի եմ կարծում ես իմ անձը, ապա յայտնի լինի ձեզ, ով Աթենացիք, որ ես մտածում թէ այն արդիւնքների փոխարէն, որ բերած եմ հասարակապիտութեանը, յիրաւի արժանի եմ տէրութեան ծափքով պահպանութիւն դատանելու որիւտանէոնի մեջ: Ի վերայ այսր ամենայնի Սոկրատէսը, իւր բարեկամների յորդորանքով, հաւանեց մի փոքր տուգանք վճարել, բայց չը կամեցաւ թողուլ, որ նորա իւրեանց մեջ մի աւելի մեծ գումար արծամի ժաղավանքովն: Դատաւորները խորհուրդ կատարեցին, թէ ինչ պատիժ պիտոյ էր դնել նորա վերայ, և նորա թշնամիների անզգամութիւնը այն տեղ հասցեց բանը, որ Սոկրատէսը մահապարտ դատվեցաւ: «Դուք շատ շտապել էք ձեր դատավվճիռը կապելու մեջ, ով Աթենացիք, խօսեց Սոկրատէսը, և զորանով նիւթ էք տուել այս քաղաքի բամբասասէր մարդերին նախատել ձեղ նորա համար, որ դուք վերացրած էիք իմաստուն Սոկրատէսի կեանքը. նորա կ'անուանեն ինձ իմաստուն, թէպէտու չէի ես, որ ես առաւել կարողանան մեղաղբել ձեզ: Ձեզ հարկաւոր չէր երկար ժամանակ սպասել, և ես կը մեռանէի առանց ձեր գործակցութեանը, Ահա տեսանումէք դուք,

թէ ինչպէս մօտ եմ մահուն։ Զեզ եմ ասում այս խօսքերը։ որ
ինձ մահու պարտական էք համարել։ Մի՞ թէ կարծումք դուք, ո՞վ
աթենացի մարդեր, թէ ես խօսքեր չունեի, որ գրաւեմ և հաւա-
նեցնեմ ձեզ, միայն թէ կարծեցած լինեի թէ արժան էք ամենայն
դործ գործել, և ամենայն բան ասել, մի քաղցր վճիռ ստանալու
համար։ Ստուգապէս ոչ ։ Եթէ ես յաղթահարվումեմ, դորա պատ-
ճառը չէ խօսքի և մտածութեան պակասութիւնը, այլ որովհետեւ
չը կոյ իմ մէջ այնքան անամօթութիւն և գետնաբարշ հոգի, որ
լսել տոյի այնպիսի բաներ որ համոյ էին ձեր ականջին։ բայց ան-
պատշաճ, մի արդարազնաց մարդու բերանի լալ, աղաղակին և միւս
սորա պէս անարդ համոզիչ (յորդորիչ) հնարներ, որոնց սովոր էք
դուք ուրիշների կողմից, մեծապէս անարժան են ինձ։ Ես ոկզրից
ահա վճնած ունեի մորումն, որ լաւ համարեմ կորուսանել իմ
կեանքը, քան թէ փրկել նորան անաղնիւ կերպով։ Պատճառ, ես
պյառէս եմ մտածում, թէ ոչ ես և ոչ մի ուրիշ մարդ դատաս-
տանի առաջն չուներ իրաւունք փախչել մահու բերանից, ինչպէս
որ չուներ այդ իրաւունքը պատերազմի մէջ։ Քանի անզամ կոռուի
մէջ կարող էք մի տղամարդ հնար զտանել փրկելու իւր կեանքը,
եթէ կամենար զէնքնից լինել (զէնքը ձեռքից վայր ձգել) և շնորհ
խնդրել թշնամուց, որ գալիս էր նորա քամակից։ Այսպէս, մար-
դում կեանքի մէջ շատ պատահ մունք կան, որոնց մէջ այն կարելի
էր փախչել մահուց, միայն թէ լիներ մարդս այնքան անամօթ, որ
կարողանար ամենայն դործ գործել և ամենայն բան ասել որ հար-
կաւոր էր այդ մասին։ Մահուց աղատել իւր անձը, ով աթենացի
մարդիկ, չէր այնպէ դժուար, բայց ամօթից աղատել իւր անձը ա-
ւելի դժուար է, բայց որում ամօթը աւելի երազահաւ է քան թէ
մահը։ Եւ այս է պատճառը, որ ես ծանրաշարժ ծեր մարդ լինե-
լով, ըմբոնիցայ և աւելի ծանրաշարժիցը, բայց իմ ամրասանողքը
զուարթ ու արագաշարժ մարդիկ լինելով, հասել է նոցա և շուտա-
քայլ (շցոտ ման եկող) ամօթը։ Ես երթումնեմ դէպ ի մահ, որանով
դուք դատապարտել էք ինձ, և դուք երթումք դէպ ի անարդանք և
ապականութիւն, որոնցով դատապարտում ձեզ ճշմարտութեան և
արդարութեան բերանը։ Ես հաւան եմ ձեր դատավճնին, կարծեմ
և դուք, ուրեմն գործը գնումէ պյառէս օրինապատշաճ, ինչպէս պէտք
էք. և ես նախասահմանութեան ճանապարհները դատանութեմ և այս
մեջ արդար և պատուելու արժանիւ։ Երբ որ սորանից յետոյ Սոկրա-
տէսը մի քանի ճշմարտութիւնք համարձակապէս, առանց դատնու-
թեան ասած էր իւր դատաւորների երեսին, որ դատապարտել էին

նորան, ապա դարձուց դէմքը դէպի ի այն մարդիկը որ կարծիք էին տուած Սոկրատէսի աղատութեան համար, և խօսեց նոցա հետ, քըն-նելով մարդուս կեանքը, մահը և անմահութիւնը, այնպիսի կերպով, ինչպէս այն ժամանակումը կարող էր հասկանալի լինել հասարակ ժողովրդին։ Բայց երբ որ միայնակ էր իւր աշակերտների և սրտակից բարեկամների չետ, սկսեց նոյն նիւթերի վերոյ աւելի չիմ նաւոր կերպով խօսել։ Սոկրատէսը տարան դրեցին բանտի մէջ, որ, շատ գեղեցիկ ասում է Անեքսա իմաստուն Հռոմացին, այդպիսի տղամարդ ընդունելով իւր պատերի մէջ, պիտոյ է մերկանար (վերայից հանէր) իւր բոլոր անարդութիւնը, ըստ որում այն տեղը, ուր օժեւանումէր Սոկրատէսի պէս տղամարդը, չէր կարող լինել բանտ։ Շանապարհին հանդիպեցին Սոկրատէսին իւր աշակերտներից քանի մի անձինք, որ շատ ցաւեցան և անմիթմար էին այն բանի վերայ որ պատահէն էր իւրեանց վարժապետին։ Ինչո՞ւ էր լաց լինում դոք, հարցրեց նոցանից այն մէծ իմաստունը. մի թէ բնութիւնը չէ դրել իմ վերոյ մահու հարկ, երբ որ ծնած էի ևս, նթէ մահը զիկելու է ինձ մի ճշմարիտ և արդիւնաւէտ բարութենից, ապա պիտոյ էր իմ բարեկամներին մանաւանդ թէ շնորհաւորել իմ ճանապարհորդութիւնը դէպի ի յախտենական օմեանը։ Վաղովողորոսը լինելով շատ բարեսիրտ մարդ, բայց մի փոքր տկարամիտ, ամեննեին անհաւան էր այն բանին թէ իւր վարդապետը և բարեկամը մոռանելու է անպարտ։ Ավ բարի Ապոլլոդորոս, ժամունով ասաց Սոկրատէսը, ձեռքը զնելով նորա դլիւնին. մի թէ աւելի հաջոյ կը լինէր քեզ, որ մեռանէի պարտական։ Մի օր յառաջ քան թէ Սոկրատէսը ընդունելու էր մահու պատուհաս (պատիժ), Կրիտոնը, զեռ ևս լշուր չը բացված, եկաւ Սոկրատէսի մօտ, և տեսանելով նորան քաղցր քնի մէջ, նատեց նորա մահձի մօտ, որ չը խափանէ նորա քունը։ Երբ որ Սոկրատէսը զարթեց, հարցրեց նորանից այսպէս։ Ինչո՞ւ այսպէս վաղ այսօր, եզրաքար Կրիտոն։ Սա իմաց տուեց նորան, թէ լուր է սուացել որ դալոց օրին պիտոյ է նորա մահու վճիռը դործ զրմի, նթէ այդպէս է ասուուածային կամքը, պատասխանեց Սոկրատէսը իւր սովորական հանդարտութենով, ապա թող լինի։ Յետոյ Կրիտոնը յայտնեց իւր բարեկամին թէ ինքը կաշուք է տուել պահապանին և բոլոր պատրաստութիւնքը տեսած է, որ նորան գիշերով փախօնէ բանտից, և այսուհետեւ նորանց էր կախ, նթէ կամք ուներ աղատել իւր

անձը Նախատական մահու բերանից: Կրիտոնը աշխատեց նշյնպէս առաւել ծանր պատճառերով՝ ապացուցանել Սոկրատէսին, թէ այսպէս էր իւր բարեկամական պարտականութիւնը և պատշաճը: Այլք Կրիտոնը ճանաչելով Սոկրատէսի հայրենասիրութիւնը, աղաջեց որ մտարերէ նա, թէ պարտական էր խափանել, որ Աթենացիք անմեղ արիւն չը թափին, թէ պարտական էր խնայել իւր բարեկամերին, ըստ որում սոքա բաց ի այն ցաւից, որ պատճառելու էր նորա կորուսոր, Նախատական համրափ տակ պիտոյ է ընկնէին, որպէս թէ իւրեանց բարեկամի փրկութեան մասին անհոգ էին եղած: Աերջապէս Կրիտոնը զանցառու չեղաւ պատերացնել Սոկրատէսի աչքի առաջեւ սորա անօգնական երեխաների ողբարի զրութիւնը, որովհետեւ զրկվելու էին նորա հայրական դաստիարակութենից, օրինակից և պաշտպանութենից: Սորան պատասխանեց Սոկրատէսը. „Ի՞մ սիրելի Կրիտոն, քո բարեկամական հոգաբարձութիւնը զովանի է, ուրեմն և շնորհակալութեան արժանի, եթէ համաձայն էր առողջ բանի (դաստիարակութեան). բայց եթէ հակառակ էր դորան, ապա պարտ է մեզ զդուշանալ գորանից: Ուրեմն նախ և յառաջ պէտք է մեղքնել, արդեօք քո առաջարկութիւնը արդար էր և առողջ դաստիարակութեան հետ համաձայն, թէ ոչ ևս ամենայն ժամանակ սովորած եմ ոչինչ բանի հաւանութիւն չը տալ, եթէ ոչ այն բանին, որ հասուն մօրով կը առաջ էի ամենից լաւը, և այժմ ոչինչ պատճառ չը նիմու խստորվելու (ծովմլու) այն կանոններից, որոնց մինչև այժմ հետեւել եմ կեանքիս մէջ, թէպէտ և այս որպիսութեան մէջ էի, ինչպէս և գու ականատես ես: Այդ կանոնները երեսումն ինձ և այժմ այնպէս, ինչպէս երեսութիւն յառաջ, և այս պատճառով չէ կարելի ինձ այլապէս ընթանալ, քան թէ պատուելով և յարգելով նորանց“:

Ոոկրատէսը իւր կենդանութեան վերջին օրումը (ինչպէս որումն նորա աշակերտներից մինը) խօսումքը կրիտոնի և մի քանի այլ բարեկամների հետ հոգու անմահութեան վերայ: Երբ որ Կրիտոնը հարցանումը նորանից, ինչպէս վարդինք քո հետ մեռանելուցդ յետոյ, պատասխանեց Սոկրատէսը. „Ինչպէս որ “հաճոյ է մեղ, միայն թէ ունենացիք ինձ, և ես դուրս չը փախչէի ձեր ձեռքից: Մի և նշյն ժամանակումը նայեց նա մեղ ժապելով և ասաց. բարեկամներ, ես չեմ կարողանում հաւանեցնել Կրիտոնին, թէ Սոկրատէսը նա է, որ այժմ խօսումէ և մի քանի ժամանակ ձեր հետ կենակցութիւն է ունեցած. բայց Կրիտոնը միշտ կարծումէ որպէս թէ այն դին (մեռեալ մարմինը) որ շուտով տեսանելու է, որ և այժմ իմ արտաքին

պատկերն է միոյն, նոյն խել Առկրատէսն է, և հարցանումէ, թէ ինչ
պէս թաղէր ինձ: Եյն բոլոր պատճառքը որ մինչեւ այժմ յառաջ
եմ բերած ես, որպէս ապացոյ, թէ ես, երբ որ թշնը ներգոր-
ծած կը լինի իմ վերայ, չեմ աւելի մալու ձեր մօտ, ոյլ կը տե-
ղափոխիմ դէպ ի Նրանելաց օմեանքը, երեսումն նորան մի հնա-
րած բան միայն, ձեզ և ինձ միսիթարելու համար: Խնդրեմ և ա-
ղաշեմ ձեզ, բարեկամներ, երաշխառուր կացէք Արխոսնի մօտ թէ պա-
տահէլու է այն բանի հակառակը, ինչ բանի մասին նա երաշխա-
ռոր է կացել դաստառների մօտ: Կա իմ համար երաշխառոր է եղած,
թէ ես չեմ փախչելու, բայց ձեզ պիտոյ եր երաշխառոր լինել նո-
րա մօտ, թէ ես մահուց յետոյ փախչելու եմ իսկըն, որ նա տե-
սանէ իմ մարմնի այրելը կամ ինոցանելը հողի մէջ, և չը տիրի
շատ, որպէս թէ հանդիպումէր ինձ մի ամենամեծ վատարազդութիւն:
Թող՝ իմ թաղման հանդէսի վերայ չը խօսէ այսպէս: Սոկրատէսը
դնումն գագաղի վերայ, Սոկրատէսը զուրս են տանում, թաղումն
Սոկրատէսը: Պատճառ, իմացիր զու, ո՛վ Արխոսն, շարունակեց Սո-
կրատէսը: Այդպիսի խօսքերը ոչ թէ միայն ընդդէմ էին ճշմարտու-
թեան, այլև մի ցաւեցուցիչ բան, հրաժարված հոգու համար: Կ'ա-
ռաւել միսիթարպիք զու և ասա: Թէ թաղվումէր իմ դին, որ և
կարող էիր զու ամփոփել, ինչպէս հաճայ էր քեզ, և ինչպէս կար-
ծումէր թէ օրէնքը կը պահանջէր:: Սորանից յետոյ Սոկրատէսը
առանձնացաւ մի մերձակայ սենեկի մէջ, լուացվելու համար: Արի-
տոնը գնաց նորա քամակից և ասաց մեզ, որ սպասենք: Մեք մա-
ցինք և անմիսիթար սրտով սպասումէինք զալոց մէծ վատարազդու-
թեանը, պատճառ, այնպէս էր երեսում մէջ, որպէս թէ պիտոյ է
զրկիլէնք մեր հօրից, և այսուհետեւ որբերի պէս ապրէինք աշխար-
հի վերայ: Երբ որ Սոկրատէսը լուացված էր, բերեցին նորա երե-
խացքը (Նա ունէր երեք հատ, երկուքը մասուկ, մինը չափահաս),
և նորա տան աղախինքը ներս մտան նորա մօտ: Սոկրատէսը խօսեց
նոցա հետ Կրիտոնի ներկայութեամբը, ասաց նոցա ինչ որ ունէր
ասելու, ապա հրամացեց կանանցը և երեխաներին հեռանալ, և մի-
սանգամ դուրս եկաւ* մեր մօտ: Ժամանակը դէպ ի արեամուտ էր,
ըստ որում նա մի փոքր շատ մնացել էր մտակայ սենեկումը: Կ'ա-
ցած նատեց, բայց խօսեց շատ փոքր, որովհետեւ շուտով եկաւ այն
տան և մի կառավարիչ մարդերի սպասաւորը, կանգնեց նորա մօտ
և ասաց: Ո՛վ Սոկրատէս, ես մի ուրիշ բան եմ տեսանում քո մէջ,
քան թէ միւս դատապարտվածների մէջ: սոքա սովորաբար զայրա-
նումն և անիծումն ինձ, երբ որ ես մեծաւորների հրամանով ծա-

նուցանումնմ նոցա, թէ ահա ժամանակ էր ըմպելու թշնը, բայց դու ամենայն ժամանակ, և մանաւանդ այժմուս երևումս ամեննին հանդարտ և չեղահոգի, ինչպէս ոչ մինը եղած չէ բանտի մէջ։ Ես հաւասարի գիտեմ, որ և այժմ դու չես բարկացած իմ վերայ, այլ նոցա վերայ (դու ճանաչումս նորանց), որ մղաւոր էին այդ բանի մէջ։ Քաջ յայտնի է քեզ, Սոկրատէս, թէ ինչ լուր եմ բերում քեզ։ բարեաւ մնա, տար համբերութենով այն բանին, որ չէ կարելի փոխել Այս խօսքից յետոյ նա շրջեց երեսը և լաց եղաւ։ Սոկրատէսը դարձուց աչքը նորա վերայ և ասաց. բարեաւ մնաս, բարեկամ, մեք կը հնազանդենք քեզ։ Բայց դէպ ի մեր կողմը խօսեց այսպէս. ինչ բարեպաշտ մարդ է առ. քանի՛ անգամ եկել է ինձ տեսութիւն, խօսք է բացել իմ հետ։ բարի և պատուաւոր մարդ է զա, տեսէք թէ ինչպէս արդար սրտով լաց է լինում իմ համար։ Բայց ո՛վ Կրիտոն, մեզ պարտ է խսկապէս հնազանդել դորա ասածին. ասա՞ որ բերեն թշնը, և թէ պատրաստ էր. և թէ ո՛չ, թօղ սպասաւորը պատրաստէ նորան։

Ի՞նչ ես այդպէս շտապում, իմ Սոկրատէս, պատասխանեց Կրիտոնը. կարծեմ որ արեք դեռ ևս փայլումէ սարերի վերայ և չէ մտած։ Միւս մարդիկը մահու հրաման ստանալուց յետոյ, սովորութիւն ունին երկար միջոց սպասել մինչև թշն ըմպելով, և յառաջուց ուժումն ու խմումն. Այդ ևս քանի մի ժամ կարող ենք յետ ձգել այդ բանը, ո՛վ Կրիտոն, պատասխանեց Սոկրատէսը, թօղ այդպէս առնեն նորա, որ կարծումէին թէ օգուտ կար յետ ձգելուց որ չափ և իցէ, բայց ևս ունիմ իմ յատուկ պատճառքը հակառակ կերպով վարվելու։ Ես կարծումն թէ ոչինչ շահ չունիմ յետ ձգելով այդ գործը, և պիտոյ է ինքս ինձ երեկի ծիծաղելի, և թէ այժմ կամենայի աղահութիւն և ժլատութիւն առնել կեանքի մասին, ըստ որում այսուհետեւ զա իմն չէ։ Կատարի՛ իմ հաճուքը և մի խափանիր ինձ։

Վաս Կրիտոնը աչքով արեց մատիկ կանգնած տղային. մանուկը դուրս դնաց և մի քանի ժամանակ յուշացաւ պատրաստելով թշնը, և ապա ներս մտաւ այն մարդը որ ուներ ձեռքին թունալից բաժակը, որ պիտոյ է տար Սոկրատէսին։ Աս տեսանելով որ գալիս է թշն բերողը, խօսեց. ո՛վ բարի մարդ, տուր այս անզ. բայց ասա ինձ թէ ինչ պիտոյ է առնեմ, թշնը ըմպելուց յետոյ. քեզ յայտնի է բանի որպիսութիւնը։ Թղյն տուողը պատասխանեց. քեզ պէտք էր միայն խմելուց յետոյ վեր ի վայր ման զալ, մինչև ծանրանային ոտերդ, ապա կը հանդստանաս դու. այս էր բոլորը։ Սորանից յե-

այս մարդը տուեց թօյնի բաժակը Սոկրատէսին. սա առաւ բաժակը մի զարմանալի խաղաղութենով, առանց դողալու, առանց փոխելու երեսի գյոնը, և իւր լոյնարաց աչքերովը նայելով այն մարդուն, խօսեց. ինչպէս ես կարծում, կարելի՞ է սորանից մի քանի կամիել որպէս շնորհակալութիւն զոհել աստուածներին. թօյն բերողը պատասխանեց. այնքան է բաժակի միջումը, ինչքան որ հարկաւոր էր: Աւրեմն թօլ մնայ, ասաց Սոկրատէսը. բայց կարող եմ մի աղօմք վերուղը գէպ ի աստուածքը: Դուք, որ գանչումք ինձ, ով աստուածք, բարի ճանապարհ պարզեցէք ինձ. այս խօսքերը ասած, բաժակը զրեց բերանին և խաղաղութեամբ դատարկեց նորան:

Ոինչև այժմ շատերը մեղանից դեռ ևս կարող էին պահել իւրեանց արտասուքը. բայց երբ որ տնսանք թէ նա բաժակը զրեց բերանին, խնմէ և դատարկեց նորան, այնուչետե կարելի չէր համբերել: Դմ երեսից ոչ թէ կամումեին արտասուքս, այլ հեղեղի պէս վայր էին հսում, և ես հարկադրվեցայ ծածկել գէմքս իմ վերաբերով, որ կարողանամ անխափան արտասուել ոչ թէ Սոկրատէսի վերայ, այլ իմ, վատարադդիս վերայ, որ զրկվեցայ այնպիսի բարեկամից: Կրիտանը որ ինձանից յառաջ չէր կարողանում զսպել իւր արտասուքը, վեր կացաւ և ըբջումէր բանառումը. և Ապոլլոդորոսը որ բոլոր ժամանակը ըստ մմծի մասին լաց էր եղած, սկսեց բարձրածայն գոռալ և աղաղակել ոյնպէս, որ ամենների սիրտը պատառվումէր: Սոկրատէսը միայն մնաց անշարժ և ձայն արձակեց գէպ ի մեջ. Այդ ինչ բան է, ով փոքրահոգիք, այս բոպէիս գուրս ուղարկեցի կանայքը, որ նոքա լաց ու աղաղակ չը գործեն. պատճառ, լսած եմ ես, որ պիտոյ էր հոգին աւանդել օրհնութենով և բարի բարի մաղթանքով: Ճանդարս կացէք և ցոյց տուեցէք ձեզ որպէս տղամարդեր: Երբ որ մեք լսեցինք այս խօսքերը, ամացցինք և գաղարեցինք լալ, նա ման եկաւ, վեր ի վայր շրջելով, մինչ թուլացան նորա ոտերը և նա հանգստացաւ քամակի վերայ, ինչպէս ասած էր նորան թօյն տուող մարդը: Ապա սկսեց սառչի նորա փոքրափորը. նա բացեց իւր մարմինը, ըստ որում ծածկած էին նորան, և ասաց Կրիտոնին այս վերջին խօսքերը. բարեկամ, չը մոռանաս առողջութիւն պարզեող աստուածին մի որձակ տանել. պատճառ, մի հատ պարտական ենք նորան: Անպատճառ կը կատարի այդ, պատասխանեց Կրիտոննը. միւս ոչինչ պատուէր չունին տալու ինձ. այս հարցին պատասխան չեկաւ: Մի քանի ժամանակից յետոյ սկսեց ցնցիլ նորա մարմինը. ապա թօյն տուող մարդը բոլորվին բացեց նորան, և նորա հայեցուածքը, պաղած ու սառած էին: Կրիտոնը տեսանելով այս բանը, խփեց նորա բերանը և աչքերը:

Այս եղաւ մեր բարեկամի վերջը, որ մի այնպիսի տղամարդ էր որ բարեգործութենով, իմաստութենով և արդարութենով զերացանց է գտանվել այն բոլոր մարդերից որ մեք տեսած ու լսած ենք.

ՎՐԻՈՏԵՓՈՐ ԿՈԼՈՄԵՐ-ԱՅ

Կ Ա Մ

ՅԱՅՑՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ:

Յառաջ զնաւ, քաջ հաւաքիու, թաջ ձազր առնել քեզ հանձարը, եւ զեկի մոն անհոգ ձեռքը ներքեւ թողու զեկալուը: Դէպ արեմանոր գու միւսու ու միւսու այն տեղ է քո որոնածը, Ահա եզր լազնուումէ, մըարիդ աչբով պարզ տեսածը: Ասուած քո յասու, քեզ առաջնորդ հետեւը դու լըսիկ հոգին, Զը կոյ զես ևս շըրի տակից գուրս էկերեւ քո խընդրելին: Քաջ հոգու հետ հաւասարին միւսու զաշնաւոր է բընութիւնը, Ինչ որ մինը խոսանումէ, կատարումէ անըսւսու միւսը:

Շ է Ա Հ :

Տասն և հինգերորդ դարու մէջ պիտոյ է ծնանէր մի նոր, մի աւելի բաղդաւոր ժամանակ մարդկութեան համար: Զէնքի կոպիտ զօրութիւնը սկսել էր աչա նուազել, և իմացականութիւնը բարձրացնումք իւր յաղթող զրօշակը հին օրերի սնապաշտութեան և ժանդուած կարծիքների վերայ. տապարութեան արուեստը որ նշյալէս այս դարու որդին էր, տանումքը ձեռքին սյդ դրօշակը: Մարդկութիւնը տեսանողական հոգով նայումքը զէպ ի երկինք, ուր զիսութիւնը յայտնագործել էր հալար հալար անեղրական աշխարհներ. Հին առասպելները Աւանտիս, թուլէ և թինէա երկիքների մասին, կենդանացան միւսանցամ, և Մարիօ Պօլօ և պյլ ճանապարհորդների փառահէնը պատմութիւնքը այն սկերեր աշխարհի մասին Սսիայի ամենավերջին ծովեղերեայքումը, զարթեցեցին ազգերի կարսութիւնը և քաջասիրտ ձեռնարկութեան հոգին, և համարձակ նաւարկութիւնը օր քան զօր յառաջ խալալով դէպ ի հարաւ, բաց արեցին նոր փողոցներ և աշխարհներ վաճառականութեան և դիտութեան համար: Բայց մինչև այժմ ոչ մի մարդ չէր մտածել ակս ձգելով պատառութել այն անչափելի ատլանտեան ովկիանուը որ հասարակաց ընդունելի կարծիքով շրջապատռումքը երկրի վերջին սահմանքը: Մի

հատ մարդու համար էր պահած այս բանը, որ վեր քարչէ այն մեծ վարագուրը որ ծածկումը մեր երկրագնդի արևմտեան կէուը, և որպէս սուրբ Քրիստոափորի նախանձաւոր աշխարհաշնութեան աղաւնին, Փրկիչը աշխարհի, տանէ ու քարոզէ ծովի միւս երեսումը:

Այսպէս աչա տասն և հինգերորդ դարումը յայտնագործական հոգին Եւրոպայի ծովագնաց ազգերի և մանաւանդ թէ Պօրտուգալացոց մէջ բորբռքէլ էր մի անվաստակելի հետազոտութիւն: Յատկացեալ նպատակը որին կամենումէին հասանել, այսինքն բանալ մի ծովային ճանապարհ դէպ ի Ճնդկաստան որ հարստութեան միայնակ ազգիւրն էր համարվում այն ժամանակի կարծէքով, զարթեցրեց շահախնդրութիւնը և սորա հետ միասին այն ազդու շարժարանը որ դուցէ թէ կարող է ամենազժուարին ճեռարկութիւնը և ամենածանր յանձնառութիւնը ներգործնել մարդուս մէջ:

Պօրտուգալացոց ծովաշրջիկ մարդերի ճեռարկութիւնը ամենայն տեղ մեծ հարցասիրութիւն և ուշադրութիւն էին յառաջացուցել: Այս պատճառով, Պօրտուգալիայի մէջ հաւաքվեցան բոլոր ճեռաներէց մարդիկը և բոլոր մօտածող ու գործող ազգերը այն ժամանակի: Այն տեղ գտանվումէին մեծ բաղմանենով մանաւանդ թէ Վենետիկից և Գենուացիք որ մինչև այն ժամանակը համարվումէին այնքան վարժ և հմուտ ծովագնացներ, ինչքան հռչակած էին որպէս խորագէտ և հարուստ վաճառականներ, Այն Գենուացոց կարգումը, որ մտած էին Պօրտուգալացոց պաշտօնի մէջ, գտանվումը և Քրիստոափոր Կոլումբոսը, մի գենուացի ծովագնաց, որ մինչև այն ժամանակի ամենեին անծանօթ էր մասցած, որ և զետ ևս մի քանի ժամանակ աննշան ու աներևելի կինումը ծովաշրջիկ մարդերի բաղմութեան մէջ, Կորսա անունը, շատ շատ, ծանօթ էր իւր հայրենակից ծովագնացներին, բայց զետ ևս ոչինչ բանով հռչակաւոր չէր. և աչա դուրս երեցաւ նա որպէս աշխարհագիւտ մարդ և շուտով գերազանց յիշառակի արժանի անուն ստացաւ, քարոզելով իւր մոտածութիւնքը, բայց ևս առաւել, երախտագործ լինելով աշխարհին: Կոլումբոսը, այն ժամանակի սովորութեան պէս, իւր առաջին առրեքը անց կացրեց Վենետիկին վաճառանաւերի վերայ որ երթեւեկութիւն ունէին միջերկրական ծովի նաւահանգստների մէջ: Բայց այս միատեսակ գործը շուտով ճանձրացրեց նորա ժիր և վասուն հռչին, և այս պատճառով համարձակիվցաւ նա գնալ և մտանել այն ժամանակի ծովագնացութեան աւելի գերազանց վարժարանը, որպէս սի էր նաւարկութիւնը հիւսիսեան ծովի վերայ:

1464 թուականին մէք հանգիպումենք Կոլոմբոսին Խոլանդիայի

ծովեղերեայքի մօտ, ինչ տեղ այն միջոցումը ժամանակ առ Ժամանակ ել ու մուտք ունեին մանաւանդ թէ Անգլիացիք, ձկնորսութեան պատճառով։ Այս, նաւարկելով անց կացաւ Նա Կալանդիսյի միս կողմը, մի քանի աստիճան դուրս բեկուային շրջանակից, և այս տեղ ահա վարժեց իւր բնատուր քանիքարը լինելու մի քաջ և աջողակ ծովագնաց։

Այս ճանապարհորդութենից յետ դառնալով Կոլմբոսը, ընկերացաւ իւր անուանակից ազգականի հետ որ իւր ծախքով պահումը մը մի փոքրիկ բազմութիւն նաւերի և սոցանով շրջումէր երբեմ ընդդէմ Մահմետական ճանապարհորդութենների մէջ որ այն ժամանակներումը համարլումէն այնքան իրաւացի և գովութեան արժանի բան, ինչ քան որ վտանգի և աշխատանքի վտրձ էին, Կոլմբոսը բազմորինակ պարագ գտաւ կատարել ազգործելու իւր ածողակութիւնը ծովազնացութեան և զինուորութեան մէջ, այլև մի փոքրիկ գյոք ձեռք բերելու համար։ Բայց նորա ճակատագիրը մի քանի տարի յետոյ դուրս խլեց նորան այդ լնկերակցութենից, որ մասեցնէ նորան այն կոչմանը որ նախախնամութեան մեռքով սահմանած էր նորա համար։ Մի խստապարանոց կրիւ պատահէլով քանի մի հարատարեսն վինետիկեան նաւերի հետ որ վերադառնութիւն նիդրլանդիսյից, Կոլմբոսի նաւը կրակվեցաւ այն բոտէին, երբ որ սա կամնումէր մօտ քարշել թշնամի նաւը։ Կրակը շուտով տարածվելով, երեսումէր թէ նաւը իւր վերայ եղած մարդերի հետ միասին պիտոյ և անպատճառ կորընչի։ Բայց Կոլմբոսի շուտափշին և քաջարի հոգին ցցց տուեց նորան փրկութեան ճանապարհը։ Մօտ երկու ծովայինն մղոն հետի էին գորտուգալիսյի հոգից։ Կոլմբոսը իւրեան վըյր ձգեց ծովի մէջ, ձեռք բերեց մի լողացող թիսկ և նորա օդնութենով աշխատեց հասանել ցամաքին, և այդպէս փրկութիւն ու ապահովութիւն գտաւ։ Գալով իսկցյան Լիսարոն, այս տեղ հանդիսեց իւր եղբայր Քարթուլումսին և իւր հայրենակիցներից բաւական շատերին որ կէս մի դասնվումէին գորտուգալացոց ծովային պաշտոնի մէջ և կէս մի որպէս վաճառականք տռն ու տեղ էին հաստատել Լիսարումը։ Մի ծովագնաց մարդ որ իւր հայրենի աշխարհից հրաժարվելով ոչինչ զրկանք չունէր, որի քաջ և ձեռնարկու հոգին շատ ուրախ աչքով նկատումէր հեռուից Պորտուգալացոց ծովաշրջիկը. մի այդպիսի մարդ, ծարաւի զիտութեան և գործակատարութեան, կարօտ չէր միւսների հաւանեցուցիչ խօսքերին, որ հաստատէր մոքումը մեալ Պորտուգալիսյի մէջ և իւր համար փառք ու բարեկցութիւն ճա-

բել այս տէրութեան սյնքան պատռաւոր, ինչքան շահաւետ ծովայ-
ին պաշտօնի մէջ, Քայց երկումէ թէ Կոլոմբոսը այնպէս շուտով, ինչ-
պէս գոյցէ թէ կարծումը ինքը, ճանապարհ չը դտաւ ոչ նշանա-
ւոր առնելու իւր անձը և ոչ հարստանալու, Գոնեայ մեք հանդի-
պումնք նորան փաքքի ճանապարհորդութենների վերայ Պօրտուգա-
լիայի ծովներեալքի և Մադեյրա և Պօրտո Սանտո Կողմների մէջ:
Լիսարժնումը ծանօթացաւ նա Գոնեա Ֆելիպա Մօնիս դը Պալես-
տրելլօ աղնուական կնամարդու հետ, ստացաւ նորա մէրը և ամուս-
նացաւ նորա հետ: Այս կինը առիմ դարձաւ նորա առաւելապէս կա-
տարելութեանը, այլէ մի կերպով ճանապարհ բացեց նորա ապագայ
մեծամէծ ձեռնարկութեններին: Կոլոմբոսի ամուսինը այս չէր բերած
իւր հետ շատ ոսկի և կալուած որպէս հարսնարածինք, բայց Ժիրայի
բերած էր մի այնպիսի գանձ որ Կոլոմբոսի աչքումը անտարակցս
աւելի պատուելի էր, ոյսինքն գրաւոր նկատողութիւնք, ծովային ցու-
ցակներ որ նորա իմաստասիրութիւնը այնքան ևս զօվացուցին: ինչ-
քան որ բորբոքեցին: Այս ծանօթութիւնքը ընթերցասիրելով նա,
և պարագ ժամանակ ունենալով հետաքննելու իւր մոռաւրական հայ-
եցուածքը, ևս առաւել հաստատվեցաւ այն դաղափարների վերայ որ
յառաջուց յոցած էին նորա մէջ, և հնարք ստացաւ իւր մասնու-
թիւնքը ձեւակերպել և շնորհ մի կարգաւոր կազմած: Այսպէս յա-
ռաջացաւ նորա մէջ այն կատարեալ վատահութիւնը և միասին այն
ամուր կամքը որ չէր կարող խախտվել ոչ երկմուռթենով, անհա-
ւասութենով և ծաղրաբանութենով, և ոչ մերժողութենով, դըժ-
ուարութենով և արգելութերով:

Կոլոմբոսը ընթերցասիրելով հին աշխարհարգիրների աշխա-
տութիւնքը և նոր ժամանակի ճանապարհարդութիւնքը, վաղուց ծը-
նել էր նորա մէջ այն դաղափարը թէ պիտոյ էր, որ Ասիան տարած-
վի աւելի ընդարձակութենով քան թէ առհասարակ մտածումն, թէ-
պէտ ոչ ով ճիշդ տեղակ չէր այդ բանին: Երկրի գնդաձեռութեան
մասին ուներ նա աւելի ուղիղ իմացողութիւնք քան թէ սովորա-
կանները այն ժամանակի: Նա հետեւ ըստ Արխտուտելի կարծիքին, որ
և ընդունած են բոլը երկրաշափքը և աշխարհագիրքը աւելի նոր
ժամանակների, մտածումէր երկիրը որպէս ցամաքահողից և ջրից բաղ-
կացած մի գունդ, որ կարելի էր շրջանաւել արևելքից դեպ ի ա-
րևմուտք: Արովհեաւ բալոր ցամաքահողը, ինչքան որ յայտնի էր,
գտանվումէր մի կիսագնդի վերայ, այս պատճառով երկումէր թէ,
բոլը երկրային մարմի հաւասարակշիռ պահպանելու համար, պի-
տոյ է, որ մի այլ համամատ հողաբաժն պարզի և միւս կիսագնդի

վերայ, Ալաւդիսո Պտոլեմայոսի (որ յօյն աշխարհագիր էր, կացած երկրորդ դարու կիսումը Քրիստոսից յետոց) ուսուցանելով, Երկրագընդի շրջապատը արևելքից դեպի ի արևմուտք, բաղկացնումէ 24 ժամ, ամէն մի ժամը 15 աստիճան Երկայնութենով, ուրեմն բոլորովին, 360 աստիճան։ Համեմատելով այս բանը Պտոլեմայոսի Երկրագնդի չետ և Մարինոսի տիւրացյ հնի աշխարհացոյցի հետ, հետեւումեր, որ չին աղդերին ծանօթ էին միայն 15 աստիճ. այսինքն երկրի տարածութիւնը արևմուտքից դեպի ի արևելք սկսեալ կանարեան կղզիներից մինչև Թինէա քաղաքը Ասիայի։ Պօրտուգալացիք յայտնադորձելով Ազորեան կղզիներ, գորանով յաւելացած էր մի աստիճան ևս. ուրեմն մնումէին զեռ ևս 8 ժամ։ կամ թէ շրջապատի երրորդ մասը. մի դրութիւն որ և հեռուից չեր հասանում ստուգութեանը։ Այս ենթադրական աշխարհի փոխանակ ընդունել մի ջոկ մասն աշխարհի որ ծովով բաժանվէր միւսներից, այդպիսի բան պատկերացնել մարդով չունէր Կոլումբոսը և ոչ ամենափոքր չինն։ Այլ մանաւանդ Երկումք նորան, թէ այն մութ գաղափարներից որ կային Ըսիայի մէջ Լազած մեծամեծ անծանօթ Երկիրների մասին, որոնց տարածութիւնը ճշգագկս յայտնի չէր, պիտոյ է հաւանական կարծիք առնուլ թէ Ասիան արեւելքից դեպի ի արևմուտք պարզվումէ պտուտելով և ծածկում ծովի Երեսի մի մարդ Պօրտուգալիայից դեպի ի արևմուտք նաւագնաց լինի, պիտոյ է հասանէ Ասիային Կոլումբոսի կարծիքը, որպէս թէ ովկեանոս ծովի լայնութիւնը Երկու ցամաքահողի մէջ շատ փոքր էր, զօրութիւն էր ստանում Արիստոտելի, Աննեքայի և Պլինիոսի ասածով, որ հաստատումէին թէ Կապիկս քաղաքից մի քանի օրում կարելի էր նաւելով հասանել Հնդկաստանին. սորա մասին վկայումէին և Մարկօ Պօլու և Մանգէփիլ հաշակաւոր ճանապարհորդքը, որ Պտութեայոսի նշանակած տեղերը Ըսիայի մէջ անցանելով, շատ յառաջ էին գնացել։ Թողը այս և այլ միւս հաւանեցուցիւ պատճառքը, կային և ուրիշ անտարակցյա իրազութիւնք։ Մի պօրտուգալացի ծովագնաց, Մարտին Ալիչնատի անունով, որ պատահմամբ աւելի հեռացած էր դեպի ի արևմուտք քան թէ սովոր էին այն ժամանակներումը, գտած էր ծովի վերայ (450 ծովամզօն դեպի ի արևմուտք հեռանալով Սուրբ Ալին շնոր Երկրածայրից) մի լողացող փայտի կոտոր, արտեստապէս քանդակած, որ արևմտեան հողմի զօրութենով յառաջ էր տարված։ Մի նմանապիսի փայտի կոտոր ըմբռնել էր Կոլումբոսի աները Մարկէյրա կղզու արևմտեան ծովեղերեալքումը։ Նշն անդումը գտան նոյն հողմի ներգործութենով յառաջ տարած մեծ

մէ եղեգնափայտեր որ Պոռլիմայսոնի կարծիքով որպէս թէ աճումին Հնդկաստանի մէջ։ Ազօրեան կզզիների մօտ տեսանվեցան Նոյնպէս ամբողջ արմատախիլ ծառեր, մի այլ անգամ, երկու մարդու մարմինք ամենենին անծանօթ կերպարանքով և պատկերաձեռնութենով, որ Նոյնպէս հասած էին այն տեղ տեղական արևմտեան հողմի փշելովը։ Սորա վերայ յաւելացրու այն նկատողութիւնը որ ննքը Կոլմբոսը ճանապարհորդելով արած էր հողմերի ուղղութեան և փոփոխութեան մասին, որ և, իւր փորձի վկայելովը, ոչինչ պակաս զօրաւոր ապացցյա չէին համարլում, թէ մատիկ դեպ ի արևմուտք պիտոյ է լինի մի անծանօթ աշխարհ։ Կնչպէս որ այն ժամանակի տեղեկութենքն էին, երևումէր թէ ոչինչ հիմք չը կար հակառակելու այն բանին, թէ այդ ոչ շատ հեռաւոր, դեպ ի արևմուտք զետեղված աշխարհը էր Հնդկաստան, ուրեմն նաևելով դեպ ի արևմուտք պիտոյ էր հասանել այն տեղ։ Այս, Պօրտուգալացիք անպատմէի դժուարութենների հետ պատերազմիլով մշտապէս, աւելի քան թէ յիսուն տարի ճանապարհորդած էին դեպ ի հարաւակողման արևելք, աւետապարգև աշխարհի ճանապարհը դտանելու համար, բայց զեռ ևս չէր յածողած նոցա յառաջ գնալ գննեայ մինչև Աֆրիկայի հարաւաշոյեաց ցամաքի ծայրը։ Թէկ լինէին նորասոյդքան յառաջադէմ, ոյնու ամենայնիւ բացայսյա էր, թէ այն ճանապարհը որ բանալու էին այս տեղ, շատ երկար և վանդակաւոր պիտոյ է լինէր, միտ դնելով այն ժամանակի նաւարկութեան կերպին։ Բայց սորա հակառակ, նաւարկելով դեպ ի արևմուտք ծովի լոյնութեան վերայ, պիտոյ էր աւելի մօտ ու անվտանգ ճանապարհով հասանել նոյն նպատակին։ և այս ճանապարհի հետաքննութիւնը պէտք է լինէր այնքան ևս արժանի, ինչքան շահաւետ ձեռնարկութիւն։ Երբ որ Կոլմբոսը երկար միջոց կրկին և կրկին անգամ ամենայն կողմից մտածելով այս գաղափարների հստակցութիւնը, հասկացել էր նոցա անհերքելի ստուգութիւնը, ապա նոյնպէս պինդ և ամուր վճիռ կազեց իւր մէջ որ հաստատութիւն տայ նոցա, գործով ու արդիւնքով։ Այս ձեռնարկութիւնը թէպէտև երևումէր նորան անտարակուելի, բայց կարօտ էր մի այնպիսի պատրաստութեան որ իւր շափաւոր կարողութենից շատ վեր էր։ Այլէ, եթէ իրադորձվելու էր դա և այնպէս պաղաքեր լինելու, ինչպէս յցոյ կար, ապա հարկաւոր էր, որ այդ ձեռնարկութիւնը իշխանական հրամանի ներքյ կատարիի։ Այսպէս, Կոլմբոսը մտածելով թէ ինչպէս պիտոյ էր ձեռք բերել այդ օգնութիւնը և իշխանական յանձնարարութիւնը, նախ և յառաջ գարձաց երեսը դեպ ի մեծաւորքը իւր հայրենի աշ-

խարհի, որին, իւր կարծէքով, առաւելապէս վայել էին այս յայտնագործութեան պարձանքը և նորանից յառաջացած անշափելի շահաւետութիւնքը: Բայց Կոլոմբոսի բազդը պանդէս բերեց, որ նա չորհիւլով այս գերազանց պարձանքը իւր հայրենի աշխարհին, ոչինչ չը ստացաւ, եթէ ոչ, մի ցաւեցուցիչ վկայութիւն պյն հին փորձական ասածի համար, թէ մարգարէն պատիւ չունի իւր գաւառումը: Այս աեղ անծանոթ մաց Կոլոմբոսը և ոչ ով աշխատութիւն յանձը չառաւ հարցաբննելու ոչ նորան և ոչ նորա առաջարկութիւնքը: Գենուացիք լինելով միայն վաճառական մարդիկ, սովոր էին յառաջ գնալ այն ճանապարհով, ինչպէս իւրեանց հարքը և պապքը յառաջ էին գնացել: Գիտնական տեղեկութիւնք մի այնպիսի օսար և արհամարհէնի բան էին նոցա աշքումը, ինչպէս որ գոքա մեքենական վաճառականի համար միշտ և հանապազ եղած են ու լինումն ամենայն տեղ: Գենուացիք պարապումին նաւարկութեան, ոյն շափի միայն, որչափ հարկաւոր էր աշխարհից աշխարհ ապրանք տանելու համար: Թէ Պորտուգալացոց նաւագնացութիւնքը կարող էին վեաց գնացել նոցա առուտուբբին Հնդկաստանի հետ, այդ բանը շատ անհաստատ և ծաղրական էր երեսում նոցա, և նոյնպէս յիմարկան, իւրեանց գործի համար օգուտ սպասել Կոլոմբոսի մոացածին առաջարկութենից: Գենուացիք չը գիտէին և չունէին երկիրը ոչինչ հակառակորդից, բաց ի Վենետիկեան վաճառականներից, և սոցա վերայ միայն միշտ զգաստապէս աշք էին պահում նոքա: Այս իրողութենաներին միտ գնելով Կոլոմբոսը, չունէր տեղիք շատ վիրաւորվելու գենուացոց մերժողական վարեցողութենից, այլև չէ երեսում, որ գորանից խոր խոցուտված լինէր նորա սիրու: Գոյցէ թէ աւելի համոյ էր Կոլոմբոսին, որ նա կարող էր այնուհետեւ գործ դնել իւր մեծ դիտաւորութիւնը մի գիտուն և այդպիսի ձեռնարկութիւնք ճշմարտապէս յառաջ տանող թագաւորի հրամանի ներբռյ, և այնպիսի վարժ ու փորձած ծռագնացների օգնութենով, որպիսի յուսալի էր նորան գտանել Պորտուգալիստը միայն: Կոլոմբոսը կարող չէր ամենելին տեղիք տալ այն մտածութեանը, թէ և Յովիաննէս երկրորդը, մի այնպիսի տղամարդ Պորտուգալիայի արքայական աթոռի վերայ, որ անդադար վառվումէր նախանձաւորութենով: յառաջ տանել իւր պափի եղրօր թագաւորապն Հենրիկոսի գործը, կը մերժէ այդպիսի անտարակցոյս շահաւետ առաջարկութիւններ, մանաւանդ որ շատուց չէր, որ Յոհաննէս երկրորդը երկու մարդ, Պեդրո զը Կովիլամ և Վլինզով զը Փոյրա անուն, ցամաքով ուղարկած էր Հարէշտան, և մի ուրիշ մարդ, Բարթոլոմէոս Գիաց, ծովով

ճանապարհ էր ճգել դէղ ի Հնդկաստան։ Կոլումբոսը վաղուց յայտնի էր թագաւորին որպէս աջողակ ծովագնաց։ այս պատճառով յուսացի էր նորան, թէ թագաւորը գննեայ ուշադիր կը լինի նորան և զգաստութեամբ կը փորձէ նորա առաջարկութիւնքը։ Այս մասին չը սխալվեցաւ Կոլոմբոսը։ Յովհաննէս երկրորդը ցցց տուեց նորան և ուշադրութիւն և հարցաբնութիւն։ թէպէտ ինքը չէր ամենեին տգետ աշխարհագրութեան, բայց ըստ համարելով իւր անձը այնքան տեղեակ և փորձառու, որ կարողանար ինքնին վճիռ կապել այդ մասին։ վասն այս պատճառի յանձնեց աւելի ճիշդ քննութիւնը այն մարդերին որ, ինչպէս հաւատ ունէր նա, առաւելապէս կարող էին դատաւոր լինել այդ գործի մէջ, և որոնց հետ սովոր էր խորհրդակից լինել Այս մարդիկը էին Քօդրիգո և Յովհէփ աշխարհագիրը, այլև թագաւորի խոստվանահայր Գիեգո Օրտից զը Քաղաղիլլա հոգեւոր։ Սոցա յանձնած էր նշյնպէս յայտնագործական ուղևորութեների վերատեսչութիւնը, և թէ ինչ կերպով պիտոյ է գոքա յառաջ տարվէին, այդ ևս մի մասնով նոցա սահմանողութեան տակ էր, կամ թէ գոնեայ ամենեին հաւանելի նոցա։ Ի հարկէ պիտոյ էր սոցա և ջատագով լինել այս օրինակով գործակատարութեանը և նշյնպէս հակառակ լինել ամենայն միւս առաջարկութեան, որ հեռի էր նոցա յատուկ մտածութենից, կամ թէ ցուցանումքը մի բոլորովին ընդդէմ ճանապարհ։ Եւ արգելոք, մի փորձով ուսեալ ծովագնաց, ինչպէս համարվումէր Կոլոմբոսը, պիտոյ է աւելի դիտնաւոր լինի քան թէ այդպիսի մեծ ուսումնական աշխարհագիրը։ Ահա այսպիսի կուրութեամբ զարկված դատաւորները, քննութենից յառաջ, անտարակցու հաւատ էին կապել իւրեանց մէջ, կամ թէ մանաւանդ անցեղի վճիռ դատաստանի, թէ Կոլոմբոսի առաջարկութիւնը անպիտան ու մերժելի է, բայց որովհետեւ թագաւորը այնպիսի մարդ չէր, որ կարելի էր հաւանեցնել նորան ինքնիշխան վճիռներով, սորա համար որոնեցին նորա մի զօրաւոր ապացոյց, բայց ևս առաւել հոգացին իւրեանց համար պաշել մի նոր յայտնագործութենից յառաջանալի պարծանքը։ Այսպէս, թագաւորի գործակալը ու թէ միայն ջանք արեցին ամենամիշտ բերանացի հարց ու փորձով որսալ Կոլոմբոսի մի ըստ միունք մտածութիւնքը, այլև պատճառութերելով թէ կամք ունէրն աւելի հանդարտութեամբ և կապակից կերպով քննել նորանց, պահանջնեցին Կոլոմբոսից մի գրաւոր բացայատութիւն թէ ինչպէս էր իւր գաղափարների կարդը և իւր առաջարկութիւնը։ Կոլոմբոսը անմասն լինելով կասկածութենից, ինչպէս սովոր են լինել մծահոգի մարդիկ, և առ ի սրտէ պատ-

բաստ լինելով ամենայն մարդու, մանաւանդ թէ ոյս տղամարդերին կատարեալ խելամոռութիւն տալ, շուապեց հասուցանել նոցա ոյն պահանջած գրաւոր բանախասութիւնը: Թագաւորի գործակալքը զաւաճանութիւն գործելով, Կոլոմբոսի գրուածը յանձնեցին մի ծովագնացի որ պատրաստ էր պարզել առագաստները, և ծածկապէս խրատ տուեցին սորան, որ այն գրաւածի առաջնորդելովը որոնէ ցցց տուած ձանապարհը, կամ թէ գոնեայ ըստ երեսութիւն փորձ փորձէ գտանելու նորան: Այս թագուն ուղևորութիւնը կատարվեցաւ թագաւորի գիտութեամբ ու կամքով, ըստ որում խարդախութեամբ այնպէս էին հասկացրել նորան, թէ այս էր աւելի ապահով ձանապարհը ստուգելու Կոլոմբոսի յառաջ բերած իրողութիւնքը և ենթագրութիւնքը: Այս գաւաճան ընթացքը ի հարկէ ամենայն ըզգուշութենով ծածուկ պահեցին Կոլոմբոսից: Սորա հետ շարունակելով առաջին խորհրդածութիւնքը, յետ ձգեցին նորան, մինչև վերադարձած էր գուրս ուղարկած ծովագնացը: Որովհետեւ թագաւորական գործակալների միտքը երբէք այն չէր, որ ասուցէին Կոլոմբոսի առաջարկութիւնը, վասն այս պատճառի, ընտրելով նաևավարը և տալով նորան հրաման այս մասին, ամենենին չէին քննած, արդեօք այս մարդը ունի՞ այն առջեկութիւնքը և բարի կայքը որ հարկաւոր էին, մի այդպիսի գործ գլուխ տանելու համար: Այն նաւավարը, որ գուցէ թէ շատ լաւ գիտէր, թէ ինչ է այս ուղևորութեան բուն խորհուրդը, մի քանի ժամանակ անց ու գարձ առնելով ցցց տուած ջրերի վերայ, առանց համարձակվելու շատ հեռի գուրս խաղալ Վզորեան կղզիների սահմանից, յետ եկաւ Պօրտուգալիա և յայտնեց: Թէ ոչինչ չը կարողացայ դտանել, որ հաստատէր Կոլոմբոսի ասածները, կամ թէ ծանուցանէր մի աշխարհի մօստաւորութիւն արեմունան կողմումը. Եթէ լինէր ևս մի այդպիսի աշխարհ, այնու ամենայնիւ շատ վտանգաւոր, այն և անկարելի է նաւարիել գէպ ի այն տեղ. ուրիմ Կոլոմբոսի բոլըր առաջարկութիւնը մի անհնարին և մտացածին բան էր: Այնուհետեւ այս յանձնաբարութիւնը որպէս և նորա նպաստակը և հետևութիւնքը չը մնացին ծածուկ ոչ միւսերի և ոչ Կոլոմբոսի համար: Բացայսար է, որ այսպիսի ընթացք պիտոյ է շատ և շատ վիրաւորէր և ցաւեցնէր Կոլոմբոսի սիրտը. Նորա բարկութիւնը նայումէր ոչ թէ միայն դէպ ի գործակալքը, այլ և գէպ ի թագաւորը որի մասնակցութիւնը այս նենդաւոր գործի մէջ արդարե աւելի դատապարտութեան արժանի էր երեսում Կոլոմբոսին, քան թէ նորա խորհրդակիցների խրատառութիւնքը: Այսպէս, Յովհաննէս երկրորդը անարժան երեւցաւ այն մէծ և պատուա-

որ ձեռնարկութիւնը յառաջ տանելու։ Այս միջոցին վախճանած էր Կոլոմբոսի ամուսինը. վասն այս պատճառի հետութեամբ զջիռ կապեց նա, որ թողու Պօրտուգալիա և դարձուցանէ Երեսը դեպ ի այլ եւրոպացի տէրութիւնք։ Կոլոմբոսը դուրս գնաց Լիսարոնից գիշերով, ըստ որում Երկիւղ ունէր, թէ մի՛ գուցէ նորա պարտատեարքը յետ ձգեն նորան. պատճառ, նորա գուքը ամենկին սպառված էին այն միջոցումը, երբ որ նա մտածումէր աշխարհների տիրապետել։

Վ. յառհետեւ Կոլոմբոսի կեանքը ներկայացնումէ մեզ այն տիրուր տեսարանը, թէ ինչպէս մի տղամարդ գնալով մի մեծ գաղափարի հետեւց, չէ վախւմ ոչինչ զրկանքից և ոչինչ աշխատութենից, այս գաղափարը ընդունելի կացուցանելու համար, Մուրացկանի գաւազանը ձեռքին, թափառումէ նա այս տեղ և այն տեղ, որ Եւրոպայի թագաւորներին առաջարկէ Հնդկաստանի անչափելի գանձերը, և թէպէտ յիմար ամրութ հանդիպումէ նորան ծալը առնելով և արհամարհն լով, բայց այն աստղը որ առաջնորդումէ նորան դեպ ի արեմուտք, անփոխի և անպղուր փայլողւթենով վառվումէ նորա հոգու մէջ։ Իւր հայրենիքը նախատական և հրաժարողական կերպով անպատուել էր իւր իմաստուն որդու առաջարկութիւնը։ Վ. յն Անենետիկը աւելի մեծ յարգանքով ընդունեց նորան, բայց և այս հասարակագետութիւնը այնպիսի որպիսութեան մէջ չէր, որ վատահանար դեպ ի Կոլոմբոսի համարձակ ձեռնարկութիւնը։ Ծամ վեսասկար եղաւ այս հպարտ ծովագաղաքին, որ Կոլոմբոսը հարկադրված էր հրաժարվիլ այն տեղից, ըստ որում նուազեալ և խոնարհեալ Վենետիկը տիրապետելով Հնդկաստանին, կարող էր միւսանգամ ձեռք բերել իշխանութիւնը ովկիանոս ծովի վերայ։

Կոլոմբոսը իւր եզրոր Բարթոլոմեոսի հետ, որ կենակից էր նորան և ընկեր նորա ուսումնական պարապմունքի մէջ, դիմեց դեպ ի Սպանիա, 1484 թուականի վերջումը հասան նորա Անդալուզիայի ուալս քաղաքին։ Քրիստոնոր այս տեղ յանձնեց իւր որդին ուուրը Մարիամ դը Արիեզցա անունով վանքումը դաստիարակելու համար, և այս բանը առիթ տուեց մի բարեկամական կազմակցութեան վանահօր հետ, որ յետայ շատ պիտանի եղաւ նորան։ Վ. յն ժամանակիներումը, Սպանիան բաժանած էր Երկու թագաւորութիւնը, Կաստիլիա և Արագոնիա, սորան կառավարումէր Յեզարել թագուհին, նորան Ֆերդինանդոսը։ Սորա որպէս ամուսինք թէպէտ շատ մօտ զուգարված էին միմանց հետ, բայց որպէս թագաւորք այնքան անկախ էին մինը միւսից, ինչքան որ հոգով ու բնաւորութենով զանազանվումէին միմանցից։ Յեզարելը խորամուխ և ուղիղ հանձա-

բով կնամարդ էր, և թէպէտ Կրօնի մասին աւելորդսպաշտ, բայց բոլոր միւս բաների մէջ ազատ էր մոլար կարծիքներից և մեծաչողի: Նա ունէր մի նուրբ և անսխալ ճանաչութիւն, ականաւոր մարդիկ ջոկելու համար, և կարող էր ըմբռնել մէծ և համարձակ գաղափարներ և յաջողութիւն տալ նոցա արդիւնաւորութեանը. այլև շատ բարձր կարծիք ունէր նա իւր ամուսնակցի հանձարի և գիտութեան մասին: Կէս մի ոյս պատճառով, և կէս մի լինելով հանցակատար և հեղաբարոյ կին, սովոր էր նա ոչինչ բանի ձեռնամուս չը լինել, առանց իւր ամուսնու խորհրդին և կամակցութեանը. ոյլև շատ անգամ իւր իմացութիւնքը ստորադասումէր նորա իմացութենների տակ: Բաց ի սորանից, Յեղաբէլը սովորութիւն ունէր բոլոր երևելի դիւանական արձանագրութիւնքը ստորագրելու տալ իւր ամուսին գերգինանդոսին. Թէպէտ սա չէր իսկապէս ընդունված որպէս թագակից կաստիլիայի մէջ:

Ոորա հակառակ գերդինանդոսը, ինչպէս յայտնի է, մի այնպիսի նեղսիրտ, վոգրահոգի, շահախնդիր, կասկածոտ մարդ էր, որ գժուար թէ նորա նմանը միանգամ նստած լինի արքայական աթոռի վերայ: Իւր նեղսիրտ շահախնդրութիւնը միայն առաջնորդ ընտրելով իւր համար, չունէր նա սիրտ ոչինչ միւս բանի միտ զնեւլու բաց ի այն բանից որի օգուտը խազյն առանց այլևայլութեան և մօտիկ փայլումէր աչքի առաջն: Խնչպէս ինքը միշտ հակամիտված էր դէպ ի նենգաւորութիւն և խարեւութիւն, նոյն բանը կարծումէր նա և միւսերի կոռպից, և միշտ պատրաստ էր կասկած ու տարակոյս առնուլ ամենայն առաջարկութենից և յայտարարութենից: Աւրեմ այդպիսի մարդուց ոչ թէ օգնութիւն յուսալի չէր Կոլոմբոսի առաջարկութեան համար, այլ անպատճառ ընդդիմութիւն, բայ որում այդ մասածութիւնը նոր էր, ըստ որում դա պատկանումէր մի այնպիսի մարդու որ անծանօթ էր Սպանիայի մէջ: Թուղ ոյս. և ժամանակի միջոցը, երբ Կոլոմբոսը Երևեցաւ ոյս տեղ, անննեին անյարմար էր: Երկու թագակալք այն միջոցին իւրեանց մասածովութիւնքը և զօրութիւնքը ուղղեցրած էին մի այնպիսի գործի վերայ որ կարօտ էր ամենամեծ ճշնողութենների և երեւումէր անշափելի մեծակշիռ բան երկուքի համար: Այլև Կոլոմբոսի հրապարակով Երևելը չէր այնների համար: Այլև Կոլոմբոսի հրապարակով Երևելը չէր այն-

պէս, որ իսկըն կարողանար ուշագրութիւն գրաւել, և որա կերպարանքը պարզ էր և փոքր ի շատէ ցուցանումէր ծովագնաց մարդու գաստիարակութիւն. նա վայելչահասակ մարդ էր, քաջարտութեան և վատահութեան յայտնութիւնը աներկբայելի կրումէր իւր բաց ձականի վերայ: Թէպէտ խօսումէր յայտնապէս և ազգուութեամբ, բայց տանց արուեստի և տուանց հաճայական շարժուածների, և նուրբ գարձուածների զմայելեցուցիչ գեղեցկութեանը: Նա երեցաւ առանց փառաւոր ընկերակցութեան, առանց բաղմաթիւ բեների, առանց փայլուն և թանգագին գոհարների Հարկաւոր չէր այս տեղ և սպանիական մեծամեծների հապարտութիւնը, որ Կոլումբոսը արշամարհէլի երեկը, և ոչ իսկ Ֆերդինանդոսի կասկածու սիրտը, որ երեկը նա մի թափառական մարդ և նոր նոր առաջարկութենների մլքենագործ: Կարելի էր մտածել, թէ ինքը Կոլումբոսը հասկանումէր այս անյարմար արտաքին պարագայքը, և այն դժուարութիւնքը որ պիտոյ է յառաջանային այդ տեղից: Բայց դպքա ըստ կարողացան նորա յանձնապատճենութիւնը և նորա քաջահաստութիւնը իւր բարի գործի վերայ այնպէս նուազեցնել կամ թէ խախտել, որ արգելք լինէին նորան, զոնեայ մի փորձ փորձնելու: Ինչպէս յայտնի է, մեծահոգի մարդիկը այնպիսի մի տուանձին բնաւորութիւնն ունին, որ սովորաբար վառվումն այն բանով, ինչ բանից թշվէ հոգիքը վախելով յետ են փախչում: Այսպէս դատելով, հաւանական էր մտածել, թէ տարակուսամիտ բարթուլոմէոսի իւր յատուկ առաջարկութիւնն էր, որ նա թող տալով իւր եղրօր Քրիստոֆորին փորձել իւր բաղդը Սպանիայի մէջ, հարժարվեցաւ որ գնայ Անգլիա և Ֆրանսիա, որ և իցէ կերպով յառաջուց պատրաստելու գործը այն տեղիուումը: Թէպէտև այս հնարագործութիւնը լաւ տնօրինած էր, բայց հետեւնքը այլապէս եղաւ, քան թէ անկալութիւն կար: Բաղդը այնպէս էր սահմանել, որ այս երկու մեծամեծ մարդիկը պիտոյ է իւրեանց անտուոր զօրութիւնը փորձէին նշնչապէս անօրինակ արգելների մէջ: Այն նաւը որանով ուղեւորվեցաւ բարթուլոմէոսը, անկան ծովային աւազակների ձեռք, և նա իւր բոլոր ընկերակիցների հետ դերի գնաց: Շատ տարիներ կցորդ լինելով իւր ծառայցեալ ընկերների չարչարանքին, յետոյ մի դիտուածով ազատութիւն դտաւ, և իւր բոլոր գսքիցը զրկված հասաւ: Անդիսայի ծովեղերեւոյքին: Այս ողբալի զրութեան մէջ իւր գալուստը յայտնել պալատին և մեծամեծներին, անկարելի էր: բայց հարկաւորութիւնը բոնադատեց նորան նախ և յառաջ մտածել իւր օրական հացի վերայ: Պարան ձեռք էր բերում նա, գործ գնելով իւր մեծ աջողակութիւնը աշ-

Խարհացյցք և երկրագունդեր պատրաստելու մէջ. և շուտով այնքան առատացաւ նորա վաստակը, որ կարող էր վայելու կերպով երեւել պարագումը և ներկայանալ թագաւորին: Բայց, մինչև այս րանը եղաւ, շատ ժամանակ էր կրած, այլև բարթոլոմեոսը պարագ միջոց էր ունեցել, որ աշխատէ իւր խորհուրդը յառաջ տանել, և ոչ կարողացել էր իւր եղբօրը տեղեկութիւն տալ իւր դրութեան մասին: Կոլոմբոսը գալով Կորդովա, և մի քանի ժամանակ կենալով այս տեղ, իւր սովորութեան պէս իւր չքաւոր հացը ձեռք էր բերում աշխարհացյցներ պատրաստելով, թէպէտ միշտ և հանապազ վառ էր նորա սրտի մէջ իւր գաղափարի վեստալիան սուրբ կրակը: Այսպէս հոգիացեալ կոլոմբոսը մի ամուր վահան գտաւ իւր համար ընդդէմ արհամարհութեան նետերին, և վերջապէս պաշտպաններ ու բարեկամներ, որոնց մէջ Կատարիիայի արքունիք գանձապէտը դան Ալֆանզո դը Կոլոմբոսին առ գործունեան էր: Համախօսչ գտանվեցան Կոլոմբոսին և պապի նուիրակ Անտոնիո Գերարդինի և նորա Եղբայր Ալէքսանդրը որ թագաւորացների դաստիարակն էր. սորա տարան և ծանօթացոցին Կոլոմբոսը Տոլեդո քաղաքի արքեպիսկոպոս և Սպանիայի մէծ կարդինալ պեղրօ գոնացելց դը Մենդոզայի հետ, որ և գարձաւ նորա հաւատարիմ բարեկամը և ներկայացրեց նորան թագաւորներին: Յեղարելը ընդունեց նորան այնպիսի պատուով, ինչպէս վոյել էր նորա պաշտպանների կողմց պատուելի յանձնաբարութեանը, և ինչպէս Կոլոմբոսի տեսութիւնը ինքն ըստ ինքնեան կարող էր ներգործել: Այնպիսի նուրբ և ուղիղ գտաղողութիւն, որպիսի Յեղարելը ունէր, չէր կարող ուրանաւ այն խաղաղ մէծութիւնը որ կար Կոլոմբոսի մէջ: Նորա հեղ յանձնապատճենութիւնը, այն հանդարա յայտնութիւնը մի վերին ծածկեալ զօրութեան, որ փայլումէր նորա բոլոր կերպարանքի վերայ, նորա պարզ, կոպիտութենից և ամրարտաւանութիւնից այնշափ ևս հեռի բարբը, որչափ ստորաբարշ և անխորհուրդ քաղաքավարական ձևերից անմասն վարբը, բայց ևս առաւել, նորա մաքուր չերմեռանդութիւնը և ճիշդ կրօնապաշտական ծխակատարութիւնը շը կարողացան մնալ առանց մի բարի տպառութիւն գործելու այնշափ իսկ տարապայման երկիրազ, որչափ և նըրբազգաց Յեղարելի վերայ: Կոլոմբոսը Կոլինտանիիայի քաջալերութեամբ յայտնեց իւր առաջարկութիւնը և տուեց իւր խնդիրը, գրաւոր ճառի պէս յօրինած, որի մէջ յառաջուց առհասարակ խօսած էր այսպէս. թէ նա զգումէ իւր մէջ ձգուողութիւն յանձն առնուլ Հնդկատանի յայտնագործութիւնը, և այս էր գործը որի համար խնդրումէր թագուհու և նո-

րա ամօռանու սպնականութիւնը: Այս՝ գիտեր նա, թէ իւր առաջար-
կութիւնը քանի միների աչքումը ծիծաղելի կ'երևի, այնու ամենաց-
նիւ յուսով էր ինքը, ևթէ հնար տային նորան, գլուխ տանել իւր
գիտաւորութիւնքը, յաղթելով ամենայն դժուարութենների: Այս
ինդրագիրը շատ քաղցրութեամբ ընդունեց թագուհին և հոգաբար-
ձութիւն արեց, որ Կոլոմբոսի գաղափարը և առաջարկութիւնքը բա-
նագէտ մարդերի ձեռքով ամենայն զդաստութեամբ հարցաբննվին,
և Կոլոմբոսը, ինչքան որ կը տեէ այս հարցաբննութիւնը, պահվի
թագաւորական ծախքով: Թագուհին, ինչպէս այն ժամանակի մոտա-
ծութիւնն էր, կարծելով թէ բոլոր տեղեկութիւնք և գիտութիւնք
գտանվումէին հոգևորների մէջ, յանձնեց այս գործը իւր խոստովա-
նահօրը Ֆերդինանդո դը Տալվալի բանունով, որ և քանի մի իւր
նման գիտականների հետ խորհուրդ կատարեց և այսպէս հաւաքեց
մի ընկերութիւն, որի առաջն զուրս գանցեցին Կոլոմբոսը, որ իւր
առաջարկութեան մասին աւելի ճիշդ ծանօթութիւնք տայ: Ափսոս,
որ այս մարդիկը ոչ կամք ունէին և ոչ հնարաւորութիւն արդա-
րութենով և ծանրութենով կատարել այն գործը որ յանձնած էր
նոցա: Սոքա պատեալ ու պաշարեալ հնացած, պղտոր տեսութեննե-
րով, մաքերը կապեալ ու կաշկանդեալ հին կոտակարանի, եկեղեցա-
կան հարց և նմանապիսի վկայութենների վերայ, որ այս տեղ ոչ-
ինչ գործ չունէին, այլև շատ մեծ կարծիք ունենալով իւրեանց գի-
տութեան և իմաստութեան վերայ, չը կարողացան, կամ թէ ար-
ժան չը համարեցին օրինաւոր կերպով վերահասու լինել Կոլոմբո-
սի գաղափարներին: Եւ Կոլոմբոսը իւր կողմից փոքր մի դժուարա-
ցուցել էր բանը, ըստ որում զգուշանալով այն խարդախութենից
որ արած էին նորա հետ Պօրտուգալիայի մէջ, կամք չունէր իւր գա-
ղափարքը այնպիսի բոլորամասն պայծառութենով և կատարելութե-
նով բացայսյատել իւր գտաւուրներին, ինչպէս այն գաղափարքը կեր-
պարանված էին իւր լուսափայլ և ուղիղ համձարի մէջ: Այս գոր-
ծակալքը, բաց ի քանի միներից, որոնցից էր և Գամբինիկեան կար-
գի արելոց և աստուածաբանութեան վարժապետ Գիիզօ դը Դե-
զա ուսումնականը, փոխանակ արդարութեամբ փորձելու Կոլոմբոսի
առաջարկութիւնքը, իսկոյն հակառակորդ վեր կացան ընդդէմ նո-
րան: Պորտուգալիան համարումէին իւրեանց անձը վերագցն գիտ-
նաւորը և վատահ էին իւրեանց մէջ, թէ վաղուց փորձած ու քըն-
նած են այն բանը, որի մասին այժմ մի գենուացի ծովագնաց իւր
շափը չը ճանաւըլով, համարձակվումէր բացայսյատութիւնք տալ նոցա:
Անհամար անդամ խորհրդակեռութիւն կատարելով, տարիներ ե-

կան ու գնացին, և Կոլոմբոսը մի քայլատիոն ևս չէր մօտեցած իւր նսպատակին, և ոչ իսկ ստացել էր մի վճռա իւր խնդրագրի մասին։ Վերջապէս, հինգ տարուց յետոյ, Տալվինը հոգեորը յայտարարական թուղթ տուեց թագուհուն, որի մէջ իրրե վճռական գատաստան գրած էին այն ծանօթութիւնքը որ իրրե թէ հակառակ պատճառներ բերած էին ընդդէմ Կոլոմբոսին։ Այս յայտարարական թղթից յետոյ, թագուհու կողմից շատ մարդասիրական ոճով պատասխան եկաւ Կոլոմբոսին այսպէս։ յառաջ քան թէ աւարտած էր պատերազմը ընդդէմ Մաւրացոց, չէ կարելի մտածել ոչինչ նոր և մեծածախ ձեռնարկութեան վերայ։ Աթէ կամք ունէր նա համբերել, ապա գուցէ թէ կարելի էր նորա առաջարկութիւնքը աւելի պարապով քննել և կըսել յետոյ։ Այսպէս աշա, հինգ թանգարին տարիներ համբերելով, տանելով և երկայնակիր լինելով անօդուտ անցած էին, և Կոլոմբոսը միւսանգամ տեսաւ իւր յայսերի աւերակքը, տղիսութեան և չարակամութեան պատճառով։ Երդարեւ, այն ողորմէլի պահապիտ մարդիկը յաղթող հանդիսացան մի ականաւոր վսեմամիտ մարդու վերայ։ սյոն, մի ժահահօտ, խցերի միջից դուրս եկած ուսումնականութիւն ծանապարհ չը տուեց ազատարայս և ազատագործ գիտութեանը, բայց և մշանչենաւոր ժամանակով խայտառակեց իւր անձը զարդոց ազգերի դատաստանի առաջնեւ։

Կոլոմբոսը զայրանալով մանաւանդ թէ այնքան պատուական ժամանակի անդիւտ կորստի վերայ, իսկոյն հրաժարվեցաւ պալատական բանակիցը և զնաց Սեփիլլա։ Նորա ամրապնդ սիրտը և նորա կատարեալ հաւատութիւնը իւր գործի պատուականութեան և մեծակշռութեան մասին, ի վերայ ազդր ամենայնի չը թողեցին նորան անյոյս լինել, թէ մի օր պիտոյ է նա յաղթութեան պասակը առնու։

Եշ այն մի քանի իշխանաւոր մարդիկը որոնց մօտ դիմց Կոլոմբոսը, փոխանակ կատարելու նորա կարօտալից օր քան զօր բոցավանեալ ցանկութիւնը, միսիթարումեին նորան, ներողութիւնն խընդրելով իւրեանց անկարողութեան մասին։ Այս հրաժարողական ընթացքը տեսանելով, ամենեին չքացաւ նորա վերջին յայսը, թէ կարելի էր Սովանիայից ձեռնտուութիւն ստանալ, Այժմ նորա աչքերը ուղղած էին գէպ ի Անդլիա և Ֆրանսիա։ Հենրիկոս եօմներորդ, Անդլիայի թագաւորը, որի մաս Կոլոմբոսը ուղարկած էր իւր եղբայր Բարթոլոմէոսը, բարի կամք էր յայց տուած, և Ֆրանսիայի թագաւոր կարուլու ութերորդը մի փոքր յառաջ քաջալերական թուղթ էր զրել նորան։ Բայց նախ և յառաջ կամեցաւ նա գնալ լա Ռարիդա անունով վանքը, որ առնու այն տեղից իւր Գինգօ որդին և բերէ

Կորդովա իւր միւս որդի քերնանդօյի մօտ. սա ծնած էր մի այլ մօրից, թէստրիկս էնբիկվեց անունով։ Այս վանքումը հանդիպեց իւր բարեկամին, առաջնորդ ջուան գերեցին, որ շատ ցաւեցաւ լսելով կոլոմբոսի այցելութեան պատճառը, և ամենայն հնար գործ գրեց որ չը թողու նորան շուտով կատարել իւր դիտաւորութիւնը պերեցը երես առ երես ծանօթ էր թագուհուն և յարգելի էր նորա աշքումը, այս պատճառով համարձակվեցաւ զրել նորան և հասկացնել այն փառքը և արդիւնքը, որոնցից կը զրկիլ թագաւորութիւնը պատճառ տալով կոլոմբոսի հեռանալուն և անփոյթ առնելով նորա առաջարկութիւնքը, ունեցը գրեց այս ազդարարութիւնը այնպիսի չերով և լուսափայլ կերպով, ինչպէս որ ինքը քաջահատատ էր կոլոմբոսի գործի պատուականութեան մասին, և ինչպէս կը պահանջէր իւր բարեկամութիւնը կոլոմբոսի հետ, այլև իւր յասուկ հայրենասիրութիւնը թէ այս յանձնարարական թուղթը արդարեւ ըլ մնաց առանց ներգործութեան, վկայութեամբ հաստատեց թագուհու պատասխանագիրը, որի մէջ ծանուցել էր նա առաջնորդին թէ ցանկութիւն ունի խօսելու նորա հետ նորա նամակի զօրութեան մասին։ այս պատճառաւ հրաւիրումէ նորան գալ Սանտա Ֆէ անունով բանակը որ, Գրանադայի պաշարումը երկարաձգվելով, գարձել էր մի գիշաբաղաք, ուր և այս միջոցին գտանվումեր թագուհին։ Այս տեսառութիւնը և խօսակցութիւնը եղած, ինքը կոլոմբոսը հրաւեր ստացաւ և սորա հետ մի փոքր արծաթ, պատրաստութիւն տեսանելու և ձանազարչի ծախքը լցուցանելու համար կոլոմբոսը անյապաշտ յանձն առաւ կատարել թագաւորական հրամանը։ Երբ որ միւսանգամ զարթել էր ուշադրութիւնը կոլոմբոսի մասին, միւսանգամ զօրութիւն ստացան նորա պալատական պաշտպանքը և բարեկամքը։ Ալֆանզօ Դը Ավինտանիլիս և քանի մի այլ մարդիկ ամենայն կերպով ջանադիր գտանվեցան նորա լաւականների և յառաջ տանողների թիւը բազմացնել, և մանաւանդ երեւելի և զօրաւոր անձինք դէպ ի նորա կողմը յօժարեցնել։ Բայց ուրիշ կերպ էր սահմանադրել բաղդը, Յիրաւի, Կոլոմբոսը շատ մարդասէր ընդունելութիւն գտաւ, բայց այն քաղաքական անցքերը, զոր օրինակ յաջողապէս աւարտած պատերազմը, Գրանադայի անձնատուր լինելը յազմողին, մի քանի ժամանակ յետ ձգեցին նորա գործը. վերջապէս հոգարածութիւն եղաւ այս մասին, և բոլոր բանը երեսումք վճռած ու կնքած, բայց ահա մի նոր իրադրութիւն մօտ էր, որ աւերէ և չիք դարձուցանէ ամենը։ Թէպէտե շատ և շատ մեծ էր կոլոմբոսի ուրախութիւնը, տեսանելով, որ ահա հասել է այն ժամանակը որ պիտոյ է պատկէր իւր տարիներով ու-

Նեցած ցանկութիւնը և փափագը, այնու ամենայնիւ չը մոռացաւ Կուլումբոսը թէ մածամնծ երախտագործութիւնքը արժանի էին և մած վարձատրութեան. Նա շերենցաւ այժմ՝ որպէս առաջին աղքատ աղաւաւորը, որ ի փառս Աստուծոյ խնդրէր ընդունել այն աշխարհները որ յայտնագործելու էր ինքը. ամենեին ոչ ։ Աերջապէս ստանալով թագաւորների հաւաաը, յաղթող էր հանդիսացել. զլուխը բարձրացնելով պահանջումում նա իշխանական անուն, և գաւազան ծովապետի և փոխարքայի այն բոլոր աշխարհների վերայ, որ բանալու էր ինքը. Այս պահանջումութիւնքը խոսվեցուցին մանաւանդ թէ նորա հին թշնամի Տալավերայի սիրու, որին յաջողվեցաւ նոյնպէս փոխել թագուհու միացը Դաշնախօսութիւնքը խափանվեցան, և Կոլումբոսը 1492 ին թողեց Սանտա Ֆէ, որ գնայ Ֆրանսիա։ Այս բանի վերայ շատ տրամեցան նորա արդարամիտ բարեկամքը. և սոցանից մինը, որ Արագոնիայի հոգեոր տուրք ժողովողն էր, համարձակվեցաւ ոչ թէ միայն խրաններ տալ թագուհուն, այլև համարեամ թէ յանդիմաննել նորան, որ ձեռքից թողած էր այն հնարը, որտեսով պիտոյ է ընդարձակիլէր եկեղեցին և իւր յատուկ կարողութիւնը և իշխանութիւնը։ Այսպէս, Կոլումբոսի բարեկամները փարատեցին թագուհու բոլոր երկմատութիւնքը և տարակուսանքը որ գլխաւորապէս յառաջացած էին նորա ամուսնու ֆերդինանդոսի կողմից, այլև նորա սրտի մէջ մի փոքր կրակ բորբոքեցին, իւրեանց բարեկամի գործը յառաջ տանելու համար։ Մի զինաւոր զժուարութիւն մնումէր զեռ ևս այդ մասին հարկաւոր եղած ծախքը, որ թէպէտե չէր կարող ասվիլ ծանր, բայց, նայելով այն ժամանակի որ պիտութեանը, երեւումնը անառանելի մէծ։ Այնու ամենայնիւ թագուհու վեհանձութիւնը, ըստ որում նորա սիրու զրաւած էր ահա, հեշտութեամբ հնար դժաւ հեռացնելու այդ արգելքը։ Նա յայտնեց իւր յօժարութիւնը գուրս տալ իւր թանգարին գոհարները, որ զրաւ դնելով նորանց, գուրս բերէ հարկաւոր եղած արծաթը։ Խսկոյն մի պալատական սպասաւոր ուղարկեցին Կոլումբոսի մօս որպէս լրատար որ և հանդիպելով նորան ձանապարհին, թագուհու և իւր բարեկամների անունով հրատիրեց նորան, շուտով վերադառնալ Սանտա Ֆէ բանակը։ Այս լուրը թէպէտ անակնկալ հասաւ Կոլումբոսին, բայց շատ ուրախարեր չէր նորան, ըստ որում այս առաջին անգամը չէր, որ խօսումնեցով յետ էին գանցւում նորան, թէպէտ զոյց հետեանքը եղած էր մինչեւ այժմ ցաւ և խոց նորա սրտի համար։ Ի վերայ այդը ամենայնի Կոլումբոսը չը հրաժարվեցաւ ընդունել ստացած հրաւերը, և յուսաւոր և կասկածամիտ յետ եկաւ դէպ ի պա-

լատը: Տեղ հասած, իսկոյն ներկայացրեցին նորան թագուհուն որ այնպիսի կերպով ընդունեց նորան, որ ամենայն երկմոռութիւնք և տարակոյսք շուտով փարատվեցան նորա սրտից: Թագուհու վարեցողութիւնը նորա հետ, նորա խօսուածքը կոլոմբոսի առաջարկութեան վերայ, այն պատրաստութիւնքը որ անյապաղ սկսեցին հոգալ, ոյլու իւր բարեկամների քաջայոյն հաւատը անչափ պայծառացրեցին նորա սիրու և բորբոքելով վառեցին նորա հոգին: Նորա հոգու բոլոր զորութիւնքը վերստին կենդանացան. ամենայն բան երեւումէր նորան հեշտ և գլուխ եկած աշաւ: Դաշնադրութիւնը թագուհու և կոլոմբոսի մէջ մէջ կարգվեցաւ նա զլիաւոր ծովագետ ամենայն ծովերի, կղզիների և ցամաքահողերի վերայ, որ պիտոյ է յայտնագործվելին, նոյնպէս փոխարքայ նոյն աշխարհների և կղզիների վերայ, և այս բոլոր արժանաւորութիւնքը պիտոյ է ժառանգութեամբ անցանէին դէպ ի նորա զաւակները: Բաց ի սորանից սահմանվեցաւ, որ յայտնագործած աշխարհների արդիւնքից թէ հողի բերքից լննէին և թէ վաճառաշահութենից, հասանէր տասանորդը որպէս նորան, նոյնպէս և նորա ժառանգներին: Ֆերդինանդոս թագաւորը թէպէտե յիշած էր նոյնպէս դաշնագրի մէջ, որի տակը և ձեռք էր դրել, բայց այս, մի արտաքին ձև էր սովորական պատուի աղագաւ. պատճառ, որ նա ինչպէս յառաջ, նոյնպէս և այժմ՝ ամենին հակառակ էր այս ձեռնարկութեանը և ամենին անմասն դորանից: Այս միջոցումը ամենայն ջանքով ու աշխատութենով պատրաստումէին հանդերձանքը (սարք ու կարգը) այն ութ լի տարի ներով կարօտագին ցանկացած և լուսափայլ կացուցած դորձի համար: Հարկաւոր պատրաստութիւնքը շուտով գլուխ եկան. բայց նաւերի շինութիւնը յանձնվեցաւ կոլոմբոսի յատուկ և միայնակ տեսչութեանը: Կոլոմբոսը Մայիսի 12 ին հրաժարական ողջըն տալով թագուհուն և թագաւորին, գնաց Պալոս, որ նորա համար սահմանած նաւերը շինվումէին: Բայց Կոլոմբոսի նաւերը բաղկանումէին միայն երեք փոքրիկ շինուածներից որ շատ աւելի մէծ չէին, քան թէ խոշոր նաւակները: Այս երեք նաւի վերայ բաժանած բաղմութիւնը, ինչպէս ասումն ունաւք, բաղկանումէր 120 մարդուց, կամ թէ, միւսերի ասելովը, 90 հոգուց միայն: Բաց ի նաւաստիներից, որոնց բաղմութիւնը աւելի բազմաթիւ էր, մասնակից էին այս զործին և մի քանի աշխարհաշրջիկ մարդիկ, որպէս աղատակամ ընկերը, Այլ քանի մի պալատականք նաւամուտ եղան թագուհու հրամանով: Այս փոքրաթիւ նաւերը վեր էին առած 12 ամսի պաշար:

Այս էր աշա այն պատրաստութիւնը որ կաստիլիայի թագուհին այն միջոցումը անտանելի էր տեսանում իւր թագաւորութեան կարողութենի համար, և որանով նորա ծովագետը յանձն առաւ ճանապարհորդել անծանօթ ծովերի մէջ և ամենեին նոր աշխարհներ յայտնագործել և տիրապետել:

Ոչինչ բանի հետ չէ կարելի համամատել այն հոգեշարժ ուրախութիւնը Կոլումբոսի, երբ որ տեսաւ նա թէ նաւերը ամենեին պատրաստ էին: Մեծահոգի մարդիկ սովոր են գլուխ տարած համարել զժուար ձեռնարկութիւնքը, միայն թէ կարող էին սկսանել նորանց: Նորա սրտի յայտնախօս վկայութիւնը, նորա անդրդուելի և ուրախ վստահութիւնը հազիւ թէ թողումեին մտածել անգամ, թէ կարող է այսաջողութիւն պատահէլ. ոչ, նորա հոգին դէպ ի վեր սլանալով, երեսումքը յազդող բոլոր վտանգների և տառապանքների վերայ: Ինչ զգացողութեններով հոգիացած էր ինքը, նշյնպիսի զգացողութիւններ կարողացաւ յառաջացնել և իւր ընկերներից շատերի սրբումը. շատ կամ փոքր մասնակից լինելով այս զգացողութեններին, ուրախութեամբ հաւանութիւն տուեցին, երբ որ Կոլումբոսը յայտնեց նոցա ճանապարհ ելանելու օրը: 1492 թուականին, Օդոստոսի Յին, այս սակաւաթիւ նաւերը խնդութեան հանդիսավոր մոդելցին նաւահանգիստը և պարզեցին առագաստները դէպ ի կանարեան կղզիքը: Այս կարճառու ճանապարհորդութեան մէջ արդէն բացայացտվեցաւ անդիմացկոտ լինելը այն նաւերի, որոնց հաւատացնել էին իւրեանց անձը այդպիսի մեծ և անհաւաստի ծովագնացութեան մէջ: Բոլոր նաւերը աշա կարօտ էին նորոգութեան, թէպէս միայն չըս օրի ճանապարհ էին անցած, և այն մեծ յայտնագործական նաւելնթացութիւնը հազիւ թէ կարելի էր ասել, թէ ըսկած է միայն: Երբ որ կղզիքը չբացած էին նաւարկողների աչքից, Կոլումբոսի ընկերներից շատերի մէջ չբացաւ նշյնպէս այն քաջարտութիւնը որանով պարծենումէին յառաջուց: Դոքա միշտ սովորած լինելով, ծովեղերեայ նաւարկութեամբ կամ թէ մի կղզուց դէպ ի միւսը յառաջ խաղալ, տեսան այս տեղ, որ ճանապարհորդումէին ասես թէ մի անապատի մէջ, միայնակ ու կորած: Մի լուռ, խաւարախոս ծանրասրտութիւն տիրապետեց քաջ տղամարդերին ևս: Մի քանիքը գանգատելով զարկեցին իւրեանց կուրծքին և անիծումէին իւրեանց յիմարութիւնը, որ այդպիսի անմիտ ձեռնարկութեան հաւանած էին: Միւսերը լաց էին լինում որպէս երեխայք և կըրկնումէին, թէ առանց փրկութեան կորած ենք: Կոլումբոսը երեսումք նոցա մէջ, միսիթարումքը նորանց, քաջալերական հաւաս էր տալիս

նոցա, դարձուցանումեր նոցա ուշադրութիւնը գեղի ի ցամաքաչողի մօտաւորութեան փոքր ի շատէ նշանները, բորբոքումեր նոցա պատուակրութիւնը, նոցա մասկառութիւնը, նոցա շահախնդրութիւնը, և այսպէս նոցա վհատած հոգին հաստատումեր միւսանդամ։ Կոլոմբոսի ընկերների այսպիսի գնացքը նորան գուշակել տուեց այն մեծ դժուարութիւնը, որին գեռ ևս շատ անգամ պիտոյ է հանդիսէր և յաղթէր. բայց սոյն իսկ բանը զարթեցք նորա հոգու մէջ մի այնպիսի զօրութիւն որին անծանօթ էր մինչև այժմ և ինքը. ոյսինքն մի այնպիսի զօրութիւն որոնով կարելի է, առանց բոնութիւն գործ գնելու, հնազանդութիւն գտանել մարդերի կողմից, պատշաճապէս օգուտ քաղելով նոցա տկարութեններից. առանց սորան, մեծահանձար Կոլոմբոսի ամենաշատ և ամենահաստատ ջանադրութիւնքը ևս մնալու էին զուր և անօգուտ։ Այնու ամենայնիւ, թէ ծովագնացքը ինչպէս քաջ ուշադրութենով աչք էին ածում և ամենափոքր, շատ աննշան բանների և տեսարանների վերայ որոնցից կարելի էր եղրափակել ցամաքաչողի մօտաւորութիւնը, չէ կարելի պատմել լըզուով, Մի կոտոր փայտ, մի բանջար որ լող էր տալիս նոցա հանդէպ, մի թռչուն որ անցանումեր նոցա մօտից, շատ ուրախաբեր և յիշատակի արժանի բաններ էին նոցա համար. Կապարեայ գնդակով անդադար քննումէին ծովայտակի խորութիւնը, որ և գորանով կարողանացին իմանալ նոր աշխարհի մօտաւորութիւնը, ինչպէս որ կարծումէին։ Բայց անցաւ այս օրը, անցաւ և միւսը, անհետացան ուրախաբեր տեսարանքը, և նոր ի նորոյ աչ և սասանութիւն ընկաւ նոցա վերայ. պատճառ, օրէ օր աւելի հեռանումէին ցամաքից։ Կոլոմբոսը որոնումէր այժմ խարէութենով սրտապնդել իւր ընկերակիցքը. Նա աւելի պակասով սահմաննեց նոցա անցած ճանապարհի հեռաւորութիւնը քան թէ ճշմարտապէս էր։ Այս բանը ներդորեց մի փոքր, բայց ոչ լստ բաւականին։ Կիւթական զգայութիւնը յիրաւի կարելի էր խարել, բայց ոչ ամենեին յաղթահարել։ Այն մեծ անհանգստութիւնը որի մէջ գտանլումէին համարեն թէ ամենեքնան, զօրութիւն տուեց նոցա նեղսրտութեանը և յառաջացրեց նոր նոր առիթներ ահմա և երկիւղի։ Այս կերպով, որպէս թէ 400 ծովային մղոն հեռացած էին կանարեան կղզիներից, երբ որ մի այլ տեսարան որ ըսկղումը ուրախաբեր էր, սաստիկ շարժեց նոցա սիրովք։ Ծովը յանկարծ երենցաւ կանաչ բոււերով ծածկած և միւսանդամ կարծիք տուեց, որպէս թէ մօտ էին մի ցամաքաչողի։ յառաջ գնալով, այս ջրային բռւսականքը այնպէս խտացան (թանձրացան), որ տալիս էին ծովին մի մարդագետնի կերպարանք, և մի փոքր յիշոյ գըժ-

ուարացուցին և նաւերի ճանապարհը։ Այսմ ծովագնացների մէջ մի զարհութելի մտածութիւն գոյացաւ, որպէս թէ հասած էին նաւարկելի աշխարհածովի վերջը. ահարկու, ծածուկ ծովաժայռեր և խորացդ եղած աշխարհներ պատկերացան նոցա պղտորված երևակութեան մէջ, կարծումէին թէ աչտ եկել է իւրեանց անփախչելի կորուստը, և նորի ի նորոյ անձնատուր եղան աւտմութեան և յուսահատութեան։ Եւ այս անդամն յաջողլց ծովագետին փոքր ի շատէ խաղաղութիւն հաստատել նոցա մէջ, և նոյն բանովը, որ շատ զարհութանք էր բերել նոցա վերայ, նորանոր յշյսեր անկել նոցա սրտի մէջ։ Մի բաղդաւոր դիպուած ձեռնոտու եղաւ նորա ջանադրութեանը։ Մինչև կոլոմբոսը սիրո էր տալիս նոցա, բարձրացաւ մի զուարթացուցիչ արեւելան հողմ և արագութեամբ յառաջ վարեց նաւերը կանաչապատ ջրադաշնի վերայով։ Մի քանի մուշտներ շրջապատեցին նաւերը և ուղղեցին իւրեանց թուիչքը դէպ ի արեմուտք, որպէս թէ կամենումէին առաջնորդել ծովագնացներին դէպ ի այն կողմը, ինչ կողմով նոքա պիտոյ է շարունակէին իւրեանց ճանապարհը։ Այս տաեիլներից օգուտ քաղլց կոլոմբոսը շատ իմաստուն կերպով, և այսպէս մի քանի ժամանակ բաւական հանդարտութեամբ և ամրացած սրտով յառաջ գնացին։ Միւս օրը նորանոր յշյսեր զարթեցան և ունայնացան։ Եյնուհետեւ երկիւղը և տարակոյսը աւելի սասականալով և զօրանալով քան թէ յառաջուց, պյնքան յաճախ տեղիք տուեցին նորանոր յշյսերի, ինչքան անդամ վերստին արմատացան։ Այս, մի և նոյն բանը որ նոցա սրտին վերուղղութիւն էր տուած, սկսեց այժմ կրկնապատիկ զօրութենով գետին զարկել նորանց. այն միշտ հաւասար զօրաւոր հողմը որ արագապէս քարշումէր նորանց դէպ ի խնդրեալ նպատակը, այժմ երկիւղի պատճառ դարձաւ նոցա համար։ Այս հողմը ոչ թէ միայն օր ըստ օրէ աւելի հեանցնումէր նորանց իւրեանց հայրենի աշխարհից, այլև խափան էր նոցա վերադարձին։ Նոքա երեք շարաթ ծովի վերոյ էին առանց ցամաք տեսանելու, կամ նշան ստանալու, թէ մատացել էին մի աշխարհի։ Մինչև այժմ հաւատ և հնագնդութիւն էին ցոյց տուած ծովագետին, և սորա իւրատքը և յորդորանքը հեշտութեամբ ընդունած էին նաւորդների մէջ եղած մի քանի շատ փորձառու և քաջասիրտ ծովագնացներ։ բայց և սոցա վերայ տիրեց այսուհետեւ տիրութիւն և յուսահատութիւն, Միաբանվեցան, սկսեցին գանգատել, նախ մեղմով, ապա բարձրաձայն, թագուհու և ծովապետի վերայ, և ապստամբութեան դաշն կապեցին։ Սոցա մէջ աւելի չափաւորները առաջարկեցին խնդրել կոլոմբոսից վերադարձ։

եթէ նա ընդդիմանալու էր, ապա պիտոյ էր հարկադրել նորան։
Եսումեին, թէ թագուհին կարող չէ նախատինք տալ այս մասին,
որովհետեւ նա ինքը առանց պատասխանի տալու գործ է գործել, տա-
լով նորանց մի օտարական շրջմոլիկ մարդու ձեռք, որ ոչինչ բան
չունէր կորուսանելու, որ պիտոյ է կամ չարադրծ կամ թէ խե-
լայնոր մարդ լինի։ Յիմարացածքը միայն կարող էին աւելի երկար
յանձն առնուլ ման զալ անշափելի ովկիանոսի վերայ առանց նպա-
տակի, առանց վերջ գտանելու, և այնպիսի նաւերով որ և այժմ
հաղին թէ կը դիմանային վերադառնալուն, և օր ըստ օրէ աւելի
մաշվումէին։ Սորա հակոռակ, աւելի կոպիաները և վայրենիքը առա-
ջարկումէին աւելի կարճ ճանապարհով հնարաւորել իւրեանց փրկու-
թիւնը, և նաւելից գուրս ձգել ծովագետը։ Սորա համար պատասխա-
նառու չեն լինելու, բայ որում միարան խոստովանութիւնով կա-
րող էին հաստատել, թէ նա իւր յատուկ անզգուշութեամբը գլոր-
վել է զեզի ի ծով, և ոչ ով կարող չէր հերքել այդ ասութիւնը։
Կոլոմբոսի շրջանկատ տեսութենից թագուն չը մնաց այս խոռոչու-
թիւնը որ թէպէտ գեռ ևս հրատարակված չէր, բայց բաւական ճա-
նաշելի կերպով յառաջացել էր իւր շրջակավորմը։ Մի մոմուական,
վշտոցած և անհնաղանդ գնացք այնքան իսկ քաջ բացայսյութեց նո-
րան այս խորհուրդը, ինչքան որ կարող էր բերանի խօսքը, Ա.Յ.Լ.
չը պակասեցին քանի մի լիբը և անզգամ հայհոյութիւնք որ շատ
յայսնի ցուցանումէին թէ ինչ վտանգի մէջ էր Կոլոմբոսի կեանքը,
բայց խոռովարաբքը մի անբացայացած լի պատճառով չեն համարձակ-
վում գործ գնել իւրեանց դիտաւորութիւնքը, և Կոլոմբոսը հա-
կացաւ թէ ինչպէս մեծ խորհրդաւոր բան էր, նոցա կատաղութիւնը
այս անտեսանելի և ծածուկ կապանքով կապել ու կաշկանդել։ Մի
յուսահատ բազմութեան մէջ կանգնած, իւր անձը պաշտպանելու և
իւր գերազանցութիւնը պահպանելու համար, ոչինչ չունէր նա, ե-
թէ ոչ, իւր հոգու զօրութիւնը և հնարագիտութիւնը կառավարե-
լու մարդկային կիրքը։ Այս բարյական կարողութիւնքը այժմ հան-
դէս բերեց նա մի այնպիսի հրաշագործ արդիւնաւորութիւնով, որ
դժուար թէ միւսանդամ հանդիպած լինի աշխարհային անցքերի ար-
ձակ դաշտի մէջ։ Մի ճշմարտապէս կախարդական զօրութեամբ, այս
տեղ նոր յոյսեր զարթեցրեց, այն տեղ գրգուեց շահամոդրութիւնը,
միւս տեղ կենդանացրեց պարծանքի սէրը, ոյլ միւս տեղ բորբոքեց
փառասիրութիւնը և պատուամնութիւնը։ Դէպի ի նոցա կողմը որ
դեռ ևս հնաղանդ էին նորան, խօսեց այն յաւերժական փառքի, այն
անշափելի դանձների և այն շողջողուն պատուաոր պաշտօնների վե-

բայց, որ սպասում էին Նոց ու Բայց Նոցա, որ անզգամ և անհնաղանդ վկար էին ցուցանում, հանդիսաց Կոլոմբոսը այնպիսի ծանրութեամբ և պատկանելի կերպարանքով որ այնքան սեպչական էր նորան, ինչ քան քաջցրութիւն և ընտանութիւն, որ և ամենայն ժամանակ առանց սիրավելու և ամենասպասահաճապէս խմանումէր գործ զնել, տեղին ու մարդուն յարմար: Կոլոմբոսը ցայց տալով, իրեւ թէ չը նկատում այն շար միարանութիւնը և հասարակաց անսրտութիւնը, որպէս թէ և ոչ իսկ գուշակումէր մաքումը թէ ապատամբութեան զան էին կապած, ոչ թէ միայն կարողացաւ օրէ օր խափանել այդ բանի հրապարակ դուրս գալը, այլև բաւական հանդարասութիւն, սիրտ և փոքր ի շատէ ընդհանուր հնազանդութիւն հաստատել նացա մէջ: Այս միջոցումը կրկին երկեցան թաշունների երամներ, որոնց ընթացքը զէպ ի հարաւային արեմուտք էր. վասն այս պատճառի զէպ ի նոյն կողմը շրջեց իւր գնացքը և ծովապետը որ մինչև այժմ նաւը ուղղակի զէպ ի արեմուտք էր խաղացուցել: Թըլու շունները աներեւութացան, և միասնագամ տարակշս տիրեց նոցա վերայ, փոխ առ փոխ յուսաւոր և անյօյս լինելով, մինչև յանկարծակի մի այնպիսի սասանութիւնը տարածվեցաւ նոցա վերայ, որ ամենն գենեան անասելի տապնասպի մէջ անձնատոր եղան մի ահաւոր յուսահասութեան: Խոռովութեան հոգին որ մինչև այժմ դժուարութեամբ յետ էր պահած, այնուչեան անընդդիմանալի գուրս յարձակվեցաւ: Նաւերի գլխաւորքը և պաշտօնակալը որ մինչև այժմ հաստատապէս կամակից էին ծովապետին, անց կացան զէպ ի ժողովրդի կողմը և դարձան ապատամբութեան առաջնորդը: Բազմութիւնը հաւաքվեցաւ խառն ի խուռն նաւերի տախտակամածի վերայ և սպասնալով ու նշովելով պահանջումէր, որ իսկցյա յետ դառնան Սպանիա: Յուսահասութեան կատաղութիւնը հասել էր այժմ ամենամեծ աստիճանին: ծովապետի բոլոր շրջակայքը աչ էին տալիս նորան, թէ կործանելու ևն նորա բոլոր յոյսերը, նորա փառքը, նորա կեանքը: Թող տալ որ գոքա ահ ու երկիւղ տալով ստիումին իւրեան յետ դառնալ, աւելի ցաւեցուցիչ էր այժմ Կոլոմբոսին, քան թէ երբ և իցէ յառաջ: Կա ծածկապէս արած էր քանի մի նկատողութիւնը որ հաստատումէին թէ մատ է մի ցամաքահող: Այս զրութեան մէջ, որ կարող էր զգբգել և ամենաքաջ տղամարդի սիրտը, Կոլոմբոսը ոչ մի բոցէ չը կորցրեց իւր զգաստութիւնը և խելացութիւնը: յառաջուց փորձ փորձեց, որ խոռոված սրտերը հանդարտեցնել մինչև այժմ գործ դրած հնարներովը: բայց խելացուտ լինելով որ գոքա անօգուտ էին այժմ, ինդրեց և աղաւեց, որ երեք օր ևս հետևէին

իւրեան, սորանից յետոյ, եթէ ոչ մի ցամաքահող գտած չը լինելին, ապա յօժար էր իսկոյն յետ տանել նորանց դէպ ի Եւրոպա՝ Այս առաջարկութեանը իսկոյն հաւանեցին պաշտօնաւորբը, և սոցա գործակցութենով առ փոքր փոքր և միւս ծովագնացքը հանգստացան միւսանգամ, Այնուհետեւ ծովապետը աւելի և աւելի վասահութիւն տանալով, յառաջ վարեց նաւը մի պատիսի ամուր ու հաստատ կամքով որ պիտոյ է հասուցանէր դէմ դրած նպատակին, որին և հաճոյանալով համար, ինչպէս խօսումէ Շիլլեր բանաստեղծի գեղցիկ բերանը, այնինդունի ցամաքահողը պիտոյ է անպատճառ զնւրս երեւէր ջրերի խորբից, եթէ դեռ ևս չը կար այն տեղ:

Կոլումբոսը արգէն մի քանի օր յառաջ կապարեայ գնդակը ցած թողլով, յատակ էր գտել ծովի մէջ, և որպիսութիւնը այն աւազի որ գնդակի վերայ մածված (կոպած) գուրս էր եկել, գրեալ թէ հաւաստութիւն տուեց որ պէտք է մօտ լինելին ցամաք հողին: Այն օրից յետոյ, երբ պատահէլ էր այս նկատողութիւնը, երեցան և այլ նշաններ որ ստուգութիւն էին տալիս այս բանին: Թուշունների երամենը շատացան, որ և պյանիսի թուչունը էին, որ պիտոյ է ցամաքի վերայ բնակէին և անկարող լինելին շատ հեռաւոր ծովի վերայ շրջել: Բանեցին և մի եղեգնաբայս, որ երեւումը թէ վաղուց կրորած չէ. այլև մի ծառի ճիւղ ամեննեին դալար կարմրագոյն պտուղ ներով, և մի արուեստաքանդակ (արուեստով շինած) կոտոր փայտ: Բաց ի սորանից տեսան երկնքի վերայ և օդի մէջ քանի մի ցուցակութիւնը որ բոլոր փորձառու նաւագնացների համար գուշակութիւնք էին ցամաքահողի մօտաւորութեան մասին: Այսպէս ծովապետի յայսը դարձաւ ակնկալութիւն, և սա (Հոկտ. 11 ին, երեկոյեան պահուն) ստուգվեցաւ մինչեւ այն աստիճան, որ նա հրաման տուեց առագաստները շրջել գէով ի հողմը և զդուշութեամբ աչք ածել, ըստ որում անպատճառ այս գիշերին կը հասանէին ցամաք հողի: Մի և նոյն մֆոցումը հրամայեց ծանուցում առնել, թէ ինչ մարդ առաջին անգամը կը տեսանէր ցամաք հող, տանաւլու և ոչ թէ մի այն թագուհուց խօսացած 10,000 արծաթ թօշակը, այլև մի պատուական բարիստեայ մուշակ իւրեանից: Այս հրամանը բորբոքեց բոլոր բազմութեան սիրտը. բոլոր երեք նաւերի մէջ եղած ժողովուրդը մնաց տախտակամածի վերայ, անդարձ աշքով նայելով դէպ ի այն կողմը, ուր սպասումէին առաջին ցամաքահողի յայտնութեանը: Երեկոյի որպէս թէ 10 ժամին, ծովապետը որ բար նաւի դէսին կանգնած շարունակութիւնը իւր նկատողութիւնը, տեսաւ հեռուից մի ճրագ և ցցց տուեց մի մանուկ աղնուականի որ թագուհու պալատիցն էր.

և սա տեսաւ յայտնապէս այն ճրագը: Երկուքը գանձեցին իսկոյն նաւ-
ւերի արձանագրող պաշտօնաւորը, որ նոյնպէս նկատեց այն ճրագը
որ երեսումն թէ այս կողմ և այն կողմ է շարժվում: Մի քանի
ժամանակից յետոյ ծովագետը ցցց տուեց նոցա նոյն իսկ ցամուքա-
հողը: Բայց այս յայտնագործութիւնը զեռ ևս ծածուկ պահէցին,
մինչև որը լուսանայ և լիսպէս ստուգիի նոցա ակնկալութիւնը: Յան-
կարծ, կէս գիշերի մօտ, ուրախութեան ձայն եկաւ յարաջադաց նա-
ւիցը. ահա ճրագ, ճրագ. ահա ցամաք հող, ցամաք հող: Մի նա-
ւաստի կայմի վերայ, տեսած էր նոյն բանը և կարծումն թէ ինքն
էր առաջին տեսանողը: Բայց ծովագետին այնքան յարգելի էր ա-
ռաջին յայտնագործութեան փառքը, որ նա կարող չէր թողուլ նո-
րան մի ուրիշ մարդու: Վերցյիշեալ մարդերի վկայութենով, ինչ-
պէս այդ պատիւը, նոյնպէս և իրքն վարձատրութիւն նշանակած թո-
շակը պատկանաւոր համարեցին ծովագետին, որ և այդ արծաթը ստա-
ցած է, ինչքան որ կենդանի էր: Մինչև այժմ շատ ու շատ ակըն-
կալութիւնը անկատար մնալով, զարմանալի բան չէ, եթէ նաւերի
ժողովուրդը, և ականատես լինելով, կասկածու էր և կամք չունէր
իսկոյն բոլորովին հաւաս ընծայել այս ուրախալի քարոզութեանը,
և շանգստանաւ ընդհանրապէս: Բոլոր գիշերը, շատիրը մնացին եր-
կիւղալից դրութեան մէջ, տարակուսենով և յուսալով, մինչև առա-
ջին լուսարացի շողշողինը ամեննեին փարաւուց նոցա թերահաւա-
տութիւնը: Այժմ, մօտ երկու ծովակոն լայնութենով դէպ ի հիւ-
սիս զետեղված, երեւցաւ նոցա մի կանաչապատ, տափարակ, անտա-
ռազարդ և առուներով ջրած գեղեցիկ ծալվելերայ հող որ, շատ
հաւասական էր, թէ պիտոյ է լինի մի մէջ կղզու եզրը: Այժմ, յա-
ռաջադացնաց նաւի ժողովուրդը սկսեց փառաբանել Աստուած, երգե-
լով. փառք ի բարձունս Աստուծոյ. և միւս նաւերի բազմութիւնը
իսկոյն միաբանվելով նոցա հետ, հոգեշարժ զուգաձայնութեամբ բար-
ձրացուցին իւրեանց երգասացութիւնը մինչև ամսպերը: Մի զարմա-
նալի գում եկաւ և ամենավայրենի սրտերի վերայ. ծովագետի նա-
ւի մէջ եղած պաշտօնակալքը և ժողովուրդը վայր ընկան, Կոլոմո-
սի սոտերին պատասխալով, և ինդրումին ներողութիւն իւրեանց թե-
րահաւատութեանը և խոռովարացութեանը, և ցուցանումին նորան
իւրեանց հնազանդութիւնը և պատիւը որպէս մի գերմարդկային (մար-
դուց գերազանց) էակի: Բոլորեքնան ողջունեցին նորան, ասելով.
Ապրի ծովագետը, ապրի փոխարքան, և խոստովանեցին նորան այն-
պիսի տէր և իշխան, որ ստորագրած էր թագաւորի հրամանին միայն:
Արել բարձրացած, պատրաստվեցան ցամաք դուրս գալ. ուրախու-

թեամբ գրկախառնելով միմէանց, ելան նաւակների վերայ և դրօ-
շակները ճօճնլով (խաղացնելով) և պատերազմական նուագարանքը
ածելով դիմցին դէպ ի Եղբւ Այս անծանօթ ձայները և այս նոր
զարմանալի տեսարանը մօտ գրաւեց կղզու բնակիչքը, որ մեծ մեծ
բազմութենով յառաջ եկան և հիացած քննումէին այս արժանի յի-
շատակի և նոցա աչքումը պատկառելի տեսարանը: Ծովապետը փա-
ռաւոր զգեստով, իւր արժանաւորութեան նշաններով զարդարած,
սուրը մի ձեռին, և մագաւորական դրօշակը միւս ձեռին, ամենից
յառաջ ուրք կոխեց նոր աշխարհի հողի վերայ: Նորան հետեւցին
միւս նաւերի առաջնորդքը, ապա միւս ժողովուրդը. բոլորեքեան խո-
նարհեցան ծնկերի վերայ, որ այս, այնքան կարօտով ու փափագով
ցանկացած աշխարհը ողջուննն համբուրելով և իւրեանց փրկութեան
համար չնորհակալութիւն մատուցաննն Աստուծուն: Ապա վեր կա-
ցան, և Կոլոմբոսը, այն ժամանակի սովորական հանդիսով, ընդու-
նեց աշխարհի իշխանութիւնը Թագուհու անունով, և որպէս արձա-
նագիր այս բանիս հրամայեց Կաստիլիայի թագաւորութեան նշանը
կախ տալ մի խաչի վերայ որ կանգնեցրած էր ծովի եղրումը: Կո-
լոմբոսը այս աշխարհին, որ այժմ ստուգապէս իմացվեցաց թէ կղզի
էր, որին և բնակիչքը ասումէին Գվանահանի, անուն տուեց Սալվա-
դոր (Փրկիչ): Որովհետեւ այս տեղ դիտաւորութիւն չունինք աշ-
խարհների յայնագործութեան պատմութիւն գրել, այս պատճառով
աչա, ինչպէս վայել էր, զանց ենք առնում այն բաները որ դորան
կը պատկանէին: Աւրեմ այս տեղ ծանօթարանումնք այսքան միայն,
թէ ծովագետը այս կղզու որպիսութիւնքը քննած լինելով, շարու-
նակեց իւր նաւարկութիւնը դէպ ի հարաւ, ըստ որում հարց ու
փորձ առնելով իմացել էին կղզու բնակիչներից, թէ այն ոսկին,
որանից մի քանի զարդարանկներ ունեին իւրեանց վերայ, որ և ցան-
կասիրութեամբ որոնումէին Սպանիացիք, շըմակոյ աշխարհումը առ-
ւելի է զտանշվում, քան թէ սոցա մօտ: Այս ճանապարհի վերայ
բացեց Կոլոմբոսը, թող մի քանի փոքրիկ կղզիներ, Կուրա և Հիսպա-
նիուլա կղզիքը. բայց նորա ուրախութիւնը այս նորանոր և մեծա-
կշիռ յայնագործութենների վերայ, աւելիվեցաւ, ըստ որում նորա
նաւերի մինը ջաղճախով էր ապառաժի վերայ: Վասն այս պատճա-
ռի ծովապետը վճռեց, որ իւր ժողովրդի մի մասը յետ թողու և
այսպէս մի գաղթաքաղաքի շնութեան հիմք ձգէ: Որովհետեւ Հիս-
պանիուլյումը տեղեկացած էին որպէս թէ մօտիկ տեղում կոչին շատ
առատ ոսկիչանքի, և աշխարհի գլխաւորը խոստացել էր ցցց տալ
նորանց, ապա հեշտութեամբ գտանվեցան երեսուն պատակամ ան-

ձինք, հիմնարկելի գաղթաբաշխի համար։ Բնակչութը ոչինչ խափանարար չէին ուս մասին։ և այսպէս վնասեալ նաև աւերածքը գործ ածեցին, մի ամրոցի պէս պաշտպանութիւն շինելու համար։ Ազածովագետը հրաժարվելով գաղթականներից, շատ և շատ խրատ տուեցնոց որ բանական և խելացի կերպով վարվին կղզեցց հետ, խոստացաւ վերադառնալ շուտով և (1493 թուակ. Յունվ. 4 ին) ուղերդեցաւ դէպ ի Սպանիա։ Երկու նաւերը ի միասին յառաջ խաղացին քերելով նոր բացած կղզիների եղերքովը, և ապա շրջեցին դէպ ի Եւրոպա։ Ճանապարհի մէծ մասը հանդարս և ապահով կերպով անց կացան։ Յանկարծ (Փետրվարի 14 ին) վեր կացաւ մի ահաւոր մրրիկ, երկիւղ կար թէ մի գուցէ զա նաւերին և ժողովրդին անփախչելի կորուստ պատրաստ։ Ծովապետը անխօսով խորհրդով և խաղաղ սըրտով գործ դրեց ամենայն հնար, ինչ որ դիտութիւնը, փորձառութիւնը և պատրաստականութիւնը կարող էին տալ նորան, այն վըտանդը գարձուցանելու համար, որ ամեն մի զարկելովը հողմի, աւելի սասանութիւն էր տարածում նոցա մէջ։ Բայց մրրիկի կատաղութիւնը սաստկանալով, որպէս և նորա ընկերների յուսահատութիւնը զօրանալով, այլև նաւերի խախուտ շինուածքին նայելով, երկու մէր թէ ամենայն բոպէ աւելի մօսնումեին այն սարսափելի մօսածութեանը, թէ օգուտ ըը կար բոլոր գործ դրած ջանքից ու աշխատութենից։ Այս անհնարին դրութեան մէջ քանդվելով ծովագետի սիրտը, մասքերեց նա, մի գուցէ իւր մեծամեծ և ծանրակշիռ յայտնագործութիւնքը իւր հետ և իւր ընկերների հետ միասին գերեզման գտանեն ալիքների մէջ։ Այս խորհրդածութեան մէջ մօսանալով միւս բաները, թողեց նաւերը վտանգի կամքին, ըստ որում կարող չէր աւելի ընդդիմանալ նորան և առանձնացաւ իւր նաւասենեկի մէջ։ Մըրիկը ահաւորապէս գոռալով, նաւը աստանդական երերելով և ճայթելով, ամենայն բոպէ աչքի առաջև լինելով կորուստը, վեր առաւ կոլումբոսը մի պատառ մագաղաթ և գրեց նորա վերայ մի համառօտ բայց լիակատար տեղեկութիւն, իւր ճանապարհորդութեան, իւր բացած աշխարհների և նոցա բերքերի մասին։ Այս մագաղաթը ոլորեց և պատեց ձիթաշէն կտաւով, շրջափակեց նորան մօմանիթ խմորով և դրեց մի կարասի մէջ, զգուշութեամբ փակելով նորան, և ապա ծովը ձգեց, յուսալով թէ մի յաջող դիպուածով ոյս լուրը կը հասանէ մի եւրոպական տէրութեան ծովեղեթեալքի և ոյսպէս կը պահպանվին իւր աշխատութեան և տառապանքների արդիւնաւորութիւնը։ Այս գործը աւարտած, հանգարտեց մրրիկը և օդ ու ծով առ փոքր փոքր խաղաղացան։ Փրկութեան ու-

բախարեր ներդործութիւնը աւելի զօրացաւ, երբ որ տեսան մի ցամաքահող և ճանաչէցին Թօրտուգալացոց պատկանեալ սուրբ Մարիամի կղզին, որ Ազորեան կղզիներից մին է. այս տեղ ցամաք դուրս եկան և յատակ ջուր և կեանքի պաշար վեր առան, թէպէտ այս բանի մասին փոքր ինչ ընդդիմութիւն ցոյց տուեց տեղի գաւառապետը: Վերջապէս Կոլոմբոսի նաւը ներս վազեց Պալոսի նաւահանդիսար: Կորա գալստեան համբաւը ընդհանուր ուրախութեան տօն պատճառեց. Պալոսի բոլոր բնակիչքը շտապեցին գէպ ի նաւահանգիստ, որ տեսանեն Կոլոմբոսի ելանելը գէպ ի ցամաք: Երբ որ նա ներս էր մտանում քաղաք, զանգակները զարկեցին, թնդանօթները արձակեցին, խանութները վակեցին, բոլոր ծէսերը կատարեցին որ սովորական էին թագուհու և թագաւորի ընդունելութեան ժամանակը: Ինչ նա վերջին անգամը, ճանապարհ ելանելոց յառաջ, իւր ընկերների հետ միասին գնացած էր եկեղեցի, նշյապէս այժմ, վերադառնալուց յետոյ, փառաւոր հանդիսով դիմեց յառաջոց այն տեղ: Ապա նորա առաջին դործը այն էր, որ իւր գալստի մասին տեղեկութիւն տայ թագաւորին և թագուհուն: Սորա շատ պատռւաւոր կերպով Հրաւիրեցին Կոլոմբոսը, որ մանրամասնեայ յայտարարութիւն տալու համար ներկայանայ պալատին որ այն միջոցումը Քարսելոնա քաղաքի մէջ էր: Կորա ճանապարհորդութիւնը գէպ ի արքայական պալատը մի յաղթական հանդէս էր, և նորա ընդունելութիւնը այնպէս մէծահարկի ինչպէս կարելի էր: Թագաւորական հրամանով պատրաստութիւն էին տեսած, որ հանդիսաւոր և փառաշեղ կերպով ներս բերեն Կոլոմբոսը Քարսելոնա: Կոր աջխարհ բացողի առաջից տանութիւնն այն ցուցակութիւնքը որ սուուգութիւն էին տալիս նորա խոստացած բաներին, նորա կատարած յայտնադործութեննենքին և սոցանից յուսալի արդիւնքներին: Շարքով գալիս էին, յառաջ, Խնդիանացի *) մարդիկը, ապա ուկեղէն անօթները, ոսկու կոտորները և հատիկները, և սոցա հետեւից նոր աշխարհի միւս բերբը: Թէպէտ և շատ զարմանութիւնն այս բաների վերայ, բայց ևս առաւել ընդհանուր, ուշադրութեան և հիացքի արժանի էր և մոռուկը ինքը Կոլոմբոսը: Թագաւորը և թագուհին ընդունեցին նորան, իւրեանց ամոռոի վերայ նստած և իւրեանց արքայական զգեստովը զարդարված: Կոլոմբոսը մօսեցած, նոքա բարձրացան տեղերիցը և համ-

*) Հատ որում Կոլոմբոսը կարծումէր թէ իւր զուած ցամաքահողը Հնդկաստան է. մասն այս պատճառի առա բնակիչքը անուն սոցացան Խնդիանացիք. այս անունը, թէպէտ սխալ, մացել է մինչև այժմ:

բուրելու համար պարզեցին ձեռքերը դեպ ի ծովապետը որ ծունը իջուցանելով ընկալաւ այս շնորհացութիւնը թագուհին մարդասիրութեամբ բարձրացրեց նորան, հրամայեց նորան հանգստանալ մի նստարանի վերոյ արբայական ամեռոի մօտ և սկսանել իւր պատմութիւնը ։ Այս պատմութիւնը լինելով պարզ և ամենայն զարդարանքից մերկ, ոչնու ամենայնիւ ունեցաւ այնքան ընդհանուր, ինչը ան խոր և ազդու ներդործութիւն, Կա ոչ թէ միայն հաւանելի եղաւ բոլոր ունկնդիրներին, այլև հիացք ու զարմացք բերեց նոցա վերոյ: Կոլուրոսը իւր պատմութիւնը վերջացրած, թագաւորը և թագուհին խոնարհեցան ծնկերի վերայ և մեծ հանդիսով գոհութիւն մատուցին Աստուծուն, որ պյառէս բաղդաւորել էր իւրեանց թագաւորութիւնը: Ապա կատարեցին իւրեանց միւս շնորհակալական պար տականութիւնքը դեպ ի նոր աշխարհի բացողը: Կոլուրոսը իւր բոլոր գերդաստանով ստացաւ սպանիական ազնուականի կոչումն, և նորա հետ կապած գաշնաւորութիւնը հաստատվեցաւ փասահեղ հանդիսով: ոչինչ պատիւ և մեծարանք չեին համարում շատ վեր քան թէ նորա անձը և արժանաւորութիւնը: պալատի բոլոր մեծամեծքը խոնարհումէին նորա առաջնեւ, որպէս նոյն իսկ թագաւորի և թագուհու առաջնեւ: Թագաւորը երկելով հրապարակաւ, իւր հետ ուներ միշտ իւր որդին և ծովագետը, մինը աջակողմանը և միւսը ձախակողմումը: Թէպէս և Կոլուրոսը այդ բաների համար սառն չեր, բայց աւելի, քան թէ այդ բոլոր ունայն պատուացուցութիւնքը, ուրախացնումէին նորան այն հաստատապէս պատրաստութիւնքը որ պիտոյ է նորան կարողութիւն տայինն յառաջ տանել իւր յայտնագործութիւնքը և մանաւանդ որոնել, գտանել և տիրապետու ոսկեհանքերին: Երբ որ այս պատրաստութիւնքը գլուխ էին եկած, ոչինչ բանով չեր կարելի յետ պահէլ Կոլուրոսը: Համեմատելով առաջին պատրաստութեան հետ, այս անգամի պատրաստութիւնը ի հարկէ առելի մեծ էր: Նորա նաւախումբը բաղկանումէր 70 նամւերից որոնց վերայ կային 1500 մարդ: Ըստ որում գլխաւորապէս դիտաւորութիւն ունեին մի տևողական գաղթաքաղաք հիմնել Հիսպանիուա կղզու վերայ, ուրեմն ոչինչ անփոյթ չարեցին, որ կարող էր հարկաւոր լինել այդ գործի համար. 1493 մտաւականին, Սեպտ. 15 ին, ծովագետը դուրս գնաց կադիբս քաղաքի ծովածոցից, ուր այս անգամն նորա նաւերը պատրաստվումէին: Կա իսկոյն ուղղեց իւր ճանապարհը աւելի դեպ ի հարաւ, քան թէ առաջին նաւարկութեան ժամանակը, և քսանօրեայ ուղևորութենից յետոյ, առանց մեծ դժուարութեան կամ ձախորդութեան, հասաւ կարսոյթեան կղզիներից մինին որ այժմ՝

յայտնի է անունովս Կռնչ Հոռի Դավիթի: Այս կղզիներից շատերին անսութիւն արած, ուղղեց իւր ընթացքը դէպ ի հիւսիսակողման արևմուտք, և Նշյեմը. 22 ին հասաւ Հիսուսնիոլոյին որ նորա ոյժման ճանապարհորդութեան զիմաւոր նպատակն էր: Շատ ցաւ եղաւ Կոլոմբոսին, տեսանել այս տեղ, որ իւր առաջին փոքրիկ գաղթաշենքը քանդած ու աւերած էր և այն տեղ յիս թողած ընկերքը իւրեածց յատուկ անխոչեմութեան և վայրենարարոյութեան պատճառով սպանված էին: Փոխանակ տեղիք տալու այն վրէժինդրական խորհուրդներին որ տալիս էին նորան իւր այժմեան ընկերակիցների շատերը, և փոխանակ պատերազմ բանալու բնակիցների հետ, նա ևս առաւել ջանք արեց շափառութենով, իմաստութենով և մարդասիրութենով վերստին գրաւել նոցա հաւատը և ամուր պահել նորան: Կոլոմբոսի զովանի ջանքը և աշխատութիւնը արդիւնաւոր գտանվեցան ամենագեղեցիկ օրինակով:

Այս միջոցումը հոգ տարաւ Կոլոմբոսը, մի երկրորդ աւելի մեծ գաղթաբազար շինելու և տալու նորան մի աւելի հաստատ տեսողականութիւն: Այս ջանադրութեան պատուղը եղաւ մի ամրաշնչ քաղաք որին նա, Կաստիլիայի թագուհու պատուի համար, անուն դրեց Յելլել: Այժմուց ահա մի տհաճութեան հոգի տարածվեցաւ նոր գաղթականների շատերի մէջ, որ և անհամար ցաւեր ու վշտեր պատրաստեց Կոլոմբոսին: Եւրոպայից եկողների մեծ մասը հրաժարվել էր հին աշխարհից այն մորով, որ նոր աշխարհի մէջ անաշխատ և անջան կերպով մեծամեծ գանձեր ժողովէ, բայց սորա հակառակ, դոքա տեսան այս տեղ աւելի ծանր աշխատութիւն, քան թէ սովոր էին հին աշխարհումը: Այլև այս գանձերը ըստ մեծի մասին պիտոյ էր վտանգաւոր և բազմաշխատ կերպով յայտնագործել: կամ թէ շարունակ ջանադրութենով դուրս բերել հոգի տակցը, Այդ գաղթականքը, յած մարդերի պէս բամբասումէին Կոլոմբոսին, որպէս թէ սա խաբել է նորանց, թէպէտ այս տեղ մեղաւոր էին նոցա ծուլութիւնը, տգիտութիւնը և ագահութիւնը: Յառաջացան զաւադրութիւնք, որ ծովագետը կարողացաւ միայն խափանել, գործ զնելով իւր բոլոր խոչեմութիւնը և իշխանութիւնը: Այս գործը աւարտած, Կոլոմբոսը սկսեց շարունակել իւր յայտնագործական ճանապարհորդութիւնքը: Հրաժարվելու ժամանակը, նոր գաղթաբազարի կառավարութիւնը յանձնեց իւր փոքր եղբայր Գիեգային, կարգելով սորան քաղաքապետ Յեղաբէլի: Հինգ ամիս տեւեց այս ճանապարհորդութիւնը որի մէջ ամենայն տեսակ տառապանքների հետ պիտոյ էր Կոլոմբոսին պատերազմէլ, առանց մի աւելի

մէծ աշխարհ գտանելու բաց ի Եամայկա կղզուց։ Անդադար աշխատութեան և բազմօրինակ վտանգների մէջ, վերջումը հարկաւոր էր տանել և պահասութեան և սովի։ Ոչինչ տեղ այնպէս յայտնի, չերեւեցան կոլումբոսի բազմատեսակ քանդաբըզ, նորա քաջարտութիւնը, նորա հոգու արթնութիւնը, նորա կամքի անխորտակելի հաստատութիւնը։ ինչպէս այս ծովընթացութեան մէջ, բայց և ոչ մինը չեղաւ այնպէս հոգեմաշ նորա համար, որպէս սաւ Իւր անձանձիր ջանահարութեանով ու զգաստութեանով փրկեց նա իւր ընկերակիցքը, իւր նաև բըզ, իւր յայտնագործութիւնքը։ վերջումը փոքր էր մացել, որ իւր կեանքը զօհ բերե ոյս փրկագործութեան համար։ Մի ջղախտական ցաւից ըմբռնված վերադարձաւ Հիսպանիոլա և շատ ու շատ միսիթարվեցաւ միւսանգամ տեսանելով և համրուրելով իւր Եղբայր Բարթոլոմէոսը։ Այս երկու սրտակից եղբարբը տասեն րկուտարի բաժանված էին միմէանցից առանց անդեկութիւն տասնալու միմէանց մասին։ Այս բանը հեշտ կարող էր պատահել այն ժամանակներումը, երբ որ դեռ ևս ծանօթ չէին աւելի ապահով և յաջող հալորդակցական ճանապարհները, լրագիրը և թղթատարը։ Բարթոլոմէոսի ջանագրութիւնքը Անգլիայի մէջ անպառող էին մացած։ սորանից յետոյ եկած էր ֆրանսիա, այն յուսով թէ այս տեղ աւելի բազդաւոր կը լինի։ Փարիզումը հասաւ նորան այն ուրախաբեր լուրը թէ իւր Եղբայր առաջին յայտնագործութիւնը յաջողութեամբ գլուխ է եկել, Կա շապակեց Սպանիա, որ դործակից լինի իւր Եղբայր միւս ձեռնարկութեաներին։ Հասած լինելով այս տեղ, լոեց որ նա միւսանգամ ճանապարհ է ընկել աշա, բայց հրաման ստացաւ թագուհուց, մի քանի նաև կերակրեղէնով և այլ հարկաւոր պիտոյքներով բեռնաւորած, տանել Հիսպանուիլիա, ուր և կանուխ վերայ հասաւ նա, որ սովից և մահուց փրկէ գաղթականների կեանքը։ — Ոինչեւ այս բաները լինումին, Կոլումբոսի նախանձողքը և թշնամիքը Սպանիայի մէջ անգործ չը մացան։ սոցա բամբասական զըրպարտութիւնքը այնքան շուտով մուտք և կամակցութիւն ստացան, ինչքան շուտով և ինչքան վեր բարձրացել էր Կոլումբոսը, համարեալ թէ արքայական մէծարանքի հասանելով, երբ որ վերադարձած էր իւր առաջին ուղեկորութենից։ Այն իրողութիւնը, որ մի թագաւորական գործակալ էր ուղարկված գաղթականների գանգատքը քըննելու Հիսպանիայի մէջ, աւելի վիրաւորութիւն պատճառեց Կոլումբոսին, քան թէ նոյն իսկ գործակալի վարեցողութիւնը նորա հետ։ Կա անարժան տեսաւ իւր համար, այլևս մասլ իւր փոխարքայութեան մէջ, ինչքան որ ներկայ էր այն տեղ գործակուլը։ Աշնպէս

Հարկաւոր տեսաւ նա ոչ թէ միայն հնարել ընդդէմ իւր թըշ
նամիններին և ամաչցնել նորանց, այլև նոր օգնութիւն ձևոք բե-
րել իւր վաղուց սկսուածների և այլ միւս յայտնագործական առա-
ջարկութենների մասին: Այս պատճառով վճիռ կազեց նա, որ վերա-
դառնայ Սպանիա, և իւր եղբայր բարթոլոմեոսը տեղակալ կարգե-
լով, և Քրանչխօսու Տօլդանին յանձնելով գլխաւոր դատաւորի պաշ-
տօնը, 1496 թուականին, Մարտի 20 ին, երկու հարկու քսան և
Հինգ մարդով իւր երողական ընկերներից, և երեսուն մարդով իւր
հնդիանացի հպատակներից նաւ մասու, որ դայ Սպանիա: Աւ այս ճա-
նապարհորդութեան մէջ պէսպէս նեղութիւնք պատահեցին նորան,
վերջումը սովոր Կանարան հարկաւոր էր այս տեղ իւր բոլոր իշ-
խանական կարողութիւնը և զօրութիւնը գործ դնել, որ թըշ ըլ
տայ իւր երողացի ընկերներին մորթել և ուտել իւրեանց հետ վեր
առած հնդիանացիքը, ինչպէս ումանք խորհուրդ էին տալիս, կամ
թէ, ինչպէս միւսները կամենումէին, նաւից դուրս ձգել նորանց, որ
այդպէս փոքրանայ իւրեանց սակաւացած պաշարի մասնակիցների թի-
ւը: Կոլոմբոսը հաւատացրեց նոյց, որ շուտով տեսանելու են ցա-
մաք, և միւս առաւտուն կատարվեցաւ նորա խօսքը և պատկիցաւ
նորա մարդարիութիւնը և արիարտութիւնը: Նաւողների տեսած
ցամուքը Սպանիայի եղիքն էին, ուր և այժմ առանց դժուարու-
թեան հասան: Խօսից միւս օրին վեր կացաւ ծովագետը և ճանապարհ
ընկաւ դէպ ի Բուրդոս, ուր այն միջոցին դասնվումէր պալատը: Կո-
լոմբոսի տեսութիւնը քանուեց ու քայլուց իւր նախանձորդների և
բամբասողների բոլոր դարանադործութիւնքը: Ասկին, մարդարիոսը
և միւս թանգարին բերքերը որ դուրս հանեց եկաւորը, ոչինչ այլ
րանի կարօտ չէին, որ արդարացնեն նորան. այդ բանները տեսանե-
լով Քերդինանգոսը և Յեղարէլը, զգացին իւրեանց մէջ ամսիթապար-
տութիւն, որ և աշխատումէին վարագուրել, մէծ պատիւ ու հաւատ
ցուցանելով ծովագետին: Այն գանգատաների մասին, որ արած էին
նորա վերայ, ոչինչ յիշատակութիւն չեղաւ: Ուրախութեամբ լսե-
ցին Կոլոմբոսի փառահեղ խօստանունքին որ յայս ուներ նա իրազոր-
ծել, ինչպէս հաստատումէին աչա նորա ցյց տուած, արդարեւ պատ-
ուելու արժանի արդիւնքը: Կոլոմբոսի խորդուածքը յօժարութեամբ
լսեցին և հրաման արձակեցին, ինչքան կարելի էր շուտով կատա-
րումն տալ նոցա: Բայց նորա հակառակորդները աւելի ևս զայրանա-
լով այն բանի վերայ, որ իւրեանց խորհուրդները չը յաջողվեցան,
կամցան գոնեայ մի փոքրահոգի միսիթարութիւն մարել իւրեանց
համար, աշխատելով յետ ձգել, դժուարացնել նոր պատրաստութեան

յառաջադիմութիւնը և այդպէս ցաւեցնել նորան։ Կոլոմբոսի զիմացկոտ համբերութիւնը թէպէտ յետոյ, բայց այնու ամենայնիւ յաղթող հանդիսացաւ։ Մի զլօսաւոր գժուարութիւն թեթևացնելու համար, որ էր նոր գաղթաքաղաքի հարկաւոր եղած մշակները ձեռքբերել, Կոլոմբոսը սխալվեցաւ առաջարկելով զուրս հանել բանտարկած յանցաւորքը, որ կարող էին միայն վնասակար լինել։ Անքապէս, 1498 թուակ. Յուլիսի 4 ին, կարողացաւ Կոլոմբոսը ճանապարհ ելանել, որ կատարէ իւր երրորդ յայտնագործական ծովագնացութիւնը։ Նորա նաւերի թիւը վեցից աւելի չէր, որ և շատ տըկար էին մի երկարանու վտանգաւոր նաւարկութեան համար։ Այդու ամենայնիւ այս անգամն ունէր նա աւելի ճիշդ և աւելի լոյնարձակ խորհուրդներ։ Կանարեան կղզիների մօտից իւր նաւերի երեքը նոր գաղթականներով և պաշարով ուղարկեց դէպ ի Հիսուսիոլա։ Միւսների հետ միասին շարունակեց իւր ճանապարհորդութիւնը, նոր աշխարհներ որոնելով, և այժմ ուղղեց իւր ընթացքը աւելի շատ դէպ ի հարաւ քան թէ առաջին միջոցներումը։ Այս ճանապարհի վերայ բացեց նա ոչ թէ շատ միւս կղզիներ և սոցա մէջ Տրինիդադ կղզին, այլև Ամերիկոյի ցամաքահողը։ Նոյնպէս շատ զգաստութեամբ քննեց ծովեզերեայ աշխարհները, մանաւանդ այն ցամաքահողքը որ ծանօթ են մեզ այժմ նորա տուած անուններով Պորի և Կաման։ Հաւաստութիւն գտանելուց յետոյ, թէ Ամերիկան չէ կղզի, ինչպէս կարծումէր սկզբեց, այլ ամուր ցամաքահող, այլև անսանելով իւր նաւերի ողբարի դրութիւնը, պաշարի պակասութիւնը, այս և իւր առողջութեան քայլութիւնը և ընկերների վաստակածութիւնը, ուշ զեց իւր ընթացքը դէպ ի Հիսուսիոլա և յաջողութեամբ հասաւ այս տեղ Օգոստ. 30 ին։ — Այս միջոցներումը տչաճ՝ զաղթականներէց շատերը եկած էին Սպանիա և գանգատ գանգատի վերայ յառաջ էին բերում փոխարքայի ըսնակալութեան մասին և իննդրումին իւրեանց կրած վնասի համբարէն։ Ծովապետի բոլոր թըշնամիքը և նախանձորդքը ձեռք ու ոտք ստոցան, և նոցա մէջ աւելի զօրաւորը, եպիսկոպոսը Բուրգոսի, ամենից առաւել գործունեաց գտանվեցաւ։ Ֆերդինանդոս թագաւորը յօժարութեամբ ունին մատուցանելով (ականջ զնելով) բոլոր գանգատներին և վաստականութեններին, անյօժար չեղաւ գործ զնել ամենայն պատեհ միջոց, որ իւր կասկածամութեան և նախանձուութեան թշնը դէպ ի Կոլոմբոս, աղջէ և իւր ամուսին Յեղաբէլի մէջ։ Թագուհին մի քանի ժամանակ ընդդիմացաւ այս բանին, բայց վերջումը ամենայն կողմից ըստիպվելով, խախտվեցաւ և նորա հաւատը և յարգութիւնը դէպ ի

ծովագետը։ Կա տեղիք տալով իւր ամռանու և բուրգունան եպիսկոպոսի միարան խորհուրդներին և հարկադրանքին, միւսանգամ գործակալներ ուղարկեց Հիսուսնիուլա, որ քննին կոլումբոսի գնացքը, Կոլոմբոսը անպատճելի շարժարանքով կարգ դրած և խաղաղութիւն հաստատած դադմաքազքի մէջ, աչա երեւցաւ Բորադիլլա թագաւորական գործակալը և բոնութեամբ փակեց Կոլումբոսի բոլոր գայքը, ապա ուղարկեց նորան արքայական հրամանի օրինակը այսպիսի պարունակութենով։ Այս պատգամաբերը, Քրանչիսկոս դը Բորադիլլա անունով, հրաման է ատացել թագաւորի և թագուհու կողմից յայտնել նորան մի քանի բան. ուրեմն պարտական էր նա հաւատ ընծայել և հնաղանդել որպան։ Կոյն միջոցումը պահանջեց Բորադիլլան, որ Կոլումբոսը ատեան զուրս զայ, համար ու հաշիւ տալու իւր կառավարութեան մասին։ Թէպէտ այս ընթացքը հիացք բերեց Կոլոմբոսի վերայ և խոր խոցեց նորան, և թէպէտ նա հեշտ կարող էր հնարք գտանել ազատելու իւր անձը այս անարգանքից որ պատրաստել էին նորա համար, բայց ամենեին կամք չունէր և մի փորձ փորձել այդ մասին։ Կոլոմբոսը ոչինչ վիրաւորութիւն և աշաճութիւն ցոյց ըստ տալով, հնաղանդեց թագաւորական հրամանին, և վստահանալով իւր անմեղութեան վերայ, անյապաղ գնաց դատաստանի առաջնեւ։ Բայց Նկած չեկած հանդէպ, խոկցն Բորադիլլայի սպասաւորքը յարձակվեցան նորա վերայ, կապեցին նորան զդմայով և տարան ձգեցին մի նաւ. Նոյն բանը պատահէց և նորա եղբորներին։ Կոյա դրութիւնը աւելի խիստ զգալի կացուցանելու համար, ինչպէս յատկապէս հրամայած էր Բորադիլլան, ամին մինը մի ջոկ նաւի մէջ փակեցին, և առհասարակ ամենուն ջանք դործ դրեցին որ անարգանք անարգանքի վերայ կուտակին և շատ կոկծեցուցիչ կերպով հասկացնեն ծովագետին իւր կործանումը, որ կարծումէին թէ հաւաստի լինելու է։ Բորադիլլան կամենալով այնպէս կորել Կոլումբոսի ճանապարհը, որ նա երբէք ըստ կարողանոյ դլուխ բարձրացնել, հարցուփորձ էր արած նորա ամենակատաղի մշնամիներից, արձանադրել էր Նոյա ասածները և այս գրուածքը Կոլումբոսի հետ միասին ուղարկել էր դէպ ի Սպանիա։ Կաեւրի առաջնորդին ճիշդ հրաման էր տուած, որ հասանելով Սպանիա, բոլոր երեք Եղբայրը որպէս և դատաստանի թուղթերը յանձնեկ քննիքքա և պիտի կոլումբոսին։ Ով կարող է Նկարագրել այն զգացողութիւնքը որ այժմ՝ դղբդումէին Կոլումբոսի սիրտը, Բայց և այժմ ցոյց տուեց նա իւր հոգու զօրութիւնը և մեծութիւնը մի հազուազիւտ կերպով, այս աւելի անտարակիցս կերպով, քան թէ որ և իցէ զրութեան մէջ առաջն ժամանակներում։

Անպղտոր բարձրահոգութենով համբերեց նշնպէս բոլոր վիրաւուրութենների մէջ առաւել դժուարատանելի վիրաւորութեանը, այսինքն պյնպիսի մարդերի ապերախտութեան և արհամարհութեան, որոնց բարերար էր գտանվել, որոնց անցիշալար սիրտ էր ցոյց տուել: Նոյնպիսի խաղաղ վանականութեամբ ընդունեց նա այն վկայութիւնը և մեծարանքը, որ նաւերի հրամանատարը, հեռացած լինելով կը դու երեսից, խեցյան ցոյց տուեց նորա արժանաւորութեանը. այս էր Կոլոմբոսի մի հատիկ միսիթարութիւնը այն բաղմատեսակ անարդանքի մէջ: Ալֆօնզո դը Ալելէյօ առաջնորդը այն նաւի, որի վերայ ծովագետը պահպօներ այժմ որպէս կալանաւորված (կազած) յանցաւոր, պատուով ու պատկառանքով մօտեցաւ սորան, երբ որ աչքից կորուսած էին կզզին, և յայտնեց թէ յօժար էր արձակել Կոլոմբոսի կազանքը: Աչ, ասաց Կոլոմբոսը. այդ կազանքը կրումէմ ևս իմ տիրոջ հրամանով, որ ինձ ինչպէս այս տեղ, նոյնպէս ամենայն տեղ գտանելու է հնաղանդ. նա միայն կարող է ինձ ազատութիւն տալ, որի հրամանով խլած է ինձանից իմ ազատութիւնը: Բայց նորա ոչ մի ծովագնացութիւնը չէր եղած այնպէս յաջող և ոյնպէս շուտով աւարտված, որպէս այս. 1500 թուակ. Կոլոմբ. 23 ին ներս վաղեց նաւը Կադիբսի նաւահանդասի մէջ: Կոյն օրին Կոլոմբոսը թուզի գրեց թագաւորին և թագուհուն, հանդարտ և համեստ կերպով իմաց տալով նոցա իւր գալուստը, և թէ ինչպէս վարվել էր իւր հետ բորադիլլան: Այս նամակը առած շտապեց Կոլոմբոսի հաւատարիմ ղեկավարը Անդրեաս Մարտինոս դէպ ի Գրանադա, ուր այն միջոցին գտանվումէր պալատը: Կոլոմբոսի նամակի պարունակութիւնը շարթեց մանաւանդ թէ թագուհու ամօմթը և գումթը: Խիկյն պատասխան գրեցին նորան շատ քաղցր ոճով և հաւատացուցին նորան, որ շուտով վերատին ստանալու է իւր արժանաւորութիւնքը և պատուաւոր պաշտօնքը, և հրահիրեցին նորան, որ գայ պալատը. այլ և ուղարկեցին արծաթ, որպէս պատրաստութեան և ճանապարհի ծախը: Այս պատասխանագրի հետ միասին հրաման եկաւ, խեցյան ազատութիւն տալ Կոլոմբոսին և ցուցանել նորան ամենայն պատիւ և չնորհ: Կոլոմբոսը երևեցաւ պալատումը. նորան ընդունեցին սովորական մեծարանքով և հանդիսաւոր ունկնդրութիւն արեցին նորան: Երբ որ նա մստեցաւ թագաւորին և թագուհուն, վայր ընկաւ ծընկերի վերայ, և իւր սրտի մէջ մի սաստիկ պատերազմ պատերազմելով, մի քանի ժամանակ մնաց այս դրութեան մէջ, առանց մի խօսք բերանից հանելու: Ապա վեր ուղղեց իւր անձը այնպիսի պարզ ծանրութենութեանը ինչպէս յատուկ էր նորան, և սկսեց մի երկար ճառով

արդարացնել իւր անձը։ Այն խաղաղութիւնը և ծանրութիւնը նորա խօսուածքի մէջ, և այն խորին վիրաւորութեան մէջը ու ազնիւ բացայացութիւնը որ և անդխութեամբ խառնվումքը նորա ասածների հետ, այնպիսի զրաւոր վկայութիւնն և հոգեշարժութիւն տուեցն նորա խօսքերին, որ Յեղարէլը հիացած մնաց և ինքը ֆերդինանդուը հարկադրվեցաւ զսպել իւր անսիրելութիւնը դէպ ի նա, և համաձայնել իւր ամուսնու ճշմարիխ և առ ի սրտէ ցցց տուածցաւակցութեանը և զմութեանը։ Կա չը հակառակից նշյալքս այն խկզյն հաստատած վձմին, որանով Բորադիլլան պիտոյ և հանվէր իշխանութենից։ Այս էր այն առաջին հատուցումը որ լիովին խօսացան ծովագլետին։ Վսպա խօսք բացիցցաւ նոր և մեծ պատրաստութենների վերայ, որ կարող էին Կոլոմբոսին հնարաւորութիւն տալ վերջացնելու իւր յայտնագործական սկսուածքը և ընդարձակելու նորա փոխարքայութիւնը։ Բայց որովհետեւ պյս բաները կարոտ էին ժամանակի, և Բորադիլլան հանած էր իշխանութենից և հարկաւոր էր բառնալ նորա խարդախութիւնը և անկարգութիւնը որ շատ յանդիմանած էր Կոլոմբոսը, վասն այս պատճառի մի քանի ժամանակով մի այլ տեղակալ ուղարկվեցաւ Հիսուսնիոլա։ Կոլոմբոսից ծածուկ չը մնաց այն զաւաճանութիւնը որանով յառաջացած էր այս բանը. այսպէս աշա նոր և ամենախորին վիրաւորութեան տեղիք բառնալով Կոլոմբոսը չը կարողացաւ այնուհետև զսպել իւր անձը, այլ համարձակվեցաւ յայսնի ցոյց տալ իւր ահաճութիւնը։ Ուր և զնումը նա, տանումէր իւր հետ այն կազմնքը որանով Բորադիլլան անպատիւ էր արել նորան, որ և հրամայց Կոլոմբոսը կախ տալ իւր սենեկի մէջ որպէս յիշատակ և վկայ այն ապերախտութեանը որ արած էին նորան, փոխանակ իւր այնքան աշխատութենների և երախտագործութենների։ Այս միջոցումը նոր տեղակալը ճանապարհ ընկաւ դէպ ի Հիսուսնիոլա։ մի քանի այլ շըլմութիկ մարդիկ և սոցամշ Վեներիգո Վեսպուչչին ծովագնաց եղան, որ նոր աշխարհներ բանան, և այս ծովաշրջութիւնքը առիթ տուեցին այն բանին, որ յետայ յափշտակվեցաւ Կոլոմբոսից և ցամուք հողի յայտնագործութեան պարհանքը։ Նորա ամբազինդ միրու յիրաւի չը դրդվեցաւ, բայց ցառեցաւ. նորա աշխատասէր հոգին և տարուց տարի ծանրացած հասակը օրէ օր յայտնաբարբառառ ազդումէր նորան այն բանը, որ գեռ ևս կարելի էր յառաջ տանել. բայց նորա անյաջող բաղդը պահումը նորան որպէս մի անդործ մարդ, պալատումը կապած ու կաշխանդած։ Ժամանակ առ ժամանակ նորոգումէր նա իւր պահանջողութիւնքը, այսինքն, որ վերատին ստանայ իւր փոխարքայութիւնը, որ կատար-

վի այն դաշնը որ օրինաւոր կերպով կապած էր նորա հետ, որ և
ինքը իւր կողմից, ինչպէս հարկն է, կատարած էր: Խնչքան աւելի
և համարձակ պահանջումներ կոլորմոսուր, ևս առաւել նորա թշնամիքը
աշխատումէին գործ դնել իւրեանց ազգեցութիւնը քերդինանդոսի
վերայ, որ սա չը հատուցանէ Կոլոմբոսին իւր արդարացի վարձը:
Քերդինանդոսուր սյնպէս բնաւորված լինելով որ ամեննին անկարող
էր մաքուր սրտով յարգել մի մարդ, մի և նոյն բանը որ բարեմիտ մար-
գերին պատճառ է տալիս պատուելու ընկերը, ներգործումներ նորա
մէջ երկիւղ և կասկածոտութիւն միայն: և սորա նոյն չափով զօ-
րանումնեն, ինչ չափով նա ստիպված էր խոստովանել ուրիշի մեծու-
թիւնը և գերազանցութիւնը: Առ փոքր փոքր յաջողվեցաւ նորան,
նոյն զգացողութիւնքը արմատացնել և թագուհու սրտի մէջ: և սա
սկսեց տեղիք տալ այն մասածութեանը, թէ մի մարդ որ այդպէս հա-
մարձակ և տեղապահ պահանջումներ, որ այդպէս երկաթի պնդութե-
նով հաստատ էր իւր իրաւունքի վերոյ, այլև այժմ բազմօրինա-
կաբար վիերաւորված էր, մի այդպիսի մարդ ունենալով անպայման
իշխանութիւն հեռաւոր աշխարհներում, հեշտ կարող էր վասահա-
նալ անկախութիւն ձեռք բերել և Սպանիայից յափշտակել այն ար-
դիւնքը, որոնց պատճառը լինելով նա ինքը, այդպէս անարժանապէս
վարձատրված էր: Այսպէս, թագուհին ամօնթապարտ լինելով իւր
մէջ, որ ապերախտ ու անիրաւ է գտանլիւ, մտքումը անկեց, որ նո
առաւել ապերախտ և անիրաւ գտանլիւ: Ոորա հետեանքը պին եղաւ,
որ Կոլոմբոսը միշտ ունայն խոստունքով յետ ձգվեցաւ, ապա օր
ըստ օրէ աւելի սառնութեամբ ընդունվեցաւ և վերջապէս, համարեա
թէ երկու տարի խնդրելուց ու սպասելուց յետոյ, վերահասու ե-
ղաւ, որ անօգուտ էր այդքան ցածացնել իւր անձը, ըստ որում կամք
չունէին երբէք կատարել այն խոստունքը որ արած էին նորան:
Այժմ, նորա հոգին շուտով դէպ ի վեր բարձրացաւ, որ արհամար-
հէ այն մեծամեծների վատթարութիւնը, որ կամենութիւն գետին զար-
կելնորան: Կոլոմբոսը տեսանելով այդքան յայտնի ապերախտութիւն,
վճիռ կապեց, որ Հրաժարվի ամենայն վարձապահանջութենից և պը-
սակէ իւր գործը, ըստ որում սկսած էր միանգամ, և նորանից յա-
ջանալու էին անշափելի շահաւետութիւնք եւրոպայի և Սպանիայի
համար: Դեռ ևս կարծիք ունէր նա, որպէս թէ իւր յայտնագոր-
ծած յամաքահողը Ասիս էր: Բայց մի քանի ճանապարհորդների նկա-
տողութիւնք վկոյութիւն էին տուել նորան, թէ յամաքահողի միւս
կողմը ծով էր, որի վերայով կարելի էր հասանել Հնդկաստանին:
Հաստատեց մոքումը որ ինդրէ ճանապարհը գէպ ի այն անդ, և կար-

ծումբը շատ հեշտութեամբ գտանել նորան, անցանելով կարծեցած
դարիայի ծավանեղուցը: Այս գաղափարը որ վաղուց աշա ձևակեր-
պել էր իւր մէջ, սկսեց այժմ շատ և շատ զբաղեցնել նորան, ըստ
որում այս միջոցին Պօրտուգալացիք աւարտած էին յայտնագործու-
թիւնը այն ճանապարհի որ Բարի յուսոյ սարաւանդի մօտից գնու-
մը գէտ ի Ճնդկաստան, և առաջին, մէծ ճոխութենով բեռնաւորած
նաւը վերադարձել էր այն կողմից, Քարքալի առաջնորդութեամբ:
Կոլոմբոսը մոռացութեան տալով իւր վիշտը և պահանջելիքը, առա-
ջարկեց կառավարութեանը Շնարը տալ իւրեան, որ գոնեայ գլուխ
տանէ իւր խորչուրդը: Այս խնդրի կառարումը չը հանդիպեց պյու-
քան գժուարութենների, ըստ որում դորանով կէս մի պիտոյ է հե-
ռաջնմիքը այն տաղվարի պահանջով մարդը, և կէս մի հարուստ բեռ-
ներով յետ եկած Պօրտուգալացի նաւերը շատ բորբոքել էին և
Սպանիացոց ցանկութիւնը մասնակից լինելու Ճնդկաստանի գանձե-
րին: Այսպէս, վճիռ կապեցին և Հրամայեցին պատրաստութիւն տե-
սանել, թէպէտ այնպիսի չափած ու կշռած կերպով, որ գժուարու-
թեամբ միայն կարելի էր հասանել այն նպատակին: Ննջքան և աշ-
խատեց Կոլոմբոսը, չը կարողացաւ ստանալ չորս փոքրիկ նաւերից
աւելի, որոնց առաւել մէծը կարող էր տանել 70 տակառի ծանրու-
թիւն, և բոլոր նաւերի ժողովուրդը չէր աւելի քան թէ 140 ծո-
վագնաց մարդ: Ինչքան և շնչին էր այս պատրաստութիւնը, այնու-
ամենայնիւ Կոլոմբոսը վեհանձնութեամբ արհամարհելով փոքրահո-
գիների ամբարտաւանութիւնը և մօտածելով միայն թէ ինչպէս պիտոյ
էր գլուխ տանել իւր առաջարկութիւնը, չը պատկառեց և չամա-
չց ճանապարհ գնալ այնպիսի նաւերով, որպիսի նաւերով ինքը
Ֆերգինանդոսը և Յեղարէլը չը պատկառեցին և շամաշցին ճանա-
պարհ ձգել նորան, ամենամեծ ծովապետը այն ժամանակի և այն աշ-
խարհի, և այսպիսի մէծ նպատակի համար: Իւր եղբայր Բարթոլո-
մէոսը և իւր որդի Ֆերնանդո վեր առած իւր հետ, 1502 թուակ.
Մայիսի 2 ին դուրս վաղեց Կաղիքսի նաւահանգստից, և Յունիսի
25 ին հասաւ Աան Գոմինգո կղզու ծովասահմանին: Կա ստիպված էր
ակամայ կարբով գառնալ այս կողմը, ըստ որում նորա նաւերը վաս-
դրութեան մէջ էին: Այս պատճառով կուսակալիցը թշլուսութիւն
խնդրեց որ կարողանայ ներս վազել այն կղզու նաւահանգստը, կէս
մի սպասելու, մինչեւ անցանէ այն մըրիկը, որ յառաջընթաց նշանե-
րից գուշակումք Կոլոմբոսը, և կէս մի իւր անսպատանացած նաւը, և մէտ
կարելի էր, փոխելու մի աւելի պիտանացու նաւի հետ: Բայց այժ-
ման կուսակալը աւելի բարեացակամ չէր քան թէ առաջինը, գու-

յէ թէ երկիւղ ունէր նոյնպէս, թէ Կոլոմբոսը դիտաւութիւն ունի գարձեալ ձեռք բերել իւր փոխարքայութիւնը, կամ թէ ծածուկ հրաման էր ստացած այս մասին։ Աւրեմն անտես արեց ծովապետի խնդիրը և բանի տեղ չը ձգեց այն զգուշացուցիչ խրատը որ Կոլոմբոսը տուած էր այն նաւերին որ ճանապարհ էին ընկնում դէպ ի Եւրոպա, այսինքն սպասել, մինչեւ անցանէր մօտակայ մրրիկը որ Նկատած էր նա, ի վերայ այդր ամենայնի Կոլոմբոսը ելք ու հնարք գըտաւ պահպանել իւր սակաւ նաւերը գալոց գիշերին բարձրացած մրրիկի երեսից, դէպ ի Ապանիա արձակված տասն և ութ նաւերը իւրեանց բոլոր մարդերով ու բեռներով ալիքների կերակուր դարձան, բաց ի քանի միներից։ Այս տեղ, իւրեանց արժանի պատիժը գտան Բորբագիլլան և միւս շատ թշնամիքը և ցաւեցուցիչքը Կոլոմբոսի, սատակվելով ջրերի մէջ։ Այս տեղ ծովասայզ եղան այն բոլոր, անիրաւութենով ու հարստահարութենով հաւաքած և գերիած, գանձերը։ Այս նաւերը միայն փրկվեցան, որոնց վերայ գտանվումէին ծովապետի դցըը որ մինչեւ այժմ անարդարութեամբ փակած մնալով Ան Դամինգո կղզումը, այսուհետեւ թագուչու հրամանով աղասինցան և ուղարկվումէին իւրեանց տիրոջը դէպ ի Ապանիա։ Այս անցքը անցայտ չը մնաց, և ծովապետի բարեկամքը քարողեցին և փառաբանեցին աստուածային արդարադատութեան զարմանալի գործը։ Ծովագետը, ինչպէս նպաստակ էր դրել իւր առաջն, շարունակեց իւր նաւարկութիւնը դէպ ի Դամինգոյի ծովածոցը, բաղմօրինակ տառապանքներով մի քանի աշխարհներ բացեց, բայց անօգուտ եղաւ նորա որոնելը մի անցողական ճանապարհ, որ յառաջուց կարծել էր այս տեղ։ Կոլոմբոսը անպատճառ յայտնագործելու էր Մեխիկոյի աշխարհը, եթէ չը մոլորվելով մի սխալութեամբ, ուղղեցրած լինէր իւր ընթացքը դէպ ի արեմուտք և ոչ դէպ ի արեւելք. Այս ճանապարհորդութեան մէջ, բաց ի այլ ձախորդութեններից, վերայ հասաւ նորան մի աշաւոր մրրիկ որ ջաղջախեց նորա նաւերի երկուսը. մի նմանապիսի մրրիկ պատահելով նորան այն միջոցին, երբ կամեմը նա իւր երկու նաւերովը պատապարան որոնել Ճիսպանիօլա կրղզու վերայ, աւերեց նորա երկու միւս նաւերը և հազիւ թէ թշյլ տուեց նորան և նորա ընկերակիցներին փրկութիւն գտանել Նամայի կայի վերայ։ Այժմ Կոլոմբոսը մի այնպիսի դրութեան մէջ էր, որ չըր կարելի համեմատել բոլոր դրութենների հետ, որոնց մէջ փորձած էր իւր հաստատութեան և քաջարութեան շափը, Ոչինչ հընար չունենալով շարունակել իւր ճանապարհորդութիւնը, կամ թէ տեղեկութիւն տալ Ճիսպանիօլայի կուսակալին, երկումը, թէ նա

և իւր ընկերքը դատապարտված էին մշտնչենաւոր աքսորանքի մէջ անհոգ և անխնամ կորուստ դատանելու: Ի վերայ այսր ամենայնի ծովագետը շատ հետի էր նորանից, որ անձնատուր լինի անդործ յուսահատութեան: Իւր արդիւնաւոր հանձնարի և իւր անյօդզողդ հոգու մէջ միւսանգամ հնար ու յօյս դատաւ, երբ որ ահա և ոչ մի մարդ չէր համարձակվում ոչ մոտածել և ոչ հաւատալ այդպիսի բանի: Կոլումբոսին յաջողեց ձեռք բերել Եամսցկայի բնակիչների հաւատը և լաւակամութիւնը, որոնցից ստացաւ մի քանի մանր նաւեր, և այս նաւերով, որ դժուար թէ բաւական դիմացիոտ էին մի փոքր գետի վերայով անցանելու համար, ճանապարհ ձգեց իւր շատ քաջ և յաջողակ ծովագնացները, որ ովկիանոս ծովի վերայով հասանեն Հիսպանիուցին: Երկիւղալից հօգածութեամբ նայումէին այս անվիչէր նաւագնացների վերայ, երբ որ պիտոյ է գուրե գնային, երկիւղի և յայսի մէջ ասրոււբերվելով սպասումէին նոցա վերադարձին կամ նոցա ձեռքով հօգացած նաւերին: Բայց շաբաթներ և ամիսներ եկան ու գնացին, և չը հասաւ ոչ մինը և ոչ միւսը: Ահատութիւն եկաւ ծովագետի բոլոր ընկերների վերայ, և փոքր միջոցում նոցա մէջ մասը անձնատուր եղաւ բոլորովին յուսահատութեան: Մեղադրանք, անէծք և սպանալիք Տեղեղի պէս թափվեցան ամենայն կողմից ծովագետի վերայ: Ահատվածքը, բարկութենից Խելագարված լինելով, մահու վտանգը աւելի քան թէ մի անգամ կախած էր Արումբուի գլխի վերայ: Բայց ոչ այս իրողութիւնը և ոչ իւր անփրկելի դրութիւնը չը կարողացաւ խախտել նորան: Ի զուր էր նորա ջանքը, խնդրելով խրատելով և խոստանալով չափաւորել յուսահատների կատաղութիւնը և նոր յօյսեր կենդանացնել նոցա սրտի մէջ: Սոքա աիրապետեցին մի քանի նաւակների, որ Կոլումբոսը գնած էր վայրենի կղզարնակներից, և հրաժարվեցան իւրեանց ծովագետից, որ տեղափոխ լինին կղզու միւս բաժնի վերայ: Այս տեղ շատ աւելի վատթարացրեցին իւրեանց դրութիւնը, գաղանական կատաղութեամբ վարվելով բնակիչների հետ: Սոքա զսյրանալով օտարականների վերայ, չը կամցան կեանքի պաշար տալ ոչ թէ սոցա միայն, այլև նոցա, որ մնացած էին ծովագետի մօտ: Այլև յօյսնեցին իւրեանց դիտաւորութիւնը, թէ կամաց կամաց սովամահ և սրակոտոր առնելու են այս տաղոսկալի հիւրքը որոնցից ոչինչ ոյլ կերպով չը գիտէին աղատել իւրեանց անձը: Այս զարհութելի և, ինչպէս երեսումէր, ամենայն անփախչելի վտանգի մէջ, Կոլումբոսը այնու ամենայնիւ փրկութեան ճանապարհ դատաւ իւր, հնարագիտութեամբ անըսպառելի, հոգու մէջ: Այս բանը պատահէց մի փոքր յառաջ, քան

թէ լինելու էր մի տեսանելի խաւարումն լուսնի, որ կոլոմբոսը ճիշդ
և ուղիղ հաշուել էր: Նրեկոյին հաւաքեց իւր մօտ իւր դրացի կը ը-
զեցիքը և ծանուցումն արեց թէ այն մօտ հոգեղեն էակը, որ պաշ-
տումն Սպանիացիք, որ և հովանաւոր էր նոցա, բարկացած է և վը-
րէժմնդիր կը լինի այն վարքի համար որ դոքա ցցց էին տուած
մինչև այժմ, և մանաւանդ այն չարախորչուրդ գործի համար, որ
ըլ կամեին ռուսելի պաշար հասուցանել Սպանիացոց: Որպէս հաստա-
տումիւն իւր Խօսքին, ասաց նոցա թէ այս գիշերիս կը խաւարի լու-
սինը: Կղղեցիքը սկզբումը այնքան երկիւղ չունեին այս բանից, մի
փոքր յետոյ զարհուրեցան, տեսանելով որ կոլոմբոսի նախասացու-
թիւնը կատարվեցաւ, և աչ ու գողի մէջ էին, մի գուցէ վշտացած
Աստուածը պատուի պատուհասի ածէ նոցա վերայ: Ծտապով վաղեցին
դէպ ի իւրեանց տուները, վերադարձան շուտով և բերեցին շատ կե-
րակրեղէն, և աղաջումէին նորան որ հաշուեցնէ այն բարկացած հոգե-
ղէն էակը, կոլոմբոսը խոստացաւ գործ գնելիւր բարեխօսութիւնը, և
մի փոքր յետոյ անհետացաւ այն արինային վարագոյրը որ ծածկել
էր լուսինը: Բարձրաձայն ուրախութենով ողջունեցին կղղեցիք նո-
րա վերստին պայծառացած, մաքրափայլ երեսի տեսութիւնը: Այսու-
հետեւ կոլոմբոսի մօտ եղած մարդիկը կարօտ չը մնացին ապրուստի.
Նոյնպէս չէր պակասելու նոցա և ապահովութիւնը, եթէ ինքեանք
ժամանակ պա ժամանակ խուզութեան պատճառ տուած չը լինեին:
Եղմկարար ծովագնացքը զանազան փորձ ու հնար գործ էին դրած,
փրկութիւն որոնելու իւրեանց հետ տարած նաւահների վերայ, բայց
անյաջող գտանվելով, ևս առաւել կատաղեցան և յուսահատվեցան,
Պակասութիւնը և սովոր ստիպեց նորանց յետ գառնալ ծովագնետի
մօտ, բայց ոչ թէ խոնարհելու և հնազանդելու համար, այլ իւր-
եանց կատաղութեան և անյուսութեան թշոյնը գուրս թափելու նո-
րա վերայ: Ծովապետը, որի ճակատի վերայ այնպէս էր գրած, որ
ամենայն տեսակ փորձութենների միջով անց կենայ, մի այնպիսի ծանր
փորձանքի մէջ էր այժմ, ինչպէս կարող էր միանգամ պատահել նո-
րան, կամ թէ առհասարակ տանելի էր մարդկային ռւսերի համար:
Նորա ընկերքը անհանդիսա պտուտելով ծովեղերեսյքի վերայ, մի
օր անօրինակ ուրախութենով իմաց տուեցին նորան, թէ մի նաւի
առագաստ երեսումէ հորիզոնի մօտ, և ասսե թէ աշխատումէր մօտե-
նալ ծովեղերեսյքին: Անհամերութեամբ սպասելով տեսան պատա-
համակ յանձնեց սորան, պատասխան ստացաւ սորանից, ապա վերա-

դարձաւ դէպ ի նաւը և սորա հետ միասին չքացաւ տեսութենից, Ամենեքեան շտապեցին ծովագետի մօտ, որ տեղեկանան նորանից թէ ինչ էր այս օտար եկաւորութեան խորհուրդը: Կոլոմբոսը երկու մէր զուարթ և ուրախ իւր ստացած տեղեկութեան վերայ. Նա պատմեց թէ այս նաւը եկած էր Սան Խոմինգո կղզուցը և հրաման ունէր վեր առնուլ իւրեան. բայց որովհետեւ կարող չէր բոլոր բազմութիւնը վեր առնուլ, այս պատճառով արժան տեսաւ ինքը յետ մնալ և մասնակից լինել իւր ընկերների վշտին, մինչեւ որ ամենեքեան կարող էին միասին փրկութիւն գտանել, ինչպէս պիտոյ է լինէր շուտով, միտ զնելով լրաբերի հաւատացուցիչ խօսքերին: Բայց ճշմարտապէս, ամենեին այլ էր թէ բերած նամակի պարունակութիւնը, և թէ այն նաւի եկաւորութեան խորհուրդը: Այդ նամակը և բոլոր լրաբերութիւնը մի ամենաղառն նախատինք և մի անողորմ արհամարհութիւն էր դէպ ի անբաղդ կոլոմբոսը. թղթաբերը նորա ամենաչար ոստիներից մին էր. նամակի զորութիւնը ոչ մի այլ բան չէր, եթէ ոչ, զատարկ ցաւակցական ձևեր, առանց հաստատուն առաջարկութենների և յուսագրութենների: Այն երկու վստահ ծովագնացքը, որ ուղարկված էին օգնութիւն բերելու, յաջողութեամբ հասանելով Հիսուսնիօլա, ամենայն հնարք գործ էին դրել, որ գրաւեն կուսակալի սիրտը իւրեանց ծովագետի և ընկերների փրկութեան համար: Կուսակալը կեղծաւորվելով, որպէս թէ յօժար էր կատարել գցա ինդիրը, բայց ևս առաւել կամենալով վիրաւորել կոլոմբոսը և քննել նորա որպիսութիւնը, ուղարկած էր վերցիշեալ նաւը, նաւալվարին պատուեներ տալով, որ շատ համեմատ էին այս մարդու շարակամութեանը դէպ ի կոլոմբոս, որ և նա կատարեց ամենայն ճշգրւթեամբ: Թէպէտ շատ խոր պիտոյ է դղբդղբ կոլոմբոսի սիրտը, այնու ամենայնիւ կարողացաւ նա իւր հաւատարիմ մացած, թէպէտ ամենեին յուսակոտոր ընկերների մէջ ազդել մի այնպիսի յօյս և հաւատ, որ ինքը չէր զգում իւր մէջ, որ և այժմ աւելի հեռի էին նորանից քան թէ մի այլ անգամ: Այս միջոցին յետ եկան խռովարակը. սոցա վերայ ոչինչ ներգործութիւն չունեցաւ այն լուրը որ ըսած էին կոլոմբոսի բերանից. նոցա կըր կատաղութեան հանդիպմունքը վերջապէս ստիպեցին ծովագետը սուր վեր առնուլ իւր անձնապահութեան համար: Կորա հաւատարիմ մացած ընկերակիցքը ամենայն յօժարութեամբ օգնեցին նորան. բանը հասաւ պատօքազմի, որի մէջ շատ մարդիկ սպանվեցան, և ապստամբների առաջնորդը բանվեցաւ բարթոլոմէէս կոլոմբոսի ձեռով: Միւսերը տեսանելով այս բանը, վախեցան և յօյսերը հատած, փախան: Կոլոմ-

բոռը իսկցյն ցած դրեց սուրը, որ շատ ակամայ, և երկար համբերելուց յետոյ ձեռք էր առած, նա պահանջեց փախստականներից, որ յետ դառնան, և խոստացաւ անյիշալարութեամբ հանդիսպել նոցա. Նորա հետևեցին այս հրամաններին, ստորագրվեցան Կոլոմբոսին և հանդիսաւոր երգումով ուխտ հաստատեցին, որ անպատճառ և տեւողապես հնազանդ գտանվին: Խելքի մօն բան էր, թէ յիրաւի և այս երգումը կը խախտէին շուտով, եթէ վերջապես չը հասանէր ազատութեան ժամը, Այն երկու, դէպ ի Սան Գոմինդո ուղարկած, մարդիկը միշտ և հանապաղ, ամենայն կերպով ջանադիր էին եղած հնարաւորել իւրեանց լնկերների փրկութիւնը, բայց չէին կարողացել այն տեղ հասուցանել գործը, որ կղզու կուսակալը օրինաւոր հոգաբարձութիւն առնէ այդ մասին: Վերջապէս նոցանից մինը, Անդէզ անունով, ծովապետի համար մի նաւ դնել տունց, որ և յաջողութեամբ հասաւ Եամայկային:

Ի՞նչ լեզու կարող է պատմել այն ուրախութեան զգացողութիւնքը այս վատաբաղդների, երբ որ այն անյուսալի, աւելի քան թէ մի տարի երկար կալանաւորութենից յետոյ կարող էին դուրս գնալ Եամայկա կղզուց: Երբ որ նորա հասած էին Սան Գոմինդոյին (1504 թուակ. Օգոստ. 13 ին), կուսակալը լնդունեց ծովապետին կեղծաւոր, համարեա թէ գետնաբարշ քաղաքալսրութենով, առաւ նորան իւր տունը և ցոյց տուեց նորան ամենայն տեսակ արտաքին մեծարանք: Բայց մի և նշն միջոցին հրամայեց կուսակալը արձակել այն խովանար գլխաւորը, որ կապած բերած էին իւրեանց հետ, և ահ տուեց թէ դատաստանով դատելու է այն մարդիկը որ նորան կապանքի տակ էին դրել, և առհասարակ ծովապետին սէր ու հաւատարմութիւն էին ցոյց տուած: Կոլոմբոսը արհամարհեց այն մարդը, որ կարող էր այդպիսի լնժացք ունենալ, անարժան տեսանելով նախատել նորա երկու երեսանի վարքը և այս նոր վիրաւորութիւնը: Վասն այս պատճառի շոապով վերադառաւ նա դէպ ի Սպանիա, որ ազատէ իւր անձը նմանապիսի անպատճութեններից, գուցէ և այն մաքով, որ թէ այս և թէ այլ մասին հատուցումն ովհանջէ: Երբ որ նորա նաւը նորոգված էր և առած էր մի այլ նաւ, հրաժարվեցաւ Սան Գոմինդոյից, և երկարաւոև շատ վտանգաւոր ճանապարհորդութեամբ, որ կրկնապատիկ տառապալից էր նորա համար իւր հիւանդութեան պատճառով, հասաւ Սպանիա և ներս վաղեց Սանտա Քրուցէի նաւահանգիստը: Բայց այս տեղ մնումէր նորան մի այլ վիշտ որ բոլորովին ոշնչացքեց նորա լյսուը, հատուցումն և փոխարէն ստանալու իւր տարած վեաների համար: Մի քանի շաբաթ իւր

գալուց յառաջ, Յեղաբեկ թագուհին փոխվել էր այս աշխարհից, ինչ յստ կար նորա համար այժմ, ինչ ակնկալութիւն կարող էր նա ունենալ ֆերդինանդոսից որ միշտ հակառակ էր եղած նորան, և որի շորս կողմը պատաճ էին Կոլոմբոսի ոստիքը և հալածողքը: Այս, Ֆերդինանդոսը քաղաքավարութեամբ ընդունեց նորան, ականջ դրեց նորա խոդիրներին և կեղծաւորվեցաւ, որպէս թէ յօժար էր կասարումն տալ նոցա, բայց դժուարանութիւր այդ մասին: այլէ, ըստ որում ծանրութիւն ունէր գործը, ուրեմն կը կամենար նա մի նոր պայման կապել Կոլոմբոսի հետ: Նորա հակառակ, պահանջումէր Կոլոմբոսը, որ կատարվի 1492 թուականի դաշնադրութիւնը, և այս բանին յօժար չէր թագաւորը, և չէր կարելի հաւանեցնել նորան ոչինչ իրաւացի պատճաներով, ոչինչ արդարութեան և մարդկութեան կանոններով: Կոլոմբոսը եկած էր հիւանդ Սպանիա, ոչ Յեղաբեկի մահուան տիրեցուցիչ լուրը և ոչ այսպիսի հանդիպումն ֆերդինանդոսի կողմց կարող էին ձեռնոտու լինել նորա առողջութեան վերստին հաստատվելուն: Կորա տեղական հիւանդուութիւնը և օր ըստ օրէ սաստկացած տկարութիւնը յշյս էին տալիս թագաւորին, որ մահը շուտով կ'աղատէ նորան այս շատ ծանձրացուցիչ մարդու ձեռքից, որի հանդարս համբերասարութիւնը նոյնչափ ծանր էր Ֆերդինանդոսի սրտին, ինչքան Կոլոմբոսի ժամանակ առ ժամանակ կրկնած պահանջողութիւնքը: Այսպիսի կերպով անցան դեռ ևս քանի մի տարի, խորին տիրամտութիւն և ստացած վերաւորութիւնների մտածութիւնը անդադար հալու մաշ աւնելով նորա կենդանական զօրութիւնը, որ և առանց դոցա բաւական մուլցած էր մեծամեծ աշխատութեններով և տառապանքներով: յաւելացրու սոցա վերայ և այն սրտցաւութիւնը Կոլոմբոսի, որ լսումէր թէ ինչ գաղանական անդմութեամբ Սպանիացիք կոտրումէին անբաղդ բնակչէքը իւր յայտնագործած աշխարհի մէջ:

Կոլոմբոսի կեանքի վերջին օրերումը, միւսանգամ լուսաւորվեցաւ: Նորա հոգին մի յշյսի ձառագայթով, երբ Փիլիպոս թագաւորը և Յովիաննե թագուհին եկան Գլանդրիսյից, որ աթոռ նստեն Կաստիլիայի մէջ: Կոլոմբոսը կարծումէր, Յեղաբեկի դուստրը պաշտպան ու բարեկամ լինելու է նորան, և թուղթ ուղարկեց արքայական ամուսիններին այսպէս: թէ յուսով էր նոցա ձեռքով կրկնն ըստանալ իւր արժանաւորութիւնքը և կալուածքը, և թէպէս այս բապէիս անհնարին տառապանքի մէջ էր, այնու ամենայնիւ կարող էր այնպիսի երախտագործութիւնք ցցց տալ Սպանիային, որ անօրինակ գերազանց էին անցածներից: Բայց այս բանը էր միայն վերջին

լուսափայլութիւնը որանով պայծառացաւ Կոլոմբոսի կրակոտ և անվաստակելի հոգին. կոտակ առնելուց և իւր պարտականութիւնը դեպի ի իւր մերձաւորքը արդարութեամբ լուցանելուց յետոյ, մեռաւ Կոլոմբոսը 1506 թուականին, Մայիսի 20 ին, եօթանասուն տարեկան, որպէս զօհ ամենալիր ապերախտութեան, որպէս աղքատ մարտցկան, նա որ սպանիական թագաւորութեանը մի աշխարհ էր բաշխել: Նորա վերջին խօսքերը էին. Ի ձեռս քո յանձն առնեմ զչոգի իմ, Տէր, Նորա մարմինը դրեցին սուրբ Ֆրանչիսկոսի վանքումը, և Նորա թաղման հանդէսը մեծ պատուով կատարեցին Վալադուիդ քաղաքումը սանտա Մարիա լա Անտիկվա թեմական եկեղեցու մէջ: 1513 թուականին նորա սոկերքը տեղափոխվեցան կարտէաւզեան կրօնաւորների վանքը Սեվիլլայի մէջ և յետոյ Սան Գոմինդո կղզին. բայց և այս տեղ չը գտաննը ով տեսզապէս հանդիսատ, հանվեցան և տարվեցան դէպի ի կուրա կղզին և ամիսոփվեցան Հավաննահ քաղաքումը: Գերդինանդուը, Կոլոմբոսի մահուց յետոյ, հաստատեց նորա արժանաւորութիւնը որ ուրացած էր յառաջուց, և հրամայեց կառուցանել նորա համար մի յիշատակարան այսպիսի տապանագրով.

*Por Castilla y por Leon,
Nuevo Mundo halló Colon.*

այսինքն,

„Կատախիայի և Էկոնի համար,

Կոլոմբոսը բացեց նոր աշխարհ:“

Կոլոմբոսը էր բարձրահասակ և բարակամարմին տղամարդ, վայելչակաղմ և ջլուտ, աղնիւ և արժանաւոր կերպարանքով: Նորա երեսը երկոյնաձև էր, ոչ պարարտ և ոչ նորազ, բայց ամեննեին պիսակոտ, նորա երեսի գյոնը մատենումը թիսագյոնին: Նորա քիթը, ինչպէս ասումն, արծուաքիթ էր, նորա թշրի սոկերքը մի փոքր բարձրացած էին, նորա աչքերը, բաց մոխրագյոն, և հեշտ բորբոքելի, նորա բոլոր արտաքին տեսիլը, պատկառեցացիչ: Նորա մազերը մանկութեան ժամանակին բացագյոն էին, բոյց հոգսերով և տառապանքով մոխրագյոն դարձեն շուտով, ապա, երեսուն տարեկան հասակումը, ձիւնի պէս սպիտակեցան: Իւր կեցութեան մէջ շամաւոր ու պարզ էր, ճարտարակեղու իւր խօսուածքի մէջ, սիրու գրաւող և քաղցր, օտարականների հետ, իւր ընտանեկան կեանքի մէջ ամեննեին նազելի ու սիրելի: Ի լուն շատ բորբոքելի և վառուն լինելով, այնու ամենայնիւ ուներ այնքան հոգու հաստատութիւն, որ կարող էր սանձաշրել իւր անձը և չը թողուլ որ կիրքը սանձակառութիւնի: Նորա աղնիւ և վանմական պատուասիրութիւնը արհա-

մարհել տուեց այն ողորմելի գաւաճանութիւնքը որ թունառքեցին նորա կեանքը: Մեծ մտածութեններով ճոխ, միշտ ջանադիր էր նա նցնպէս մեծ զործերով գերազանց կացուցանել իւր անձը: Այն շահը և օգուտը որոնց մասին աշխատումէր նա, դիտաւորութիւն ունէր այնպիսի աղնուութեամբ և բարեպաշտութեամբ գործ դնել, ինչպէս ցանկացած էր նոցա: Աչ թէ որպէս մի յափշակող թափառական շրջումէր նա իւր յայտնագործած աշխարհների մէջ, այլ աշխատումէր քննել նոցա հողը, նոցա բերբերը, նոցա նաւահանգիստը և գետերը: Կորա դիտաւորութիւնը այն էր, որ այն տեղերումը բարեկարգութեան պատճառ դառնայ, երկրագործութիւն հաստատե, բաղաքներ շինէ, բարերարցութիւն և քրիստոնէութիւն տարածէ նոր աշխարհների բնակիչների մէջ. այն մի աղնիւ խորհուրդ, որի գործադրութեան մէջ միշտ խափան էր նորան իւր եւրոպացի ընկերների վատթար ազահութիւնը: Կոլոմբոսը չը լինելով աղատ իւր ժամանակի սնապաշտութենից, այնու ամենայնիւ չը թողեց երրէք, որ դա տիրապետէ նորան. նա մի բազմատեղեակ և հնարագէտ հոգով տղամարդ էր. նորա հանճարի գործողութիւնքը զօրաւոր էին, բայց չկանոնաւորած. նա ամենայն տեսակ ծանօթութիւնք ստացել էր որ կապակցութիւն ունէին իւր նախապատիւ սիրելի առաջարկութեան հետ: Կրօնի արարողութիւնքը կատարումէր նա ամենամեծ ձցութեամբ, բայց նորա երկիւղածութիւնը չէր դատարկ արտաքին ձեւը, այլ շատ մօտ զուգակից էր այն կրօնական ջերմուռանգութեան հետ որ արմատացած էր նորա բոլոր հոգու և սրտի մէջ:

* Կախանձը և ատելութիւնը, այս երկու դժոխային գևերը, որոնց հետ կոլոմբոսը պատերազմ ունէր իւր բոլոր կեանքի մէջ, ի զուր աշխատումէին կողոպտել այն հոչակաւոր տղամարդի փառահիւս պսակը: Ինչպէս յահաջուց ծիծաղումէին նորա երազամութեան վերայ, որպէս թէ մուրացկանի պէս ման դալով Եւրոպայի թագաւորների դրանը, շնորհ էր խնդրում, որ կարողանայ բաշխել նոցա մի աշխարհ, նցնպէս, երբ որ նա այն կարծեցած էրազը դէպ ի ձըշմարտութեան լցու էր փոխել, ջանադիր էին փոքրացնել նորա մեծագործութիւնը, պատճառ բերելով, թէ Կոլոմբոսի արածը մի նոր յայտնագործութիւն չէ, կամ թէ աշխատելով նորա մեծագործութիւնը ամենեին աննշան կացուցանել: Այս, համբաւ ևս հնարեցին դրա, որպէս թէ մի ծովագնաց մարդ էր մոռած Կոլոմբոսի տանը ևս նորա մնացած թղթերի միջից հանել էր այն իւր առաջարկութիւնը. բայց աղաքոյ մարդիկը աւելի արդարադատ նն քան թէ ժամանակակիցքը: Թողը եւրոպական ազգերը հին ժամանակներում կա-

պակցութիւն ունեցած լինին կամ թէ չը լինին արևմտեան կիսագըն-
տի հետ, բայց քաջոյայտ է որ նմանապիսի աւանդութիւններ ամենե-
ւին անշետացած էին, և թէ քննենք այն զրոյցը, որպէս թէ մի ծո-
վագնաց մարդ վախճանել է Կոլոմբոսի տանը, ապա պիտոյ էր ա-
սել միայն, որ այդ զրոյցը կրում իւր ճակատի վերայ այնպիսի ակըն-
յայտնի ստութեան կնկք, որ անարժան էր երկարախօս չեղողու-
թեան. Մարդերի սիրոցը բորբոքված էին ասիական ճանապարհորդ-
ների տուած տեղեկութեններով և Պօրտուգալացոց ծովագնացնե-
րի յայտնագործութեններով. Մարկօ Պօլօ ճանապարհորդի պատմա-
գիրքը Զինէացոց աշխարհի մասին, մի նոր փառաւոր աշխարհ էր
բացել մարդկային երեակայութեան համար. յառաջացած էին մար-
դարեռութիւնք և առասպելք, որոնցից կարելի էր մի մտացածին շին-
ուած կազմակերպել. սորա համար հարկաւոր էր միայն Կոլոմբոսի
վստահ ձեռնարկու հոգին և բանահիւս հանձարը, որ ստուերը դեպ
ի լոյս գոյութեան ճշմարտվէր. Արդարեւ, այն դարու մեծ անցքը
հիմնաւորած էր մոլար կարծիքների վերայ, և կարելի է թէ Կոլոմ-
բոսը չեղած լինէր այդ անցքի պատճառը, թէ ուղիղ ծանօթու-
թիւնք ունեցած լինէին երկրի տարածութեան մասին. բայց այս ի-
րողութիւնը չէ կարող նուազեցնել այն զարմանքը որ զարմանու-
մենք այս տղամարդի վերայ, որ այնքան թոյլ և խախուտ նաւերով,
այնպիսի փոքրիկ հնարներով համարձակիլցաւ գուրս գալ ահագին,
անշափելի ովկիանոսի մէջ, և այնպիսի հաստատուն կամքով որոնեց
իւր նոպատակը, չը նայելով այն բոլոր խափաններին որ ամենայն
քայլափոխում ընդգէմ գրեցին նորան մնապաշտութիւնը, երկիւղը
և չարակամութիւնը. — Կոլոմբոսը մեռաւ առանց վերահասու լինելու
իւր յայտնագործութեան իսկական մեծութենին. մինչև իւր վերջին
շունչը կարծումէր նա, թէ նորանով բացվել է միայն մի վաճառա-
շահական փողոց դեպ ի հին աշխարհներ. Մի աւելի բաղդաւոր ա-
պագայ մարդու համար էր պահած, որ հնձէ այն տեղ, ուր ցանած
էր Կոլոմբոսը, գործ զնելով իւր կեանքի ամենապատուական զօրու-
թիւնքը, մի այլ մարդ պիտոյ է զնէր իւր անունը այն աշխարհի վե-
րայ, ինչ տեղ նախապէս ոտք էր կօխու ինքը Կոլոմբոսը. Կոր աշ-
խարհի յայտնագործողը հնձեց գորա փշերը, նորա յաջորդը գորա
վարդերը. բայց վաղնուց արդէն այդ փշեայ պսակը դարձել է դար-
նեայ պահէ, որ այնքան երկար կանաչելու է, ինչքան որ ովկիանոսը
իւր ալիքները տարուբերում Ամերիկայի ծովեղեավքի մատ.



(60⁺)

ԳԼՈՒԽԱՐ ԱՅԸՆԸՑՊՈՒԹԻՒՆԵՐ

ԵՐԻ - Տ-Հ. Փ-Հ-Ն-Ն-Ի. Կ-Ր-Ռ-Վ.

171. 9. Ա-Կ-Բ-Ա-Ե-Բ. Վ-Ա-Ր-Ա-Ջ-Մ-Ի-Ր-Ա-Ջ.

213. 35. Բ-Ա-Հ-Ա-Ե-Բ. մ-Ա-Կ-Բ.

Միւս գոյքիկ և անհան սիստեմը որ լատ սովորաթիւ է, ինչ ինչ մա-
զնակը բարեկառ ընթերցողներից, որ ինքնանը ուշահն կարդալու ժամանեցին, առ-
բողապատճեն լինելով, զեզ ի լատ բեռնաւորուն աշխատաւորի տեսք ունենալինել:

